ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XII ԴԱՍԱՐԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔ

ԵՐԵՎԱՆ 2011

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորագույն պատմությունը վերջին հարյուրամյակն ընդգրկող ժամանակաշրջանն է: Պատմության այս հատվածի ժամանակագրական սահմանները վիճարկելի են: Խորհրդային պատմագիտությունը մեկնակետ էր համարում 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, իսկ արևմտյան ուսումնասիրություններում ելակետային են համարում 20–րդ դարի սկիզբը կամ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը (1914 թ.) կամ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը (1918 թ.):

Այսպիսով նորագույն պատմությունը սկսվում է 20–րդ դարի առաջին քառորդի ընթացքում աշխարհակարգի կառույցում տեղ գտած արմատական վերափոխումներից, և պատմության ամենակարճատև այս ժամանակահատվածը կարելի է բաժանել մի շարք փուլերի.

• 1918–1923 թթ.՝ Եվրոպայում հեղափոխությունների և նոր պետությունների կազմավորման փուլ: Վերսալ–Վաշիգտոնյան համակարգի կայացման և տնտեսության հետպատերազմյան վերականգնման ու սոցիալական վերափոխումների փուլ:

• 1924–1929 թթ.՝ կայունացման փուլ Արևմուտքի երկրների կյանքի բոլոր բնագավառներում:

• 1929–1933 թթ.՝ պատմության ընթացքում խոշորագույն համաշխարհային տնտեսական ճգնաժամի փուլ:

• 1933–1939 թթ.՝ ճգնաժամի ընթացքում անկում ապրած տնտեսության վերականգնման նպատակով ձեռնարկված լայնամասշտաբ քաղաքական և սոցիալ–տնտեսական վերափոխումների փուլ:

• 1939–1945 թթ.՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի և միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգի սկզբնավորման ու ձևավորման փուլ:

• 1945–1991 թթ. սառը պատերազմի փուլ, որին բնորոշ էր ԱՄՆ–ի գլխավորությամբ հանդես եկող Արևմուտքի երկրների և գերազանցապես ԽՍՀՄ–ի առաջնորդությամբ գործող սոցիալիստական բլոկի երկրների միջև հակամարտությունը: Սա նաև «բարօրության երկրների» կայացման, գաղութային կայսրությունների փլուզման, գիտատեխնիկական հեղափոխությունների և հետարդյունաբերական հասարակության անցման, լայնամասշտաբ եվրոպական և միջազգային ինտեգրացիայի փուլ է: Այս փուլում ի հայտ եկավ նաև հետարդյունաբերական հասարակությունը, որը փոխարինելու եկավ արդյունաբերական հասարակությանը: Հետարդյունաբերական հասարակության պայմաններում որակման չափանիշ հանդիսացող կարևորագույն փոփոխությունը հետևյալն է. նյութական բարիքների արտադրության փոխարեն կենտրոնական տեղ է գրավում գիտելիքի և ծառայությունների «արտադրությունը»:

• 1991–21–րդ դարի սկիզբ՝ ԽՍՀՄ–ի և համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզմանը հաջորդած աշխարհաքաղաքական փոփոխությունների և համաշխարհային ասպարեզում ԱՄՆ–ի գերիշխանության փուլ: Լիբերալ–ժողովրդավարական արժեքները գնալով հաստատում են իրենց համաշխարհային ասպարեզում: Ի

հայտ են գալիս գլոբալ սպառնալիքների նոր աղբյուրներ («միջազգային ահաբեկչություն», քաղաքական իսլամ և այլն):

Սակայն ինչպիսի՞ն էր աշխարհը նորագույն պատմության մեկնակետում և վերջինիս առաջին տասնամյակների ընթացքում:

Նոր արդյունաբերական դարաշրջանն ու հասարակությունը: 18–19–րդ դարերի արդյունաբերական հեղափոխությունը նոր էջ բացեց պատմության մեջ: Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում սկսվեց արդյունաբերական հասարակության ձևավորումը: Սակայն 20–րդ դարի սկզբներին «ածխի և պողպատի դարաշրջանն» իր վերջին քայլերն էր կատարում: Անցյալի գիրկն էր անցնում նաև շոգեքարշերի և շոգենավերի աշխարհը: Առաջ էր գալիս արդյունաբերական դարաշրջանի նոր փուլը: Փոփոխությունների արագությունն ապշեցնում էր այդ նոր փուլի ականատեսներին: Իրոք, արդեն 20–րդ դարի սկզբներին դրսևորվեց նոր փուլի զարգացման բնորոշ գծերից մեկը՝ փոփոխությունների արագացումը: 1903 թ. օդ բարձրացած ինքնաթիռի թռիչքն ընդամենը մի քանի ակնթարթ տևեց, իսկ արդեն 1919 թ. իրագործվեց առաջին անդրատլանտյան թռիչքը: Սկսվում էր էլեկտրականության, էլեկտրական և դիզելային շարժիչների, ավտոմոբիլի և ինքնաթիռի, հեռախոսի և հեռագրի, ռադիոյի դարաշրջանը:

Արմատական ու շրջադարձային այս փոփոխություններն ունեին իրենց պատճառները: 19–րդ դարի վերջերին և 20–րդ դարի սկզբներին Եվրոպայի և ԱՄՆ–ի առաջատար երկրներում արագ ու արմատական շրջադարձ տեղ գտավ հատկապես տեխնոլոգիական և տնտեսական զարգացման գործընթացներում: Այդ ժամանակ է, որ տեղ գտավ արդյունաբերական և տեխնոլոգիական հեղափոխությունը:

20–րդ դարի սկզբներին ձևավորվեց միասնական համաշխարհային տնտեսությունը: Արդյունաբերական երկրները միջազգային փոխանակման մեջ ներքաշեցին ողջ աշխարհը: Մոլորակի ամենահեռավոր անկյունները նույնիսկ համաշխարհային առևտրի համակարգի մի մասը դարձան: Կապիտալի համար գնալով ավելի նեղ էին դառնում ազգային–պետական սահմանների շրջանակները: Դրա հետ մեկտեղ գործարար նախաձեռնությունները գնալով ավելի սերտորեն էին կապվում ի հայտ եկած կապի և հեռահաղորդակցության նոր միջոցների՝ հեռագրի և հեռախոսի, ավտոմեքենայի և ինքնաթիռի հետ: Հետևաբար դարի սկզբներին աննախադեպ չափեր ընդունեց կապիտալի արտահանումը:

Դարերի սահմանագծին և 20–րդ դարի սկզբներին աննախադեպ չափեր ընդունեց բնակչության զանգվածային տեղաշարժը: Անձը առանց լուրջ դժվարությունների թողնում էր իր երկիրը և հաստատվում նոր վայրում: Եվ տեղաշարժի այն ազատությունը, որ գոյություն ուներ դարի սկզբներին, 20–րդ դարի ընթացքում այլևս երբեք չկրկնվեց, քանզի երկրների մեծ մասը սկսում է սահմանափակումներ մտցնել երկիր մուտք գործելու հարցում, իսկ ամբողջատիրական վարչակարգերը սահմանափակելու էին նաև ելքը երկրից:

Այսպիսով՝ 20–րդ դարի սկզբներին աշխարհը եռուզեռի մեջ էր. ապրանքների, կապիտալի և մարդկանց տեղաշարժը համաշխարհային բնույթ ընդունեց: Սկսեց ձևավորվել համաշխարհային տնտեսությունը, որը 20–րդ դարի վերջերին մտնելու էր համաշխարհայնացման (գլոբալացման) փուլ: Սակայն համաշխարհային զարգացման հակասություններն այնքան խորն էին, որ մինչ այդ մարդկությունն անցավ երկու համաշխարհային պատերազմներով, հեղափոխություններով, առանձին երկրների և տարածաշրջանների մեկուսացման ձգտումներով ու աշխարհի՝ հակադիր բլոկների բաժանման միջով:

Հասարակական կյանքի փոփոխությունները: XX դարն էականորեն փոխեց թե՛ քաղաքների տեսքը, թե՛ քաղաքացիների կյանքի պայմանները: Մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում սովորական փոխադրամիջոց էին դառնում ավտոմեքենան, տրամվայը, մետրոն: Վերջինս ամենատարածված փոխադրամիջոցն էր Լոնդոնում, Նյու Յորքում, Բոստոնում, Փարիզում, Բուդապեշտում և այլ խոշոր արևմտյան քաղաքներում: Սա նաև ավտոմոբիլի դարաշրջանն էր: Արդեն Առաջին Աշխարհամարտի տարիներին տարեկան արտադրվում էր մի քանի միլիոն ավտոմեքենա: Նավթի և գազի լամպերին տներում և փողոցներում փոխարինելու էին գալիս էլեկտրականները: Տարբեր հաստատություններում և ունևոր անձանց տներում տարածում էին գտնում վերելակն ու հեռախոսը: Լայն սպառում էին գտնում կարի մեքենաներն ու գրամեքենան: Արևմտյան (հատկապես ԱՄՆ–ի) որոշ խոշոր քաղաքներում ծաղկում էր ապրում երկնաքերների կառուցման գործընթացը:

Կատարելագործվում էր քաղաքների ջրամատակարարումը: Ժամանակին հիմնականում խոշոր քաղաքներում տարածվող համաճարակներն ավելի հաճախ էին կանխվում հակահամաճարակային միջոցների և վակցինաների կիրառման ճանապարհով: Բարելավվում էր սանիտարական վիճակը: Աճում էր նաև գաղութային ապրանքների հոսքը: Ժամանակին քչերին մատչելի թեյը, սուրճն ու այլ ապրանքները մտնում էին շարքային մարդկանց կերակրացանկի մեջ:

Արդյունաբերության և փոխադրամիջոցների բնագավառում ավելի կատարելագործված մեքենաների ու հաստոցների ներդրման արդյունքում աշխատանքը, թվում է, դառնում էր ոչ այնքան ծանր, որքան նախկինում էր: Ձեռքի աշխատանքը կրճատվում էր: Սակայն դրա հետ մեկտեղ մարդն ավելի մեծ կախվածության մեջ էր ընկնում մեքենայից, դառնում դրա կցորդը: Մեքենան արագություն էր հաղորդում մարդու աշխատանքին և որոշում նաև նրա աշխատանքի ռիթմը: XIX դարի վերջերին և XX դարի սկզբին արևմտաեվրոպական երկրների արդյունաբերական ձեռնարկություններում ամենից տարածված էր 10–ժամյա աշխատանքային օրը: XX դարի առաջին տասնամյակների ընթացքում աշխատավոր զանգվածների ու արհմիությունների պահանջների շարքում էր 8–ժամյա աշխատանքային օրվա հաստատման խնդիրը: Լայն տարածում էր ստանում մեքենաների և տեխնիկայի կիրառումը նաև գյուղատնտեսության բնագավառում:

Տնտեսական զարգացման գործում գնալով աճում էր նորաձևության և գովազդի դերը:

Արդյունաբերական արագ զարգացումը որակապես ավելի բարձր պահանջներ էր առաջադրում կրթության համակարգին: Արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության բնագավառում անհրաժեշտ էին մասնագետներ, որ ընդունակ լինեին աշխատելու նոր տեխնիկայի և սարքավորումների հետ: Արդեն XX դարի առաջին տասնամյակների ընթացքում եվրոպական երկրների մեծագույն մասում համընդհանուր տարրական կրթությանը փոխարինելու եկավ թերի միջնակարգ կրթությունը (վեցամյա, իսկ որոշ երկրներում՝ ութամյա): Ավելին՝ միջնակարգ կրթությունը դարձավ պարտադիր: Որոշ երկրներում, օրինակ, մեծ տուգանքներ էին նախատեսվում այն ծնողների համար, ում երեխաները դպրոց չէին հաճախում առանց հարգելի պատճառների: Հատկապես արագ էին զարգանում մասնագիտական կրթական հաստատությունները՝ տեխնիկական և առևտրի ուսումնարանները, գյուղատնտեսական դպրոցները: Մասնագիտական ուսումնական հաստատությունների աշակերտները սովորաբար այստեղ էին գալիս ոչ լիարժեք միջնակարգ դպրոցից՝ այս կամ այն մասնագիտությունը ձեռք բերելու նպատակով: Սակայն հետագա բարձրագույն կրթության ստացումն այս դեպքում հնարավոր չէր համարվում, և մասնագիտական ուսումնարաններն ու դպրոցները դիտվում էին իբրև փակուղային ուսումնական հաստատու-

թյուններ: Այդուհանդերձ այս կարգի ուսումնական հաստատությունները մեծ դեր էին խաղում տնտեսության ամենատարբեր բնագավառների միջին օղակի համար մասնագետների պատրաստման գործում: Հատուկ ուշադրություն էր դարձվում ուսուցիչների պատրաստմանը: Առանձին երկրներում ուսուցիչների համար նախատեսված երկամյա դասընթացներից բացի, ստեղծվում էին նաև մանկավարժական ուսումնարաններ, որտեղ ուսման տևողությունը 4 տարի էր:

Հասարակական կյանքում տեղ գտան էական փոփոխություններ: Կարևորվում էր միջին խավի կայացումը: Ընդլայնվում էին կանանց իրավունքները: Ընդ որում՝ դա ոչ միայն իրավական (կանանց և տղամարդկանց իրավահավասարության, ընտրություններին մասնակցողների շրջանակի ընդլայնում) խնդիր էր, այլև տնտեսական: Հետպատերազմյան շրջանում նաև կանանց աշխատուժի խիստ կարիք էր զգացվում: Փոփոխություններ էին տեղ գտնում նաև հասարակական–քաղաքական կյանքում: Հասարակական–քաղաքական կյանքում աճում էր կուսակցությունների դերը: XIX դարում դրանք ավելի շուտ քաղաքական քննարկումների ու վիճաբանությունների ակումբներ էին կամ ընտրություններում առանձին անձանց աջակցելու նպատակով ստեղծված ժամանակավոր կազմակերպություններ: Սակայն 19–րդ և 20–րդ դարերի սահմանագծին և 20–րդ դարի առաջին տասնամյակների ընթացքում կուսակցությունները դարձան զանգվածային և կենտրոնացված՝ կոմիտեների և տեղերում իրենց բաժանմունքների ցանցերով: Ձևավորվում է կուսակցական ապարատը՝ կուսակցության դրամարկղից վճարվող աշխատակիցների խավը: Մամուլում, խորհրդարանում և կառավարության մեջ մշտապես երևում են միևնույն դեմքերը, իսկ քաղաքականությունը դառնում է մասնագիտություն: 20–րդ դարի սկզբներին փոխվեց կուսակցությունների դերը հասարակական կյանքում: Կուսակցությունները զանգվածային տպաքանակով սկսում են հրատարակել թերթեր, ամսագրեր՝ ակտիվորեն քարոզելով իրենց հայացքները և ձևավորելով հասարակական կարծիք: Գերմանացի սոցիալ–դեմոկրատները հրատարակում էին 49 անուն օրաթերթ, իսկ իտալացի սոցիալիստները՝ մոտ 200 հանդես՝ ողջ Իտալիայում:

Դարի սկիզբը բնորոշող իրողություններից մեկը դարձավ նաև կուսակցությունների և կուսակցական պայքարի գաղափարայնացումը: Կուսակցությունները ոչ միայն ձգտում էին մշակել այսօրվա օրակարգի հետ կապված նեղ ծրագրեր, այլև ներկայացնել իրենց աշխարհայացքային սկզբունքները, համաշխարհային զարգացման հեռանկարները:

20–րդ դարի սկզբներին կուսակցական պայքարն ընթանում էր հիմնականում պահպանողականության, լիբերալիզմի, սոցիալիզմի և մարքսիստական գաղափարախոսությունների ուղղությամբ: Կրոնն ու ազգայնականությունը նույնպես առանձին կուսակցությունների քաղաքական–գաղափարախոսական հիմքն էին, սակայն դրանք ևս ներկվում էին քաղաքական դաշտի հիմնական գույներով: Ազգայնական, բողոքական, կաթոլիկական կազմակերպությունները ձգտում էին հիմնականում դեպի պահպանողական կամ լիբերալ կուսակցությունները, սակայն երբեմն ոչ պակաս հետաքրքրություն էին ցուցաբերում նաև սոցիալիստների նկատմամբ: Սոցիալիստական կազմակերպությունների ազդեցության ընդլայնման և սոցիալիստական ու մարքսիստական գաղափարների տարածմանը զուգահեռ սկսեց փոխվել և քաղաքական պայքարի հիմնական սահմանագիծը, որը ժամանակին անցնում էր պահպանողականներ–լիբերալներ, միապետականներ–հանրապետականներ բաժանարար գծի երկայնքով: Ժամանակին ազնվականության և գյուղացիության վրա հենվող պահպանողականները հանդես էին գալիս ավանդույթների և կարգուկանոնի պահպանման կարգախոսի ներքո, իսկ քաղաքային միջին և վերին շերտերի վրա հենվող լիբերալները պաշտպանում էին ազատության և հավասարության գաղափարները (հավասա-

ության տակ նկատի ունենալով ժողովրդավարությունը, հավասար հնարավորություններն ու արգելքների վերացումը և ոչ թե բոլորի արհեստական հավասարեցումը): Սակայն ավելի ուշ պահպանողականների և լիբերալների միջև քաղաքական պայքարն աստիճանաբար անցնում է երկրորդ պլան, քանզի աստիճանաբար իրագործվում էին լիբերալ գաղափարներն, ու զարգանում էր խորհրդարանական ժողովրդավարությունը: Ընդ որում՝ առանձին երկրների կոնկրետ պատմական պայմաններն իրենց հետքն էին թողնում այդ քաղաքական պայքարի բնույթի վրա:

Քաղաքական զարգացումները միջազգային ասպարեզում: XX դ. առաջին քառորդի միջազգային քաղաքական զարգացումների կարևորագույն փոփոխությունների շարքում էր **ուժերի հավասարակշռության սկզբունքի բնականոն վերագնահատումը: Ուժերի հավասարակշռության** տեսությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ խաղաղությունն ավելի հավանական է այնտեղ, որտեղ պոտենցիալ պատերազմողների միջև առկա է հավասարություն՝ ռազմական, իսկ երբեմն նաև քաղաքական կամ տնտեսական հզորության տեսանկյունից: Ուժերի հավասարակշռության դասական ժամանակաշրջանն ընդգրկում է նապոլեոնյան պատերազմների վերջից մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակահատվածը: Այդ շրջանում առկա էին մոտավորապես հավասար հզորության մի շարք երկրներ, որոնցից ոչ մեկը երաշխավորված կերպով չէր կարող առանձին պարտության մատնել մյուսների կոալիցիային: Միջազգային կայունության պահպանմանն ուղղված ուժերի հավասարակշռության սկզբունքի կարևորագույն նախապայմաններից էր այն, որ չկային գաղափարախոսական կամ այլ բնույթի արգելքներ, որոնց պատճառով տերությունները չկարողանային միանալ մյուս տերություններին: Ցանկացած կոալիցիան հնարավոր էր, քանզի համակարգի բոլոր երկրները, մասնավորապես Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Ավստրո–Հունգարիան և Պրուսիան (Գերմանիա), ըստ էության, ունեին նույնանման ներքին քաղաքականություն և հիմնականում ընդհանուր գաղափարախոսություն: Հետևաբար, երբ այդ երկրներից մեկը չափից դուրս հզորանում էր և ծավալապաշտական ծրագրեր մշակում, մյուսները կտրուկ փոխում էին իրենց դաշինքները՝ բացառելու համար հնարավոր անհավասարակշռությունը:

Ուժերի հավասարակշռության սկզբունքի հետևորդները քաջ գիտակցում էին, որ ի զորու չեն ընդհանրապես կանխելու պատերազմները: Նրանք գտնում էին, որ թեև պատերազմներն անխուսափելի են, սակայն դրանք պետք է կրեն սահմանափակ բնույթ՝ շարունակվելով մինչև ուժերի հավասարակշռության վերականգնումը:

Այսպիսով՝ հիմնական նպատակն առկա համակարգի և դրա շրջանակներում գործող տարրերի (տերությունների) ինքնության և ինքնուրույնության պահպանումն էր: Հետևաբար Առաջին աշխարհամարտի հարուցած հիմնական խնդիրը ոչ թե այն էր, որ այն տեղ գտավ, այլ այն, որ պատերազմն ընթացավ մի այնպիսի ուղիով, մասշտաբներով և այնքան երկարատև եղավ, որ ավելի շուտ ոչնչացրեց, քան պահպանեց կամ վերականգնեց նախկինում գործած համակարգը: Պատերազմի արդյունքում փլուզվեցին ուժերի հավասարակշռության համակարգի գործունեությունն ապահովող կայսրությունները: Ի հայտ եկան համակարգից դուրս գտնվող երկրներ:

ԲԱԺԻՆ Ա. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԳԼՈՒԽ 1. ՎԵՐՍԱԼ–ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§ 1. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Փարիզի խորհրդաժողովը

Ինչպես գիտեք, 1918 թ. նոյեմբերի 11–ին կնքված Կոմպյենի զինադադարով ավարտվեց Առաջին աշխարհամարտը: Համաշխարհային պատմության մեջ նոր էջ էր բացվում: Նոր աշխարհակարգի ձևավորման սկզբունքների մեջ ներառվեցին ԱՄՆ–ի նախագահ Վ. Վիլսոնի 14 կետերը և վերջինիս կողմից առաջ քաշված մի շարք նոր գաղափարներ՝ **«Ազգերի լիգայի» ստեղծում, մանդատային համակարգի ներմուծում, Միջազգային արդարադատության մշտական դատարանի հիմնում, հավաքական անվտանգության սկզբունք** և այլն: Այս բոլոր խնդիրների լուծումը տրվեց հետպատերազմյան խորհրդաժողովների ընթացքում:

Դրանցից գլխավորը՝ Փարիզի խորհրդաժողովը, իր աշխատանքներն սկսեց **1919 թ. հունվարի 18–ին:** Այդ օրը նշվում էր պարտված տերության՝ Գերմանական կայսրության հիմնադրման 48–րդ տարեդարձը: Հետևաբար ամեն ինչ արվել էր Գերմանիային առավելագույնս նսեմացնելու նպատակով:

Փարիզի խորհրդաժողովն իր բացառիկ տեղն ունի համաշխարհային պատմության մեջ: Վերջինիս հետ համեմատվել կարող է միայն 1815թ. Վիեննայի վեհաժողովը: Այս երկու իրադարձությունների միջև կան ինչպես ընդհանրություններ, այնպես էլ՝ էական տարբերություններ:

Ընդհանրություններ.

- Երկուսն էլ գումարվել են համաշխարհային նշանակություն ունեցած երկարատև ու համառ պատերազմներից հետո:
- Երկուսի նպատակն էլ միջազգային հարաբերությունների բնականոն ընթացքի վերականգնումն էր, որ խարխլվել էր մի դեպքում հեղափոխական և նապոլեոնյան պատերազմների, իսկ մյուս դեպքում՝ Առաջին Աշխարհամարտի արդյունքում:
- Երկու դեպքում էլ իշխում էր հավերժ խաղաղություն հաստատելու մթնոլորտն ու միջազգային անվտանգությունն ամուր հիմքերի վրա դնելու գաղափարը:
- Նախորդ համակարգն ինչպես 1815թ., այնպես էլ 1919թ.՝ փլուզվել էր, իսկ նորը՝ դեռ չէր ստեղծվել: Հետևաբար ինչպես Վիեննայի վեհաժողովը, այնպես էլ Փարիզի կոնֆերանսը ոչ միայն դիվանագիտական խորհրդաժողովներ էին, այլև ինչ–որ չափով ստանձնել էին համաշխարհային կառավարությունների առաքելությունը:
- Հաշվի առնելով քննարկվող խնդիրների կարևորությունը, թե՛ Վիեննայի վեհաժողովին, թե՛ Փարիզի խորհրդաժողովին մասնակցում էին աննախադեպ մեծաթիվ պատվիրակություններ. Վիեննայում ներկա էին 90, իսկ Փարիզում՝ 32 երկրների պատվիրակություններ:

Տարբերություններ.

- Եթե Վիեննայի վեհաժողովին մասնակցում էին թե՛ հաղթող, թե՛ պարտված պետությունները, ապա Փարիզում ներկա էին միայն հաղթողներն ու միացած տերությունները: Գերմանիայի ու իր դաշնակիցների մասնակցությունը փարիզյան քննարկումներին ի սկզբանե բացառված էր: Բացառվեց նաև Ռուսաստանի և

ռուսական կայսրության փլուզման արդյունքում ձևավորված երկրների մասնակցությունը Փարիզի խորհրդաժողովին (բացառությամբ Լեհաստանի):

• Ի տարբերություն նախորդ վեհաժողովների ու խորհրդաժողովների, որտեղ անմրցակից կերպով իշխում էր ֆրանսերենը, Փարիզում թույլատրվում էր երկու լեզուների՝ ֆրանսերենի և անգլերենի հավասարազոր կիրառումը: Ավելին, ապագա Վերսալյան պայմանագրի տեքստը նույնպես կազմվեց այդ երկու լեզուներով, որոնք ճանաչվեցին իբրև հավասարազոր: Դրանում կարելի էր տեսնել անգլո–սաքսոնական աշխարհի դիրքերի ամրապնդումը միջազգային հարաբերություններում:

• Վիեննայում ներկայացված երկրների շարքում մեծ թիվ էին կազմում գերմանական թզուկ պետությունները. ամերիկյան և ասիական պետություններն այդ վեհաժողովին չէին մասնակցում: Մինչդեռ Փարիզում ներկայացված էին բոլոր աշխարհամասերը: Փարիզի խորհրդաժողովին առաջին անգամ մասնակցում էին չինացիները, ճապոնացիներն ու հնդիկները:

• Վիեննայի վեհաժողովից հետո պարտված պետությունը՝ Ֆրանսիան պահպանեց մեծ տերության իր կարգավիճակը, մինչդեռ Առաջին Աշխարհամարտից ու Փարիզի խորհրդաժողովից հետո պարտված Գերմանիան կորցրեց մեծ տերության իր կարգավիճակը:

• Վիեննայի վեհաժողովի դեպքում հնարավոր էր վերադարձը դեպի «ուժերի հավասարակշռության» նախկին սկզբունքը: Կայսրությունների փլուզումից հետո գումարված Փարիզի վեհաժողովում դա գրեթե անհնարին էր:

Կոնֆերանսում ի սկզբանե իշխում էր «մեծ հնգյակը» ի դեմս ԱՄՆ–ի նախագահ **Վուդրո Վիլսոնի**, Մեծ Բրիտանիայի վարչապետ **Լլոյդ Ջորջի**, Ֆրանսիայի վարչապետ **Ժորժ Կլեմանսոյի**, Ճապոնիայի վարչապետ մարքիզ **Սայոնիի** և Իտալիայի վարչապետ **Օռլանդոյի**:

Այն, որ կոնֆերանսին մասնակցում էին միայն հաղթող և հաղթողներին միացած երկրները, չէր նշանակում, թե խորհրդաժողովը հարթ ընթացք է ունենալու: Բազմիցս կոնֆերանսը ձախողման եզրին էր մասնակից երկրների միջև հակասությունների պատճառով: Սակայն դրանից հաջողվեց խուսափել և **1919թ. հունիսի 28–ին Վերսալյան պալատում** ստորագրվեց Գերմանիայի հետ հաշտության պայմանագիրը: Հաշտության պայմանները ծանր էին Գերմանիայի համար: Տեղ գտավ վերջինիս սահմանների էական փոփոխություն: Գերմանիան կորցրեց Էլզասն ու Լոթարինգիան, որոնք անցան Ֆրանսիային: Էյպեն, Մալմեդի և Մորենե շրջանները փոխանցվում էին Բելգիային, Հյուսիսային Շլեզվիգը՝ Դանիային: Դանցիգը (Գդանսկ) ստանում էր ազատ քաղաքի կարգավիճակ: Սաարի ածխավազանի շրջանը 15 տարով անցնում էր միջազգային վերահսկողության ներքո, որից հետո միայն տեղ գտնելիք հանրաքվեն պետք է որոշեր այդ տարածքի պատկանելությունը: Հռենոսի գոտին ապառազմականացվում էր: Ահռելի տարածքային ձեռքբերումներ էր ունենում ի հաշիվ Գերմանիայի նաև Լեհաստանը: Ընդհանուր առմամբ Գերմանիան կորցնում էր իր տարածքի 1/8 մասը: Նա նաև զրկվում էր իր բոլոր գաղութներից: Որոշվեց իրագործել Գերմանիայի զինաթափումը: Գերմանիային արգելվում էր ունենալ ստորջրյա նավատորմ և ռազմական օդուժ, իսկ նրա բանակը սահմանափակվում էր 100 հազարով և պետք է հավաքագրվեր կամավորության սկզբունքով: Գերմանիան պարտավորվում էր հաղթողներին վճարել փոխհատուցում կրած քաղաքացիական վնասների դիմաց:

Վերսալ–վաշինգտոնյան համակարգը

Վերսալյան պայմանագրից հետո հաշտության պայմանագրեր կնքվեցին նաև Գերմանիայի նախկին դաշնակիցների՝ Ավստրիայի, Բուլղարիայի, Հունգարիայի և Օսմանյան կայսրության հետ: Դրանց արդյունքում ձևավորվեց Վերսալյան համակարգը:

Վերոհիշյալ պայմանագրերն ամրագրում էին Ավստրո–Հունգարիայի և Օսմանյան կայսրության փլուզումից հետո ի հայտ եկած նոր երկրների սահմանները: Գերմանիայի նախկին դաշնակիցները ևս ունեցան տարածքային մեծ կորուստներ: Նախատեսվում էր պարտված երկրների զինված ուժերի թվաքանակի սահմանափակում և նրանց կողմից ռեպարացիաների (ֆինանսական և նյութական փոխհատուցումներ) վճարում հաղթողներին: Սակայն հետագայում քեմալական Թուրքիային հաջողվեց հասնել Սևրի պայմանագրի վերանայմանը, և **1923 թ.** կնքվեց **Լոզանի հաշտության պայմանագիրը:** Մյուս երկրների հետ կնքված պայմանագրերը մնում էին ուժի մեջ:

Սակայն հետպատերազմյան կարգավորումը չէր սահմանափակվում միայն Եվրոպայով և Միջին Արևելքով: Առկա էին էական խնդիրներ նաև Հարավարևելյան Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:

Հեռավոր Արևելքում խնդիրների կարգավորման նպատակով **Վաշինգտոնում** հրավիրվեց խորհրդաժողով (1921 թ. նոյեմբեր–1922 թ. փետրվար): Մասնակցում էին ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի և Չինաստանի պատվիրակությունները: Այն ավարտվեց երեք հիմնական պայմանագրերի ստորագրումով, որոնց շնորհիվ Հեռավոր Արևելքում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հաստատվում էր կայունություն: Բացի այդ, համաձայնեցվում էին հինգ առաջատար երկրների վերջրյա ծովային նավատորմերի միջև չափաբաժինները, ինչպես նաև վերացվում էին առանձին երկրների ազդեցության գոտիները Չինաստանում: Փոխարենը ամրագրվեցին Չինաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Հռչակվեց այդ երկրում մեծ տերությունների համար «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» սկզբունքը:

Վերսալ–վաշինգտոնյան համակարգի ձևավորումը կարևորագույն իրողություն էր, քանի որ այն ապահովեց՝

• հետպատերազմյան լարվածության թուլացումն ու 1920–ական թթ. «բարգավաճման ժամանակաշրջանի» գերիշխումը,

• միջազգային հարաբերությունների սկզբունքների նորացումը (ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչում և կիրառում, հրաժարում պատերազմից՝ իբրև հակամարտությունների կարգավորման միջոցի և այլն),

• կախյալ տարածքների կառավարման նոր՝ մանդատային համակարգի ստեղծումը,

• միջազգային նոր կազմակերպությունների ու կառույցների ստեղծումը,

• մի շարք երկրների անկախության ճանաչումը:

Սակայն Վերսալ–վաշինգտոնյան համակարգն անկայուն էր ու անհաստատ, և դա ուներ իր պատճառները:

Դրանցից առաջինը դաշնակիցների կողմից հետպատերազմյան կարգավորման ընթացքում տնտեսական խնդիրների կարևորության թերագնահատումն էր: Հաղթողները ձգտում էին պարտվողներից ստանալու որքան հնարավոր է շատ, մինչդեռ անհրաժեշտ էր մտածել նաև պարտվողների տնտեսական վերականգնման մասին: Առանց տնտեսական կազդուրման վերջիններս անօգնական էին ներքին ծայրահեղական շարժումների դեմ պայքարում: Պարտված երկրների ուսերին թողնելով հետպա-

տերազմյան կարգավորման ողջ ծանրությունը՝ ճանապարհ էր բացվում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում սոցիալական ու քաղաքական ցնցումների և էթնիկական խնդիրների սրման համար: Այսպիսով՝ նոր համակարգի էական թերությունն էր Եվրոպայի վերականգնման տնտեսական ծրագրերի բացակայությունը:

Հարավարևելյան և Արևելյան Եվրոպայում ստեղծվել էր նոր ու փոքր պետությունների մի համակարգ: Սակայն այդ պետություններն անզոր էին ապահովելու իրենց անվտանգությունը: Հետագայում այս տարածաշրջանը դարձավ մեծ տերությունների շահերի բախման թատերաբեմը: Այսպիսով՝ համակարգի խոցելի իրողություններից էր Եվրոպայում հովանավորների կարիք զգացող փոքր պետությունների ձևավորումը:

Եվրոպայի նոր պետությունների սահմանները որոշվեցին՝ առանց հաշվի առնելու այնտեղ բնակվող ժողովուրդների շահերը: Մոտավորապես 30 միլիոն մարդ հայտնվեց ազգային փոքրամասնության կարգավիճակում (գերմանացիները՝ Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Հարավսլավիայում, հունգարները՝ Ռումինիայում, Չեխոսլովակիայում, Հարավսլավիայում և այլն): Հարավսլավիայի ստեղծումից հետո կաթոլիկ խորվաթներն ու սլովենները և Բոսնիայում ու Մակեդոնիայում ապրող մուսուլմանները հայտնվեցին կրոնադավանական փոքրամասնության կարգավիճակում: Ուղղափառ սերբերը վերահսկում էին նոր պետության բանակն ու պետական կառավարման մարմինները, ունեին վճռական դեր այդ պետության մեջ, ինչը պայմաններ էր ստեղծում ապագա հակամարտությունների համար:

Խորհրդային Ռուսաստանը ներկայացված չէր ո՛չ Փարիզի վեհաժողովում և ո՛չ էլ Վաշինգտոնի խորհրդաժողովում: Այն նաև միջազգային մեկուսացման ենթարկվեց: Սկզբում նրան դուրս թողեցին Վերսալ–վաշինգտոնյան համակարգից, վերջինիս դեմ կազմակերպեցին զինված ներխուժում, իսկ հետո փորձեցին նրա հետ խոսել իբրև պատերազմում տանուլ տված երկրի: Ոչինչ չարվեց պարտված տերություններին բարի դրացիների վերածելու ուղղությամբ: Գերմանիային ու նրա նախկին դաշնակիցներին առաջադրվեցին ուժերից վեր պահանջներ: Ավելին՝ բացառապես Գերմանիային ու նրա դաշնակիցներին վերագրվեցին պատերազմի սանձազերծման մեղքերը, և պարտված բոլոր երկրները ուժերից վեր փոխհատուցումներ պետք է վճարեին:

Մեծ տերությունների միջև հակասությունները չէին կարող ապահովել Վերսալ–վաշինգտոնյան համակարգի կենսունակությունը: Նոր համակարգը էականորեն թուլացրեց նաև այն, որ ԱՄՆ–ը հրաժարվեց Վերսալյան պայմանագիրը վավերացնելուց և որդեգրեց մեկուսացման քաղաքականություն:

Ի սկզբանե թույլ էին նաև Ազգերի լիգայի դիրքերը: Մինչդեռ Ազգերի լիգան Վերսալ–վաշինգտոնյան համակարգի կարևորագույն միջազգային կազմակերպությունն էր, որ կոչված էր ապահովելու խաղաղությունն ու միջազգային անվտանգությունը: Ազգերի լիգայից դուրս մնաց Ռուսաստանը: Չանդամակցեց Ազգերի լիգային նաև ԱՄՆ–ը, որը Գերմանիայի հետ 1921 թ. առանձին հաշտության պայմանագիր կնքեց:

Պարտված երկրները համարում էին, որ ոտնահարվել են իրենց կենսական շահերը: Գերմանիայում, Հունգարիայում և Բուլղարիայում կորուսյալ տարածքների վերադարձի խնդիրը պատճառ դարձավ ռազմատենչ ու ռևանշիստական ուժերի համախմբման համար: Նույնիսկ հաղթողների ճամբարին պատկանող Իտալիայում քաղաքական գործիչների մեծամասնությունն այն կարծիքին էր, որ գաղութների բաժանման ընթացքում իրենց շահերը հաշվի չեն առնվել:

Չարդարացան նաև գաղութային երկրների ժողովուրդների այն հույսերը, թե իրենց խնդիրներն արդարացի լուծում կգտնեն: Նույնիսկ մանդատային համակարգի ներմուծումը այդ ժողովուրդները դիտում էին իբրև գաղութային ավարի ավանդական կայսերական բաժանման շարունակություն: Հետպատերազմյան կարգավորման

ընթացքում իրենց արդարացի լուծումը չգտան հայկական, արաբական, ասորական և քրդական հարցերը:

Հետպատերազմյան համակարգի հիմնական նպատակը պետք է լիներ միջազգային հարաբերություններում այնպիսի հավասարակշռության ստեղծումը, որն անկարելի լիներ խարխլել: Դրան հասնել չհաջողվեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է ավարտվել Առաջին աշխարհամարտը և ի՞նչ հետևանքներ է ունեցել: Ե՞րբ է իր աշխատանքներն սկսել Փարիզի խորհրդաժողովը: Ովքե՞ր էին «մեծ հնգյակի» ներկայացուցիչները: Ե՞րբ և որտե՞ղ ստորագրվեց պարտված Գերմանիայի հետ հաշտության պայմանագիրը: Գնահատե՛ք Գերմանիային պարտադրված հաշտության պայմանները:

2. Գերմանիայի նախկին դաշնակիցների հետ ի՞նչ պայմանագրեր կնքվեցին: Ե՞րբ և ինչո՞ւ հրավիրվեց Վաշինգտոնի խորհրդաժողովը. թվարկե՛ք մասնակից երկրներին: Ի՞նչ նշանակություն ունեցավ Վաշինգտոնի խորհրդաժողովը:

3. Հետպատերազմյան աշխարհում ի՞նչ իրողություններ ապահովեց Վերսալ–վաշինգտոնյան համակարգը: Վերհանե՛ք Վերսալ–վաշինգտոնյան համակարգի հակասությունները: Ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստանը այդ համակարգի մաս չկազմեց:

Լրացուցիչ նյութ
Վ. Վիլսոնի 14 կետերը

1918 թ. հունվարի 8–ին ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնը հանդես եկավ մի հայտարարությամբ, որտեղ ձևակերպվեցին հետպատերազմյան կարգավորման տեսլականն ու 14 հիմնական սկզբունքները:

1–ին կետով հռչակվում էր հրաժարումը գաղտնի դիվանագիտությունից և անցումը բաց դիվանագիտության: Սրանով ԱՄՆ–ն ամենևին մտադիր չէր լիովին հրաժարվելու գաղտնի բանակցությունների և գաղտնի դիվանագիտության ավանդույթներից: ԱՄՆ–ն նախ և առաջ շեշտում էր այն, որ Ագլիայի, Ֆրանսիայի և մյուս տերությունների միջև պատերազմի ընթացքում և դրանից առաջ կնքված բոլոր պայմանագրերը (ռազմավարի բաժանման մասին), որ կնքվել են գաղտնիության պայմաններում և առանց ԱՄՆ–ի իմացության կամ մասնակցության, չեն կարող պարտադիր ուժ ունենալ հետպատերազմյան շրջանում:

2–րդ կետում խոսվում էր «ծովերի ազատության» մասին: Այս կետն առաջին հերթին ուղղված էր Անգլիայի դեմ: Նախկինում ծովերում գրեթե միահեծան կերպով իշխել էր Մեծ Բրիտանիան: Սակայն պատերազմից հզորացած դուրս եկած ԱՄՆ–ն ծովային տիրապետության հասնելու հայտ էր ներկայացնում և պահանջում բացել ծովերը ամերիկյան նավագնացության առջև:

Կետերից 3–րդն անդրադառնում էր «առևտրի ազատության» սկզբունքին: Այն նույնպես մարտահրավեր էր՝ ուղղված մնացյալ մեծ տերությունների դեմ: Հիշյալ կետում խոսվում էր տարիֆային և մաքսային խոչընդոտների վերացման մասին: Դրանով Միացյալ Նահանգները պահանջում էր ամերիկյան ապրանքների առջև բացել դեպի բոլոր երկրների շուկաները տանող ճանապարհները:

«Սպառազինությունների կրճատման» անհրաժեշտության մասին էր խոսվում 4–րդ կետում: Ռազմական տեսանկյունից ԱՄՆ–ն դեռ ետ էր առնվազն Մեծ Բրիտանիայից: Սակայն ամերիկացիները գտնվում էին անհամեմատ ավելի ամուր ֆինանսական դիրքերում: Հետևաբար, եթե եվրոպական տերությունները չգնային «սպառազինությունների կրճատման», ամերիկացիները կգնային սպառազինությունների մրցավազքի ճանապարհով:

5–րդ կետում խոսվում էր գաղութային ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի մասին:

Ռուսաստանի խնդրին էր անդրադառնում 6–րդ կետը: Այն պահանջում էր Գերմանիայից զորքերը դուրս բերել ռուսական բոլոր տարածքներից՝ Ռուսաստանին տալով սեփական քաղաքական ապագան ինքնուրույն որոշելու հնարավորություն: Սակայն ԱՄՆ–ն ենթադրում էր, որ դա լինելու է քաղաքակիրթ և ոչ թե բոլշևիկյան կամ խորհրդային ապագայի ընտրություն:

7–րդ կետում ընդգծվում էր Բելգիայի ազատագրման և այդ պետության ինքնիշխանության վերականգնման անհրաժեշտության մասին: 8–րդ կետը նախատեսում էր, որ Գերմանիան պետք է վերադարձնի Էլզաս–Լոթարինգիան Ֆրանսիային: Իտալիայի կողմից տարածքային որոշակի ձեռքբերումների և վերջինիս սահմանների փոփոխության մասին էր խոսվում 9–րդ կետում: 10–րդ կետում խոսվում էր Ավստրո–-Հունգարիայի կազմի մեջ մտնող ժողովուրդներին ինքնավարություն տրամադրելու մտադրության մասին: Բացի այդ, Գերմանիան պետք է ազատեր Ռումինիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի բռնազավթված տարածքները: Այդ պահանջը ձևակերպված էր 11–րդ կետում: Օսմանյան կայսրության ժողովուրդներին ինքնավարություն տրամադրելու և սևծովյան նեղուցները բոլոր երկրների նավերի համար բացելու պահանջը ձևակերպված էր 12–րդ կետում: Լեհական անկախ պետականության վերականգնման անհրաժեշտության մասին էր խոսվում 13–րդ կետում:

Եվ վերջապես 14–րդ կետում խոսվում էր միջազգային նոր կազմակերպության՝ Ազգերի լիգայի ստեղծման ծրագրերի մասին:

§2. ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Մանդատային համակարգը ձևավորվեց Ազգերի լիգայի հետ մեկտեղ: Այն հաստատվեց Ազգերի լիգայի կանոնադրության 22–րդ հոդվածի համաձայն: Մանդատային համակարգը Առաջին աշխարհամարտից հետո տեղ գտած կարևորագույն նորամուծություններից էր: Գաղափարն առաջին անգամ ներկայացվել էր Ջ.Բիլրի կողմից, որը Փարիզում (1919 թ.) Վուդրո Վիլսոնի գլխավորած ամերիկյան պատվիրակության անդամ էր:

Մանդատային համակարգը ենթադրում էր Գերմանիայի՝ Աֆրիկայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, ինչպես նաև Օսմանյան պետության՝ Մերձավոր և Միջին Արևելքում ունեցած գաղութային և այլ տիրույթների նկատմամբ վերահսկողության և կառավարման իրագործում: Այն հիմնականում ԱՄՆ–ի կողմից ներշնչված փորձ էր՝ խուսափելու ավանդական կայսերական հարաբերություններից:

Հիշյալ տարածքների կառավարման իրավունքը զիջվեց որոշակի «պատասխանատու» երկրների մանդատի (արտոնագիր) հիման վրա, սակայն ամրագրվում էր, որ դրանք հանձնված են Լիգայի խնամատարությանն՝ ի նշան վերջինիս նկատմամբ «սրբազան վստահության»: Հետևաբար մեծ տերություններն իրենց վստահված մանդատային տարածքների կառավարումն իրագործում էին Ազգերի լիգայի անունից՝ կառավարման որոշակի սկզբունքների, միջազգային վերահսկողության ու ստուգումների պայմաններում: Սակայն հետագայում պարզ դարձավ, որ միջազգային վերահսկողական աշխատանքների իրագործումը դժվարին խնդիր էր լինելու մանդատային համակարգի կիրառման ողջ ժամանակահատվածի ընթացքում:

Համակարգն ակնհայտորեն փոխզիջումային տարբերակ էր հիշյալ տարածքների լիակատար բռնազավթման և միջազգային ուղղակի կառավարման միջև: Ազգերի լիգայի կանոնադրության 22–րդ հոդվածի ձևակերպման մեջ նշվում էր, որ մանդատատեր երկրները կոչված են խնամելու և զարգացնելու այն տարածքները, «որոնք բնակեցված են ժողովուրդներով, որոնք ժամանակակից աշխարհի դժվարին պայմաններում դեռևս ի վիճակի չեն ինքնուրույն ոտքի կանգնելու»: Այսպիսով՝ մանդատային համակարգը սերտորեն կապված էր ազգերի ինքնորոշման սկզբունքի հետ, քանզի ենթադրվում էր, որ մանդատատեր պետությունն իրագործում է իրեն վստահված տարածքի գործադիր իշխանությունն ընդհուպ մինչև այն ժամանակները (դա որոշվելու էր Ազգերի լիգայի կողմից), երբ հիշյալ տարածքներն ու դրանց բնակչությունը բավականաչափ փորձառու կլինեին ինքնակառավարվելու և լիարժեք օրինական կարգավիճակ ձեռք բերելու համար: Այդ նպատակով ներմուծվեցին մանդատների դասակարգման երեք խմբեր՝ համաձայն հիշյալ տարածքների՝ տվյալ ժամանակ ունեցած քաղաքակրթական զարգացման մակարդակի:

Առաջին խմբի մեջ էին մտնում այն երկրները, որոնք իրենց քաղաքակրթական զարգացման մակարդակով մանդատային երկրների շարքում կանգնած էին ամենից բարձր աստիճանի վրա: Հետևաբար գտնում էին, որ պայմանականորեն կարելի է ճանաչել հիշյալ երկրների ազգային անկախությունը: Սակայն այդ երկրների ղեկավարությունը կառավարման ընթացքում պետք է առաջնորդվեր մանդատատեր երկրի խորհուրդներով և ցուցումներով: Այդպես պետք է շարունակվեր այնքան ժամանակ, քանի դեռ մանդատային երկրները ի վիճակի չէին լինի ինքնուրույն կառավարվելու: Նշվում էր, որ մանդատը ստացող երկրի ընտրության հարցում պետք է հաշվի առնվեր նաև մանդատային կառավարման ենթակա երկրի կարծիքը: Այդ խմբին էին դասվում Սիրիան, որի մանդատը ստանձնեց Ֆրանսիան, ինչպես նաև Պաղեստինը և Միջագետքը, որոնց մանդատը ստանձնեց Մեծ Բրիտանիան: Ավելի ուշ Սիրիայից իբրև առանձին մանդատային միավոր անջատվեց Լիբանանը, Պաղեստինից՝ Անդրհորդա-

նանը (ներկայիս Հորդանանը): Իսկ Միջագետքը 1921թ. հռչակվեց իբրև Իրաքի թագավորություն: Ենթադրվում էր, որ մանդատային երկրներ պետք է դառնային նաև Հայաստանն ու Հիջազը: Սակայն 1920թ. հունիսին ամերիկյան Սենատը մերժեց Հայաստանի մանդատը, իսկ Հիջազը մտավ ավելի ուշ ստեղծված Սաուդյան Արաբիայի կազմի մեջ:

Երկրորդ խմբի մեջ էին մտնում այն երկրները, որոնք իրենց քաղաքակրթական զարգացման մակարդակով էականորեն զիջում էին առաջին խմբին: Գտնում էին, որ չի կարելի ճանաչել այդ երկրների քաղաքական անկախությունը, և նրանք պետք է գտնվեն մանդատատեր երկրի կառավարման ներքո: Ընդ որում՝ մանդատային կառավարման ընթացքում մանդատատեր երկիրը պետք է վերացներ այնպիսի չարաշահումներն ու ծայրահեղությունները, ինչպիսիք էին ստրկությունն ու ստրկավաճառությունը, զենքի և ալկոհոլի վաճառքը: Պետք է հաստատվեր կրոնական ազատություն, արգելվեր տեղացիների ռազմական ուսուցումն ու ամրությունների կառուցումը և այլն: Այս խմբի մեջ էին մտնում կենտրոնական Աֆրիկայի որոշ տարածքներ (Տոգո, Կամերուն, Տանգանիկա, Ռուանդա):

Երրորդ խմբի մեջ էին մտնում այն տարածքները, որոնք.

• իրենց քաղաքակրթական զարգացման մակարդակով էականորեն զիջում էին մյուս երկու խմբի երկրներին,

• փոքրաթիվ բնակչություն ունեին և նոսր էին բնակեցված,

• հեռու էին քաղաքակրթական կենտրոններից, սակայն մոտ էին հնարավոր մանդատատեր երկրին ենթակա տարածքներին:

Երրորդ խմբի մեջ էին ներառված հարավարևմտյան Աֆրիկայի տարածքներն (ապագա Նամիբիան) ու խաղաղօվկիանոսյան որոշ կղզիներ: Մեծ տերությունները որոշեցին, որ մանդատատեր երկրները այդ խմբի մեջ ներառված տարածքները պետք է կառավարեն իբրև իրենց տարածքների բաղկացուցիչ մաս, սակայն տեղի բնակչությանը որոշակի երաշխիքներ շնորհելու պայմանով: Արդյունքում այս խմբի տարածքներից Պապուա–Նոր Գվինեան անկախություն ստացավ միայն 1975թ., իսկ Նամիբիան (նախկին Հարավ–Արևմտյան Աֆրիկա)՝ 1990թ.:

Կային 14 մանդատային տարածքներ, որոնք բաժանված էին վեց մանդատատեր տերությունների միջև: Դրանք էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Բելգիան, Նոր Զելանդիան, Ավստրալիան և Ճապոնիան:

Մանդատային կառավարման առանձնահատկությունները

Մանդատային համակարգն էապես տարբերվում էր անվերահսկելի գաղութային կառավարումից և տարածքների ուղղակի զավթումից:

• Մանդատի պայմանների հիման վրա մանդատատար երկրները համաձայնվում էին իրագործել մանդատային կառավարումն Ազգերի լիգայի անունից: Հետևաբար հիշյալ մանդատները չէին ներառում մանդատային տարածքի զիջումը կառավարումն իրագործող երկրին:

• Առանց Ազգերի լիգայի համաձայնության մանդատատերը չուներ մանդատային տարածքը զավթելու, զիջելու կամ այլ կերպ տնօրինելու իրավունք:

• Մանդատատերը ենթակա էր զանազան բնույթի սահմանափակումների նաև մանդատային տարածքների բնակիչների զինվորական հավաքագրման և ռազմական ուսուցման բնագավառներում: Նույնիսկ երկրորդ և երրորդ խմբերի մանդատատերն իրավունք ուներ տեղացիներին ներգրավել ռազմական ուսուցման մեջ՝ բացառապես ներքին ոստիկանական և տվյալ տարածքների պաշտպանության կարիքներից ելնելով: Կառավարող տերությունները չունեին հիշյալ տարածքներում ռազմական բազաների կառուցման իրավունք:

• Քաղաքացիության տեսանկյունից մանդատային տարածքների բնակիչները ձեռք չէին բերում մանդատատեր երկրի հպատակություն:

• Տնտեսական տեսանկյունից մանդատատեր երկիրը պարտավոր էր վարել բաց դռների քաղաքականություն և Ազգերի լիգայի անդամ հանդիսացող բոլոր երկրների քաղաքացիների համար ապահովել այն իրավունքները, որ շնորհվել էին մանդատատեր երկրի քաղաքացիներին:

• Համենայն դեպս առաջին խմբի մանդատների դեպքում շեշտվում էր այն իրողությունը, որ մանդատային կառավարումը պետք է զարգանա այնպիսի ուղղությամբ, որ հնարավոր դարձնի հիշյալ տարածքների անկախացումն ապագայում:

Մանդատային կառավարման գործընթացի վերահսկման նպատակով ստեղծվեց Մանդատների մշտական հանձնաժողով: Մանդատատեր երկրները պարտավոր էին ներկայացնելու իրենց կառավարման վերաբերյալ տարեկան հաշվետվություններ, որ քննարկվում էին հիշյալ հանձնաժողովի կողմից՝ մանդատային կառավարումն իրագործող երկրի ներկայացուցչի մասնակցությամբ:

Բացառությամբ Իրաքի, որն անդամակցեց Ազգերի լիգային 1932թ., այս տարածքները անկախություն էին ձեռք բերելու միայն Երկրորդ աշխարհամարտից հետո: Ազգերի լիգայի լուծարումից հետո անկախություն ձեռք չբերած մանդատային տարածքները դարձան ՄԱԿ–ի խնամակալության տակ գտնվող տարածքներ:

Ներկայումս նախկին մանդատային տարածքների մեծ մասն արդեն ձեռք է բերել լիակատար անկախություն կամ առնվազն ընդլայնել իր ինքնուրույնությունը: Այսպիսով՝ մանդատային համակարգն էականորեն տարբերվում էր իր նախորդից՝ բռնազավթումից:

Չնայած իր ակնհայտ թերություններին և այն իրողությանը, որ մանդատային համակարգը երբեմն դիտվում է իբրև գաղութացման քաղաքակիրթ եղանակ՝ անվիճելի է այն փաստը, որ մանդատային համակարգը կախյալ տարածքների միջազգային վերահսկման առաջին փորձն էր: Այն մեծապես նպաստեց մինչ այդ միջազգային հարաբերություններում տիրապետող գաղութային համակարգի անկմանը: Մանդատատեր երկրների առաջնորդներն ու ժողովուրդը հոգեբանորեն հաշտվում էին այն մտքի հետ, որ իրենց վստահված մանդատային երկրներն ու նրանց տարածքը չեն լինելու իրենց հավերժ վերահսկողության ներքո, այլ վաղ թե ուշ պետք է ձեռք բերեն անկախություն:

Երկրորդ աշխարհամարտից հետո մանդատային համակարգը փոխարինվեց խնամակալության համակարգով: Ենթակա կամ խնամակալության ներքո գտնվող տարածքների կառավարման համակարգը գնալով կատարելագործվում էր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք մանդատային համակարգի նախապատմությունը. ի՞նչ էր այն ենթադրում, ո՞րն էր դրա էությունը: Մանդատների դասակարգման ի՞նչ խմբեր ներմուծվեցին. համառոտ պատմե՛ք դրանց մասին, ապա աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք դրանք: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ԱՄՆ-ի սենատը մերժեց ստանձնել Հայաստանի մանդատը: Թվարկե՛ք մի քանի մանդատատեր երկրներ:

2. Որո՞նք էին մանդատային կառավարման առանձնահատկությունները: Նշե՛ք մանդատային և գաղութային կառավարման միջև մի քանի էական տարբերություններ:

3. Ո՞վ էր իրականացնում մանդատային կառավարման գործընթացի վերահսկողությունը: Մինչև ե՞րբ գոյատևեց մանդատային կառավարման համակարգը. ի՞նչը փոխարինեց դրան:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

§1. ԵՎՐՈՊԱԿԵՆՏՐՈՆ ԱՇԽԱՐՀՆ ՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՆԴԻՐԸ

Հետպատերազմյան իրավիճակը

XX դարի առաջին կեսին աշխարհը շարունակում էր մնալ եվրոպակենտրոն: Քաղաքական կարևորագույն որոշումները կայացվում էին եվրոպական առաջատար երկրների մայրաքաղաքներում: Նույնիսկ պատմական իրադարձությունները ուշադրության էին արժանանում այնքանով, որքանով դրանք առնչվում էին Եվրոպային: ***Եվրոպան ավանդաբար դիտվում էր իբրև աշխարհի կենտրոն:*** Սակայն «Եվրոպայի քաղաքակրթական ինքնասպանություն» որակված Առաջին աշխարհամարտը հանգեցրեց հոգևոր ճգնաժամի: Իր կորստաբերությամբ այն աննախադեպ էր պատմության մեջ: Պատերազմից անմիջապես հետո լույս տեսած Օ.Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» գիրքը հիմնականում արտացոլում էր լավատեսության անկման ու իդեալների փլուզման ընդհանուր այն մթնոլորտը, որ տիրում էր Եվրոպայում:

Պատերազմի հետևանքով տեղ գտած տնտեսական փլուզումն ակնհայտ էր: Այն ներառել էր ոչ միայն Եվրոպան, այլև Ասիայի ու Աֆրիկայի շատ շրջաններ: Սակայն ռազմական գործողությունները գերազանցապես ընթացել էին Եվրոպայում: Ձնջելով ճակատի և թիկունքի սահմանագիծը՝ պետություններն իրենց ողջ տնտեսական ներուժը նվիրաբերել էին հաղթանակի հեռանկարին:

Պատերազմի ավարտն ուղեկցվում էր սոցիալական և աշխարհաքաղաքական ուժգին ցնցումներով՝ հեղափոխություններ, կայսրությունների փլուզում, նորանկախ պետությունների ստեղծում, գաղութային տարածքների վերաբաժանում:

Հեղափոխական շարժման աննախադեպ պայթյուն եղավ գրեթե բոլոր երկրներում: Ուժգին հեղափոխություններ եղան Ռուսաստանում (1917թ.), Գերմանիայում (1918թ.), հեղափոխական շարժումներ՝ Ֆինլանդիայում, Ավստրիայում, Չեխոսլովակիայում: Կազմավորվեցին Բավարիայի և Հունգարիայի խորհրդային հանրապետությունները:

Պատերազմի և սոցիալական լարվածության պայմաններում իրենց դիրքերն ամրապնդեցին սոցիալ–դեմոկրատական, սոցիալիստական և կոմունիստական կուսակցությունները: Ավելին՝ Աշխարհամարտի արդյունքում ձևավորվեց միջազգային կոմունիստական շարժումն ու Կոմունիստական ինտերնացիոնալը:

Համաշխարհային աղետը սոցիալ–հոգեբանական ցնցում առաջացրեց մասնակից երկրներում: Խրամատներում և ռազմագերիների ճամբարներում տևական գոյապայքարը բացասաբար էր անդրադարձել զինվորների հոգեբանության վրա: Կտրուկ աճել էր որբերի թիվը:

Պատերազմը բացասաբար անդրադարձավ մարդկանց կենսամակարդակի ու պետությունների ֆինանսական դրության վրա:

Պատերազմի արդյունքում էական փոփոխություններ կրեց նաև աշխարհի քաղաքական քարտեզը: Փլուզվեցին Ավստրո–Հունգարիան, Ռուսական և Օսմանյան կայսրությունները: Գերմանիան դարձավ ժողովրդավարական հանրապետություն: Եվրոպայում և Միջին Արևելքում ի հայտ եկան նորանկախ պետություններ: Գաղութային ժողովուրդների շրջանում անկախացման հեռանկարի իրական հույսեր արթնացան: Նրանք տեսան, որ «սպիտակամորթները»՝ գերմանացիներն ու անգլիացիները, հավասարապես կարող են պարտություն կրել:

Այսպիսով՝ Առաջին համաշխարհային պատերազմը խորապես ցնցեց եվրոպական հասարակության հիմքերը: Հեղափոխություններն ու քաղաքական ճգնաժամերը, ժողովուրդների սնանկացումն ու ապագայի անորոշությունը պահանջում էին նոր գաղափարներ ու քաղաքական նոր կուրսի մշակում: Կարևորագույն խնդիր էր դարձել նաև հետպատերազմյան տնտեսական համակարգի վերակերտումը:

Պետական–մոնոպոլիստական կապիտալիզմ

Հոգևոր ճգնաժամին և դրա հաղթահարմանը զուգահեռ էական փոփոխություններ եղան նաև տնտեսական համակարգում: Հետագա զարգացում ապրեց պետական–մոնոպոլիստական կապիտալիզմը: Վերջինիս բնորոշ են պետության հետ մոնոպոլիստական ուժերի սերտաճումը մոնոպոլիստական համակարգի պահպանման և ամրապնդման նպատակով:

Մոնոպոլիստական կապիտալիզմի վերաճումը պետական–մոնոպոլիստական համակարգի որոշակի միտումների արդյունք է: Դրանք իրենց զգացնել տվեցին դեռ XIX և XX դարերի սահմանագծին, երբ մրցակցության դաշտը փոքրանում էր, իսկ մոնոպոլիաները միավորվում էին: Դրանց միավորումից առաջացան կարտելներ, սինդիկատներ, տրեստներ, կոնցեռններ:

Կարտելի հիմքում դրված էր արտադրության ծավալների, աշխատանքի ընդունելու պայմանների և արտադրանքի իրացման վերաբերյալ պայմանագիրը: Պահպանվում էր ձեռնարկությունների արտադրական և առևտրական ինքնուրույնությունը:

Սինդիկատը ստեղծվում էր միասնական արտադրական ներկայացուցչության ստեղծման վերաբերյալ պայմանագրի հիման վրա: Պահպանվում էր կողմերի արտադրական ինքնուրույնությունը:

Տրեստի դեպքում պահանջվում էր ավելի սերտ համագործակություն: Այստեղ առկա է արտադրության և իրացման միասնական կառավարման համակարգի ստեղծում:

Կոնցեռնի դեպքում որոշակի միաձուլում է կատարվում: Կոնցեռնը ներկայացնում է մասնակիցների կապիտալի փաստացի միաձուլում և միասնական միջճյուղային ֆինանսական ու արտադրական համակարգ:

Պետական–մոնոպոլիստական կապիտալիզմի թվարկված դրսևորումներն ու միավորման ձևերը ավելի ակնհայտ դարձան Առաջին աշխարհամարտի արդյունքում: Պատերազմող երկրների տնտեսական ռեսուրսների կենտրոնացման և տնտեսության ռազմականացման անհրաժեշտությունը հանգեցրեց պետության անմիջական միջամտությանը տնտեսական կյանքին:

Առաջին աշխարհամարտից հետո ձեռներեցության նկատմամբ պետական վերահսկողությունը գրեթե վերացվեց: Սակայն զարգացում ստացավ պետության ֆինանսավարկային գործունեությունը, որն ուղղված էր տնտեսական աղետի եզրին կանգնած երկրների փրկությանը: Գերմանիայի ռեպարացիաների խնդրի կարգավորմանն ուղղված ամերիկյան բանկիրներ Դաուեսի և Յանգի պլանները դրա ամենավառ վկայությունն են:

Գաղափարական և քաղաքական նոր ուղղություններ

Եվրոպայի պատմության ընթացքում առաջին անգամ սոցիալ–դեմոկրատական կուսակցությունները գլխավորեցին կառավարություններ կամ մտան կառավարող կոալիցիաների մեջ: Սոցիալ–դեմոկրատների ազդեցության աճին նպաստում էր բոլոր

եվրոպական երկրներում ընդունված համընդհանուր ընտրական իրավունքը: Ընտրելու իրավունք ստացան նաև կանայք, որոնք պատերազմից առաջ զրկված էին դրանից: 1920–ական թթ. քաղաքական պայքարում կարևոր դեր սկսեց խաղալ մամուլը, որ ներկայացնում էր տարբեր սոցիալական շերտերի ու քաղաքական խմբերի շահերը: Տեղեկատվության ազդեցիկ միջոցներ դարձան ռադիոն, կինեմատոգրաֆը: Ծնունդ առան ***«զանգվածային մշակույթն»*** ու զանգվածային հանդիսությունները:

Կայունացման և բարեփոխումների իրականացման միտումը բնորոշ էր ոչ միայն կայուն խորհրդարանական համակարգ ունեցող երկրներին (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ֆրանսիա, սկանդինավյան երկրներ): 1920–ական թվականներին ժողովրդավարացման ու բարեփոխումների միտումներ սկսվեցին նաև այն երկրներում, որտեղ մեծ դեր էին խաղում աշխատավորական շարժումները: Այստեղ ձևավորվում էր բարենորոգչական շարժում, որն ընդունակ էր ազդելու պետական կառավարման գործընթացների վրա:

Այն երկրներում, որտեղ կայունության երաշխավոր կենտրոնը հաստատուն չէր, հասարակությունն ի զորու չէր լինում արգելելու աջ կամ ձախ ծայրահեղական ուժերի անցումն իշխանության (Իտալիա, Գերմանիա, Ռուսաստան): Այս երկրները շարժվեցին ***ամբողջատիրության*** ուղիով: Կար նաև մեկ այլ միտում՝ ***տիրազորական*** (ավտորիտար) վարչակարգերի հաստատումը: Այն գերիշխում էր Եվրոպայի անցումային փուլը հաղթահարող երկրներում (Հունգարիա, Բուլղարիա, Հունաստան, Ալբանիա):

Պացիֆիստական շարժումն ու հավաքական անվտանգության գաղափարը

Էականորեն ծավալվում է նաև պացիֆիստական (խաղաղապաշտական) շարժումը: Ի տարբերություն խաղաղասերների՝ խաղաղապաշտները ձգտում էին բացառելու պատերազմներն ու ամեն գնով ապահովելու խաղաղությունը: Նման մոտեցումը կարող էր հանգեցնել ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունքների: Այսպես՝ 1928թ. մի շարք երկրներ ստորագրեցին Փարիզի պայմանագիրը կամ ***Բրիան–Քելլոգի պակտը:*** Այն հռչակում էր պայմանագրի մասնակիցների հրաժարումը պատերազմից՝ որպես միջազգային վեճերի կարգավորման միջոցի և ազգային քաղաքականության գործիքի: Պետությունների միջև վեճերն ու բախումները այսուհետև ենթակա էին լուծման բացառապես խաղաղ միջոցներով: Պակտը հեռու էր կատարյալ լինելուց, սակայն ուղղված էր նվաճողական պատերազմների դեմ, և նրա մասնակիցներ դարձան տասնյակ երկրներ:

Հաշվի առնելով խաղաղապաշտական տրամադրությունները՝ բազմաթիվ երկրների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) կառավարություններ 1930–ական թթ. վարում էին, այսպես կոչված, «խաղաղեցման»՝ ագրեսորին մեծ զիջումների գնով պատերազմելու մտադրությունից հեռացնելու քաղաքականություն:

Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում միջազգային հարաբերությունների հիմքում դրվեց նաև նախագահ Վ.Վիլսոնի գաղափարը՝ ***հավաքական անվտանգության սկզբունքը:*** Եթե նախկինում միջազգային կայունությունը ձգտում էին ապահովել դաշինքներ ստեղծելու և ուժերի հավասարակշռություն հաստատելու միջոցով, ապա այժմ պետք է աշխատեին դրան հասնել հավաքական անվտանգության համակարգի միջոցով:

Իրենց էությամբ հավաքական անվտանգության և դաշինքների ստեղծման համակարգերը լիովին տարբեր երևույթներ են: Այսպես.

• Դաշինքներն ուղղված են ընդդեմ կոնկրետ սպառնալիքի և ենթադրում են կոնկրետ պարտավորություններ երկրների որոշակի խմբի համար: Մինչդեռ հավաքական անվտանգության սկզբունքը չի ներառում կոնկրետ սպառնալիքի առկայություն

և չի տալիս երաշխիքներ որևէ առանձին երկրի: Այն հակադրվում է խաղաղության դեմ ուղղված ցանկացած սպառնալիքի, անկախ նրանից, թե ով է դրա կրողը, կամ ում դեմ է այն ուղղված:

• Դաշինքները ենթադրում են կոնկրետ հակառակորդի առկայություն: Մինչդեռ հավաքական անվտանգության համակարգը պաշտպանում է միջազգային իրավունքը վերացականորեն: Կարգուկանոնը նրա միջոցով ապահովվում է ճիշտ այնպես, ինչպես քրեական օրենսգիրքն է ապահովում երկրի իրավական համակարգը:

• Դաշինքների դեպքում պատերազմ սկսելու հիմնավոր պատճառ (կազուս բելլի) է դաշինքի անդամ երկրներից որևէ մեկի շահերի կամ անվտանգության դեմ ուղղված ոտնձգությունը: Մինչդեռ հավաքական անվտանգության համակարգի համար պատերազմ սկսելու հիմնավոր պատճառը վիճելի խնդիրների խաղաղ կարգավորման սկզբունքի խախտումն է:

• Հավաքական անվտանգության համակարգն անվտանգությունն ապահովում է միայն այն դեպքում, եթե բոլոր երկրները մարտահրավերի բնույթի վերաբերյալ ունեն մոտավորապես նման տեսակետներ և պատրաստ են պատժամիջոցներ կիրառելու՝ անկախ տվյալ իրողության հետ կապված կոնկրետ ազգային շահերից:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտին հաջորդած ժամանակաշրջանին բնորոշ էին թե՛ հոգևոր ճգնաժամը, թե՛ այդ ճգնաժամից նոր գաղափարների իրագործման ճանապարհով դուրս գալու միտումը: 1920–ական թթ. կեսերին առաջատար երկրներում տեղ գտած տնտեսական բարգավաճումն ու «անհոգ տարիներն» առժամանակ լավատեսություն ներշնչեցին Եվրոպային և ԱՄՆ–ին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բացատրե՛ք «եվրոպակենտրոն աշխարհ» արտահայտությունը: Ներկայացրե՛ք Առաջին աշխարհամարտի աղետալի հետևանքները Եվրոպայի համար: Ինչպիսի՞ սոցիալական և աշխարհաքաղաքական ցնցումներ հետևեցին Առաջին աշխարհամարտին: Հատկապես ո՞ր երկրներում էին դրանք ավելի զգալի: Ինչպիսի՞ փոփոխությունների ենթարկվեց աշխարհի քաղաքական քարտեզը:

2. Ձեր կարծիքով՝ ի՞նչը նպաստեց Եվրոպայում սոցիալ–դեմոկրատական կուսակցությունների ազդեցության աճին: Ինչո՞ւ Եվրոպայի որոշ երկրներ զարգացան ավտորիտար և ամբողջատիրական ուղիով: Որո՞նք էին դրանք:

3. Ներկայացրե՛ք պացիֆիստական շարժման էությունը: Ե՞րբ կնքվեց Բրիան–Քելլոգի պակտը, ի՞նչ էր այն նախատեսում: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն:

4. Համեմատե՛ք հավաքական անվտանգության համակարգի և միջազգային կայունություն ապահովող դաշինքների սկզբունքները:

§2. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ

Ազատականություն

Թեև եվրոպական երկրների մի մասն ընթանում էր ամբողջատիրական և տիրազորական վարչակարգերի ուղիով, սակայն առաջատար երկրների հիմնական մասը հավատարիմ մնաց ժողովրդավարությանն ու ազատական (լիբերալ) վարչակարգերին: Ազատական վարչակարգի բնորոշ հատկանիշներն են՝

• իշխանության տարանջատումն օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի,
• քաղաքացիական ազատությունների և մարդու իրավունքների պահպանումը,
• հանդուրժողականությունը կրոնի ու հավատքի նկատմամբ,
• մամուլի ազատությունն ու գրաքննության բացակայությունը,
• համընդհանուր ընտրական իրավունքը,
• հասարակության մեջ տարբեր քաղաքական և հասարակական հայացքների գոյությունը,
• շուկայական տնտեսությունը և բաց սոցիալ–տնտեսական համակարգը:

XX դարի ազատական վարչակարգերի առանձնահատկություններից են նաև հասարակության համընդհանուր ժողովրդավարացումը, քաղաքացիների ակտիվ մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, բարձր զարգացած տնտեսությունը: Ազատական երկրների շարքին էին դասվում ***ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, սկանդինավյան երկրները, Կանադան*** և այլն:

Մեծ Բրիտանիա: Իր ծաղկման գագաթնակետին գտնվող Բրիտանական կայսրությունը 1919թ. զբաղեցնում էր երկրագնդի ցամաքային տարածքի մոտ քառորդ մասը (37,2 մլն կմ^2)՝ ներառելով աշխարհի բնակչության շուրջ մեկ քառորդը (462,6 մլն մարդ): Կայսրության տիրույթները կառավարման տեսանկյունից բաժանվում էին երեք խմբի.

ա) ***դոմինիոններ,*** որոնք սկզբնապես բնակեցված էին հիմնականում եվրոպացիներով և ձգտում էին ինքնակառավարման,

բ) ***գաղութներ,*** որտեղ ոչ բրիտանական ծագում ունեցող բնակչությունը կառավարվում էր մետրոպոլիայից եկած պաշտոնյաների կողմից,

գ) ***բրիտանական պրոտեկտորատի*** (հովանավորության) տակ գտնվող տարածքներ ու մանդատային տարածքներ:

Մեծ Բրիտանիան իշխում էր Ազգերի լիգայում և առաջինն էր միջազգային համակարգը վերահսկող «մեծ քառյակում» (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա):

Առաջին աշխարհամարտից հետո Մեծ Բրիտանիայի քաղաքական կյանքի կարևորագույն իրողությունը երկկուսակցական համակարգի ճգնաժամն էր: Նախկինում պայքարն ընթանում էր պահպանողական և լիբերալ (ազատական) կուսակցությունների միջև: Աշխարհամարտից հետո վերջինիս դիրքերը սկսեցին թուլանալ: Զուգահեռաբար իր դիրքերն էր ամրապնդում ***լեյբորիստական*** (աշխատավորական) կուսակցությունը՝ ջանալով փոխարինել լիբերալ կուսակցությանը: Լիբերալների որոշ կարգախոսներ չէին համապատասխանում ստեղծված իրադրությանը, իսկ մյուս մասը «յուրացրել» էին լեյբորիստներն ու պահպանողականները՝ լիբերալներին զրկելով ավանդական ընտրողներից:

Այդուհանդերձ, երկկուսակցական համակարգի ճգնաժամը հաղթահարվեց: Մեծ Բրիտանիայում ներքաղաքական իրադրությունը հիմնականում կայուն էր: Դրան նպաստում էր այն, որ երկրի քաղաքական կյանքում հիմնականում իշխում էին պահպանողականները: Միայն ***1924 թ.*** և ***1929–1931 թթ.*** շրջահայաց քաղաքական գործիչ

Ռ. Մակդոնալդի ղեկավարությամբ էր, որ լեյբորիստական կուսակցությանը հաջողվեց ձևավորել կառավարություններ: Մյուս դեպքերում պահպանողականներն էին հիմնական դերակատարները:

Միջպատերազմյան շրջանի ընտրությունների ընթացքում պահպանողականները լայնորեն օգտագործում էին սոցիալական և ազգային երեսպաշտության միջոցները: Պահպանողականները հաճախ խոստանում էին իրագործել այն, ինչը մտադիր էր ընտրողներին առաջարկել մրցակից կուսակցությունը: Իսկ դա զրկում էր հակառակորդին հաղթաթղթերից: Բրիտանացի ընտրողներին պահպանողականների մեջ գրավում էր նաև վերջիններիս վճռականությունը պայքարելու ծայրահեղ ձախ և ծայրահեղ աջ ու ազգայնական շարժումների դեմ:

Ֆրանսիա

Առաջին աշխարհամարտից հետո տարածքային մեծ ձեռքբերումներ ունեցավ նաև Ֆրանսիան: Ֆրանսիայի անդրծովյան տիրույթները երկու տիպի էին՝ ա) պրոտեկտորատներ ու ենթամանդատային տարածքներ, բ) գաղութներ: Ֆրանսիան ազդեցություն ուներ նաև Արևելյան Եվրոպայի որոշ պետությունների նկատմամբ (Լեհաստան, Հարավսլավիա, Ռումինիա, Չեխոսլովակիա): Սակայն նրա արտաքին քաղաքականությունը գտնվում էր Բրիտանիայի ստվերի ներքո:

Ֆրանսիայում առկա էր քաղաքական ուժերի մեծ տարասեռություն՝ ծայրահեղ պահպանողականներից մինչև սոցիալիստներ, սոցիալ–դեմոկրատներ և կոմունիստներ: Կառավարությունները ձևավորվում էին տարբեր կուսակցությունների դաշինքների հիման վրա: Սակայն միշտ չէ, որ դաշինքի անդամների շահերը համադրելի էին: Դրանով էր պայմանավորված կառավարությունների հաճախակի փոփոխությունը:

Քաղաքական անկայունության պայմաններում Ֆրանսիայում նույնպես ստեղծվեցին ֆաշիստական կազմակերպություններ և կուսակցություններ: 1927թ. նախկին ճակատայիններից ստեղծվեց ֆաշիստների ռազմականացված մի կազմակերպություն՝ «Մարտական խաչերը»: Իսկ արդեն 1930–ական թթ. սկզբներին զգալի համբավ ձեռք բերեցին «Ֆրանսիստները»:

Չնայած հարվածային խոշոր ջոկատների ու կազմակերպությունների առկայությանը՝ ֆաշիստների շարժումն անհամեմատ ավելի թույլ էր, քան Գերմանիայում և Իտալիայում: Պատճառն այն էր, որ ֆրանսիացի կայսերապաշտների տրամադրության տակ էին գտնվում իրենց գաղութային կայսրության վիթխարի տարածքներն ու միջոցները: Տնտեսական ճգնաժամի ծախսերի զգալի մասը դրվում էր գաղութների վրա: Ֆրանսիան պատերազմից հետո այնքան չթուլացավ, որքան պարտված Գերմանիան: Միջին խավը չտեսավ այնպիսի դաժան սեփականազրկում, ինչպիսին Գերմանիայում: Բացի այդ, Ֆրանսիան Առաջին աշխարհամարտից դուրս եկավ որպես հաղթող, և այդ պատճառով այնտեղ իրավիճակն այնքան էլ նպաստավոր չէր ազգայնամոլական ծայրահեղ քարոզչության համար: Եթե Իտալիայում և Գերմանիայում բոլոր ֆաշիստական, նացիստական և ազգայնական կուսակցությունները միավորվեցին մեկ միասնական կուսակցության մեջ, ապա ֆրանսիական ֆաշիզմը պառակտված էր: Բացի այդ, ժողովրդավարական ավանդույթները Ֆրանսիայում ավելի հաստատուն էին: Կարևոր էր և այն, որ ֆրանսիական աջ կառավարությունները, պետական հիմնադրամներից գաղտնի դրամական օժանդակություն ցույց տալով ֆաշիստների ղեկավարներին, նրանց պահում էին կախվածության մեջ: Իսկ ֆրանս–գերմանական դարավոր թշնամությունը անհնարին էր դարձնում գերմանական նացիստների օգնությունը ֆրանսիացի ֆաշիստներին:

ԱՄՆ

Իր ժամանակաշրջանից առաջ անցած ժողովրդավարական նախագահ Վ.Վիլսոնի (1913–1921թթ.) գաղափարները կիրառում գտան Եվրոպայում և հետպատերազմյան միջազգային հարաբերություններում: Սակայն ԱՄՆ–ում նրա հետևորդները գնալով նվազում էին: Արդյունքում՝ 1921–1933թթ. նախագահական պաշտոնը վարում էին հանրապետական գործիչները: 1920–ական թվականներին տեղ գտած տնտեսական վերելքը լավատեսություն էր ներշնչում ամերիկացիներին:

ԱՄՆ–ի *«բարգավաճման ժամանակաշրջանի»* (1923–1929թթ.) նախագահ Ք.Քուլիջը մի առիթով նշեց. ***«Նա, ով կառուցում է գործարան, տաճար է կառուցում»:*** ԱՄՆ–ի նախագահը նկատի ուներ, որ գործարանի կառուցման շնորհիվ բազմաթիվ մարդիկ աշխատանք են ստանում և ապահովում իրենց ընտանիքի բարեկեցիկ կյանքը:

ԱՄՆ–ում մեծ ընդունելություն գտավ հավերժական բարգավաճման գաղափարը: ԱՄՆ–ի ստեղծման պահից այն միտքն էր արմատավորվում, որ այստեղ չեն կարող լինել ազգային, կրոնական և դասակարգային հակամարտություններ, որ կարգելակեին բարգավաճման գործընթացը: Ամերիկացի պրոֆեսոր Թ.Քարվերի կարծիքով՝ փայատիրական կապիտալի ու փայատերերի թվի արագ աճը տանում է դեպի խաղաղ տնտեսական հեղափոխություն: Ձեռնարկությունում աշխատող բանվորները դառնում են դրա համատերեր, և ջնջվում է ձեռնարկատերերի ու բանվորների միջև տարբերությունը: Նրա կարծիքով՝ տեղի է ունենում հարստության խաղաղ վերաբաշխում:

Ոչինչ այնքան չէր բնորոշում 1920–ական թվականների ամերիկյան իրողությունները, որքան Ֆորդի Տ մակնիշի ավտոմեքենան: Ամերիկյան գործարար Հ.Ֆորդը դեռ 20–րդ դարի սկզբներին հիմնեց Ֆորդ ավտոմոբիլային գործարանը, սկսելով ավտոմեքենաների զանգվածային արտադրությունը: 1908–1927թթ. ընթացքում վաճառվեց Ֆորդի արտադրության 15 միլիոն ավտոմեքենա՝ ԱՄՆ–ում արտադրված բոլոր ավտոմեքենաների ուղիղ կեսը: Կիրառելով հոսքագծերի արդիականացման բնագավառում Ֆ.Թեյլորի նոր մեթոդները, Ֆորդը նպատակ էր հետապնդում այնքան նվազեցնել ավտոմեքենայի արժեքը, որ այն միանգամայն մատչելի լիներ միջին եկամուտ ունեցող միլիոնավոր ամերիկացիների համար: Եվ դա նրան հաջողվեց: 1924թ. Ֆորդ Տ մակնիշի այն ժամանակներում հանրահռչակ ավտոմեքենան արժեր ընդամենը 290 դոլար: Ավտոմեքենան ոչ միայն նպաստեց ԱՄՆ–ի տնտեսական աճին ու զարգացմանը, այլև փոխեց ողջ ամերիկյան կենսակերպը: Պատահական չէ, որ 1920–ական թվականները հաճախ բնորոշում են իբրև «ավտոմոբիլի դարաշրջան»:

1920–ական թվականների դրությամբ ԱՄՆ–ում մեծ կարևորություն ձեռք բերեց ներգաղթի խնդիրը: Նախկինում ԱՄՆ ներգաղթողների մեծագույն մասը գալիս էին հյուսիսային Եվրոպայից (բրիտանացիներ, սկանդինավյան երկրների քաղաքացիներ, գերմանացիներ, իռլանդացիներ և շոտլանդացիներ): 19–րդ դարի վերջին քառորդին իրավիճակը փոքր–ինչ փոխվեց: Գնալով ավելի էր մեծանում հարավային և արևելյան եվրոպայից ներգաղթողների թիվը: Իսկ 1920–ական թվականներին հյուսիսային Եվրոպայից ԱՄՆ ներգաղթողներն արդեն ակնհայտ փոքրամասնություն էին կազմում: Ազգայնականների շրջանում սա մտահոգություն առաջ բերեց, որ ԱՄՆ–ի ազգագրական և մշակութային պատկերը կարող է փոխվել: Թեև ԱՄՆ–ը շարունակում էր որակվել իբրև «ժողովուրդների, մշակույթների ու ռասաների ձուլման կաթսա», մտահոգություն կար, որ այդ ձուլման կաթսան կարող է չգործել: Եթե նախկինում ԱՄՆ–ում ներգաղթողներին ընդունում էին գրկաբաց և ներգաղթողներն ինքնաբերաբար դառնում էին ԱՄՆ–ի քաղաքացիներ, ապա այժմ խստացվում էր ներգաղթի օրենսդրությունը: 1917թ. ԱՄՆ–ի կոնգրեսի որոշմամբ ներգաղթողների

համար պարտադիր դարձան գրագիտության քննությունները: Իսկ արդեն 1921 և 1924թթ. ընդունված բանաձևերով Կոնգրեսն էլ ավելի էր խստացնում ներգաղթի վերաբերյալ օրենսդրությունը, սահմանելով որոշակի քվոտաներ և առավելությունը տալով հյուսիսային Եվրոպայից ներգաղթողներին:

Բարգավաճման ու լավատեսության մթնոլորտը գերիշխում էր: Սակայն 1929թ. սկսվեց տնտեսական մեծ ճգնաժամը: Այժմ արդեն նիհիլիզմն էր իշխում ԱՄՆ–ում: Միայն նախագահ ***Ֆ. Ռուզվելտի (1933–1945)*** կառավարման օրոք ԱՄՆ–ը դուրս եկավ ճգնաժամից:

Արտաքին քաղաքականության բնագավառում ԱՄՆ–ը որդեգրել էր մեկուսացման ուղին: ԱՄՆ–ը չանդամակցեց Ազգերի լիգային՝ իր առաջնահերթ շահերն ամրագրելով Վաշինգտոնի համաձայնագրերում: Սակայն ժամանակ առ ժամանակ ԱՄՆ–ը միջամտում էր գերմանական փոխհատուցումների խնդրին: Մեկուսացման քաղաքականությունը ավանդական էր դարձել ԱՄՆ–ի համար: Նա հեռու էր Եվրոպայից և չուներ սպառնալիք ներկայացնող ուժեղ հարևաններ: Սա թույլ էր տալիս հեռու մնալ դիվանագիտական բարդացումներից: Սակայն աշխարհում ԱՄՆ–ի դերի մեծացմանը զուգահեռ այս քաղաքականությունը խնդիրներ էր առաջացնում:

Մեկուսացման կողմնակիցների մի մասի կարծիքով՝ միջազգային դիրքերի ամրապնդման լավագույն միջոցը «ձեռքերի ազատության» պահպանումն է, հրաժարումը եվրոպական երկրների հետ ռազմաքաղաքական դաշինքներից: Հաշվարկը պարզ էր. երկու խմբավորումների միջև 1930–ական թթ. հասունացող հակադրությունը նրանց տանելու էր պատերազմական հակամարտության ու փոխադարձ թուլացման: Սա ԱՄՆ–ին հնարավորություն էր տալու պայքարի մեջ մտնելու վճռական պահին ու կողմերին իր պայմանները թելադրելու: Իսկ առավել ծայրահեղ գործիչները նույնիսկ պահանջում էին համաձայնության գալ ֆաշիստական խմբավորման երկրների հետ: Կար նաև ավանդական մեկուսացման կողմնակիցների խմբավորում: Վերջինիս կարծիքով՝ «չմիջամտելու» քաղաքականությունը հնարավորություն կտար ԱՄՆ–ին առևտուր անելու պատերազմող խմբավորումների հետ ու հարստանալու այնպես, ինչպես արդեն եղել էր նախկինում:

Գերմանիայի և Ճապոնիայի ծավալապաշտության ընդլայնման պայմաններում ԱՄՆ–ի նախագահ Ֆ.Ռուզվելտը փորձեց վիճարկել մեկուսացման ու չեզոքության քաղաքականության նպատակահարմարությունը: Նա կոչ արեց միավորելու բոլոր խաղաղասեր ժողովուրդների ջանքերը ռազմատենչ տերությունների դեմ: Սակայն Կոնգրեսը դեմ էր «չեզոքության» մասին օրենքի վերանայմանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են ազատական վարչակարգի բնորոշ հատկանիշները:

2. Ներկայացրե՛ք Մեծ Բրիտանիայի ունեցած դերը աշխարհի քաղաքական կյանքում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Կառավարման տեսանկյունից ի՞նչ խմբերի էր բաժանված Բրիտանական գաղութային կայսրությունը: Մեծ Բրիտանիայի ներքաղաքական կյանքում ի՞նչ պայքար էր ընթանում, ինչո՞վ ավարտվեց այն: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր պահպանողականների հաջողության գաղտնիքը:

3. Ներկայացրե՛ք Ֆրանսիայում տիրող իրավիճակը Առաջին աշխարհամարտից հետո: Ի՞նչ տիրույթներ ուներ Ֆրանսիան, և ի՞նչ կարգավիճակ ունեին դրանք: Ֆաշիստական ի՞նչ կազմակերպություններ ձևավորվեցին Ֆրանսիայում: Ո՞րն էր ֆրանսիական ֆաշիզմի առանձնահատկությունը:

4. Բացատրե՛ք հավերժ բարգավաճման գաղափարը: Ի՞նչ քաղաքականություն էր վարում ԱՄՆ–ն արտաքին բնագավառում, ինչո՞ւ:

§3. ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Կայսրությունների կործանումն ու նորանկախ պետությունների առաջացումը Արևելյան Եվրոպայում

Բազմազգ Ավստրո–Հունգարիայում տեղ գտած հեղափոխական գործընթացների արդյունքում դուալիստական այս միապետությունը փլուզվեց: Ավստրիայում և Հունգարայում միապետական կառավարությունները տապալվեցին և համապատասխանաբար 1918թ. նոյեմբերի 12–ին և 16–ին հռչակվեցին Ավստրիայի և Հունգարիայի հանրապետությունները: Հեղափոխական և ազգայնական շարժումների կենտրոններ դարձան ոչ միայն Վիեննան և Բուդապեշտը, այլև Պրագան և կայսրության մյուս ծայրամասերը: Արդեն 1918թ. հոկտեմբերին Չեխիայում և Սլովակիայում ձևավորվեցին նոր իշխանության մարմինները՝Ազգային կոմիտեները: Վերջիններս համաձայնության եկան երկազգային պետության՝ Չեխոսլովակիայի հանրապետության ստեղծման հարցում: Սակայն չեխական և սլովակյան տարածքներից բացի նորաստեղծ պետությունը պետք է ընդգրկեր նաև գերմանական և սլավոնական բնակչությամբ տարածքներ:

1918թ. աշնանը Ավստրո–Հունգարիայի հարավսլավական տարածքներում նույնպես սկսվեցին հակաավստրիական ելույթներ: Այդ նույն ժամանակահատվածի ընթացքում ռազմական գործողությունները շարունակող իտալացիները մտադիր էին տարածքներ գրավել Ադրիատիկի ափին: Նմանատիպ սպառնալիքները բացառելու նպատակով Սերբական թագավորությունը և այդ օրերին ստեղծված սլովենների, խորվաթների և սերբերի պետությունը (ՍԽՍՊ) միավորման և միասնական նոր պետության՝ Սերբա–խորվաթա–սլովենական թագավորության (ՍԽՍԹ) ստեղծման վերաբերյալ որոշում ընդունեցին: Ավելի ուշ նորաստեղծ պետության կազմի մեջ մտավ նաև Չեռնոգորիան, և ազգային ու կրոնական խառը կազմ ունեցող պետությունը 1929 թ. ստացավ «Հարավսլավիա» անունը:

Բալկանյան երկրների ազգային կազմը չափից դուրս խայտաբղետ էր, քանզի դեռ ավստրո–հունգարական միապետության շրջանում տարածքային բաժանումներ իրագործելիս հաշվի չէին առնում ազգային պատկանելությունը:

Նոր պետություններ ստեղծվեցին նաև պատերազմի և 1917թ. հեղափոխության արդյունքում փլուզված Ռուսական կայսրության տարածքում:

Նախ վերականգնվեց Լեհաստանի անկախությունը: Նախկինում Ռուսաստանի, Ավստրո–Հունգարիայի և Գերմանիայի միջև բաժանված լեհական հողերի միավորումը սկսվել էր դեռ պատերազմի ընթացքում՝ 1917թ.: Հետագայում Գերմանիայում տեղ գտած հեղափոխության առաջին օրերին (1918թ. նոյեմբերի 6–ին), Գերմանիայի կողմից օկուպացված Լեհաստանի տարածքում ստեղծվեց Լեհական ժամանակավոր կառավարությունը: Սակայն հիշյալ կառավարությունը չէր վերահսկում Լեհաստանի ողջ տարածքը: 1918թ. դեկտեմբերին վերջինիս միացվեցին նախկինում Գերմանիայի կազմի մեջ մտած լեհական տարածքները: Մյուս տարածքները Լեհաստանին անցան Վերսալյան հաշտության պայմանագրի արդյունքում: Ինքնին Լեհաստանի՝ իբրև հանրապետության ձևավորման գործընթացն ավարտվեց 1921թ. մարտին, երբ ընդունվեց երկրի սահմանադրությունը: Լեհական պետության գլուխ կանգնեց Յ. Պիլսուդսկին: Նրա կառավարմանը բնորոշ էին ավտորիտարիզմն ու ազգայնականությունը:

1917թ. հոկտեմբերյան հեղափոխության արդյունքում անկախության հնարավորություն ստացավ նաև Ֆինլանդիան: Այստեղ ստեղծված դեմոկրատական

կառավարությունն արդեն 1917թ. դեկտեմբերին ճանաչվեց Խորհրդային Ռուսաստանի կողմից: Սակայն երկրում շուտով սկսվեց քաղաքացիական պատերազմ, որ սանձազերծվել էր սոցիալիստական հեղափոխության կողմնակիցների նախաձեռնությամբ՝ երկրի հարավային սահմանային գոտում: 1918թ. ապրիլին Ֆինլանդիայի կառավարությանն օգնության հասան գերմանական զորքերը, և 1919թ. հուլիսի դրությամբ ձախերի շարժումն իրեն սպառել էր: Ֆինլանդիայի անկախությունն ավելի հաստատուն դարձավ:

Մերձբալթյան հանրապետությունների անկախության հաստատումն էլ անցավ քաղաքացիական պատերազմի փուլով: Ի վերջո 1919–1920թթ. Լատվիայում, Լիտվայում և Էստոնիայում հաստատվեցին դեմոկրատական հանրապետություններ:

Արևելյան Եվրոպայի քաղաքական քարտեզը

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի արդյունքում փլուզվեցին Ռուսական, Գերմանական և Ավստրո–Հունգարական կայսրությունները: Գերմանական բլոկի երկրների ջախջախումը (1918թ.) Արևելյան Եվրոպայի քաղաքական քարտեզի արմատական վերափոխման սկիզբը հանդիսացավ: Այն Փարիզի հաշտության կոնֆերանսում քննարկվող հիմնական խնդիրների շարքում էր: Կոնֆերանսի որոշումների վրա հիմնականում ազդեցին հետևյալ գործոնները.

- Անտանտի երկրների դաշնակցային հարաբերությունները Սերբիայի և Ռումինիայի հետ,
- Բուլղարիայի և Հունգարիայի՝ Քառյակ Միության բլոկում հանդես գալու փաստը (Հունգարիան՝ Հաբսբուրգների դուալիստական պետության՝ Ավստրո–Հունգարիայի կազմում),
- Խորհրդային Ռուսաստանի կողմից Ֆինլանդիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի և Լեհաստանի ժողովուրդներին ազգային պետություն ստեղծելու իրավունք շնորհելու իրողությունը:

Արդյունքում նոր պետական սահմաններն Արևելյան Եվրոպայում ավելի շուտ արտացոլում էին Անտանտի դաշնակիցների աշխարհաքաղաքական պահանջները, քան առկա էթնիկական և կրոնական կամ դավանական շրջանների սահմանները: Ընդ որում, հաշվի էին առնվում ոչ այնքան պատերազմի ընթացքում ունեցած նախկին ծառայություններն ու կորուստները, որքան լոյալության աստիճանն ու տարածաշրջանում հաղթող տերությունների ազդեցության հենակետը դառնալու պատրաստակամությունը:

Նորաստեղծ պետությունների շարքին էր դասվում Չեխոսլովակիան: Այն ներառում էր ավստրիական թագին պատկանող հողերից Բոհեմիան և Մորավիան և ավստրիական Սիլեզիայի մեծագույն հատվածը, հունգարական Սլովակիան՝ հունգարախոս և ուկրաինական բնակչություն ունեցող որոշակի տարածքներով հանդերձ: Բացի այդ Չեխոսլովակիային միացվեց նաև պրուսական Սիլեզիայի մի փոքրիկ հատված: Չեխոսլովակիայի տարածքը կազմելու էր շուրջ 141 հազար քառակուսի կիլոմետր տարածք: Եվրոպայի կենտրոնում նոր սուվերեն պետության՝ Չեխոսլովակիայի ստեղծումը, թվում է, միանգամայն համապատասխանում էր չեխական Բոհեմիա և Մորավիա շրջանների զարգացման բարձր մակարդակին և պատմական ավանդույթներին: Սակայն մեկ պետական օրգանիզմի կազմում միավորվեցին իրենց զարգացման մակարդակով լիովին տարբեր և հասարակական–մշակութային տեսանկյունից ոչ մի ընդհանրություն չունեցող մի շարք շրջաններ՝ Չեխիան, Սուդեթյան մարզը (որն ուներ գերակշռող գերմանական բնակչություն), Սլովակիան և Անդրկարպատյան Ուկրաինան: Դա նախադրյալներ էր ստեղծում

անջատողական քաղաքական շարժումների ծագման և երկրի ներքաղաքական կյանքի ապակայունացման համար:

Էլ ավելի մեծ խնդիրներ էր «խոստանում» Կարագեորգիևիչների սերբական թագավորական դինաստիայի հովանու ներքո Բալկաններում մի նոր բազմազգ պետության՝ Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորության ստեղծումը (1929 թվականից՝ Հարավսլավիա): Խոշորագույն ազգային–էթնիկական կենտրոնների՝ Սերբիայի, Խորվաթիայի և Սլովենիայի քաղաքական հակամարտությունը հետագայում դարձավ Հարավսլավիայի ներպետական կյանքի ապակայունացման գործոններից մեկը: Հարավսլավիայի կազմում էին ընդգրկվել նաև պատրիարխալ Չեռնոգորիան, օտարերկրյա լծից նոր ազատագրված Մակեդոնիան, Դալմացիան և Բոսնիա–Հերցեգովինան: Սա վերջնականապես երկիրը վերածում էր էթնիկական խմբերի, կրոնական համայնքների ու տարաբնույթ զարգացման մակարդակ ունեցող շրջանների խայտաբղետ հանրույթի:

Փարիզի կոնֆերանսի արդյունքում վերստին ի հայտ էին գալիս Լեհաստանն ու Ռումինիան: Այս պետություններն ունեցան ամենամեծ տարածքային ձեռքբերումները: Անտանտն աջակցում էր այս նորաստեղծ պետությունների ազգայնական տրամադրություններն ու տարածքային պահանջատիրության ձգտումները: Ավստրիայից Լեհաստանը ստացավ ողջ Գալիցիան՝ արևմտյանը (որն ուներ լեհական բնակչություն՝ Կրակով կենտրոնով) և արևելյանը (որն ուներ գերազանցապես ուկրաինախոս և ռուսախոս բնակչություն՝ Լվով կենտրոնով), ինչպես նաև ավստրիական Սիլեզիայի ոչ մեծ հատվածը: Գերմանիայից Լեհաստանը ստացավ գրեթե ողջ Պոզնանի շրջանը, Արևմտյան Պրուսիայի զգալի հատվածը կազմող և Վիսլայի ձախ ափի երկայնքով դեպի Բալթիկ ծով ձգվող այսպես կոչված «Լեհական միջանցքը», վերջինիս հարող Արևելյան Պրուսիայի ոչ մեծ հատվածը (Վիսլա գետի աջ ափի երկայնքով) և անմիջականորեն լեհական Պոզնանին հարող հյուսիսային Սիլեզիայի ոչ մեծ հատվածը: Հանրաքվեի արդյունքում Լեհաստանը և Գերմանիան կիսեցին նաև Վերին Սիլեզիան: Ռուսական հեղափոխության և Խորհրդային Ռուսաստանի դեմ պատերազմի արդյունքում (1919–1920թթ.) Լեհաստանը ունեցավ որոշակի ձեռքբերումներ (շուրջ 216 հազար քառակուսի կիլոմետր տարածք): Սակայն լեհերին հաջողվեց նաև Լիտվայից զավթել Վիլնյուսի շրջանը: Լեհաստանը տարածքային խնդիրներ ուներ նաև նորաստեղծ Չեխոսլովակիայի հետ: Այդ խնդիրը կարգավորվեց Ազգերի լիգայի միջամտությամբ: Լեհաստանը վերածվեց բավականին զգալի տարածքներ ներառող պետության: Այն ուներ շուրջ 343 հազար քառակուսի կիլոմետր տարածք:

Իրենց հերթին Ռումինիայի կառավարող շրջաններն էլ մշակում էին «Մեծ Ռումինիայի» ստեղծման ծրագրերը:

Ի տարբերություն Լեհաստանի և Ռումինիայի, Ավստրո–Հունգարիայի փլատակներից ծագած Հունգարիան և հարաբերականորեն ավելի վաղ ստեղծված Բուլղարիան Եվրոպայում տեղ գտած տարածքային վերաբաժանումների արդյունքում ամենից տուժած երկրների շարքին էին դասվում:Բացի տարածքային կորուստներից նրանք պետք է ռեպարացիաներ վճարեին: Սահմանափակումներ ու արգելքներ էին մտցվում նաև նրանց զինված ուժերին առնչվող հարցերում: Սա հիշյալ պետությունների ռևանշիստական տրամադրությունները սնուցող աղբյուր էր հանդիսանալու:

Ավստրո–Հունգարիայի փլուզման արդյունքում ստեղծվեց նաև Ֆիումե անկախ քաղաք–պետությունը: Այն ուներ 20 քառակուսի կիլոմետր տարածք և 49 հազար բնակչություն: Ֆիումեի (Ռիեկա) խնդիրը լուրջ վիճաբանություն էր առաջ բերել Իտալիայի և Սերբա–խորվաթա–սլովենական թագավորության միջև: Սեն–Ժերմենի

պայմանագրով որոշվեց այն հանձնել Սերբա–խորվաթա–սլովենական թագավորությանը: Սակայն 1920թ. նոյեմբերի 12–ին Ռապալոյում ընդունված որոշման արդյունքում ստեղծվեց Ֆիումե անկախ քաղաք–պետությունը: Իսկ արդեն 1924 թ. Իտալիայի և Սերբա–խորվաթա–սլովենական թագավորության միջև կնքված պայմանագրի արդյունքում Ֆիումեն միացվեց Իտալիային:

Ռուսաստանից էական տարածքներ ստացած Լեհաստանի հետ մեկտեղ Ռուսական կայսրության փլուզման արդյունքում ի հայտ եկան նաև մի շարք այլ պետություններ՝ Ֆինլանդիան, Լատվիան, Լիտվան և Էստոնիան: Հաղթահարելով խորհրդայնացման իրական վտանգն ու փորձությունը, վերջիններիս հաջողվեց 1918–1920թթ. ընթացքում հռչակել իրենց անկախությունը և կայացնել իրենց անկախ պետականությունը:

Ռուսական կայսրության փլուզման արդյունքում ձևավորված նորաստեղծ եվրոպական պետություններին (Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Ֆինլանդիա և Լեհաստան) հաջողվեց պահպանել իրենց անկախությունը, թեև բոլշիկները ձգտում էին առնվազն Լատվիան, Լիտվան և Էստոնիան վերադարձնել Ռուսաստանի կազմի մեջ:

Նորանկախ ու սուվերեն պետությունների կազմավորումն ինքնին շրջադարձային իրողություն էր այդ ժողովուրդներից յուրաքանչյուրի պատմության մեջ: Սակայն այն չէր լուծում բոլոր խնդիրները: Պատերազմի արդյունքում նորանկախ պետություններն անցնելու էին տնտեսական փլուզման, սուր սոցիալական հարաբերությունների և հեղափոխական հուզումների փորձություններով: Իսկ նախկին կայսրություններից կամ Վերսալյան համակարգի պայմանագրերից իբրև ժառանգություն էին ստացել միջէթնիկական և սահմանային խնդիրները:

Նոր պետությունների կայացման գործընթացը Արևելյան Եվրոպայում. Քաղաքական համակարգի ընտրությունը

Արևելյան Եվրոպայի նորաստեղծ երկրների առջև կանգնած էին մի շարք ներքին և արտաքին քաղաքական խնդիրներ: Հատկապես իրենց զգացնել էին տալիս ակնհայտ շտապողականության պայմաններում իրագործվող արդիականացման արդյունքում խորացող սոցիալ–տնտեսական խնդիրները: Արևելյան Եվրոպայի նորաստեղծ պետությունների բնակիչների համար գնալով ավելի անընդունելի էին դառնում անվերջ բարեփոխումները: Զանգվածների շրջանում հասունանում էր այն գաղափարը, որ պետության ղեկը պետք է փոխանցել «ուժեղ ձեռքի», որն ի զորու լինի «կարգուկանոն» հաստատելու: Արևելյան Եվրոպայի երկրների ընտրությունը կանգ առավ ավտորիտար կառավարման համակարգի վրա: **Ավտորիտարիզմը (տիրազորությունը)** կառավարման ոճ է, որի դեպքում կառավարողները պահանջում են կառավարվողների անվերապահ հնազանդությունը: Ավտորիտար վարչակարգերի դեպքում իշխանությունը կենտրոնացած է լինում մեկ կամ մի քանի առաջնորդների ձեռքում: Հիմնականում դրանք հանդես են գալիս ռազմական վարչակարգերի տեսքով: Ամբողջատիրությունը երբեմն դիտվում է իբրև ավտորիտար կառավարման ձևի ծայրահեղ տեսակը, սակայն կան էական տարբերություններ կառավարման այս երկու տեսակների միջև:

• Ամբողջատիրության օրոք առաջնորդ–կուսակցությունն արգելում է հասարակական և քաղաքական որևէ բազմակարծություն, ընդդիմադիր կուսակցություններն ու շարժումները: Նախաձեռնությունը թույլատրվում է միայն «վերևից» ստեղծված և կուսակցության հովանավորությունը վայելող հասարակական կազմակերպությունների շրջանակներում: Ավտորիտարիզմի

դեպքում սահմանափակ բազմակարծությունն առկա է: Իշխանությունները որոշակի սահմաններում թույլատրում են այլախոհությունն ու վերահսկելի ընդդիմությունը:

• Ամբողջատիրության դեպքում քաղաքական համակարգի միջուկի դերում է հանդես գալիս պետական իշխանությունը միահեծանորեն կենտրոնացրած առաջնորդ–կուսակցությունը: Իսկ ավտորիտարիզմի դեպքում՝ ինքը պետությունը (կառավարող էլիտան) իր համար կամ իր ենթակայության տակ ստեղծում է «իշխանության կուսակցություն»:

• Ամբողջատիրության դեպքում հատուկ դեր ու նշանակություն է տրվում գաղափարախոսությանը: Ավտորիտարիզմի դեպքում կարող է և չլինել մանրակրկիտ մշակված գաղափարախոսական հայեցակարգ: Հասարակության համախմբման գործիքի դերում են հանդես գալիս կրոնը, ազգայնականությունը, ավանդույթները: Երբեմն մատուցվում է «զարգացման գաղափարախոսությունը», տնտեսական և սոցիալական արդիականացման նպատակներով հանդերձ:

• Ամբողջատիրական վարչակարգը հենվում է ժողովրդի լայն աջակցության վրա: Ավտորիտար վարչակարգերին բնորոշ է զանգվածների ապաքաղաքակա-նացումը, վերջիններիս անտարբերությունը կամ թշնամական դիրքորոշումը իշխանության նկատմամբ: Չունենալով մասսաների լայն աջակցությունը, ավտորիտար իշխանությունը հենարան է գտնում ի դեմս բյուրոկրատիայի, բանակի, եկեղեցու, խոշոր ձեռներեցների շերտերի, փորձելով նաև օգտագործել պատմական ավանդույթներն ու ազգայնական կարգախոսները: Սակայն դրա հետ մեկտեղ կարող են հենվել նաև առաջնորդի կերպարի վրա:

• Ի տարբերություն ամբողջատիրության, ավտորիտար վարչակարգը չի ձգտում կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ լիակատար ու համընդհանուր վերահսկո-ղության, ավելին՝ ոչ քաղաքական ոլորտներում պահպանում է անհատի և հասարակության «ինքնավարությունը»: Որպես կանոն, թույլատրելով ազատ շուկայական հարաբերությունները տնտեսության մեջ և խրախուսելով անհատ ձեռներեցությունը, որոշ ավտորիտար վարչակարգեր արձանագրում են տնտեսական աճի բարձր տեմպեր:

Այսպիսով, ավտորիտար վարչակարգերը կարող են անցումային ու միջանկյալ դիրք գրավել ժողովրդավարության և ամբողջատիրության միջև: Սակայն ամբողջատիրության համեմատ ավտորիտարիզմի՝ ժողովրդավարությանն անցնելու հավանականությունն անհամեմատ ավելի մեծ է:

Ավտորիտարիզմը կարող է հանդես գալ ամենատարբեր ձևերով: Պատմական անցյալում այն հանդես է եկել հնագույն տիրանիայի, բռնապետության, բացարձակ միապետությունների և տարաբնույթ արիստոկրատական ռեժիմների տեսքով: Ներկայումս կարելի է առանձնացնել ավտորիտար վարչակարգի հետևյալ ձևերը.

• ռազմական դիկտատուրա՝ հենվում է բանակի վրա և ապավինում վերջինիս,

• կրոնական՝ հենվում է հոգևորականության և կրոնի վրա,

• օլիգարխիական՝ իշխանությունը պատկանում է որոշակի կորպորատիվ կլանների,

• առաջնորդական՝ անձնական իշխանության վարչակարգ է, որ հենվում է ուժեղ առաջնորդի իշխանության և հեղինակության վրա

• խառը՝ համատեղում է զանազան վարչակարգերի տարրեր:

Վերոհիշյալից բացի առանձնացնում են ավտորիտարիզմի միակուսակցական և բազմակուսակցական, նախագահական և խորհրդարանական, ավանդական և համախմբող տարատեսակները: Վերջապես ավտորիտար վարչակարգը կարող է հանդես գալ դիկտատուրայի տեսքով կամ լինել ավելի ազատական:

Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում ավտորիտար քաղաքական վարչակարգեր էին հաստատվել կենտրոնական և հարավարևելյան եվրոպայում (Ավստրիա, Հունգարիա, Բուլղարիա, Ռումինիա, Հարավսլավիա, Լեհաստան և այլն): Իրենց էությամբ ավտորիտար բռնատիրություններ էին հաստատվել նաև Պորտուգալիայում և Իսպանիայում, թեև այս երկրները բնութագրվում էին նաև իբրև ֆաշիստական: Իր էությամբ ավտորիտար էր նաև Քեմալական Թուրքիան:

Տիրազորության (ավտորիտարիզմի) կայացումը կենտրոնական և հարավարևելյան Եվրոպայում

Ավտորիտար կառավարման համակարգի ընտրությունը կենտրոնական և հարավարևելյան Եվրոպայում մտահոգիչ իրողություն էր:

Իշխանության ժողովրդավարական մեթոդներից հեռանալուն միանգամայն պատրաստ էր արևելաեվրոպական երկրների կառավարող էլիտան: Այն արագությունն ու թեթևությունը, որով նույնիսկ լիբերալ կուսակցությունների կառավարություններն անցում էին կատարում իշխանավարության ռեպրեսիվ մեթոդներին, պարզորոշ ցույց էր տալիս, թե որքան ձևական ու մակերեսային է եղել հիշյալ հասարակությունների ժողովրդավարացումը նախկինում: Ազանգվածների քաղաքական կողմնորոշման հետ մեկտեղ դա դարձավ Արևելյան Եվրոպայի հասարակական կյանքում ավտորիտար միտումների սրընթաց ուժեղացման հիմնական պատճառներից մեկը:

1918 թ. Լեհաստանում կոալիցիոն հիմունքների վրա ստեղծված կառավարությանը զուգահեռ ստեղծվեց նաև այսպես կոչված «պետության ղեկավարի» պաշտոնը:Այն զբաղեցրեց գեներալ **Յուզեֆ Պիլսուդսկին**, որը բացահայտորեն հավակնում էր կուսակցությունների և խորհրդարանի իշխանությունից վեր կանգնած ազգային առաջնորդի դերին:

Հունգարիայում 1919թ. Խորհրդային հանրապետության ջախջախման արդյունքում նույնպես ձևավորվեց ավտորիտար վարչակարգ՝ ծովակալ **Միկլոշ Հորտիի** գլխավորությամբ: 1920 թ. միապետության վերականգնումից հետո Հորտին դարձավ ռեգենտ (խնամակալ):

Սակայն Պիլսուդսկու և Հորտիի կարգի անձանց ի հայտ գալը դեռ առաջ էր անցել բնական զարգացումներից: Ավտորիտար դիկտատուրաների վերջնական ձևավորումը կարող էր տեղ գտնել միայն առաջադիմական բարեփոխումների առաջին ալիքի անկման արդյունքում՝ դրանց բացասական հետևանքների դեպքում:

1920–ական թվականների վերջերին արևելաեվրոպական երկրներում վերջնականապես ձևավորվեցին ավտորիտար մոդելին անցնելու նախապայման-ները: 1926թ. Լեհաստանում մի շարք կուսակցությունների «ուժեղ ձեռքի կառավարություն» ստեղծելու փորձերից հետո, Պիլսուդսկին իրագործեց ռազմական հեղաշրջում: Բազմակուսակցական խորհրդարանական ժողովրդավարությունից հրաժարվելու արդյունքում անցում կատտարվեց դեպի **«սանացիան»**՝ համընդհանուր առողջացումը:

1929 թ. Հարավսլավիայում խորհրդարանը ցրվեց և հայտարարվեց ողջ իշխանությունը **Ալեքսանդր** թագավորին փոխանցելու մասին: Նրա շուրջ համախմբվեցին սերբական ազգայնական քաղաքական շրջանակները:

1930թ. Ռումինիայում տեղ գտավ Կարոլ 2–րդի թագադրումը: Նա հենվում էր ազգայնական և հակալիբերալ քաղաքական ուժերի և ռազմականացված «երկաթե

գվարդիայի» վրա: Արդեն 1938թ. **Կարոլ** թագավորը վերջնական հեղաշրջում իրագործեց, ոչնչացնելով խորհրդարանական համակարգի վերջին մնացուկները:

1932 թ. Հունգարիայում իշխանությունը արդեն լիովին անցավ Հորտիին: Իսկ 1934թ. Բուլղարիայում տեղ գտավ ավտորիտար հեղաշրջում՝ Կ.Գեորգիևի քաղաքական խմբավորման գլխավորությամբ և ցար Բորիսի աջակցությամբ:

Արևելյան Եվրոպայում սկսվեց խորհրդարանական համակարգի ապամոնտաժը: Այդ բռնապետությունները հենվում էին բանակային և միապետական շրջանակների, իսկ երբեմն էլ՝ եկեղեցու և պետական բյուրոկրատիայի վրա: Դա սկզբունքորեն տարբերում էր արևելաեվրոպական ռազմական ու ավտորիտար ռեժիմները ֆաշիստական բռնապետություններից: Վերջիններս շեշտը դնում էին ժողովրդական զանգվածների ուղղակի քաղաքականացման (այդ թվում՝ զանգվածների կուսակցության ստեղծման) վրա:

Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում ձևավորվեցին «բռնապետություններ՝ առանց բռնապետերի», երբ իշխանության համար փոփոխակի հաջողությամբ պայքարում էին պահպանողական էլիտայի մի շարք կլաններ:

Այլ ուղով ընթացավ Անդրկովկասյան ժողովուրդների անկախության գործընթացը՝ Ռուսական կայսրության փլուզման արդյունքում անկախություն հռչակած երկրների ճակատագիրն ու անկախության գործընթացը: Բացառությամբ Ֆինլանդիայի, դրանք բոլորն էլ փուլ առ փուլ ընդգրկվեցին Խորհրդային Միության կազմի մեջ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Արևելյան Եվրոպայի երկրներն ընտրեցին կառավարման ավտորիտար համակարգ:
2. Ե՞րբ և ո՞ր արևելաեվրոպական երկրներում հաստատվեցին ավտորիտար դիկտատուրաներ: Ի՞նչ ընդհանրություններ և առանձնահատկություններ դրսևորվեցին այդ գործընթացում: Ո՞րն էր ավտորիտար դիկտատուրաների հենարանը Արևելյան Եվրոպայի երկրներում:
3. Բացատրե՛ք հետևյալ հասկացությունների և բառակապակցությունների իմաստը՝ «ուժեղ ձեռքի կառավարություն», «սանացիա», «ռեգենտ», «բռնապետություններ՝ առանց բռնապետերի»:

§4. ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐԸ

Ամբողջատիրության էությունը

Կառավարման ոչ ժողովրդավարական վարչակարգերը ներկայանում են ***ամբողջատիրության*** (տոտալիտարիզմ) և ***տիրազորության*** (ավտորիտարիզմ) տարատեսակներով: Ամբողջատիրության էությունը հիմնավորել է իտալական ֆաշիզմի գաղափարախոս Ջ.Ջենտիլեն: Նրա համոզմամբ՝ մարդը ամբողջովին պետք է ենթարկվի պետությանը, քանի որ մարդկային և հոգևոր ամեն ինչ կորցնում է իր արժեքը պետությունից դուրս: *Ամբողջատիրություն* տերմինը քաղաքական բառապաշար մտավ 1925թ. Իտալիայի առաջնորդ Բ.Մուսսոլինիի կողմից: Հետագայում ֆաշիզմի ընդդիմախոսները սկսեցին այդ հասկացությունն օգտագործել բացասական իմաստով՝ իբրև ժողովրդավարության հակադիր բևեռ: Սկզբում ամբողջատիրություն ասելով՝ հասկանում էին ֆաշիստական վարչակարգն Իտալիայում և նացիոնալ–սոցիալիստական շարժումը Գերմանիայում: Սակայն 1929թ. սկսած՝ այն կիրառվում էր նաև ԽՍՀՄ–ի քաղաքական վարչակարգի նկատմամբ:

Ամբողջատիրական երկրում առկա է միակուսակցական բռնապետությունը, որն իր հետ բերում է պետական և կուսակցական կառույցների միաձուլում: Կուսակցությունը յուրացնում է հասարակության անունից խոսելու իրավունքը: Նման երկրում առկա է ահաբեկման համակարգը, տնտեսության կենտրոնացված կառավարումը: Ամբողջատիրական իշխանության բուրգի գագաթը ներկայանում է ի դեմս առաջնորդի կերպարի:

Առաջնորդի գործողություններն ու կուսակցական դոգմաները ենթակա չեն քննադատության: Ամբողջատիրական իշխանությունն իր վերահսկողությունը տարածում է կյանքի բոլոր ասպարեզների վրա: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում մարդկանց ազատ ժամանակի անցկացման խնդրին: Հետևելով *«Երբ մարդիկ անելու ոչինչ չունեն, նրանք հաճախ հիմարություններ են անում»* գաղափարին՝ պետությունը կուսակցական գաղափարախոսությամբ է լցնում այդ ազատ ժամանակը: Գործում է հետևյալ սկզբունքը*. «Անհատ անձ է մնում միայն քնած մարդը»:* Այսպիսով՝ պետություն–կուսակցությունն իրագործում է համընդհանուր վերահսկողություն հասարակության և անհատի նկատմամբ: Ամբողջատիրությունը փակ համակարգ է, որում ամեն ինչ՝ երեխաների դաստիարակությունից մինչև ցանկացած արտադրանքի բացթողումը, վերահսկվում է պետության կողմից:

Ամբողջատիրական վարչակարգերը բաժանվում են *աջ* և *ձախ* տարատեսակների: Աջ վարչակարգն իր զարգացումն է գտել Իտալիայում 1922թ. և Գերմանիայում՝ 1933թ. սկսած: Աջ տիպի ամբողջատիրական վարչակարգեր հաստատվեցին նաև Թուրքիայում, Իրանում, Արգենտինայում և այլ երկրներում:

Ձախ կամ կոմունիստական ամբողջատիրությունը հաստատվել է ԽՍՀՄ–ում և մի շարք այլ երկրներում: Եթե ձախ ամբողջատիրությունը հենվում է դասակարգային պայքարի և կոմունիզմի տարածման գաղափարի վրա, ապա աջ ամբողջատիրության նպատակը ազգն է ու վերջինիս համար «կենսական տարածքի» ապահովումը:

Ֆաշիստական վարչակարգը Իտալիայում

Ֆաշիզմը ձևավորվել է Իտալիայում: Այդ հասկացությունը ծագել է ***ֆաշիո*** (խուրձ, միություն) բառից:

Ֆաշիոն կամ ֆասցիան կարմիր ժապավենով ամրացված կեչու ճյուղերի տրցակ է: Այդ ճյուղերից հյուսվում էին լիկտորների՝ Հին Հռոմի բարձրաստիճան պաշտոնյաների թիկնապահների տապարները:

Հռոմեացիների համար իշխանության խորհրդանիշ հանդիսացող ֆասցիաներն արտացոլվեցին Մուսսոլինիի կուսակցության զինանշանի վրա:

Ֆաշիզմի ծագումն ու ամրապնդումը ուներ հիմնավոր պատճառներ: Պատերազմից հետո Իտալիան «հաղթող երկրների մեջ պարտված» պետություն էր: Նա ոչ միայն չունեցավ տարածքային ձեռքբերումներ, այլև կրեց նյութական ու մարդկային խոշոր կորուստներ: Տնտեսական դժվարությունները դժգոհության և ճգնաժամի պատճառ դարձան: 1919–1922թթ. փոխվեց հինգ կառավարություն: Միապետությունը՝ Վիկտոր Էմմանուիլ III–ի գլխավորությամբ, անկարող էր կարգավորելու ներքին և արտաքին քաղաքական խնդիրները: Զորացրված զինվորականներն ու երիտասարդությունը գտնում էին, որ դաշնակիցները թալանել են Իտալիան: Հասարակական գիտակցության մեջ լայն տարածում էր գտնում փոփոխությունների ձգտումը:

Դեռ 1919թ. իտալական ֆաշիզմի առաջնորդ (իտալերեն՝ *դուչե*) Մուսսոլինին հիմնեց ***«Ֆաշի դի կոմբատիմենտոն» («Մարտական միություն»),*** որտեղից էլ տարածվեց շարժման անունը: 1922թ. հոկտեմբերին կազմակերպելով իր հետևորդների «Արշավը դեպի Հռոմ» և ստանձնելով վարչապետի պաշտոնը՝ նա սկսեց ամրապնդել իր վարչակարգը: Արդեն 1925թ. ընդունված օրենսդրական ակտերով Մուսսոլինին ազատվում էր պառլամենտի առջև ունեցած պատասխանատվությունից և պարտավոր չէր հրաժարական տալ անվստահության քվե ստանալու դեպքում: Օրենքների նախագծերը չէին կարող խորհրդարանի քննարկմանը դրվել առանց կառավարության ղեկավարի նախնական համաձայնության: Ամբողջատիրական ֆաշիստական վարչակարգի վերջնական ամրապնդումը տեղի ունեցավ հաջորդ, **1926թ.,** որը Մուսսոլինին անվանեց իր ***«Նապոլեոնյան տարին»:*** Բոլոր քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները, բացի ֆաշիստականից, ցրվեցին և օրենքից դուրս հայտարարվեցին: Նախկին ընդդիմադիր կուսակցությունների պատգամավորները վտարվեցին խորհրդարանից:

Իտալիայում արմատավորվում էր Մուսսոլինիի պաշտամունքը: «Մուսսոլինին միշտ իրավացի է» կարգախոսը կարելի էր հանդիպել ամենուր: Նրա հռչակած նպատակը ազգի վեհության ապահովումն էր, հին Հռոմի փառքի վերականգնումը:

Իտալական ֆաշիզմն անհամեմատ ավելի լիբերալ էր գերմանական նացիզմից: Մուսսոլինին անհեթեթություն էր համարում գերմանացիների՝ իբրև բարձրագույն ռասայի մարմնավորման նացիստական գաղափարը: Ինչ վերաբերում է հակահրեական տեսություններին, ապա Մուսսոլինին այն անվանում էր «գերմանական չարիք» և ասում, որ Իտալիայում չկա հրեական հարց:

Իտալիայում շրջանառության մեջ դրվեց ***կորպորատիվ համակարգը:*** Տնտեսության հիմնական ճյուղերն ու սոցիալական ոլորտը հանդես էին գալիս իբրև առանձին միավորներ՝ ի դեմս կորպորացիաների (ընկերությունների): Դրա նպատակը կարգապահ տնտեսության և կայուն սոցիալական համակարգի ստեղծումն էր: Դասակարգային պայքարը այս համակարգի օգնությամբ բացառվում էր: Շրջանառության մեջ դրվեց նաև ***ավտարկիան***՝ ինքնապահովումը: Նպատակը մեկն էր՝ արտադրել Իտալիայում այն ամենը, ինչ ներմուծվում էր: Մուսսոլինիի օրոք Իտալիան ունեցավ տարածքային ձեռքբերումներ (Եթովպիա, Ալբանիա): Նա մտադիր էր նաև Միջերկրական ծովը վերածելու «իտալական լճի»: Մուսսոլինիի կարևոր ձեռքբերումներից էր Վատիկանի հետ պայմանագրի կնքումը 1929թ.: Դրանով Իտալիան և Վատիկանը միմյանց ճանաչում էին իբրև սուվերեն պետություններ:

Մուսսոլինին նաև հակաթուրքական տրամադրություններ ունեցող գործիչ էր: Նա մտադիր էր տարածքային ձեռքբերումներ ունենալ ի հաշիվ Թուրքիայի: Գիտակցելով, որ այդ հարցում հայերը կարող են օգտակար լինել, նա ընդգծում էր հայ ժողովրդի նկատմամբ իր համակրանքը: Նա մեծ օգնություն ցուցաբերեց հայերին: Հիտլերը հայերին դասել էր հրեական ծագում ունեցող ժողովուրդների շարքին, հետևաբար հայերը ենթակա էին ոչնչացման: Սակայն Մուսսոլինիի կողմից Իտալիա հրավիրված մի շարք հայագետներ գրեցին «Հայերը՝ արիացիներ» աշխատությունը: Դրա շնորհիվ մեր ժողովուրդը խուսափեց նոր ցեղասպանությունից Գերմանիայի կողմից ռազմակալված տարածքներում:

Նացիոնալ–սոցիալիզմը Գերմանիայում

Նացիոնալ–սոցիալիզմը Գերմանիայի նացիոնալ–սոցիալիստական բանվորական կուսակցության հայեցակարգն է: Այն ծայրահեղ ազգայնամոլական և ռասայական խտրականության քաղաքականության խառնուրդ է: Նացիզմի հիմքում դրվեց Հիտլերի «Իմ պայքարը» գիրքը:

1933 թ. հունվարի 30–ին Հիտլերը զբաղեցրեց Գերմանիայի ***ռայխսկանցլերի*** (վարչապետ) պաշտոնը: Իսկ 1934թ. օգոստոսի 1–ին՝ նախագահ Հինդենբուրգի մահից հետո, նախագահի պաշտոնը լուծարվեց, և իշխանությունը կենտրոնացվեց Հիտլերի ձեռքում: Վերջինս դարձավ ***ֆյուրեր*** («առաջնորդ») և «ցմահ ռայխսկանցլեր», որը նրան իրավունք էր տալիս ոչ միայն նշանակելու կայսերական կառավարության անդամներին, բոլոր բարձրաստիճան պաշտոնյաներին, այլև իր ժառանգորդին: Գերմանական ժողովրդի մոլեռանդ ենթակայությունը Հիտլերին նացիստների ծրագրային դրույթների իրագործման կարևոր նախապայմանն էր:

Նացիստական վարչակարգի հաստատումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Մոնոպոլիստական շրջաններն ի դեմս նացիզմի տեսնում էին տնտեսական ճգնաժամի արդյունքում ստեղծված անկայուն քաղաքական իրավիճակից դուրս գալու միջոց: Մանր ձեռնարկատերերն ու գյուղացիությունը նացիզմի հետ նույնպես մեծ հույսեր էին կապում՝ գտնելով, որ այն կմեղմացնի տնտեսական ճգնաժամի արդյունքում ի հայտ եկած դժվարությունները: Իսկ Գերմանիայի ձախ ուժերը պառակտված էին, քանզի սուր պայքար էր գնում կոմունիստների և սոցիալիստների միջև:

Գերմանիայում նացիզմի վերելքին նպաստեցին նաև ներքաղաքական մի շարք այլ իրողություններ: Դեռ 1919թ. փետրվարին Վայմար քաղաքում հռչակվել էր այսպես կոչված «Վայմարյան հանրապետությունը» (1919–1933 թթ.)*:* Վերսալյան պայմանագիրը ստորագրած Վայմարյան հանրապետության և այն մարմնավորող քաղաքական գործիչների դիրքերը թույլ էին ժողովրդի շրջանում: Վայմարյան հանրապետության օրոք խորհրդարանում մեծամասնություն ապահովելն ինքնին դժվարությունների հետ կապված խնդիր էր: Արդյունքում ժողովրդավարությունը դիտվում էր իբրև թույլ կառավարման համակարգ ապահովող իրողություն: Առավել ևս, որ ժողովրդավարական ավանդույթները Գերմանիայում բացակայում էին: Հետպատերազմյան Գերմանիայի քաղաքական դաշտում առկա էին բազմաթիվ ոչ ժողովրդավարական կուսակցություններ, որոնք Հիտլերի պոտենցիալ դաշնակիցներն էին:

Էական դեր խաղացին նաև նացիստների հմուտ քարոզչությունն ու Հիտլերի՝ մասսաներին համախմբելու կարողությունը: 1929թ. ծայրահեղ չափերի հասած տնտեսական փլուզումը, կոմունիստների սպառնալիքի հանդեպ առկա մտավախությունը, նացիստների կողմից Վայմարյան համակարգի թուլության

օգտագործումն ու հակառակորդ ուժերի նկատմամբ բռնության գործադրումը նույնպես որոշիչ նշանակություն ունեցան: Որոշակի աջակցություն գտան նաև Վերսալ–Վաշինգտոնյան համակարգը վերանայելու՝ նացիստների կողմից տրվող խոստումները:

Նացիստական պետության հիմքում դրվեցին երեք գաղափարներ՝ առաջնորդի բացարձակ իշխանությունը, ռասայական տեսությունը և ուժի պաշտամունքը: Գերմանիայում չկային Հիտլերի իշխանությունը սահմանափակող օրենսդիր և գործադիր մարմիններ: Պատահական չէ, որ խորհրդարանը (Ռայխստագ) հաճախ անվանում էին «աշխարհում ամենաբարձր վարձատրվող տղամարդկանց երգչախումբ»: Բանն այն էր, որ Ռայխստագը ինքնուրույն ոչ մի օրենք չէր ընդունում: Ուղղակի յուրաքանչյուր նիստից առաջ և հետո պատգամավորները կանգնում և երգում էին Գերմանիայի օրհներգը: Հիտլերի որոշումները չէին քննարկվում, այլ ընկալվում էին իբրև հրաման, իսկ 1934թ. սկսած՝ կառավարությունը չէր հավաքվում նստաշրջանի:

Արմատավորվում էր Հիտլերի պաշտամունքը: Նացիստական կուսակցության անդամները պարտավոր էին տանը ունենալ ֆյուրերի լուսանկարը: Արդեն 1933թ. հունիսին պետական հաստատություններում պաշտոնապես ներմուծվեց նոր՝ այսպես կոչված «գերմանական ողջույնը»՝ աջ ձեռքը վեր բարձրացնելով՝ միմյանց ուղղում էին «Հայլ Հիտլեր» (Կեցցե՛ Հիտլերը) խոսքերը: Հատուկ հրահանգով սահմանվեց, որ յուրաքանչյուր գերմանացի ճիշտ նույն կերպ պետք է ողջուներ և նացիստական դրոշները: Ավելին՝ պաշտոնական բոլոր նամակները պետք է ավարտվեին նույն «Հայլ Հիտլեր» խոսքերով: Հիտլերը պետք է ներկայացվեր իբրև մի անհատ, ով զերծ է շարքային անձանց հատուկ թերություններից: Օրինակ, խստիվ արգելված էր մամուլում տպագրել Հիտլերի լուսանկարներն ակնոցներով: Հետագայում արգելվեցին նաև ձեռնափայտով լուսանկարները: Քարոզչության կարծիքով դա կարող էր նսեմացնել ֆյուրերի կերպարը:

Մյուս հիմնարար սկզբունքը ռասայական տեսությունն էր: Նացիստների կարծիքով՝ գոյություն ունեին երեք ռասաներ՝ բարձր, ոչ լիարժեք և ցածր: Այդ տեսությունից բխում էր, որ «ցածրագույն ռասաները» ներկայացնող ժողովուրդները պետք է ոչնչացվեն, իսկ ոչ լիարժեք ռասաները ենթարկվեն արիացիներին: Նացիստների կարծիքով՝ Գերմանիան իրավունք ուներ հավակնելու աշխարհում գերիշխող դիրքի: 1935թ. ընդունվեցին ռասայական օրենքներ, որոնցում նշվեցին հակահրեական միջոցառումները: Պետության մեջ անձի իրավական կարգավիճակի համար վճռական նշանակություն ստացավ նրա ռասայական և ազգային պատկանելությունը: Խստորեն արգելվում էին ամուսնությունները արիացիների և ոչ արիացիների միջև:

Նացիստների երրորդ հիմնարար սկզբունքը ուժի պաշտամունքն էր: Ըստ Հիտլերի՝ ռասաների միջև պայքարում հաղթում է ուժեղը: Ուժի պաշտամունքը միահյուսվում էր «կենսական տարածքների» գաղափարի հետ: Այդ գաղափարի էությունը հետևյալն էր. Գերմանիան գերբնակեցված է ու չի կարող ինքն իրեն կերակրել: Խնդրի լուծումը կարող է լինել միայն կենսական տարածքի ընդլայնումը:

Հատուկ ուշադրություն էր դարձվում քարոզչությանն ու գրաքննությանը: Յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր տանն ունենալ Գերմանիայի կեռախաչով (սվաստիկա) դրոշը: Արգելվում էին սպորտային այնպիսի հաղորդագրությունները, որոնցում նշվում էին գերմանացի մարզիկների պարտությունները: Սգո հայտարարություններում արգելվում էր նշել այն մասին, որ անձը մահացել է վիրաբուժական գործողության ընթացքում, քանզի դա անվանարկում էր գերմանական բժշկությունը:

Արգելված էին «պարտվողական տրամադրություններ ներառող զրույցները» հասարակական վայրերում: Նմանատիպ զրույցների համար գերմանացի տաղանդավոր երգահաններից մեկը մահապատժի ենթարկվեց: Ի պատասխան երգահանին

ներելու խնդրանքների՝ Գեբելսը նշեց. «Նույնիսկ եթե նա երկրորդ Բեթհովենն է, մահապատժի որոշումն ի կատար կածվի»: Արգելվում էր նաև նացիստական որոշումների ցանկացած քննադատությունը: Նացիստների քարոզչությունը տարածվում էր արվեստի, գրականության և հասարակական գիտությունների վրա: Նա էր որոշում ինչ գրել և ինչպես, ինչ պատկերել նկարներում և ինչպես:

Գերմանական գիտությանը հատկապես մեծ հարված հասցրեց կրթական և գիտական հաստատությունների «արիականացումը»: Հարյուրավոր գիտնականներ հեռացան Գերմանիայից, շատերը գնացին վարչակարգի հետ գործարքի՝ գովաբանելով այդ քայլերը: 1936թ. Հիտլերը նույնիսկ արգելեց Գերմանիայի քաղաքացիներին ընդունելու նոբելյան մրցանակը: Փոխարենը սահմանվեց «Գերմանական ազգային մրցանակը», որ ամենամյա բնույթ ստացավ: Քարոզչական ու արիականացման նպատակներին ծառայեցվեցին նաև 1936թ. Բեռլինում անցկացված Օլիմպիական խաղերը: Նվաճելով 89 մեդալ, գերմանացի մարզիկները թիմային հաշվարկով առաջ անցան ԱՄՆ–ից և Իտալիայից:

Հատուկ ուշադրություն էր դարձվում երիտասարդ սերնդի դաստիարակությանը: Երեխաները և երիտասարդությունը պետք է դաստիարակվեին նացիստական նվաճողական ոգով: 10–18 տարեկան բոլոր երեխաներն ու պատանիները ներգրավվում էին երիտասարդական շարժման՝ *Հիտլերյուգենդի* մեջ: 1939թ. այդ շարժման մեջ գրանցվածների թիվը շուրջ 7 մլն 300 հազար էր:

Գերմանիայի կառավարման համակարգը ձեռք բերեց բրգաձև կառուցվածք: Հիտլերի մերձավոր համախոհները՝ Բորմանը, Գյորինգը, Հիմլերը և Գեբելսը, ստանձնեցին կարևորագույն պետական պաշտոններ:

Գալով իշխանության՝ նացիստները սկսեցին վարել ակտիվ արտաքին քաղաքականություն: Հասնելով Վերսալ–վաշինգտոնյան համակարգի վերանայմանը՝ նրանք որդեգրեցին ծավալապաշտական քաղաքականություն: Այդ ծրագրերում, ընդհուպ մինչև 1939թ., Գերմանիան չհանդիպեց լուրջ արգելքների: Դրան նպաստեցին մի շարք արտաքին–քաղաքական իրողություններ.

• Միջազգային հանրությունը պատրաստ չէր դիմելու վճռական գործողությունների:

• Գերմանիայից բխող վտանգը թերագնահատվում էր:

• Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից տարվում էր Գերմանիայի խաղաղեցման քաղաքականություն:

Այս պայմաններում Գերմանիան սկսեց կուտակել իր ներքին ռեսուրսները՝ բացահայտորեն նախապատրաստվելով մեծ պատերազմի:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ոչ ժողովրդավարական վարչակարգերի ի՞նչ տեսակներ գիտեք: Որո՞նք են դրանց բնորոշ գծերը, ո՞ր երկրներում են հաստատվել:

2. Ո՞վ է իտալական ֆաշիզմի գաղափարախոսը: Պատմական ի՞նչ պայմաններում առաջացավ ֆաշիզմը Իտալիայում: Ե՞րբ և ո՞ւմ կողմից է հիմնվել «Մարտական միությունը»: Բացատրե՛ք կորպորատիվ համակարգի էությունը: Արտաքին ի՞նչ կուրս էր վարում Մուսսոլինին: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ էր նա համակրանքով վերաբերվում հայերին:

3. Ի՞նչ է նացիոնալ–սոցիալիզմը: Ե՞րբ է իշխել նացիստական վարչակարգը Գերմանիայում: Որո՞նք էին նացիստական վարչակարգի հաստատման գլխավոր պատճառները: Ի՞նչ գաղափարներ դրվեցին նացիստական պետության հիմքում. հա-

մառոտ ներկայացրե՛ք դրանք: Արտաքին–քաղաքական ի՞նչ գործոններ նպաստեցին հիտլերյան Գերմանիայի վերելքին:

Հատվածներ Հիտլերի 1928 թ. ունեցած ելույթից .

«Նախ և առաջ պետք է ազատենք մեր ժողովրդին ինտերնացիոնալիզմից, որը չի բերում ոչ հույս և ոչ էլ կարգուկանոն, և համակարգված ու վճռականորեն դաստիարակենք նրան ֆանատիկական ազգայնականության ոգով... Երկրորդը, մենք կպոկենք մեր ժողովրդին աբսուրդային պառլամենտարիզմից ու կսովորեցնենք նրան, թե ինչպես պետք է պայքարել ժողովրդավարության խելահեղության դեմ՝ ճանաչելով իշխանության ու կառավարման անհրաժեշտությունը: Երրորդը, մենք կազատագրենք մեր ժողովրդին արտաքին օգնության խղճուկ հավատքից... Աշխարհում կա միայն մեկ իրավունք՝ սեփական ուժերի վրա հենվելու իրավունքը»:

Հիտլերյան Գերմանիայի միջնակարգ դպրոցների համար նախատեսված Մաթեմատիկայի դասագրքերում կարելի էր գտնել հետևյալ բովանդակության խնդիրներ. *« Ժամանակակից գիշերային ռազմաօդային ռմբակոծիչը կարող է փոխադրել 1800 ռումբ: Որքա՞ն է այն ճանապարհի երկարությունը (կիլոմետրերով), որի երկայնքով ինքնաթիռը կարող է գցել այդ ռումբերը, եթե այն գցում է վայրկյանում մեկ ռումբ՝ 250 կմ/ժամում արագության պայմաններում: Իրարից որքա՞ն հեռավորության վրա կլինեն գցված ռումբերի փոսերը: Քանի՞ կիլոմետր կռմբակոծեն 10 այդպիսի ինքնաթիռները, եթե նրանք թռչում են միմյանցից 50 մետր հեռավորության վրա: Որքան խարույկ կստացվի, եթե գցված ռումբերի 1/3–ը հասնի նպատակին, իսկ 1/3–ը պարզապես բռնկվի»*

§5. ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԽՍՀՄ–ՈՒՄ

ԽՍՀՄ–ի կազմավորումը

Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի ավարտից հետո առաջ եկավ ՌՍՖՍՀ–ի և խորհրդային այլ հանրապետությունների (Խորհրդային Ուկրաինա, Բելոռուսիա և Անդրկովկասյան խորհրդային հանրապետություններ) միջև հարաբերությունների հստակեցման և ապագա պետական կարգի որոշման խնդիրը: 1920–1922թթ. խորհրդային այդ հանրապետությունների և ՌՍՖՍՀ–ի միջև կնքվեցին արտաքին քաղաքականության, պաշտպանության և տնտեսական գործունեության բնագավառում համագործակցության վերաբերյալ պայմանագրեր: Չնայած նորեն խորհրդային հանրապետություններն անկախ էին և այդ պայմանագրերը չէին ենթադրում նրանց իշխանության բարձրագույն մարմինների ենթակայությունը ՌՍՖՍՀ–ի կառավարությանը: Սակայն միավորման նախագիծն արդեն առկա էր: Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության կարծիքով, Ռուսական կայսրության կազմում գտնվելու ընթացքում հիշյալ պետությունների ժողովուրդների միջև ձևավորվել էին պատմական, տնտեսական և մշակութային հարաբերություններ, որոնք տրամաբանական էին դարձնում նրանց միավորումը: Սակայն Խորհրդային հանրապետությունների միավորումը պետք է իրագործվեր «վերևից»: Ազգային խնդիրների «գիտակի» համբավ ունեցող Ի.Ստալինն առաջ քաշեց «ավտոնոմիզացիայի ծրագիրը»: Նա առաջարկում էր գործել առանց ավելորդ ձևականությունների և խորհրդային հանրապետություններն ընդգրկել ՌՍՖՍՀ–ի կազմի մեջ՝ ինքնավար հանրապետությունների իրավունքով: Այս առաջարկի դեմ հանդես եկավ Վ.Լենինը: Նա առաջ քաշեց Եվրոպայի և Ասիայի խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն ստեղծելու գաղափարը: Ֆեդերատիվ միավորումը, ըստ Լենինի, ժամանակավոր փուլ էր: Նա գտնում էր, որ ֆեդերատիվ միավորումն ընդամենը միասնական պետության հասնելու անցումային փուլ է: Այսպիսով վերջնական նպատակի տեսանկյունից Լենինի և Ստալինի միջև սկզբունքային տարաձայնություններ չկային: Տարաձայնությունները վերաբերում էին ապագա միության հասնելու ձևերին: Ի վերջո Կենտկոմն ընդունեց ֆեդերատիվ կառույց ունեցող պետության լենինյան տեսակետը:

Էականորեն կարևորվում էր Անդրկովակասյան երեք հանրապետությունների խնդիրը: Լենինը պնդում էր, որ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը ապագա Միության կազմի մեջ մտնեն Անդրկովկասյան ֆեդերացիայի միջոցով: Խորհրդային ղեկավարության կարծիքով, միավորումը հնարավորություն էր տալիս միավորել ողջ Անդրկովկասի ռեսուրսները և դրանք օգտագործել ի շահ ողջ երկրի: Բացի այդ, Կենտրոնը ձգտում էր լիովին վերահսկել իրավիճակն այդ կենսական նշանակություն ունեցող տարածաշրջանում: Անդրկովկասյան ֆեդերացիայի ղեկավար մարմիններում ապահովելով Մոսկվային հավատարիմ կադրերի ընտրությունն ու նշանակումը, Կենտրոնը կարող էր անմիջականորեն ապահովել իր համար ընդունելի որոշումների կայացումը: Կենտրոնն անհրաժեշտ էր համարում վերազգային կառույցների ստեղծումն Անդրկովկասում, որպեսզի նվազեցվի այստեղ ազգային բոլշևիկյան առաջնորդների հնարավորությունները: Մոսկվայի հետևողական ճնշման արդյունքում, 1922թ. մարտի 12–ին Անդրկովակասյան երեք հանրապետությունները կնքեցին ֆեդերատիվ պայմանագիր: Արդյունքում ի հայտ եկավ Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միությունը (ԱԽՍՀՖՄ): Նոր էր ձևավորվել ԱԽՍՀՖՄ–ն, երբ Մոսկվան արտահայտեց իր դժգոհությունը: Պարզվեց, որ պահանջվում էր ստեղծել ոչ թե հանրապետությունների

ֆեդերացիա, այլ միասնական ֆեդերատիվ հանրապետություն: Վրաց կոմունիստները դեմ էին նման կառույցի ստեղծմանը: Սակայն վրացական արգելքը հաղթահարվեց և 1922թ. դեկտեմբերի 13–ին հռչակվեց Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունն (ԱԽՖՍՀ) ու ընդունվեց վերջինիս սահմանադրությունը: Իսկ արդեն 1922թ. դեկտեմբերի 30–ին ստեղծվեց **Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ)**, որի կազմի մեջ մտան ՌՍՖՍՀ–ն, Ուկրաինական ԽՍՀ–ն, Բելոռուսական ԽՍՀ–ն և Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը (ԱԽՖՍՀ):

1924թ. հունվարի 31–ին ընդունվեց **ԽՍՀՄ առաջին սահմանադրությունը**, համաձայն որի իշխանության բարձրագույն մարմին էր հռչակվում ԽՍՀՄ Խորհուրդների համագումարը: Միութենական բոլոր հանրապետությունները պահպանում էին անկախության ձևական դրսևորումները ներքին ինքնակառավարման գործերում: Իշխանության ֆեդերատիվ մարմինների լիազորությունների շրջանակների մեջ էին մտնում միայն չորս բնագավառներ՝ արտաքին քաղաքականությունը, զինված ուժերը, կապի և հաղորդակցության միջոցները:

ԽՍՀՄ–ում սոցիալիզմի կառուցման անհրաժեշտ նախապայմաններ համարվեցին ինդուստրացումը, կոլեկտիվացումը և «մշակութային հեղափոխությունը»: 1928թ. խորհրդային առաջին հնգամյա պլանով ԽՍՀՄ–ը մուտք գործեց զարգացման նոր փուլ: Երկրում սկսվեց ինդուստրացման գործընթացը: Այն ենթադրում էր արդյունաբերական ձեռնարկությունների և ռազմավարական կարևորություն ունեցող այլ օբյեկտների կառուցում և տեխնիկական վերազինում: Նախապատվությունը տրվում էր ծանր արդյունաբերությանը: Ինդուստրացումն իրագործվում էր արագացված տեմպերով:

1929թ. սկսվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը՝ կոլեկտիվ տնտեսությունների համատարած ստեղծումը, որ զուգակցվում էր մասնավոր տնտեսությունների վերացմամբ: Կոլեկտիվացումն իրագործվում էր խիստ արագացված տեմպերով և զուգակցվում հակահիրավական մեթոդներով: Սկզբնական փուլում կոլեկտիվացումն էական վնաս հասցրեց գյուղացիությանը, հանգեցնելով գյուղատնտեսական արտադրության կրճատմանը: Այն արմատապես փոխեց գյուղացիության ապրելակերպը: Արագացված մեթոդներով էին իրագործվում նաև մշակութային վերափոխումները: Մեծ աշխատանք էր տարվում հատկապես բնակչության գրագիտության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Արդեն 1927–1928 թթ. գրագետ բնակչությունը կազմում էր քաղաքային բնակչության՝ 80 և գյուղականի՝ մոտ 43 տոկոսը: 1930թ. մտցվում է պարտադիր տարրական կրթությունը: Մեծ ուշադրություն էր դարձվում կադրերի պատրաստմանը: Այդ շրջանում էլ տեղ գտավ խորհրդային գիտության կազմակերպումն ու կայացումը: Սակայն դրա հետ մեկտեղ տեղ էր գտնում պարտադիր ու կաղապարային դատողությունների ներմուծումն ու բռնի միջամտությունը ստեղծագործական կյանքին: Գործող գրաքննությունը ոչ միայն բացառում էր որոշ ստեղծագործությունների տպագրումը, այլև հանգեցնում դրանց հեղինակների հալածանքներին:

Ամբողջատիրական համակարգը ԽՍՀՄ–ում

1930–ական թթ. սկզբներին ԽՍՀՄ–ում ձևավորվեց վարչահրամայական համակարգը, որը հանգեցրեց ԽՍՀՄ–ում ամբողջատիրական համակարգի հաստատմանը: Ամբողջատիրության Խորհրդային տարատեսակն ուներ մի շարք պատճառներ:

Նախ, խորհրդային ամբողջատիրության անհրաժեշտ տարր հանդիսացող կառավարման վարչահրամայական համակարգը համապատասխանում էր սոցիալիզմի կառուցման վերաբերյալ այն ժամանակներում իշխող պատկերացումներին: Զգացվում էր ժողովրդական զանգվածների սոցիալ–տնտեսական և մշակութային ընդհանուր ցածր մակարդակը: Երկրում գործնականում բացակայում էին ժողովրդավարության ավանդույթները: Չհաջողվեց ստեղծել իշխանության մարմինների գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության վստահելի մեխանիզմներ: Ձևավորվում էր խորհրդային առաջնորդների (Լենին և Ստալին) անձի պաշտամունքը:

Ամբողջատիրական համակարգի հաստատմանը նպաստեցին նաև կառավարող կուսակցության անհանդուրժողականությունն ու քաղաքական ընդդիմության բացակայությունը: Քաղաքացիական պատերազմը նպաստեց միակուսակցական համակարգի ձևավորմանն ու Մարքս–Լենինյան գաղափարախոսության գերիշխանությանը՝ դասակարգային պայքարի և դասակարգային անհանդուրժողականության սկզբունքներով հանդերձ: Քաղաքական ընդդիմությունը ոչնչացված էր: Էական դեր խաղաց նաև պետական և կուսակցական մարմինների բյուրոկրատացումը: Տնտեսության պետականացումը կտրուկ մեծացրեց պետական ապարատի լիազորությունները:

Բացի այդ, տեխնիկական և տնտեսական հետամնացության հաղթահարման անհրաժեշտությունը, ներքին ուժերի և նյութական ռեսուրսների ծայրահեղ մոբիլիզացման պատճառ դարձան: Կապիտալիստական շրջափակման և ռազմական սպառնալիքի մթնոլորտը նունպես ազդում էր բնակչության բարոյահոգեբանական վիճակի վրա:

Ամբողջատիրությունը դրսևորվում էր նաև սոցիալական բնագավառում: 20–րդ դարի առաջին կեսին խորհրդային մարդու ամենօրյա կյանքը լի էր բազմաթիվ սահմանափակումներով.

– Կոլտնտեսականները զրկված էին ազատ տեղաշարժվելու իրավունքից: Վերջիններս, ի տարբերություն բնակչության մյուս խմբերի, չունեին անձնագրեր:

– Բնակության վայրի հարցում գործում էին սահմափակումներ: Օրինակ, արգելված էր հաստատվել որևէ վայրում առանց գրանցման: Հետագայում միայն ի հայտ եկան «մշտական» և «ժամանակավոր գրանցում» հասկացությունները:

– Աշխատանքի վայրի ընտրության և աշխատավայրի փոփոխման հետ կապված նույնպես առկա էին սահմանափակումներ:

– Գործում էին նաև կուսակցական պատկանելությանն առնչվող սահմանափակումներ: Միջին և բարձր պաշտոններ վարելու համար ցանկալի էր, որ անձը լինի կոմունիստական կուսակցության անդամ:

Ստալինի անձի պաշտամունքը

Պատմական անցուդարձերի ընդհանուր զարգացման վրա անձի դերի գերագնահատման հետ մեկտեղ, սա ժամանակի ընթացքում բերեց կոլեկտիվ կառավարման փաստացի վերացմանն ու Ստալինի դիկտատորական վարչակարգի հաստատմանը: Ստալինի անձի պաշտամունքը չէր կարող ձևավորվել և գոյատևել առանց բնակչության ստորին խմբերի աջակցության: Սակայն մշակութային և կրթական ցածր մակարդակի վրա կանգնած հասարակությունում առաջնորդի նկատմամբ կույր հավատի ու պաշտամունքի ձևավորումը հեշտ խնդիր էր: Բացի այդ, էական դեր խաղաց այն, որ ոչ վաղ անցյալում միապետական երկրի բնակչությունն

ավանդաբար պահպանում էր պետության հոր՝ արդարամիտ թագավորի կերպարը: Անկասկած մեծ էր նաև իր՝ Ստալինի դերն այդ հարցում: Ստալինը այլախոհ տեսակետները չհանդուրժող, կուսակցական իրողությունները վերահսկող հմուտ քաղաքական գործիչ էր: Լենինի մահից հետո նա հանդես եկավ «լենինյան անդամագրում» իրագործելու նախաձեռնությամբ, որի արդյունքում կոմկուսի կազմը լուրջ փոփոխություններ կրեց և համալրվեց իր հետևորդներով: Իր քաղաքական ախոյանների հետ պայքարում նա հմտորեն էր օգտագործում վերջիններիս վերաբերյալ Լենինի ունեցած քննադատական գնահատականները: Հմուտ մանևրումների միջոցով, քաղաքական սպանությունների և քաղաքական դատավարությունների արդյունքում 1930–ական թվականների դրությամբ Ստալինը հիմնականում ազատվել էր իր հիմնական քաղաքական հակառակորդներից: Այդ շարքում էին անվանի կուսակցական գործիչներ՝ Կիրովը, Զինովևը, Կամենևը, Պյատակովը, Սոկոլնիկովը, Բուխարինը, Ռիկովը և այլոք: Ստալինի քաղաքական վերջին ախոյանը՝ L.Տրոցկին, որ 1929թ. ապաստան էր գտել Մեքսիկայում, սպանվեց 1940թ.՝ Ստալինի հրահանգով:

Վերոհիշյալից զատ, Ստալինը նաև հմուտ հոգեբանական հաշվարկ իրագործեց: Լենինի մահից հետո արմատավորելով Լենինի անձի պաշտամունքը, Ստալինը ոչ միայն արմատավորում էր առաջնորդի պաշտամունքի տրամադրություններ հասարակության մեջ, այլև ձևավորում ու արմատավորում իր սեփական անձի՝ իբրև Լենինի արժանի հետևորդի ու ժառանգի պաշտամունքը:

Զանգվածային բռնություններն ու հալածանքները

Ստալինյան վարչակարգին բնորոշ հատկանիշներն էին ահաբեկման մթնոլորտը, զանգվածային բռնություններն ու հալածանքները: Հիշյալ դրսևորումները ամբողջատիրական համակարգի ստեղծման միջոցների շարքում էին: 1930–ական թթ. հետապնդումներն ու հալածանքների քաղաքականությունը երեք հիմնական նպատակ էին հետապնդում.

– Վարչակարգի մաքրումը պաշտոնական դիրքին չհամապատասխանող անարժան անձանցից և ղեկավար անձնակազմի մաքրումը բարձր արժանիք ունեցող, սակայն Ստալինի և նրա շրջապատի համար զգալի վտանգ ներկայացնող կադրերից:

– Գերատեսչական, տեղային, անջատողական և պարզապես ընդդիմադիր տրամադրությունների խեղդումը սաղմնային վիճակում և կենտրոնի անվիճելի իշխանության ապահովումը երկրի բոլոր հատվածների նկատմամբ:

– Սոցիալական լարվածության թուլացումը՝ «ժողովրդի թշնամիների» բացահայտման ու նրանց պատժելու ճանապարհով:

Այսպիսով, 1920–1930–ական թթ. ԽՍՀՄ–ում ստեղծվել էր ամբողջատիրական ու վարչահրամայական համակարգ: Այն դրսևորվում էր տնտեսության, քաղաքակա-նության, գաղափարախոսության, մշակույթի, բարոյական նորմերի և այլ բնագավառներում կուսակցություն–պետության լիարժեք վերահսկողությամբ: Երկրի հետագա զարգացման վրա գնալով ավելի մեծ ազդեցություն պետք է ունենային ինչպես Ստալինի անձի պաշտամունքը, այնպես էլ խորհրդային հետագա առաջնորդների անձնական հատկությունները: Ստալինյան վարչակարգի բաղ-կացուցիչ մասն էին կազմում զանգվածային հետապնդումներն ու հալածանքները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է առաջացել ԽՍՀՄ - ը: Որո՞նք էին նրա ստեղծման նախադրյալները: Նոր տիպի պետության ստղծման վերաբերյալ ի՞նչ տեսակետներ կային կոմկուսի ղեկավարության շրջանում:
2. Ներկայացրե՛ք ԽՍՀՄ առաջին սահմանադրության հիմնական դրույթները: Որո՞նք էին խորհրդային երկրում սոցիալիզմի կառուցման նախապայմանները:
3. Պարզաբանե՛ք խորհրդային ամբողջատիրության էությունը: Որո՞նք էին դրա առաջացման պատճառները:
4. Ինչո՞ւ ձևավորվեց Ստալինի անձի պաշտամունքը: Հիմնական կողմերով ներկայացրե՛ք այն:
5. Ի՞նչ հետևանքներ ունեցան Խորհրդային Միությունում 1920–1930–ական թվականներին ծավալված բռնություններն ու հալածանքները:

ԳԼՈՒԽ 3. ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1920–1930–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 1. ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Տնտեսության տարածները (մոդելներ)

Նորագույն պատմության սկզբնական փուլում աշխարհում առավել տարածված էր շուկայական տնտեսությունը, որն ամենաարագ զարգացող տնտեսածևն էր:

Հասարակության արդիականացման գործընթացը թեև ներթափանցել էր նաև Արևելքի երկրներ, սակայն դրանցում դեռևս գերիշխում էր ավանդական, դանդաղ փոփոխվող կամ պահպանողական տնտեսածևը: Նախկին Ռուսական կայսրության տարածքում խորհրդային իշխանության հաստատումից հետո առաջացավ նոր տնտեսածև՝ սոցիալիստականը: Հասարակության արդիականացման այս նոր տարածևը ավարտուն տեսք ստացավ ԽՍՀՄ–ում 1930–ական թթ. վերջին և պատմության մեջ է մտել խորհրդային մոդել անվանումով:

Արևմուտքի զարգացած երկրների տնտեսության վրա սկսեց էական ազդեցություն թողնել պետական–մոնոպոլիստական կապիտալիզմը: Ինչպես գիտեք, XX դարասկզբին արդյունաբերական և բանկային կապիտալի միավորումը հանգեցրեց ***խոշոր ֆինանսական խմբերի (օլիգարխիաներ)*** ձևավորմանը: Մենատիրությունների (մոնոպոլիա) գերիզոր այս նոր միավորումները սկսեցին միջամտել պետության ներքին և արտաքին քաղաքականությանը՝ վերջինս դնելով իրենց վերահսկողության տակ:

Առաջին աշխարհամարտից հետո արդյունաբերական երկրներում մոնոպոլիաները մենաշնորհ ձեռք բերեցին տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում: Ապրանքների ծավալների ու գների չափերի թելադրանքը սրեց հակասությունները տարբեր երկրների տնտեսությունների միջև, ինչպես և համաշխարհային տնտեսության մեջ: Արդյունքում՝ միջպատերազմյան շրջանում հաճախակի դարձան տնտեսական ճգնաժամերը (1920–1921 թթ., 1929–1933 թթ., 1937–1938 թթ.):

Համաշխարհային տնտեսական մեծ ճգնաժամը (1929–1933 թթ.) շրջադարձային եղավ արդյունաբերական հասարակության զարգացման հետագա գործընթացում: Ժողովրդավարական երկրներում մեծացավ պետության կարգավորող դերը, ուժեղացավ պետական–մոնոպոլիստական կապիտալիզմը: Ամբողջատիրական երկրներում (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա) տնտեսությունը ռազմականացվեց, պետության միջամտությունը դարձավ գերակշռող:

Արևմտյան երկրների տնտեսական կյանքը երկու աշխարհամարտերի միջև ընկած շրջանում կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝ վերականգնում, բարգավաճում, մեծ ճգնաժամ և դրա հաղթահարում:

Վերականգնման շրջանի առանձնահատկությունները

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Արևմուտքի և պատերազմին մասնակցած մյուս երկրների առջև ծառացած կարևորագույն խնդիրը տնտեսության վերակառուցումն էր խաղաղ ժամանակներին համապատասխան: 1920–1921 թթ. տնտեսական ճգնաժամ եղավ բոլոր զարգացած երկրներում: Իրավիճակը բարդացնում էր արդյունաբերական աշխարհի պառակտված վիճակը՝ հաղթած և պարտված երկրներ, կապիտալիստական աշխարհ և սոցիալիստական աշխարհ՝ ի դեմս Խորհրդային Ռուսաստանի (ապա՝ ԽՍՀՄ):

Արևմուտքի երկրները չկարողացան համաձայնեցված գործողությունների ծրագիր մշակել, ինչի պատճառով նրանց վերականգնումն ու զարգացումն

անհավասարաչափ ընթացավ: Ճգնաժամն ավելի արագ հաղթահարեց և վերելքի ուղին բռնեց ԱՄՆ–ը: Նա շահեկան վիճակում էր, որովհետև հսկայական շահույթներ էր ստացել ռազմական պատվերներից և իր դաշնակիցներին ու այլ երկրների վարկեր տրամադրելուց:

ԱՄՆ–ի կառավարությունը 1921 թ. վերացրեց գերշահույթների վրա պատերազմի ժամանակ դրված հարկը և նվազեցրեց բարձր եկամուտ ունեցող ամերիկացիներից գանձվող հարկերը: Վերացվեցին տնտեսության կարգավորման և վերահսկողության իրականացնող պատերազմի ժամանակ ստեղծված պետական գործակալությունները. պետության միջամտությունը տնտեսական կյանքին համարվեց արտակարգ երևույթ: Շուկայական տնտեսությունը կրկին մտավ իր տարերքի մեջ, վերացվեցին ձեռնարկատիրական գործունեության սահմանափակումները:

ԱՄՆ–ը մեկ տարի անց դուրս եկավ ճգնաժամից, իսկ Եվրոպան մի քանի տարի ևս պայքարեց տնտեսական անկման դեմ:

Բարգավաճման ժամանակաշրջանը

Ճգնաժամն արագ հաղթահարելուց հետո ԱՄՆ–ը բռնեց վերելքի ուղի: Ամերիկյան տնտեսությունը ապրեց բուռն զարգացման տարիներ, որը պատմության մեջ է մտել ***բարգավաճման ժամանակաշրջան*** անունով:

Երկրի ազգային հարստությունը 1929 թ. սկզբին կազմում էր 450 մլրդ դոլար՝ 1922 թ. 350 մլրդ–ի փոխարեն (իսկ 1913 թ.՝ 187 մլրդ էր): ԱՄՆ–ը 1928 թ. վերջի դրությամբ կապիտալիստական աշխարհի հզորագույն տերությունն էր, որի արդյունաբերական արտադրության ծավալն ավելի մեծ էր, քան Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի արտադրանքի ծավալները միասին վերցրած: Չտեսնված չափեր ընդունեց գիտության և տեխնիկայի նվաճումների մուտքը արդյունաբերությաւն ու տնտեսության մյուս ճյուղեր: Ավտոմեքենան մատչելի դարձավ միջին խավի ամերիկացիների համար. ավտոմեքենան բարգավաճ ԱՄՆ–ի խորհրդանիշն էր: Երկրում կար 26,5 մլն ավտոմեքենա, մի քանի անգամ ավելի, քան մնացած բոլոր երկրներում միասին վերցրած: Կտրուկ աճեց նաև ռադիոընդունիչների և էլեկտրատեխնիկայի արտադրությունը:

Տնտեսական զարգացումն էականորեն փոխեց ԱՄՆ–ի բնակչության սոցիալական վիճակը և երկրի ներքաղաքական դրությունը: Մարդիկ սկսեցին բարեկեցիկ ապրել: Աճեցին աշխատավարձերը, կրճատվեց գործազրկությունը: Ոչ միայն մեղմացավ դասակարգային պայքարը, այլև շարժում սկսվեց ձեռնարկատերերի և բանվորների համագործակցության օգռին: Բանվորներն իրավունք ստացան բաժնետոմսեր ձեռք բերելու միջոցով դառնալ ձեռնարկությունների փայատեր: Այս երևույթն անվանեցին «տնտեսական հեղափոխություն», սակայն դա չէր կարող իսպառ վերացնել նրանց միջև սոցիալական անջրպետը:

Ամենուրեք տարածվում էր բիզնեսի գովերգումը, բիզնեսմենը դարձավ ամերիկացիների «բարձրագույն հեղինակությունը էթիկայի ու վարքագծի» հարցերում: Դրական ու լավատեսական փոփոխություններ կատարվեցին մարդկանց հոգեբանության մեջ և աշխարհայացքում: Պետական և հասարակական քարոզչությունը մարդկանց գիտակցության մեջ ամրակայում էր «հավերժական բարգավաճման» գաղափարը:

Արևմտաեվրոպական արդյունաբերական երկրների տնտեսական վիճակը

Հետպատերազմյան շրջանի սկզբում այլ էր իրավիճակը Արևմտյան Եվրոպայում:

Մեծ Բրիտանիայի գլխավոր մրցակից Գերմանիան պարտվել էր, զրկվել գաղութներից, իսկ Ֆրանսիան նախկին հզորությունը չուներ: Նրա հիմնական մրցակիցներն էին ԱՄՆ–ը և Ճապոնիան, ընդ որում, պարտք էր ԱՄՆ–ին 5,5 մլրդ դոլար: Մեծ Բրիտանիայում աճեց գործազրկությունը, գործադուլային շարժումը մեծ թափ ընդունեց: Պայքարիօ արդյունքում երկրում սահմանվեց 8–ժամյա և 7–ժամյա աշխատանքային օր, բարձրացվեցին աշխատավարձերը: Երկրի տնտեսությունը միայն 1929 թ. հասավ նախապատերազմյան մակարդակին, բայց այն մրցունակ չէր: Սկսեցին զարգացնել նոր ճյուղեր՝ քիմիական, մեքենաշինական, ավտոմեքենաշինական:

Ֆրանսիան պատերազմից հետո տնտեսապես թուլացած վիճակում էր, արտաքին պարտքեր ուներ ԱՄՆ–ին և Մեծ Բրիտանիային: Վերսալյան հաշտությամբ սահմանված 132 մլրդ մարկ գերմանական ռազմատուգանքների 52%–ը նա պետք է ստանար: Չնայած այդ գումարը Ֆրանսիան մասամբ ստացավ (և այն էլ ամերիկյան Դաուեսի ծրագրի գործադրման շնորհիվ), սակայն երկրի տնտեսությունը կայունացավ: 1929 թ. դրությամբ 1,5 անգամ ավելացել էր արդյունաբերական արտադրությունը, և Ֆրանսիան առաջ անցավ Անգլիայից:

Գերմանիան պատերազմից դուրս եկավ քայքայված տնտեսությամբ, երկրում տիրում էր սով, համաճարակ, գործազրկություն: Դաուեսի ծրագիրը թեթևացրեց Գերմանիայի վիճակը, նա 1924–1929 թթ. ստացավ 16 մլրդ դոլար վարկ, տնտեսությունը սկսեց վերելք ապրել: Սակայն տնտեսական աճի տեմպերը դանդաղ էին և հայտնի չէր, թե Գերմանիան երբ ավարտին կհասցնի ռազմատուգանքի վճարումը:

Իտալիան թեև հաղթած երկրներից էր, չկարողացավ ուժեղացնել իր դիրքերը Միջերկրական ծովի ավազանում: Նա պարտք էր իր դաշնակիցներին, աճել էր նաև ներքին պարտքը: 1920–1921 թթ. ճգնաժամի պատճառով սրվեց դասակարգային պայքարը քաղաքում և գյուղում: Արդյունքում՝ աշխարհում առաջինը Իտալիայում հաստատվեց ֆաշիստական վարչակարգ:

Այսպիսով՝ 1920–ական թթ. միայն ԱՄՆ–ում տեղի ունեցավ տնտեսական թռիչք, և նա դարձավ աշխարհի տնտեսական կենտրոնը: ԱՄՆ–ից մի քիչ ուշ՝ եվրոպական առաջատար երկրներում ևս սկսվեց տնտեսության կառուցվածքային փոփոխություն, շարունակվեց արտադրության տեխնոլոգիական հեղաշրջումը: Աշխատանքի կազմակերպման և կառավարման արդյունավետ ձևերի ներդրումը վերը նշված փոփոխությունների հետ ապահովեցին հասուն արդյունաբերական հասարակության ստեղծումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տնտեսության զարգացման ի՞նչ տարածևեր կային աշխարհում XX դ. սկզբներին:

2. Որո՞նք էին ԱՄՆ–ի տնտեսական զարգացման առանձնահատկությունները հետպատերազմյան շրջանում: Պարզաբանե՛ք տնտեսական բարգավաճման էությունը:

3. Ներկայացրե՛ք եվրոպական առաջատար երկրների տնտեսական զարգացման առանձնահատկությունները 1920–ական թվականներին:

§ 2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մեծ ճգնաժամը (1929–1933 թվականներ)

Համաշխարհային տնտեսական մեծ ճգնաժամը սկիիզբ առավ ԱՄՆ–ում: Բարգավաճման շրջանում միլիոնավոր ամերիկացիներ՝ հարուստներ, միջին խավ, բանվորներ, ձեռք էին բերում ձեռնարկությունների բաժնետոմսեր, հուսալով, որ շատ արագ մեծ շահույթ կունենան դրանց գնի բարձրացումից: Ֆինանսական բորսայում արժեթղթերի գները հինգ տարվա ընթացքում աճել էին մոտ 3 անգամ: Սակայն Նյու Յորքի բորսայում 1929 թ. հոկտեմբերին բաժնետոմսերի գները կտրուկ անկում ապրեցին, սկսվեց խուճապ, ավանդատուները բանկերից հանում էին իրենց գումարները: Արժեթղթերի գնի անկումը և բանկերի սնանկացումը ուժգին հարվածեցին կապիտալիզմի հենասյուներին՝ ֆինանսական շուկային և բանկային համակարգին: Փակվեցին գործարաններ, ֆաբրիկաներ, գրասենյակներ, կրճատվեց առևտուրը:

Ճգնաժամը ցնցեց կապիտալիստական աշխարհի միջնաբերդ ԱՄՆ–ին: Ամերիկյան «հավերժական բարգավաճման» գաղափարը, առանց ճգնաժամերի և սոցիալական հակասությունների պատկերացումները շատ արագ տեղի տվեցին հոռետեսությանը: Փակվեցին 85 հազարից ավելի ձեռնարկություն և բանկ: Ամերիկյան ճգնաժամն իր հետևից տարավ մնացյալ կապիտալիստական աշխարհը՝ Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ, Սկանդինավյան երկրներ և այլն: Ամենից շատ տուժեցին ԱՄՆ–ը և Գերմանիան, որոնց արդյունաբերական արտադրանքը կրճատվեց համապատասխանաբար՝ 46 և 40 տոկոսով: Ֆրանսիայում անկումը կազմեց 31, Մեծ Բրիտանիայում՝ 16 տոկոս: Գործազուրկների թիվը 32 երկրներում 5,9 մլն–ից հասավ 26,4 մլն մարդու: Այս ճգնաժամը ամենաերկարատևն էր. նախկինում 1–1,5 տարում երկրները դուրս էին գալիս այդ վիճակից: Ավելին՝ համաշխարհային տնտեսությունը, բացի ԽՍՀՄ–ից, Գերմանիայից, Ճապոնիայից, չկարողացավ լիովին վերականգնվել մինչև Երկրորդ աշխարհամարտի սկիզբը:

Ճգնաժամը տեղի ունեցավ ԱՄՆ–ում, ուր տնտեսության ամենաբարձր աճն էր ու զարգացումը, ուր արդյունաբերական հասարակությունը հասել էր բարձր զարգացման: Մեծ ճգնաժամը կառուցվածքային և համակարգային բնույթ ուներ, այսինքն՝ արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլի ճգնաժամի սկիզբն էր: Այն շրջադարձային եղավ կապիտալիսմի հետաքգա զարգացման գործում:

Մեծ ճգնաժամը ունեցավ նաև ծանր սոցիալական հետևանքներ. զանգվածային գործազրկություն, ծայրահեղ աղքատացում և ծայրահեղ հարստացում (ուժեղացավ սոցիալական բևեռացումը), սովյալների խռովություններ և բողոքի շարժումներ: Դա բերեց բարքերի անկման, հանցագործությունների աճ, անելանելիության վիճակ, ինքնասպանությունների աճ և այլն:

Գլխավոր պատճառը տնտեսության հավասարակշռության խաթարումն էր՝ արտադրություն–բաշխում–սպառում: Արդյունաբերական ապրանքների ծավալները մեծապես աճել էին, իսկ աշխատավարձը ավելի քիչ էր բարձրացել, որի պատճառով ցածր էր բնակչության գնողունակությունը: Գյուղատնտեսական ապրանքների համաշխարհային շուկան հագեցել էր արդեն 1928 թ.: Գներն իջան, իսկ ագարակատերերը չկարողացան շահույթ ստանալ և վերադարձնել վարկերը դրամատներին:

Ճգնաժամից դուրս գալու ուղիները, «Նոր կուրսը»

Մենատիրությունները ևս նպաստեցին ճգնաժամի առաջացմանը. շուկան և ազատ մրցակցությունը դադարեցին որպես կարգավորիչներ աշխատել: Եվ այստեղ առաջին դերում հանդես եկավ պետությունը:

Դժվար էր արմատացած ազատական գիտակցությունը՝ պետությունը չպետք է միջամտի շուկայական տնտեսության կարգավորմանը, փոխել: Սակայն Առաջին աշխարհամարտի ժամանակվա փորձը վկայում էր, որ արտակարգ իրավիճակներում պետության դերն անփոխարինելի է:

Սակայն խոշորագույն տնտեսագետ **Ջոն Քեյնսը** բացահայտեց Մեծ ճգնաժամի խորքային պատճառները: Հզոր տնտեսությունն իր խոշոր ձեռնարկություններով, որոնք մենաշնորհել են և սահմանափակել շուկան, ինքնաբերաբար չի կարող դուրս գալ ճգնաժամից նախկին մեթոդներով՝ շուկայական լծակների օգնությամբ: Նա հիմնավորեց, որ պետությունը պետք է կարգավորի տնտեսության զարգացումը և ապրանքների բաշխումը: Այդ գործում առանցքային տեղ պետք է տրվի բնակչության գնողունակության բարձրացմանը, որպեսզի զանգվածային արտադրությանը համապատասխանի զանգվածային սպառումը: Այդ փակուղուց կարող է դուրս բերել միայն պետությունը: Կա երկու եղանակ այդ վիճակից դուրս գալու. սպառման կարգավորում բնակչության գնողունակության բարձրացման հաշվին, իսկ սղաճի դեպքում՝ սպառման աճի զսպում:

Հիմնական հարցն այն էր, թե պետական կարգավորումն ինչ աստիճան և ձևեր պետք է ընդունի, մինչև որ խորանա նրա կարգավորիչ դերը հասարակության կյանքում: Դա արդեն քաղաքական համակարգի բնույթի հարց է, որը տարբեր երկրներում տարբեր լուծում ստացավ՝ ժողովրդավարական կամ ամբողջատիրական:

Սկզբնական շրջանում բոլոր երկրները փորձեցին դուրս գալ ճգնաժամից ազատականության ավանդական ձևով՝ շուկայական տնտեսության ինքնակարգավորման ճանապարհով, սակայն իրականությունը ցույց տվեց, որ առանց պետության միջամտության հնարավոր չէ հաղթահարել անկումը:

Բնականաբար, այդ գործընթացում աճեցին պետության տնտեսական և սոցիալական գործառույթները: Պետության միջամտության աստիճանը տարբեր երկրներում միատեսակ չէր: Այդ առումով առանձնացան ճգնաժամի հաղթահարման **երեք գլխավոր ուղիներ**, որոնց հիման վրա ձևավորվեցին տնտեսության երեք մոդելներ՝ **ազատական–բարենորոգչական, սոցիալ–բարենորոգչական և ամբողջատիրական:**

Առաջին ուղին գործադրվեց ԱՄՆ–ում **(«Նոր կուրս»),** ապա՝ Մեծ Բրիտանիայում, երկրորդը բնորոշ էր Սկանդինավյան երկրներին և կարճ ժամանակով՝ Ֆրանսիային ու Իսպանիային, իսկ վերջին տարբերակը դրսևորվեց Գերմանիայում, Իտալիայում, Ճապոնիայում:

Ազատական–բարենորոգչական ուղին ԱՄՆ–ում սկսեց իրականացվել 1933 թ., երբ նորընտիր ժողովրդավար նախագահ Ռուզվելտը 100 օրվա ընթացքում ընդունեց 60–ից ավելի օրենք: Դրանք ձևավորեցին պետության ներքին քաղաքական «նոր կուրսը»: Պետությունը խոշոր բյուջետային և դրամավարկային ներդրումներ իրականացրեց տնտեսության անկումը կանգնեցնելու և վերելքը խթանելու նպատակով: Մյուս կարևոր նպատակն էր մեղմացնել սոցիալական լարվածությունը:

Նոր կուրսը կարգավորում էր արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, բանկային համակարգը և սոցիալական ոլորտը: Արդյունաբերության վերականգնման մասին օրենքով (1933 թ. հունիսի 16) բոլոր արդյունաբերողներին կարգադրվեց

մշակել և հետևել «ազնիվ մրցակցության» նորմերին, որոնք սահմանեցին արտադրության ծավալները, իրացման շուկաները, գների և աշխատավարձի նվազագույն մակարդակը և այլն: Գործազրկությունը կրճատելու նպատակով մտցվեց հասարակական աշխատանքների համակարգը: Բանվորներն իրավունք ստացան արհմիությունների մեջ միավորվելու և ձեռնարկատերերի հետ կոլեկտիվ պայմանագիր կնքելու:

Ճգնաժամի տարիներին 900 հազար ագարակատերեր ԱՄՆ–ում սնանկացել էին և նրանց տնտեսությունները հարկադիր վաճառվել էին: Ագարակատերերին օգնելու նպատակով պետությունը նպաստներ տվեց, իսկ դրա փոխարեն պետք է կրճատվեր արտադրանքը, որպեսզի վերացվեր սղաճը: Կարգավորվեց նաև բանկային համակարգը. պետությունը փոխատվություններ հատկացրեց կենսունակ դրամատներին:

«Նոր կուրսի» երկրորդ փուլում (1935 թ.) ընդունվեցին սոցիալական հարաբերությունները կարգավորող՝ սոցիալական ապահովության և պետության սոցիալական պատասխանատվության մասին առաջադիմական օրենքներ:

Նախագահ Ռուզվելտի «Նոր կուրսը» տվեց իր արդյունքները. 1936 թ. ԱՄՆ–ի տնտեսությունը վերականգնվել էր և սկսվել էր աշխուժացման շրջանը

Սոցիալ–բարենորոգչական ուղուն ևս բնորոշ էր պետության կարգավորիչ դերի ուժեղացումը, իսկ գլխավոր առանձնահատկությունը տնտեսության «սոցիալականացումն» էր:

Տնտեսության որոշ ճյուղեր և ձեռնարկություններ ազգայնացվեցին, տնտեսության մեջ ամրակայվեց պետական մասնաբաժինը: Այս ուղու երկրներն էին Շվեդիան, Դանիան, Նորվեգիան, որոնք 1930–ական թթ. կեսերից զարգացրին տնտեսության նոր մոդելը:

Սկանդինավյան երկրներում երկար ժամանակ իշխանության ղեկին էին սոցիալ–ժողովրդավարները, որոնց կառավարությունները պետական վերահսկողության տակ առան նաև արտաքին առևտուրը և կապիտալի արտահանումը: Կտրուկ փոխվեց պետության սոցիալական քաղաքականությունը: Հաջողություններն այնքան ակնառու էին, հատկապես Շվեդիայում, որ տնտեսության և հասարակական կյանքի այս ձևը հետագայում ստացավ **«շվեդական մոդել»** անվանումը:

Ճգնաժամից դուրս գալու առաջին երկու մոդելները կենսագործվեցին շուկայական հարաբերությունների հենքի վրա, իսկ ամբողջատիրական մոդելի ժամանակ դրանք կրճատվեցին կամ վերացվեցին:

Երրորդ մոդելն աչքի է ընկնում տնտեսության գերկենտրոնացված կառավարման համակարգով: Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան ստեղծեցին ռազմականացված տնտեսություն, որի առաջնահերթ նպատակը ճգնաժամի հաղթահարումն էր, իսկ գերնպատակը՝ աշխարհի վերաբաժանման համար նոր պատերազմի նախապատրաստումը:

Այս մոդելում պետության ուղղակի միջամտությունը դարձավ գերակշռող նրա տնտեսական քաղաքականության մեջ: Ի վերջո, կիրառվեց նաև տնտեսության պլանավորումը (մինչ այդ աշխարհում առաջինը պլանային տնտեսություն ստեղծվել և գործում էր ԽՍՀՄ–ում): Շատ արագ և կարճ ժամկետում ստացվեցին դրական արդյունքներ. Գերմանիայում 1934 թ. վերացավ գործազրկությունը, իսկ տնտեսությունը վերելք ապրեց: Սակայն ռազմականացված տնտեսությունը դարձավ ապագա լուրջ աղետի գլխավոր նախադրյալներից մեկը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նշե՛ք տնտեսական Մեծ ճգնաժամի գլխավոր պատճառները և հետևանքները:
2. Ինչո՞ւ շուկայական տնտեսության կանոններով հնարավոր չէր հաղթահարել Մեծ ճգնաժամը: Որո՞նք էին ճգնաժամից դուրս գալու երեք ուղիները: Լուսաբանե՛ք «Նոր կուրսի» բովանդակությունը և արդյունքները:
3. Ո՞ր երկրներում ձևավորվեց սոցիալ–բարենորոգչական մոդելը: Ո՞րն էր ամբողջատիրական մոդելի գլխավոր առանձնահատկությունը:
4. Վերհանե՛ք պետության դերակատարումը Մեծ ճգնաժամից դուրս գալու գործում:

§ 3–4. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

Ինչպես գիտեք, Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերին հաստատվել էր խորհրդային իշխանություն: Երկրում սկսված սոցիալիստական հասարակության կառուցման գործընթացը ընդհատվեց 1918–1920 թթ. քաղաքացիական պատերազմով: Խորհրդային Ռուսաստանը առաջինը դուրս եկավ աշխարհամարտից, սակայն հայտնվեց միջազգային մեկուսացման մեջ. Վերսալ–Վաշինգտոնյան համակարգի մաս չկազմեց ու մի քանի տարի անց միայն միջազգային ճանաչում ստացավ կապիտալիստական աշխարհի կողմից:

Նոր տնտեսական քաղաքականությունը

Առաջին աշխարհամարտը և քաղաքացիական պատերազմը ահռելի կորուստներ պատճառեցին Ռուսաստանին և նրանից անկախացած ազգային պետություններին: Մարդկային կորուստները կազմեցին 20 մլն, երկրում կային միլիոնավոր հաշմանդամներ և թափառաշրջիկ երեխաներ: 1920 թ. արդյունաբերական արտադրանքը 1913 թ. համեմատ կրճատվեց 7 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը՝ 1/3–ով:

Խորհրդային Ռուսաստանը 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին հայտնվեց տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամի մեջ:

Բնակչությունը պարենի սուր կարիք էր զգում: Երկրում մոլեգնած սովին զոհ գնաց մի քանի միլիոն մարդ: Գյուղացիները պահանջում էին վերացնել քաղաքացիական պատերազմի շրջանում «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությամբ մտցված ***պարենմասնատրումը*** և թույլատրել ազատ առևտուրը:

Երկրի տարբեր մասերում տեղի ունեցան գյուղացիների ապստամբություններ խորհրդային իշխանության դեմ: Դժգոհությունը տարածվեց նաև բանակում ու նավատորմում: 1921 թ. փետրվարին գործադուլներ եղան Պետրոգրադում, ապստամբեցին Կրոնշտադտի նավաստիները: Կառավարությունը միայն զենքի ուժով կարողացավ ճնշել այդ բոլոր ելույթները:

Ճգնաժամից դուրս գալու միակ ուղին ***«Ռազմական կոմունիզմի»*** քաղաքական կուրսը փոխելն էր: Բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինի կողմից մշակվեց և կյանքի կոչվեց ***Նոր տնտեսական քաղաքականությունը*** (ռուս. հապավումը՝ ***նէպ***): Դրա բնորոշ կողմերն էին՝ ***պարենհարկի*** կիրառում պարենմասնատրման փոխարեն, ***մասնավոր առևտրի թույլատրում, մասնավոր փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծում, օտարերկրյա կապիտալի ներգրավում տնտեսության մեջ, դրամական բարեփոխում,*** **դրամական և տարիֆավորված աշխատավարձի վերականգնում** և այլն:

Փաստորեն, սահմանափակ չափով թույլատրվեց շուկայական տնտեսության գործունեությունը, սակայն ամբողջ երկրի տնտեսության ղեկավարումը մնաց կուսակցական–պետական ապարատի ձեռքին: Պետությունը բոլոր խոշոր և ազգայնացված միջին արդյունաբերական ձեռնարկությունները, արտաքին առևտրի մենաշնորհը, ֆինանսները և տրանսպորտը պահեց իր տնօրինման ներքո:

Մոտակա նպատակն էր՝ նէպի միջոցով ճգնաժամից դուրս գան ու տնտեսությունը վերականգնել, իսկ հեռահար նպատակը՝ սոցիալիզմի կառուցումը: «Ռազմական կոմունիզմի» միջոցով սոցիալիստական հասարակության կառուցման փորձը ձախողվել էր, քանի որ կապիտալիստական հասարակությունից դեպի սոցիալիզմ անհրաժեշտ էր անցման ոչ կարճատև ժամանակաշրջան:

Պարենհարկի վճարումից (չափը սահմանվում էր մինչև բերքահավաքը և մնում էր անփոփոխ) հետո մնացած ավելցուկը գյուղացին ազատորեն տնօրինում էր՝ վաճառում, փոխանակում, կուտակում և այլն:

Ազատ առևտրի միջոցով աշխուժացան ապրանքադրամական հարաբերությունները քաղաքի և գյուղի միջև: Մրցակցություն ծավալվեց երեք մասնաբաժինների (պետական, կոոպերատիվ և մասնավոր) միջև ներքին տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում: Վարձու աշխատանքը տարածում գտավ նաև գյուղատնտեսության մեջ, սակայն հողի առուծախը, նվիրատվությունը, գրավադրումը, կտակումը արգելված էր:

Խորհրդային Ռուսաստանի և մյուս խորհրդային հանրապետությունների (1922 թ. դեկտեմբերից՝ ԽՍՀՄ) ***տնտեսությունը դարձավ բազմաբնույթ.*** կային ***սոցիալիստական (պետական), մասնավոր, կոոպերատիվ և խառը (համատեղ)*** կազմով արտադրական, առևտրային և սպասարկման ձեռնարկություններ:

Շուկայական տնտեսության մեխանիզմների հետ միաժամանակ գործադրվում էր նաև պետական պլանավորման սկզբունքը: Դեռ 1921 թ. սկզբին ստեղծվել էր համապատասխան պետական կառույց՝ ***Պետպլան***: Լայնորեն կիրառվեց տնտեսական - հաշվարկի ձևը, պետական ձեռնարկությունների մեծ մասը ստացավ տնտեսական ինքնուրույնություն: Տնտհաշվարկի էությունը հետևյալն էր. ձեռնարկությունները գործում էին ինքնածախսածածկման ու ինքնաֆինանսավորման միջոցով, զբաղվում էին հումքի ձեռքբերմամբ և իրենց արտադրանքի իրացմամբ:

1923 թ. ԽՍՀՄ տնտեսությունը սկսեց վերելք ապրել, իսկ 1928 թ. դրությամբ երկիրը տնտեսական վիճակի գլխավոր ցուցանիշներով հասավ նախապատերազմյան մակարդակին: Կայունացավ նաև խորհրդային պետության ֆինանսական վիճակը:

Պլանային տնտեսությունը

Նոր տնտեսական քաղաքականության շնորհիվ ԽՍՀՄ տնտեսությունը ոչ միայն վերականգնվեց, այլ նաև սկսեց զարգանալ: Սակայն նէպի հիմքում ընկած էին հակասություններ, որոնք հանգեցրին ճգնաժամերի: Երկրի ներքին ֆինանսական միջոցները սահմանափակ էին: Արտահանման ծավալը երկու անգամ պակաս էր նախապատերազմյան չափերից, իսկ հիմնականում դրա շնորհիվ էին զարգացած երկրներից ձեռք բերվում նորագույն տեխնիկա և սարքավորումներ: 1927 թ. կրճատվեցին հացահատիկի մթերման ծավալները, իսկ քաղաքային բնակչության թիվն աճել էր: Շուկայական տնտեսությունը սահմանափակված էր պետության վերահսկողությամբ: Նէպի հետագա խորացումը կարող էր հանգեցնել քաղաքական համակարգի փոփոխությանը, իսկ Ի.Ստալինի գլխավորությամբ մենիշխանություն հաստատած կոմունիստական կուսակցությունը նման շրջադարձ չէր կարող թույլ տալ:

ԽՍՀՄ–ը տնտեսական առումով շատ հետ էր մնում արդյունաբերական առաջատար երկրներից: Այդ հիմնախնդիրը լուծելու նպատակով դեռ 1925 թ. խորհրդային պետությունը որդեգրեց երկրի արդյունաբերականացման քաղաքականություն: Խնդիր դրվեց առաջնահերթ զարգացնելու էներգետիկան, մետաղամշակությունը, քիմիական, մեքենաշինական, ավիացիայի և այլ ճյուղեր:

Խորհրդային տնտեսագետները 1927 թ. մշակեցին տնտեսության զարգացման ***առաջին հնգամյա պլանը (1928–1932 թթ.):*** Նախատեսված էր երկրի տարբեր շրջաններում կառուցել 1500 խոշոր ձեռնարկություններ: Հնգամյակի սկիզբը համընկավ մթերման դժվարությունների և սկսված տնտեսական ճգնաժամի հետ:

Երկրի ղեկավարությունը գյուղատնտեսությունը դիտում էր որպես արդյունաբերականացման համար ֆինանսների հայթայթման գլխավոր աղբյուր: Այդ պատճառով

կառավարման վարչահրամայական մեթոդները տարածվեցին նաև գյուղատնտեսության վրա: Այդ պահի դրությամբ գյուղում տիրապետող էին մասնավոր տնտեսությունները՝ ունևորներ (կուլակներ՝ մոտ 4%) և միջակներ (60%): Պետությունը խնդիր դրեց անհատական տնտեսությունները միավորելու կոլեկտիվ տնտեսությունների մեջ, որոնք խորհրդային իշխանության հենարանն էին գյուղում:

1927 թ. սկսեց գործադրվել գյուղի կոլեկտիվացման քաղաքականությունը, սակայն մասնավոր տնտեսությունների շատ չնչին մասը կամավոր կերպով մտավ կոլտնտեսություններ: Ստալինի կողմից 1929 թ. հայտարարվեց մեծ բեկման տարի: Այդ նույն թվականի ավարտին, երբ արդեն կապիտալիստական աշխարհում սկսվել էր Մեծ ճգնաժամը, խորհրդային երկրի ղեկավարը մի խորհրդակցության ժամանակ ասաց. «Տեմպերը թուլացնել՝ նշանակում է հետ մնալ: Իսկ հետ մնացողներին խփում են: Իսկ մենք չենք ուզում խփված լինել... Մենք հետ ենք մնացել առաջատար երկրներից 50–100 տարի: Մենք պետք է այդ հեռավորությունը վազելով անցնենք տասը տարում: Կամ մենք կանենք դա, կամ մեզ կճզմեն»:

Դրան հետևեց 1930 թ. համատարած կոլեկտիվացումը հարկադրանքի և բռնի մեթոդներով: Կուլակությունը որպես դասակարգ վերացավ: Բռնության կիրառումը առաջացրեց գյուղացիության դժգոհությունը: Պետությունը հարկադրված էր նահանջ քայլ կատարելու: Բռնությամբ ստեղծված կոլտնտեսությունները լուծարվեցին, և սկսվեց կոլեկտիվացման նոր փուլ՝ կամավոր–պարտադիր սկզբունքի կիրառմամբ: Արդյունքում՝ մինչև երկրորդ հնգամյակի (1933–1937 թթ.) ավարտը կոլեկտիվացվեց գյուղացիական տնտեսությունների 93 %–ը:

Կոլեկտիվացումը քաղաքին և արդյունաբերությանն ապահովեց միլիոնավոր նոր աշխատուժով: Պատահական չէ, որ 1930 թ. ԽՍՀՄ–ում փակվեց աշխատանքի վերջին բորսան, վերացավ գործազրկությունը:

Խորհրդային երկիրը, մեծագույն ջանքերի և զոհողությունների, միլիոնավոր մարդկանց եռանդի և սոցիալիզմի հանդեպ հավատի շնորհիվ, 1928–1940 թթ. ընթացքում որակական թռիչք ապրեց, դարձավ արդյունաբերական հզոր երկիր: Գործարկվեց 9000 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, էլեկտրաէներգիայի արտադրությունն աճեց 10 անգամ, նավթի արդյունահանումը՝ 3 անգամ, չուգունի արտադրությունը՝ 4 անգամ և այլն:

Խորհրդային Միությունն արդեն ***1937 թ.*** արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալով ***Եվրոպայում*** զբաղեցրեց ***առաջին տեղը,*** իսկ ***աշխարհում՝ երկրորդը*** ՝ ԱՄՆ–ից հետո:

Արդյունաբերականացումը ապահովեց ԽՍՀՄ–ի տնտեսական ինքնուրույնությունը, պայմաններ ստեղծեց տնտեսության հին ճյուղերի արդիականացման և նոր ճյուղերի ստեղծման ու զարգացման համար: Ամրապնդվեց երկրի պաշտպանունակությունը: Թվապես ու որակապես աճեց բանվոր դասակարգը: Ձևավորվեց խորհրդային տեխնիկական, գիտական և մշակութային մտավորականությունը (1939թ. տվյալներով՝ խորհրդային մտավորականության թիվը կազմում էր 11 մլն մարդ):

Ճիշտ է, ԽՍՀՄ–ը դարձավ արդյունաբերական հզոր տերություն, սակայն նրա տնտեսության մեջ առաջացան լուրջ անհամամասնություններ: Գյուղատնտեսությունը հետ էր մնում, թեթև և սննդի արդյունաբերությունը դանդաղ էր զարգանում, ինչը մշտական հիմնախնդիր դարձավ ԽՍՀՄ ողջ պատմության ընթացքում:

Գիտության նորագույն նվաճումները շատ դանդաղ էին ներդրվում տնտեսության մեջ. բացառություն էին կազմում ռազմական ոլորտը և ծանր արդյունաբերությունը: Գենետիկան և կիբեռնետիկան նույնիսկ հայտարարվեցին կեղծ գիտություններ:

Երկու հնգամյակի ընթացքում իրականացված արագ կոլեկտիվացման արդյունքները երկակի էին: Գյուղում մոտ երկու անգամ պակասեց անասունների գլխաքանակը, իսկ 1932–1933 թթ. երկրի հացահատիկի արտադրության գլխավոր շրջաններում սով սկսվեց հացամթերքի բռնագրավման պատճառով: Մոտ 7 մլն մարդ սովից մահացավ: Սակայն երկրի ստալինյան ղեկավարությունը տոնում էր հաղթանակ. գյուղը համատարած կոլեկտիվացվել էր, կրկնակի ավելացել էր հացահատիկի պետական մթերումների ծավալը: Ամենագլխավորն այն էր, որ կոլեկտիվացումն ապահովեց արդյունաբերության թռիչքաձև զարգացումը: Միլիոնավոր մարդիկ տեղափոխվեցին քաղաք: Քաղաքային բնակչությունը 1939 թ. մարդահամարի տվյալներով կազմում էր 60 մլն մարդ (1926 թ. 26 միլիոն էր):

Այսպես՝ նէպից վճռական նահանջը գյուղատնտեսության մեջ տեղի ունեցավ 1928 թ., արդյունաբերության մեջ՝ 1929–1932 թթ., իսկ առևտրի ոլորտում՝ 1930–ական թթ. առաջին կեսին: Արդյունքում՝ շուկայական տնտեսությունը փոխարինվեց պլանային տնտեսությամբ: Տնտեսության այս մոդելը ԽՍՀՄ–ում գոյություն ունեցավ մինչև նրա փլուզումը:

Սոցիալիզմի կառուցման խորհրդային մոդելը

1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո նախկին Ռուսական կայսրության տարածքում ստեղծված խորհրդային տերությունում աշխարհում առաջին անգամ կյանքի կոչվեց սոցիալիզմի տեսությունը: Դժվար էր գտնել սոցիալիզմի կառուցման լավագույն մոդելը հասարակության արդիականացումը դեռևս չավարտած ագրարային–արդյունաբերական մի հսկա երկրում: Ներքին դժվարություններին գումարվեց նաև արտաքինը՝ կապիտալիստական աշխարհի կողմից խորհրդային պետության հանդեպ թշնամանքը և շրջափակումը: Նրա միջազգային ճանաչումից հետո առաջին պլան մղվեց երկու տարբեր հասարակարգերի՝ ժողովրդավարական–կապիտալիստական և սոցիալիստական մրցակցությունը բոլոր ոլորտներում: Պայքարի ելքը ամենից առաջ կախված էր տնտեսական մրցակցությունից:

Նէպը Խորհրդային Միությանը արագացված զարգացում չապահովեց: Ահա թե ինչու ԽՍՀՄ ղեկավարությունը նախընտրեց սոցիալիզմի արագացված կառուցման քաղաքական կուրսը: Սոցիալիստական հասարակության ստեղծումը պահանջում էր արմատական փոփոխություններ կատարել երկրի հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Վերափոխումները մեծ թափ հավաքեցին 1920–ական թթ. վերջից, երբ սկսվեցին արդյունաբերականացման և կոլեկտիվացման գործընթացները: *Առաջավոր արդյունաբերական երկիր դառնալու խնդրի լուծումը կատարվեց պետության դերի շեշտակի մեծացման և պլանային տնտեսության հաստատման ուղիով:*

Խորհրդային հասարակության ղեկավարումն իրականացվում էր հսկայական չափեր ընդունած կուսակցական–պետական վարչակազմի, ինչպես նաև արհմիությունների և հասարակական կազմակերպությունների միջոցով: Մոսկվայում մշակվում և հաստատվում էին երկրի տնտեսության զարգացման հնգամյա, տարեկան և եռամսյակային պլանները, որոնք օրենքի ուժ ունեին և ենթակա էին անշեղ կատարման:

Սկզբում տնտեսական քաղաքականության վարչահրամայական մեթոդները տարածվեցին արդյունաբերության, հետո՝ գյուղատնտեսության և ապա՝ ամբողջ տնտեսության վրա:

1930–ական թթ. ԽՍՀՄ–ում ձևավորվեց ու ամրապնդվեց վարչահրամայական մեթոդներով կառավարվող ***պլանային տնտեսություն:*** Այդ տնտեսությունը հենվում

էր պետական և կոլեկտիվ սեփականության ձևերի վրա, իսկ մասնավոր սեփականությունն ու շուկայական տնտեսությունը վերացվեցին:

Տնտեսության գերկենտրոնացված կառավարումը տրամաբանորեն հանգեցրեց ԽՍՀՄ–ում ամբողջատիրական հասարակարգի ամրապնդմանը: Խորհրդային Միությունում ստեղծված նոր հասարակարգն այլ կերպ անվանում են նաև ***«պետական սոցիալիզմ»:*** Նման հասարակությունում առաջնային էր ոչ թե անհատ մարդու կամ մարդկանց շահը, այլ պետության շահը: Իսկ պետական շահը և քաղաքականությունը որոշում էին մի խումբ մարդիկ՝ կուսակցական–պետական վերնախավը՝ կոմկուսի առաջնորդի գլխավորությամբ: Մարդու կողմից մարդու շահագործումը փոխարինվեց պետության կողմից մարդու շահագործմամբ, տնտեսության մեջ ազատ մրցակցությանը փոխարինեցին հարկադրանքը և բռնությունը:

Այսպիսով՝ Խորհրդային Միությունում հաստատվեց ոչ միայն տնտեսության, այլ նաև ամբողջ հասարակության պլանային զարգացման ձևը, որն ստացել է սոցիալիզմի ***«ստալինյան մոդել»*** անվանումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք, թե որոնք էին «Ռազմական կոմունիզմի» բնորոշ կողմերը: Ինչպիսի՞ն էր Խորհրդային Ռուսաստանի տնտեսական վիճակը քաղաքացիական պատերազմի ավարտին: Ինչո՞ւ էր անհրաժեշտ փոխել երկրի տնտեսական ու սոցիալական քաղաքականության կուրսը:

2. Վերհանե՛ք Նոր տնտեսական քաղաքականության էությունը: Ի՞նչ արդյունքներ այն ունեցավ: Պարզաբանե՛ք նէպի հակասությունները:

3. Ներկայացրե՛ք խորհրդային հասարակության արդյունաբերականացման գլխավոր նպատակը: Ինչո՞ւ 1928 թվականից հետո արագացվեց ԽՍՀՄ–ի տնտեսական զարգացումը:

4. Ի՞նչ է կոլեկտիվացումը: Ցո՛ւյց տվեք դրա արդյունքներն ու հետևանքները:

5. Ներկայացրե՛ք խորհրդային պետության տնտեսական ու սոցիալական զարգացման արդյունքները 1930–ական թվականների ավարտին:

6. Ընդհանուր գծերով բնութագրե՛ք պլանային տնտեսությունը: Ձեր կարծիքով՝ հնարավո՞ր էր արդյոք այլ մոդելով ԽՍՀՄ–ը դուրս բերել հետամնաց վիճակից և այն դարձնել արդյունաբերական գերտերություն:

ԳԼՈՒԽ 4. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ

§ 1. ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Փարիզի վեհաժողովի և Վերսալ–Վաշինգտոնյան համակարգի շրջանակներում էական փոփոխություններ գրանցվեցին նաև Մերձավոր և Միջին Արևելքում: Այստեղ ձևավորվեց աշխարհաքաղաքական նոր իրավիճակ: Նախկինում եղած մեկ խոշոր պետությանը՝ Օսմանյան կայսրությանը, փոխարինեցին մի քանի պետություններ:

Արաբական երկրները

Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև ***1916 թ. կնքված Սայքս–Պիկոյի գաղտնի համաձայնագրով*** Օսմանյան կայսրության կազմում գտնվող արաբական շրջանները պետք է բաժանվեին նրանց միջև: 1918 թ. հոկտեմբերին Մերձավոր Արևելքում անգլիական զորքերի հրամանատար ***գեներալ Ալլենբիի*** հրամանով Պաղեստինը, Սիրիան, Հորդանանը և Լիբանանը բաժանվեցին երեք ազդեցության գոտիների, որտեղ բարձրագույն իշխանությունը պատկանում էր անգլիական զինվորական հրամանատարությանը: 1919 թ. Փարիզի խորհրդաժողովում արաբական աշխարհի շահերը ներկայացնող ***Էմիր Ֆեյսալի***՝ թուրքերից ազատագրված շրջաններում միասնական պետություն ստեղծելու առաջարկը մերժվեց:

Անգլիան և Ֆրանսիան ձգտում էին պահպանելու իրենց ռազմական ներկայությունը Մերձավոր Արևելքում: Նույն թվականի մայիսին կայացան արաբական շրջանների գերագույն մարմնի՝ ***Սիրիական գլխավոր կոնգրեսի*** ընտրությունները: Կոնգրեսի ընդունած ծրագրում ընդգծվում էր արաբների բացասական դիրքորոշումը մանդատային համակարգի նկատմամբ: Կոնգրեսը դեմ արտահայտվեց նաև Պաղեստինում հրեաների բնակեցման գաղափարին:

Սակայն այդ պահին արաբական խնդիրը լուծվում էր Եվրոպայում: Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան եկան համաձայնության: 1920 թ. սկզբին ***Սիրիայի*** արևմուտքը ռազմակալվեց ֆրանսիական ուժերի կողմից, իսկ անգլիացիները զբաղեցրին նավթաբեր ***Մոսուլի*** շրջանը (հետագայի Իրաքում): Ի պատասխան դրան՝ 1920 թ. մարտի 8–ին Ազգային կոնգրեսը հռչակեց իր որոշումը Սիրիայի միասնական անկախ պետություն ստեղծելու մասին: Ֆեյսալը հայտարարվեց անկախ Սիրիայի «սահմանադրական թագավոր»:

Այդ իրադարձությունից հետո Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան որոշեցին արաբական շրջանները բաժանել երկու մանդատային գոտիների: ***Սիրիայի և Լիբանանի մանդատը*** ստացավ Ֆրանսիան, իսկ ***Պաղեստինի և Միջագետքի մանդատը***՝ Մեծ Բրիտանիան: Ֆրանսիացիները գրավեցին Դամասկոսը, Հալեպը, իսկ Ֆեյսալը ստիպված էր հեռանալու երկրից: Այսպիսով՝ արաբական միասնական պետություն ստեղծելու արաբների փորձն ավարտվեց անհաջողությամբ:

Մանդատի վերաբերյալ Ազգերի լիգայի որոշման համաձայն՝ Ֆրանսիան իրավունք ստացավ Սիրիայում և Լիբանանում պահելու զինուժ, ոստիկանություն և օգտագործելու բոլոր հաղորդակցության ուղիներն ու կապի միջոցները: Ֆրանսիան էր իրականացնելու մանդատային տարածքի արտաքին քաղաքականությունը: Պաշտոնական լեզուներ հայտարարվեցին ֆրանսերենը և արաբերենը: Մանդատով սահմանված գործառույթներն իրականացնում էր գլխավոր կոմիսարը:

Ֆրանսիան վարում էր մանդատային տարածքի վարչական տրոհման քաղաքականություն: Արդեն 1920 թ. առանձին պետություններ հայտարարվեցին Լիբանանը, Դամասկոսը և Հալեպը: Հաջորդ տարի ինքնավարություն տրվեց Ալեքսանդրետի շրջանին: Սակայն *1924 թ.* Դամասկոսի ու Հալեպի միավորմամբ ստեղծվեց ***Սիրիա պետությունը:***

Երկրորդ աշխարհամարտի սկզբին Ֆրանսիայի պարտության հետևանքով նրա մանդատային տարածքները հայտնվեցին ծայրաստիճան ծանր տնտեսական իրավիճակում:

Թուրքիա

Աշխարհամարտում Օսմանյան կայսրությունը ծանր պարտություն կրեց: Անտանտի զորքերը Մուդրոսի զինադադարի կնքումից հետո մտան Դարդանելի և Բոսֆորի նեղուցներ, այնտեղից էլ՝ Սև ծով: Իտալական զորքերը զբաղեցրին Փոքր Ասիայի արևմտյան ծովափը, իսկ հույները՝ Իզմիրի շրջանը:

Տարածքային կորուստները և սուլթանի անզորությունը՝ կանգնեցնելու տերության փլուզումը, խթանեցին ազգայնական ուժերի միավորմանը գեներալ ***Մուստաֆա Քեմալի*** գլխավորությամբ: Ամենուրեք ստեղծված «իրավունքների պաշտպանության» կազմակերպությունների՝ ***1919 թ. Էրզրումի և Սվազի*** կոնգրեսներում ընդունված հռչակագրերում ձևակերպված էր թուրք ազգի անկախության գաղափարը: Սվազի կոմիտեն վերածվեց փաստացի կառավարության:

Անտանտի պետությունների ճնշման տակ սուլթանը փորձեց ընդդիմանալ Կոնգրեսի գործունեությանը, սակայն հաջողություն չունեցավ: Ավելին՝ նա ստիպված էր 1920 թ. Ստամբուլում հրավիրելու Մեջլիս (Ազգային ժողով), որն ընդունեց Թուրքիայի անկախության հռչակագիր: Երբ դաշնակիցները գրավեցին Ստամբուլը և ցրեցին Մեջլիսը, այն վերաձևավորվեց արդեն Անկարայում, որը դուրս էր Անտանտի ուժերի վերահսկողությունից:

Քեմալականները, խուսանավելով Անտանտի և Խորհրդային Ռուսաստանի միջև, 1920–1922 թթ. կարողացան նախ հաջողության հասնել Հայաստանի, այնուհետև Հունաստանի դեմ պատերազմներում: Դրանց արդյունքում Թուրքիան պահպանեց Փոքր Ասիան, Արևմտյան Հայաստանը և Արևելյան Թրակիան: 1923 թ. Լոզանի խորհրդաժողովում այս տարածքները տրվեցին Թուրքիային:

Այնուհետև Քեմալը ձեռնամուխ եղավ պետության վերակառուցմանը: ***1923 թ. Թուրքիան հռչակվեց հանրապետություն***՝ Անկարա մայրաքաղաքով: Քեմալը վարում էր երկրի արդիականացման քաղաքականություն արևմտականացման ուղիով: Նրա նպատակն էր ստեղծել աշխարհիկ պետություն:

Ընդունված սահմանադրությունը երաշխավորում էր քաղաքացիների հիմնարար իրավունքները: Փակվեցին հոգևոր դպրոցները, լուրջ քայլեր կատարվեցին բարձրագույն կրթության կազմակերպման ուղղությամբ: Փոխվեց նաև այբուբենը: Արաբական այբուբենի փոխարեն կիրառության մեջ դրվեց լատինականը: Կարևոր ձեռքբերումներից էր խոշոր և թեթև արդյունաբերության կազմակերպումը:

Քեմալի կառավարման տարիներին աստիճանաբար ձևավորվեց նրա անձի պաշտամունքը: Քեմալը ստացավ Աթաթյուրք պատվատիտղոսը, որ նշանակում է «թյուրքերի հայր»:

Իրան

Առաջին աշխարհամարտից հետո Իրանում ուժեղ էին Մեծ Բրիտանիայի դիրքերը: 1919 թ. կնքվեց անգլո–իրանական համաձայնագիր, որով ճանաչվում էին Իրանի

անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Համաձայնագիրը նախատեսում էր նաև Մեծ Բրիտանիայի համակողմանի աջակցությունը երկրի տնտեսության վերականգնման և բանակի վերակազմակերպման ուղղությամբ: Անգլիացիները պարտավորվում էին կատարելագործել Իրանի ֆինանսատնտեսական կառավարման համակարգը: Դրանով Իրանը հայտնվում էր Մեծ Բրիտանիայի քողարկված հսկողության ներքո:

Անգլո–իրանական հարաբերությունների բարելավումը առաջ բերեց Խորհրդային Ռուսաստանի դժգոհությունը: Վերջինիս դրդմամբ Իրանի ազերի բնակչության շրջանում 1920 թ. *շեյխ Մոհամմադ Խիաբանու* գլխավորությամբ սկսվեց զինված ապստամբություն: Ապստամբները Իրանական Ադրբեջանը հայտարարեցին Իրանից անկախ տարածք՝ պահանջելով չեղյալ ճանաչել անգլո–իրանական համաձայնագիրը և ստեղծել «անկախ ժողովրդավարական ադրբեջանական պետություն»: Ապստամբական շարժման կենտրոնը Թավրիզ քաղաքն էր: Թուրքերենը հայտարարվեց նորաստեղծ պետության՝ *Ազադիստանի* պետական լեզու: Սակայն մի քանի ամիս անց ապստամբությունը ճնշվեց, իսկ շեյխը սպանվեց:

Իրանի նկատմամբ Ռուսաստանի նկրտումները դրանով չսահմանափակվեցին: Իր առջև նպատակ դնելով Իրանի խորհրդայնացումը՝ 1920 թ. խորհրդային զինված ուժերը սկսեցին ուղղակի ռազմական գործողություններ Կասպից ծովի հարավային մերձափնյա գոտում: Այստեղ Ռուսաստանը ստեղծեց Գիլյանի հանրապետությունը, ինչպես նաև Իրանի կոմունիստական կուսակցությունը: Իրանի կոմկուսի քարտուղար ընտրվեց ծագումով հայ Ավետիս Սուլթանզադեն: Կոմունիստներն սկսեցին իրենց կողմից վերահսկվող տարածքների «խորհրդայնացումը», ինչը խիստ դժգոհություն առաջ բերեց բնակչության շարքերում: Սակայն Իրանի խորհրդայնացման ծրագիրը ի վերջո ձախողվեց:

1921 թ. փետրվարին ստորագրվեց *խորհրդա–իրանական պայմանագիր,* որով Ռուսաստանը հրաժարվում էր ցարական Ռուսաստանի և Իրանի միջև կնքված բոլոր պայմանագրերից: Իրանին էին վերադարձվում նրանից զավթված տարածքները, Իրանը իրավունք ուներ Կասպից ծովում ազատ առևտուր անելու և պահելու նավատորմ:

Խորհրդային Ռուսաստանի նկրտումներին վերջ դնելու նպատակով 1921 թ. փետրվարին Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ և իրանցի փոխգնդապետ *Ռեզա խանի* գլխավորությամբ տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում: Նորաստեղծ կառավարությունում Ռեզան զբաղեցրեց ռազմական նախարարի պաշտոնը: Կարճ ժամանակ անց նա, իր ձեռքում կենտրոնացնելով մեծ իշխանություն, ճնշեց երկրի տարբեր շրջաններում բռնկված անջատողական շարժումները: Ռեզա խանը ձեռք բերեց ահռելի հեղինակություն: *1925 թ.* նա Մեջլիսի որոշմամբ հռչակվեց Իրանի շահ՝ հիմնելով *Փահլավիների արքայատոհմը:*

Շահը ձեռնարկեց արմատական բարեփոխումներ, որոնք էապես ամրապնդեցին երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը: Ստեղծվեցին եվրոպական տիպի քրեական և քաղաքացիական օրենսգրքեր: 1928 թ. կազմակերպվեց Իրանի ազգային բանկը: Բուռն զարգացում ապրեց ճանապարհաշինարարությունը: Բացվեց Կասպից ծովը Պարսից ծոցի հետ կապող երկաթուղային ճանապարհը:

Կարևոր նշանակություն էր տրվում լուսավորությանը: Շահը ձգտում էր երկրում ներդնելու կրթական միասնական համակարգ: Ընդլայնվեց դպրոցական ցանցը:

Հատուկ ուշադրություն էր դարձվում հասարակության արդիականացմանը: Վերացվեցին ազնվականների ավանդական տիտղոսները (խան, սարդար, բեկ), փոխարենը ներդրվեցին սովորական ազգանուններ: Հրատարակվեց նույնիսկ անձնանունների օրինակելի բառարան: Պայքար սկսվեց հագուստի եվրոպականացման համար:

Ավանդական գլխարկը փոխարինվեց եվրոպականով, իսկ կանանց արգելվեց չադրա կրելը: Իրանի բոլոր բնակիչները «պետք է կրեն միասնական զգեստներ և խոսեն մեկ լեզվով». պաշտոնական քարոզչությունը զարգացնում էր «միասնական իրանական ազգի» գաղափարախոսությունը: Շահը նույնիսկ ցանկանում էր արաբական այբուբենը փոխարինել լատինականով, սակայն հանդիպեց հզոր դիմադրության և հրաժարվեց այդ գաղափարից:

Արտաքին ասպարեզում Իրանը վարում էր միջազգային կառույցներում ներգրավվելու քաղաքականություն: Շահը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց բազմաթիվ պետությունների հետ, Իրանը դարձավ Ազգերի լիգայի անդամ:

1941–1942 թթ. Իրանի տարածքը ռազմակալեցին խորհրդային, անգլիական և ամերիկյան զորքերը: Օտարերկրյա ուժերի մուտքը Իրան և երկրում սկսված քաղաքական խմորումները Ռեզա շահի հրաժարականի պատճառ դարձան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք Սայքս–Պիկոյի պայմանագիրը: Ինչո՞ւ արաբներին չհաջողվեց իրականացնել նախկին Օսմանյան կայսրությունից ազատագրված արաբական տարածքներում միասնական պետություն հիմնելու ծրագիրը: Ո՞ւմ տրվեցին այդ տարածքների մանդատները: Ներկայացրե՛ք ֆրանսիական մանդատային տարածքի վիճակը միջպատերազմյան շրջանում:

2. Վերհիշե՛ք, թե ինչ էր նախատեսում Սևրի հաշտության պայմանագիրը: Բնութագրե՛ք քեմալական շարժումը: Լոզանի պայմանագիրն ի՞նչ դեր խաղաց՝ ա) Թուրքիայի, բ) Հայկական հարցի հետագա ճակատագրի գործում: Թուրքիան ե՞րբ հռչակվեց հանրապետություն: Ո՞վ ընտրվեց երկրի նախագահ: Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան Թուրքիայի ներքին կյանքում:

3. Ինչպե՞ս ամրապնդվեցին անգլիացիների դիրքերը Իրանում: Ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստանը Իրանի հյուսիսում հրահրեց ազատագրական շարժումներ, ինչո՞վ ավարտվեցին դրանք: Փահլավիների արքայատունը ե՞րբ հաստատվեց Իրանում: Ներկայացրե՛ք Ռեզա շահի վարած ներքին քաղաքականությունը: Արդիականացման ուղղությամբ ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին:

§ 2. ՃԱՊՈՆԻԱՆ, ՉԻՆԱՍՏԱՆԸ, ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Արդյունաբերական Ճապոնիան

Ճապոնիան XX դ. 20–30–ական թթ. շարունակում էր ընթանալ արդյունաբերական հասարակության զարգացման ուղիով: Ազգային–պետական նպատակներ հռչակվեցին միապետության հզորացումն ու անցյալի փառքի վերականգնումը: Այսինքն՝ արդիականացումը համադրվում էր ազգային, քաղաքական և հոգևոր–կրոնական արժեքների հետ: Արդիականացման գերնպատակներն էին ազգային միասնության ապահովումը, ավանդական արժեհամակարգի պահպանումն ու զարգացումը:

Առաջին աշխարհամարտի տարիներին Ճապոնիան կարողացել էր ամրապնդել իր դիրքերը Հեռավոր Արևելքում և Հարավարևելյան Ասիայում: Վերսալյան հաշտությամբ նա ստացավ նախկին գերմանական տիրույթները՝ չինական Շանդուն նահանգը, Կարոլինյան, Մարշալյան, Մարիանյան կղզիները: Սակայն Վաշինգտոնի վեհաժողովում (1921–1922 թթ.) նրա ձեռքբերումները ԱՄՆ–ի և եվրոպական դաշնակիցների ջանքերով գրեթե չեզոքացվեցին: Փոխարենը՝ վերջիններս ամրապնդեցին իրենց քաղաքական ու տնտեսական դիրքերն այս տարածաշրջանում: Ճապոնիան ստիպված էր համաձայնվել նաև իր ռազմածովային ուժերի սահմանափակմանը՝ ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի համեմատությամբ:

Այնուհանդերձ, Ճապոնիան կարողացավ ամրանալ չինական և հեռավորարևելյան այլ երկրների շուկաներում: Դա նպաստեց երկրի արդյունաբերության ու առևտրի զարգացմանը՝ մեծ շահույթներ ապահովելով ճապոնական մենատիրություններին:

Արդիականացումն իրականացվում էր «Ճապոնական ոգի, եվրոպական գիտելիքներ» նշանաբանով: Արդյունաբերության մեջ և տնտեսության այլ ճյուղերում լայնորեն ներդրվում էին ժամանակակից գիտության ու տեխնիկայի նվաճումները: Անհրաժեշտ գիտական ու տեխնիկական կադրերի պակասը լրացնելու նպատակով երկրում ստեղծվեց արևմտյան կրթական համակարգ: Արդյունքում՝ Ճապոնիայի տնտեսությունը հետպատերազմյան առաջին տասնամյակում մեծ վերելք ապրեց: Երկրի համախառն ներքին արդյունքն աճեց մոտ երկու անգամ:

Ճապոնիայի քաղաքական դիրքերի թուլացումը նրա համար կենսական տարածաշրջանում նպաստեց երկրի ներսում քաղաքական կուսակցությունների ու զինվորական բարձր շրջանակների մերձեցմանը: Որոշվեց ռազմական հզորության հասնել երկրի արդիականացման նոր փուլի միջոցով: Պահպանվեց սահմանադրական–միապետական կարգը, սակայն հաստատվեց կառավարության ձևավորման միակուսակցական կազմով համակարգը: Արտաքին քաղաքականության հիմքում դրվեց ***վարչապետ Տանակայի*** կողմից ***1927 թ.*** մշակված ծավալապաշտական ծրագիրը: Նվաճման էին ենթակա Չինաստանը, Հնդկաստանը, Հարավարևելյան Ասիան, ԽՍՀՄ–ի արևելյան շրջանները:

Համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամը լուրջ հետևանքներ ունեցավ նաև Ճապոնիայի համար: Հատկապես տուժեց մետաքսի արտադրությունը, որը կազմում էր երկրի արտահանության մոտ 30 տոկոսը: Գործազուրկների թիվը հասավ 3 միլիոնի: Ուժեղացավ քաղաքական և սոցիալական պայքարը երկրի ներսում, իսկ նվաճված տարածքներում՝ Կորեա, Թայվան, ծավալվեց ազատագրական շարժում:

Այս շրջանում քաղաքական ասպարեզ իջավ, այսպես կոչված, երիտասարդ սպայությունը՝ միջին ու ստորին սպայակազմը: Նրանք դաշինքի գնացին ֆինանսական նոր վերնախավի հետ և երկրի կառավարման ղեկը խլեցին հին քաղաքական ու ֆինանսական ուժերից: Այս նոր քաղաքական–ֆինանսական միությունը երկիրը տարավ ռազմականացման ու արտաքին նվաճումների ուղիով: Ճապոնական զորքերը

1931 թ. սկսեցին Չինաստանի հյուսիս–արևելքի՝ ***Մանջուրիայի*** նվաճումը: Երկիրը 1933 թ. դուրս եկավ Ազգերի լիգայից:

1937 թ. վարչապետ դարձած իշխան ***Կոնոեն*** սկսեց իրականացնել Ճապոնիայի ռազմական արդյունաբերության զարգացման հնգամյա պլանը: Երկրում հաստատվեց ռազմաֆաշիստական բռնապետություն: Ճապոնիան միացավ Բեռլին–Հռոմ ռազմատենչ միությանը: Շարունակվեց արտաքին նվաճողական կուրսը, սկսվեց Ճապոնա–չինական երկարատև պատերազմը:

Չինաստանի արդիականացման սկիզբը

Միջպատերազմյան ժամանակաշրջանում Չինաստանն ընթացավ բարեփոխումների, հեղափոխության և քաղաքացիական պատերազմի միջով: Առաջին աշխարհամարտից հետո երկրի կենտրոնական իշխանությունը թուլացել էր տարբեր ռազմաքաղաքական խմբավորումների միջև ընթացող պայքարի հետևանքով:

Դրությունն ավելի էր բարդացնում օտարերկրյա տերությունների՝ հատկապես ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի ու Ճապոնիայի միջամտությունը: Վաշինգտոնյան խորհրդաժողովը թեև ճանաչեց երկրի ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը, սակայն որոշվեց Չինաստանում կիրառել «հավասար հնարավորությունների» սկզբունքը: Տերությունները ազատ տնտեսական գործունեության իրավունք ստացան Չինաստանի տարածքում. ոչ մեկին առավելություն չէր տրվում: Կտրուկ մեծացավ օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը երկրի տնտեսության մեջ:

Ներքաղաքական պայքարի արդյունքում Չինաստանում ձևավորվել էր երկու կառավարություն՝ մեկը հյուսիսում՝ ***Պեկին*** մայրաքաղաքով, մյուսը՝ հարավում՝ ***Գուանչժոու*** կենտրոնով: Առաջինը արտաքին ուժերի վերահսկողության տակ էր, իսկ երկրորդը 1923 թ. գլխավորեց ականավոր հեղափոխական ***Սուն Յաթսենը:*** Նա վարում էր երկրի միասնականությունը վերականգնելու և ժողովրդավարական հասարակություն ստեղծելու քաղաքականություն: Դա հենվում էր երեք գլխավոր սկզբունքների վրա՝ ազգայնականություն, ժողովրդավարություն, հասարակության բարօրություն:

Չինաստանում 1925–1927 թթ. տեղի ունեցավ մեծ հեղափոխություն: Այն իր բնույթով ժողովրդավարական էր և ազգային–ազատագրական: Հեղափոխությունը գլխավորում էր ***Գոմինդան*** կուսակցությունը: Գեներալ ***Չան Կայշին,*** որ Սուն Յաթսենի մահից հետո դարձել էր Գոմինդանի առաջնորդը, ղեկավարեց միավորված Չինաստանը: Նա սկսեց արևմտաեվրոպական ուղիով երկրի արդիականացման գործընթացը:

Տնտեսության մեջ, հատկապես արդյունաբերության ոլորտում, սկսեցին զարգանալ պետական և մասնավոր ձեռնարկությունները: Կարգի բերվեց ու ազգայնացվեց բանկային համակարգը: Ուշագրավ է, որ Մեծ ճգնաժամի տարիներին Չինաստանի արդյունաբերական արտադրանքը ոչ միայն չնվազեց, այլև տարեկան վեց տոկոս աճ ունեցավ: Հաջողվեց սահմանափակել օտարերկրյա կապիտալի գործունեությունը, որ նշանակում էր Չինաստանում տերությունների «բաց դռների» քաղաքականության ավարտ:

Սակայն երկրի ապագայի հարցում այլ պատկերացումներ ունեին չին կոմունիստները, որոնց առաջնորդ դարձավ ***Մաո Ցզեդունը:*** Չինաստանում սկսվեց ***քաղաքացիական պատերազմ*** գոմինդանականների ու կոմունիստների միջև ***(1928–1937 թթ.):*** Այն ավարտվեց Չան Կայշիի կողմնակիցների հաղթանակով:

Այս իրավիճակից օգտվեց Ճապոնիան՝ 1937 թ. պատերազմ սկսելով Չինաստանի դեմ: Արտաքին վտանգի դեմ միավորվեցին երեկվա հակառակորդները՝ Չան Կայ-

շին ու Մաո Ցզեդունը: Պայքարը ճապոնական զավթիչների դեմ շարունակվեց մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտը:

Հնդկաստանը արդիականացման շեմին

Առաջին աշխարհամարտում Անտանտի տարած հաղթանակի մեջ Հնդկաստանը որոշակի ներդրում ունեցավ: Հնդկական ցորենը և բամբակը էապես օգնեցին դաշնակցային զորքերի պարենի ու հագուստի մատակարարման ապահովմանը, իսկ մոտ մեկ միլիոն հնդիկ զինվորներ մասնակցեցին պատերազմին: Մեծ Բրիտանիան խոստացել էր դրա դիմաց Հնդկաստանին տալ ինքնակառավարման՝ *դոմինիոնի* կարգավիճակ, սակայն երկիրը շարունակեց մնալ որպես անգլիական գաղութ:

Երկրի արդիականացումը դանդաղ էր ընթանում անգլիական գերիշխանության պատճառով: Այնուհանդերձ, երկրի տնտեսությունը այլ գաղութների համեմատ զարգացած էր, հատկապես՝ տեքստիլ արդյունաբերությունը: Գնալով ուժ էր հավաքում ազգային բուրժուազիան, որը սկսեց մրցակցել անգլիական կապիտալի հետ: Հնդկաստանի տնտեսական վիճակը վատացավ Մեծ ճգնաժամի տարիներին: Ահռելի չափեր ընդունեց գործազրկությունը, մանր ու միջին շատ ձեռնարկություններ սնանկացան:

Հետպատերազմյան շրջանում շարունակվեց հնդիկների ազատագրական պայքարը գաղութային տիրապետության դեմ: Այդ պայքարը առաջվա պես գլխավորում էր *Հնդկական ազգային կոնգրես* կուսակցությունը: Մոտակա նպատակը դոմինիոնի կարգավիճակ ձեռք բերելն էր:

Հակագաղութային շարժումը ղեկավարում էր *Մահաթմա Գանդին,* որն առանձնակի հեղինակություն էր վայելում: Նա մշակեց պայքարի իր ուսմունքը, որը 1928 թվականից դարձավ Հնդկական ազգային կոնգրեսի գաղափարախոսությունը: Դրա հիմքում ընկած էր ոչ բռնի դիմադրության սկզբունքը: Այն մերժում էր զինված պայքարի ձևերը և կողմ էր միայն խաղաղ մեթոդներին՝ ցույցեր, հացադուլներ, գործադուլներ և քաղաքացիական անհնազանդություն: Գանդիզմի համաձայն՝ երկրում պետք է հաստատվեր արդարության սկզբունքի վրա կառուցված համընդհանուր բարօրության հասարակություն: Նա այնքան էլ կողմ չէր Հնդկաստանի արդիականացմանը եվրոպական ոգով:

Հակագաղութային պայքարի մեջ ներգրավվեցին նաև մուսուլման հնդիկները, որոնց գլխավորում էր *Մուսուլմանական լիգա* կազմակերպությունը: Նրանք և ձախ ուժերը ավելի արմատական դիրքորոշում ունեին: Անգլիացիներին հաջողվեց խանգարել այս ուժերի միավորմանը և նույնիսկ թշնամանք հրահրել նրանց միջև, ինչը բացասաբար անդրադարձավ շարժման ելքի վրա:

Քաղաքացիական անհնազանդության առաջին ալիքը բարձրացավ *1920 թ.,* երբ զանգվածային բոյկոտի ենթարկվեց ամենայն անգլիականը՝ ապրանքներ, ուսումնական հաստատություններ, վարչակազմը և այլն: Պայքարը որոշ վայրերում ընդունեց նաև ոչ խաղաղ ձևեր: Աստիճանաբար Ազգային կոնգրեսում ձևավորվեց ձախ ազգայնական ուղղությունը՝ *Ջավահառլալ Ներուի* առաջնորդությամբ: Նա կողմնակից էր նաև պայքարի բռնի մեթոդներին:

1931 թ. սկսվեց քաղաքացիական անհնազանդության ևս մեկ հուժկու շարժում, որի համար առիթ ծառայեց Անգլիայի կողմից Հնդկաստանին դոմինիոնի կարգավիճակ տալու պահանջի մերժումը: Անհնազանդության շարժումը շարունակվեց չորս տարի, բայց Գանդին ու նրա չափավոր կողմնակիցները չհասան գլխավոր նպատակին:

1936 թ. Հնդկական ազգային կոնգրեսի նախագահ ընտրվեց Ներուն: Կուսակցության ջանքերով ձևավորվեց ազգային միասնական ճակատ, որը շարունակեց երկրի ազատագրության համար հակաբրիտանական պայքարը նաև Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Դարավոր պայքարից հետո մոտեցել էր Հնդկաստանի անկախության վերականգնման պահը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք, թե Ճապոնիայում երբ իրականացվեց արդիականացումը: Ի՞նչ առանձնահատկություններ ուներ Ճապոնական հասարակության արդիականացումը: Ի՞նչ արդյունքներ արձանագրեց երկիրը՝ Առաջին աշխարհամարտի հետ կապված: Ներկայացրե՛ք կառավարող քաղաքական ուժերի փոփոխությունը 1930–ական թվականներին: Ինչո՞ւ Ճապոնիան ընթացավ ռազմականացման և պատերազմի ճանապարհով:

2. Ի՞նչ որոշում կայացրեց Վաշինգտոնի խորհրդաժողովը Չինաստանի վերաբերյալ: Բացատրե՛ք «հավասար հնարավորությունների» սկզբունքը: Ներկայացրե՛ք երկրի վիճակը հետպատերազմյան առաջին տարիներին: Ի՞նչ արդյունքներ ունեցավ ազգային մեծ հեղափոխությունը Չինաստանում: Չան Կայշիի կառավարությունը երկրի արդիականացման նպատակով ի՞նչ քայլեր իրականացրեց: Ի՞նչ հետևանք ունեցավ երկարատև քաղաքացիական պատերազմը:

3. Ինչպիսի՞ն էր Հնդկաստանի վիճակը Առաջին աշխարհամարտի ավարտից հետո: Ո՞վ և ո՞ր կուսակցությունն էր գլխավորում հնդիկների ազգային–ազատագրական պայքարը 1920–1930–ական թվականներին: Բացատրե՛ք Գանդիի ուսմունքի էությունը: Ո՞վ էր Ներուն: Ներկայացրե՛ք հնդիկների ազատագրական պայքարի ընթացքը և արդյունքները միջպատերազմյան ժամանակաշրջանում:

ԳԼՈՒԽ 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Միջազգային հարաբերությունների ընդհանուր միտումները

Աշխարհի զարգացած տերությունների կառավարող շրջանները 1930–ական թթ. հակվեցին այն միտմանը, որ արտաքին քաղաքական խնդիրները կարելի է լուծել միայն ուժի դիրքերից: Դա ստիպեց նրանց մեծացնել ռազմական ներուժը և նախապատրաստվել աշխարհում իրենց դիրքերի ամրապնդմանն ուղղված պայքարի նոր փուլին: Ազգերի լիգան բարդ միջազգային խնդիրների լուծման փորձ չուներ: Դա մեծացնում էր անվստահությունը Լիգայի հանդեպ: Էական դեր էր խաղում նաև սոցիալական լարվածությունը, որ բնորոշ էր Եվրոպայի և Լատինական Ամերիկայի երկրներին:

Վերսալ–վաշինգտոնյան համակարգը արդեն չէր բավարարում ոչ միայն պարտված պետություններին, այլև հաղթող երկրներից Իտալիային, Ճապոնիային և նույնիսկ Մեծ Բրիտանիային: Վերջինիս անհանգստացնում էր աշխարհում իր ֆինանսական դիրքերի անկումը հօգուտ ԱՄՆ–ի: Վերսալ–վաշինգտոնյան համակարգից 1930–ական թթ. սկզբներին շարունակում էին «կառչել» միայն Ֆրանսիան, որը կրկին զգում էր գերմանական վտանգը, և ***Փոքր Անտանտի*** (Հարավսլավիա, Ռումինիա, Չեխոսլովակիա) երկրներն ու Լեհաստանը, որոնք տարածքային ձեռքբերումներ էին ստացել դրա շնորհիվ: Միջազգային հարաբերություններում առկա էին հետևյալ երեք միտումները.

• 1919–1922 թթ. ձևավորված աշխարհակարգի վերանայում, որի օգտին էին հանդես գալիս Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան,

• Վերսալ–վաշինգտոնյան համակարգը պահպանելու ձգտում, որի հետևորդներն էին Ֆրանսիան և Արևելյան Եվրոպայի նրա դաշնակիցները,

• Առաջին և երկրորդ խմբի միջև ճկուն կերպով մանևրելու ձգտումը, որի հետևորդներն էին Մեծ Բրիտանիան, ԽՍՀՄ–ը, ինչպես նաև եվրոպական, ասիական և լատինաամերիկյան երկրների մեծ մասը: ԱՄՆ–ը գերադասում էր մեկուսացման քաղաքականությունը:

Խաղաղասիրական ձեռնարկումների ձախողումը

1920–ական թթ. վերջերին աշխարհում դեռևս զորեղ էին խաղաղասիրական տրամադրությունները: 1928թ. Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Բրիանի և ԱՄՆ–ի պետքարտուղար Քելլոգի նախաձեռնությամբ սկսված բանակցությունների հետևանքով մի շարք երկրներ ստորագրեցին պատերազմի՝ որպես ազգային և արտաքին քաղաքականության գործիքի, արգելման մասին Փարիզի պայմանագիրը, որ պատմության մեջ մտավ «**Բրիան–Քելլոգի պակտ»** անվան ներքո: Պակտը հռչակում էր նրա մասնակիցների հրաժարումը պատերազմից՝ որպես միջազգային վեճերի կարգավորման միջոց և ազգային քաղաքականության գործիք: Պետությունների միջև ցանկացած վեճերն ու հակամարտությունները ենթակա էին լուծման բացառապես խաղաղ միջոցներով: Պակտը ստորագրեցին տասնյակ երկրներ: Պակտին ավելի ուշ միացավ նաև ԽՍՀՄ–ը:

Ակնհայտ էր, որ եվրոպական երկրների մեծ մասի հասարակայնության մեջ ուժեղ էին հակապատերազմական տրամադրությունները: Ազգերի լիգայի նախաձեռ-

նությամբ 1932–1934թթ. Ժնևում անցկացվեց սպառազինությունների կրճատման ու զինաթափման հարցերին նվիրված միջազգային կոնֆերանս: Սակայն այդ խնդիրների վերաբերյալ ոչ մի առաջարկ չընդունվեց: Ավելին՝ զինաթափման կոնֆերանսից այն վերածվեց սպառազինման կոնֆերանսի:

Կոնֆերանսում Գերմանիան պահանջեց կրճատել մյուս պետությունների սպառազինությունը կամ հանել այն սահմանափակումները, որ դրվել էին Վերսալյան պայմանագրի կողմից գերմանական սպառազինությունների վրա: Ըստ էության, Գերմանիան պահանջում էր վերացնել Վերսալյան պայմանագրի ռազմական հոդվածները և իրեն անսահմանափակ սպառազինման իրավունք տրամադրել: Դրան դեմ էր միայն Ֆրանսիան: Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Գերմանիայի և ԱՄՆ–ի համատեղ ջանքերով Ֆրանսիայի դիմադրությունը հաղթահարվեց: Ստանալով սպառազինվելու թույլտվություն՝ Գերմանիան հեռացավ զինաթափման կոնֆերանսից և 1933թ. հայտարարեց Ազգերի լիգայից իր դուրս գալու մասին:

Ռեպարացիացիաների խնդրի «լուծումը»

Դեռ 1921թ. Լոնդոնի կոնֆերանսում որոշվեց, որ Գերմանիան հաղթողներին պետք է վճարի **ռեպարացիաներ** (պատերազմական վնասների վերականգնում կամ փոխհատուցման)՝ 132 միլիարդ մարկ ոսկով: Այս գումարի մեծագույն մասը պետք է տրվեր Ֆրանսիային: Գերմանիան նախնական վճարումներ կատարեց: Սակայն Անգլիայի աջակցությունը զգալով՝ գերմանական կողմն ամեն կերպ ձգձգում էր ռեպարացիաների վճարումը: Ռեպարացիաների հարցում գերմանական դիմադրությունը կոտրելու համար ֆրանս–բելգիական զորքերը 1923թ. օկուպացրին Գերմանիային պատկանող Ռուրի արդյունաբերական շրջանը: Գերմանիայում տնտեսական քաոս առաջացավ: Ֆրանսիայի գործողությունների կապակցությամբ իրենց դժգոհությունը հայտնեցին նաև Անգլիան ու ԱՄՆ–ը: Արդյունքում Ֆրանսիան համաձայնեց գերմանական խնդրի քննարկման նպատակով նոր կոնֆերանս գումարելու առաջարկին: 1924թ. ամռանը Լոնդոնում գումարված կոնֆերանսում ընդունվեցին կարևորագույն որոշումներ.

• Ֆրանս–բելգիական զորքերը պետք է դուրս բերվեին Ռուրից:

• Գերմանիայի ռեպարացիոն մուծումների հետ կապված՝ ընդունվում էր ամերիկյան բանկիր Դաուեսի պլանը: Այդ պլանով սահմանվում էր Գերմանիայի տարեկան մուծումների առավելագույն չափը՝ 2,5 միլիարդ մարկ: Նախատեսվում էր նաև գերմանական տնտեսության վերականգնում՝ երկրում ծավալված քաղաքական անկայունությանն ու հեղափոխական շարժումներին վերջ տալու նպատակով: Մասնավորապես տնտեսության վերականգնման համար գերմանական կառավարությանը տրվում էր միջազգային փոխառություն: Փաստորեն էականորեն պետք է կրճատվեին Գերմանիայի տարեկան մուծումները: Այսպիսով՝ Ֆրանսիան իր համար սկզբունքային հարցում պարտություն էր կրում:

1929թ. Դաուեսի պլանը փոխարինվեց Յանգի պլանով, որը մշակել էր ամերիկյան բանկիր Յանգի գլխավորած փորձագետների կոմիտեն: Յանգի պլանով Գերմանիայի ռեպարացիոն մուծումները նվազեցվում էին 20 տոկոսի չափով: Էականորեն նվազում էին և ամենամյա մուծումները: Վերացվում էին ռեպարացիոն հանձնաժողովն ու օտարերկրյա վերահսկողությունը գերմանական տնտեսության նկատմամբ: Մինչև 1930թ. կեսերը դաշնակից զորքերը պետք է դուրս բերվեին Հռենոսի գոտուց:

1924թ. սկսած՝ մի քանի տարի Գերմանիան կանոնավոր վճարում էր ռեպարացիաները ԱՄՆ–ի օգնությամբ: Գումարների գերակշիռ մասը Գերմանիան պարտք էր վերցնում ԱՄՆ–ից: Իրենց հերթին դաշնակից երկրները (Անգլիան, Ֆրանսիան, Իտա-

լիան և այլն) պատերազմի ընթացքում պարտքեր էին կուտակել ԱՄՆ–ի հանդեպ, և այժմ այդ գումարներն ամերիկացիներին վերադարձնելու ժամանակն էր: Գերմանիան էլ իր հերթին պարտավոր էր ռեպարացիաներ վճարել դաշնակիցներին: ԱՄՆ–ը պարտքով գումարներ էր տրամադրում Գերմանիային, Գերմանիան հնարավորություն էր ստանում ռեպարացիոն գումարներ վճարելու դաշնակիցներին, իսկ վերջիններս, իրենց հերթին, հնարավորություն էին ստանում վճարելու ԱՄՆ–ին պատերազմի ընթացում կուտակված պարտքերի մի մասը: Սա մի համակարգ էր, որից բոլորը գոհ էին: Եվ իրոք,պարտքերը վճարելու այլ ճանապարհ գոյություն չուներ: Իսկ այս մոտեցման ապագան կախված էր ԱՄՆ–ի՝ Գերմանիային մշտապես պարտքեր ու վարկեր տրամադրելու պատրաստակամությունից: Այս պայմանի բացակայության դեպքում ողջ համակարգը կփլուզվեր: Առաջին հայացքից ԱՄՆ–ն պատճառ չուներ այդ համակարգի խրախուսման համար: Վարկերի ու պարտքերի տրամադրման այդ շրջապտույտը կանխիկ գումարների իրական վճարումներ չէր ենթադրում, և բոլոր գործողություններն արվում էին թղթի վրա՝ փոխանցումով: Իր այդ քայլով ԱՄՆ–ն հնարավորություն էր տալիս եվրոպական երկրներին ֆինանսապես գոյատևելու, քանզի մտավախություն ուներ, որ Եվրոպայում ֆինանսական համակարգի փլուզումը ոչ միայն անցանկալի քաղաքական փոփոխությունների կբերեր, այլև կբացառվեր իրեն հասանելիք պարտքերի վերադարձը: Սակայն երբ որոշ ժամանակ ԱՄՆ–ն դադարեցրեց մշտական վարկավորման այս քաղաքականությունը, ռեպարացիաների և պարտքերի համակարգը փլուզվեց, սկսվեց սնանկացումների շարքը:

ԱՄՆ–ն մտադիր էր դաշնակիցների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա և այլն) պատերազմական պարտքերն օգտագործել իբրև լծակ՝ ստանալով նաև իրական գումարներ: Նա հասավ որոշակի արդյունքների այս ասպարեզում: Սակայն համաշխարհային տնտեսական ճգնաժամը էականորեն փոխեց ստեղծված իրավիճակը: Ի վերջո 1932թ. որոշվեց Գերմանիային ազատել փոխհատուցումների վճարման պարտականությունից: Դրանով վերանայվեց Վերսալյան պայմանագրի կարևոր դրույթներից մեկը:

Վերսալ–վաշինգտոնյան համակարգի փլուզումը

1930–ական թթ. սկսվեց Վերսալյան համակարգի փլուզման գործընթացը: Հեռավոր Արևելքում 1930թ. ճապոնիային հաջողվեց հօգուտ իրեն փոխել Վաշինգտոնում հինգ տերությունների միջև կնքված պայմանագրի՝ վերջրյա և ստորջրյա նավատորմին վերաբերող դրույթները: Ճապոնիան ձեռնամուխ եղավ Չինաստանի նվաճման ծրագրին, իսկ Ազգերի լիգան արտահայտվեց ճապոնա–չինական հարաբերությունները կարգավորելու օգտին: Ի պատասխան դրա՝ 1933թ. Ճապոնիան դուրս եկավ Ազգերի լիգայից: Խաղաղության Վաշինգտոնյան համակարգը Հեռավոր Արևելքում տապալվեց, Ճապոնիան ստացավ ազատություն պատերազմի սանձազերծման համար:

Նման իրադարձություններ էին տեղի ունենում նաև Եվրոպայում: Հանրաքվեի արդյունքում ***Սաարի մարզը,*** որ 15 տարի Ազգերի լիգայի կառավարման ներքո էր, ***1935 թ.*** անցավ Գերմանիային: Վերջինս Ֆրանսիայից գնեց Սաարի հանքերը: Դա մեծացրեց Գերմանիայի տնտեսական ներուժը:

Միակողմանիորեն խախտելով Վերսալյան պայմանագրի հոդվածները՝ 1935թ. Հիտլերը երկրում մտցրեց ընդհանուր զինվորական ծառայություն, ձեռնամուխ եղավ ուժեղ բանակի ու օդուժի ստեղծմանը: Գերմանական ռազմամոլության վերածնմանը նպաստեցին նաև արևմտյան տերությունների կառավարությունները: 1935թ. հունիսին Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի միջև ստորագրվեց ծովային համաձայնագիր:

Այն թույլ էր տալիս Գերմանիային ռազմածովային նավերի բեռնատարողությունը մեծացնել շուրջ հինգ անգամ, ինչպես նաև կառուցել ստորջրյա նավատորմ:

1935թ. իտալական բանակը ներխուժեց Ազգերի լիգայի անդամ Եթովպիա և գրավեց նրա մայրաքաղաք Ադիս Աբեբան: Հաջորդ տարի Եթովպիան միացվեց Իտալիային: Իտալիան նույնպես դուրս եկավ Ազգերի լիգայից (1937թ):

Այդ ընթացքում Գերմանիան շարունակում էր իր հետևողական քայլերը: 1936թ. Գերմանիան գրավեց Հռենոսյան ապառազմականացված գոտին: Սակայն ֆրանսիական կառավարությունը ոչինչ չարեց՝ դրանով խրախուսելով Հիտլերին շարունակելու Վերսալյան համակարգի վերանայման գործընթացը:

1938 թ. մարտին գերմանական զորքերն առանց դիմադրության մտան ***Ավստրիա:*** Ավստրիան որպես ինքնուրույն պետություն դադարեց գոյություն ունենալուց: Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և ԱՄՆ–ը կրկին գործնական ոչինչ չարեցին: Մեծ Բրիտանիան այն կարծիքին էր, որ Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի նպատակը ոչ թե խոշոր պատերազմի սանձազերծումն էր, այլ պատերազմի սպառնալիքի միջոցով որոշակի տարածքների ու ազդեցության ձեռքբերումը:

Անպատժելիությունը ոգևորեց Գերմանիային անցնելու տարածքային նոր ձեռքբերումների: Նրա հայացքն ուղղվեց դեպի Չեխոսլովակիա, որը բարենպաստ ռազմավարական դիրք էր գրավում Եվրոպայի կենտրոնում և ուներ զարգացած արդյունաբերություն: Գերմանիան պահանջեց Չեխոսլովակիայից հօգուտ իրեն հրաժարվել գերազանցապես գերմանական բնակչություն ունեցող Սուդեթի մարզից: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան մտադիր չէին Չեխոսլովակիայի համար պատերազմելու Գերմանիայի հետ: Խորհրդային Միությունը պատրաստ էր օգնության հասնելու Չեխոսլովակիային: Այդուհանդերձ, անգլիացիների և ֆրանսիացիների ճնշման ներքո Չեխոսլովակիան հրաժարվեց խորհրդային օգնությունից և ընդունեց Գերմանիայի պայմանները:

1938 թ. սեպտեմբերի 29–30–ը Մյունխենում տեղի ունեցավ հանդիպում՝ Չեմբեռլենի, Դալադիեի, Հիտլերի և Մուսսոլինիի մասնակցությամբ: Արդյունքում կայացավ ***«Մյունխենյան գործարքը»:*** Սուդեթի մարզը և Չեխոսլովակիայի մի շարք շրջաններ (երկրի տարածքի 1/3–ը) տրվեցին Գերմանիային, Լեհաստանին և Հունգարիային: Հիտլերին հանձնելով չեխական հողերը՝ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հույս ունեին, որ Եվրոպայում կայունությունն ապահովված է: Սակայն արդեն 1939թ. Գերմանիան զավթեց Չեխոսլովակիայի նաև մնացած մասը: Չեխիան և Մորավիան դարձան գերմանական պրոտեկտորատ, իսկ Սլովակիայում ստեղծվեց ֆաշիստական կառավարություն:

Այսպես Եվրոպայում ուժերի հարաբերակցությունը փոխվում էր հօգուտ ֆաշիստական երկրների: 1939թ. մարտին Գերմանիան զավթեց Լիտվայի Մեմել (ժամանակակից Կլայպեդա) նավահանգստային քաղաքը: Իսկ այնուհետև գրավեց Ազգերի լիգայի վերահսկողության տակ գտնվող Դանցիգ (ժամանակակից Գդանսկ) անկախ քաղաքը: Իտալիան իր հերթին բռնազավթեց Ալբանիան:

Վերսալ–վաշինգտոնյան համակարգը փլուզված էր, իսկ ագրեսորին խաղաղեցնելու քաղաքականությունը՝ ձախողված: Միայն այդ ժամանակ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան սկսեցին վերանայել իրենց քաղաքականությունը.

• Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի խորհրդարանները հաստատեցին ռազմական մեծ բյուջեներ,

• Լեհաստանի և եվրոպական տարբեր երկրների հետ կնքվեցին փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրեր,

• 1939թ. Անգլիան և Ֆրանսիան բանակցություններ սկսեցին Խորհրդային Միության հետ՝ ագրեսորի դեմ համատեղ գործողությունների վերաբերյալ:

Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հույս ունեին, որ իրենց կհաջողվի ֆաշիստական ագրեսիան ուղղել ԽՍՀՄ–ի դեմ: Անգլիական կառավարությունը Լոնդոնում գաղտնի բանակցություններ էր վարում Գերմանիայի հետ: Այդ իսկ պատճառով ԽՍՀՄ–ի հետ բանակցություններ սկսելով՝ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ձգձգում էին դրանք: ԽՍՀՄ–ի վիճակը բարդանում էր, քանզի 1939թ. գարնանը Ճապոնիան ռազմական գործողություններ սկսեց նրա դաշնակից Մոնղոլիայի դեմ: Դա ամեն պահի կարող էր վերաճել խորհրդա–ճապոնական պատերազմի: Արդյունքում ԽՍՀՄ–ը բանակցություններ սկսեց Գերմանիայի հետ: ***1939 թ. օգոստոսի 23–ին Մոսկվայում*** կնքվեց չհարձակման վերաբերյալ ***խորհրդա–գերմանական համաձայնագիր,*** ինչպես նաև Արևելյան Եվրոպայում ազդեցության ոլորտների սահմանագծման վերաբերյալ գաղտնի արձանագրություն:

Խորհրդային ղեկավարությունը համոզված էր, որ պայմանագրի կնքումը իր համար ձեռնտու է բոլոր առումներով: Նախ՝ ԽՍՀՄ–ն ապահովում էր իր անվտանգությունը Հեռավոր Արևելքում, քանզի Ճապոնիան չէր համարձակվի պատերազմ սկսել առանց Գերմանիայի աջակցության: Բացառվում էր նաև նոր «Մյունխենյան գործարքի» հավանականությունը, այն է՝ ԽՍՀՄ–ի հաշվին Գերմանիային խաղաղեցնելու Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հնարավոր փորձերը: Պայմանագրին կից գաղտնի արձանագրությամբ ԽՍՀՄ–ը նախկին Ռուսական կայսրության որոշ տարածքների վերադարձի հնարավորություն էր ստանում:

Միաժամանակ ձևավորվում էին հակադիր խմբավորումները: Սակայն ապագայում ԽՍՀՄ–ը պետք է տեղ գրավեր հակաֆաշիստական երկրների շարքում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր երկիրն էր շարունակում կառչած մնալ Վերսալ–Վաշինգտոնյան աշխարհակարգից: Ինչո՞ւ էին մնացած տերությունները այս կամ այն չափով դժգոհ դրանից: Ի՞նչ միտումներ էին առկա միջազգային հարաբերություններում 1930–ական թթ.:

2. Խաղաղասիրական ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին այս տարիներին: Ինչո՞ւ դրանք հաջողություն չունեցան:

3. Ներկայացրե՛ք Հեռավոր Արևելքում Վաշինգտոնյան համակարգի փլուզման գործընթացը: Գերմանիան ի՞նչ քայլեր իրականացրեց, որոնք փլուզեցին Վերսալյան համակարգը: Պարզաբանե՛ք «Մյունխենյան գործարքի» էությունը: Ինչո՞ւ էին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ձգձգում բանակցությունները ԽՍՀՄ–ի հետ: Գնահատե՛ք խորհրդա–գերմանական 1939 թ. օգոստոսի 23–ի համաձայնագիրը:

4. Որո՞նք էին Ազգերի լիգայի ձախողման պատճառները: Ե՞րբ կնքվեց գերմանա–իտալական դաշինքը: Ի՞նչ անունով է հայտնի այդ ռազմաքաղաքական դաշինքը: Ե՞րբ և ո՞ւմ կողմից ստորագրվեց «Հակակոմինտերնյան պակտը»:

§2. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՁԱԽՈՂՈՒՄՆ ՈՒ ՀԱԿԱՄԱՐՏ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ազգերի լիգայի ստեղծումը

Ազգերի լիգան համաշխարհային նշանակության առաջին միջազգային կազմակերպությունն էր, որի հիմնական նպատակներն էին խաղաղության պահպանումն ու միջազգային համագործակցության զարգացումը: Այս կազմակերպությունը հիմնադրվել է 1920թ. և դադարեցրել իր գործունեությունը 1946թ.՝ Միավորված ազգերի կազմակերպության ստեղծման կապակցությամբ: Ազգերի լիգայի գաղափարը տեղ էր գտել դեռ Վ.Վիլսոնի՝ 1918 թ. հռչակած 14 կետերում, իսկ Լիգայի կանոնադրությունը, 1919թ. հաստատվելով Փարիզի կոնֆերանսի ընթացքում, կցվել էր Վերսալյան համակարգի բոլոր պայմանագրերին: 42 երկրներ դարձան Ազգերի լիգայի հիմնադիր անդամներ: Հետագայում այդ թիվը գնալով աճեց և միջպատերազմյան ժամանակաշրջանի այս կամ այն հատվածում Ազգերի լիգայի անդամներ էին դարձել ծանրակշիռ 65 երկրներից 63–ը (բացառություն էին ԱՄՆ–ն և 1932 թ. ստեղծված Սաուդյան Արաբիան):

Հետպատերազմյան շրջանում հույս կար, որ Ազգերի լիգան է դառնալու խաղաղության դարաշրջանի կանխորոշողը: Հաղթող պետությունները հասկանում էին նախկինում գործած Սրբազան դաշինքի կարևորությունը: Զարմանալի չէ, որ վերադարձը դեպի 19–րդ դարի համակարգ դիտվեց որպես միակ ընտրություն: Սակայն Լիգայի խորհուրդը պետք է գործեր որպես առնվազն եվրոպական դիրեկտորիում, ինչպես դա նախկինում արել էր Եվրոպայի դաշինքը որպես խաղաղության արբիտր: Սակայն պարտված երկրների զինաթափումն ի չիք դարձրեց որևիցե կառուցողական լուծման իրականացումը: Ստեղծված վիճակի միակ այլընտրանքը միջազգային կանոնակարգի հաստատումն էր, որն օժտված էր լինելու կազմակերպչական ուժով և պետք է նախապայմաններ ստեղծեր ինքնիշխանության համար: Նման գործընթացը բոլորովին չէր համապատասխանում իր ժամանակին: Ոչ միայն ԱՄՆ–ն, այլև Եվրոպայի ոչ մի երկիր չէր ենթարկվի այդ համակարգին: Խաղաղության հիմնախնդրի լուծման միակ տարբերակը, այն է՝ ուժերի հավասարակշռության համակարգի վերահիմնումը, մնաց անիրականանալի:

Ստեղծվել էր Ազգերի լիգա, սակայն Եվրոպան, ըստ էության, մնացել էր առանց քաղաքական համակարգի: Որևէ հստակ հեռանկարից զուրկ նման իրավիճակը կարող էր գոյատևել այնքան, որքան կներեին սպառվող ուժերը:

Ազգերի լիգայի կառույցը

Կառուցվածքային տեսանկյունից, Ազգերի լիգան կազմված էր ընդհանուր ժողովից՝ ասամբլեայից, խորհրդից, քարտուղարությունից, տարբեր հանձնաժողովներից և օժանդակ ծառայություններից:

Ընդհանուր ժողովը՝ ասամբլեան ընդգրկում էր կազմակերպության անդամ հանդիսացող բոլոր երկրները: Ասամբլեան քննարկում էր Ազգերի լիգայի լիազորությունների մեջ մտնող կամ խաղաղությանը վերաբերող ցանկացած խնդիր: Այն ուներ իր մշտական հանձնաժողովները: Նստաշրջանները տեղի էին ունենում յուրաքանչյուր տարվա սեպտեմբերին: Ազգերի լիգայի անդամ հանդիսացող յուրաքանչյուր երկիր ընդհանուր ժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով կարող էր նշանակել պատվիրակների: Նրանք մասնակցում էին ընդհանուր ժողովում ընթացող քննարկումներին: Սակայն քվեարկության ժամանակ Լիգայի անդամ յուրաքանչյուր երկիր

ուներ միայն մեկ ձայնի իրավունք: Բացառություն էր միայն Մեծ Բրիտանիան, որի հինգ տիրույթները (Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հարավ–Աֆրիկյան Միություն և Հնդկաստան) ունեին առանձին անդամ երկրի կարգավիճակ:

Ազգերի լիգայի խորհուրդն ուներ նույնպիսի լայն լիազորություններ, ինչպիսիք ուներ և ասամբլեան: Սակայն խորհուրդն ուներ բացառիկ իրավունքներ ազգային փոքրամասնությունների, մանդատային համակարգի, հակամարտությունների կարգավորման և հավաքական անվտանգությանը վերաբերող խնդիրների հարցերում: Խորհուրդը Լիգայի «վերին պալատն» էր և սկզբում նախատեսվում էր, որ այն պետք է ունենա 9 անդամ՝ 5 մշտական (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա) և 4 ժամանակավոր: Սակայն քանի որ ԱՄՆ–ն չանդամակցեց Ազգերի լիգային, չէր կարող լինել և խորհրդի կազմում, որի անդամ դարձան 8 երկրներ: 1940թ. Ազգերի լիգայի խորհրդի անդամների թիվը հասավ 14–ի: Խորհրդի նստաշրջանները տեղի էին ունենում տարեկան առնվազն 4 անգամ, իսկ հատուկ կամ արտահերթ նստաշրջաններն՝ ըստ անհրաժեշտության:

Ազգերի լիգայի քարտուղարությունը վարչական մարմին էր, որ գործում էր մշտական հիմունքներով և ուներ Լիգայի գործունեության վրա էական ազդեցություն: Ազգերի լիգայի ղեկավարն էր գլխավոր քարտուղարը: Ազգերի լիգայի առաջին գլխավոր քարտուղարն էր Ջ.Դրումմոնդը:

Նոր միջազգային կազմակերպությունն ուներ այն ժամանակների համար ահռելի բյուջե՝ 6 միլիոն դոլար: Գումարը հավաքվում էր անդամավճարների միջոցով. յուրաքանչյուր երկիր տոկոսային առումով վճարում էր այնքան, որքան վճարում էր միջազգային փոստային ծառայությանը:

Ազգերի լիգայի կենտրոնակայանն էր Ժնևը (Շվեյցարիա): Այստեղ տեղի ունեցավ Ազգերի լիգայի գործունեության առաջին տարվա ընթացքում կազմակերպված ընդհանուր ժողովի միակ նստաշրջանը: Սակայն Ազգերի լիգայի խորհրդի նիստերի մեծ մասը սկզբնական շրջանում տեղի էր ունենում եվրոպական մեծ տերությունների մայրաքաղաքներում՝ Փարիզում, Լոնդոնում, Հռոմում և այլն: Սա խոսում էր Ազգերի լիգայում հիշյալ երկրների ազդեցության մասին:

Ազգերի լիգայի ձեռքբերումներն ու ձախողումները

1920–ական թթ. Ազգերի լիգան արձանագրեց բազմաթիվ հաջողություններ: Լիգայի ջանքերով կարգավորվեցին Շվեդիայի և Ֆինլանդիայի (Ալանդյան կղզիների պատկանելության հարցը), Գերմանիայի և Լեհաստանի (Վերին Սիլեզիայի խնդիրը), Իտալիայի և Հարավսլավիայի (Ֆիումեի հարցը), Բրիտանիայի մանդատի ներքո գտնվող Իրաքի և Թուրքիայի (Մոսուլի խնդիրը) միջև տարածքային խնդիրները, ինչպես նաև Հունաստանի և Բուլղարիայի, Ալբանիայի և Հարավսլավիայի միջև ծագած սահմանային վեճերը:

Վերջինիս հաջողությունների շարքին պետք է դասել նաև գաղթականներին ու փախստականներին (այդ թվում և հայ գաղթականներին ու փախստականներին) ցուցաբերված օգնությունն ու **Նանսենի անձնագրի** ներմուծումը (1922թ.): Այն միջազգայնորեն ճանաչված առաջին ինքնության վկայականն էր, որ տրվում էր պետականազուրկ փախստականներին: Ազգերի լիգան ձեռքբերումներ ունեցավ նաև մանդատային համակարգի կենսագործման ընթացքում: Հաջողություններ գրանցվեցին նաև Ազգերի լիգայի բազմաթիվ գործակալությունների ու հանձնաժողովների կողմից: Ազգերի լիգան էր, համաշխարհային նշանակության կարևորագույն ձեռքբերումներից էր: Արդեն 1920–ական թվականների վերջերին Ազգերի լիգան դարձել էր եվրոպական

դիվանագիտության կենտրոնը: Սակայն իրավիճակը սակայն փոխվեց 1930–ական թթ.:

Սակայն Ազգերի լիգան ունեցավ նաև մի շարք ձախողումներ: Իտալիայի կողմից Ազգերի լիգայի անդամների՝ Եթովպիայի և Ալբանիայի նվաճումը, Գերմանիայի կողմից Չեխոսլովակիայի օկուպացումն ու Ավստրիայի բռնակցումը, Ճապոնիայի նվաճումները Չինաստանում, քաղաքացիական պատերազմը Իսպանիայում, սպառազինությունների մրցավազքը և վերջապես Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծումը՝ այս ամենը կարելի է դասել Ազգերի լիգայի ձախողումների շարքին: Լիգան անզոր գտնվեց հիշյալ մարտահրավերների առջև: Ընդհուպ մինչև աշխարհամարտի ավարտը կազմակերպությունը ձևականորեն էր պահպանում իր գոյությունը: Ազգերի լիգան պաշտոնապես դադարեցրեց իր գործունեությունը 1946թ.:

Ազգերի լիգայի ձախողումն ուներ մի շարք պատճառներ.

• Ազգերի լիգան կախված էր մեծ տերություններից, մասնավորապես Անգլիայից և Ֆրանսիայից: Այս երկրներն էին, որ պետք է հաստատուն աջակցություն ցուցաբերեին Լիգային ճգնաժամային իրադրություններում: Սակայն կոնֆլիկտների դեպքում ո՛չ Բրիտանիան ո՛չ էլ Ֆրանսիան պատրաստ չէին մի կողմ թողնելու իրենց նեղ մասնավոր շահերը՝ Լիգային աջակցելու նպատակով:

• Ազգերի լիգայի գործունեության այս կամ այն ժամանակաշրջանում մի շարք կարևոր երկրներ այս կազմակերպության անդամ չէին: Ընդհուպ մինչև 1926 թ. Գերմանիան Ազգերի լիգայի անդամ չէր: Դառնալով Լիգայի անդամ 1926թ.՝ Գերմանիան 1933 թ. ինքը լքեց այդ կառույցը: ԽՍՀՄ–ին Ազգերի լիգայի շարքերն ընդունեցին միայն 1934 թ.: Սակայն հետագայում՝ խորհրդա–ֆիննական պատերազմի (1939–1940 թթ.) արդյունքում ԽՍՀՄ–ը հեռացվեց Ազգերի լիգայից: Ազգերի լիգայի հիմնադիր անդամները՝ Ճապոնիան և Իտալիան, իրենք հեռացան այդ կազմակերպությունից: ԱՄՆ–ը այդպես էլ երբեք չդարձավ Ազգերի լիգայի անդամ: Առանց հիշյալ տերությունների մասնակցության Լիգան չէր կարող ունենալ բավականաչափ հեղինակություն, իսկ նրա պատժամիջոցները չէին կարող լինել արդյունավետ:

• Տնտեսական պատժամիջոցները չէին աշխատում: Ենթադրվում էր, որ տնտեսական բնույթի պատժամիջոցները Ազգերի լիգայի հիմնական զենքն են հանդիսանալու: Սակայն Լիգայի անդամներն այնքան էլ մեծ պատրաստակամությամբ չէին կիրառում այդ լծակը, քանզի մտահոգված էին, որ առանց ԱՄՆ–ի մասնակցության այն արդյունավետ լինել չի կարող: Իսկ երբ տնտեսական պատժամիջոցները գործածության մեջ էին դրվում, դրանք հեշտությամբ հաղթահարվում էին «պատժված» երկրի կողմից: Այսպիսով՝ Ազգերի լիգան բավարար ուժ չուներ իր Ժողովի և Խորհրդի որոշումների կենսագործման կամ դրանց պարտադրման համար:

• Ձախողման պատճառներից մեկն էլ այն էր, որ Ազգերի լիգան զորք չուներ: Մինչդեռ տնտեսական պատժամիջոցների ձախողման դեպքում ռազմական ուժի կիրառումն էր լինելու մյուս հնարավոր տարբերակը: Զինված ուժերը Ազգերի լիգան լիովին կախված էր անդամ երկրների դիրքորոշումից ու նրանց համագործակցելու պատրաստակամությունից: Սակայն Բրիտանիան և Ֆրանսիան չէին ցանկանում զորքեր տրամադրել Լիգային: Ազգերի լիգայի ողջ գործունեության ընթացքում այդպես էլ երբեք որևիցե զինված ուժեր Լիգայի անունից չներգրավվեցին որևիցե պատերազմական գործողության մեջ:

• Ազգերի լիգան հարկադրված էր պաշտպանելու հետպատերազմյան հաշտության պայմանագրերը, քանզի նաև այդ պայմանագրերի կնքման արդյունքում էր ստեղծվել Լիգան: Օրինակ՝ Վերսալյան համակարգի հաշտության բոլոր պայմանագրերին կցված էր նաև Ազգերի լիգայի կանոնադրությունը: Ժամանակի ընթացքում, սակայն, ակնհայտ դարձավ, որ այդ հաշտության պայմանագրերի որոշ կետեր անար-

դարացի են և փոփոխման կարիք են զգում: Սա էլ ավելի թուլացրեց Ազգերի լիգայի դիրքերը:

• Ազգերի լիգայի ձախողման պատճառներից էր նաև որոշումների կայացման դանդաղ ընթացքը: Նախապես սպասվում էր, որ ճգնաժամերի ծագման դեպքում Ազգերի լիգան արագ ու վճռական պետք է գործի: Մինչդեռ նստաշրջանները մեծ ընդմիջումներով էին գումարվում: Կոնկրետ գործողությունների վերաբերյալ արագ որոշումների կայացման համար պահանջվում էր Լիգայի անդամ բոլոր երկրների համաձայնությունը, ինչը գործնականում դժվար էր:

Ազգերի լիգայի ձախողումը և հակամարտ խմբավորումների ձևավորումը

Վերսալ–վաշինգտոնյան համակարգի փլուզումը նաև Ազգերի լիգայի ձախողման արդյունք էր: Լիգան չկարողացավ զսպել ագրեսոր երկրներին: Ագրեսիայի զոհ դարձան նույնիսկ Լիգայի անդամ երկրները՝ Եթովպիան, Ալբանիան, Ավստրիան, Չեխոսլովակիան, Չինաստանը և այլն: Արդյունքում, հիասթափություն ապրելով, տասնյակ երկրներ դուրս եկան Ազգերի լիգայի կազմից: Ավելին՝ իրենց նվաճողական քաղաքականությունն ավելի ազատ տանելու նպատակով այդ կազմակերպությունն առաջիններից մեկը լքեցին հենց ագրեսոր երկրները՝ Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան: Իտալա–եթովպական պատերազմն ու Իսպանիայի իրադարձություններին միջամտելու ընթացքում նացիստական Գերմանիայի և ֆաշիստական Իտալիայի միջև համագործակցությունը արագացրին երկու երկրների միջև դաշինքի կնքման գործընթացը: **1936 թ. հոկտեմբերի 25–ին** Գերմանիան և Իտալիան Բեռլինում ստորագրեցին համաձայնագիր Բալկաններում և Դանուբի ավազանում իրենց տնտեսական էքսպանսիայի ոլորտները սահմանագծելու մասին: Նրանք միաժամանակ պայմանավորվեցին Իսպանիայում պատերազմի հետագա վարման և Իտալիայի կողմից Եթովպիայի զավթումը Գերմանիայի կողմից ճանաչելու մասին: Այսպես ձևավորվեց գերմանա–իտալական բլոկը, որը պատմության մեջ մտավ իբրև **Բեռլին–Հռոմ առանցք:**

Դրան զուգահեռ տեղի ունեցավ նացիստական Գերմանիայի մերձեցումը ծավալապաշտական ծրագրեր մշակող միլիտարիստական Ճապոնիայի հետ: **1936թ. նոյեմբերի 25–ին** Բեռլինում Գերմանիան և Ճապոնիան ստորագրեցին այսպես կոչված **հակակոմինտերնյան պակտը:** Խոսքը վերաբերում էր կոմունիստական ինտերնացիոնալի դեմ մղվող պայքարում երկու տերությունների համագործակցությանը: Պակտի գաղտնի հավելվածում կողմերը պարտավորվում էին ԽՍՀՄ–ի հետ չկնքել պակտին հակասող քաղաքական համաձայնագիր: 1937թ. «Հակակոմինտերնյան պակտին» միացավ նաև ֆաշիստական Իտալիան:

Աստիճանաբար իրողություն էր դառնում Բեռլին–Հռոմ–Տոկիո առանցքը, որի նպատակը աշխարհի նոր վերաբաժանման իրագործումն էր: Այդ առանցքով ոգևորվելով՝ կողմերը 1937–1939 թթ. ընթացքում Վերսալ–Վաշինգտոնյան համակարգի պայմանագրերը ոտնահարող ագրեսիվ նոր գործողությունների դիմեցին Եվրոպայում և Հեռավոր Արևելքում:

Իսկ արդեն **1939թ. մայիսի 22–ին** Գերմանիայի և Իտալիայի միջև ռազմաքաղաքական նոր դաշինքի՝ **պողպատե պակտի** ստորագրումով կողմերն իրենց համագործակցությունը դարձրին անշրջելի: Նրանք պարտավորվում էին պատերազմի դեպքում միմյանց պաշտպանել «ցամաքում, ծովում և օդում»:

Այսպիսով՝ Բեռլին–Հռոմ–Տոկիո առանցքը հիմնականում ձևավորված էր դեռ երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ: Մինչդեռ հակաֆաշիստական խմ-

բավորումը (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԽՍՀՄ, ԱՄՆ) ձևավորվեց արդեն երկրորդ աշխարհամարտի ընթացքում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է հիմնադրվել Ազգերի լիգան: Ո՞րն էր այդ կազմակերպության նպատակը: Քանի՞ պետություն էր անդամակցում դրան: Մինչև ե՞րբ այն գործեց:

2. Գծապատկերի տեսքով ներկայացրե՛ք Ազգերի լիգայի կառուցվածքը: Ի՞նչ խնդիրներ էր քննարկում Ասամբլեան: Ի՞նչ լիազորություններ ուներ Ազգերի լիգայի խորհուրդը: Քանի՞ անդամ ուներ այն: Ի՞նչ մարմին էր քարտուղարությունը: Ինչպե՞ս էր ձևավորվում Ազգերի լիգայի բյուջեն:

3. Ի՞նչ հաջողություններ ունեցավ Ազգերի լիգան իր գործունեության ընթացքում: Ներկայացրե՛ք Ազգերի լիգայի ձախողումները: Ձեր կարծիքով՝ անհրաժե՞շտ էր արդյոք միջազգային այդպիսի կառույցը:

4. Միջազգային վիճաբանությունները կարգավորող ի՞նչ կառույց ստեղծվեց Առաջին աշխարհամարտից հետո: Ե՞րբ է ստեղծվել Հաագայի միջազգային դատարանը: Ինչպիսի՞ն էր դրա կարգավիճակը: Ինչո՞ւ Միջազգային արդարադատության մշտական պալատի գործունեությունն ավելի արդյունավետ էր, քան Հաագայի միջազգային դատարանինը:

ԳԼՈՒԽ 6. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1939–1945 ԹԹ.)

§1. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՍԿԻԶԲԸ, ՓՈՒԼԵՐԸ

Վերսալ–վաշինգտոնյան աշխարհակարգը չապահովեց կայուն խաղաղություն և երկրների ու ժողովուրդների անվտանգությունը: Առաջին աշխարհամարտի ավարտից 20 տարի անց աշխարհը մտավ մի նոր փորձության մեջ: Սկիզբ առավ ու վեց տարի շարունակվեց Երկրորդ աշխարհամարտը, որն իր չափերով ու պատճառած վնասներով աննախադեպ երևույթ էր մարդկության պատմության մեջ: Այս աշխարհամարտը արդյունաբերական հասարակության նոր ճգնաժամի արդյունք էր: Իսկ որո՞նք էին դրա պատճառները, հնարավոր չէր արդյո՞ք կանխել պատերազմը:

Պատերազմի պատճառները

1930–ական թթ. վերջին ձևավորվել էին աշխարհաքաղաքական երեք հիմնական կենտրոններ, որոնց միջև պայքարի կամ համագործակցության արդյունքներից էր կախված միջազգային անվտանգության և խաղաղության ապահովման, պատերազմի լինել–չլինելու հարցը:

Առաջինը ներկայացնում էին կապիտալիստական աշխարհի ժողովրդավարական երկրները՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի գլխավորությամբ, ***երկրորդը՝*** ռազմատենչ ամբողջատիրական երկրների խմբավորումը՝ ի դեմս Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի, ***երրորդը՝*** սոցիալիստական Խորհրդային Միությունը:

Պատերազմի խորքային պատճառներից էր տնտեսական հակամարտությունը: Տերությունների տնտեսական շահերի բախումն ու պայքարն ավելի սրվեց Մեծ ճգնաժամի հետևանքով: Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու ԱՄՆ–ը ձգտում էին պահպանելու իրենց հումքի աղբյուրները և իրացման շուկաները:

Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան ուզում էին ձեռք բերել կամ ընդլայնել իրենց տնտեսական հնարավորությունները գաղութատեր տերություններից գաղութներ խլելու և երկրներ նվաճելու միջոցով:

Արդյունաբերական հզոր երկիր էր դարձել ԽՍՀՄ–ը: Եվ նրա ու մյուս զարգացած տերությունների միջև տնտեսական մրցակցությունն ընդունեց նաև գաղափարական–քաղաքական բնույթ:

Պատերազմի գլխավոր նախաձեռնողները ռազմատենչ երկրներն էին, հատկապես՝ Գերմանիան: Ֆաշիստական գաղափարախոսությունը լիովին ծառայում էր հիտլերյան վարչակարգի՝ համաշխարհային տիրապետության հասնելու քաղաքականությանը: Գերմանացիները պետք է գերիշխող դառնային ոչ միայն Եվրոպայում, այլ նաև ամբողջ աշխարհում: Այդ նպատակին հասնելու ճանապարհին տեղահանության, ստրկացման կամ ոչնչացման էին ենթակա «ոչ արիացի, ցածր ռասային պատկանող» ժողովուրդները, առաջին հերթին սլավոնները, հրեաները, գնչուները և այլք:

Գաղութային տերություն դառնալու հստակ նպատակ էր հետապնդում նաև Ճապոնիան, որը 1930–ական թթ. սկզբից նախաձեռնել էր նվաճողական քաղաքականություն Հեռավոր Արևելքում, մասնավորապես՝ Չինաստանում:

Տարածքային նվաճումներ էր սկսել նաև Իտալիան: Տարածքային նվաճումներ էր սկսել նաև Իտալիան, որը գրավեց Եթովպիան, Ալբանիան, ապա Գերմանիայի հետ

միասին աջակցեց Իսպանիայում հանրապետական կարգի տապալմանը և Ֆրանկոյի ֆաշիստական վարչակազմի հաստատմանը:

Այս երեք պետություններն իրենց գլխավոր գաղափարական–քաղաքական նպատակ էին հռչակել նաև միջազգային կոմունիստական շարժման դեմ պայքարը, որի պատվարը ԽՍՀՄ–ն էր:

Իրենց հերթին, Անգլիան և Ֆրանսիան փորձում էին պահպանել Վերսալ–վաշինգտոնյան աշխարհակարգը, որտեղ իրենք գերիշխող դիրք ունեին: Ֆաշիստական պետությունների դեմ պայքարում, ինչպես ցույց տվեց 1930–ական թթ. երկրորդ կեսը, նրանք հետևողական չէին, ավելին, գնացին չհիմնավորված զիջումների (գագաթնակետը՝ 1938 թ. Մյունխենյան գործարքն էր), ինչը նույնպես էական դեր խաղաց նոր աշխարհամարտի սկսման գործում: Ժողովրդավարական երկրները ամեն կերպ փորձում էին ֆաշիստական խմբավորման ուժերն ուղղել ԽՍՀՄ–ի դեմ: Վերջինս նրանց համար ժողովրդավարությանը սպառնացող վտանգ էր, որովհետև խորհրդային պետությունը ամբողջատիրական երկիր էր: Ուստի ֆաշիստական խմբավորման ու ԽՍՀՄ–ի՝ այդ երկու կենտրոնների բախումից ժողովրդավարական տերությունները միայն կշահեին: Այս գծի կողմնակից էր հատկապես ԱՄՆ–ը, որը մինչև պատերազմի սկսվելը վարում էր «առերևույթ չեզոքության» քաղաքականություն:

Միջազգային հարաբերությունների բարդ հանգույցում և պատերազմի նախօրեին ձևավորվող աշխարհաքաղաքական դասավորությունում ԽՍՀՄ–ը փորձում էր կանխել ռազմատենչ երկրների ծավալապաշտությունը հավաքական անվտանգության համակարգ ստեղծելու միջոցով: Սակայն Խորհրդային Միության և Մեծ Բրիտանիայի ու Ֆրասիայի միջև առկա փոխադարձ անվստահությունը տապալեց այդ գործընթացը:

Այս իրավիճակում ԽՍՀՄ–ը ստիպված էր կնքել չհարձակման պայմանագիր հիտլերյան Գերմանիայի հետ, ավելին, գնաց գաղտնի համաձայնության Արևելյան Եվրոպան ազդեցության գոտիների բաժանելու հարցում: Այս հանգամանքը նույնպես նպաստեց պատերազմի սանձազերծմանը:

Այսպիսով՝ 1930–ական թթ. ավարտին աշխարհաքաղաքական բարդ իրադրություն էր առաջացել, իսկ ընդհանուր պատերազմի վտանգը օրեցօր աճում էր: Ուժային երեք հիմնական կենտրոնների միջև շահերի հակամարտությունը, պատերազմի գաղափարաքաղաքական նախապատրաստումը, ժողովրդավարական խմբավորման և ԽՍՀՄ–ի միջև համագործակցություն հաստատելու ջանքերի ապարդյունությունը հանգեցրին ռազմական նոր համընդհանուր բախման:

Աշխարհամարտի սկիզբը, փուլերը

Երկրորդ աշխարհամարտի սկիզբն է համարվում ***1939 թ. սեպտեմբերի 1–ը,*** երբ Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա: Երկու օր անց Անգլիան և Ֆրանսիան՝ Լեհաստանի դաշնակիցները և նրա անվտանգության երաշխավորները, Գերմանիային պատերազմ հայտարարեցին: ***Այսպիսով՝ Երկրորդ աշխարհամարտը սկսվեց ժողովրդավարական և ֆաշիստական խմբավորումների բախումով:***

Երկրորդ աշխարհամարտի ընթացքը պատմագիտության ընդունված տեսակետներից մեկի համաձայն բաժանվում է 5 փուլերի.

1) 1939 թ. սեպտեմբերի 1–ից մինչև 1941 թ. հունիսի 21–ը,

2) 1941 թ. հունիսի 22–ից մինչև 1942 թ. նոյեմբերը,

3) 1942 թ. նոյեմբերից մինչև 1943 թ. ավարտը,

4) 1944 թ. սկզբից մինչև 1945 թ. մայիսի 8–ը,

5) 1945 թ. մայիսի 9–ից մինչև սեպտեմբերի 2–ը:

Գերմանիան շատ արագ նվաճեց Մոլոտով–Ռիբենտրոպ գաղտնի արձանագրություններով որոշված իր հասանելիք լեհական տարածքը:

Այդ նույն ժամանակ խորհրդային զորքերը մտան Լեհաստան՝ Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելոռուսիան ազատագրելու: Այդ տարածքները միացվեցին Ուկրաինական և Բելոռուսական ԽՍՀ–ներին: Սեպտեմբերի 28–ին կնքվեց խորհրդա–գերմանական բարեկամության և սահմանների մասին գաղտնի պայմանագիր: Այսպես լեհական պետությունը դադարեց գոյություն ունենալուց, իսկ նրա տարածքները բաժանվեցին Գերմանիայի և ԽՍՀՄ–ի միջև:

Շուտով ԽՍՀՄ–ը պատերազմ սկսեց Ֆինլանդիայի դեմ (1939 թ. նոյեմբերի 30—1940 թ. մարտի 12) և նրանից գրավեց աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող Կարելյան պարանոցն ու Լենինգրադից հյուսիս–արևմուտք ընկած տարածքները: Այս պատերազմի պատճառով ԽՍՀՄ–ը հեռացվեց Ազգերի լիգայից:

Պատերազմի սկզբից մինչև հաջորդ տարվա մայիսը Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ռազմական գործողություններ չիրականացրին Գերմանիայի դեմ, ինչի պատճառով Արևմտյան ճակատի այդ պատերազմաշրջանն ստացել է ***«տարօրինակ պատերազմ»*** անունը: Գերմանիան, օգտվելով նպաստավոր իրավիճակից, 1940 թ. ապրիլին գրավեց Դանիան, Նորվեգիան, իսկ հաջորդ ամսվա ընթացքում՝ Նիդերլանդները, Բելգիան և Լյուքսեմբուրգը:

Հերթը հասավ Ֆրանսիային: Ունենալով զգալի թվով զինուժ և տեխնիկա՝ Ֆրանսիան չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ ու շատ կարճ ժամանակում պարտություն կրեց: ***1940 թ. հունիսի 22–ի*** անձնատվության պայմանագրով Ֆրանսիայի տարածքի 2/3–ը բռնազավթվեց, իսկ մնացած մասում ստեղծվեց խամաճիկային կառավարություն, որի նստավայրը Վիշի քաղաքն էր: Ֆրանսիան դուրս եկավ պատերազմից, նաև պետք է հսկայական ռազմատուգանք վճարեր Գերմանիային:

Ֆրանսիական հայրենասերները, սակայն, չհաշտվեցին նման իրավիճակի հետ: Գեներալ ***Շառլ դը Գոլի*** գլխավորությամբ ձևավորվեց ***«Ազատ Ֆրանսիա»*** շարժումը, որը ազատագրական պայքար ծավալեց գերմանական զավթիչների դեմ: Մեծ Բրիտանիան պաշտոնապես ճանաչեց Դը Գոլին որպես այդ շարժման ղեկավար:

Դաշնակցի կորստով Մեծ Բրիտանիայի դրությունը բարդացավ, գերմանական ներխուժման սպառնալիքն ավելի մեծացավ: 1940 թ. մայիսին Մեծ Բրիտանիայի վարչապետ դարձավ ***Ուինսթոն Չերչիլը,*** որը կարողացավ ամրապնդել երկրի պաշտպանունակությունը: Կանխվեց գերմանական ցամաքային ուժերի ներխուժումը, իսկ Մեծ Բրիտանիան շարունակեց պատերազմել ընդդեմ ֆաշիստական խմբավորման:

Մեծ Բրիտանիայի նվաճման անհաջող փորձից հետո Գերմանիան այս անգամ շարունակեց ծավալվել Բալկաններում: Մեկը մյուսի հետևից գերմանամետ վարչակարգեր հաստատվեցին Հունգարիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, որոնք միացան ֆաշիստական խմբավորմանը:

1941 թ. ապրիլին Գերմանիան և Իտալիան միացյալ ուժերով նվաճեցին Հարավսլավիան և Հունաստանը:

Գերմանա–իտալական և անգլիական զորքերի միջև փոփոխական հաջողություններով պատերազմական գործողություններ էին մղվում նաև Աֆրիկայի հյուսիսում և արևելքում:

Պատերազմի առաջին փուլում իր տարածքային ընդարձակումն էր շարունակում նաև ԽՍՀՄ–ը: 1940 թ. ամռանը խորհրդային բանակի վերահսկողության ներքո խորհրդային կարգեր հաստատվեցին ***Լիտվայում, Լատվիայում և Էստոնիայում:*** Ռումինիան ստիպված էր զիջելու ***Հյուսիսային Բուկովինան և Բեսարաբիան,*** որոնց հիման վրա ձևավորվեց ***Մոլդովական ԽՍՀ–ն:*** Շուտով մերձբալթյան երեք պետություն-

ները և Մոլդովական ԽՍՀ–ն մտան ԽՍՀՄ–ի կազմի մեջ: Այսպես՝ ԽՍՀՄ–ը Լեհաստանից և Ֆինլանդիայից ռազմական ուժով խլեց տարածքներ, իսկ Լիտվան, Լատվիան և Էստոնիան «խաղաղ ճանապարհով» մաս կազմեցին խորհրդային կայսրությանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք, թե ռազմաքաղաքական ինչ խմբավորումներ էին ձևավորվել պատերազմի նախօրեին: Ներկայացրե՛ք Երկրորդ աշխարհամարտի պատճառները:

2. Ե՞րբ և ո՞ր իրադարձությամբ սկսվեց Երկրորդ աշխարհամարտը: Քանի՞ փուլերի է բաժանվում Երկրորդ աշխարհամարտի պատմությունը: Նշե՛ք առաջին փուլի արդյունքները: Տարածքային ի՞նչ ձեռքբերումներ ունեցավ ԽՍՀՄ–ը:

3. Բացատրե՛ք «տարօրինակ պատերազմ» հասկացությունը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Ֆրանսիան չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ գերմանաֆաշիստական զորքերին:

§2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ՀԱԿԱՀԻՏԼԵՐՅԱՆ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը

Գերմանիան գաղտնի հարձակում էր նախապատրաստում ԽՍՀՄ–ի վրա: 1940 թ. դեկտեմբերին Հիտլերը հաստատել էր ***«Բարբարոսա պլանը»,*** որով նախատեսվում էր հանկարծակի, ամբողջ ճակատով հարձակում և մի քանի ամսվա ընթացքում Կարմիր բանակի արագ ջախջախում: ***1941 թ. հունիսի 22–ին*** Գերմանիայի և նրա դաշնակից երկրների զորքերը (5,5 մլն զինվորական) ներխուժեցին ԽՍՀՄ–ի տարածք: Այսպես սկսվեց Խորհրդային Միության ժողովուրդների ***Հայրենական մեծ պատերազմը,*** որը դարձավ Երկրորդ աշխարհամարտի բաղկացուցիչ մասը, իսկ Խորհրդա–գերմանական ճակատը՝ աշխարհամարտի գլխավոր ռազմաբեմը:

ԽՍՀՄ–ի վրա Գերմանիայի հարձակումով սկսվեց համաշխարհային պատերազմի երկրորդ փուլը:

Խորհրդային պետության ղեկավարությունը, հատկապես Ի. Ստալինը, հույս ուներ, որ Գերմանիայի հետ կնքված բարեկամության պայմանագիրը ժամանակ կընձեռի ԽՍՀՄ–ի պաշտպանունակությունն ամրապնդելու համար, սակայն նրա հաշվարկները չարդարացան: Երկրում իրականացված բռնաճնշումները և մասնավորապես Կարմիր բանակի հրամանատարական կազմի մեծ մասի ոչնչացումը, պատերազմին պատրաստ չլինելը ծանր հետևանքներ ունեցան: Գերմանական խմբավորման ուժերը կարճ ժամանակում գրավեցին մերձբալթյան երկրները, Բելոռուսիան, Ուկրաինան, Ռուսաստանի արևմտյան շրջանները, շրջափակեցին Լենինգրադն ու մոտեցան Մոսկվային:

Երկրի ռազմական, քաղաքական և տնտեսական կառավարումը կենտրոնացվեց ***1941 թ. հունիսի 30–ին*** ստեղծված ***Պաշտպանության պետական կոմիտեի*** ձեռքում, որի նախագահն էր ***Ի. Ստալինը:*** Սկսվեց խորհրդային պետության մարդկային և նյութական ամբողջ ներուժի կազմակերպումը պատերազմում հաղթելու նպատակով:

Հակահիտլերյան խմբավորման ստեղծումը

Եթե պատերազմի նախօրեին և առաջին փուլում ԽՍՀՄ–ը և Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան չկարողացան համագործակցության եզրեր գտնել, ապա խորհրդային երկրի վրա Գերմանիայի հարձակումը կտրուկ փոխեց ռազմաքաղաքական իրավիճակը:

Մեծ Բրիտանիան, ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ը մի կողմ դրեցին իրենց գաղափարական ու քաղաքական հակասությունները: Նրանց ղեկավարներ ***Ի. Ստալինի, Ու. Չերչիլի և Ֆ. Ռուզվելտի*** ջանքերով հնարավոր եղավ կարճ ժամանակամիջոցում միավորել երեք տերությունների ուժերը և ստեղծել հակահիտլերյան միություն: Այսպես՝ հենց ԽՍՀՄ–ի վրա հարձակման օրը՝ 1941 թ. հունիսի 22–ին, Մեծ Բրիտանիան հայտարարեց պատերազմում ԽՍՀՄ–ին աջակցելու մասին, իսկ հաջորդ օրը դեռևս չեզոք երկիր ԱՄՆ–ը խորհրդային պետությանը տնտեսական օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն հայտնեց: Այնուհետև կնքվեցին փոխադարձ օգնության վերաբերյալ երկկողմ ու եռակողմ համաձայնագրեր:

1941 թ. դեկտեմբերի 7–ին ճապոնական ծովային և օդային ուժերը հանկարծակի գրոհեցին Հավայան կղզիներում տեղակայված ամերիկյան ***Պիրլ Հարբոր*** խոշոր ռազմածովային հենակայանի վրա: ԱՄՆ–ը պատերազմ հայտարարեց Ճապոնիային,

իսկ վերջինիս դաշնակիցներ Գերմանիան և Իտալիան՝ ԱՄՆ–ին: Այսպես պատերազմի երկրորդ փուլում ԱՄՆ–ը պաշտոնապես դարձավ պատերազմի մասնակից:

Նույն ժամանակաշրջանում կարևոր իրադարձություն տեղի ունեցավ Խորհրդա–գերմանական ճակատում: Կարմիր բանակը ***1941 թ. դեկտեմբերի 6–ին Մոսկվայի*** մատույցներում անցավ հակահարձակման և մինչև հաջորդ տարվա գարուն ծանր հարվածներ հասցրեց ֆաշիստական բանակին՝ հետ շպրտելով երկրի մայրաքաղաքից 400 կմ հեռու: Դա Գերմանիայի առաջին խոշոր պարտությունն էր պատերազմում: Խորհրդային բանակի այս հաղթանակի շնորհիվ հօդս ցնդեց կայծակնային պատերազմի «Բարբարոսա պլանը»:

Մոսկվայի ճակատամարտում տարած հաղթանակը արագացրեց հակահիտլերյան խմբավորման ստեղծումը:

1942 թ. հունվարի 1–ին Վաշինգտոնում 26 երկրների ներկայացուցիչներ՝ ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ–ի գլխավորությամբ, ստորագրեցին Միավորված ազգերի հռչակագիրը: Նրանք հավաստեցին ֆաշիստական խմբավորման երկրների դեմ պատերազմում համագործակցելու և վերջիններիս հետ անջատ հաշտություն չկնքելու իրենց որոշումը:

Հակահիտլերյան միության տնտեսական ու ռազմական ուժերը համախմբելու համար ԽՍՀՄ–ը, ԱՄՆ–ը և Մեծ Բրիտանիան միմյանց հետ կնքեցին նոր պայմանագրեր: Ռազմական ու քաղաքական գործողությունների համաձայնեցման և հետպատերազմյան աշխարհակարգի սկզբունքների որոշման նպատակով պատերազմի ընթացքում տեղի ունեցան երեք տերությունների ղեկավարների մակարդակով երեք խորհրդաժողովներ: Չերչիլի դիպուկ բնութագրմամբ՝ Գերմանիայի դեմ պատերազմը «դասակարգային չէր». անկախ պետականության և ազատության շահը վեր դասվեց գաղափարախոսական շահերից:

Այսպիսով՝ պատերազմի երկրորդ փուլից սկսած՝ նախկին հակադիր երկու կենտրոնները համագործակցեցին ֆաշիզմի ջախջախման նպատակով:

Արմատական բեկումը պատերազմում

Աշխարհամարտի երրորդ շրջափուլում հակահիտլերյան խմբավորման Մեծ եռյակի զորքերը տարան կարևոր հաղթանակներ, որոնք արմատապես փոխեցին պատերազմի ընթացքը:

Դրանցից ամենախոշորը Խորհրդա–գերմանական ճակատում Կարմիր բանակի հաջողություններն էին: ***Ստալինգրադի*** *(1942 թ. նոյեմբերի 19 — 1943 թ. փետրվարի 2)* ճակատամարտում գերմանացիները կորցրին 22 դիվիզիա (330 հազար զինվոր), որով սկսվեց արմատական բեկում աշխարհամարտի ընթացքում: Իսկ բեկումն ավարտեց ***Կուրսկի*** ճակատամարտը *(1943 թ. հուլիսի 5 — օգոստոսի 23):* Ստալինգրադյան հաղթությունը մեծ նշանակություն ունեցավ նաև Հայաստանի ու հայ ժողովրդի համար. կանխվեց Գերմանիայի դաշնակից Թուրքիայի հարձակումը խորհրդային երկրի վրա:

Պատերազմի բոլոր ճակատներում հարձակողական նախաձեռնությունը և ռազմական գործողությունների իրականացման ռազմավարությունն անցավ ԽՍՀՄ–ի և նրա դաշնակիցների ձեռքը: Հակահիտլերյան միության երկրներն ապացուցեցին իրենց տնտեսական, քաղաքական և բարոյահոգեբանական առավելությունները:

Անգլո–ամերիկյան զորքերը 1943 թ. աշնանը մտան Իտալիա, Մուսսոլինիի վարչակազմը տապալվեց, իսկ նորաստեղծ կառավարությունը պատերազմ հայտարարեց Գերմանիային: Սակայն շուտով Իտալիա մտան գերմանական զորքերը, և երկիրը բաժանվեց երկու մասի՝ ֆաշիստական և ազատագրված:

Հրատապ խնդիր էր դարձել երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում ԱՄՆ–ի ու Մեծ Բրիտանիայի կողմից: Դա կթեթևացներ խորհրդային զորքերի վիճակը Արևելյան ճակատում, ուր ԽՍՀՄ–ը մարդկային ու նյութական ահռելի կորուստներ էր կրում՝ տանելով պատերազմի ամենածանր բեռը:

Երկրորդ ճակատի բացման հարցը ամենագլխավորն էր Իրանի մայրաքաղաք ***Թեհրանում*** 1943 թ. նոյեմբերի 28–ից մինչև դեկտեմբերի 1–ը կայացած խորհրդաժողովում: ԱՄՆ–ի նախագահ Ֆ. Ռուզվելտը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը և ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Ի. Ստալինը որոշեցին երկրորդ ճակատը բացել Ֆրանսիայի հյուսիսում 1944 թ. մայիսից ոչ ուշ: Երեք տերությունների ղեկավարները համաձայնվեցին, որ պատերազմից հետո պետք է վերականգնվի լեհական պետությունը, ինչպես նաև երաշխավորեցին Իրանի տարածքային անձեռնմխելիությունը: Դաշնակից երկրները համաձայնեցրին պատերազմի բոլոր ճակատներում ռազմական գործողությունների ժամկետները և ուղղությունները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ հիտլերյան Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ–ի վրա: Որո՞նք էին Կարմիր բանակի անհաջողությունների գլխավոր պատճառները: Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում պատերազմի երկրորդ շրջափուլը:

2.Ինչպե՞ս է ձևավորվել հակահիտլերյան միությունը: Ինչո՞ւ հնարավոր եղավ գաղափարաքաղաքական մինչ այդ հակամարտ երկրները՝ ԽՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիա, միավորվել մեկ խմբավորման մեջ:

3. Ե՞րբ և ո՞ր ճակատամարտերի շնորհիվ տեղի ունեցավ արմատական բեկում Երկրորդ աշխարհամարտի ընթացքում՝ հօգուտ հակահիտլերյան միության: Փորձե՛ք հիմնավորել, որ իրո՞ք ԽՍՀՄ–ի վրա էր ընկած պատերազմի ամենածանր բեռը:

4. Ի՞նչ կարևոր որոշումներ ընդունվեցին Թեհրանի խորհրդաժողովում:

§3. ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՀՐԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ, ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Ազատագրում գերմանական ֆաշիզմից

Պատերազմի չորրորդ փուլում ԽՍՀՄ–ը, ԱՄՆ–ը և Մեծ Բրիտանիան արևելքից, արևմուտքից ու հարավից վճռական հարձակումներով որոշեցին հասնել Գերմանիայի և նրա եվրոպական դաշնակիցների վերջնական և անվերապահ ջախջախմանը:

Վերջապես Ֆրանսիայի հյուսիսում բացվեց երկրորդ՝ Արևմտյան ճակատը: *1944 թ. հունիսի 6–ին* գեներալ ***Դ. Էյզենհաուերի*** գլխավորությամբ անգլո–ամերիկյան ուժերը ափ իջան Նորմանդիայում: Մեծ թափ ստացավ Դիմադրության շարժումը, և շուտով Փարիզը, ապա նաև ամբողջ Ֆրանսիան ազատագրվեց գերմանական բռնազավթումից:

Խորհրդային բանակը, շարունակելով նախորդ փուլում սկսված հաղթարշավը, 1944 թ. լիովին ազատագրեց սեփական երկրի տարածքը: Շուտով ԽՍՀՄ–ը ռազմական գործողությունները տեղափոխեց ֆաշիստների կողմից նվաճված պետությունների տարածք՝ վերջնական նպատակ ունենալով ոչնչացնելու ֆաշիզմը բուն Գերմանիայում: 1944 թ. աշնանից մինչև 1945 թ. գարուն ընկած ժամանակահատվածում Կարմիր բանակի խոշոր զորամիավորումները ականավոր հրամանատարներ ***Գ. Ժուկովի, Կ. Ռոկոսովսկու, Հ. Բաղրամյանի, Ա. Վասիլևսկու*** և ուրիշների գլխավորությամբ պարտության մատնեցին թշնամու հիմնական ուժերին ու մտան Գերմանիա: Մեկը մյուսի հետևից ազատագրվեցին Ռումինիան, Բուլղարիան, Հարավսլավիան, Լեհաստանը, Հունգարիան, Ավստրիայի և Չեխոսլովակիայի մեծ մասը:

Պատերազմի այս վճռական շրջանում տեղի ունեցավ Մեծ եռյակի հերթական հանդիպումը Ղրիմ թերակղզու ***Յալթա*** քաղաքում (1945 թ. փետրվարի 4–11–ը): Ստալինը, Ռուզվելտը և Չերչիլը պայմանավորվեցին, որ պատերազմը Եվրոպայում շարունակվելու է մինչև Գերմանիայի անվերապահ անձնատվությունը: Դաշնակիցները համաձայնության եկան ու որոշեցին Գերմանիայի հետպատերազմյան կառուցվածքի սկզբունքները. Գերմանիայի տարածքը, այդ թվում՝ մայրաքաղաք Բեռլինը, բաժանվելու էր չորս ռազմակալական գոտիների ԽՍՀՄ–ի, ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև: Ռազմատուգանքի չափը սահմանվեց 20 միլիարդ դոլար, որի մոտ կեսը ստանալու էր Խորհրդային Միությունը: Ազատագրված Եվրոպայի մասին հռչակագրով դաշնակից տերությունները հայտարարում էին, որ Եվրոպայում իրենց քաղաքականության նպատակն է վերացնել ֆաշիզմը և օժանդակել ազգերին սեփական ընտրությամբ ստեղծելու ժողովրդավարական կարգեր:

Յալթայում համաձայնություն կայացվեց, որ Գերմանիայի ջախջախումից 2–3 ամիս անց ԽՍՀՄ–ը կմիանա իր դաշնակիցներին ու պատերազմ կսկսի Ճապոնիայի դեմ:

Մոտեցել էր Գերմանիայի հատուցման պահը: Նա զրկվել էր իր բոլոր եվրոպական դաշնակիցներից: ***1945 թ. ապրիլի 16–ին*** սկսվեց ***Բեռլինի գրավման*** խորհրդային զորքերի վճռական հարձակումը: Այս ճակատամարտին մասնակցում էր նաև հայկական 89–րդ Թամանյան դիվիզիան՝ գեներալ Ն. Սաֆարյանի հրամանատարությամբ: Մայիսի 2–ին Բեռլինը հանձնվեց, իսկ մայիսի 8–ի գիշերը ֆաշիստական Գերմանիան ստորագրեց անվերապահ անձնատվության փաստաթուղթը: ***Մայիսի 9–ը*** ԽՍՀՄ–ում հայտարարվեց ***Մեծ հաղթանակի օր*** (այն մինչ օրս էլ նշվում է ԱՊՀ երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում):

Աշխարհամարտի ավարտը

Ռազմական գործողությունները Եվրոպայում դադարեցին, սակայն դրանք շարունակվում էին Հեռավոր Արևելքում և Խաղաղ օվկիանոսում: Մոտեցել էր նաև Ճապոնիայի հատուցման պահը:

Մինչ այդ Բեռլինի մոտ գտնվող ***Պոտսդամ*** քաղաքում տեղի ունեցավ Մեծ եռյակի հերթական հանդիպումը: Այն ընթացավ երկու փուլով՝ 1945 թ. հուլիսի 17–25–ը և հուլիսի 28–ից օգոստոսի 2–ը. դա կապված էր Մեծ Բրիտանիայում տեղի ունեցած ընտրությունների հետ: Խորհրդաժողովի մասնակիցների կազմն այս անգամ որոշ փոփոխություններ էր կրել: ԽՍՀՄ–ը նախկինի պես ներկայացնում էր Ստալինը, ԱՄՆ–ի հանկարծամահ եղած նախագահին փոխարինել էր ***Հ. Թրումանը,*** Մեծ Բրիտանիան սկզբից ներկայացնում էր Չերչիլը, իսկ ընդմիջումից հետո՝ նորանշանակ վարչապետ ***Կ. Էտլին:***

Դաշնակիցները վերահաստատեցին Գերմանիայի հետպատերազմյան կառուցվածքի երեք գլխավոր սկզբունքները՝ ապառազմականացում, նացիզմի լիովին վերացում և ժողովրդավարական կարգերի հաստատում: Երկրի տարածքը բաժանվեց չորս գոտիների: Գերմանական ֆաշիզմը հայտարարվեց օրենքից դուրս, իսկ պատերազմի գլխավոր հանցագործներին դատելու համար կյանքի կոչվեց միջազգային դատական ատյանը: Այն գործեց ***Նյուրնբերգում*** (1945 թ. նոյեմբերի 20–ից մինչև 1946 թ. հոկտեմբերի 1–ը): Պատերազմական հանցագործներից 12–ը դատապարտվեցին մահվան, մնացածները՝ ցմահ կամ տարբեր ժամկետներով բանտարկության:

Պոտսդամի խորհրդաժողովի որոշմամբ Գերմանիայի նախկին դաշնակիցների հետ հաշտության պայմանագրեր կնքելու նպատակով ստեղծվեց ԽՍՀՄ–ի, ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Չինաստանի արտաքին գործերի նախարարներից կազմված խորհուրդ: Վերականգնվեց Լեհաստան պետությունը, որին հանձնվեցին գերմանական որոշ տարածքներ:

Մինչև խորհրդաժողովի սկսվելը կուլիսներում ԽՍՀՄ արտգործժողկոմ Վ. Մոլոտովը և Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Է. Իդենը քննարկեցին Հայկական հարցը: Այն արծարծվեց նաև խորհրդաժողովի մի քանի նիստերի ընթացքում: Սակայն առավելապես Մեծ Բրիտանիայի ջանքերի շնորհիվ Թուրքիայի հանդեպ ԽՍՀՄ տարածքային պահանջների հարցը չլուծվեց, դրա դիմաց խորհրդային տերությունը ստացավ գերմանական Քյոնիգսբերգի մարզը: Պոտսդամում Ստալինը հավաստիացրեց, որ ԽՍՀՄ–ը պատերազմ կհայտարարի Ճապոնիային, իսկ դրա դիմաց ստանալու էր Հարավային Սախալինը և Կուրիլյան կղզիները:

Համաժողովի ավարտից մեկ շաբաթ անց խորհրդային բանակը ռազմական գործողություններ սկսեց Ճապոնիայի դեմ Չինաստանի հյուսիս–արևելքում: Կարճ ժամկետում ճապոնական մեկմիլիոնանոց ցամաքային բանակը ջախջախվեց: Դաշնակիցներն այդ ընթացքում հաղթանակներ տարան Խաղաղ օվկիանոսում և Հնդկաչին թերակղզում:

Ճապոնիային անձնատվության ստիպելու և աշխարհին իր նորաստեղծ զանգվածային ոչնչացման զենքը ցուցադրելու նպատակով ԱՄՆ–ը ***1945 թ. օգոստոսի 6–ին*** ատոմային ռումբ նետեց ճապոնական ***Հիրոսիմա*** քաղաքի, իսկ երեք օր անց՝ ***Նագասակի*** քաղաքի վրա: Դա միջուկային զենքի պատերազմական կիրառման առաջին դեպքն էր պատմության մեջ: Զոհվեցին հարյուր հազարավոր խաղաղ բնակիչներ:

Սակայն ատոմային զենքի կիրառումը չէ, որ ստիպեց Ճապոնիային անձնատուր լինել, այլ դաշնակիցների ռազմական հաջողություններն ու Խորհրդային Միության պատերազմի մեջ մտնելը: ***1945 թ. սեպտեմբերի 2–ին*** ստորագրվեց Ճապոնիայի ան-

վերապահ անձնատվության փաստաթուղթը: Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվեց:

Պատերազմի հետևանքները և արդյունքները

Երկրորդ աշխարհամարտը մի քանի անգամ ավելի սարսափելի և ողբերգական էր իր պատճառած վնասներով, քան Առաջինը: Պատերազմի մեջ էր ներգրավվել 72 պետություն, որտեղ ապրում էր երկրագնդի բնակչության մոտ 80%–ը՝ 1,7 մլրդ մարդ: Ռազմական գործողություններ էին ծավալվել 40 երկրների սահմաններում՝ ընդգրկելով մի հսկայական տարածք Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայի հյուսիսում, օվկիանոսներում ու ծովերում: Բանակ էր զորակոչվել 110 մլն մարդ: Զոհվեց մոտ 65 մլն մարդ, որի կեսը խաղաղ բնակչությունն էր: Միայն ԽՍՀՄ–ի մարդկային կորուստները կազմեցին 27 միլիոն: 12 միլիոն մարդ ժամանակավորապես տեղահանվել էր իր հայրենիքից:

Պատերազմի ընթացքում կիրառվեցին գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա ստեղծված զենքի նոր տեսակներ, այդ թվում՝ ատոմային ռումբը:

Պատերազմը լուրջ հետևանքներ ունեցավ նաև խաղաղ բնակչության համար: Ծանր, երկարացված աշխատանքային ռեժիմը, սննդի պակասը, ցուրտը, սովը, ռմբակոծությունները դարձել էին սովորական երևույթ:

Հատկապես մեծագույն ողբերգություն էր համակենտրոնացման ճամբարներում խաղաղ բնակչության կուտակումը և ոչնչացումը: Միայն գերմանացիների կողմից ստեղծվել հազարից ավելի նման ճամբար, ուր ոչնչացվեց կամ զոհվեց մոտ 12 մլն մարդ: Ամենուր խախտվում էին պատերազմելու միջազգայնորեն ընդունված նորմերը:

Աշխարհամարտն ունեցավ նաև ծանր հոգեբանական ազդեցություն: Միլիոնավոր մարդիկ կորցրին հավատը քաղաքակրթության առաջադիմական ապագայի հանդեպ:

Այդուհանդերձ, պատերազմն արձանագրեց նաև դրական արդյունքներ: Փոխվեց աշխարհաքաղաքական դասավորությունը երկրագնդի վրա, բացվեցին զարգացման լավատեսական հեռանկարներ:

Պատերազմն ակնառու ապացուցեց, որ նման կարգի ռազմական բախումը սպառնալիք է մարդկության գոյությանը, նրա ստեղծած քաղաքակրթական արժեքներին: Յալթայի խորհրդաժողովի համաձայն՝ միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման նպատակով ստեղծվեց նոր համաշխարհային կառույց՝ Միավորված ազգերի կազմակերպությունը:

Կարևոր արդյունքներից էր ռազմատենչ ֆաշիստական երկրների ջախջախումը, որոնց գոյությունն իսկ սպառնալիք էր քաղաքակրթությանը:

Պատերազմի ժամանակ սկիզբ առավ ու հետո շարունակվեց համաշխարհային գաղութային համակարգի փլուզման գործընթացը:

Կապիտալիստական աշխարհի ժողովրդավարական երկրները և սոցիալիստական ԽՍՀՄ–ը կարողացան կամք դրսևորել ու, համագործակցության լավագույն օրինակ ցուցադրելով, մեծագույն աղետից փրկել աշխարհի ազգերին և պետություններին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք պատերազմի չորրորդ փուլի հիմնական արդյունքները: Եվրոպայում ե՞րբ է բացվել երկրորդ ճակատ: Ե՞րբ է ավարտվել Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը:

2. Ի՞նչ կարևորագույն որոշումներ կայացրին Յալթայի ու Պոտսդամի խորհրդաժողովները: Ե՞րբ ավարտվեց Երկրորդ աշխարհամարտը:

3. Ներկայացրե՛ք պատերազմի գլխավոր հետևանքներն ու արդյունքները:

4. Պատերազմի մասնակից նշանավոր ի՞նչ զորահրամանատների կարող եք նշել: Նրանցից որևէ մեկի մասին գրե՛ք ռեֆերատ կամ զեկույց, ներկայացրե՛ք դասարանին:

Լրացուցիչ նյութեր
Պոտսդամի խորհրդաժողովը Հայկական հարցի մասին

ա) Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Իդենի և ԽՍՀՄ արտգործժողկոմ Մոլոտովի զրույցից. 1945 թ. հուլիսի 16, ժ. 18

«Իդենն ասում է, որ Լոնդոնում իր մոտ էին եկել թուրքերը:

Մոլոտովը պատասխանում է, որ տեղյակ է... 1921 թ. թուրքերն օգտվեցին խորհրդային պետության թուլությունից և նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մեծ մասը: Խորհրդային Միության հայերն իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառներից ելնելով էլ խորհրդային կառավարությունը բարձրացրեց օրինական կերպով Խորհրդային Միությանը պատկանած տարածքները վերադարձնելու հարցը...

Իդենը հայտարարում է, որ անգլիացիները երբեք անցյալում չեն լսել Թուրքիայի նկատմամբ Խորհրդային Միության տարածքային պահանջների մասին...

Մոլոտովն ասում է, որ այն տարածքը, որի մասին խոսք է գնում, թուրքերին չի պատկանում: Նրանք անարդարացի վարվեցին, այն խլելով Խորհրդային Միությունից...»:

բ) Վեցերորդ նիստի գրառումից, 1945 թ. հուլիսի 22, ժ. 17 անց 07 ր

Ստալինի առաջարկով ԽՍՀՄ–ի դիրքորոշումը խորհրդա–թուրքական սահմանի մասին պարզաբանում է արտգործժողկոմ Մոլոտովը.

«... Որոշ մասերում ԽՍՀՄ–ի և Թուրքիայի միջև եղած սահմանը մենք համարում ենք անարդարացի: Իսկապես, Խորհրդային Հայաստանից և Խորհրդային Վրաստանից Թուրքիան տարածքներ պոկեց. դա Կարսի, Արդվինի և Արդահանի մարզերի հայտնի տարածքն է: Ահա Թուրքիայի պոկած տարածքի քարտեզը (հանձնում է քարտեզը): Այդ պատճառով էլ ես հայտարարեցի, որ դաշնակցային պայմանագիր կնքելու համար պետք է կարգավորել Վրաստանից և Հայաստանից պոկած տարածքների հարցը՝ այդ տարածքը վերադարձնել նրանց...»:

Հարցեր և առաջադրանքներ լրացուցիչ նյութերի վերաբերյալ

1. Ինչո՞ւ Խորհրդային Միությունը բարձրացրեց Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջի հարցը: Արդյոք ճի՞շտ էր Մոլոտովը, ասելով, թե Թուրքիան պոկել է այդ տարածքները Հայաստանից ու Վրաստանից: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը:

ԲԱԺԻՆ Բ. ԱՇԽԱՐՀԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 7. ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԸ

§ 1. ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՐԿՈՒ ՀԱԿԱԴԻՐ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

Ուժերի նոր դասավորությունը

Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորվեց աշխարհաքաղաքական նոր իրավիճակ: Ասպարեզից ժամանակավորապես հեռացան Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան: Մեծ Բրիտանիան Արևմուտքի առաջատար տերության կարգավիճակը զիջեց ԱՄՆ–ին: Պատերազմի հետևանքով թուլացած Ֆրանսիան այլևս չէր կարող պահպանել նախկին՝ Վերսալ–Վաշինգտոնյան աշխարհակարգում ունեցած իր դերը:

Հաղթող պետություններից գերակշիռ դիրք ստացան ***ԽՍՀՄ–ը և ԱՄՆ–ը,*** որոնք դարձան համաշխարհային քաղաքականության նոր կենտրոններ: Եվրոպակենտրոն աշխարհը մնաց անցյալում, ավելին՝ Եվրոպան ինքը դարձավ ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի ազդեցության ոլորտների բաժանման տարածաշրջան:

Ֆաշիզմի նկատմամբ տարած հաղթության մեջ ունեցած իր ծանրակշիռ ներդրման շնորհիվ աննախադեպ աճել էր ԽՍՀՄ–ի հեղինակությունը: Ընդլայնվել էր նրա ազդեցության ոլորտը ոչ միայն Եվրոպայում, այլ նաև Ասիայում: Խորհրդային բանակի կողմից ազատագրված եվրոպական երկրներում շատ արագ ձևավորվեցին խորհրդամետ վարչակարգեր, իսկ մյուս երկրներում մեծ թափ էր հավաքել կոմունիստական շարժումը: Կար իրական հնարավորություն, որ այդ երկրներում էլ կհաստատվեն սոցիալիստական վարչակարգեր: Խորհրդային Միության նկատմամբ աճել էր եվրոպացիների հետաքրքրությունը, իսկ սոցիալիզմի մասին նրանց պատկերացումները խորհրդանշվում էին քաղաքակրթական կարևոր արժեքներով՝ ազատություն, խաղաղություն, սոցիալական արդարություն, ստեղծագործ աշխատանք:

ԽՍՀՄ ղեկավար Ի. Ստալինը օգտագործեց այս կացությունը՝ նպաստելով Եվրոպայում և Ասիայում սոցիալիստական նոր պետությունների առաջացմանը:

Արևմտյան կապիտալիստական աշխարհում անվիճելի առաջատար դարձած ԱՄՆ–ը, որը դեռ նախորդ շրջանից համաշխարհային գերիշխանության հասնելու ծրագիր էր հետապնդում, չէր կարող համակերպվել ԽՍՀՄ–ի քաղաքական ազդեցության ծավալման հետ: Որպես հետևանք՝ ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ը չկարողացան պահպանել պատերազմի տարիներին ձևավորված համագործակցային հարաբերությունները: Կրկին առաջին տեղ մղվեցին գաղափարախոսական և քաղաքական հակասությունները: Դրանց խորքում ընկած էին ***երկու գերտերությունների համաշխարհային գերիշխանության հասնելու ձգտումները:***

Սառը պատերազմի սկիզբը

Աշխարհամարտի ավարտական փուլում Մեծ եռյակի միջև դրսևորված շահերի բախումը կարճ ժամանակ անց վերաճեց բացահայտ առճակատման: ԱՄՆ–ը և նրա դաշնակից Մեծ Բրիտանիան փորձեցին օգտագործել միջուկային զենքի ամերիկյան

մենաշնորհը և ԽՍՀՄ–ի հետ հարաբերություններում անցան նաև սպառնալիքների կիրառման:

Դրա ցայտուն դրսևորումը եղավ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ ***Չերչիլի*** ելույթը ***Ֆուլտոն*** քաղաքում ***1946 թ. մարտի 5–ին***: Նրա ճառն ընդունված է անվանել ***սառը պատերազմի սկիզբ:***

ԱՄՆ–ի նախագահ Հ. Թրումանի հայրենի քաղաքում ունեցած իր ելույթում Չերչիլը հայտարարեց, որ Խորհրդային Միությունը փորձում է աշխարհում անսահմանափակ կերպով տարածել իր ռազմական ուժերը և գաղափարական–քաղաքական դրույթները: Որպես ապացույց՝ նա նշեց, որ Եվրոպայի վրա իջել է երկաթե վարագույր, իսկ Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի պետությունները և ժողովուրդներն ընկել են «Մոսկվայի վերահսկողության տակ»: ԱՄՆ–ից ու Ազգերի բրիտանական համագործակցության տարածքից բացի, մյուս տեղերում կոմունիստական կուսակցությունները աճող սպառնալիք են «քրիստոնեական քաղաքակրթությանը»: Ուժերի հավասարակշռության «նախկին դրույթը» հնացել է, անհրաժեշտ է միավորել ամբողջ անգլոսաքսոնական աշխարհի ուժերը: Չերչիլն առաջարկում էր ԽՍՀՄ–ի դեմ օգտագործել ատոմային զենքի սպառնալիքը, նույնիսկ կիրառել այն:

ԱՄՆ–ի նախագահ Թրումանը 1947 թ. փետրվարին Կոնգրեսին հղված իր ուղերձում ձևակերպեց Եվրոպան խորհրդային ծավալապաշտությունից փրկելու ծրագիր: Նախատեսվում էր մեծածավալ տնտեսական օգնություն տրամադրել եվրոպական երկրներին և ստեղծել արևմտյան երկրների ռազմաքաղաքական խմբավորում ԱՄՆ–ի հովանու ներքո: ԽՍՀՄ–ի սահմանագծի երկայնքով տեղակայվելու էին ամերիկյան ռազմակայաններ, անհրաժեշտության դեպքում կկիրառվեին նաև զինված ուժեր՝ ընդդեմ ԽՍՀՄ–ի ու նրա դաշնակիցների: ***Թրումանի «դրույթը» (դոկտրինան)*** երկու գլխավոր նպատակ էր հետապնդում՝ չթույլատրել ԽՍՀՄ–ի և նրա գաղափարախոսության հետագա տարածումը, իսկ հնարավորության դեպքում նաև ԽՍՀՄ–ին հետ շպրտել իր ազդեցության նախկին սահմանները:

ԱՄՆ–ի արտաքին քաղաքական նոր կուրսի գործադրման առաջին քայլը եղավ ***Մարշալի պլանը,*** որով 1948–1951 թթ. 12,4 մլրդ դոլար տրամադրվեց Արևմտյան Եվրոպայի երկրներին: Դրա շնորհիվ կտրուկ աճեց ԱՄՆ–ի ազդեցությունը այդ երկրներում:

Այսպես՝ ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի գաղափարախոսական ու քաղաքական կուրսերի հակադրվածությունը, երկու տերությունների առճակատումը պայմանավորեցին հետպատերազմյան ժամանակաշրջանի աշխարհակարգի ձևավորումը, միջազգային հարաբերությունների լարված, հաճախ թշնամական բնույթը:

Սառը պատերազմը, երկու խմբավորումների և երկու գերտերությունների միջև պայքարը տեղի էր ունենում հասարակական կյանքի բոլոր ուղղություններով: Դաժան մրցակցությունը և առճակատումն ընդգրկել էր ռազմական, տնտեսական, քաղաքական, մշակութային, գաղափարախոսական և կրոնական ոլորտները:

Սառը պատերազմը որոշակիորեն արգելակեց մջջազգային ֆինանսական և առևտրական կապերի զարգացումը: Համաշխարհային քիչ թե շատ ձևավորված միասնական շուկան երկփեղկվեց, առաջացան կապիտալիզմի և սոցիալիզմի միջազգային շուկաները: Արևմուտքի երկրները խոչընդոտում էին առաջավոր տեխնոլոգիաների արտահանումը սոցիալիստական երկրներ և ամենից առաջ Խորհրդային Միություն: Այս հանգամանքը էապես նպաստեց, որ սոցերկրների տնտեսությունն իր զարգացման մակարդակով մշտապես հետ մնա Արևմուտքի զարգացած երկրների տնտեսությունից:

Երկու հակադիր համակարգերի ու գերտերությունների միջև առավել սուր բնույթ ընդունեց գաղափարախոսական պայքարը: Քարոզչական հակամարտության

մեջ կողմերը ճգնում էին ցույց տալ իրենց կենսակերպի, արժեքային համակարգի առաջադիմականությունը և առավելությունները, իսկ հակառակորդ կողմի՝ հետամնացությունն ու կործանման դատապարտված լինելը:

Գաղափարախոսական հակամարտությունը դրսևորվեց նաև գերտերությունների ներքին կյանքում: Այլախոհության ճնշումը, «հակապետական» գործունեության համար հազարավոր մարդկանց հալածանքների և պատժի ենթարկելը դարձան սովորական երևույթ:

Ահա թե ինչո՞ւ համաշխարհային պատմության ***1946 թ. մինչև 1980–ական թթ. վերջերն ընկած դարաշրջանը բնութագրվել է որպես սառը պատերազմ:***

Արևմտյան և Արևելյան խմբավորումների ձևավորումը

ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ը աշխարհի երկրների ու ժողովուրդների առջև դնում էին զարգացման երկու հեռանկար՝ կապիտալիստական կամ սոցիալիստական: Գերտերությունները փորձում էին ժողովրդավարության, ազատության, հավասարության, մարդու իրավունքների պաշտպանության կամ սոցիալիզմի հաստատման քողի տակ հասնել համաշխարհային գերիշխանության: Այդ նպատակին հետամուտ՝ նրանք օգտագործում էին իրենց ողջ ներուժն ու հնարավորությունները:

ԱՄՆ–ը հայտարարում էր, որ պայքարում է «ազատ աշխարհը» կոմունիզմի վտանգից փրկելու համար: Իր հերթին Խորհրդային Միությունը հավաստիացնում էր, որ պայքարում է իմպերիալիզմի (կայսերապաշտության) շահագործումից աշխարհի ժողովուրդներին ու երկրներին ազատագրելու և ամբողջ աշխարհում կոմունիզմի (համայնավարության) հաղթանակին հասնելու համար:

Սառը պատերազմի ազդարարումից հետո պարզ դարձավ, որ աշխարհը բաժանվում է երկու բևեռների: Աստիճանաբար ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի շուրջ ձևավորվեցին միմյանց հակադիր երկու խմբավորումներ: Այս առումով շրջադարձային էր 1949 թվականը:

Ապրիլի 4–ին Վաշինգտոնում տասներկու երկրներ ստորագրեցին ***Հյուսիսատլանտյան դաշինքի*** (ՆԱՏՕ) ստեղծման պայմանագիրը: Ստեղծման պահին ՆԱՏՕ–ի կազմ մտան ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Դանիան, Նորվեգիան, Նիդերլանդները, Լյուքսեմբուրգը, Պորտուգալիան, Իսլանդիան և Կանադան: Երեք տարի անց նրա անդամ դարձան Հունաստանը և Թուրքիան, իսկ 1955 թ.՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը (Արևմտյան Գերմանիա): Ռազմաքաղաքական այս խմբավորումը պետք է ապահովեր Արևմուտքի երկրների անվտանգությունը խորհրդային սպառնալիքից: Անդամ երկրները վտանգի դեպքում ռազմական օգնություն պետք է ցուցաբերեին միմյանց:

Զուգահեռաբար ընթանում էր սոցիալիստական աշխարհի ձևավորման ու ԽՍՀՄ–ի շուրջ համախմբման գործընթացը: Իրողություն դարձավ ***սոցիալիզմի համաշխարհային համակարգը:*** 1945–1948 թթ. սոցիալիստական պետություններ դարձան Հարավսլավիան, Հյուսիսային Վիետնամը, Ալբանիան, Բուլղարիան, Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան, Չեխոսլովակիան, Հյուսիսային Կորեան: ՆԱՏՕ–ի ստեղծման տարում նրանց միացան Չինաստանը և Արևելյան Գերմանիան: Մինչ այդ արևմտյան աշխարհին էր հարել Արևմտյան Գերմանիան (ամերիկյան, անգլիական և ֆրանսիական գոտիների միավորմամբ):

Նույն՝ 1949 թ. Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը տնտեսապես միավորվեց ***Տնտեսական փոխօգնության խորհուրդ (ՏՓԽ)*** կոչվող կազմակերպության մեջ: Երեք տարվա ընթացքում ԽՍՀՄ–ը անդամ երկրներին տրամադրեց 3 մլրդ դոլարի արտոնյալ վարկ:

Այսպիսով՝ 1949 թ. աշխարհը պառակտվեց ոչ միայն ռազմաքաղաքական, այլ նաև տնտեսական առումով: Արևմուտք–Արևելք բաժանումը դարձավ նոր աշխարհակարգի բնութագրիչը:

ԽՍՀՄ–ի շուրջ արևելաեվրոպական երկրների ռազմաքաղաքական խմբավորումը պաշտոնապես ձևակերպվեց միայն ***1955 թ. մայիսի 14–ին,*** երբ ***Վարշավայում*** ԽՍՀՄ–ը, Ալբանիան, Բուլղարիան, ԳԺՀ–ն (Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետություն), Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան և Չեխոսլովակիան ստորագրեցին պաշտպանական դաշինքի ստեղծման վերաբերյալ պայմանագիր: Դա նաև պատասխան քայլ էր Արևմուտքին՝ ՆԱՏՕ–ին Գերմանիայի Դաշնային Հանրապետության անդամագրվելու դիմաց:

Այսպես ավարտվեց աշխարհի բաժանումը երկու բևեռների՝ կապիտալիստական և սոցիալիստական, իսկ գերտերությունների պայքարը համաշխարհային տիրապետության համար թևակոխեց նոր փուլ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ն էր ուժերի հարաբերակցությունը և աշխարհաքաղաքական դասավորությունը Երկրորդ աշխարհամարտից հետո:
2. Վերհանե՛ք հետպատերազմյան շրջանում դաշնակից երկրների՝ ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ–ի միջև հարաբերությունների սրման պատճառները: Ի՞նչ է սառը պատերազմը: Ե՞րբ սկսվեց այն, ո՞ր ասպարեզներում դրսևորվեց:
3. Ի՞նչ էր իրենից ներկայացնում Մարշալի պլանը, ո՞րն էր դրա գլխավոր նպատակը: Ինչո՞ւ Արևելյան Եվրոպայի երկրները հայտնվեցին Խորհրդային Միության ազդեցության ոլորտում:
4. Ներկայացրե՛ք Արևմտյան և Արևելյան խմբավորումների ձևավորման ընթացքը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՆԱՏՕ և Վարշավյան դաշինք կառույցները ներկայացրե՛ք գծապատկերով:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ
Չերչիլի 1946 թ. մարտի 5–ի ճառը ԱՄՆ–ի Ֆուլտոն քաղաքում

«Շտետտինից՝ Բալթիկայում, մինչև Տրիեստը՝ Ադրիատիկում, երկաթյա վարագույր է իջել մայրցամաքի վրա: Այդ գծից այն կողմ պահվում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հնագույն պետությունների բոլոր գանձերը: Վարշավան, Բեռլինը, Պրահան, Վիեննան, Բուդապեշտը, Բելգրադը, Բուխարեստը, Սոֆիան՝ այս բոլոր հայտնի քաղաքները և դրանց շրջանների բնակչությունը գտնվում են խորհրդային գոտում և ենթարկվում են այս կամ այն ձևով ոչ միայն խորհրդային ազդեցությանը, այլ նաև Մոսկվայի զգալիորեն ուժեղացող վերահսկողությանը… Բացառությամբ Ազգերի բրիտանական համագործակցության և ԱՄՆ–ի, ուր կոմունիզմը գտնվում է սաղմնային վիճակում, կոմկուսները կամ հինգերորդ շարասյուները գնալով մեծացող սպառնալիք և վտանգ են ներկայացնում քրիստոնեական քաղաքակրթության համար…

Մենք չենք կարող թույլ տալ մեզ հենվելու ուժերի աննշան գերակշռության վրա, դրանով իսկ ստեղծելով ուժերը փորձելու գայթակղություն:

Եթե Ազգերի համագործակցության անգլախոս բնակչությանը ավելացնենք ԱՄՆ–ը և հաշվի առնենք, թե ինչ կնշանակի նման համագործակցությունը ծովում, օդում, գիտության և արդյունաբերության բնագավառում, ապա գոյություն չի ունենա ուժերի ոչ մի երերուն և վտանգավոր հարաբերակցություն»:

Հարցեր լրացուցիչ նյութի վերաբերյալ

1. Ինչո՞ւ Չերչիլն իր ճառում նման մտքեր արտահայտեց: Մեր օրերում կա արդյո՞ք սառը պատերազմի վերսկսման վտանգ. հիմնավորեք ձեր պատասխանը:

§ 2. ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ «ՏԱՔ» ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սպառազինությունների մրցավազքը

Սառը պատերազմի ժամանակաշրջանի բնորոշ կողմերից էր զենքի նորագույն տեսակների, հատկապես զանգվածային ոչնչացման զենքի, պատերազմի վարման եղանակների կատարելագործման մրցավազքը:

ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ը տարեկան միլիարդավոր դոլարներ էին ծախսում սպառազինությունների ասպարեզում հակառակորդին գերազանցելու նպատակով: 1949 թ. ԽՍՀՄ–ը նույնպես ստեղծեց ատոմային զենք, իսկ չորս տարի անց փորձարկեց աշխարհում առաջին ջերմամիջուկային ռումբը: ԱՄՆ–ում ստեղծվեցին ռազմավարական ռմբակոծիչներ, իսկ ի պատասխան դրան՝ ԽՍՀՄ–ում՝ միջմայրցամաքային հրթիռներ:

Տիեզերքի նվաճումից հետո մրցավազքը տեղափոխվեց նաև այս ոլորտ: Հետագայում միջուկային զենքին տիրապետող տերություններ դարձան նաև Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Չինաստանը (հետսառըպատերազմյան շրջանում՝ նաև Իսրայելը, Հնդկաստանը, Պակիստանը): Ինչպես այն ժամանակներում, այնպես էլ մեր օրերում մարդկության գլխին դեռ կախված է միջուկային պատերազմի և դրա հետևանքով համաշխարհային քաղաքակրթության վերացման վտանգը:

ԱՄՆ–ն, ապավինելով իր տնտեսական ավելի մեծ հզորությանը, ԽՍՀՄ–ին ներքաշեց սպառազինությունների մրցավազքի մեջ, որպեսզի տնտեսապես հյուծի իր հակառակորդին: Այդ մրցավազքը մեծ վնաս էր հասցնում ԽՍՀՄ–ի տնտեսությանը, ինչն էլ դարձավ խորհրդային գերտերության կործանման գլխավոր պատճառներից մեկը:

Ճիշտ է, միջուկային զենքը սպառնալիք էր ողջ մարդկությանը, սակայն դրա առկայությունը երկու գերտերություններին հետ պահեց միմյանց դեմ պատերազմելու ծրագրերից: Սակայն միջուկային զենքի կիրառման սպառնալիքը, տնտեսական, քաղաքական և հոգևոր–մշակութային առճակատումը մշտական վտանգ էին ներկայացնում միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը:

Տարածաշրջանային և տեղական պատերազմները

Երկու գերտերությունները՝ ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ը սառը պատերազմի տարիներին կարողացան խուսափել միմյանց դեմ պատերազմելուց: Նրանց միջև ռազմական հակամարտությունը դրսևորվեց նաև տարածաշրջանային և տեղական պատերազմների միջոցով, որոնք ուղեկցվում էին երկու խմբավորումների ռազմական կամ քաղաքական միջամտությամբ այդ հակամարտություններին: ԽՍՀՄ–ը և ԱՄՆ–ը հաճախ գործում էին կուլիսների հետևում, սակայն համընդհանուր բախման վտանգը մշտապես առկա էր այս տարիներին:

Վիետնամական պատերազմները (1946–1954 թթ., 1964–1973 թթ.): Ֆրանսիական գաղութարարները Վիետնամը գրավել էին դեռ XIX դարի երկրորդ կեսին, որը Լաոսի և Կամբոջայի հետ միասին մտնում էր Հնդկաչինի Միության մեջ: Երկրորդ աշխարհամարտի ավարտին Վիետնամը ազատագրվեց և 1945թ. սեպտեմբերի 2–ին հռչակեց իր անկախությունը: Ստեղծվեց Վիետնամի ժողովրդավարական Հանրապետությունը: Ֆրանսիան չհաշտվեց Վիետնամը կորցնելու մտքի հետ և հաջորդ տարի ագրեսիա սկսեց նրա դեմ: Վիետնամին հաջողվեց պահպանել իր անկախությունը: Ֆրանսիական զորքերը ծանր պարտություն կրեցին: 1954թ. Ժնևում ստորագրված պայմանագրով ճանաչվեց ՎԺՀ–ի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:

Սակայն դրանից հետո էլ խաղաղություն չհաստատվեց Վիետնամում: 1964թ. ԱՄՆ–ը լայնածավալ ռազմական գործողություններ ձեռնարկեց Հյուսիսային Վիետնամի դեմ: ՎԺՀ–ին ռազմական օգնություն էին ցույց տալիս ԽՍՀՄ–ը, Չինաստանը և մյուս սոցիալիստական երկրները: ԱՄՆ–ին չհաջողվեց հասնել հաղթանակի: Տասը տարի տևած պատերազմի ընթացքում զոհվեց 1 մլն մարդ, այդ թվում՝ 58 հազար ամերիկացի զինվոր: 1973 թ. կնքվեց զինադադար, ռազմական գործողությունները դադարեցվեցին, իսկ երկու տարի անց ԱՄՆ–ը իր զորքերը դուրս բերեց Վիետնամից: 1976թ. իրագործվեց Հյուսիսային և Հարավային Վիետնամի միավորումը:

Կորեական պատերազմը (1950–1953 թթ.): Կորեան բռնակցվել էր Ճապոնիային դեռևս XX դ. սկզբին: 1945թ. օգոստոսին խորհրդային զորքերը մտան Հյուսիսային Կորեա, իսկ սեպտեմբերին ամերիկյան զորքերը՝ Հարավային Կորեա: Երկու շրջանների միջև սահմանաբաժան ընդունվեց 38–րդ զուգահեռականը: Դրանով դրվեց միասնական Կորեայի բաժանման հիմքը: 1948թ. օգոստոսին Հարավային Կորեան հռչակվեց Կորեական Հանրապետություն: Իսկ մոտ մեկ ամիս անց՝ սեպտեմբերին, Հյուսիսային Կորեայում ձևավորվեց Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Հանրապետությունը: Այստեղ իշխանությունն իր ձեռքում կենտրո-նացրեց Աշխատանքային (կոմունիստական) կուսակցությունը՝ Կիմ Իր Սենի ղեկավարությամբ: ԿԺԴՀ–ն ընտրեց զարգացման սոցիալիստական ուղին, իսկ Կորեայի Հանրապետությունը նախընտրեց արևմտյան մոդելը:

1950 թ. պատերազմ սկսվեց երկու Կորեաների մջև: Այն ցույց տվեց, որ նման բախումը կարող է վերածվել երկու գերտերությունների բախման: ԱՄՆ–ը նույնիսկ փորձեց կիրառել ատոմային զենք, սակայն վախեցավ ԽՍՀՄ–ի համապատասխան քայլից: ԽՍՀՄ–ը, Չինաստանը և մյուս սոցիալիստական երկրները օգնեցին Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությանը: Պատերազմի արդյունքում Կորեան մնաց բաժանված երկու պետության՝ սոցիալիստական ԿԺԴՀ–ի և կապիտալիստա-կան Հարավային Կորեայի:

Այսպիսով Վիետնամը կարողացավ միավորվել, իսկ Կորեան մինչ օրս էլ երկատ-ված վիճակում է:

Արաբա–իսրայելական պատերազմները: 1947թ. նոյեմբերի 29–ին ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեան ընդունեց որոշում Պաղեստինի բաժանման և հրեական ու արաբական պետությունների կազմավորման մասին: Երուսաղեմը և Բեթղեհեմը հայտարարվեցին միջազգային գոտի: Հրեաներն արտահայտեցին իրենց համաձայնությունը ՄԱԿ–ի որոշմանը, իսկ արաբները մերժեցին այդ որոշումը: 1948թ. մայիսի 14–ին պաշտոնապես հռչակվեց անկախ հրեական պետության ստեղծումը: Այդ պահին հրեաների թիվը Իսրայելում հասնում էր 650 հազարի: Արաբական երկրները պատերազմական գործողություններ սկսեցին Իսրայելի դեմ: Այսպես առաջացավ Պաղեստինի հիմնախնդիրը, որը դարձավ արաբա–իսրայելական առճակատման և պատերազմների պատճառը:

Արաբա–իսրայելական առաջին պատերազմն սկսվեց 1948թ. մայիսին: Անդրհորդանանի, Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի և Սաուդյան Արաբիայի բանակները ներխուժեցին Իսրայել: Իսրայելին հաջողվեց ոչ միայն պահպանել իր անկախությունը, այլև գրավել լրացուցիչ տարածքներ:

1967թ. հունիսին բռնկվեց արաբա–իսրայելական երրորդ պատերազմը, որն ամենաարյունահեղ ռազմական բախումն էր կողմերի միջև: Պատերազմին մասնակից արաբական երեք երկրները՝ Եգիպտոսը, Սիրիան և Հորդանանը, պարտություն կրեցին: Իսրայելը գրավեց Սինայի թերակղզին, Գոլանի բարձունքները և Հորդանան գետի արևմտյան ափը:

Պաղեստինցիները զենքը ձեռքին շարունակեցին պայքարել իրենց իրավունքների համար: 1960–ական թվականներին ստեղծվեց Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը (ՊԱԿ)՝ Յասիր Արաֆաթի գլխավորությամբ: Երրորդ պատերազմից հետո արաբա–իսրայելյան հակամարտության հիմնական բովանդակությունը կազմեցին հետևյալ պահանջները՝ գրաված տարածքների ազատագրում, 1,5 մլն արաբ փախստականների վերադարձ իրենց բնակավայրը, Պաղեստին պետության ստեղծում և Իսրայելի անվտանգ գոյության ապահովում: Հետագայում այդ խնդրի իրագործման ճանապարհին եղան ևս երկու պատերազմներ՝ 1973թ. և 1982թ.:

Հակամարտությանը մասնակից բոլոր կողմերն էլ գիտակցում են, որ հիմնախնդիրը հնարավոր է լուծել միայն բանակցությունների միջոցով: Սակայն պաղեստինաիսրայելական հարաբերությունների կարգավորման ճանապարհին կան լուրջ դժվարություններ: Այսպիսով՝ ավելի քան կես դար առաջ սկսված արաբա–իսրայելական հակամարտությունը դեռևս չի լուծվել: Արաբներն ու իսրայելցիները XXI դար են մտել այդ ծանր բեռն իրենց ուսերին:

Սառը պատերազմի շրջանում տարածաշրջանային խոշոր հակամարտություն է առաջացավ և մինչ օրս պահպանվում է նաև **Հնդկաստանի և Պակիստանի** միջև: Մեծ Բրիտանիան նախքան Հնդկաստանի անկախության ճանաչելը երկիրը բաժանեց երկու մասի՝ Հնդկաստան և Պակիստան: Սահմանազատման հիմքում դրվեց կրոնական հատկանիշը: Հնդիկներով բնակեցված տարածքները կազմեցին Հնդկաստանը: Գլխավորապես մուսուլմաններով բնակեցված Հնդկաստանի արևելյան և արևմտյան նահանգները միավորվեցին Պակիստան պետության մեջ:

Սակայն Հնդկական ենթամայրցամաքի՝ ըստ կրոնական հատկանիշի բաժանումն առաջացրեց մեծ բարդություններ: Կատարվեց բնակչության տեղափոխություն Հնդկաստանից Պակիստան և հակառակը: Սկսվեցին արյունահեղ ընդհարումներ հնդիկների և մուսուլմանների միջև, որին զոհ դարձան միլիոնավոր մարդիկ: Բաժանումից հետո Հնդկաստանում մնացին մոտ 60 մլն մուսուլմաններ, որոնք լարվածության մշտական աղբյուր են Հնդկաստանի ներքաղաքական կյանքում:

Այս երկրների միջև 1947թ. ի վեր հակամարտության գլխավոր առարկա է դարձել Քաշմիրի շրջանը: Այն մտնում է Հնդկաստանի կազմի մեջ, սակայն դա վիճարկվում է Պակիստանի կողմից: 1965թ. օգոստոսին պատերազմական գործողություններ սկսվեցին Հնդկաստանի և Պակիստանի միջև՝ վերջինիս նախահարձակ լինելու պատճառով: Խորհրդային Միությունը հանդես եկավ միջնորդությամբ և 1966թ. հաջողվեց հասնել համաձայնության ու պատերազմական գործողությունների դադարեցման: 1971թ. Արևելյան Պակիստանն անջատվեց և հռչակվեց որպես Բանգլադեշ անկախ պետություն:

Աֆղանական պատերազմը (1979–1989 թթ.): Սառը պատերազմի շրջանի արյունալի հակամարտություններից մեկը ծավալվեց Միջին Արևելքում՝ Աֆղանստանում: Երկրում 1973 թ. հռչակվեց հանրապետություն, իսկ հինգ տարի անց ստեղծվեց Աֆղանստանի Ժողովրդավարական Հանրապետությունը: Նոր իշխանությունը նպատակ դրեց երկրում կառուցել սոցիալիստական հասարակություն՝ ԽՍՀՄ–ի օրինակով: Սակայն ներքին դրությունն անկայուն էր, տեղի էին ունենում իշխանափոխություններ: Գործին միջամտեց Խորհրդային Մշությունը և 1979 թ. զորքեր մտցրեց Աֆղանստան՝ դեսանտ իջեցնելով մայրաքաղաք Քաբուլ: Այս ժամանակից սկսած Աֆղանստանը հայտնվեց քաղաքացիական պատերազմի և արտաքին ռազմական միջամտության իրավիճակում: Երկու գերտերությունների շահերը բախվեցին այս տարածաշրջանում,

ճիշտ է, ԱՄՆ–ը դեռ բացահայտ չէր միջամտում հակամարտությանը: Անհաջողություն կրելով՝ 1989 թ. ԽՍՀՄ–ը իր զորքերը դուրս բերեց Աֆղանստանից: Սակայն երկրում քաղաքացիական պատերազմը և օտարերկրյա միջամտությունը շարունակվում է մինչ օրս:

Արդի փուլի երկարատև ռազմական բախումներից էր **իրանա–իրաքյան պատերազմը (1980–1988 թթ.):** Պատերազմն սկսվեց 1980թ. սեպտեմբերին: Իրաքյան բանակն անցավ հարձակման, գրավեց երկու երկրների միջև վաղուց վեճի առարկա դարձած Շատ ալ–Արաբի որոշ տարածքներ և ներխուժեց Իրան: Իրաքի նպատակն էր նաև կանխել Իրանի իսլամական հեղափոխության ներթափանցումն Իրաք: Պատերազմի սկզբնական փուլում հաջողությունն ուղեկցում էր իրաքյան բանակին, որը, գրավեց զգալի տարածքներ: Սակայն 1981թ. Իրանը կարողացավ կասեցնել իրաքյան զորքերի առաջխաղացումը և անցնելով հարձակման իրաքյան զորքերը դուրս մղեց Իրանից, իսկ ապա նաև պատերազմական գործողությունները տեղափոխեց Իրաքի տարածք:

Պատերազմն ընդունեց դիրքային բնույթ, և երկու կողմերն էլ արյունաքամ էին լինում՝ կրելով մարդկային ու նյութական հսկայական կորուստներ: 1988թ. հուլիսին ութ տարի տևած պատերազմն ավարտվեց: Կողմերից ոչ մեկն էլ չհասավ իր առջև դրված քաղաքական նպատակներին:

Ընդհանուր առմամբ՝ Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո մինչև 1982 թ. աշխարհում տեղի են ունեցել 255 պատերազմներ և ռազմական բախումներ: Դրանցից շատերը կարող էին դառնալ երրորդ աշխարհամարտի նախերգանք, քանի որ այդ ռազմական բախումներին միջամտում էին ՆԱՏՕ–ն և Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը:

Այսպիսով՝ սառը պատերազմի տարիներին համաշխարհային քաղաքակրթությունը գտնվում էր երրորդ աշխարհամարտի կամ միջուկային պատերազմի սպառնալիքի տակ կամ պատկերավոր՝ «հավասարակշռության պահպանում պատերազմի եզրին» վիճակում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է սպառազինությունների մրցավազքը: Վեր հանե՛ք դրա հետևանքները:
2. Ի՞նչ վերաբերմունք ունեին ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ը տեղական պատերազմներին, ո՞րն էր դրանց գլխավոր վտանգը:
3. Ներկայացրե՛ք սառը պատերազմի շրջանում տեղի ունեցած տարածաշրջանային և տեղական պատերազմների պատճառները, ընթացքը և հետևանքները:

ԳԼՈՒԽ 8. ԵՐԵՔ ԱՇԽԱՐՀ

§ 1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Քաղաքական զարգացումներն ու տեղաշարժերը

20–րդ դարի երկրորդ կեսին Արևմտյան երկրների քաղաքական զարգացման շրջանակներում առկա էր երկու հիմնական միտում՝

- ազատական ժողովրդավարության (լիբերալ–դեմոկրատիայի) զարգացումն ու ամրապնդումը,
- պետության դերի աճը՝ հասարակական կյանքի կարևորագույն բնագավառներում:

Ընդհանուր առմամբ Արևմտյան երկրների քաղաքական զարգացման և ռազմաքաղաքական դաշինքների ձևավորման վրա էական ազդեցություն էր թողնում Սառը պատերազմի իրողությունը: Ի հայտ էին եկել նաև միասնականացման միտումները Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում:

Դրա հետ մեկտեղ, Արևմտյան մի շարք երկրներում (Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Ֆրանսիա) որոշակի սրությամբ էին դրված էթնոքաղաքական և դավանական խնդիրները, որոնք ողջ քսաներորդ դարի ընթացքում իրական հակամարտությունների օջախ էին հանդիսանումև դեռ այսօր էլ հանդիսանում են այդպիսիք:

Այդ շարքում են ֆրանսախոս կանադացիների կամ Քվեբեկի խնդիրը՝ Կանադայում, Կորսիկայի և Բրետան պրովինցիայի խնդիրը՝ Ֆրանսիայում, Հյուսիսային Իռլանդիայի խնդիրը՝ Մեծ Բրիտանիայում, ֆլամանդացիների ու վալոնների խնդիրը՝ Բելգիայում, բասկերի խնդիրը՝ Իսպանիայում ու Ֆրանսիայում և այլն: Առկա են նաև միջպետական վիճելի տարածքների ու սահմանների խնդիրները: Այդ շարքում են Ջիբրալթարի խնդիրը՝ անգլո–իսպանական հարաբերություններում, սահմանային ու տարածքային խնդիրները՝ Իսպանիայի և Պորտուգալիայի միջև և այլն:

Այսպիսով, 20–րդ դարի երկրորդ կեսին, գիտատեխնիկական հեղափոխության, հետարդյունաբերական ու տեղեկատվական հասարակության պայմաններում աշխարհի առավել զարգացած երկրներին բնորոշ էին հիմնականում միասնացման գործընթացները: Սակայն դա ամենևին չէր նշանակում, որ զարգացած երկրներում ազգային ինքնորոշման կամ միջպետական վիճելի սահմանների խնդիրները իրենց կարևորությունը կորցնում են: Վերոհիշյալ խնդիրներն առկա են նաև արդյունաբերապես առավել զարգացած և միասնացման գործընթացներում ակտիվ դեր խաղացող երկրներում:

Սոցիալական զարգացումներն ու տեղաշարժերը

Երկրորդ աշխարհամարտից հետո արևմուտքում տեղ գտած խոշորամասշտաբ քաղաքական ու տնտեսական փոփոխություններն առաջ բերեցին նաև լուրջ սոցիալական տեղաշարժեր:

Ակնառու իրողություններից էր *արևմտյան երկրների բնակչության աճի տեմպերի կտրուկ նվազումը*: Այդ երկրների բնակչության թվի կրճատումը հետևանք էր ոչ թե մահացության տոկոսային աճի, այլ ծննդյան տեմպերի անկման:

Հաջորդ իրողությունը *արևմտյան երկրների բնակչության ծերացումն էր*: Արևմտյան երկրների բնակչության տարիքային խմբերում ավագ և առաջացած տարիքի անձանց տոկոսը գնալով աճում էր: Սա արդեն բացատրվում է ոչ միայն

ծննդյան տեմպերի անկումով, այլև զարգացած երկրներում կյանքի տևողության աճով: Մասնավորապես 1986թ. դրությամբ զարգացած երկրներում կյանքի միջին տևողությունն արդեն գերազանցում էր 70 տարին:

Ծննդյան տեմպերի նվազումը և կյանքի տևողության աճը հանգեցրեց ***արևմտյան երկրների բնակչության ռասայական, ազգային, մշակութային և կրոնական կազմի փոփոխության:*** Բնակչության անկում ապրող, սակայն տնտեսական աճ արձանագրող արևմտյան երկրներն աշխատուժի կարիք էին զգում: Հատկապես 1960–ական թվականների տնտեսական աննախադեպ աճի պայմաններում Աֆրիկայից, Մերձավոր և Միջին Արևելքից, Ասիայից և Լատինական Ամերիկայից սկսվեց էժան աշխատուժի մեծ ներհոսք Արևմուտքի զարգացած երկրներ:

Էական ***փոփոխություններ տեղ գտան նաև արևմտյան հասարակության սոցիալական կառույցում***: Գիտատեխնիկական հեղափոխության ժամանակաշրջանում տնտեսական կառույցների փոփոխման արդյունքում արդյունաբերական աշխատուժն այլևս ամենամեծաթիվ սոցիալական շերտը չէր: Այն իր տեղը զիջեց մտավոր աշխատանքի արհեստավարժ մասնագետներին: Հասարակության սոցիալական կառույցը դարձավ ավելի բազմազան ու բազմաշերտ, էականորեն աճեց միջին խավը:

Սոցիալական հիերարխիայի աստիճաններով ***ուղղահայաց վերելքը դարձավ ավելի ինտենսիվ***, կրճատելով նաև միջին դիրքերից մինչև պաշտոնյա ընկած տարածքը:

Աննախադեպ իրողություն էր նաև տարաբնույթ մեծաթիվ զանգվածային շարժումների ու կազմակերպությունների ստեղծումն առավել զարգացած երկրներում: Մասնավորապես ի հայտ եկան

- խաղաղապաշտական (պացիֆիստական) և հակամիլիտարիստական շարժումներ ու կազմակերպություններ,
- երիտասարդության և ուսանողության «նոր ձախ շարժումներ»,
- ֆեմինիստական կազմակերպություններ
- արևմտյան հասարակության համար նոր կամ ոչ ավանդական կրոնական շարժումներ (կրոնական աղանդներ, որոնք սովորաբար ունեին արևելյան ծագում),
- շրջակա միջավայրի պահպանման ազդեցիկ շարժումներ ու կուսակցություններ («Գրինփիս» և «կանաչների» կուսակցություն):
- ազգային, մշակութային և լեզվական իրավունքների պաշտպանության շարժումներ (Մեծ Բրիտանիա, Կանադա, Իսպանիա, Ֆրանսիա):
- Նեոնացիստական և վերջիններիս հակադրվող հակառասիստական շարժումներ:

Տնտեսական զարգացումներն ու տեղաշարժերը

Համաշխարհային տնտեսական համակարգում գնալով ավելի մեծ դեր սկսեցին խաղալ տնտեսական խնդիրների լուծման նպատակով ստեղծված կազմակերպություններն ու հաստատությունները: Դրանց շարքին են դասվում Միջազգային արժութային հիմնադրամը, Համաշխարհային բանկը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը: Համաշխարհային տնտեսության վրա մեծ ազդեցություն են թողնում նաև այլ միջազգային կազմակերպություններ: Դրանց շարքում են Դավոսյան վեհաժողովն ու Մեծ ութնյակի հանդիպումները:

Ընդհանուր առմամբ քսաներորդ դարում պետության դերը տնտեսական կյանքում մեծացավ: Դա պայմանավորված էր նրանով, որ որոշակի խնդիրների

լուծման նպատակով պետությունը ստանձնում էր նոր պարտավորություններ: Այդ շարքում էին եկամուտների վերաբաշխում պահանջող սոցիալական ապահովության, կրթության, զբաղվածության, սպառողների իրավունքների պաշտպանության և շրջակա միջավայրի պահպանման բնագավառները: Պետությունը լիարժեք վերահսկում էր տնտեսական գործընթացներն իր տարածքում և հնարավորություն ուներ շտկումներ իրագործել:

Տնտեսական գլոբալացման պայմաններում աճեց վերպետական կորպորացիաների դերը: Ժամանակակից աշխարհում համաշխարհային արդյունաբերական արտադրության մոտավորապես կեսն ու արտաքին առևտրի շուրջ 60 տոկոսը պատկանում է վերազգային կորպորացիաներին: Նրանց վերահսկողության ներքո են գտնվում նոր տեխնիկայի ու տեխնոլոգիաների արտոնագրերի շուրջ 80 տոկոսը, հացահատիկի, սուրճի, անտառանյութի, ծխախոտի, երկաթի համաշխարհային շուկայի շուրջ 90 տոկոսը, թեյի, հում նավթի, բնական կաուչուկի շուկայի 75–ից 80 տոկոսը և այլն: Խոշորագույն վերազգային կորպորացիաների կենտրոնակայանները տնտեսապես առավել զարգացած արևմտյան երկրներում են, գերազանցապես ԱՄՆ–ում: 1999թ. հինգ խոշորագույն վերազգային կորպորացիաների՝ «Ջեներալ Մոթորսի», «Ուոլլ մարտի», «Էքսոն մոբիլի» , «Ֆորդի» և «Դայմլեր Կրայսլերի», տարեկան շահույթները կազմում էին համապատասխանաբար 177, 167, 164, 163 և 160 միլիարդ դոլար: Իրենց տնտեսական հզորությամբ խոշորագույն վերազգային կորպորացիաները կարող են մրցակցել նույնիսկ խոշոր պետությունների հետ: Օրինակ, արտադրվող ապրանքների ծավալների առումով ճապոնական «Միցուբիշի» կորպորացիան աշխարհում զիջում է միայն քսանմեկ երկրների: Վերազգային կորպորացիաները վերածվում են համաշխարհային տնտեսական համակարգի կորիզի: Դրանց իշխանության ու ազդեցության հիմքն են հանդիսանում կապիտալի և արտադրական գործունեության վերազգայնացումը:

Միջազգային ասպարեզում գնալով ավելի մեծ դեր է խաղում Մեծ ութնյակը: Արդյունաբերապես առավել զարգացած ժողովրդավարական խոշորագույն պետությունների ամենամյա ֆորում կազմակերպելու գաղափարն առաջացավ 1973թ. նավթային ճգնաժամից հետո: 1974թ. ԱՄՆ–ի նախաձեռնությամբ Վաշինգտոնի Սպիտակ տան գրադարանում հավաքվեցին ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, ԳՖՀ–ի (Արևմտյան Գերմանիայի), Ճապոնիայի և Ֆրանսիայի ֆինանսական պաշտոնյաները: «Գրադարանային խումբ» անունը ստացած այդ հավաքույթը կրում էր ոչ պաշտոնական բնույթ և նրան մասնակցում էին տվյալ երկրների ֆինանսական ներկայացուցիչները: Սակայն արդեն 1975թ. Ֆրանսիայի նախագահ Վ.Ժ.Դ՚Էսթենի նախաձեռնությամբ և ԱՄՆ–ի, ԳՖՀ–ի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Ֆրանսիայի կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ Ռամբույեում (Ֆրանսիա) անցկացվեց պատմական նշանակություն ունեցած մի վեհաժողով: Արդյունքում ի հայտ եկավ Մեծ վեցյակը: Գերմանիայի կանցլեր Հ.Շմիդտի և ԱՄՆ–ի նախագահ Ջ.Ֆորդի նախաձեռնությամբ 1976թ. վեցյակին միացավ Կանադան: Արդյունքում ի հայտ եկավ Մեծ յոթնյակը: Իսկ արդեն Սառը պատերազմի ավարտից հետո՝ 1997թ. Մեծ յոթնյակին միացավ Ռուսաստանը և այն ստացավ Մեծ ությակ անվանումը:

Ամենամյա հանդիպումներիին ներկայացված է նաև Եվրամիությունը՝ ի դեմս Եվրոպական հանձնաժողովի նախագահի և այն երկրի ղեկավարի, որ նախագահում է Եվրամիության խորհրդում:

Գնալով մեծանում է նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) դերը: Վերջինս անկախ միջազգային կազմակերպություն է, որ նպատակամիտված է

համաշխարհային նշանակության խնդիրների քննարկմանն ու կարգավորմանը: Սակայն ՀՏՖ–ն ներկայումս առավել հայտնի է շվեյցարական Դավոս քաղաքում անցկացվող ամենամյա հանդիպումներով, որոնց հրավիրվում է աշխարհի քաղաքական, տնտեսական, մշակութային և տեղեկատվական վերնախավը: Աճում է նաև Դավոսյան հանդիպումների գործնական նշանակությունը՝ միջպետական և ներպետական հակամարտությունների լուծման կամ դրանց սառեցման տեսանկյունից: Մասնավորապես Դավոսյան շրջանակներում տեղ գտած հանդիպումների ընթացքում էական հաջողություններ են արձանագրել Հունաստանն ու Թուրքիան, Իսրայելն ու Պաղեստինի Ազատագրման կազմակերպությունը և այլն:

Համաշխարհային տնտեսության և առևտրի բնագավառում մեծ կարևորություն ձեռք բերեց առևտրի և տարիֆների համակարգումը: Դեռ 1947թ. ի հայտ եկավ ***Տարիֆների և առևտրի ընդհանուր պայմանագիրը***, որի արդյունքում ստեղծվեց համանուն կազմակերպությունը: Վերջինիս ջանքերով 1986–1994թթ. ընթացքում որոշվեց ստեղծել փոփոխված իրողություններին համապատասխան նոր կազմակերպություն: Արդյունքում 1995թ. իր գործունեությունը սկսեց Առևտրի Համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ): ԱՀԿ–ի հիմնական կետերից է այն, որ պետությունները չեն կարող խտրականություն կիրառել իրենց առևտրական գործընկերների նկատմամբ:

2002թ. դեկտեմբերի 10–ին Համաշխարհային Առևտրի Կազմակերպության Գլխավոր Խորհուրդը քվեարկեց Կազմակերպությանը ՀՀ–ի անդամակցության օգտին: Այսպիսով, 2002թ. դրությամբ, Հայաստանի հանրապետությունը դարձավ հետխորհրդային յոթերորդ երկիրը, որ անդամակցում էր ՀԱԿ–ին:

Համաշխարհային Առևտրի Կազմակերպությանը ՀՀ–ի անդամակցումն ամենևին չէր նշանակում, թե Թուրքիան դադարեցնելու է Հայաստանի շրջափակումը: Հայկական կողմն այժմ մտադիր էր շրջափակման խնդիրը քննարկել նաև ՀԱԿ–ի շրջանակներում: Սակայն Թուրքիան հայտարարել էր, որ չի հետևելու Հայաստանի հետ բազմակողմանի առևտուր զարգացնելու ՀԱԿ–ի համաձայնագրերի դրույթներին: Սակայն առաջին քայլի համար հիմնական՝ անդամակցության հարցում Հայաստանի Հանրապետությունը հասել էր իր նպատակին: Խնդիրն այն է, որ Թուրքիան պնդում էր, որ ՀՀ–ի հետ համատեղ ու միաժամանակ Ադրբեջանն էլ անդամակցի ՀԱԿ–ին, մինչդեռ Ադրբեջանի հետ ՀԱԿ–ի բանակցությունները դեռ նախնական փուլում էին գտնվում: Համաշխարհային Առևտրի Կազմակերպությունը գտավ, որ Թուրքիայի նման պահանջները խախտում են ՀԱԿ–ի հիմնադրույթները: Այդուհանդերձ ժնև մեկնելուց առաջ ՀՀ պատվիրակությունը հստակեցրեց, որ ապագայում Հայաստանը չի խոչընդոտի ՀԱԿ–ին Ադրբեջանի մասնակցությանը, քանզի Թուրքիան իր հերթին նշել էր, որ դադարեցնում է իր առարկությունները ՀՀ–ի անդամակցության հարցում:

Մեծ է հիշյալ իրադարձության՝ Համաշխարհային Առևտրի Կազմակերպությանը ՀՀ անդամակցության կարևորությունը: 2002թ. դրությամբ այն որակվեց իբրև ՀՀ–ի կարևորագույն ձեռքբերումը՝ Եվրոպական Խորհրդի անդամ դառնալուց հետո:

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գերազանցապես արևմտյան երկրների նախաձեռնությամբ ստեղծվեցին մի շարք քաղաքական և տնտեսական կազմակերպություններ, որոնք ժամանակի ընթացքում՝ Սառը պատերազմից հետո վերածվեցին համաշխարհային քաղաքական ու տնտեսական զարգացումներում կարևորագույն դեր ունեցող կառույցների, իրենց մեջ ներառելով նաև հետխորհրդային ու հետսոցիալիստական երկրներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք, թե ինչ համակարգ էր ձևավորվել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որքա՞ն ժամանակ այն գոյատևեց: Որո՞նք էին Արևմուտքի երկրների այս ժամանակաշրջանի քաղաքական զարգացման հիմնական միտումներն ու առանձնահատկությունները:
2. Սոցիալական ի՞նչ տեղաշարժեր տեղի ունեցան Արևմուտքի զարգացած երկրներում: Ներկայացրե՛ք սոցիալական նոր շարժումները:
3. Ներկայացրե՛ք տնտեսական զարգացման գլխավոր միտումները: Ի՞նչ բնութագրական կողմեր կարող եք նշել Արևմուտքի տնտեսական զարգացման մեջ:

§2. ԱՄՆ–Ն ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ–ը վերածվեց արևմտյան աշխարհի տնտեսական ու ռազմական առումով հզորագույն տերության: Այստեղ էր թողարկվում Արևմուտքի արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին: Ամերիկյան զորքերը տեղաբաշխված էին Գերմանիայում, Ճապոնիայում, Իտալիայում և այլուր: ԱՄՆ–ն ուներ շուրջ 500 ռազմական հենակայան: Նրա նավատորմն առաջատար դիրքեր էր գրավում օվկիանոսներում ու ծովերում: Սկզբնական շրջանում ԱՄՆ–ը տիրապետում էր նաև միջուկային զենքի մենաշնորհին: Նախագահ ***Հ. Թրումանը*** հայտարարեց, որ ԱՄՆ–ը ստանձնում է «համաշխարհային պատասխանատվությունը»: Վերջակետ դրվեց չեզոքության քաղաքականությանը: Այսուհետև ԱՄՆ–ը դառնում էր համաշխարհային քաղաքականության կենտրոնը:

Արտաքին քաղաքականության բնագավառում առկա էին լուրջ խնդիրներ: Սառը պատերազմի պայմաններում ձևավորվել էին արևմտյան և արևելյան ճամբարները: Այդ պայմաններում ԱՄՆ–ը որդեգրեց Խորհրդային Միության «զսպման հայեցակարգը», որի նպատակն էր արգելել Խորհրդային Միության ազդեցության հետագա տարածումը: Ի հայտ եկավ Եվրոպայի վերականգնման և ամերիկյան օգնության տրամադրման ***Մարշալի պլանը:*** Դրա շրջանակներում ամերիկյան ֆինանսական աջակցություն ստացան Եվրոպայի 16 երկրներ (ընդհանուր գումարը՝ 12,4 միլիարդ դոլար): Թրումանի նախաձեռնությամբ օգնություն ստացան նաև ԽՍՀՄ–ի սպառնալիքի առջև կանգնած Հունաստանն ու Թուրքիան:

1950–ական թթ. ԱՄՆ–ում սկսվեց հակակոմունիստական արշավ: Դրան նպաստեցին միջուկային ռումբի ստեղծումը ԽՍՀՄ–ում և կոմունիստական հեղափոխության հաղթանակը Չինաստանում: Փնտրվում էին մեղավորներ, ովքեր զենքի գաղտնիքը հանձնել էին ԽՍՀՄ–ին, և ում քաղաքականությունը հասցրել էր Չինաստանի կորստին: Արշավը ստացավ ***մաքքարթիզմ*** անվանումը, քանզի կառավարական մարմինների աշխատանքը հետաքննող հանձնաժողովը գլխավորում էր սենատոր Մաքքարթին: Հանձնաժողովի ցուցումով մոտ ինը հազար մարդ ազատվեց աշխատանքից՝ իբրև «անվստահելի տարր»: Միայն 1954 թ. ԱՄՆ–ի նախագահ Դ. Էյզենհաուերը դադարեցրեց «վհուկների որսը»:

ԱՄՆ–ի պատմության մեջ անջնջելի հետք թողեց 1960 թ. նախագահ ընտրված ***Ջ. Քենեդին:*** Առաջ քաշված ծրագրերի և ունեցած ձեռքբերումների շնորհիվ կարճ ժամանակահատվածում նա մեծ հեղինակություն վաստակեց:

Քենեդին առաջ քաշեց «նոր սահմանագծերի» կարգախոսը: Մեծ տերությունների միջև հարաբերությունները պետք է կառուցվեին ոչ միայն հակամարտության, այլև կառուցողական երկխոսության միջոցով: Նրա օրոք տեղ գտավ ինչպես ***1962 թ. Կարիբյան ճգնաժամը*** (Կուբայում խորհրդային միջուկային հրթիռների տեղաբաշխման կապակցությամբ), այնպես էլ խորհրդա–ամերիկյան հարաբերությունների կարգավորմանն ուղղված երկխոսությունը: Քենեդին սպանվեց 1963 թ. ԱՄՆ–ի Դալլաս քաղաքում:

Եղան նաև աղմկահարույց այլ իրադարձություններ: Մասնավորապես 1974 թ. տեղ գտավ, այսպես կոչված, ***Ուոթրգեյթյան գործը:*** Պարզվեց, որ նախագահական ընտրարշավի ընթացքում նախագահ ***Նիքսոնի (1969–1974 թթ.)*** աշխատակիցները գաղտնի ներթափանցել էին Վաշինգտոնի «Ուոթրգեյթ» հյուրանոցում գտնվող դեմոկրատների նախընտրական շտաբ–կայանը և գաղտնի լսող սարքեր տեղադրել: Նույն տարում Կոնգրեսում սկսվեց Նիքսոնի պաշտոնանկ անելու (իմփիչմենթի) հարցը: Նիքսոնը ստիպված էր հրաժարական տալ:

ԱՄՆ–ի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի նաև 1980թ. նախագահ ընտրված հանրապետական ***Ռ. Ռեյգանը:*** Նրա ներքին քաղաքականությունը բնորոշվում է իբրև ***նոր բնույթի պահպանողական հեղափոխություն,*** իսկ տնտեսական քաղաքականությանը տրվեց ***ռեյգանոմիկա*** անվանումը: ***Ռ. Ռեյգանն*** ԱՄՆ–ի նորագույն պատմության մեջ առաջին նախագահն էր, որ Հրեական Ողջակիզման *(Հոլոքոսթի)* հետ մեկտեղ հիշատակեց նաև Հայոց Ցեղասպանությունը:

Արտաքին քաղաքականության մեջ Ռեյգանը որդեգրեց Խորհրդային Միության տնտեսական և քաղաքական դիրքերը հետևողականորեն թուլացնելու քաղաքականություն: ԽՍՀՄ–ը նա որակում էր իբրև ***«Չարիքի կայսրություն»,*** վերջինիս հետ մտնելով սպառազինությունների մրցավազքի մեջ: 1983թ. մարտին Ամերիկյան կառավարությունը «Ռազմավարական պաշտպանության նախաձեռնության» կամ «Աստղային պատերազմների» ծրագրի շրջանակներում առաջ քաշեց նույնիսկ տիեզերքի ռազմականացման գաղափարը: Սակայն երբ Խորհրդային Միության ղեկավար դարձավ Մ. Գորբաչովը, Ռեյգանը հնարավոր համարեց վերջինիս հետ սպառազինությունների կրճատման և խորհրդա–ամերիկյան հարաբերությունների կարգավորման վերաբերյալ պայմանագրերի ստորագրումը: 1985թ. նոյեմբերին Ժնևում կայացավ ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի ղեկավարների միջև բարձր մակարդակի պատմական հանդիպումը: Այն խորհրդա–ամերիկյան երկխոսության և երկու երկրների միջև հարաբերությունների բարելավման սկիզբը դրեց: Արդեն 1987թ. դեկտեմբերին Մ.Գորբաչովն ու Ռ. Ռեյգանը Վաշինգտոնում ստորագրեցին միջուկային սպառազինությունների կրճատման վերաբերյալ պայմանագիրը:

Ռեյգանին հաջողվեց դառնալ XX դարի երկրորդ կեսի ԱՄՆ–ի պատմության մեջ ամենասիրված նախագահներից մեկը:

ԱՄՆ–ի կարևորագույն ձեռքբերումներից մեկը երկրի սևամորթ բնակչության խնդրի կարգավորումն էր, որ սրությամբ դրվեց 1950–1960–ական թթ.: 1954թ. վերացվեց սևամորթ և սպիտակամորթ երեխաների առանձին–առանձին ուսուցումը: Սակայն բազմաթիվ նահանգների ռասիստական շրջանակները հրաժարվում էին ենթարկվել այդ որոշմանը և նույնիսկ դիմում էին ահաբեկչական գործողությունների: 1960–ական թթ. սկզբներին ԱՄՆ–ի սևամորթ բնակչության շարժումը թևակոխեց որակապես նոր փուլ: Այն կրում էր սոցիալական իրավունքների, քաղաքացիական իրական իրավահավասարության նվաճման և քաղաքական իշխանությանը մասնակցելու հնարավորության համար համատարած պայքարի բնույթ: Սևամորթների շահերի պաշտպանությամբ հանդես էր գալիս հոգևորական ***Մ.Լ.Քինգը:*** Վերջինս խաղաղ դիմադրության ու բռնությունը բացառող հաստատակամ գործողությունների կողմնակից էր: Նա գտնում էր, որ ռասայական խտրականությունը տրամաբանորեն բացատրել հնարավոր չէ, իսկ բարոյական տեսանկյունից հնարավոր չէ արդարացնել: Նրան հետևում էին գրեթե բոլոր քրիստոնյա աֆրոամերիկացիները: ԱՄՆ–ի մահմեդական սևամորթների շարժման առաջնորդն էր ***Մ. Իքսը:*** Նրանք երկուսն էլ սպանվեցին ռասիստ ահաբեկիչների կողմից: Սակայն շարժումը էականորեն մոտեցրեց խնդրի կարգավորումը:1964թ. ընդունված քաղաքացիական իրավունքների մասին օրենքը արգելեց ռասայական խտրականությունը հասարակական վայրերում, ինչպես նաՀ աշխատուժի վարձման Հ ազատման ժամանակ: 1965թ. ուժի մեջ մտավ մեկ այլ օրենք, որով վերացվում էին մի շարք ցենզեր, որ մտցվել էին որոշ նահանգներում քվեարկությանը սևամորթների մասնակցությունը թույլ չտալու նպատակով: Ինքնին «նեգր» անվանումն արգելվեց և սևամորթների նկատմամբ ընդունելի համարվեց ու շրջանառության մեջ դրվեց ***«աֆրոամերիկացիներ»*** անվանումը: Նախագահներ Դ. Էյզենհաուերի, Ջ. Քենեդիի և Լ. Ջոնսոնի օրոք ընդունված օրենքները վերացրին ռասայական խտրականության ծայրահեղ դրսևորումները:

Դրանց շնորհիվ է, որ տարիներ անց՝ 2008թ. նախագահական ընտրությունների արդյունքում ԱՄՆ–ի պատմության մեջ առաջին անգամ նախագահի պաշտոնը ստանձնեց աֆրոամերիկացի ***Բ. Օբաման:***

ԱՄՆ–ի պատերազմները

Սառը պատերազմի ընթացքում ԱՄՆ–ը մղեց մի շարք պատերազմներ: Հարրի Տրումենի նախագահության օրոք՝ 1950 թ. հունիսին, ԱՄՆ–ը ներքաշվեց Կորեական պատերազմի մեջ: Պատերազմից երկիրը դուրս եկավ միայն 1953թ. հուլիսին՝ Դ. Էյզենհաուերի կառավարման օրոք: Կորեական պատերազմում զոհվեցին ավելի քան 36 հազար ամերիկացիներ: Պատերազմն ԱՄՆ–ին արժեցավ 54 միլիարդ դոլար: Ջ. Քենեդու կառավարման օրոք տեղ գտած «Կարիբյան ճգնաժամը» աշխարհն ընդհանրապես կանգնեցրեց Երրորդ համաշխարհային պատերազմի եզրին, որից միայն մեծ ջանքերի շնորհիվ կարողացան խուսափել ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ը: Իսկ արդեն Լ. Ջոնսոնի օրոք՝ 1964 թ. սկսվեց ԱՄՆ–ի 20–րդ դարի պատմության մեջ ամենախոր հետքը թողած Վիետնամական պատերազմը, որը շարունակվեց նաև ԱՄՆ–ի հաջորդ նախագահ Ռ. Նիքսոնի օրոք: Եթե 1964 թ. Վիետնամում ամերիկյան զորքերի թիվը հասնում էր 185 հազարի, ապա 1968–1969թթ. դրությամբ վիետնամական պատերազմում ներգրավված ամերիկյան զորքերի թիվը գերազանցում էր կես միլիոնը: Միայն 1973 թ. Նիքսոնին հաջողվեց վերջակետ դնել այդ անհեռանկարային պատերազմին: Վիետնամական պատերազմը խլեց ավելի քան 46 հազար ամերիկացիների կյանք: Այս պատերազմի վրա ԱՄՆ–ը ծախսեց ավելի քան 107 միլիարդ դոլար: Սա ԱՄՆ–ի նորագույն պատմության ընթացքում առաջին պարտությունն էր:

Ինչո՞վ էին պայմանավորված այդ պատերազմները: Խնդիրն այն է, որ 1950–1970–ական թթ. ԱՄՆ–ի կառավարող շրջանակները խստորեն հետևում էին ***դոմինոյի տեսությանը***: Այն ԱՄՆ–ի կողմից առաջ քաշված արտաքին քաղաքական տեսություն է, որի համաձայն, եթե որոշակի տարածաշրջանի երկրներից մեկն ընկնում է կոմունիզմի ազդեցության տակ, ապա հարևան մյուսն երկրներն էլ դոմինոյի քարերի նման ընկնելով, շարքով կարող են դառնալ կոմունիստական:

Սակայն Վիետնամական պատերազմից հետո, երբ Թաիլանդը, Ինդոնեզիան և Հարավ–արևելյան Ասիայի մի շարք այլ երկրներ կանգուն մնացին ու չդարձան կոմունիստական, դոմինոյի տեսությունն առժամանակ մոռացվեց:

Միաժամանակ ի հայտ եկավ «Վիետնամի սինդրոմը»: Բանն այն է, որ Վիետնամում կրած պարտությունից հետո ամերիկյան ժողովուրդը մասամբ կորցրեց իր՝ հաղթողի ինքնավստահությունը: Իր հերթին ամերիկյան կառավարությունը չափից դուրս զգուշավորություն էր հանդես բերում ամերիկյան զինվորներին նմանատիպ ռազմական գործողությունների ուղարկելու հարցում:

Իրավիճակը փոխվեց սակայն 1980–ական թվականներին: 1983 թ.՝ ԱՄՆ–ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի օրոք ԱՄՆ–ը ներխուժեց Գրենադա: Իսկ արդեն 1989թ.՝ ԱՄՆ–ի նախագահ Ջորջ Բուշ ավագի օրոք ԱՄՆ–ը ներխուժեց Պանամա: Վիետնամի սինդրոմը հաղթահարվեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք ԱՄՆ–ի զբաղեցրած դիրքը աշխարհում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ինչո՞վ է բացատրվում ԱՄՆ–ի դերի բարձրացումը: Ի՞նչ է «մաքքարթիզմը»:

2. Ինչո՞վ նշանավորվեց Ջ. Քենեդու նախագահությունը: Ինչո՞վ ավարտվեց 1950–1960–ական թթ. ԱՄՆ–ում սկսված սևամորթ բնակչության խնդիրների կարգավորման գործընթացը: Ցո՛ւյց տվեք ԱՄՆ–ի քաղաքական զարգացման առանձնահատկությունները:

3. Ի՞նչ պատերազմների է ուղղակիորեն կամ անուղղակի մասնակցել ԱՄՆ- ը սառը պատերազմի շրջանում: Վերհանե՛ք դրանց հետևանքները ԱՄՆ - ի համար:

20 և 21–րդ դարի ամերիկյան նախագահները

Նախագահի անունը, կառավարման թվերը	Տարիքը՝ նախագահ ընտրվելու պահին	Կրոնական և դավանական պատկանելությունը	Նահանգային պատկանելությունը	Կուսակցական պատկանելությունը
Թեոդոր Ռուզվելտ (1901–1909)	42 տարեկան	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Նյու Յորք)	Հանրապետական կուսակցություն
Ուիլյամ Հովարդ Տաֆտ (1909–1913)	51	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Օհայո)	Հանրապետական
Վուդրո Վիլսոն (1913–1921)	56	Քրիստոնյա (Բողոքական)	Միջին նահանգ (Նյու Ջերսի)	Դեմոկրատական
Ուորեն Հարդինգ (1921–1923)	55	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Օհայո)	Հանրապետական
Կալվին Կոիլիջ (1923–1929)	51	Քրիստոնյա (Բողոքական)	Միջին նահանգ (Մասսաչուսեթս)	Հանրապետական
Հերբերտ Հուվեր (1929–1933)	54	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Կալիֆոռնիա)	Հանրապետական
Ֆրանկլին Ռուզվելտ (1933–1945)	51	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Նյու Յորք)	Դեմոկրատական
Հարրի Տրումեն (1945–1953)	60	Քրիստոնյա (Բողոքական)	Միջին նահանգ (Միսսուրի)	Դեմոկրատական
Դուայթ Էյզեն-	62	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Փենսիլվանիա)	Հանրապետական

հաուեր (1953–1961)				
Ջոն Քեննեդի (1961–1963)	43	Քրիստոնյա (Հռոմեադավան կաթոլիկ)	Միջին նահանգ (Մասսաչուսեթս)	Դեմոկրատական
Լինդոն Ջոնսոն (1963–1969)	55	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Տեքսաս)	Դեմոկրատական
Ռիչարդ Նիքսոն (1969–1974)	56	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Կալիֆոռնիա)	Հանրապետական
Ջերալդ Ֆորդ (1974–1977)	61	Քրիստոնյա (Բողոքական)	Միջին նահանգ (Միչիգան)	Հանրապետական
Ջիմմի Քարտեր (1977–1981)	52	Քրիստոնյա (Բողոքական)	Միջին նահանգ (Ջորջիա)	Դեմոկրատական
Ռոնալդ Ռեյգան (1981–1989)	69	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Կալիֆոռնիա)	Հանրապետական
Ջորջ Բուշ ավագ (1989–1993)	65	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Տեքսաս)	Հանրապետական
Բիլլ /Ուիլյամ Քլինթոն (1993–2001)	47	Քրիստոնյա (Հռոմեադավան կաթոլիկ)	Փոքր նահանգ (Արկանզաս)	Դեմոկրատական
Ջորջ Բուշ կրտսեր (2001–2009)	55	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Տեքսաս)	Հանրապետական
Բարաք Օբամա (2009–	48	Քրիստոնյա (Բողոքական)	Մեծ նահանգ (Իլլինոյիս)	Դեմոկրատական

§3. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ

Մեծ Բրիտանիա

«Հաղթանակ և ողբերգություն». այսպես որակեց Երկրորդ աշխարհամարտի արդյունքների վերաբերյալ Մեծ Բրիտանիայի տեսակետը վարչապետ Ու.Չերչիլը: Մեծ Բրիտանիան որպես հաղթող երկիր պետք է մասնակցեր հետպատերազմյան աշխարհակարգի ստեղծմանը:

Հաղթանակի շնորհիվ բրիտանական կառավարությունը մոռացության մատնեց 1930–ական թվականներին ունեցած արտաքին քաղաքական ձախողումները: Սակայն նրա արտաքին պարտքն աճեց յոթ անգամ: Երկիրը կորցրել էր իր առևտրական նավատորմի զգալի մասը: Թուլացել էին գաղութների հետ կապերը: Պատերազմի ծանրությունը կենտրոնի հետ կիսած բրիտանական դոմինիոններն ավելի հաճախ էին հայտարարում իրենց տնտեսական և քաղաքական ինքնուրույնության մասին: Գաղութներում լայն չափեր էր ընդունել ազգային–ազատագրական շարժումը: Արդյունքում՝ հետպատերազմյան երկու տասնամյակներում Բրիտանական կայսրությունը փլուզվեց:

Լեյբորիստներ–պահպանողականներ պայքարում հաճախ հաղթում էին լեյբորիստները: Պահպանողականների դիրքերը, սակայն, ամուր էին: Նրանք հատկապես կարևորում էին միապետության հեղինակության բարձրացումը: 1952թ. գահ բարձրացավ *Էլիզաբեթ II–ը:* Թագուհին աննախադեպ նվիրվածությամբ էր կատարում օրենքով նախատեսված իր պարտավորությունները: Նա անմիջապես ներգրավվեց միջազգային ներկայացուցչական գործառույթներում: Արտասահմանյան այցերի տեսանկյունից նա գերազանցեց իր բոլոր նախորդներին: Թագուհու ուշադրության կենտրոնում էին Ազգերի բրիտանական համագործակցության երկրները, միապետական կարգ ունեցող եվրոպական պետությունները: Նրա հովանավորությունն էին վայելում նաև բրիտանական հումանիտար կազմակերպություններն ու աշխարհում Միացյալ Թագավորության մշակութային ազդեցության տարածմանն ուղղված ծրագրերը:

Չնայած թագուհու ձեռքբերումներին՝ 1980–ական թվականների վերջերին և 1990–ական թթ. սկզբներին անգլիական հասարակությունը լրջորեն մտահոգված էր միապետության ճգնաժամով: Պատճառը թագավորական ընտանիքում տիրող անառողջ մթնոլորտն էր: Հասարակությունը կասկածի տակ էր դնում միապետական կարգի պահպանման նպատակահարմարությունը: Սա բացասաբար էր անդրադառնում պահպանողական կուսակցության դիրքերի վրա, քանզի վերջիններս մշտապես հանդես են եկել գահի հիմնական պաշտպանի դերում:

1979թ. խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տանելով՝ պահպանողականները վերադարձան իշխանության: Մեծ Բրիտանիայի պատմության մեջ առաջին անգամ վարչապետի պաշտոնը ստանձնեց կին գործիչ *Մ.Թեթչերը:* Նա համոզված պահպանողական էր, որի նպատակն էր *«կանգնեցնել Անգլիայի սողքը դեպի սոցիալիզմ»:* 1987թ. ընտրություններում կրկին հաղթանակ տանելուց հետո Թեթչերը հայտարարեց. *«Մեր քաղաքականությունը միտված է ապահովելու, որ կայուն եկամուտ ունեցող յուրաքանչյուր ոք դառնա սեփականատեր: Մենք կառուցում ենք սեփականատերերի ժողովրդավարություն»:* Վարչապետն ընդունեց «երկու երրորդի հասարակություն» կառուցելու գաղափարը, որ ենթադրում էր հետևյալը. պետք է ապահովվի բնակչության երկու երրորդի բարգավաճումն ու ծաղկումը՝ պայմանով, որ մնացած մեկ երրորդը չի լինի ծայրահեղ աղքատության մեջ:

Թետչերը վճռական էր տրամադրված նաև արտաքին քաղաքական հարցերում: *1982թ. բռնկված Ֆոլկլենդյան պատերազմը* հարմար առիթ էր Մեծ Բրիտանիայի վերածնվող ոգին ցուցադրելու համար: Ֆոլկլենդյան կղզիները գտնվում են Ատլանտյան օվկիանոսի հարավում՝ Արգենտինայից ընդամենը 500, իսկ Մեծ Բրիտանիայից՝ 12 հազար կիլոմետր հեռավորության վրա: Բրիտանիայի կառավարման ներքո գտնվող այդ կղզիները երկար ժամանակ Մեծ Բրիտանիայի և Արգենտինայի միջև վեճի առարկա էին: Թետչերին հարկավոր էր հաղթական պատերազմ, և Բրիտանիան հասավ դրան: Իր հաստատակամության շնորհիվ Մ. Թետչերին տրվեց *«երկաթյա լեդի»* անունը:

1990թ. Թետչերին փոխարինեց չափավոր պահպանողական *Ջ. Մեյջորը*, իսկ1997թ. իշխանության եկան լեյբորիստները՝ *Թ.Բլեյրի* գլխավորությամբ: Բլեյրը ձևավորեց նոր կառավարություն, որը համայնքների պալատում հենվում էր բացարձակ մեծամասնության վրա:

Իշխող կուսակցության փոփոխությունը քաղաքական բնագավառում չհանգեցրեց կտրուկ շրջադարձի: Պարզապես օրակարգի մեջ էին մտնում նոր խնդիրներ և լուծվում քաղաքական գործիչների նոր սերնդի կողմից: Հետագայում ընդունվեց նոր կուրսը, որի քաղաքական հիմնադրույթները ձևակերպվեցին Բլեյրի «Երրորդ ուղի. նոր քաղաքականություն նոր դարաշրջանի համար» գրքում: Նա մերժում էր ինչպես թետչերիզմի ծայրահեղական կողմերը, այնպես էլ սոցիալիզմի ոգով տնտեսությունը պետականացնելու լեյբորիստների նախկին մոտեցումը: Առաջարկվում էր *«երրորդ ուղին»՝ նոր՝ խառը տնտեսություն,* որի սահմաններում պետությունը ոչ միայն նպաստում է անհատ ձեռներեցության զարգացմանը, այլև ակտիվորեն միջամտում այն դեպքերում, երբ մասնավոր նախաձեռնությունը բավարար չէ: Դրանով իսկ պետությունը կարևորագույն սոցիալական դերակատարում է ունենում: Սակայն արտաքին քաղաքականության բնագավառում Բլեյրը հավատարիմ մնաց դեռ Երկրորդ աշխարհամարտից հետո որդեգրված «անգլո–ամերիկյան առանձնահատուկ դաշինքի» ռազմավարությանը: Բլեյրի քաղաքականությունը որդեգրեց նրան հաջորդած Գ. Բրաունը: Իսկ արդեն 2010 թ. ընտրությունների արդյունքում իշխանությունը կրկին անցավ պահպանողականներին: Վարչապետի պաշտոնը ստանձնեց Դ. Քամերունը:

Բրիտանիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները

Դեռ պատերազմի ժամանակ Ու.Չերչիլը նշում էր, որ անգլիացիները գործում են երեք հարթություններում՝անգլո–ամերիկյան, բրիտանա–կայսերական և եվրոպական: Այդ եռակի մոտեցումը երկար ժամանակ ապահովում էր Անգլիայի հատուկ հնարավորություններն ու բացառիկ դիրքն աշխարհում:

Անգլիայի հեռացումը Հնդկաստանից և նրա տնտեսական ու ռազմական դիրքերի թուլացումը ստիպեցին Ավստրալիային և Նոր Զելանդիային իրենց հայացքներն ուղղելու դեպի ԱՄՆ–ը՝ անվտանգության երաշխիքներ ստանալու նպատակով: 1951թ. ձևավորված ԱՆԶՅՈՒՍ (Ավստրալիա, Նոր Զելանդիա, Միացյալ Նահանգներ) կազմակերպությունը, որին Մեծ Բրիտանիան չէր մասնակցում, ապացուցում էր Երկրորդ Աշխարհամարտի ընթացքում Անգլիայի դիրքերի թուլացումը: Սակայն ստեղծված պայմաններում Մեծ Բրիտանիան ձգտում էր ԱՄՆ–ի հետ սերտ համագործակցության և փորձում ԱՄՆ–ից ստացվող տնտեսական ու ռազմական օգնության միջոցով ապահովել իր առաջնակարգ դիրքերը միջազգային հարաբերություններում:

Բրիտանական կայսրության փլուզումից հետո անգլիացիները չարեցին անհրաժեշտ եզրակացություններ: Նրանք չէին ցանկանում ընդունել, որ այլևս չունեին պաշտպանական պարտավորություններ Ասիայում, Աֆրիկայում և Ավստրալիայում: Մեծ Բրիտանիան սկսել էր վերածվել զուտ եվրոպական պետության: Կայսրությանը փոխարինելու էր եկել Համագործակցությունը: Նախկինում գործածված «Բրիտանական Համագործակցություն» հասկացությունից մնացել էր միայն չեզոք «Համագործակցություն» հասկացությունը: Սակայն «Համագործակցությունը» չէր ենթադրում անդամ երկրների հավատարմությունը Բրիտանական թագին և չէր կառավարվում Բրիտանիայի կողմից: «Համագործակցությունը» դարձավ ամենատարբեր ավանդույթներ ու կողմնորոշում ունեցող պետությունների: Կառույցի անդամ երկրներն ամենից շատ ֆինանսական ներդրումների կարիք ունեին, ինչը Մեծ Բրիտանիան ապահովել չէր կարող:

Ընդհուպ մինչև 1960–ական թվականների սկիզբը Եվրոպան անգլիացիների համար առաջնային նշանակություն չուներ: Պատերազմից հետո անգլիացիները նախապատվություն էին տալիս անգլո–ամերիկյան ուղղությանը: Նույնիսկ նրանք, ովքեր մտավախություն ունեին ԱՄՆ–ի հզորացման հետ կապված, Եվրոպայի դաշինքի հաստատման գաղափարից հեռու էին: Ոմանք գտնում էին, որ միջազգային հարաբերություններում երրորդ ուժի կամ բևեռի ստեղծումն անհրաժեշտություն է: Սակայն նրանց կարծիքով այդ երրորդ ուժը կարող է լինել Բրիտանական Համագործակցությունը և ոչ թե միասնական Եվրոպան: Մեծ Բրիտանիայի փոխհարաբերությունները եվրոպական երկրների հետ բարդացան հատկապես եվրոպական տնտեսական ինտեգրման կապակցությամբ:

Բրիտանացիները սկզբում փորձեցին ԵՏՀ–ի հետ համաձայնության հասնել: Անհաջողություն կրելով, բրիտանացիներն իրենց ղեկավարությամբ 1958թ., ի հակակշիռ «Ընդհանուր շուկայի», ստեղծեցին եվրոպական երկրների մեկ այլ խմբավորում՝ Ազատ Առևտրի Եվրոպական Ասոցիացիան, որի մեջ մտնում էին Մեծ Բրիտանիան, Շվեդիան, Նորվեգիան, Դանիան, Պորտուգալիան, Ավստրիան և Շվեյցարիան: ԱԱԵԱ–ի նպատակը տաս տարվա ընթացքում անդամ երկրների միջև առևտրական խոչընդոտների վերացումն էր: Սակայն Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ ստեղծված կառույցը ընդհանուր արտաքին տարիֆներ սահմանելու կամ որևե քաղաքական միություն ստեղծելու նպատակ չէր հետապնդում: Անգլիացիները կարծում էին, որ 1958 թ. իշխանության եկած Շ.դ՛Գոլը վերջնականապես կձախողի ԵՏՀ–ն: Սակայն դը Գոլի նպատակը ընդամենը ԵՏՀ–ի զարգացման տեմպերի թուլացումն էր: Դրանով դը Գոլը ձգտում էր հասնել Ֆրանսիայի տնտեսական դիրքերի ամրապնդմանը, որից հետո կհզորանային նաև նրա քաղաքական դիրքերն ու կշիռը Եվրոպայում: 1961թ., Բրիտանիայի վարչապետ Հ.Մակմիլանը ԵՏՀ–ի շարքերն ընդունվելու դիմում ներկայացրեց: Սակայն Ֆրանսիայի ճնշման ներքո 1963թ. Մեծ Բրիտանիան մերժում ստացավ: Հաշվի առնելով Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ–ի միջև «հատուկ հարաբերությունները», ֆրանսիացիները դիտում էին անգլիացիներին իբրև ամերիկացիների «Տրոյական ձի» և գտնում էին, որ Մեծ Բրիտանիան անգլո–ամերիկյան միջուկային դաշինքի դիրքերից պետք է անցում կատարի դեպի անգլո–ֆրանսիական կամ անգլո–եվրոպական դիրքերը: Միայն տասներկու տարի անց՝ 1973թ. վարչապետ Հիթի օրոք Մեծ Բրիտանիան դարձավ ԵՏՀ–ի (ապագա Եվրոպական միության) անդամ:

Ֆրանսիա

Երկրորդ աշխարհամարտով փակվեց Ֆրանսիայի պատմության ծանրագույն էջերից մեկը: Պատերազմի ընթացքում մեծ հեղինակություն ձեռք բերած գեներալ Շ. դը Գոլի գլխավորությամբ ձևավորվեց ժամանակավոր կառավարություն: Այն վճռական քայլեր ձեռնարկեց երկրի հետագա քաղաքական ապակենտրոնացումը բացառելու համար: Հրավիրվեց Սահմանադիր ժողով: Սակայն Դը Գոլը շուտով հրաժարական տվեց՝ չհանդուրժելով Սահմանադիր ժողովի միջամտությունը կառավարության քաղաքականությանը: *Երրորդ հանրապետությունը* (1870–1940թթ., 1944–1946թթ.) փաստացի շարունակում էր գործել, սակայն նրա կառույցները հեղինակազրկվել էին դեռ պատերազմի ընթացքում, իսկ սահմանադրական համակարգի մնացուկները՝ անհետացել: Նոր սահմանադրության ընդունումը դարձել էր անհրաժեշտություն:

1946թ. ընդունվեց հետպատերազմյան Ֆրանսիայի նոր սահմանադրությունը, որով սկսվեց *Չորրորդ հանրապետությունը (1946–1958 թթ.):* Վերջինիս սահմանադրությունը մոտ էր Երրորդ հանրապետության սահմանադրությանը: Այն նույնպես ենթադրում էր նախագահի թույլ իշխանական լիազորություններ: Այս ժամանակաշրջանում է, որ սկիզբ առավ ֆրանսիական գաղութային կայսրության փլուզումը, տեղ գտան պատերազմները Հնդկաչինում և Հյուսիսային Աֆրիկայում: Ֆրանսիան անդամակցեց ՆԱՏՕ–ին և առաջին քայլերը ձեռնարկեց եվրոպական միասնության կերտման ճանապարհին:

Ֆրանսիայում սկսեցին լայնորեն կիրառել արտադրության ծրագրավորումը: Շրջանառության մեջ դրվեց *դիրիժիզմ* հասկացությունը (դիրիժե՝ *կառավարել* բառից), որ նախատեսում էր պետության միջամտությունը տնտեսության կառավարմանը: Դրվեցին տնտեսական աճի հիմքերը:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Ֆրանսիական կապիտալը գնալով ավելի ու ավելի էր կորցնում իր վաշխառուական բնույթը: Ֆրանսիական կապիտալի ներդրման ավանդական շուկաները կամ անվերադարձ կորան (Արևելյան Եվրոպա), կամ կրճատվեցին (նախկին գաղութային տիրույթներ): Դա ստիպեց նրանց ազատ կապիտալը ներդնել երկրի ներսում (նավթ, քիմիա, էլեկտրոնիկա և այլն): Օգտագործելով գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները, ֆրանսիացիները ստեղծում էին նորագույն սարքավորումներով հագեցված խոշոր ձեռնարկություններ:

Սակայն երկրի ներքաղաքական կյանքն անկայուն էր: Հաճախակի փոխվում էին կառավարությունները, բևեռանում էին քաղաքական ուժերը: Ներքին և արտաքին քաղաքականության շատ խնդիրներ մնացին չլուծված: Հատկանշական է, որ Չորրորդ հանրապետության շրջանում փոխվեց կառավարության 25 կազմ: Այս իրավիճակում 1958թ. Ալժիրում բռնկվեց սպայության խռովություն: Խռովարարները պահանջում էին Ֆրանսիայում «ուժեղ ձեռքի» հաստատում: Չորրորդ հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց: Հունիսի 1–ին Ազգային ժողովը վարչապետի պաշտոնը հանձնեց գեներալ Դը Գոլին: Շուտով ուժի մեջ մտավ *Հինգերորդ հանրապետության* սահմանադրությունը:

Նոր սահմանադրությամբ երկրի նախագահին լայն իրավունքներ էին տրվում ի հաշիվ Ազգային ժողովի լիազորությունների սահմանափակման: Նախագահը զինված ուժերի ղեկավարն էր, նա նշանակում էր վարչապետին և բարձրաստիճան պաշտոնյաներին, կարող էր ժամկետից շուտ արձակել Ազգային ժողովը, իսկ արտակարգ իրավիճակներում իր ձեռքը վերցնել լիակատար իշխանությունը: 1958թ. հաստատվեց նախագահ ընտրված Դը Գոլի անձնական իշխանության համակարգը: Այսուհետև

Ֆրանսիայի զարգացման գործընթացում վճռորոշ դեր պետք է խաղար *գոլիզմը:* Այն հիմնված էր Դը Գոլի գաղափարների և գործողությունների վրա: «Կուսակցությունների վարչակարգի» փոխարեն Դը Գոլն առաջարկում էր վերստեղծել «իրական ժողովրդավարություն»՝ պետության ղեկավարի ուղղակի ընտրություններով և հանրաքվեներով: Իսկ «կուսակցությունների վարչակարգի» վերացման նպատակով նա մտադիր էր «խոշորացնելու» երկրի քաղաքական ուժերը:

Արտաքին քաղաքականության մեջ Դը Գոլը կարևորում էր «Ֆրանսիայի վեհության» գաղափարը: Նա որդեգրեց գործողությունների ծրագիր, որի նպատակն էր հասնել Ֆրանսիայի գերիշխանությանը Եվրոպայում՝ հատկապես կարևորելով երկրի միջուկային ուժերի ամրապնդումը: Դը Գոլը ձգտում էր թույլ չտալ ամերիկացիներին որոշիչ դեր խաղալու եվրոպական գործերում, միաժամանակ «սանձելու» Մեծ Բրիտանիային:

1960–ական թթ. Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը մեծ փոփոխությունների ենթարկվեց: Անկախ արտաքին քաղաքականության կողմնակից Դը Գոլը մշտապես հիշեցնում էր ԱՄՆ–ին, որ Ֆրանսիան մեծ տերություն է, և չի կարելի նրան վերաբերվել ինչպես խամաճիկի: Տարաձայնությունները հասան գագաթնակետին 1966թ., երբ Ֆրանսիան դուրս եկավ ՆԱՏՕ–ի ռազմական կառույցից՝ պահանջելով երկրից դուրս բերել դաշինքի զորքերն ու ռազմական հենակայանները: Ֆրանսիան հանդես եկավ Վիետնամում ԱՄՆ–ի ռազմական գործողությունները դադարեցնելու օգտին: Մերձավորարևելյան հարցում Ֆրանսիայի դիրքորոշումը տարբերվում էր ամերիկյան մոտեցումից: Բարելավվեցին հարաբերությունները ԽՍՀՄ–ի և սոցիալիստական մյուս երկրների հետ: Գոլիզմը նորովի էր նայում նաև գաղութային խնդրին: 1962թ. Ֆրանսիան ճանաչեց Ալժիրի անկախությունը:

1969թ. Դը Գոլը հրաժարական տվեց և հեռացավ քաղաքական ասպարեզից: Սակայն նրա գաղափարները շարունակում են էական դեր խաղալ նաև այսօր: Ֆրանսիայի հետագա նախագահներից երկուսը՝ Ժ. Պոմպիդուն և Ժ.Շիրակը, եղել են դըգոլականներ: Նախագահ Ժ.Շիրակի (1995–2007թթ.) նախաձեռնությամբ իրագործվեց 1958թ. սահմանադրության բարեփոխումը: Փոփոխություններ և լրացումներ մտցվեցին սահմանադրության 89 հոդվածներից 47–ում: Դրանք շոշափեցին նաև Ֆրանսիայի նախագահին առնչվող խնդիրները: Այսուհետև նախագահը չի կարող անընդմեջ պաշտոնավարել: Իսկ 2002թ. ընդունված փոփոխման համաձայն՝ նախագահն ընտրվում է ոչ թե յոթ, այլ հինգ տարի ժամկետով: 2007թ. Ֆրանսիայի նախագահ ընտրվեց Ն.Սարկոզին:

Ֆրանկոֆոնիա

Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մեջ էական դեր է հատկացվում Ֆրանկոֆոնիային: Ներկայիս տեսքով Ֆրանկոֆոնիան սկիզբ առավ դեռ 1970թ.: Սակայն «Ֆրանկոֆոնիա» հասկացությունն առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց 1880թ. ֆրանսիացի աշխարհագրագետ Օ.Ռեքլյուի կողմից՝ բնորոշելու համար աշխարհագրական այն տարածքները, որտեղ տարածված էր ֆրանսերեն լեզուն: Հետագայում այդպես կոչեցին միջազգային միջկառավարական կազմակերպությունը: Այսպիսով, *Ֆրանկոֆոնիան* կամ *Ֆրանկոֆոն ընկերակցությունը* աշխարհի ֆրանսալեզու երկրների համագործակցության միջազգային կազմակերպություն է: Այն միավորում է աշխարհի շուրջ 56 երկրների: Եվս 14 երկրներ ունեն դիտորդի կարգավիճակ: Ֆրանկոֆոն ընկերակցության անդամ է նաև Հայաստանի հանրապետությունը: Հիշյալ կազմակերպությանը անդամակցելու հիմնական չափանիշ է համարվում ոչ այնքան այս կամ այն երկրի բնակչության՝ ֆրանսերեն

լեզվին տիրապետելու աստիճանը, որքան տվյալ երկրի ու ժողովրդի՝ Ֆրանսիայի հետ ունեցած մշակութային ավանդական կապերն ու համագործակցությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք Բրիտանական կայսրության կարգավիճակը հետպատերազմյան աշխարհում: Ինչպիսի՞ն էր ներքաղաքական իրադրությունը Մեծ Բրիտանիայում: Մեծ Բրիտանիայի պատմության մեջ ինչո՞վ նշանավորվեց Մ. Թեթչերի վարչապետությունը: Ինչո՞վ էր պայմանավորված 1980–ական թթ. վերջերի և 1990–ական թթ. սկզբների անգլիական միապետության ճգնաժամը:

2. Ի՞նչ իրադարձություններ տեղի ունեցան հետպատերազմյան Ֆրանսիայում: Միջազգային ի՞նչ կառույցների անդամակցեց Ֆրանսիան: Բացատրե՛ք «դիրիժիզմ» հասկացությունը: Ի՞նչ լիազորություններ էր տրվում նախագահին՝ ըստ Հինգերորդ հանրապետության սահմանադրության: Ի՞նչ է գոլիզմը: Ինչպիսի՞ն էր Դը Գոլի արտաքին քաղաքականությունը: Բացատրե՛ք ֆրանկոֆոնիայի բովանդակությունը:

Ֆրանսիայի 5–րդ հանրապետության նախագահները.	
Նախագահի անունը	**Կառավարման թվերը**
Գեներալ Շառլ Դը Գոլլ	*1959–1969*
Ժորժ Պոմպիդու	*1969–1974*
Վալերի Ժիսկար Դ՚Էսթեն	*1974–1981*
Ֆրանսուա Միտերան	*1981–1995*
Ժակ Շիրակ	*1995–2007*
Նիկոլյա Սարկոզի	*2007–*

§4. ԳԵՐՄԱՆԻԱ ԵՎ ԻՏԱԼԻԱ

Գերմանիա

Յալթայի և Պոտսդամի խորհրդաժողովներում ԽՍՀՄ–ը, ԱՄՆ–ը և Մեծ Բրիտանիան համաձայնության եկան, որ Գերմանիան ենթարկվելու է երկարատև ռազմականացման: Պետք է վերացվեին նրա զինված ուժերը, արգելվեին նացիստական կուսակցությունն ու բոլոր ազգայնամոլ կազմակերպությունները: Միայն դրանից հետո ժողովրդավարական հիմքի վրա պետք է վերաստեղծվեր նրա քաղաքական համակարգը:

Գերմանիան բաժանվեց **չորս գոտու**՝ խորհրդային, անգլիական, ֆրանսիական և ամերիկյան: Խորհրդային գոտում գտնվող **Բեռլինը** նույնպես բաժանվեց չորս գոտիների: Սակայն գերմանական խնդրի առնչությամբ դաշնակիցների միջև ծագեցին սկզբունքային տարաձայնություններ: Ի տարբերություն արևելյան գոտին վերահսկող Խորհրդային Միության՝ արևմտյան գոտիները վերահսկող երկրները այլ կերպ էին պատկերացնում Գերմանիայի ապագան:

1949թ. սեպտեմբերին Գերմանիայի արևմտյան մասում ստեղծվեց **Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը** (ԳԴՀ): Նորաստեղծ պետության վարչապետ դարձավ 1945թ. հիմնադրված «**Քրիստոնեադեմոկրատական միություն» կուսակցության** ղեկավար **Կ.Ադենաուերը:** Նույն թվականին խորհրդային գոտում հռչակվեց **Գերմանիայի ժողովրդավարական Հանրապետությունը (ԳԺՀ):**

Այսպիսով՝ Գերմանիան բաժանվեց երկու՝ հակադիր ուղղություններով զարգացող պետությունների: Արևելյան և արևմտյան հատվածների բաժանվեց նաև Բեռլինը: ԳԴՀ–ի մայրաքաղաքը դարձավ **Բոննը,** իսկ ԳԺՀ–ի մայրաքաղաքը՝ արևելյան Բեռլինը: Գերմանական հարցը նոր երանգ ստացավ, քանզի կային երկու գերմանական պետություններ, որոնք փորձում էին արդարացնել իրենց ինքնուրույն գոյությունը: Նրանց միջև հարաբերությունները խորացող լարվածության բնույթ ունեին: ԳԺՀ–ի ղեկավարությունը ԽՍՀՄ–ի դրդմամբ **1961 թ.** կառուցեց **Բեռլինի պատը** և ուժեղացրեց ԳԴՀ–ի հետ սահմանների վերահսկողությունը: Նպատակն էր դադարեցնել փախստականների հոսքը դեպի Արևմտյան Գերմանիա: Բեռլինի երկու հատվածների միջև տրանսպորտային, հեռախոսային ու փոստային կապն ընդհատվեց: Սակայն 155 կմ երկարություն ունեցող պատն ունեցավ նաև հոգեբանական ազդեցություն՝ խորհրդանշելով ոչ միայն Գերմանիայի, այլև ողջ Եվրոպայի բաժանումը երկու հատվածների: Պատահական չէ, որ պատով բաժանված Բեռլինը որակվեց իբրև **սառը պատերազմի մայրաքաղաք:**

ԽՍՀՄ–ում իրագործվող վերակառուցման գործընթացն անդրադարձավ նաև ԳԺՀ–ի վրա: **1989թ. նոյեմբերի 9–ին Բեռլինի պատը փլուզվեց**՝ դառնալով նոր աշխարհակարգի և Արևելյան Եվրոպայում սոցիալիզմի անկման խորհրդանիշը: Միաժամանակ ԳԺՀ–ում ձևավորվում էին քաղաքական ուժեր, որոնց նպատակն էր հասնել Գերմանիայի վերամիավորմանը: Եվ **1990թ. ԳԺՀ–ն միավորվեց ԳԴՀ–ի հետ:** ԳԺՀ–ն պաշտոնապես դադարեց գոյություն ունենալուց: Աշխարհի քաղաքական քարտեզի վրա կրկին ի հայտ եկավ միասնական Գերմանիան:

Գերմանիայի վերամիավորման հետևանքները

Գերմանիայի վերամիավորումով ԳԴՀ–ի տարածքն ու բնակչությունը կտրուկ ընդարձակվեցին: ԳԴՀ–ն ստանում էր արդյունաբերական տեսանկյունից զարգացած, կապի ու հաղորդակցության որոշակի համակարգ և գիտատեխնիկական ահռելի ներուժ ունեցող տարածքներ: ԳԺՀ–ի բանակի ռազմական տեխնիկան ու

սպառազինությունը դարձան ԳԴՀ–ի զինված ուժերի սեփականությունը: Գերմանիայի վերամիավորումը ոչ միայն ի հայտ բերեց գերմանացիների ոգևորությունը, այլև որոշ երկրների (այդ թվում՝ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի) անհանգստությունը: Տարածում էր գտել այն տեսակետը, որ միավորված Գերմանիան կարող է նոր գերտերության վերածվել:

Արդեն միավորումից քիչ անց Գերմանիան դարձավ աշխարհի առավել ազդեցիկ երկրներից մեկը, իր խոսքն ասելով ամենատարբեր միջազգային խնդիրների լուծման գործում: Գերմանիան շարունակում էր հանդիսանալ նաև եվրոպական ինտեգրման հիմնական շարժիչ ուժերից մեկը: Եվրոպական Միության տնտեսական տարածքն ու ՆԱՏՕ–ի ռազմաքաղաքական պատասխանատվության գոտին կտրուկ տեղաշարժվեցին դեպի արևելք: Գերմանիան նաև ծանրակշիռ դեր էր ձեռք բերում Եվրոպական միության նոր քաղաքական զարգացումներում: Սակայն միավորումից հետո Գերմանիայի տնտեսական զարգացումը էականորեն դանդաղեց: Արևելյան Գերմանիան տնտեսական վերակառուցում ու խոշոր ֆինանսական ներդրումներ էր պահանջում: Նույնիսկ տնտեսապես բարգավաճող ԳՖՀ–ի համար դա լուրջ բեռ էր, և 1990–ական թթ. սկզբներին Գերմանիան մտավ որոշ տնտեսական լճացման փուլ: Կարևորվում էր նաև Գերմանիայի զույգ հատվածների բնակչության կենսամակարդակի հավասարեցման խնդիրը, ինչին հասնել չհաջողվեց: Գերմանացիները մտահոգված էին, որ «Բեռլինի պատի» անկումից հետո գերմանացիների միջև ի հայտ եկան տնտեսական, սոցիալական, մշակութային ու հոգեբանական խոչընդոտներ: «Արևելյան հողերի» ինտեգրումը շարունակում է հանդիսանալ միացյալ Գերմանիայի կառավարության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

Իտալիա

Մարդկային և նյութական խոշոր կորուստներ տված և անգլո–ամերիկյան ռազմակալման ներքո գտնվող Իտալիան ուներ ներքին և արտաքին քաղաքական լուրջ խնդիրներ: Անհրաժեշտ էր հաշտության պայմանագիր կնքել հակահիտլերյան միության երկրների հետ և որոշել ապագա Իտալիայի պետական կարգը: **1947թ. փետրվարի 10–ին** ստորագրվեց Իտալիայի հետ հաշտության պայմանագիրը: Իտալիան տարածքային կորուստներ ունեցավ հօգուտ Ֆրանսիայի, Հարավսլավիայի և Հունաստանի: Այն կորցրեց իր գաղութները և պարտավորվեց ռազմատուգանք վճարել ԽՍՀՄ–ին, Ալբանիային, Հունաստանին և Հարավսլավիային: **1946թ. Իտալիայում հանրաքվե անցկացվեց:** Ժողովրդի մեծամասնությունն արտահայտվեց հանրապետության հռչակման օգտին: Ընդունվեց նոր սահմանադրություն, որն ուժի մեջ մտավ 1948թ. հունվարի 1–ից:

Հստակեցվեց նաև արտաքին քաղաքական կողմնորոշումը: Տնտեսության վերականգնման համար Իտալիան օգնության կարիք էր զգում: Այդ աջակցությունը կարող էր տրամադրել միայն ԱՄՆ–ը: Սառը պատերազմի ընթացքում Իտալիան ուներ ամերիկամետ դիրքորոշում: Մարշալի պլանի շրջանակներում Իտալիան ստացավ տնտեսական և ֆինանսական խոշոր աջակցություն: 1950–1960–ական թթ. «տնտեսական հրաշք» արձանագրող Իտալիան ակտիվ դերակատարում ունեցավ եվրոպական միասնացման գործընթացներում:

Ընդհուպ մինչև 1990–ական թթ. սկիզբը Իտալիայի քաղաքական դաշտում իշխում էր **Քրիստոնեադեմոկրատական կուսակցությունը:** Վերջինս ձևավորում էր միակուսակցական կամ կոալիցիոն կառավարություններ՝ երբեմն միայն զիջելով վարչապետի պաշտոնը այլ կուսակցության ներկայացուցչի: ՔԴԿ–ն համարվում էր բազմակուսակցական համակարգի կենտրոնը:

ՔԴԿ–ին հաջողվում էր նաև պահպանել ներքաղաքական կայունությունը, թեև առկա էին բարդ խնդիրներ: Սակայն 1990–ական թթ. սկսած՝ իրավիճակը փոխվեց: Համազգային «Մաքուր ձեռքեր» գործողության շրջանակներում կաշառակերության և մաֆիայի հետ կապերի մեղադրանք ներկայացվեց հազարավոր իտալացիների: Դրանց թվում էին նախկին վարչապետներ **Ջ.Անդրեոտտին, Բ.Կրաքսին, Ա.Ֆորլանին,** խորհրդարանի ավելի քան 400 պատգամավորներ:

Ներքաղաքական ճգնաժամի պայմաններում ասպարեզ ելավ հայտնի գործարար, միլիարդատեր **Ս. Բերլուսկոնին:** Նա հռչակեց «Առա՛ջ, Իտա՛լիա» կարգախոսը: Նրա գլխավորությամբ ձևավորվեց նույն անունը կրող շարժումը: Շարժումը հաղթանակ տարավ 1994թ. համազգային ընտրություններում և կազմեց կոալիցիոն կառավարություն: Թեև կոալիցիան ձախողվեց, սակայն որոշ ընդմիջումից հետո Բերլուսկոնին կրկին ստանձնեց վարչապետի պաշտոնը: Իտալացիները գերադասեցին ներքաղաքական կայունությունը Բերլուսկոնիի գլխավորությամբ:

Իտալիայի հիմնախնդիրները

Ներքաղաքական կյանքում Իտալիան ունի մի շարք խնդիրներ, որոնց լուծումը քաղաքական կամք ու հետևողականություն է պահանջում: Այս շարքում առանձնանում է **հարավի խնդիրը**: Հարավային Իտալիա են անվանում Ապենինյան թերակղզու հարավային 6 շրջաններն ու Սիցիլիա և Սարդինիա կղզիները: Հարավի խնդիրը՝ վերոհիշյալ շրջանների տնտեսական և սոցիալական հետամնացության և դրա հաղթահարման հարցն է: Դեռ Երկրորդ Աշխարհամարտից հետո այստեղ էր ապրում Իտալիայի բնակչության 1/3–ը: Սա ագրարային գերբնակեցված շրջան էր, որտեղ իշխում էին գործազրկությունն ու աղքատությունը: Հարյուր հազարավոր հարավցիներ արտագաղթում էին երկրի հյուսիսային շրջաններ կամ արտասահման: 1950թ. կառավարությունը «Հարավի հիմնադրամ» ստեղծելով, ձեռնամուխ եղավ երկրի հետամնաց շրջանների երկարաժամկետ ֆինանսավորմանը: Մոտ վեց տասնամյակների ընթացքում Իտալիայի հարավը վերածվեց ինդուստրիալ–ագրարային շրջանի: Այդուհանդերձ հարավի տնտեսությունը շարունակում է կախվածության մեջ մնալ հյուսիսից, հարավի բնակիչների կենսամակարդակը նույնպես էականորեն զիջում է հյուսիսին:

Իտալիայի ներքաղաքական կյանքում հատկապես կարևորվում է **մաֆիայի խնդիրը**: Մաֆիան ընտանիքի գաղափարի և կլանային կապերի վրա հիմնված կազմակերպված հանցագործության գաղտնի ցանց է: Այն ծագել է Սիցիլիայում 18–րդ դարում՝ ի պատասխան օտարերկրյա կառավարման ու ավատատիրության մնացուկների պայմաններում: Մաֆիայի ներկայացուցիչները պայքարում էին օտարերկրացիների և վերջիններիս հետ համագործակցող իտալացիների դեմ: Հետևաբար սկզբում մաֆիայի անդամ կամ հայրենասեր անձ լինելը հոմանիշներ էին: Ժողովրդական լայն զանգվածները համագործակցում էին մաֆիայի հետ: Մաֆիայի հաջողությունները բացատրվում էին նաև նրանով, որ այն ներթափանցեց արդարադատության համակարգ, կառավարական ամենաբարձր կառույցներ:Նրա համախմբվածությունը բացատրվում էր ոչ այնքան ամուր կազմակերպչական հիմքերով, որքան առանձնահատուկ ենթամշակույթ ստեղծելու գործում ունեցած հաջողություններով: Մասնավորապես մշակվեցին վարքագծային չգրված նորմեր, ինչպես, օրինակ, «օմերտա» (լռություն) և «վենդետտա»՝ (վրեժխնդրություն) սկզբունքները:

Իր զարգացման հաջորդ փուլում (1860–1922թթ.)՝ Իտալիայի վերամիավորումից հետո մաֆիան ամրապնդեց իր դիրքերը: Առկա էր կառավարության կողմից հարավի

խոշոր հողատերերին վերահսկելու ձգտումը: Մաֆիան հանդես եկավ իբրև լծակ կառավարության ձեռքում՝ ընդդեմ Հարավի խոշոր հողատերերի և միջնորդ՝ կենտրոնի և հարավի միջև:

Մուսսոլինիի կառավարման օրոք և ընդհուպ մինչև 2–րդ Աշխարհամարտի ավարտը մաֆիան ինտեգրվեց ֆաշիստական ենթակառուցվածքի մեջ: Մաֆիան ֆինանսական աջակցություն էր ցույց տալիս պետությանը: Իր հերթին պետությունը իր դիրքերն ամրապնդելու նպատակով «արտահանում» էր մաֆիան դեպի արևմուտք, մասնավորապես ԱՄՆ:

Արդեն երկրորդ Աշխարհամարտից հետո մաֆիան կրկին ստանձնեց կենտրոնի և հարավի միջև միջնորդի դերը: Կառավարությունը ձգտում էր մաֆիայի գործունեությունը սահմանափակել միայն հարավով: Սակայն ժամանակի ընթացքում մաֆիան սկսում է ընդարձակվել ողջ Իտալիայով, առավելագույնս ներգրավվելով քաղաքականության մեջ: Արդյունքում արդեն 1980–ական թթ. իտալական հասարակությունն անհանգստացած էր մաֆիայի տեսանելի դառնալու փաստով:

Լուրջ մտահոգության տեղիք է տալիս նաև **«Կարմիր բրիգադների»** խնդիրը: «Կարմիր բրիգադները» հետպատերազմյան Իտալիայի ամենաակտիվ ահաբեկչական կազմակերպություններից է, որը ստեղծվեց Միլանում: Այն հիմնվեց կոմունիստների փոխզիջումային քաղաքականությունը չընդունող ձախ խմբավորումների և ուսանողության կողմից: Նրանց առաջին ահաբեկչական գործողությունները տեղ գտան 1970–ական թթ. սկզբներին: Իրավիճակն ապակայունացնելու նպատակով իրագործվեցին մի ամբողջ շարք աղմկահարույց սպանություններ: Նրանց գործողությունների «գագաթնակետը» հանդիսացավ Իտալիայի հայտնի քաղաքական գործիչ Ա.Մորոյի սպանությունը՝ 1978թ.: Ա.Մորոն 1963–1968 և 1974–1976 թթ. վարել էր Իտալիայի վարչապետի պաշտոնը, եղել էր խորհրդարանի պատգամավոր, արդարադատության, կրթության և արտաքին գործերի նախարար: Լինելով Քրիստոնեա–դեմոկրատական կուսակցության ձախ թևի առաջնորդ, Մորոն համագործակցել էր Սոցիալիստական կուսակցության հետ՝ նրանց կտրելով Իտալիայի կոմկուսից: Նրա այդ քայլի համար վրեժխնդիր եղան «Կարմիր բրիգադները»՝ ընտրություններից անմիջապես առաջ: Սակայն Իտալիան ցնցած այդ քաղաքական սպանությունից հետո իշխանությունների և ոստիկանության ձեռնարկած միջոցառումների արդյունքում կազմակերպության ակտիվությունը նվազեց:

Իտալիայի առջև ծառացած հաջորդ՝ Հարավային Թիրոլի խնդիրը թե՛ ներքին, թե արտաքին քաղաքական երանգավորում ունի: Հարավային Թիրոլը Ձիջե գետի վերին հոսանքներում գտնվող տարածք է, որ բնակեցված է գերմանախոս ավստրիացիներով: Ներկայումս այն ինքնավար շրջան է Հյուսիսային Իտալիայում, որը նախկինում ավստրիական Թիրոլի մասն էր կազմում, սակայն հետագայում առանձնացվեց և 1919թ. Սեն–Ժերմենի պայմանագրով միացվեց Իտալիային: Մուսսոլինիի օրոք շրջանում իրականացված իտալականացման ծրագրերը միայն ուժեղացրին տեղի բնակչության թշնամանքը իտալական պետության հանդեպ: Հարավային Թիրոլի պատկանելության հարցը քննարկվեց նաև 1946թ. Փարիզի կոնֆերանսի ընթացքում: ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ը աջակցեցին Իտալիային այս հարցում: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հետևեցին նրանց օրինակին: Այդուհանդերձ գերմանախոս բնակչության իրավունքների խնդիրը դրանով չլուծվեց: Երկրորդ Աշխարհամարտից հետո Իտալիայի վարչապետ Դե Գասպերին շրջանին խոստացավ ինքնավարություն: Սակայն իտալական կառավարությունը չէր շտապում իրագործել իր այդ խոստումները: Խնդիրը չէր լուծվել ընդհուպ մինչև 1992թ., երբ Իտալիայի և Ավստրիայի միջև դեռ 1969թ. համաձայնեցված ինքնավարության վերաբերյալ

կետերն ի վերջո իրագործվեցին: Արդյունքում Հարավային Թիրոլը ստացավ ինքնավարություն սոցիալական երաշխիքների, հաղորդակցության և ֆինանսների հարցերում: Գերմաներենը շրջանի պաշտոնական լեզուն է՝ իտալերենի հետ մեկտեղ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք Գերմանիայի իրավիճակը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Զարգացման ի՞նչ ուղիով ընթացան Գերմանիայի արևմտյան և արևելյան հատվածները: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ հնարավոր դարձավ Գերմանիայի վերամիավորումը:

2. Ի՞նչ խնդիրներ պետք է լուծեր Իտալիան պատերազմից հետո: Տարածքային ի՞նչ կորուստներ ունեցավ Իտալիան, ո՞ւմ օգտին: Արտաքին քաղաքական ի՞նչ կողմնորոշում որդեգրեց Իտալիան պատերազմից հետո: Ինչո՞ւ: Ցո՛ւյց տվեք Իտալիայի քաղաքական համակարգի առանձնահատկությունները:

ԳՖՀ–ի կանցլերները

Կանցլերի անունը	*Կառավարման թվերը*
Կոնրադ Ադենաուեր	1949–1963
Լյուդվիգ Էրհարդ	1963–1966
Կուրտ Կիզինգեր	1966–1969
Վիլլի Բրանդտ	1969–1974
Հելմուտ Շմիդտ	1974–1982
Հելմուտ Քոհլ	1982–1990

Միավորված Գերմանիայի կանցլերները

Կանցլերի անունը	*Կառավարման թվերը*
Հելմուտ Քոհլ	1990–1998
Գերհարդ Շրյոդեր	1998–2005
Անգելա Մերկել	2005–

§5. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՃԱՄԲԱՐԸ

Հետպատերազմյան քաղաքական իրավիճակը Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում

Երկրորդ աշխարհամարտի ավարտական փուլում, երբ Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրներն ազատագրվում էին օկուպացիոն և վերջիններիս հետ համագործակցող վարչակարգերից, այստեղ հաստատվում էին ազգային ճակատների ժամանակավոր կառավարություններ: Պատերազմից հետո այս երկրներում ստեղծվեցին կոալիցիոն կառավարություններ՝ կազմված ինչպես կոմունիստական և սոցիալ–դեմոկրատական կուսակցություններից, այնպես էլ մինչպատերազմյան կշիռը պահպանած ազատական ու գյուղացիական կուսակցությունների գործիչներից: Մինչպատերազմյան շրջանի քաղաքական այն առաջնորդները, որոնք չէին համագործակցել օկուպացիոն վարչակարգերի հետ, հետպատերազմյան առաջին տարիների ընթացքում քաղաքական բարձր պաշտոններ զբաղեցրին: Մասնավորապես Չեխոսլովակիայում վերստին նախագահ դարձավ Է.Բենեշը: Լեհաստանում ստեղծված ազգային միասնության ժամանակավոր կառավարության կազմի մեջ մտավ պատերազմի տարիներին Լոնդոնում ապաստանած լեհական ժամանակավոր կառավարության վարչապետ Ս.Միկոլայչիկը: Իսկ Ռումինիայում ընդհուպ մինչև 1947թ. վերջը պետության ղեկավարն էր Միխայ թագավորը:

Միևնույն կառավարական կոալիցիայում հայտնված քաղաքական ուժերը ոչ միայն իրենց էությամբ էին տարբեր, այլև հաճախ ունեին միանգամայն հակադիր պատկերացումներ իրենց երկրների ապագայի և զարգացման ուղու վերաբերյալ: Ոմանք գտնում էին, որ պետք է վերականգնվեն մինչպատերազմյան վարչակարգերը: Մյուսները (հատկապես սոցիալ–դեմոկրատները) նախապատվություն էին տալիս արևմտաեվրոպական մոդելի ժողովրդավարական պետություն ստեղծելու տարբերակին: Իսկ կոմունիստները, հետևելով խորհրդային օրինակին, ձգտում էին իրենց երկրներում համայնավարական ու «պրոլետարիատի դիկտատուրայի» կարգեր հաստատել:

Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի այս երկրներում տնտեսական և սոցիալական հիմքերի հաստատմանը զուգահեռ սրվում էր նաև պայքարը վերոհիշյալ քաղաքական ուժերի միջև: Տնտեսությանը կամ կրթության ու մշակույթի ոլորտին վերաբերող ցանկացած որոշում ընդունվում էր երկարատև վիճաբանություններից հետո միայն: Խորհրդային Միության աջակցության ու վճռական գործողությունների արդյունքում հիշյալ երկրների կոմունիստ գործիչները որդեգրեցին ծայրահեղ հարձակողական մարտավարություն:

Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների խորհրդայնացումը

1947–1948թթ. շրջադարձային էին Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի համար: Շատ արագ իշխանությունն այստեղ անցավ կոմունիստական կուսակցություններին: Գերմանիայի պարտությունից հետո Եվրոպայում չէր մնացել մի ուժ, որ ի զորու լիներ դիմագրավելու խորհրդային տերությանը: Ընդլայնելով իր ազդեցության սահմանները դեպի արևմուտք՝ կոմունիստական վարչակարգը հնարավորություն ստացավ գերիշխող դիրքերի հավակնելու ողջ Եվրոպայում:

Խորհրդային Միությունն ազատագրել էր բազմաթիվ երկրներ, որոնց տարածքները նրա զորքերի վերահսկողության ներքո էին: Ստալինը մտադիր էր այդտեղ

ստեղծելու Խորհրդային Միության ազդեցության տակ գտնվող խամաճիկային երկրների շղթա: Արևմուտքին հաջողվեց պահել միայն Ավստրիան ու Իրանը:

ԽՍՀՄ–ը Արևելյան Եվրոպայի երկրների խորհրդայնացումն իրականացրեց հետևողականորեն: Սկզբում տվյալ երկրի քաղաքական ուժերից ստեղծվում էր ազգային կամ ժողովրդական ճակատի կոալիցիոն կառավարություն, որում կոմունիստները մեծ դեր էին խաղում: Կոմունիստները վերահսկում էին ուժային նախարարությունները, որտեղ էլ ծրագրավորվում էր ապագա դավադրությունը: Երկրորդ փուլում Մոսկվան ուժի սպառնալիքով ստիպում էր ձախ կուսակցություններին միավորվել կոմունիստների հետ: Այդ հեռանկարի հետ չհամաձայնվող քաղաքական գործիչները ենթակա էին հալածանքների և բռնության:

Դրանից հետո մեկուսացվում էին աջ և ձախ քաղաքական ուժերը: Վերջիններիս առաջնորդներին, եթե նրանք չէին հասցնում հեռանալ երկրից, ոչնչացնում էին: Չորրորդ փուլում խորհրդային զորքերի վրա հենվող տեղի կոմունիստներն անցկացնում էին ընտրություններ, որում հաղթում էին, քանզի չկար քաղաքական այլ ուժ: Իսկ վերջին փուլում խորհրդային անվտանգության մարմինների միջոցով զտումներ էին կատարվում արդեն կոմունիստների շարքերում:

Այսպիսով՝ արդեն 1949թ. դրությամբ կոմունիստներն իրենց ձեռքն էին վերցրել իշխանությունը *Ալբանիայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Չեխոսլովակիայում, Հարավսլավիայում*: Շուտով նրանց միացավ նաև *ԳԺՀ–ն:* Ձևավորվեց սոցիալիստական համակարգը ստալինյան մոդելով:

Սոցիալիզմի համաշխարհային համակարգի ձևավորումը

Եվրոպայի սոցիալիստական երկրները սոցիալիստական համակարգի համեմատաբար ավելի դինամիկ զարգացող հատվածն էին: Սակայն սոցիալիստական համակարգի մեջ էին մտնում նաև Հարավարևելյան Ասիայի մի շարք երկրներ՝ *Մոնղոլիան, Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ–ն), Հյուսիսային Կորեան* և *Վիետնամը:* Աշխարհի ամենախոշոր սոցիալիստական երկիրն այսօր ՉԺՀ–ն է:

Ստալինի մահից հետո ծայրահեղորեն սրվեցին հարաբերությունները սոցիալիզմի զարգացման ստալինյան ուղին նախընտրած ՉԺՀ–ի և ԽՍՀՄ–ի միջև: Դրանք 1960–ական թթ. վերջերին նույնիսկ հանգեցրին խորհրդա–չինական ռազմական ընդհարումների: Սակայն Ասիայի սոցիալիստական մյուս երկրների հետ ԽՍՀՄ–ը զարգացնում էր սերտ համագործակցային հարաբերություններ:

1959 թ. Կուբայում տեղ գտած հեղափոխությունից հետո սոցիալիզմի համակարգի ամերիկյան ներկայացուցիչը դարձավ Կուբան:

Այսպիսով՝ սոցիալիստական մոդելը դուրս եկավ մեկ երկրի սահմաններից և լայն տարածում գտավ Եվրոպայում, Ամերիկայում և Ասիայում: Հիմք դրվեց երկրների մի ընկերակցության, որ պատմություն մտավ *Սոցիալիզմի համաշխարհային համակարգ* անվամբ: 1980–ական թթ. վերջերին սոցիալիստական համակարգում կար *15 երկիր,* որոնք զբաղեցնում էին երկրագնդի տարածքի շուրջ **27 %–ը** և ներառում աշխարհի բնակչության շուրջ **33 %–ը:** Եվս 20 երկիր (այդ թվում՝ Ալժիրը, Անգոլան, Աֆղանստանը, Իրաքը, Եմենը, Սիրիան և այլն) նախընտրեցին զարգացման սոցիալիստական կողմնորոշումը:

Համակարգի ճգնաժամը. հասարակության բարեփոխման փորձերը

Ուժային եղանակով Եվրոպայում ներդրված սոցիալիստական համակարգում առկա էին հակասություններ: Դեռ 1948–1949թթ. ԽՍՀՄ–ի և Հարավսլավիայի ղեկա-

վարության միջև տեղ գտավ լուրջ հակամարտություն: Այն սկսվեց ***Ի. Ստալինի*** և ***Ի. Բրոզ Տիտոյի*** միջև սկզբունքային վիճաբանությունից և ավարտվեց ԽՍՀՄ–ի ու Հարավսլավիայի միջև հարաբերությունների խզումով: Միայն 1955թ. վերականգնվեցին երկու երկրների միջև հարաբերությունները: Սակայն խզման տարիներին Հարավսլավիան արդեն հասցրել էր ընտրել զարգացման սեփական ուղին: Իսկ արտաքին քաղաքականության մեջ Հարավսլավիան նախընտրեց չմիացած երկրի կարգավիճակը:

Նման զարգացումներ տեղ գտան նաև Ալբանիայում: Ստալինի մահից հետո Ալբանիան հրաժարվեց Խորհրդային Միության օրինակով ստալինյան անձի պաշտամունքը քննադատելուց և ինքնամեկուսացավ: 1954թ. սկսած՝ Ալբանիայի առաջնորդ ***Է.Հոջան*** մշակեց «սոցիալիզմի կառուցման առանձնահատուկ ալբանական ուղու» գաղափարը, որ հետագայում ստացավ ***էնվերիզմ*** անունը:

Քաղաքական իրադրությունն արևելաեվրոպական երկրներում 1950–1960–ական թթ. սրված էր: Դա կապված էր մի շարք գործոնների հետ:

Ստալինի մահից հետո Խորհրդային Միությունում սկսվեց բարձրագույն քաղաքական ղեկավարության փոփոխման գործընթացը, որն ավարտվեց 1956 թ. անձի պաշտամունքի դատապարտմամբ: ԽՍՀՄ–ի վերահսկողությունն այդ ընթացքում թուլացավ: Արևելաեվրոպական երկրներում աճում էր բարեփոխումների կողմնակիցների ազդեցությունը: Խորհրդային Միության «ձնհալը» մեծ արձագանք առաջ բերեց այստեղ: Հատկապես բարդ վիճակում հայտնվեցին Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան և ԳԺՀ–ն: Անցումը սոցիալիզմին այստեղ ուղեկցվել էր սոցիալական կառուցվածքի ցավագին ցնցումներով ու սոցիալական հոգեբանության բռնի փոփոխություններով: Դեռ պատերազմից առաջ այս երկրներում ձևավորվել էին ձեռներեցների մեծաթիվ շերտեր, որոնք էլ տուժեցին ազգայնացման և կոլեկտիվացման շրջանում: Սոցիալական քաղաքականության բնագավառում նոր վարչակարգերի հավասարարական քայլերը դժգոհություն էին առաջացնում հասարակության մեջ:

«Խրուշչովյան ձնհալի» քաղաքական իրավիճակից օգտվելով՝ Հունգարիայի ղեկավարությունը սկսեց նոր տնտեսական մոդելի մշակումն ու ժողովրդավարական բարեփոխումների իրագործումը: ***1956 թ. Հունգարիայի*** կառավարությունը հայտարարեց Վարշավյան դաշինքից դուրս գալու իր մտադրության մասին: Ի պատասխան դրա՝ Խորհրդային Միությունը զորք մտցրեց մայրաքաղաք Բուդապեշտ: Արդյունքում Հունգարիան վերադարձավ սոցիալիստական ճամբար:

Նույնպիսի ճակատագրի արժանացան ***1968 թ. Չեխոսլովակիայում*** սկսված բարեփոխումները: Նպատակը մեկն էր՝ ***կառուցել սոցիալիզմ մարդկային կերպարանքով:*** Սակայն Խորհրդային Միությունը զգաց, որ սոցիալիստական համակարգի գաղափարախոսական միասնությունը սպառնալիքի տակ է: 1968թ. ***օգոստոսին*** Վարշավյան դաշինքի անդամ երկրների բանակները ներխուժեցին Չեխոսլովակիա: Հետագայում կանխվեց նաև դեպքերի նմանատիպ զարգացումը ***Լեհաստանում:***

Վերոհիշյալ իրադարձությունների արդյունքում Խորհրդային Միությունը խստացրեց Արևելյան Եվրոպայի երկրների նկատմամբ իր վերահսկողությունը: 1968թ. ընդունվեց ***«Բրեժնևի հայեցակարգը»:*** Դրա էությունը հետևյալն էր: Սոցիալիստական ընկերակցությունն իբրև մեկ ամբողջություն իրավունք ունի ցանկացած պահի ներխուժելու իր անդամ երկրի տարածք, եթե թշնամական ուժերը սպառնան նրա գաղափարախոսական միասնությանը:

Այսպիսով՝ 1950–1960–ական թթ. Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում և Հարավսլավիայում սոցիալիստական կարգերի արդյունավետ մոդել գտնելու ժամանակաշրջան էր: Բացառությամբ Հարավսլավիայի՝ ԽՍՀՄ–ին հաջողվեց զսպել Արևելյան Եվրոպայի իր գործընկերների ձգտումները: Խորհրդային Միությունը

բարեփոխումներ իրագործելու ցանկացած փորձ դիտում էր իբրև սպառնալիք՝ ուղղված ընդդեմ սոցիալիզմի միասնականության: Իրավիճակը փոխվեց 1980–ական թթ. կեսերին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Շրջադարձային ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան 1947–1948 թթ. Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրներում: 1949 թ. դրությամբ ո՞ր երկրներում կոմունիստներն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը: Սոցիալիզմի ի՞նչ մոդել հաստատվեց այդ երկրներում:

2. 1948–1949 թթ. ի՞նչ հակասություններ կային ԽՍՀՄ–ի և Հարավսլավիայի միջև: Ի՞նչ է էնվերիզմը: Որո՞նք էին արևելաեվրոպական երկրներում նոր հասարակարգից դժգոհության պատճառները: Ե՞րբ և ինչո՞ւ ԽՍՀՄ–ը ներխուժեց Հունգարիա: Ի՞նչ ընթացք և ավարտ ունեցավ «Պրահայի գարունը»: Ո՞րն էր 1968 թ. ընդունված բրեժնևյան հայեցակարգի էությունը: 1950–1960–ական թվականներին ո՞ր երկրներում կատարվեցին սոցիալիստական կարգերի արդյունավետ մոդել գտնելու փորձեր:

3. Պարզաբանե՛ք Խորհրդային Միության «վերակառուցման» կուրսի ազդեցությունը սոցիալիստական համագործակցության երկրների վրա:

4. Ներկայացրե՛ք արևելաեվրոպական երկրներում «թավշյա հեղափոխությունների» ընթացքն ու արդյունքները:

§6. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓԼՈՒՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Արևելյան Եվրոպան խորհրդային վերակառուցման շրջանում

Խորհրդային Միության վերակառուցումն անդրադարձավ Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների զարգացման վրա: Մ. Գորբաչովի հռչակած ***նոր քաղաքական մտածողության*** կարևոր տարրերից էր սոցիալիստական երկրների հետ ԽՍՀՄ–ի հարաբերությունների վերանայումը: «Սոցիալիստական ճամբարի» փոխարեն սկսեց կիրառվել «սոցիալիստական համագործակցություն» անվանումը: 1985 թ. Գորբաչովը առաջադրեց սոցիալիստական միասնացման նոր մոտեցումներ: ԽՍՀՄ–ը պատրաստ էր հրաժարվելու «ավագ եղբոր» դերից: Իսկ սոցիալիստական երկրների միջև հարաբերությունները պետք է հիմնվեին ոչ միայն փոխօգնության, այլև փոխշահավետության վրա:

1986 թ. այդ սկզբունքները հաստատվեցին սոցիալիստական համագործակցության անդամ երկրների կողմից: Սակայն այդ ծրագրի իրագործումը ձախողվեց: Անդամ երկրներից շատերը ձգտում էին կրճատել սեփական ռազմական ծախսերը, ապրանքափոխանակման մեջ անցնել համաշխարհային գներին, սակայն պահպանել խորհրդային էժան հումքի և էներգակիրների մատակարարումները: Սոցիալիստական համագործակցության անդամները միասնական չէին նաև Խորհրդային Միության օրինակով իրենց երկրներում բարեփոխումներ անցկացնելու հարցում: Մի շարք երկրներում ԽՍՀՄ–ի նոր կուրսը բացասաբար ընդունվեց, քանզի հարվածում էր սոցիալիստական երկրների քաղաքական–կուսակցական ղեկավարության շահերին: ԳԺՀ–ի առաջնորդ ***Է. Հոնեկերը*** նույնիսկ նշեց. *«Եթե ձեր հարևանն իր տանը փոխում է պաստառները, ապա դա չի նշանակում, որ դուք էլ պարտադիր կերպով ձեր տանը պետք է վերանորոգում սկսեք»:*

Իսկ Հունգարիայում, Լեհաստանում և Հարավսլավիայում խորհրդային վերակառուցումը խթանեց բարեփոխումների իրագործումը: Սկզբում դրանք ընթանում էին վերակառուցման և սոցիալիզմի նորացման կարգախոսների ներքո: Սակայն շուտով պարզ դարձավ, որ գոյություն ունեցող հասարակական–քաղաքական և տնտեսական համակարգի բարեփոխումն անհնար է:

Դեռ 1970–ական թթ. վերջերին և 1980–ական թթ. սկզբներին արևելաեվրոպական երկրների մեծ մասում ի հայտ էին եկել ընդդիմադիր կազմակերպություններ ու շարժումներ, որոնց գործունեությունը հետագայում պաշտոնապես արգելվել էր: Դրանցում էական դեր էր խաղում փոփոխություններ պահանջող և ազատականորեն տրամադրված մտավորականությունը: Չեխոսլովակիայում գործել էր «Խարտիա–77»–ը, Լեհաստանում՝ «Սոլիդարնոստը» («Համերաշխություն»), Բուլղարիայում՝ «էկոլոգիստները» և այլն: Նրանք իրենց աջակցությունը հայտնեցին Մ.Գորբաչովին, քանզի ակնհայտ էր, որ առանց ԽՍՀՄ–ում արմատական վերափոխումների անհնարին էր նաև բարեփոխումների կամ վերափոխումների իրագործումը Արևելյան Եվրոպայում: Արևելյան Եվրոպայի ցանկացած երկրում բարեփոխումների իրագործման փորձերը ուղղակի կճնշվեին այնպես, ինչպես դա արդեն եղել էր Հունգարիայի և Չեխոսլովակիայի դեպքում: Այդ շարժումների մասնակիցներից շատերը մտադիր էին օգտագործելու ԽՍՀՄ–ում իրագործվող բարեփոխումների և իրենց սեփական երկրներում գործող քաղաքական և հասարակական համակարգի արմատական վերափոխման պատեհությունը:

Արևելաեվրոպական սոցիալիզմի ձախողումը

Սոցիալիստական համակարգի փլուզումն անխուսափելի էր:

1989–1990 թթ. ***Լեհաստանում և Հունգարիայում*** ընթացած ժողովրդավարական ընտրությունները վերջակետ դրեցին սոցիալիստական կարգերին այս երկրներում: Փոխարենը ձևավորվեցին առաջին ոչ կոմունիստական կառավարությունները:

Մյուս երկրներում սոցիալիստական կարգերի անկումն ընթացավ ավելի դրամատիկ պայմաններում: Դրա յուրահատուկ ազդանշանը դարձավ սոցիալիստական վարչակարգի փլուզումը ***Արևելյան Գերմանիայում 1989 թ.:*** Թեև ԳԺՀ–ի առաջնորդ Հոնեկերը ամեն ինչ արեց արգելակելու համակարգի փլուզումը, սակայն հարկադրված էր տեղի տալ: Նույն թվականին զանգվածային ցույցերով ու գործադուլներով վերջակետ դրեցին սոցիալիստական վարչակարգերը նաև ***Չեխոսլովակիայում, Բուլղարիայում և Ռումինիայում:***

1989 թ. Չեխոսլովակիայում հաստատվեց ազատական–ժողովրդավարական վարչակարգը: Իսկ 1993 թ. Չեխոսլովակիան դադարեց գոյություն ունենալուց: Վերջինիս փոխարեն ի հայտ եկան երկու նոր պետություններ՝ ***Չեխիան*** և ***Սլովակիան:*** Առանց լուրջ ընդհարումների ընթացան նաև փոփոխությունները Բուլղարիայում:

Միայն Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում իրադարձությունները վերածեցին զինված հակամարտության: Արդյունքում՝ բռնատիրության խորհրդանիշ հանդիսացող Ռումինիայի առաջնորդ ***Ն. Չաուշեսկուն*** ու նրա կինը մահապատժի ենթարկվեցին:

Սակայն Ռումինիայում տեղ գտածը բացառություն էր: Սոցիալիստական համակարգի մյուս երկրներում սոցիալիստական վարչակարգի փլուզումն ընթացավ անարյուն ճանապարհով, որի պատճառով էլ այդ գործընթացը ստացավ ***«թավշյա հեղափոխություններ»*** անվանումը:

Արդյունքում ***1991 թ.*** պաշտոնապես ***լուծարվեցին*** սոցիալիստական համակարգը կրող սյուները՝ ***Վարշավյան պայմանագրի կազմակերպությունն*** ու ***Տնտեսական փոխօգնության խորհուրդը:***

Այսպիսով՝ 1989–1990 թթ. «թավշյա հեղափոխությունների» արդյունքում սոցիալիստական համակարգը Արևելյան Եվրոպայում փլուզվեց: Իսկ արդեն 1991 թ.՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, վերացավ նաև սոցիալիստական համակարգին վերադառնալու՝ հնարավոր հետդարձի ճանապարհը: Արևելյան Եվրոպան վերականգնեց իր աշխարհաքաղաքական ինքնուրույնությունը:

Հարավսլավիայի փլուզումը

Սառը պատերազմից հետո փլուզվեց նաև էությամբ սոցիալիստական, սակայն սոցիալիստական ճամբարի մեջ չմտնող Հարավսլավիայի սոցիալիստական ֆեդերատիվ հանրապետությունը(ՀՍՖՀ–ն): Սակայն փլուզումը զուգակցվեց արյունահեղ հակամարտությամբ: Հարավսլավիայի նորագույն պատմությունը ենթադրում էր նման զարգացումները:

Դեռ Երկրորդ աշխարհամարտի արդյունքում փլուզվեց շուրջ երեսունամյա ուղի անցած ***«Առաջին Հարավսլավիան»***, որ 1918–1929 թթ. կրել էր «Սերբա–Խորվաթա–Սլովենական թագավորություն», իսկ 1929թ. սկսած՝ «Հարավսլավիայի թագավորություն» անվանումները:

Երկրորդ Աշխարհամարտից հետո ազատագրված Հարավսլավիայի առաջնորդ Իոսիպ Բրոզ Տիտոն Բալկանյան Դաշնության (Ֆեդերացիայի) ստեղծման շրջանակներում հանդես եկավ «Մեծ Հարավսլավիայի» ստեղծման առաջարկով:

Առաջարկը քննարկվեց Ի. Վ. Ստալինի, բուլղարացի Գ. Դիմիտրովի և Ի. Բ. Տիտոյի կողմից: Տիտոն ծրագրում էր ստեղծել Բալկանյան Դաշնային պետություն՝ Բելգրադ կենտրոնով, որն իր մեջ ներառեր ինչպես «Առաջին Հարավսլավիան», այնպես էլ Բուլղարիան և Ալբանիան՝ դաշնային հանրապետությունների կարգավիճակով: Սկզբնական շրջանում ստեղծվեցին հարավսլավա–ալբանական և հարավսլավա–բուլղարական տնտեսական ու մաքսային միությունները, որի շրջանակներում նույնիսկ հարավսլավա–ալբանական տնտեսական ինտեգրացման միտումներ արձանագրվեցին: Սակայն հետագայում, Ալբանիայի և Բուլղարիայի ղեկավարության հետ տարաձայնությունների, ինչպես նաև Ի.Վ. Ստալինի հետ Տիտոյի խզման պատճառով չիրագործվեցին թե՛ «Մեծ Հարավսլավիայի» գաղափարը, թե Հարավսլավիայի հետ Ալբանիայի միավորումը:

Արդյունքում ստեղծվեց ***«Երկրորդ Հարավսլավիան»***, որն գործեց 1945–1992թթ.: Այս ընթացքում այն կրեց տարբեր անվանումներ. Դեմոկրատական Ֆեդերատիվ (Դաշնային) Հարավսլավիա (1945թ. սկսած), Հարավսլավիայի Ֆեդերատիվ (Դաշնային) ժողովրդական հանրապետություն (1946թ. սկսած) և Հարավսլավիայի սոցիալիստական ֆեդերատիվ հանրապետություն (1963թ. սկսած): Համաձայն 1974 թ. ընդունված Հարավսլավիայի սոցիալիստական ֆեդերատիվ հանրապետության (ՀՍՖՀ–ի) սահմանադրության դաշնության կազմի մեջ էին մտնում վեց սոցիալիստական հանրապետություններ և երկու ինքնավար մարզ: Դաշնության կազմում ընդգրկված սոցիալիստական հանրապետություններն էին՝ Սերբիան, Չեռնոգորիան, Սլովենիան, Խորվաթիան, Բոսնիա ու Հերցեգովինան և Մակեդոնիան: Բացի այդ Սերբիայի կազմի մեջ էին մտնում Կոսովոյի ու Մետոխիայի և Վոյեվոդինայի ինքնավար մարզերը:

1980թ. Հարավսլավիայի երկարատև առաջնորդ Ի. Բրոզ Տիտոյի մահից հետո ազգայնականությունը դարձավ Հարավսլավիայի քաղաքական կյանքի հիմնական գործոնը: Հարավսլավիայի կազմում ընդգրկված հանրապետությունների կոմունիստական ղեկավարությունը վերածվում էր մեկուսացված գործող էթնոքաղաքական էլիտաների,որոնք սոցիալիստական համակարգի ճգնաժամից դուրս գալու ելքը տեսնում էին ի դեմս իրենց հանրապետությունների անկախ տնտեսական և քաղաքական գործունեության: Սոցիալիստական ճամբարի երկրներում տեղ գտած «թավշյա հեղափոխությունների» օրինակով բազմակուսակցական համակարգի հիմքերի վրա ընտրություններ տեղ գտան նաև Հարավսլավիայի սոցիալիստական ֆեդերատիվ հանրապետության (ՀՍՖՀ–ի) անդամ հանդիսացող հանրապետությունների տարածքում: Ընտրություններում հաղթանակ տարան ազգայնականորեն տրամադրված կուսակցությունները:

1991 թ. հունիսի 25–ին իրենց անկախությունը հռչակեցին Խորվաթիան և Սլովենիան, իսկ նույն թվականի սեպտեմբերի 8–ին՝ Մակեդոնիան: Իսկ արդեն 1992թ. մարտի 1–ին իր անկախությունը հռչակեց Բոսնիան ու Հերցեգովինան: Այսպիսով 20–րդ դարի վերջերին Երկրորդ Հարավսլավիայի կազմից դուրս եկան վերջինս վեց միութենական հանրապետություններից չորսը: Հիշյալ զարգացումները զուգակցվում էին ռազմական ընդհարումներով և էթնիկական զտումներով: (Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Թեմա 13, §4):

Հարավսլավիայի սոցիալիստական ֆեդերատիվ հանրապետության փլուզման արդյունքում 1992թ. ի հայտ եկավ ***«Փոքր» կամ «երրորդ» Հարավսլավիան՝ Հարավսլավիայի միութենական հանրապետությունը:*** Նրա կազմի մեջ էին մտնում երկու միութենական հանրապետություններ՝ Սերբիան և Չեռնոգորիան: Միաժամանակ Սերբիայի կազմի մեջ էին շարունակում մնալ Կոսովոյի ու Մետոխիայի և Վոյեվոդինայի ինքնավար մարզերը: ***2003 թ. Հարավսլավիայի միութենական***

հանրապետությունը վերանվանվեց Սերբիայի և Չեռնոգորիայի կոնֆեդերատիվ պետական միության (ՍՉԿՊՄ): Այսպիսով կիրառությունից դուրս թողնվեց «Հարավսլավիա» անվանումը»: Սակայն 2006թ. մայիսին անցկացված հանրաքվեի արդյունքում նույն թվականի հունիսի 3–ին Չեռնոգորիան հռչակեց իր անկախությունը, դուրս գալով Սերբիայի և Չեռնոգորիայի կոնֆեդերատիվ պետական միության կազմից: Վերջինս դադարեց գոյություն ունենալուց: Երկու օր անց իր անկախությունը հռչակեց նաև Սերբիան: Իրավական տեսանկյունից զույգ ինքնավար մարզերը շարունակում էին մնալ Սերբիայի կազմում, թեև Կոսովոյի (ալբաներեն՝ Կոսովա) տարածքում էին տեղաբաշխված միջազգային խաղաղապահ ուժերը, իսկ երկրամասը պաշտոնապես գտնվում էր ՄԱԿ–ի հովանավորության ներքո:

2008 թ. փետրվարի 17–ին Կոսովայի խորհրդարանը միակողմանիորեն հռչակեց Սերբիայից անկախանալու և սուվերեն պետության՝ Կոսովայի հանրապետության կազմավորման մասին: Հաջորդ օրն իսկ Աֆղանստանը, Թայվանը և մի շարք եվրոպական պետություններ առաջինը ճանաչեցին այդ պետության անկախությունը: Կոսովոյի ***հանրապետության*** անկախությունն անմիջապես ճանաչեցին նաև ԱՄՆ–ը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան և Գերմանիան: Ինքնավար մարզի ճանաչման դեմ հանդես եկան Իսպանիան, Կիպրոսը, Հունաստանը, Սլովակիան, Ռումինիան, Չինաստանը և Ռուսաստանը: Սակայն Սերբիան, հենվելով իր սահմանադրության վրա, շարունակում է դիտել Կոսովոն և Մետոխիան իբրև իր կազմի մեջ մտնող ինքնավար մարզ:

Այդուհանդերձ Կոսովոյի անկախության հռչակումն ու այդ անկախության ճանաչումն առաջատար մի շարք երկրների կողմից կարևոր նախադեպ էր իրենց ազգային ինքնորոշման իրավունքի իրագործմանը ձգտող բոլոր ժողովուրդների համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ հակասություններ կային ԽՍՀՄ–ի և մյուս սոցերկրների միջև: Որո՞նք էին արևելաեվրոպական երկրներում սոցիալիստական հասարակարգից դժգոհության պատճառները:
2. Պարզաբանե՛ք Խորհրդային Միության «վերակառուցման» կուրսի ազդեցությունը սոցիալիստական համագործակցության երկրների վրա:
3. Ներկայացրե՛ք արևելաեվրոպական երկրներում «թավշյա հեղափոխությունների» ընթացքն ու արդյունքները:
4. Որո՞նք էին Հարավսլավիայի մասնատման հիմնական պատճառները: Ներկայացրե՛ք Հարավսլավիայի տրոհման գործընթացը: Ե՞րբ է առաջացել Կոսովոյի հիմնահարցը, ի՞նչ լուծում է այն ստացել: Համեմատե՛ք Կոսովոյի հիմնախնդիրը Արցախյան հիմնախնդրի հետ. ի՞նչ նմանություններ և տարբերություններ կարող եք նշել:

§7. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓԼՈՒՔՈՒՄԸ: ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԸ

Գաղութային համակարգի փլուզման պատճառները

Գաղութային համակարգը ձևավորվել էր նոր ժամանակներում՝ մեծ տերությունների միջև աշխարհի տարածքային–քաղաքական վերաբաժանման արդյունքում: Պատմության նորագույն ժամանակաշրջանի սկզբներին գաղութներն ու կիսագաղութները զբաղեցնում էին երկրագնդի տարածքի մոտ 70%–ը, որտեղ ապրում էր բնակչության երկու երրորդը: Երկրորդ աշխարհամարտից հետո աննախադեպ ընթացք ստացավ ապագաղութացման գործընթացը: Մետրոպոլիաների դեմ ուղղված կախյալ ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումը վերելք ապրեց դեռ պատերազմի շրջանում:

Պատերազմի տարիներին բազմաթիվ գաղութներ ոչ միայն դարձել էին պատերազմական գործողությունների թատերաբեմ, այլև ռազմակալվել էին: Կարճ ժամանակահատվածում Ճապոնիան վերահսկում էր նախկինում այլ տերություններին պատկանող գաղութային տարածքները: Սակայն նույնիսկ այդ ժամանակավոր վերահսկողությունը սասանում էր հավատը եվրոպական կամ ամերիկյան գաղութարարների ամենակարողության հանդեպ: Ամրապնդվում էր ազգային ինքնագիտակցությունն ու աճում անկախ զարգացման ձգտումը:

Բացի այդ, աշխարհամարտի արդյունքում եվրոպական գաղութային տերությունները թուլացել էին թե՛ ռազմական, թե՛ տնտեսական տեսանկյունից: Գաղութատեր երկրների թույլ տնտեսական դիրքերը դժվարացնում էին նրանց կողմից գաղութները վերադարձնելու նպատակով խոշոր ռազմական գործողությունների իրագործումը: Գաղութային պատերազմների ու օկուպացիոն բանակ պահելու հետ կապված հնարավոր ծախսերը, ինչպես նաև հասարակական կարծիքը գաղութատեր երկրներին ստիպեցին ճկունություն հանդես բերել այս հարցում:

Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ ՄԱԿ–ի ստեղծման և ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչման արդյունքում գաղութային և կախյալ երկրներն իրենց պայքարը դիտում էին իբրև օրինական իրավունք:

Միաժամանակ, ֆաշիստական և միլիտարիստական վարչակարգերի դեմ պայքարն ու վերջիններիս համընդհանուր պարտությունը իրենց հետ բերեցին ազատության և անկախության գաղափարների տարածում ողջ աշխարհում: Բացի այդ, մարտնչող մետրոպոլիաները իրենց համար դժվարին պատերազմական պայմաններում ձգտում էին ապահովել գաղութային ժողովուրդների աջակցությունը՝ տալով նրանց պատերազմից հետո ապագաղութացման գործընթաց սկսելու վերաբերյալ խոստումներ:

Սակայն խնդիրը միայն բարի ու ազնիվ նպատակներով չէր բացատրվում: XX դարի սկզբներին գաղութատիրությունն իբրև համընդհանուր շահագործման ձև իրեն սպառել էր: Այն ծանր բեռ էր դարձել առաջին հերթին արևմտյան մետրոպոլիաների համար: Արևմտյան քաղաքական շատ գործիչներ համոզվում էին, որ գաղութային ժողովուրդների հետագա ճակատագրի ողջ պատասխանատվությունը պետք է դրվի հենց այդ ժողովուրդների ուսերին:

Այդպես ծնունդ առավ **նոր գաղութացման** գաղափարը: Դրա էությունն այն էր, որ արդյունաբերապես զարգացած երկրների ոչ մեծ խումբը շարունակելու էր շահագործել երկրագնդի բնական և մարդկային ռեսուրսները, սակայն այժմ դա անելու էր նախկին գաղութների ձևական քաղաքական ինքնուրույնության ճանաչման պայմաններում:

Արևմտյան երկրների միջև մրցակցությունը նույնպես արագացնում էր ապագաղութացման գործընթացը: Օրինակ՝ համաշխարհային գերիշխանության ձգտող ԱՄՆ–ի շահերից էր բխում, որ հին գաղութային տերությունները հեռանային իրենց անդրծովյան տիրույթներից: Այդ դեպքում նրանց տեղը կարող էր զբաղեցնել ԱՄՆ–ը՝ իբրև ռազմական և տնտեսական առումով ամենահզոր տերություն:

Ապագաղութացման կարևոր գործոն դարձավ նաև Խորհրդային Միության գլխավորությամբ ասպարեզ եկած համաշխարհային սոցիալիստական համակարգը: Արևմուտք–Արևելք հակամարտության պայմաններում սոցիալիստական պետություններն՝ ի դեմս ազգային–ազատագրական շարժումների տեսնում էին Արևմուտքը թուլացնող իրենց կարևոր դաշնակիցների՝ նրանց ցուցաբերելով բազմաբնույթ աջակցություն: Չինաստանը նույնպես օգնում էր ազգային–ազատագրական պայքար ծավալող ժողովուրդներին ասիական տարածաշրջանում: Այսպիսով՝ կախյալ ժողովուրդները կարող էին հենվել առնվազն Խորհրդային Միության, ԱՄՆ–ի և Չինաստանի աջակցության վրա: Հետևաբար գաղութային կայսրությունների պահպանումն անհնարին դարձավ: Միաժամանակ հենց գաղութային երկրներում ձևավորվում էին մի շարք ներքին նախապայմաններ, որ նպաստում էին անկախության համար պայքարի ակտիվացմանը:

Տարիներ շարունակ գաղութատեր երկրները ձգտում էին առավելագույն շահույթ ստանալու ենթակա տարածքներից: Նրանք գաղութներում կառուցում էին հումքի արդյունահանման և թեթև արդյունաբերական ապրանքների արտադրության ձեռնարկություններ, օգտագործում տեղերում առկա էժան աշխատուժը: Դա իր հետ բերում էր բանկերի, երկաթուղիների ստեղծում, տեղի բանվորական և կառավարող կադրերի նախապատրաստում: Եվ դրանով իսկ տեղերում ձևավորվում էր տնտեսական, սոցիալական և քաղաքական ենթակառուցվածք, որն անհրաժեշտ էր անկախ պետությունների կենսագործունեության համար:

Գաղութային վարչակազմերի գործունեությունն ուղեկցվում էր արևմտյան քաղաքակրթական արժեքների բռնի ներդրմամբ: Իսկ այդ արժեքները նաև հիմնված էին մասնավոր սեփականատիրական հարաբերությունների և ժողովրդավարության վրա: Սակայն կապիտալիստական կարգերը խորթ էին արևելյան հասարակությունների բնակչության մեծ մասի համար: Կոլեկտիվիզմի սկզբունքների ու պետական կարգավորման վրա հիմնված նրանց ավանդական կառույցն ամեն կերպ ընդդիմանում էր այն կոտրելու գաղութատերերի փորձերին: Օտար ծագում ունեցող նորամուծությունները չընդունելու ձգտումը նպաստում էր ժողովուրդների ազգային ինքնագիտակցության աճին և սեփական քաղաքակրթական հենքի վրա նրանց համախմբմանը:

Սրանք էին այն հիմնական պատճառները, որոնք XX դարի սկզբներին հանգեցրին ազգային–ազատագրական շարժման աննախադեպ աճին:

Գաղութային համակարգի փլուզումը և դրա հետևանքները

Գաղութային ժողովուրդների կողմից քաղաքական անկախության ձեռքբերումը տարբեր ձևով էր ընթանում: Նախկին գաղութներից շատերն անկախություն ստացան հարաբերականորեն խաղաղ ճանապարհով: Մյուսների դեպքում անկախությունը ձեռք բերվեց զինված պայքարի արդյունքում:

1944–1954թթ. աշխարհի քարտեզի վրա հայտնվեցին 15 նորանկախ երկրներ: Դրանք հիմնականում Հարավային և Հարավարևելյան Ասիայի երկրներն էին, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի որոշ արաբական պետություններ: Ապագաղութացման գործընթացը հատկապես ակտիվ բնույթ կրեց 1950–1960–ականներին: Այդ շրջանում

փլուզվեցին անգլիական, ֆրանսիական և բելգիական գաղութային կայսրությունները:

Հատկապես մեծ թվով նոր պետություններ ի հայտ եկան Աֆրիկայում: Որոշ չափով ձգձգվեց պորտուգալական գաղութների անկախացումը: Սակայն պորտուգալական գաղութային կայսրությունը ևս դադարեցրեց իր գոյությունը 1970–ական թթ. կեսերին: Գաղութային համակարգը փլուզվեց:

Գաղութային համակարգի փլուզումն ունեցավ որոշակի տնտեսական և քաղաքական հետևանքներ:

Տնտեսական հետևանքները. Պետական անկախության շնորհումը չէր նշանակում տնտեսական անկախության ձեռքբերում: Նորանկախ երկրների կախվածությունն արտաքին առևտրից բերեց նրան, որ իշխանությունը շարունակում էր իր ձեռքում պահել տեղական առևտրական վերնախավը, որը լուրջ շահույթներ էր ստանում ներմուծվող ապրանքների վաճառքից: Նորանկախ պետությունների մեծ մասի բնակչության կենսամակարդակը գրեթե չփոխվեց անկախության ձեռքբերումից հետո: Ավելին՝ նրանցից շատերը կորցրին արտահանման նախկին շուկաները, քանզի գաղութատեր երկրներն էին ապահովում իրենց մուտքը այդ շուկաներ: Արդյունքում նախկին գաղութների մասնաբաժինը միջազգային ապրանքաշրջանառության մեջ նվազեց:

Գաղութային համակարգի փլուզումը լրջորեն անդրադարձավ նաև գաղութային տերությունների տնտեսության վրա: Նախկին գաղութներից բնակչության ներգաղթի արդյունքում լրջորեն փոխվեց Արևմտյան Եվրոպայի երկրների բնակչության ազգային կազմը: Հիմնականում անօրինական ներգաղթողների ներհոսքն իր հետ բերեց նաև լուրջ տնտեսական խնդիրներ՝ կապված աշխատատեղերի հետ:

Քաղաքական հետևանքները. Աշխարհի քարտեզի վրա հայտնվեցին ավելի քան ութ տասնյակ նորանկախ երկրներ: Ի հայտ եկավ նաև **երրորդ աշխարհը:** Միաժամանակ նախկին կայսերական կենտրոնները փորձեցին ստեղծել նախկին գաղութները միասնացնող կազմակերպություններ: Հաճախ նախկին գաղութները ողջունում էին նման զարգացումները: Բանն այն է, որ կայսրության տարբեր հատվածների միջև ձևավորվել էին առևտրատնտեսական հաստատուն կապեր, ինչը խզելը նպատակահարմար չէր: Կայսրության ժողովուրդներն ունեին ընդհանուր մշակութային ժառանգություն և աշխարհայացքային ընդհանրություններ, որ նրանց թույլ էր տալիս գիտակցել մեկուսացման բացասական հետևանքները: Մետրոպոլիան նույնպես ձգտում էր իր ազդեցության տակ պահել կայսրության նախկին անդամներին:

Երրորդ աշխարհի ձևավորումը. Նորանկախ երկրները բաժանվեցին երկու խմբի՝ կապիտալիստական և սոցիալիստական կողմնորոշման երկրների: Կողմնորոշումը կախված էր այն իրողությունից, թե որտեղից էր տվյալ երկիրը ստանում տնտեսական օգնությունն ու սպառազինությունը, և որտեղ էին պատրաստություն անցնում նրա ինժեներական ու զինվորական կադրերը: Այդուհանդերձ կար նաև մեկ այլ տարբերակ՝ ընտրել զարգացման այս կամ այն ուղին, սակայն չդառնալ երկու ճամբարների միջև խաղաքարտ: Այս գաղափարի հետևորդները նախկին գաղութային աշխարհի տեղում ձգտում էին ստեղծել նոր՝ **երրորդ աշխարհը:**

«Երրորդ աշխարհն» ընդհանրացնող հասկացություն է, որ բնորոշում է հիմնականում այն երկրները, որոնք ապագաղութացման բովով են անցել վերջին երկու հարյուրամյակի ընթացքում: Ինքնին «երրորդ աշխարհ» հասկացությունն առաջին անգամ քաղաքական շրջանառության մեջ է դրվել ՄԱԿ–ի գլխավոր քարտուղար **Համմարշելդի** (1953–1961թթ.) կողմից՝ բնորոշելու համար Ասիայի և Լատինական Ամերիկայի աղքատ երկրները: Սակայն հետագայում այս հասկացությամբ էին

բնորոշում երկբևեռ աշխարհի պայմաններում ինքնուրույն դիրքորոշում ունեցող երկրները:

Երրորդ աշխարհը մերժում էր երկու մասի բաժանված աշխարհի երևույթը, որտեղ կշիռ ունեին միայն ԱՄՆ–ն ու ԽՍՀՄ–ը: Մնացյալ երկրները պետք է ընտրություն կատարեին՝ կանգնելով բաժանարար գծի այս կամ այն կողմում: Աշխարհի այդ հատվածը չէր վստահում միջուկային զենքին տիրապետող ու այն բազմապատկող գերտերությունների մտադրություններին: Նրանք մերժում էին վերջիններիս պնդումներն այն մասին, թե ժողովրդավարական կապիտալիզմն ու կոմունիզմը այն իդեալական կենսակերպն են, որ մյուսներն ուղղակի պետք է ընդօրինակեն ու պատճենահանեն:

Ասիայի ու Աֆրիկայի նորաստեղծ պետությունների զգալի մասի որոշումը՝ չկապել իրենց ճակատագիրը գերտերություններից և ոչ մեկի հետ, ձևավորվել է **Ջ.Ներուի** ազդեցության շնորհիվ: Ներուն իրատեսորեն համատեղեց արևմտյան ազատական և ժողովրդավարական արժեքները ԽՍՀՄ–ի կողմից իրագործված արդյունաբերականացման բնագավառում ունեցած ձեռքբերումների նկատմամբ հարգանքի ու համակրանքի հետ: Միաժամանակ նա արգահատանքով էր նայում թե՛ Ստալինի բռնակալությանն ու ոստիկանական վարչակարգին, թե՛ մաքքարտիզմի դաժանությանը ԱՄՆ–ում:

Սա երրորդ աշխարհի երկրների չեզոք ուղու քաղաքականության սկիզբն էր: Նրանց դիրքորոշման հիմքում ընկած էր սառը պատերազմում չեզոքություն պահպանելու հայեցակարգը: Նրանք պետք է հավասար հեռավորություն պահպանեին երկու կողմերի նկատմամբ, միաժամանակ հանդես գային միջնորդի դերում մեծ տերությունների միջև՝ փորձելով մեղմել վտանգավոր անհամաձայնությունները: Նոր պետությունները ձգտում էին խուսափել սառը պատերազմից, սակայն չէին ցանկանում հայտնվել համաշխարհային քաղաքականությունից դուրս: Նրանց թիվն ու կշիռը աշխարհում էականորեն աճեցին հատկապես Աֆրիկայի և Ասիայի երկրների կողմից անկախության ձեռքբերումից հետո:

Թե՛ ԱՄՆ–ը, թե՛ ԽՍՀՄ–ը սկզբնական շրջանում բացասական դիրքորոշում ունեին չեզոքության հետևող երրորդ աշխարհի երկրների նկատմամբ: Սակայն հետագայում նրանք փոխեցին իրենց դիրքորոշումը: Միջազգային ասպարեզում չմիացած կամ երրորդ աշխարհի երկրների գործունեությունը բերեց այն համոզման, որ չի կարելի դատողություններ անել այդ երկրների վերաբերյալ՝ ելնելով կոմունիզմի և հակակոմունիզմի պարզունակ չափանիշներից:

Այսպիսով՝ **20–րդ դարի 2–րդ կեսին փլուզվեց գաղութային համակարգը:** Ի հայտ եկավ **«երրորդ աշխարհը»,** որ եկավ լրացնելու **երկբևեռ աշխարհակարգի** պայմաններում գործող **առաջին** և **երկրորդ աշխարհներին:** ԱՄՆ–ի ազդեցության տակ գտնվող արևմտյան ժողովրդավարական ու զարգացած երկրների խմբավորումը ստացավ **առաջին աշխարհ** կամ **արևմտյան խմբավորում** անվանումը: ԽՍՀՄ–ի ազդեցության տակ գտնվող սոցիալիստական երկրները միավորող ճամբարը ստացավ **երկրորդ աշխարհ** կամ **արևելյան խմբավորում** անվանումը: Իսկ աշխարհի բնակչության մեծ մասը կազմող՝երկու բևեռներին կամ խմբավորումներին չհարող մնացյալ երկրները որակվեցին իբրև **երրորդ աշխարհ:** Երրորդ աշխարհի երկրներին հաջողվեց ստիպել ԽՍՀՄ–ին ու ԱՄՆ–ին՝ համաշխարհային քաղաքականության մեջ ընկալելու իրենց այն դերում, որ նորանկախ երկրներն էին իրենց համար ընտրել:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք, թե երբ է առաջացել գաղութային համակարգը, և ի՞նչ խոշոր գաղութատեր երկրներ կային: Ներկայացրե՛ք գաղութային համակարգի փլուզման հիմնական պատճառները: Բացատրե՛ք նոր գաղութացման գաղափարի էությունը:

2. 1944–1954 թթ. քանի՞ երկիր անկախացավ և ո՞ր տարածաշրջաններում: Ե՞րբ վերջնականապես փլուզվեցին անգլիական, ֆրանսիական, բելգիական, պորտուգալական գաղութային կայսրությունները:

3. Որո՞նք էին գաղութային համակարգի փլուզման տնտեսական և քաղաքական հետևանքները: Ինչո՞ւ է գաղութային կայսրությունների կործանումից հետո հետգաղութային կամ համագործակցության կազմակերպություն ստեղծելու գաղափար առաջանում:

ԳԼՈՒԽ 9. ՄԻԱՍՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

§1. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Հետպատերազմյան աշխարհի բնորոշ գծերից մեկը **տարածաշրջանային միասնացման** (ինտեգրացիա) զարգացումն էր:

XX դ. երկրորդ կեսին ստեղծվեցին բազմաթիվ միջազգային կառույցներ: Երկրորդ աշխարհամարտին հաջորդած ժամանակաշրջանում ի հայտ եկան ՄԱԿ–ը, ՆԱՏՕ–ն, Միջազգային արժութային հիմնադրամը, Համաշխարհային բանկը: Դրվեցին ներկայիս Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության հիմքերը: Ինչպես գիտեք, այդ ժամանակ ստեղծվեցին նաև ներկայումս գոյություն չունեցող երկու կազմակերպություններ՝ Տնտեսական փոխօգնության խորհուրդն ու Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը: Նախկին ԽՍՀՄ–ը կազմող 11 հանրապետություններ **1991թ. դեկտեմբերին** սկիզբ դրեցին միջազգային համագործակցության նոր սուբյեկտի՝ **ԱՊՀ–ի գոյությանը** :

ՄԱԿ–ի ստեղծումը

Հետպատերազմյան կարգավորման կարևորագույն մասը **Միավորված ազգերի կազմակերպության** (ՄԱԿ) ստեղծումն էր: Այն հնարավոր դարձավ աշխարհամարտի ընթացքում ֆաշիզմի դեմ միավորված պետությունների համատեղ ջանքերի արդյունքում: ՄԱԿ–ը փոխարինեց Առաջին աշխարհամարտից հետո ստեղծված Ազգերի լիգային: «Միավորված ազգեր» անվանումն առաջ քաշեց ԱՄՆ–ի նախագահ Ֆ. Ռուզվելտը: Այն առաջին անգամ օգտագործվեց 1942 թ. ստորագրված **Միավորված ազգերի հռչակագրում:** Ըստ հռչակագրի՝ 26 պետություններ պարտավորվում էին շարունակել համատեղ պայքարն ընդդեմ հիտլերյան խմբավորման երկրների:

Յալթայի խորհրդաժողովում որոշվեց, որ ՄԱԿ–ի հիմնադիր կոնֆերանսին կարող են մասնակցել միավորված ազգերը՝ 1945 թ. փետրվարի դրությամբ ամրագրված կազմով, և միացած ազգերը: Վերջիններս այն պետություններն էին, որոնք կոնֆերանսի պահին խզել էին դիվանագիտական և տնտեսական հարաբերությունները ֆաշիստական խմբավորման երկրների հետ, սակայն պատերազմ պետք է հայտարարեին ընդհանուր թշնամուն մինչև 1945 թ. մարտի 1–ը:

ՄԱԿ–ի հիմնադիր կազմ մտան հակահիտլերյան միության **51 անդամ երկրներ:** ՄԱԿ–ի կանոնադրությունն ուժի մեջ մտավ **1945 թ. հոկտեմբերի 24–ին:** Այդ օրն ամրագրվել ու նշվում է իբրև ՄԱԿ–ի օր: ՄԱԿ–ի նպատակներն են.

- խաղաղության և միջազգային անվտանգության պահպանում և ապահովում,
- ագրեսիվ գործողությունների ճնշում,
- միջազգային բնույթի վիճելի խնդիրների կարգավորում խաղաղ եղանակով,
- պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացում,
- տնտեսական, սոցիալական և հումանիտար բնույթի խնդիրների կարգավորում,
- մարդու իրավունքների և ազատությունների խրախուսում ու տարածում՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից ու կրոնից:

ՄԱԿ–ի պաշտոնական լեզուներ ճանաչվեցին անգլերենը, իսպաներենը, չինարենը, ռուսերենը և ֆրանսերենը:

ՄԱԿ–ի կառույցը

ՄԱԿ–ի կառույցում կարևորագույն տեղ է գրավում **Անվտանգության խորհուրդը (ԱԽ):** Այն կրում է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման հիմ-

նական պատասխանատվությունը: ԱԽ–ն իրավասու է որոշում ընդունելու միջազգային պատժամիջոցների կիրառման, խաղաղապահ ուժերի առաքման և ռազմական գործողությունների իրագործման վերաբերյալ:

ԱԽ–ն կազմված էր 15 անդամներից՝ 5 մշտական (ԱՄՆ, ԽՍՀՄ (այժմ՝ Ռուսաստանի Դաշնություն), Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան) և 10 ժամանակավոր: Խորհրդի ոչ մշտական անդամներն ընտրվում են երկու տարի ժամկետով:

ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի գործունեության կարևոր սկզբունքներից է նրա 5 մշտական անդամների միաձայնությունն ու վետոյի իրավունքը: Ագրեսիան կանխելու, խաղաղությունն ապահովելու և այլ կարևոր հարցերի առնչվող քվեարկության ժամանակ հնգյակը պետք է լինի միաձայն: Միայն այդ դեպքում որոշումն ընդունված կհամարվի:

ՄԱԿ–ի կառույցում կարևորագույն տեղ է զբաղեցնում **Գլխավոր ասամբլեան:** Այն գլխավոր խորհրդակցական և ներկայացուցչական մարմին է, որտեղ ներկայացված են ՄԱԿ–ի անդամ բոլոր երկրները: ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեան ընտրում է Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներին, Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամներին, ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարին, ՄԱԿ–ի Միջազգային դատարանի անդամներին, համակարգում է համագործակցությունը տնտեսական, սոցիալական, մշակութային և հումանիտար բնագավառներում:

ՄԱԿ–ի կառույցում մեծ է նաև **Քարտուղարության** դերը: Այն ՄԱԿ–ի ամենօրյա աշխատանքներն իրագործող և ողջ աշխարհում գործունեություն ծավալող միջազգային անձնակազմն է: Քարտուղարության բաժանմունքները տեղակայված են ինչպես ՄԱԿ–ի Նյույորքյան կենտրոնական հաստատություններում, այնպես էլ այլ երկրներում տեղաբաշխված շտաբ–կայաններում: Քարտուղարությունը ապահովում է ՄԱԿ–ի մարմինների աշխատանքը, իրագործում նյութերի տպագրումն ու տարածումը, արխիվների պահպանումը, հրատարակում է անդամ պետությունների կնքած միջազգային պայմանագրերը: Քարտուղարությունը գլխավորում է ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարը: Նա նշանակվում է Գլխավոր ասամբլեայի կողմից 5 տարի ժամկետով և վերընտրվելու իրավունք ունի: ՄԱԿ–ի ներկայիս գլխավոր քարտուղարը **Պան Գի Մունն է** (Հարավային Կորեա):

ՄԱԿ–ի շրջանակներում կարևորագույն դերակատարում ունի ՄԱԿ–ի Միջազգային դատարանը, որն իր գործունեությունը սկսել է 1946թ.:

Դատարանը բաղկացած է 15 անկախ դատավորներից: Այն քննարկում է պետությունների միջև տարածքային, սահմանային և այլ բնույթի վեճերը, ռազմական ուժի ապօրինի կիրառման խնդիրները, խորհուրդներ տալիս ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդին, Գլխավոր ասամբլեային և ՄԱԿ–ի մյուս մարմիններին: Դատական գործի կողմ կարող է հանդիսանալ միայն պետությունը. ֆիզիկական և իրավաբանական անձինք ՄԱԿ–ի Միջազգային դատարան դիմելու իրավունք չունեն: Իր գործունեության ընթացքում դատարանը ոչ միայն էական ներդրում ունեցավ մի շարք իրավական սկզբունքների զարգացման գործում, այլև նպաստեց տարբեր պետությունների միջև եղած սուր վիճաբանությունների կարգավորմանը:

Կարևորագույն կառույցներից են նաև **ՄԱԿ–ի Խնամակալության խորհուրդը և Տնտեսական ու սոցիալական խորհուրդը: ՄԱԿ–ի Խնամակալության խորհուրդը** պատասխանատու էր ՄԱԿ–ի խնամակալության տակ գտնվող տարածքների կառավարման և այնտեղ տիրող իրադրության դիտարկման խնդիրներով: Սակայն այդ մարմինը 1994 թ. դադարեցրեց իր գործունեությունը: **ՄԱԿ–ի Տնտեսական ու սոցիալական խորհուրդը** համակարգում է համագործակցությունը Տնտեսական ու սոցիալական ոլորտներում:

ՄԱԿ–ի հովանու ներքո ստեղծվեցին նաև տնտեսական կայունացման մի շարք կառույցներ ու հաստատություններ՝ Միջազգային արժույթային հիմնադրամը և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը:

Միաժամանակ ՄԱԿ–ի կառույցում էական դեր ունեն մասնագիտացված հաստատությունները: Սրանք ներառում են ինչպես ՄԱԿ–ի կողմից ստեղծված ինքնուրույն միջազգային կազմակերպություններն ու կառույցները (Յունեսկո, Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (Մագատե), Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Համաշխարհային առևտրի կազմակերպություն և այլն), այնպես էլ առանձին ծրագրերն ու հիմնադրամները:

Ներկայումս ՄԱԿ–ի անդամ են հանդիսանում շուրջ 200 երկրներ: 1992թ. մարտի 2–ին ՄԱԿ–ի անդամ դարձան նաև Հայաստանի Հանրապետությունն ու Ադրբեջանը: Վրաստանը ՄԱԿ–ի անդամ դարձավ 1992թ. հուլիսի 31–ին: Մեր հարևան մյուս երկու երկրները՝ Թուրքիան և Իրանը (ներկայումս՝ Իրանի Իսլամական Հանրապետություն) ՄԱԿ–ի հիմնադիր անդամներ են և այս կազմակերպությանն են անդամագրվել դեռ 1945թ. հոկտեմբերի 24–ին:

ՄԱԿ–ի խաղաղապահ առաքելությունները

Մեծ է ՄԱԿ–ի դերը միջպետական և ներպետական հակամարտությունների կարգավորման կամ սառեցման գործում: Միայն 1948–1991 թթ. ընթացքում ՄԱԿ–ի կողմից իրագործվել է խաղաղության հաստատմանն ուղղված 23 գործողություն: Սառը պատերազմից հետո տեղ գտած տարաբնույթ հակամարտությունների պայմաններում ՄԱԿ–ը կանգնեց նոր մարտահրավերների առջև: ՄԱԿ–ի խաղաղարար ներուժի մեծացման առումով հատկապես հուսադրող էր Պարսից ծոցում և Նամիբիայում տեղ գտած հակամարտությունների կարգավորման գործում նրա խաղացած դերը: 1990թ. լիազորելով Քուվեյթը զավթած Իրաքի դեմ բազմազգ զինված ուժերի ռազմական գործողությունները՝ ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը ցույց տվեց իր կամքը՝ ագրեսորին պատժելու հարցում: Նամիբիայի հակամարտությունը նույնպես կարգավորվեց նվազագույն կորուստներով, երբ բանակցային գործընթացի մեջ ներգրավվեցին հակամարտող բոլոր կողմերը:

Դրա հետ մեկտեղ Լիբերիայում, Սոմալիում, Ռուանդայում և այլուր ՄԱԿ–ը լիովին դրսևորեց իր անզորությունը: Համաշխարհային հանրությունը տարիներ շարունակ ուղղակի հետևում էր նախկին Հարավսլավիայում տեղի ունեցող արյունալի իրադարձություններին՝ չունենալով լուրջ դերակատարում դրանց կարգավորման գործում: ՄԱԿ–ն արդյունավետ է գործում միայն այն ժամանակ, երբ ձեռնարկվող քայլերի բեռն ու պատասխանատվությունը ստանձնում են մեծ տերությունները, և նրանց միջև գերիշխում է համաձայնության մթնոլորտը: Ավելին՝ ՄԱԿ–ի կողմից թույլատրված առնվազն երեք ռազմական գործողություններ իրագործվել են ոչ թե ՄԱԿ–ի հովանու ներքո, այլ ԱՄՆ–ի անմիջական ղեկավարությամբ: Այդ շարքին են դասվում ռազմական գործողությունները Կորեայում (1950–1953թթ.), Իրաքում (1990–1991թթ.) և Սոմալիում (1992–1993թթ.):

ՄԱԿ–ի գործունեության քննադատությունը

Սառը պատերազմից հետո միջազգային հանրությունը սկսեց լրջորեն քննարկել ՄԱԿ–ի առջև առկա խնդիրների կարգավորման ու վերջինիս բարեփոխումների հարցը: Ընդհանուր առմամբ նշվում էին հետևյալ խնդիրները.

• ՄԱԿ–ն ի վիճակի չէ հարկ եղած դեպքում սեփական զինված ուժերով կենսագործելու իր իսկ ընդունած բանաձևերը: ՄԱԿ–ի համար սովորական է դառնում նման իրավիճակներում ՆԱՏՕ–ի օժանդակությունը ստանալը:

• ՄԱԿ–ը լիարժեքորեն չի տնօրինում նաև իր իսկ պատասխանատվությամբ գործող զորքերը: ՄԱԿ–ի խաղաղապահ ուժերը, որ տեղաբաշխվում են հակամարտության գոտիներում, չեն մասնակցում ռազմական գործողություններին, չեն զսպում հարձակվողին, այլ անմիջապես նահանջում են: Նման դեպքում վերանում է խաղաղապահ առաքելության իմաստը, քանզի ՄԱԿ–ի զորքերը վերածվում են դիտորդների: Ավելին՝ ՄԱԿ–ի տրամադրության տակ զորքեր ուղարկած երկիրը ցանկացած պահի կարող է հետ կանչել իր ուժերը:

• ՄԱԿ–ը պետք է լիովին բացառի ցանկացած խնդրի միակողմանի լուծումը և դադարի լոկ ուժերի հարաբերակցությունն արտահայտող մարմին լինելուց:

• ՄԱԿ–ն ունի նաև ֆինանսական խնդիրներ: ՄԱԿ–ի անդամ երկրները ժամանակին չեն մուծում իրենց անդամավճարը, իսկ որոշ պետություններ (օրինակ՝ ԱՄՆ–ն) հաճախ են հայտնվում խոշորագույն պարտապանների շարքում:

• Որոշ երկրներ գտնում են, որ ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների թիվը պետք է ընդլայնվի, քանզի այն կազմվել է Երկրորդ աշխարհամարտում հաղթանակած տերությունների շահերին համապատասխան:

• ՄԱԿ–ը քննադատվում է նաև այն պատճառով, որ արագ փոփոխվող համաշխարհային զարգացումներին չի կարողանում արձագանքել նույնպիսի արագությամբ, բավարար արդյունավետություն չունի և այլն:

Այդուհանդերձ՝ Երկրորդ Համաշխարհային պատերազմին հաջորդած Սառը պատերազմի ողջ ժամանակահատվածում և դրանից հետո ՄԱԿ–ն ունեցավ անգնահատելի դրական դերակատարում: Թե երկբևեռ, թե միաբևեռ աշխարհակարգի պայմաններում միջազգային խաղաղության և անվտանգության, մարդասիրական ու խաղաղարար առաքելությունների, սոցիալ–տնտեսական և այլ բնագավառներում ՄԱԿ–ի և նրա տարբեր կառույցների ձեռքբերումներն ահռելի էին: Նույնիսկ շահերի սուր ընդհարման և հակամարտության պայմաններում տերությունները հարկադրված էին պայքարը մղել ստեղծված միջազգային կազմակերպությունների ու համաձայնեցված որոշումների շրջանակներում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք ՄԱԿ–ի ստեղծման գործընթացը: Ի՞նչ ընդհանրություն կար ՄԱԿ–ի և Ազգերի լիգայի միջև: Ինչո՞ւ է ՄԱԿ–ի օրը նշվում հոկտեմբերի 24–ին: Որո՞նք են ՄԱԿ–ի նպատակները:

2. Գծապատկերի միջոցով ներկայացրե՛ք ՄԱԿ–ի կառույցը: Ի՞նչ գործառույթներ է իրականացնում այդ կառույցներից յուրաքանչյուրը: Գնահատե՛ք ՄԱԿ–ի գործունեությունը: Վերհիշե՛ք, թե երբ է ՀՀ–ն դարձել ՄԱԿ–ի անդամ:

3. Ներկայացրե՛ք եվրոպական միասնացման գործընթացը: Ի՞նչ հնարավորություններ ընձեռեց եվրոպական համագործակցությունը անդամ երկրներին: Ե՞րբ և ի՞նչ համաձայնագրերով է ստեղծվել Եվրոպական միությունը: Ներկայումս քանի՞ անդամ ունի այն:

§2. ՄԻԱՍՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ: ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻԱՍՆԱՑՈՒՄԸ

Եվրոպայի միավորման գաղափարը 20–րդ դարի առաջին կեսին

Եվրոպայի միավորման գաղափարը դարերի պատմություն ունի: Սակայն 20–րդ դարում Եվրոպայի սերտացման և միասնացման գործընթացի պայմանական մեկնակետ կարելի է համարել գերմանացի պատմաբան, պանգերմանիստ Ֆրիդրիխ Նոյմանի (1860–1919 թթ.) 1915 թ. հրատարակված **«Կենտրոնական Եվրոպա»** աշխատությունը: Միանգամայն բնական էր, որ իր մասշտաբներով ազգային պետություններին գերազանցող եվրոպական քաղաքական միության ձևավորման գաղափարը ծնվեց Եվրոպայի կենտրոնում հենց այն ժամանակ, երբ պատերազմ էր ընթանում: Բնական էր նաև այն, որ գերմանացի պատմաբանը հատկապես կարևորում էր վերազգային մաքսային միության ստեղծումն ու հասարակական կյանքի մյուս բնագավառներում համագործակցության ծրագրերի իրագործումը:

Երկու աշխարհամարտերի (1914–1918, 1939–1945 թթ.) միջև ընկած ժամանակահատվածում Կենտրոնական Եվրոպայի վերաբերյալ Նոյմանի գաղափարը վերցվեց և ընդունվեց մայրցամաքի հասարակական և քաղաքական այլ գործիչների կողմից և զարգացվելով, վերածվեց **պան–Եվրոպայի՝ ընդհանուր եվրոպական միության** գաղափարի: «Պան–Եվրոպան», ինչպես և Նոյմանի «Կենտրոնական Եվրոպան», պետք է հիմնվեր մաքսային միության սկզբունքի վրա:

1926թ. Վիեննայում կայացավ առաջին պանեվրոպական վեհաժողովը, որի արդյունքում ստեղծվեց պանեվրոպական միությունը: Դրանում մեծ դեր խաղաց ավստրիացի կոմս Ռ. Ն. Կուդենհովե–Կալեգրին (1894–1972), որի նպատակն էր Արևմտյան Եվրոպայի միավորումը մաքսային միության մեջ և նրանում երրորդ ատյանի միջազգային դատական մարմինների հաստատումը՝ առանց այդ երկրներից յուրաքանչյուրի ինքնիշխանության ոտնահարման: Ընդհուպ մինչև 1920–ական թթ. վերջերը հիշյալ առաջարկը մնում էր քաղաքական երազանքների ոլորտում, չստանալով որևիցե պաշտոնական արձագանք: Ահա այս պայմաններում է, որ ձգտնելով իր ձեռքը վերցնել նախաձեռնությունը, 1929թ. Եվրոպական միության ստեղծման գաղափարն առաջադրեց Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Ա.Բրիանը (1862–1932): Ֆրանսիան մտադիր էր Եվրոպայում իր քաղաքական դիրքերն ամրապնդել նաև «պան–Եվրոպայի»՝ Եվրոպայի միավորման գաղափարի իրագործման ճանապարհով: Մեկ տարի անց՝ 1930 թ. ֆրանսիական կառավարությունը պաշտոնապես առաջադրեց **Եվրոպական ֆեդերալ միություն** ստեղծելու գաղափարը: Խոսքը վերաբերում էր եվրոպական պետությունների այնպիսի քաղաքական միության ստեղծմանը, որը կարողանար դիմակայել քաղաքական, տնտեսական և սոցիալական տեսակետից եվրոպական աշխարհին սպառնացող վտանգին: Ըստ էության Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Ա.Բրիանը հանդես եկավ **Եվրոպայի Միացյալ Նահանգների** կամ պան–Եվրոպայի ստեղծման առաջարկով: Հիշյալ մտահղացման համաձայն, այն պետք է լիներ կոնֆեդերատիվ կամ ֆեդերատիվ պետություն, որը հակազդեր ԱՄՆ–ի՝ քաղաքական, տնտեսական և Խորհրդային Միության՝ գաղափարախոսական և քաղաքական էքսպանսիային, ինչպես նաև «քաղաքական, տնտեսական ու սոցիալական տեսակետից եվրոպական աշխարհին սպառնացող վտանգին» ընդհանրապես: Ենթադրվում էր, որ պան–Եվրոպայի մեջ չպետք է մտներ Մեծ Բրիտանիան, որի շնորհիվ հիշյալ կառույցում Ֆրանսիան պետք է գերիշխող դիրքեր գրավեր: Փոխարենը պան–Եվրոպայի գաղափարը (Խորհրդային էքսպանսիային դիմակայելու մտադրությունների հստակեցման շնորհիվ), ֆրանսիական կողմի կարծիքով, պետք է երաշխավորեր

մյուս երկրների աջակցությունը ֆրանսիական առաջարկին: Սակայն քանի որ պլանը հղացել էր նաև Եվրոպայում Ֆրանսիայի ազդեցության ուժեղացման նպատակով և Բրիտանիայի մասնակցության հարցը ևս անորոշ էր, մյուս երկրները (և առաջին հերթին Մեծ Բրիտանիան) բացասաբար արտահայտվեցին Բրիանի առաջարկի կապակցությամբ, և այս նախաձեռնությունը նույնպես հաջողություն չունեցավ: Իսկ արդեն 1933 թ. նացիստների անցումն իշխանության գլուխ Գերմանիայում, զգալիորեն նվազեցրեց պան–Եվրոպայի գաղափարի գրավչությունը: Գաղափարի իրագործումը հետաձգվեց մինչև 2–րդ Աշխարհամարտի ավարտը:

Եվրոպական միասնացումը

Երկրորդ աշխարհամարտից հետո վերստին կյանքի կոչվեց **Եվրոպական դաշնային միության** (Եվրոպայի Միացյալ Նահանգների) կամ **Պան–Եվրոպայի** (համաեվրոպականության) գաղափարը:

Եվրոպական տնտեսական համագործակցության ձևավորման գլխավոր պատճառները արևմտյան և արևելյան խմբավորումների միջև հակամարտությունն ու մրցակցությունն էին: Բացի այդ, արևմտաեվրոպական երկրները ձգտում էին ամրապնդելու իրենց դիրքերը հետպատերազմյան աշխարհի մի շարք տնտեսական կենտրոնների (ԱՄՆ, Ճապոնիա, սոցիալիստական համագործակցություն) առկայության պայմաններում: Միաժամանակ ակնհայտորեն զգացվում էր Արևմտյան Եվրոպայում միջպետական հակասությունները (օրինակ՝ Ֆրանսիայի և Գերմանիայի միջև) կարգավորելու անհրաժեշտությունը:

Արևմտաեվրոպական միասնացման մեջ շահագրգռված էին նաև եվրոպական մոնոպոլիաները: Հետպատերազմյան տասնամյակներում բանկային և արդյունաբերական կապիտալը գնալով վերազգային բնույթ էր ստանում: Ձևավորվել էր վերազգային կորպորացիաների ցանց, որի համար պետական սահմանները խոչընդոտող արգելք էին դարձել:

1951թ. ստեղծվեց **Ածխի և պողպատի եվրոպական միավորումը** (ԱՊԵՄ), որի մեջ մտան 6 երկրներ: 1957թ. ԳԴՀ–ն (Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը), Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Նիդերլանդները և Լյուքսեմբուրգը ստորագրեցին **Եվրոպական տնտեսական համագործակցության** (ԵՏՀ) ստեղծման վերաբերյալ պայմանագիրը: Հետագայում ԵՏՀ–ին միացան Մեծ Բրիտանիան, Դանիան, Իռլանդիան, Հունաստանը, Իսպանիան և Պորտուգալիան:

ԵՏՀ–ի մասնակիցները հիմնեցին նաև **Ատոմային էներգիայի եվրոպական համագործակցությունը՝ Եվրատոմը:** 1967թ. սկսած՝ այս երեք կառույցները (ԵՏՀ, ԱՊԵՄ և Եվրատոմ) անցան միասնական ղեկավարության տակ՝ **Եվրոպական համագործակցություն** կամ ընկերակցություն անվամբ (շտաբ–կայանը՝ Բելգիայի մայրաքաղաք Բրյուսել): 1970–ական թթ. վերջերին սկսեցին անցկացվել **Եվրախորհրդարանի** ուղղակի ընտրություններ: Հիմնվեց նաև Եվրոպական դատարանը:

1992թ. Հոլանդիայի Մաաստրիխտ քաղաքում Եվրոպական ընկերակցության պետությունների ղեկավարները ստորագրեցին միության վերաբերյալ պայմանագիր: Պայմանագիրը հստակեցնում էր եվրոպական միասնացման 3 հենասյուները՝ տնտեսական և արժութային միությունը, ընդհանուր արտաքին քաղաքականությունը, համագործակցությունը արդարադատության և ներքին գործերի համակարգում:

1993թ. սկսած՝ Եվրոպական համագործակցությունը կոչվեց **Եվրոպական միություն:** Իսկ 1995թ. ուժի մեջ մտավ Եվրամիության ինը երկրների միջև սահմանային անձնագրային ստուգման փոխադարձ վերացման մասին **Շենգենյան համաձայնագիրը:**

Շենգենը Լյուքսեմբուրգի հարավ–արևելքում գտվող գինեգործական քաղաքատիպ ավան է, որտեղ հատվում են Գերմանիայի, Ֆրանսիայի և Լյուքսեմբուրգի սահմանները: Այն հայտնի դարձավ 1985 թ. հունիսի 14–ին այստեղ կնքված համանուն պայմանագրի շնորհիվ, որն ի սկզբանե ստորագրեցին Եվրոպական տնտեսական համագործակցության հինգ երկրներ՝ Բելգիան, Նիդեռլանդները, Լյուքսեմբուրգը, Ֆրանսիան և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը: Հետագայում Շենգենյան տարածքն ընդարձակվեց: Ներկայումս Շենգենյան տարածքի մեջ են մտնում քսանհինգ եվրոպական երկրներ: Ընդ որում Շենգենյան տարածքի մեջ են մտնում ոչ միայն Եվրապական Միության երկրների մեծագույն մասը, այլ նաև Եվրամիության անդամ չհանդիսացող երկրներ՝ Նորվեգիան, Իսլանդիան և Շվեյցարիան: Շենգենյան համաձայնագրերն ու դրանց կից գործող կարգերը սկզբնական շրջանում լիովին առանձին գործող իրողություններ էին: Եվ միայն 1997թ. ստորագրված Ամստերդամի համաձայնագրով դարձան Եվրամիության օրենսդրության անբաժանելի մասը: Համաձայնագրերը ենթադրում են՝ Շենգենյան տարածքի երկրների միջև սահմանային անցակետերի վերացում, Շենգենյան վիզաներ տրամադրելու հարցում միասնական քաղաքականության որդեգրում, ոչ անդամ երկրների հետ արտաքին սահմանների խիստ ու ներդաշնակ վերահսկողություն, իրավապահ մարմինների սերտ համագործակցություն և այլն:

Հետագա քայլերի արդյունքում միության երկրների կողմից ստեղծվեց միասնական Կենտրոնական բանկ, իսկ մասնակից երկրների տարածքում մտցվեց միասնական դրամական միավոր՝ **եվրոն:** 2002թ. հունվարի 1–ից սկսած՝ այն շրջանառության մեջ դրվեց իբրև կանխիկ դրամական միավոր:

Եվրոպական միությունը հետպատերազմյան միասնացման գործընթացներից ամենահաջողվածն ու արդյունավետն է: Միությունը բացառիկ միջազգային կառույց է՝ 27 եվրոպական երկրների միավորում, որ ներառում է թե՛ միջազգային կազմակերպության, թե՛ պետության հատկություններ: Այն էական դեր է խաղում միջազգային հարաբերություններում:

Այսպիսով՝ Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված «6–ի Եվրոպան» մեր օրերում վերածվել է «27–ի Եվրոպայի»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք եվրոպական միասնացման գործընթացը: Ի՞նչ հնարավորություններ ընձեռեց եվրոպական համագործակցությունը անդամ երկրներին:
2. Ե՞րբ և ի՞նչ համաձայնագրերով է ստեղծվել Եվրոպական միությունը: Ներկայումս քանի՞ անդամ ունի այն:

ԵՏՀ–ից դեպի Եվրոպական միություն անցած ուղին հետևյալն է.

1957 թ.՝ Հռոմի պայմանագրերը

6–ի Եվրոպան.

Ֆրանսիա, ԳՖՀ (1991 թվականից՝ Գերմանիա), Իտալիա, Բելգիա, Նիդերլանդներ և Լյուքսեմբուրգ

1973 թ. 9–ի Եվրոպան

6 + 3 (Մեծ Բրիտանիա, Դանիա, Իռլանդիա)

1981թ., 1986 թ. 12–ի Եվրոպան

9 + 3 (Հունաստան՝ **1981թ.**, Իսպանիա, Պորտուգալիա՝ **1986թ.)**

1995 թ. 15–ի Եվրոպան

12 + 3 (Ավստրիա, Ֆինլանդիա, Շվեդիա)

2003թ. Աթենքի պայմանագրերը ՝ 25–ի Եվրոպան

15 + 10 (Մալթա, Կիպրոս, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Հունգարիա, Լեհաստան, Լատվիա, Լիտվա, Էստոնիա)

2007 թ.՝ 27–ի Եվրոպան

25 + 2 (Բուլղարիա, Ռումինիա)

ԳԼՈՒԽ 10. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

§1. ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Տնտեսական զարգացման առանձնահատկությունները

Երկրորդ աշխարհամարտից հետո պատերազմի մասնակից պետությունների առջև կանգնեցին տնտեսությունը քայքայված վիճակից դուրս բերելու և խաղաղ ժամանակի պահանջներին համապատասխան վերակառուցելու խնդիրները: Ընդունված է հետպատերազմյան շրջանը՝ մինչև 1970–ական թթ. կեսերը, համարել ***արդյունաբերական հասարակության ավարտական փուլ*** զարգացած կապիտալիստական երկրներում: Այն բնութագրվում է երկարատև տնտեսական վերելքով, ինչը պայմանավորված էր առաջին հերթին արդյունաբերության զարգացման բարձր տեմպերով:

Բուռն վերելքի համար կային մի շարք ***նախադրյալներ***՝ համաշխարհային առևտրի ազատականացում, տարածաշրջանների տնտեսական միասնացման գործընթացներ, գիտատեխնիկական աննախադեպ առաջընթաց, բանվորական ուժի առկայություն և այլն:

Կարևոր նշանակություն ունեցավ նաև դրամի միջազգային փոխարժեքային համակարգի կայունացումը. ամերիկյան դոլարը դարձավ համաշխարհային փոխարժեքային ընդհանուր միավոր: Ստեղծվեցին Միջազգային արժութային հիմնադրամ, Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկ կազմակերպությունները, որոնք վարկեր էին տրամադրում անդամ–երկրներին: Արևմտյան Եվրոպայի համար մեծ դեր խաղաց «Մարշալի պլանով» հատկացված 12,4 մլրդ դոլար օգնությունը:

Հետպատերազմյան տնտեսական հարաբերություններում նոր երևույթ էր վերազգային և բազմազգ ***կորպորացիաների*** գործունեության ծավալումը: Այս գործընթացը տանում էր դեպի ազգային տնտեսությունների միասնացում և, ի վերջո, հանգեցրեց ***համաշխարհայնացման արդի գործընթացին:*** Գերհզոր կորպորացիաները ներդրումներ էին կատարում և մասնաճյուղեր բացում տարբեր երկրներում՝ ստեղծելով համաշխարհային արտադրական և առևտրային ցանց:

Արևմուտքի արդյունաբերական երկրների տնտեսության զարգացման գործում մեծ էր նաև Արևմտյան Եվրոպայի տնտեսական միասնացումը: Այդ գործընթացը սկզբնավորվել էր 1951 թ.՝ Ածխի ու պողպատի եվրոպական միավորման ստեղծմամբ՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Նիդերլանդների, Լյուքսեմբուրգի և Արևմտյան Գերմանիայի մասնակցությամբ: Վեց տարի անց այն վերածվեց Եվրոպայի տնտեսական համագործակցության (ԵՏՀ): Այն դարձավ արևմտաեվրոպական ընդգրկուն տնտեսական միասնական կառույց, որը հայտնի է նաև ***ընդհանուր շուկա*** անունով:

Սառը պատերազմի վերջին տարիներին տնտեսական տարածաշրջանային միասնացում տեղի ունեցավ Հյուսիսային Ամերիկայում (ԱՄՆ, Կանադա, Մեքսիկա):

Ընդհանրապես, տնտեսական միասնացման գործընթացների հիմքում դրվեց ***ազատ առևտրի սկզբունքը.*** ապրանքների մի զգալի մասն ազատվում էր ներմուծման մաքսից, իսկ մնացածի վրա սահմանվում էր շատ ցածր մաքս: Համաշխարհային ազատ առևտրի կարգավորման գործում շրջադարձային էր 23 պետությունների կողմից Առևտրի և տարիֆների մասին գլխավոր համաձայնագրի ստորագրումը (1947 թ.): Ազատ առևտուրը հետպատերազմյան շրջանում էականորեն նպաստեց տնտեսության վերականգնմանը և համաշխարհային շուկայի զարգացմանը:

Արևմտաեվրոպական երկրների տնտեսական կյանքի գլխավոր առանձնահատկությունը 1946–1974 թթ. այն էր, որ տնտեսությունը զարգանում էր առավելապես *ծախսատար (էքստենսիվ)* եղանակով:

Արտադրության մեջ էին ներգրավվում նորանոր նյութական և մարդկային ռեսուրսներ: Արդյունքում՝ Արևմտյան Եվրոպայում գրեթե վերացավ գործազրկությունը (2–3 տոկոս, որն ընդունելի ցուցանիշ է), ծաղկեցին արդյունաբերության մի շարք ճյուղեր (վերամշակող, նավթաքիմիական, ավտոմեքենաշինական, էլեկտրատեխնիկական), գյուղատնտեսությունը լիովին մեքենայացվեց, տեխնիկապես զինվեց: Ճիշտ է, միաժամանակ արտադրությունը զարգանում էր նաև քիչ ծախսատար, խնայողության (ինտենսիվ) ուղիով, բայց այս ժամանակաշրջանում գերակշռողը ծախսատարն էր:

Ընդհանրացնելով Արևմուտքի հետպատերազմյան տնտեսական զարգացման արդյունքները՝ պետք է առանձնացնել հետևյալը. 1) արմատապես վերափոխվեց կապիտալիստական հասարակությունը՝ առաջին հերթին գիտատեխնիկական հեղափոխության շնորհիվ, 2) անհամեմատ աճեց արտադրության միջազգայնացումը, 3) խորացավ աշխատանքի միջազգային բաժանումը և մասնագիտացումը:

Զարգացման այս ընդհանուր միտումների և առանձնահատկությունների արդյունքում առաջատար զարգացած երկրների տնտեսական և տեխնիկական զարգացման մակարդակները գրեթե հավասարվել են, առաջացել է փոխադարձ սերտ կախվածություն նրանց, ինչպես և աշխարհի այլ երկրների տնտեսությունների միջև:

ԱՄՆ–ի տնտեսական հզորացման պատճառները

Հետպատերազմյան շրջանում ԱՄՆ–ը ոչ միայն պահպանեց աշխարհի տնտեսական կենտրոնի կարգավիճակը, այլև ավելի հզորացավ: Իսկ որո՞նք էին նրա հզորացման պատճառները:

ԱՄՆ–ի տարածքում ռազմական գործողություններ չէին մղվել, ուստի նա պատերազմի մասնակից տերություններից միակն էր, որ տնտեսության վերականգնման խնդիր չուներ: Դեռ ավելին՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին և անմիջապես հետո աճել էր նրա արդյունաբերության ծավալը: Կապիտալիստական աշխարհում ԱՄՆ–ի արդյունաբերության տեսակարար կշիռը *1948 թ.* հասավ *56%–ի,* իսկ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի բաժինը միասին 31–ից իջավ 20 տոկոսի: Այսինքն՝ ***մեծացավ ԱՄՆ–ի և մյուս երկրների զարգացման տարբերությունը:***

Ամրապնդվեց ԱՄՆ–ի բանկային համակարգը, կուտակվեցին ոսկու վիթխարի պաշարներ, իսկ դոլարը դարձավ ամենակայուն դրամական միավորն աշխարհում: Վիթխարի քանակությամբ կապիտալի արտահանումը եվրոպական և այլ երկրներ նույնպես նպաստեց ամերիկյան տնտեսության ներուժի ամրապնդմանը:

Աճեց և հզորացավ ԱՄՆ–ի ***ռազմարդյունաբերական համալիրը,*** որը տարեկան տասնյակ միլիարդավոր դոլար հատկացումներ էր ստանում պետական բյուջեից:

ԱՄՆ–ին հաջողվեց արագ հաղթահարել պատերազմի ավարտից հետո առաջացած խնդիրները տնտեսական և սոցիալական կյանքում (զբաղվածության ապահովում, տնտեսության վերակառուցում խաղաղ շրջանին համապատասխան և այլն):

Երկրի տնտեսության կարգավորման գործում մեծ էր պետության դերը, սակայն, ի տարբերություն արևմտաեվրոպական երկրների, այստեղ ***տնտեսության մեջ պետական մասնաբաժին չստեղծվեց:*** Շեշտակի աճեց պետության կողմից սոցիալական ոլորտի կարգավորումը. 1960–ական թթ. վերջին դաշնային բյուջեի 40%–ը հատկացվում էր այս ոլորտին:

ԱՄՆ–ի տնտեսական հզորացման գլխավոր պատճառներից էր ***գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների արագ ներդրումը*** տնտեսության բոլոր ոլորտներում՝ կենցաղային ապրանքների արտադրությունից մինչև գերհզոր ռազմական ու տիեզերքի յուրացմանն ուղղված տեխնիկայի արտադրությունը:

Ավտոմատացված արտադրական հոսքագծերի, էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի, ապա համակարգչային տեխնիկայի ներդրումը ապահովեց երկրի տնտեսական հզորության հսկայական աճը, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները և ոչ ծախսատար արտադրության զարգացումը:

ԱՄՆ–ի գիտական կենտրոններն ու համալսարաններն իրենց տրամադրության տակ ունեին առաջնակարգ մասնագետներ, գերժամանակակից սարքավորումներ և ֆինանսական մեծ միջոցներ: Դրանք հնարավորություն ստեղծեցին ապահովելու գիտական ու տեխնոլոգիական առաջընթացի շարունակականությունը: Իսկ նորագույն նվաճումները շատ արագ մտնում էին արտադրության և սպասարկման ոլորտներ:

Արդյունքում փոխվեց ամերիկյան հասարակությունը: Մարդկանց կենցաղը դարձավ բարեկեցիկ, փոխվեց նրանց աշխարհայացքը, իսկ ***միջին խավը կազմեց երկրի բնակչության կեսից ավելին:*** Ապահովվեց բարձր կենսամակարդակ, մարդիկ ստացան աշխատելու և ստեղծագործելու լայն հնարավորություններ: Արդյունաբերական հասարակության դարաշրջանը ԱՄՆ–ում ավարտվեց 1960–ական թթ. վերջերին:

Գերմանական և իտալական «տնտեսական հրաշքները»

Երկրորդ աշխարհամարտից Գերմանիան դուրս եկավ քայքայված տնտեսությամբ և հաղթողների կողմից ռազմակալված վիճակով: Արևմտյան Գերմանիան կարճ ժամանակահատվածում կարողացավ վերականգնել ավերված տնտեսությունը՝ շնորհիվ ամերիկյան ֆինանսական աջակցության: Մարշալի պլանով երկիրը ստացավ ***3,6 մլրդ դոլար:*** Բացի այդ, Արևմտյան Գերմանիան մոտ տասը տարի ռազմական ոլորտի ծախսեր չարեց, քանի որ իրավունք չուներ՝ որպես պարտված երկիր: Տնտեսությունը վերականգնվեց առաջավոր սարքավորումների և տեխնոլոգիաների ներդրմամբ, ստեղծվեցին նոր, արդիական ճյուղեր:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքականության հիմքում դրվեց ***«սոցիալական շուկայական տնտեսության» մոդելը:*** Այդ տնտեսաձևը կառուցվեց «աշխատանքն առանց կապիտալի, կապիտալն առանց աշխատանքի գոյություն ունենալ չեն կարող» դրույթի վրա: Ազատականացվեցին տնտեսական հարաբերությունները, լայնորեն տարածվեցին ձեռներեցությունն ու ազատ մրցակցությունը: Մինչև 1970 թ. ***արդյունաբերության աճի տեմպերով*** (տարեկան 8%) ***ԳԴՀ–ն առաջին տեղում էր Եվրոպայում:***

Պետությունը մեծ ուշադրություն էր դարձնում սոցիալական խնդիրների լուծմանը: Ներդրվեց պետական կենսաթոշակային ապահովագրություն, իրականացվեց բնակարանային շինարարություն, ստեղծվեց անվճար կրթական համակարգ: Կարգավորվեցին ձեռնարկատերերի և բանվորների հարաբերությունները, վերացավ գործազրկությունը, դադարեցին գործադուլները: Աճեց արհմիությունների դերը: Բարձրացան աշխատավարձերը, բանվորները կարողանում էին գնել ձեռնարկությունների բաժնետոմսեր: Միջին խավը կազմեց բնակչության կեսից ավելին:

1970–ական թթ. ԳԴՀ–ն Արևմտյան Եվրոպայի տնտեսապես ամենազարգացած երկիրն էր: Նրա արդյունաբերության արտադրանքի ծավալը գերազանցում էր Ֆրանսիայի, Իտալիայի, Նիդերլանդների արտադրանքի ծավալը՝ միասին վերցրած: ***Երկրի թռիչքաձև զարգացումն անվանեցին «գերմանական հրաշք»:*** ԳԴՀ–ն Արևմտյան աշխարհի երրորդ զարգացած երկիրն էր ԱՄՆ–ից և Ճապոնիայից հետո:

Ծանր էր *Իտալիայի* դրությունը աշխարհամարտի ավարտից հետո, սակայն այս երկիրը նույնպես կարողացավ թռիչքաձև զարգանալ: *Մարշալի պլանով* Իտալիան երեք տարվա ընթացքում ստացավ *1,5 մլրդ դոլարի* օգնություն: 1951 թ. դրությամբ արդյունաբերությունը վերականգնվել էր, իսկ հաջորդ երկու տասնամյակներում տարեկան աճը կազմեց 6% (երկրորդը Եվրոպայում):

Գիտատեխնիկական հեղափոխության նվաճումներն արագորեն ներդրվեցին արտադրության մեջ, ավարտվեց տնտեսության արդիականացումը: Վերելք ապրեցին մեքենաշինությունը, քիմիական, տեքստիլ արդյունաբերությունը և հատկապես ավտոմեքենաշինությունը: Զարգացան նոր ճյուղեր՝ նավթաքիմիան, էլեկտրոնիկան և այլն: Մեծ եկամուտներ էր ապահովում զբոսաշրջությունը:

Մեծ դեր խաղաց նաև պետության վարած տնտեսական ու սոցիալական քաղաքականությունը: Աճեց պետական մասնաբաժինը տնտեսության մեջ, պետբյուջեի միջոցներով իրականացվեցին տնտեսության կառուցվածքային փոփոխությունները:

«Տնտեսական հրաշքի» արդյունքում երբեմնի ագրարային–արդյունաբերական *Իտալիան դարձավ հարուստ և ժամանակակից արդյունաբերական երկիր:* Այդ հրաշքի շնորհիվ մեղմացան հասարակության ներքին հակասությունները:

Բարօրության պետությունը. «Շվեդական սոցիալիզմը»

Հետպատերազմյան շրջանում արդյունաբերական երկրների տնտեսական և սոցիալական կյանքի կարևոր առանձնահատկություններից էր պետության կարգավորիչ դերի ամրապնդումը: *Արևմտյան Եվրոպայում տիրապետող դարձավ խառը տնտեսությունը:* Պետական (ազգայնացված) սեփականությունն ու պետական կարգավորումը, մասնավոր սեփականությունը, ձեռներեցությունն ու շուկայական հարաբերությունները միահյուսվեցին մեկ տնտեսական օրգանիզմի մեջ: Նրանց միջև հարաբերակցությունը երբեմն փոփոխվում էր, իսկ դրա ձևերն ու բնույթը կապված էին յուրաքանչյուր երկրի ազգային առանձնահատկությունների հետ:

Դեռևս 1930–ական թթ. *Ջ. Քեյնսի* մշակած տնտեսաձևը հետպատերազմյան շրջանում կիրառվեց Արևմուտքի բոլոր զարգացած երկրներում: Այդ քաղաքական կուրսը ստացավ *նորքեյնսականություն* անունը: Դրա էությունը հետևյալն է. *պետական կարգավորման միջոցով աճում է բնակչության գնողունակությունը, որն էլ իր հերթին խթանում է տնտեսական աճը:*

Պետության կողմից իրականացվող սոցիալական ծախսերի ավելացումը և աշխատավարձերի բարձրացումը հանգեցրին նրան, որ մարդիկ դարձան զանգվածային արտադրության ապրանքների սպառողներ: Մարդկանց կենսակերպի անբաժան ուղեկիցը դարձան ավտոմեքենան, սեփական բնակարանը, սառնարանը, հեռուստացույցը, հեռախոսակապը, սպասարկման և ծառայությունների անսպառ ոլորտը: Մարդկանց բարեկեցության չափանիշ դարձավ սեփական ավտոմեքենան. 1980–ական թթ. սկզբին Եվրոպայում կար 100 մլն ավտոսեփականատեր:

Խառը տնտեսությամբ և պետական ակտիվ սոցիալական քաղաքականությամբ համադրված մոդելը ստացավ *բարօրության պետություն* անվանումը: Արևմուտքի քարոզչամեքենան բոլոր միջոցներով տարփողում էր դրա առավելությունները սոցիալիստական մոդելի նկատմամբ: *Բարօրության պետությունն իր բնույթով ժողովրդավարական էր, արտահայտում էր բնակչության բոլոր խավերի և դասերի շահերը:* Այն իր քաղաքականությամբ մեղմացնում էր հասարակության ներքին հակասությունները, կրճատում սոցիալական բևեռացման աստիճանը: Իսկ խորհրդային պետությունը միայն տեսականորեն էր արտահայտում բնակչության շահերը: Գործնականում այն

վերածվել էր կուսակցական–պետական վերնախավի ու վարչարարական ապարատի շահադիտական նպատակների իրացման միջոցի:

Այսպիսով՝ 1970–ական թթ. սկզբներին Արևմուտքի երկրներում ավարտին մոտեցավ արդյունաբերական հասարակության դարաշրջանը: Զարգացած երկրներին բնորոշ էր բարձր կենսամակարդակը: Միջին խավը կազմում էր բնակչության 2/3–ը, ինչը սոցիալական կայունության ամուր երաշխիք է:

Մարդկանց ապրելակերպը, մտածողությունը փոխվեցին: Նրանց պահանջմունքների մեջ այժմ գերակշռում էին ոչ թե հանապազօրյա հաց վաստակելու խնդիրները, այլ հեռանկարային ծախսերը, զանազան ծառայություններից օգտվելը, կրթության, առողջության և հանգստի կարիքները բարձր մակարդակով հոգալը:

Ահա թե ինչու «բարօրության պետության» բնութագրիչներ դարձան նաև կրթական, առողջապահական և սոցիալական օգնության՝ հիմնականում պետության ջանքերով ստեղծված համակարգերը: Պետական բյուջեում աճեց սոցիալական ծախսերի մասնաբաժինը:

Սկանդինավյան երկրներում (Շվեդիա, Նորվեգիա, Դանիա), ուր երկար ժամանակ իշխանության ղեկին մնացին սոցիալ–դեմոկրատական կուսակցությունները, «բարօրության պետությունը» ձեռք բերեց որոշակի յուրատիպություն:

Արդեն գիտենք, որ 1930–ական թթ.՝ Մեծ ճգնաժամի հաղթահարման շրջանում, այս երկրներում գործադրվեց սոցիալական–բարենորոգչական տնտեսաձևը: Այն ճանապարհ հարթեց բարօրության պետության ստեղծման համար: Այսպես կոչված «սոցիալականացված» տնտեսությունն ավարտուն տեսք ստացավ և մեծ հաջողություններ ունեցավ հատկապես հետպատերազմյան շրջանում: ***Շվեդիայում*** սոցիալ–դեմոկրատները իշխանության ղեկին էին 1932–1982 թթ., և պատահական չէ, որ հենց Շվեդիան ավելի ակնառու նվաճումներ ունեցավ հասարակության զարգացման և կատարելագործման ուղղությամբ:

Շվեդիայում պետությունը վերահսկում է արտաքին առևտուրը և կապիտալի արտահանումը, նվազել են արտադրության վարկավորման տոկոսադրույքները: Պետական բյուջեից լայնորեն ֆինանսավորվում են կապիտալ շինարարությունը (այդ թվում՝ բնակարանաշինությունը) և գյուղատնտեսական արտադրությունը: Կիրառվում է ***առաջադիմական հարկման համակարգ,*** որը հնարավորություն է տալիս ազգային եկամուտը վերաբաշխելու բնակչության քիչ ապահով շերտերի օգտին:

Ստեղծվել է սոցիալական ապահովության կայուն համակարգ: Սոցիալական արտոնությունները տարածվում են բնակչության բոլոր խավերի, այդ թվում՝ Շվեդիայում օրինական ձևով բնակվող օտարերկրացիների վրա:

Այսպիսով՝ *տնտեսության զարգացման արդյունքները պետությունը նպատակաուղղում է ամբողջ հասարակության բարեկեցության բարձր մակարդակի ապահովմանը:* Ահա թե ինչու սկանդինավյան երկրներում ձևավորված հասարակությունն անվանում են ***«Շվեդական սոցիալիզմ»:***

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին Արևմուտքի տնտեսական զարգացման առանձնահատկությունները 1946–1974 թվականներին: Ե՞րբ և ի՞նչ նպատակով ձևավորվեց Եվրոպական տնտեսական համագործակցությունը:

2. Որո՞նք էին ԱՄՆ–ի տնտեսական հզորացման պատճառները հետպատերազմյան տարիներին: Ի՞նչ փոփոխություններ կրեց ամերիկյան հասարակությունը:

ԱՄՆ–ում ե՞րբ ավարտին մոտեցավ արդյունաբերական հասարակության դարաշրջանը:

3. Պարզաբանե՛ք Արևմտյան Գերմանիայի և Իտալիայի «տնտեսական հրաշքների» պատճառները և արդյունքները:

4. Ներկայացրե՛ք «բարօրության պետության» բնորոշ կողմերը: Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան մարդկանց կենցաղում և մտածողության մեջ: Ինչո՞ւ են սկանդինավյան երկրներում ձևավորված հասարակությունն անվանում «Շվեդական սոցիալիզմ»: Վերհանե՛ք դրա բնութագրիչ կողմերը:

§2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԱՐԱՁԵՎԸ

ՏՓԽ–ի ստեղծումը

Երկրորդ աշխարհամարտից հետո, ինչպես գիտեք, հասարակության սոցիալիստական մոդելը դուրս եկավ մեկ երկրի շրջանակներից և տարածվեց Արևելյան Եվրոպայում, Ասիայում ու Ամերիկայում: Այդ երկրների մեծ մասը զարգացավ սոցիալիզմի խորհրդային մոդելով, իսկ մյուս մասն ընթացավ զարգացման յուրահատուկ ուղիով:

Սոցիալիզմի ճամբարի ձևավորման գործում կարևոր դեր խաղաց ***Տնտեսական փոխօգնության խորհուրդը*** (ՏՓԽ): Դրա ստեղծման մասին ***1949 թ. հունվարի 6–ին*** հայտարարեցին ԽՍՀՄ–ը, Բուլղարիան, Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան և Չեխոսլովակիան: Հետագայում այդ կառույցին միացան Արևելյան Գերմանիան, Մոնղոլիան, Կուբան և Վիետնամը: Կենտրոնականացումը Մոսկվայում էր, իսկ ԽՍՀՄ–ը գերիշխող ու թելադրող դիրքում էր ՏՓԽ–ում: Այս կազմակերպության շրջանակներում սոցիալիստական երկրներն իրականացնում էին տնտեսական ու գիտատեխնիկական համագործակցություն:

ՏՓԽ–ի գլխավոր նպատակն էր միասնացման շնորհիվ արագորեն վերականգնել անդամ երկրների տնտեսությունը և կառուցել սոցիալիստական տնտեսություն: Խորհրդային տարածևին համահունչ ծրագրվեց իրականացնել արդյունաբերականացում և գյուղատնտեսության կոլեկտիվացում, հաստատել պետական սեփականության գերիշխանություն, նվազագույնի հասցնել կամ վերացնել շուկայական տնտեսածևը:

Սոցիալիստական երկրների տնտեսությունը

Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներն ուժեղ տնտեսական կախման մեջ ընկան ԽՍՀՄ–ից, որը տնօրինում էր հսկայական հումքային ռեսուրսների: *Համագործակցությունը խարսխվեց պլանային–վարչարարական, այլ ոչ թե շուկայական մեխանիզմի վրա:* Այս ամենը բացասաբար անդրադարձավ արևելաեվրոպական երկրների վրա: Նախապատվությունը տրվեց ոչ թե տնտեսական գործոններին, այլ ԽՍՀՄ–ի հանդեպ քաղաքական հանդուրժողականությանը, ղեկավարության մակարդակով անձնական կապերին և այլն:

ՏՓԽ–ի շրջանակներում և՛ Ստալինի, և՛ խորհրդային հաջորդ ղեկավարների օրոք ճնշվում էր ցանկացած ինքնուրույնություն կամ նախաձեռնություն: Սոցիալիզմի կառուցման տարբեր ուղիների մասին դրույթը համագործակցության տարածքում մոռացվեց, և մնաց իրագործելու միայն խորհրդային տարբերակը:

Ձևավորման փուլում ՏՓԽ–ի գլխավոր խնդիրն էր կարգավորել անդամ երկրների միջև արտաքին առևտուրը, իսկ 1954 թ. որոշվեց համաձայնեցնել նաև նրանց տնտեսությունների զարգացման պլանները: Մինչ այդ ԽՍՀՄ–ը բարեկամական քայլ կատարեց՝ հրաժարվելով Հունգարիայից, Ռումինիայից, Բուլղարիայից և Արևելյան Գերմանիայից ստացվող ռազմատուգանքներից:

ՏՓԽ–ի երկրների միջև 1960–ական թթ. իրականացվեց արտադրության միջազգային մասնագիտացում ու կոոպերացում և աշխատանքի միջազգային բաժանում: Ստեղծվեցին միջպետական տնտեսական–ֆինանսական կառույցներ (բանկ, չափանշման ինստիտուտ և այլն), իսկ 1971 թ. գործի դրվեց ՏՓԽ երկրների զարգացման համալիր ծրագիրը՝ միասնացման հենքի վրա:

Միասնացման գործընթացը տվեց շոշափելի արդյունքներ: Արևելաեվրոպական երկրների արդյունաբերական արտադրության տարեկան աճը 1970–ական թթ. առա-

ջին կեսին կազմում էր 6–8%: Ուշագրավ է, որ ՏՓԽ անդամ երկրները տարեկան աճի ցուցանիշով 1950–1970–ական թթ. աշխարհի լավագույն 15 երկրների շարքում էին:

Նշված ժամանակաշրջանում սոցիալիստական ճամբարի երկրների մեծ մասը լուրջ առաջընթաց ապրեց տնտեսության զարգացման ուղղությամբ, որի շնորհիվ բարձրացավ բնակչության կենսամակարդակը: Նախկին ՏՓԽ անդամ երկրների արտադրական, տրանսպորտային և էներգետիկ հզորությունների 65%–ը ստեղծվել է 1946–1970–ական թթ. ԽՍՀՄ–ի օգնությամբ կամ բացառապես նրա կողմից: Դա տնտեսական այն հենքն է, որի վրա այսօր գործում է այդ երկրների տնտեսությունը:

Չինաստանը, Մոնղոլիան, Հյուսիսային Կորեան, Ալբանիան, Վիետնամը և Կուբան, ավելի հետևողական կիրառելով ստալինյան մոդելը սոցիալիզմի կառուցման ժամանակ, վերացրին շուկայական տնտեսությունը և մասնավոր սեփականատիրական հարաբերությունները: Այլ ուղիով ընթացավ Հարավսլավիան, որտեղ ձևավորված հասարակությունը կոչվեց ***«ինքնակառավարվող սոցիալիզմ»:*** Մասնավորապես՝ ձեռնարկությունների շրջանակներում աշխատանքային կոլեկտիվներին տրվեց ազատություն, նրանց գործունեության հիմքում դրվեց ***տնտեսակարգը***՝ ելակետ ունենալով պետական պլանը: Գյուղատնտեսության մեջ կոլեկտիվացումը կատարվեց միայն կամավոր սկզբունքով: Լայն տարածում գտան ապրանքադրամական հարաբերությունները, բայց պահպանվեց համայնավարների ղեկավարման մենաշնորհը ամբողջ տնտեսության նկատմամբ:

Դրա հետ մեկտեղ սոցիալիստական ճամբարի երկրների տնտեսությունը 1970–ական թթ. կեսերից սկսեց լճացում ապրել, ապա ընկավ ճգնաժամի մեջ:

Բոլոր սոցիալիստական երկրներում կառուցված հասարակական մոդելը կաշկանդում էր տնտեսության զարգացումը, հնարավորություն չէր տալիս համարժեք արձագանքելու համաշխարհային տնտեսական զարգացման նոր միտումներին և երևույթներին: Դա հատկապես ցայտուն երևաց՝ կապված գիտատեխնիկական հեղափոխության հետ: Սոցիալիզմի ճամբարի երկրները գնալով ավելի հետ էին մնում առաջավոր կապիտալիստական երկրներից:

Ճիշտ է, այդ տարիներին փորձեր արվեցին բարեփոխելու սոցիալիզմի մոդելը, սակայն դրանք դրական ընթացք չապահովեցին: Վերափոխումների անհաջողության գլխավոր պատճառը կուսակցական–պետական վերնախավի և վարչական ապարատի ուժեղ դիմադրությունն էր այդ բարեփոխումներին: Այս վիճակից կարողացավ դուրս գալ միայն Չինաստանը, որը որդեգրեց հասարակության արդիականացման նոր ծրագիր՝ օգտագործելով շուկայական տնտեսության որոշ բաղադրիչներ (այս մասին՝ §11–ում):

Այսպիսով՝ ավելի քան 40 տարվա գոյությունից հետո ՏՓԽ–ն և սոցիալիզմի համաշխարհային համակարգը դադարեցին գոյություն ունենալուց:

Այնուհանդերձ, նրանց պատմությունը նորագույն պատմության անբաժան մասն է, որի արժևորումը կարևոր է համաշխարհային քաղաքակրթության հետագա առաջընթացի համար: Իսկ մրցակցությունը հասարակական զարգացման տարբեր մոդելների միջև շարունակվում է, և դա ապահովում է քաղաքակրթության առաջընթացը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Արևելյան Եվրոպայի մեծ մասն ընկավ ԽՍՀՄ տնտեսական ազդեցության ոլորտը: Ե՞րբ է ստեղծվել ՏՓԽ–ն, ո՞րն էր դրա ստեղծման հիմնական նպատակը:

2. Ի՞նչ արդյունքներ արձանագրեցին արելաեվրոպական սոցիալիստական երկրները տնտեսության զարգացման առումով: համեմատե՛ք արևելաեվրոպական և ՏՓԽ անդամ մյուս սոցիալիստական երկրների տնտեսական զարգացման արդյունքները:

3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ սոցիալիզմի խորհրդային մոդելի բարեփոխման փորձերը, բացի Չինաստանից, մյուս երկրներում անհաջողության մատնվեցին:

ԳԼՈՒԽ 11. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ 20–ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

§1. ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Մերձավոր և Միջին Արևելքի երկրների արդիականացման գործընթացը մտավ նոր փուլ: Արդիականացման ոլորտում ներգրավվեցին նորանկախ բազմաթիվ պետություններ, այդ թվում արաբական աշխարհի երկրները: Դեպքերի զարգացման վրա մեծապես ազդում էր տարածաշրջանում երկու համակարգերի ու գերտերությունների մրցակցությունը:

Արաբական աշխարհի զարգացման միտումները

Արաբական աշխարհն ընդգրկում է մի հսկայական տարածաշրջան՝ Մերձավոր Արևելքից Աֆրիկայի հյուսիսով մինչև Ատլանտյան օվկիանոս:

Մերձավոր Արևելքում Օսմանյան տերության անկումից հետո որոշ արաբական երկրներ՝ Եգիպտոսը և Իրաքը, ձևականորեն ստացան անկախություն: Ազգերի լիգայի որոշումով Սիրիան և Լիբանանը տրվեցին Ֆրանսիային, իսկ Անդրհորդանանը՝ Անգլիային:

Երկրորդ աշխարհամարտից հետո Անգլիան և Ֆրանսիան հրաժարվեցին իրենց մանդատներից: Ապագաղութացման արդյունքում անկախություն նվաճեցին Սիրիան, Ալժիրը, Թունիսը, Մարոկկոն, Լիբիան, Սուդանը, Օմանը, Բահրեյնը և այլ երկրներ: Անկախացման գործընթացի ավարտից հետո այսօր գոյություն ունեն 21 արաբական երկրներ:

Նրանց զարգացման առանձնահատկություններորը պայմանավորված են մի շարք գործոնների առկայաությամբ՝ մուսուլմանական ավանդականության ամուր դիրքեր. արդիականացման գործընթաց և արդյունաբերական հասարակության ազդեցություն. նավթային գործոն. երկու գերտերությունների մրցակցություն արաբական աշխարհում. Անգլիայի և Ֆրանսիայի հետգաղութային ազդեցության պահպանում և այլն:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում արաբական աշխարհի որոշ երկրներ զարգանում էին արևմտյան հասարակության ազդեցությամբ (Լիբանան, Եգիպտոս), մի մասը «սոցիալիզմի» (Սիրիա, Լիբիա, Ալժիր, Եմենի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն), երրորդ խումբ երկրներում հաստատվեց միապետական իշխանություն՝ Հորդանան, Մարոկկո, Սաուդյան Արաբիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Բահրեյն և այլն:

Արաբական աշխարհում, և, մասնավորապես, Մերձավոր Արևելքում միջազգային իրադրությունը պայմանավորված է նաև պաղեստինյան հիմնախնդրով: ՄԱԿ–ի 1947 թ. որոշմամբ Պաղեստինում պետք է ստեղծվեին հրեական և արաբական պետություններ: 1948 թ. առաջացավ Իսրայել հրեական պետությունը, իսկ արաբականը չստեղծվեց: Հենց նույն թվականին սկսվեց արաբա–իսրայելական առաջին պատերազմը: Մինչև 1991 թ. տեղի են ունեցել հինգ նման պատերազմներ: Հակամարտությունը շարունակվում է նաև մեր օրերում:

Թուրքիա. անկայուն կայունություն

Հետպատերազմյան առաջին տարիներին երկիրը գտնվում էր ծանր սոցիալ – տնտեսական վիճակում: Իսկ ներքաղաքական կյանքին բնորոշ էին ճգնաժամերն ու քաղաքական ուժերի հաճախակի վերադասավորումները: Թուրքիայում առաջացան մոտ 30 կուսակցություններ: Դրանց մեջ առաջատարը Ժողովրդավարական կուսակցությունն էր, որն էլ 1950 թ. եկավ իշխանության:

Նոր կառավարությունը նահանջեց էտատիզմի քաղաքականությունից, մեծ տեղ տրվեց ազատ ձեռնարկատիրությանը, գյուղատնտեսության մեջ ավելացավ կապիտալիստական տնտեսաձևի մասնաբաժինը:

ԱՄՆ–ի աջակցությունը, Մարշալի պլանի մեջ ընդգրկվելը, ամերիկյան ներդրումները պայմանավորեցին Թուրքիայի կողմնորոշումը դեպի Արևմուտք: Երկիրը 1952 թվականին մտավ ՆԱՏՕ–ի կազմը՝ դառնալով նրա հենակետը ԽՍՀՄ հարավային սահմանների մոտ:

Ժողովրդավարների ազդեցության ուժեղացումը նրանց դեմ համախմբեց նախկին վարչակարգի կողմնակիցներին: Թուրքիայի քաղաքական կյանքում ավանդաբար մեծ դեր է խաղում բարձրագույն զինվորականությունը: 1960 թ. զինվորական հեղաշրջման արդյունքում իշխանությունն անցավ Ազգային միասնության կոմիտեի ձեռքը: Վարչապետ Մենդերեսը մահապատժի ենթարկվեց, իսկ նախագահ Բայարը՝ ցմահ բանտարկության: Զինվորականները հայտարարեցին, որ իրենք հավատարիմ են մնալու Աթաթյուրքի պատգամներին:

Մեկ տարի անց ԱՄԿ–ն իշխանությունը փոխանցեց սահմանադիր ժողովին, ընդունվեց նոր սահմանադրություն: Նախագահ ընտրվեց հեղաշրջման ղեկավար գեներալ Գյուրսելը: Կրկին հռչակվեցին ժողովրդավարական ազատություններ: Ստեղծվեցին աջ և ձախ ուղղությունների նոր քաղաքական կուսակցություններ: Գաղտնի կամ կիսագաղտնի սկսեցին գործել իսլամական ծայրահեղական կազմակերպություններ:

Թուրքիայում ներքաղաքական վիճակը կրկին սրվեց 1970–ական թթ. վերջին: Բարձրագույն զինվորականությունը գլխավոր շտաբի պետ գեներալ Էվրենի գլխավորությամբ ստեղծեց Ազգային անվտանգության խորհուրդ: 1980 թ. հերթական զինվորական հեղաշրջման արդյունքում այդ խորհուրդը երեք տարով իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Գլխավոր նպատակ հռչակվեց ժողովրդավարության համար ամուր հիմքերի ստեղծումը, որպեսզի վերջինս «կարողանա ինքն իրեն վերահսկել»: Կրկին թույլատրվեց կուսակցությունների գործունեությունը, սակայն վերապահումով. ստեղծվող կուակցությունները չպետք է լինեին հին կուսակցությունների ժառանգորդները, իսկ նախկին կուսակցական առաջնորդները չէին կարող գլխավորել նոր կուսակցությունները:

1983 թ. ընտրություններում հաղթեց «Մայր հայրենիք» կուսակցությունը, իսկ նրա առաջնորդ Թ. Օզալը դարձավ վարչապետ: Օզալը իրականացրեց տնտեսության ազատականացման և շուկայական հարաբերությունների անցման քաղաքական կուրս: Մեծ տեղ տրվեց օտարերկրյա կապիտալի ներդրմանը, դրա համար ստեղծվեցին հարկային արտոնություններ:

Չնայած տնտեսական առաջընթացին՝ երկրում այդպես էլ ժողովրդավարությունը գործնականում ամուր հիմքերի վրա չի դրվել: Ներքաղաքական վիճակի պարբերական անկայունացման մեջ 1980–ական թվականներից ի վեր մշտական գործոն է դարձել քրդական հիմնախնդիրը: Երկրի հարավ–արևելյան շրջաններում տարիներ շարունակ ռազմական բախումներ են տեղի ունենում թուրքական բանակի և Քրդական բանվորական կուսակցության մարտիկների միջև:

Արդի փուլում Թուրքիայի ներքաղաքական կյանքում նույնպես առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, չնայած որ երկիրը զգալի առաջընթաց է ապրել տնտեսության բնագավառում: Երկիրը փորձում է մաս կազմել Եվրամիությանը և դառնալ տարածաշրջանային տերություն: Այդ նպատակով ձգտում է կարգավորել հարաբերությունները բոլոր հարևանների՝ այդ թվում Հայաստանի Հանրապետության հետ:

Իրան. աշխարհիկ միապետությունից դեպի իսլամական հանրապետություն

Հետպատերազմյան առաջին տարիներին Իրանի տնտեսությունը խորը ճգնաժամի մեջ էր: Երկրի ներքաղաքական կյանքին բնորոշ էր միապետական իշխանության սահմանափակման և մեջլիսի դերի ուժեղացման համար մղվող պայքարը:

Երկրում, ԽՍՀՄ օժանդակությամբ, ակտիվացան նաև ինքնավարության ձգտող ազգային փոքրամասնությունները: Ստեղծվեցին քրդական և ադրբեջանական ինքնավարություններ, սակայն 1947 թ. սկզբին դրանք վերացվեցին կառավարական զորքերի կողմից:

Իրանում 1950 թ. հայտնի քաղաքական գործիչ Մ. Մոսադեղի գլխավորությամբ ստեղծվեց Ազգային ճակատ, որը պայքարում էր նավթի արդյունաբերությունը ազգայնացնել: 1951 թ. Մոսադեղը մեջլիսում հաստատել տվեց նավթային արդյունաբերության ազգայնացման մասին օրենքը: Դա առաջին հերթին ուղղված էր երկրի նավթային ոլորտը տնօրինող Անգլիայի և ԱՄՆ–ի դեմ: Շուտով Մոսադեղը դարձավ վարչապետ: Նրա հեղինակությունն այնքան աճեց, որ Ռեզա շահը ցրեց կառավարությունը: Վերականգնվեցին Արևմուտքի երկրների՝ հատկապես ԱՄՆ–ի դիրքերը Իրանում:

Երկրում 1962 թվականից սկսվեց բարեփոխումների մի շրջան, որի նպատակն էր արդիականացնել Իրանը, ստեղծել արդյունաբերական հասարակություն: Սա այսպես կոչված «սպիտակ հեղափոխության» շրջանն էր: Կանոնակարգվեց հողային սեփականության հարցը գյուղում, 4,3 մլն գյուղացիներ հողաբաժին ստացան: Միաժամանակ իրականացվեց ազգայնացման ու սեփականաշնորհման քաղաքականություն: Արդիական պահանջներին համապատասխան բարեփոխվեց ու զարգացավ կրթական համակարգը, հատկապես բարձրագույն կրթությունը:

Ճիշտ է, արդիականացման ուղղությամբ երկիրը զգալի ձեռքբերումներ արձանագրեց, սակայն 1970–ական թթ. վերջին առաջացել էր լարված ներքաղաքական իրավիճակ: Շահից դժգոհ էին իսլամական հոգևորականությունը, աջ ու ձախ քաղաքական ուժերը: Ժողովրդի գժգոհությունը վերաճեց հզոր ընդդիմադիր շարժման, որը գլխավորեց շիա հոգևորականությունը: Կրոնական առաջնորդները պահանջում էին վերադառնալ ավանդական իսլամական արժեքներին, քանի որ, նրանց կարծիքով, արևմտյան արժեքներին դավանելն է երկրին հասցրել ծանր վիճակի:

Իրանում 1978 թ. սկսվեց հեղափոխություն, որի արդյունքում միապետությունը տապալվեց, իսկ շահը փախավ երկրից: 1979 թ. ապրիլի 1–ին հռչակվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը, ընդունվեց սահմանադրություն: Սակայն պետական իշխանությունից վեր ստեղծվեց 12 հոգևոր առաջնորդներից (այաթոլլահներ) կազմված խորհուրդ: Այն գլխավորող առաջնորդը՝ ռահբարը, բացառիկ իրավունք ունի պաշտոնազուրկ անելու երկրի նախագահին: Իսկ խորհուրդը կարող է չեղյալ համարել մեջլիսի ընդունած ցանկացած օրենք, որը հակասում է շարիաթի կանոններին: Իրանի առաջին ռահբար դարձավ հեղափոխության ճանաչված ղեկավար այաթոլլահ Խոմեյնին: Այսպես Իրանը վերածվեց թեոկրատական պետության:

Նոր իշխանությունները փակեցին երկրում գործող օտարերկրյա բանկերն ու ընկերությունները, վերացրեցին ամերիկյան ռազմակայանները: Սրվեցին հարաբերությունները նաև ԽՍՀՄ–ի հետ: 1980 թ. Իրանի Իսլամական Հանրապետությունը պատերազմ սկսեց Իրաքի դեմ, որը տևեց ութ տարի: Պատերազմող կողմերն այդպես էլ չհասան իրենց նպատակին:

Այսպիսով՝ սառը պատերազմի դարաշրջանի ավարտին Իրանում կատարվեց վերադարձ իսլամի ավանդույթներին: Շիաները հատկապես անհանդուրժողաբար են տրամադրված արևմտյան հասարակության ու նրա արժեքների հանդեպ:

Այսպիսով՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրները Երկրորդ աշխարհամարտից հետո ապրեցին հակասական զարգացումներով հարուստ մի ժամանակաշրջան: Արաբական աշխարհի երկրները հետպատերազմյան առաջին տարիներին անկախացան ու բռնեցին արդիականացման ուղին: Նրանց զարգացման ընթացքը շատ բանով պայմանավորված է համաշխարհային տնտեսական և աշխարհաքաղաքական գործոններով: Թուրքիան փորձում է մերձենալ եվրոպական քաղաքակրթությանը, արդիականացնել հասարակությունը, սակայն երկիրը դեռ հեռու է ժողովրդավարական լինելուց: Իրանում տապալվեց շահական միապետությունը, 1979 թ. հաստատվեց իսլամական հանրապետություն: Իսլամի և արդիականացման միջև հակասությունը բնորոշ է Իրանին նաև արդի փուլում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ փոփոխությունների ենթարկվեց հետպատերազմյան ժամանակաշրջանի արաբական աշխարհը: Արաբական երկրների պետական կառավարման ինչ ձևեր կարող եք նշել: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է այդքան երկար շարունակվում արաբա–իսրայելական հակամարտությունը Պաղեստինում:

2. Պարզաբանե՛ք հետպատերազմյան Թուրքիայի զարգացման առանձնահատկությունները: Ինչո՞ւ նա անցավ Արևմուտքի կողմը: Ի՞նչ դեր է խաղում բարձրագույն զինվորականությունը Թուրքիայի ներքաղաքական կյանքում: Ներկայացրե՛ք Թուրքիայի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակները արդի փուլում: Փորձե՛ք ներկայացնել, թե ի՞նչ ազդեցություն են ունենում քրդական և հայկական հարցերը թուրքական պետության վրա:

3. Ի՞նչն էր բնորոշ Իրանի ներքաղաքական կյանքին հետպատերազմյան առաջին տարիներին: Ինչո՞ւ շահը ցրեց Մոսադեղի կառավարությունը: Ներակայացրե՛ք «Սպիտակ հեղափոխության» նշանակությունը: Որո՞նք էին 1978–1979 թթ. իրանական հեղափոխության գլխավոր պատճառները: Նշե՛ք դրա հիմնական արդյունքները:

§2. ՉԻՆԱՍՏԱՆ, ՀՆԴԿԱՍՏԱՆ, ՃԱՊՈՆԻԱ. ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԱՁԵՎԵՐԸ

Չինական սոցիալիզմը

Երկրորդ աշխարհամարտի ավարտին Չինաստանն ազատագրվեց ճապոնական բռնազավթումից, և մասնատված երկիրը միավորվեց: Սակայն հետպատերազմյան շրջանում նոր ուժով բորբոքվեց քաղաքական պայքարը համայնավարների և գոմինդանականների միջև: Նրանց զինված ուժերը 1946–1949 թթ. ծավալեցին քաղաքացիական արյունալի պատերազմ: Համայնավարները Մաո Ցզեդունի գլխավորությամբ հաղթեցին: 1949 թ. հոկտեմբերի 1–ին Պեկինում Մաո Ցզեդունը հռչակեց Չինական Ժողովրդական Հանրապետության ստեղծման մասին: Գոմինդանականները Չան Կայշիի գլխավորությամբ ամրացան Թայվան կղզում և այնտեղ ստեղծեցին չինական երկրորդ պետությունը:

ՉԺՀ–ն դարձավ սոցիալիստական պետություն: ԽՍՀՄ–ի բազմակողմանի օգնությամբ և օրինակով վերափոխվեց չինական հասարակությունը: Ազգայնացվեց ամբողջ մասնավոր կապիտալը: Հողը բաժանվեց գյուղացիներին, ապա կատարվեց գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացում: Սկսվեց երկրի արդյունաբերականացումը:

Երկրում հաստատվեց սոցիալիզմի խորհրդային մոդելը՝ նույն բովանդակությամբ և հիմնախնդիրներով: Ձևավորվեց կոմկուսի մենատիրությունը և Մաոյի անձի պաշտամունքը: Վերջինիս չէր բավարարում Չինաստանում սոցիալիզմի կառուցման տեմպը: Եվ 1958 թնականին նա ազդարարեց նոր ծրագրի իրագործման մասին, որով նախատեսվում էր «մեծ թռիչքի» օգնությամբ կարճ ժամկետում կառուցել կոմունիզմ: Այս ուտոպիական ծրագիրը ոչ միայն ձախողվեց, այլ նաև ծանր դրության մեջ դրեց երկրի տնտեսությունը, առաջացավ լարված սոցիալական վիճակ, աշեց ժողովրդի դժգոհությունը: Մաոն նոր ելք «գտավ» իրավիճակը շտկելու համար: 1966 թ. սկսվեց «կուլտուրական հեղափոխությունը», որը շարունակվեց մինչև առաջնորդի մահը (1976 թ.), սակայն էական ոչինչ չտվեց: Ընդհակառակը, հալածանքների ու պատժի ենթարկվեցին կուսակցական ու պետական առաջադեմ գործիչները:

ՉԺՀ–ի նոր ղեկավար դարձավ Մաոյի կողմից հալածված Դեն Սյաոպինը: Նա պետությունը ճգնաժամից հանելու և արդիականացնելու նպատակով սկսեց իրագործել նոր քաղաքական կուրս: Այն ստացավ «Չորս արդիականացում» անունը: Գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների հիման վրա պետք է արդիականացվեին արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, գիտությունը և ռազմական ոլորտը: Ի դեպ, դեռ 1964 թ. Չինաստանը դարձել էր աշխարհի չորրորդ միջուկային զենք ունեցող տերությունը:

Չինական հասարակությունն արագ ոտքի կանգնեց և սկսեց բարձր տեմպերով զարգանալ: Սոցիալիզմի պլանային տնտեսության մեջ հետևողականորեն ներմուծվեց շուկայական բաղադրիչը: Թույլատրվեց մասնավոր կապիտալի գործունեությունը ազատ տնտեսական գոտիներում, բուռն կերպով զարգացավ ներքին ու արտաքին առևտուրը: Ձեռնարկություններն իրավունք ստացան ինքնուրույն դուրս գալ արտաքին շուկա: Գործունեության ասպարեզ բացվեց նաև մանր սեփականատերերի համար: 1980–ական թթ. վերջին Չինաստանը կարողացավ հաղթահարել ամբողջատիրական սոցիալիզմի տնտեսական կապանքները:

Արդիականացման սեփական՝ «չինական մոդելի» շնորհիվ բնակչության թվով աշխարհի ամենամեծ երկիրը ոչ միայն լուծեց իր պարենային խնդիրը, այլև դարձավ արդյունաբերական ու գյուղատնտեսական ապրանքներ արտահանող, ժամանակակից տեխնոլոգիաներ արտադրող պետություն:

ՉԺՀ–ում ստեղծվել է յուրահատուկ իրավիճակ. մի կողմից՝ կոմկուսի քաղաքական մենատիրությունն է, մյուս կողմից՝ պլանային ու շուկայական բաղադրիչներով տնտեսությունը: Այնուհանդերձ՝ պատմական փորձը վկայում է, որ չինական հասարակության համախմբման և ամրության հիմքը հազարամյակների ընթացքում ձևավորված ազգային աժեհամակարգն է:

Այսօր զարգացման մի շարք ցուցանիշներով Չինաստանը դուրս է եկել աշխարհում առաջին տեղը, իսկ ըստ որոշ կանխատեսումների 2020–ական թթ. նա կարող է դառնալ տնտեսապես ամենահզոր երկիրը:

Արդիականացման հնդկական մոդելը

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո հնդիկների ազատագրական պայքարը նոր թափով շարունակվեց: Առաջնահերթ նպատակն էր անկախության նվաճումը և երկրի միասնականության պահպանումը, որի ջատագովնե էր Ազգային կոնգրեսը՝ Ներուի գլխավորությամբ: Գաղութային տիրապետության դեմ հնդիկների մղած երկարատև պայքարը 1940–ական թթ. երկրորդ կեսին վերջապես ավարտվեց հաջողությամբ: 1947 թ. անգլիական նախկին գաղութը ստացավ ինքնիշխանություն, սակայն երկիրը կրոնական հատկանիշի հիման վրա բաժանվեց երկու մասի՝ Հնդկաստան և Պակիստան դոմինիոնների:

Երեք տարի անց Հնդկաստանը դոմինիոնի կարգավիճակից անցավ լիակատար անկախության: Ընդունված սահմանադրությամբ երկիրը հռչակվեց խորհրդարանական հանրապետություն: Բազմալեզու և բազմակրոն պետությունում պաշտոնական լեզու դարձավ անգլերենը: Քաղաքական կյանքի առաջատար ուժը Հնդկական ազգային կոնգրես կուսակցությունն է: Առաջին վարչապետ ընտրվեց ազատագրական պայքարի և ՀԱԿ–ի ճանաչված առաջնորդ Ջավահարլալ Ներուն, որը 17 տարի ղեկավարեց երկիրը: Նա աշխարհիկ հասարակության ստեղծման և կրոնական հանդուրժողականության հաստատման քաղաքական կուրս էր վարում: Նրա ջանքերի շնորհիվ Հնդկաստանը դարձավ Չմիավորված երկրների շարժման հիմնադիրներից մեկը:

Ներուն երկրի տնտեսական հետամնացությունը և ծայրահեղ աղքատությունը վերացնելու նպատակով իրականացրեց մի շարք բարեփոխումներ: Հասարակության արդիականացմանը պետք է ծառայեր տնտեսության խառը մոդելը՝ պետական և մասնավոր հատվածներով: Նրա քաղաքական գիծը շարունակեց դուստրը՝ Ինդիրա Գանդին:

Մեծ նշանակություն ունեցավ հողային հարցի լուծումը. հողազուրկ գյուղացիները հողակտորներ ստացան: Պետության օգնությամբ հնդկական գյուղը ոտքի կանգնեց և կարողացավ ապահովել մեկ միլիարդ բնակչություն ունեցող երկրի պարենային նվազագույն կարիքները:

Տնտեսության զարգացման հնգամյա պլանների կիրառմամբ պետությունը ստեղծեց ժամանակակից մետաղաձուլական, քիմիական, ատոմային արդյունաբերություն, էլեկտրոնիկա, տեխնոլոգիաներ և այլն: Երկիրն ունի ատոմային զենք և ժամանակակից զինված ուժեր: Ամեն կերպ խրախուսվում է մասնավոր հատվածի զարգացումը, որը կազմում է տնտեսության մոտ 80 տոկոսը: Մեծ չափերով ներդրվում է օտարերկրյա կապիտալը:

Արդիականացման ուղղությամբ ունեցած հաջողությունների հիմնական գրավականը հինդուիստական արժեքների և եվրոպական ժողովրդավարական սկզբունքների արդյունավետ միահյուսումն է: Ակնհայտ ձեռքբերումների կողքին հնդկական հասարակությունում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ՝ աղքատություն և անգրագիտություն, կաստայական կարգով պայմանավորված սոցիալական շերտավորում, միջէթնիկական և կրոնական հակասություններ և այլն: Չնայած դրան՝ Հնդկաստանին բնորոշ է ներքին կայունությունը, գաղափարական և կրոնական հանդուրժողականությունը, բռնության մերժումը:

«Ճապոնական հրաշքը»

Երկրորդ աշխարհամարտում կրած պարտությունից հետո, 1946 թ. մինչև 1952 թ., Ճապոնիան գտնվում էր ամերիկյան ռազմակալական վարչակարգի վերահսկողության ներքո:

ԱՄՆ–ի տնտեսական ու քաղաքական աջակցությամբ էլ երկրում իրականացվեցին արմատական վերափոխումներ: Արդյունքում՝ Ճապոնիան ապառազմականացվեց ու դարձավ ժողովրդավարական երկիր:

Նոր սահմանադրությամբ, որը գործում է 1947 թ. մինչ օրս, պահպանվեց միապետությունը: Սակայն կայսրն այլևս չունի իրական իշխանություն. նա համարվում է «ազգի միասնության խորհրդանիշը»: Բարձրագույն իշխանությունը պատկանում է երկպալատ խորհրդարանին, որն ընտրում է կառավարություն: Երկրի հիմնական օրենքի համաձայն՝ կանայք իրավունքներով հավասարվեցին տղամարդկանց:

Վերացվեց անցյալի մնացուկ ավատատիրական հողային սեփականությունը, ինչը ուղի հարթեց գյուղատնտեսության արագ զարգացման համար:

Հետպատերազմյան մի քանի տարում վերականգնվեց երկրի տնտեսությունը: Դրանից հետո նոր թափով շարունակվեց երկրի արդիականացումը: Եթե հետպատերազմյան առաջին տասնամյակում Ճապոնիայի տնտեսությունը դանդաղ էր զարգանում, ապա հաջորդ երեք տասնամյակների ընթացքում զարգացումն ընդունեց աննախադեպ տեմպեր:

Տնտեսության թռիչքաձև վերելքի շնորհիվ Ճապոնիան 1970–1980–ական թթ. վերածվեց արդյունաբերական հզոր տերության, դարձավ կապիտալիզմի երրորդ տնտեսական կենտրոնը՝ ԱՄՆ–ից և Եվրամիությունից հետո: Բնակչության մեկ շնչին ընկնող եկամտի ցուցանիշով գերազանցեց ԱՄՆ–ին, իսկ աշխատանքի արտադրողականության մակարդակով առաջ անցավ Արևմտյան Եվրոպայի երկրներից ու ընդհուպ մոտեցավ ԱՄՆ–ի ցուցանիշին (իսկ 1950–ական թթ. այդ ցուցանիշով հետ էր ԱՄՆ–ից վեց անգամ): Ճապոնիան աշխարհում առաջին տեղը գրավեց, օրինակ, նավաշինության, տեսա–ձայնային տեխնիկայի, երկրորդ տեղը՝ էլեկտրոնիկայի, ավտոմեքենաշինության արտադրության գծով և այլն:

Ճապոնիան աստիճանաբար անցում է կատարում տեղեկատվական հասարակության, ուր հիմնարար արժեք են գիտելիքները և տեղեկատվությունը: Դեռ 1970–ական թթ. պատենտներ ու լիցենզիա գնելու փոխարեն առաջնայնությունը սկսեցին տալ գիտական ու տեխնիկական հետազոտությունների ֆինանսավորմանը: Ձեռք բերվեցին խոշոր նվաճումներ այդ ուղղությամբ, որը հիմնվում է երկրի կրթական բարձր մակարդակի վրա:

Տնտեսական «հրաշքը» հնարավոր դարձավ պետության վարած նպատակամետ ու հետևողական քաղաքականության շնորհիվ: Դրան նպաստեցին ամերիկյան և մյուս օտարերկրյա կապիտալի ու տեխնոլոգիաների ներհոսքը, ինչպես նաև ռազմական ոլորտի չնչին ծախսերը. Ճապոնիան մեծ բանակ պահելու իրավունք չունի:

Սակայն «հրաշքի» ամենագլխավոր պայմանը հասարակության ավանդական ամուր հիմքերն են: Այնպիսի արժեքներ, ինչպիսին են՝ աշխատանքային ամուր կարգապահությունը, աշխատանքի բարձր մշակույթը և էթիկան, հարգանքը մեծերի նկատմամբ: Արտադրության և աշխատանքային հարաբերությունների կազմակերպման ճապոնական փորձը ընդօրինակելի է արդյունաբերական երկրների համար:

Զարգացման ճապոնական մոդելը որպես ուղենիշ ծառայեց Հարավարևելյան Ասիայի մի շարք երկրների՝ Հարավային Կորեա, Սինգապուր, Թայվան, Թաիլանդ, համար, որոնք նույնպես XX դարի վերջերին թռիչքաձև վերելք ապրեցին՝ վերածվելով արդյունաբերական գերզարգացած հասարակությունների:

Այսպիսով՝ ժամանակակից Արևելյան ու Հարավային Ասիայի, մասնավորապես, Ճապոնիայի, Չինաստանի, Հարավային Կորեայի, Սինգապուրի, Թայվանի և Հնդկաստանի զարգացման փորձը ապացուցում է, որ հասարակության արդիականացումը ամենևին չի նշանակում պատճենել զարգացած եվրոպական արդյունաբերական երկրների անցած ուղին: Արդի քաղաքակրթությունը ձևավորվել ու զարգանում է համաշխարհային պատմական առաջընթացի գլխավոր միտումների և կոնկրետ ազգային–պատմական առանձնահատուկ պայմանների, ազգային և համամարդկային արժեքների համադրման արդյունքում: Այս փորձն ուսանելի է նաև հետխորհրդային հանրապետությունների, այդ թվում Հայաստանի Հանրապետության, համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երկրորդ աշխարհամարտից հետո Չինաստանում ո՞ւմ միջև ընթացավ քաղաքացիական պատերազմը: Ե՞րբ հռչակվեց ՉԺՀ–ն: Ինչո՞ւ Մաոյի «մեծ թռիչքի» քաղաքականությունը և «կուլտուրական հեղափոխությունը» ձախողվեցին: Ներկայացրե՛ք արդիականացման չինական մոդելը և դրա արդյունքները: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Չինաստանին հաջողվեց ոչ միայն պահպանել սոցիալիստական հասարակարգը, այլ նաև արմատական զարգացում ապրել:

2. Ինչո՞վ էր պայմանավորված Հնդկաստանի ազատագրական պայքարի հաջողությունը: Ներկայացրե՛ք Ներուի դերը նորանկախ Հնդկաստանի կայացման գործում: Պարզաբանե՛ք արդիականացման հնդկական մոդելի էությունը: Թվարկե՛ք Հնդկաստանի զարգացման գլխավոր արդյունքները:

3. Հետպատերազմյան առաջին տարիներին ինչպիսի՞ փոփոխություններ կատարվեցին Ճապոնիայի քաղաքական ու տնտեսական կյանքում: Որո՞նք էին «Ճապոնական հրաշքի» նախադրյալները: Ներկայացրե՛ք Ճապոնիայի արդի նվաճումները: Ո՞ր երկրներն ընդօրինակեցին զարգացման ճապոնական մոդելը:

ԳԼՈՒԽ 12. ՀԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

§1. ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտատեխնիկական հեղափոխությունը

Պատմության նորագույն շրջանն իրավամբ կարելի է համարել քաղաքակրթության գիտատեխնիկական առաջընթացի դարաշրջան: Այդ առաջընթացը դարձել է անընդհատ մի գործընթաց, որի արդյունքում տեղի են ունենում հասարակական կյանքի արմատական փոփոխություններ: Գիտության և տեխնիկայի նվաճումների աննախադեպ ներդրման շնորհիվ թռիչքաձև վերելք ապրեց տնտեսությունը, զարգացան մշակույթի բոլոր բնագավառները, ի հայտ եկան մարդկանց սպասարկման և հանգստի նոր ոլորտներ: Այս դարակազմիկ փոփոխությունների հիմքում ընկած էր գիտության, տեխնիկայի և արտադրության թռիչքաձև զարգացումն ու միաձուլումը:

Այս գործընթացները սկիզբ էին առել դեռևս XIX դարում, սակայն գիտությունը, տեխնիկան և արտադրությունը հասարակական կյանքի ինքնուրույն, առանձին ոլորտներ էին:

1940–ական թթ. երկրորդ կեսին սկսվեց գիտատեխնիկական առաջընթացի մի նոր փուլ, որն ստացել է գիտատեխնիկական հեղափոխություն (ԳՏՀ) անվանումը: Այդպես է կոչվել, որովհետև գիտությունն ու արտադրությունը ոչ միայն թռիչքաձև զարգացան, այլ նաև միաձուլման արդյունքում գիտությունը դարձել է արտադրողական ուժ: Եթե մինչ այդ գիտական հայտնագործությունների և նվաճումների պահից մինչև արտադրության մեջ դրանց ներդրումը տևում էր տասնյակ տարիներ, ապա այժմ այն կատարվում է շատ արագ, գյուտերը և նորույթները ներդրվում են անմիջապես:

Գիտությունն աշխատում է արդյունաբերության և տնտեսության մյուս ոլորտների համար, իր հերթին տնտեսությունը նորանոր պահանջներ ու խնդիրներ է առաջադրում գիտությանը: Այս միասնացված գործընթացը նպաստում է գիտության, տեխնիկայի և արտադրության փոխադարձ զարգացմանը:

ԳՏՀ–ն շարունակվում է նաև մեր օրերում և ընդունված է նրա պատմությունը բաժանել երկու փուլի: Առաջին՝ 1940–ական թթ. երկրորդ կեսից մինչև 1960 – ական թթ. ավարտը, երկրորդ՝ 1970–ական թթ. մինչև մեր օրերը:

Գիտատեխնիկական հեղափոխության առաջին փուլը

Գիտատեխնիական հեղափոխության առաջին փուլի նախադրյալները ձևավորվել էին XX դարի առաջին կեսին: Միջուկային ֆիզիկայի, քվանտային մեխանիկայի, կիբեռնետիկայի, բիոքիմիայի, միկրոկենսաբանության, պոլիմերների քիմիայի տպավորիչ նվաճումներին զուգահեռ արդյունաբերության մեջ գոյություն ուներ նաև համեմատաբար բարձր տեխնիական զարգացածությամբ արտադրություն: Ձևավորվել էր նաև ճարտարագիտական ու տեխնիկական համապատասխան անձնակազմ, որը կարող էր կյանքի կոչել գիտական նորագույն հայտնագործությունները:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում գիտական շատ հայտնագործություններ կիրառում գտան ռազմական արդյունաբերության ոլորտում, ստեղծվեցին զենքի և տեխնիկայի նոր տեսակներ ու համակարգեր՝ ատոմային զենք, ռեակտիվ ինքնաթիռ, ռեակտիվ ականանետ, տակտիկական հրթիռներ և այլն: Գերտերությունների

ռազմաարդյունաբերական համալիրների զարգացումը մեծ չափով պայմանավորեց ԳՏՀ–ի առաջին փուլի ուղղվածությունը:

Քաղաքակրթության առաջընթացն այս փուլում արձանագրեց հետյալ նվաճումները.

1940–ական թթ.՝ հեռուստատեսություն, տրանզիստորներ, ռադար, ատոմային ռումբ, էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, արհեստական թելեր, պենիցիլին,

1950–ական թթ.՝ ջրածնային զենք, ուղևորատար ռեակտիվ ինքնաթիռներ, Երկիր մոլորակի արհեստական արբանյակներ, ատոմային էներգառեակտոր,

1960–ական թթ.՝ ինտեգրալ սխեմաներ, կապի տիեզերական արբանյակ, արագընթաց գնացքներ, լազերային սարքավորումներ:

Առաջին փուլի կարևոր արդյունքներից էր ատոմային էներգիայի օգտագործումը: Ստեղծվեցին առաջին ատոմային էլեկտրակայանները: Զարգացավ նաև քվանտային էլեկտրոնիկան, որը հնարավորություն տվեց հիմնելու լազերային տեխնիկայի արտադրություն:

Հատկապես շոշափելի էին առաջին փուլի արդյունքները տնտեսության ամենատարբեր բնագավառներում: Առաջացան արդյունաբերության նոր ճյուղեր՝ ավիատիեզերական, ռադիոհեռուստատեսային, ռոբոտատեխնիկական: Ստեղծվեցին արտադրության և դրա կառավարման ինքնահոս գծեր ու համակարգեր, արագ զարգացավ արհեստական (սինթետիկ) նյութերի արտադրությունը: Իսկական հեղաշրջում կատարվեց գյուղատնտեսության ոլորտում՝ քիմիական պարարտանյութերի լայնորեն կիրառումը շեշտակիորեն բարձրացրեց գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը:

Հիրավի առաջին փուլի խոշորագույն նվաճումը տիեզերքի յուրացման գործընթացի սկիզբն էր: 1957 թ. ԽՍՀՄ–ը տիեզերք ուղարկեց Երկրի առաջին արհեստական արբանյակը, իսկ 1961 թ. տիեզերք թռավ աշխարհում առաջին տիեզերագնացը՝ Յուրի Գագարինը: Երկու գերտերությունների միջև տիեզերքի յուրացման ուղղությամբ հաջորդ խոշոր նվաճմանը հասավ ԱՄՆ–ը: 1969 թ. Լուսնի վրա առաջինը իջան ամերիկացի երեք տիեզերագնացներ: Այնուհետև ամերիկացիները ստեղծեցին բազմակի օգտագործման տիեզերանավեր: Հարկ է նշել, որ տիեզերքը դարձավ ոչ միայն գիտական մեծ նվաճումների ներդրման, այլ նաև սպառազինությունների մրցավազքի ասպարեզ: Գերտերությունները հսկայական միջոցներ էին հատկացնում իրենց երկրների ռազմաարդյունաբերական համալիրների զարգացմանը:

Այս ժամանակաշրջանում կտրուկ աճեց գիտության դերը հասարակության մեջ, մեծացավ գիտնականների թիվը և հեղինակությունը: Առաջատար պետությունները հսկայական միջոցներ էին ներդնում գիտության ոլորտը, լավագույն պայմաններ էին ստեղծում գիտական հետազոտությունների համար:

Գիտության և արտադրության միաձուլումը, սակայն, տվեց երկակի արդյունքներ: Մի կողմից՝ հնարավորություն ստեղծվեց գիտական նոր գաղափարներն արագորեն արտադրության մեջ ներդնելու համար: Մյուս կողմից՝ գիտությունը, որ պահվում էր առավելապես պետական միջոցների հաշվին, սկսեց կորցնել իր ինքնուրույնությունը և ենթարկվել պետական իշխանության շահերին: Հաճախ ԳՏՀ–ի նվաճումներն սկսեցին օգտագործվել ռազմական նպատակներով, կիրառվել պատերազմական գործողությունների ժամանակ:

Աստիճանաբար սրվեցին էկոլոգիական հիմնախնդիրները՝ շրջակա միջավայրի աղտոտում, բույսերի և կենդանիների որոշ տեսակների անհետացում, բնական պաշարների կրճատում և այլն:

ԳՏՀ–ի երկրորդ փուլը

Գիտատեխնիկական հեղափոխության երկրորդ փուլի սկիզբ է համարվում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների չորրորդ սերնդի ստեղծումն ու ներդրումը տնտեսության մեջ: Դրա հիման վրա ավարտին հասցվեց տնտեսության բոլոր ճյուղերի համալիր ավտոմատացումը, սկսվեց անցումը որակապես նոր տեխնոլոգիաների կիրառմանը արտադրության և սպասարկման ոլորտներում:

Այս փուլը բնութագրող նվաճումներից են՝ միկրոպրոցեսորներ, արդյունաբերական ռոբոտներ, բիոտեխնոլոգիաներ (1970–ական թթ.) գերմեծածավալ ինտեգրալ սխեմաներ, գերամուր կերամիկա, հինգերորդ սերնդի համակարգիչներ, գենային ինժեներիա, ջերմամիջուկային սինթեզ (1980–ական թթ.):

Գիտատեխնիկական առաջընթացի այս դրսևորումը ստացել է նաև տեղեկատվական կամ հեռահաղորդակցական հեղափոխություն:

Արտադրության ոլորտից աստիճանաբար դուրս էր մղվում ձեռքի աշխատանքը, մասնագետը դառնում էր արտադրական և մյուս գործողությունների կարգավորող և վերահսկող: Ստեղծվեցին ծրագրավորված արտադրություններ, ավտոմատացված նախագծային համակարգեր: Տեղեկատվության ավտոմատացումը հաստատուն տեղ է գրավել նաև կառավարման, ֆինանսական և մնացած ոլորտներում:

Ժամանակակից արդյունաբերության մեջ գնալով մեծանում է արհեստական նյութերի օգտագործումը, դրանք փոխարինում են ավանդական հումքատեսակին՝ երկաթին և այլ մետաղների: Յուրացվում են նոր տեխնլոգիաներ, որոնք ծախսատար չեն և արագացնում են արտադրանքի ստեղծումը: Միկրոէլեկտրոնիկայի զարգացումը հնարավորություն է տալիս նվազեցնել մեքենաների չափերը, էներգիայի ծախսը և իջեցնել ապրանքների ինքնարժեքը:

Գյուղատնտեսության ոլորտում աստիճանաբար կարևորվում է և սկսվել է էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրությունը: Ժամանակի ընթացքում կկրճատվի քիմիական պարարտանյութերի կիրառումը, սակայն գնալով պարենային հիմնախնդիրն ավելի է անհանգստացնում մարդկությանը:

Սկսվել է տիեզերքի արդյունաբերական նպատակներով յուրացման և օգտագործման գործընթացը: Այսօր արդեն անհնար է պատկերացնել կապի արդի համակարգերի աշխատանքն առանց ԱՄՆ–ի, Ռուսաստանի և մյուս երկրների կողմից տիեզերք ուղարկվող մասնագիտացված արբանյակների կիրառման:

Հասարակության կենսագործունեության մեջ հիրավի հեղաշրջող դեր խաղաց համակարգչային տեխնիկան: Սկսվեց համակարգիչների զանգվածային արտադրություն, դրանց չափերը գնալով ավելի են փոքրանում և հարմարավետ դառնում օգտագործման համար: Այսօր արդեն անհատական համակարգիչները մուտք են գործել աշխատանքի, մարդկանց առևտրի, ծառայությունների ոլորտ, ինչպես նաև հաստատուն տեղ են գրավել մարդկանց կենցաղում:

Երկրորդ փուլի հաջողությունները հսկայական են, արդի փուլը հաճախ անվանում են բարձր տեխնոլոգիաների դարաշրջան: Արդի գիտությունը ձգտում է տիրել էներգիայի ստացման նոր աղբյուրների՝ արեգակնային, քամու և այլն: Սակայն էներգետիկական հիմնախնդրի լուծումը հեռավոր ապագայի գործ է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է գիտատեխնիկական հեղափոխությունը, որո՞նք են դրա նախադրյալները և բնորոշ կողմերը:

2. Ի՞նչ փուլերի բաժանվում ԳՏՀ–ի պատմությունը: Ե՞րբ է սկսվել առաջին փուլը: Ներկայացրե՛ք առաջին փուլի գլխավոր նվաճումներն ու արդյունքները:

3. Ո՞ր ժամանակահատվածն է ընդգրկում ԳՏՀ–ի երկրորդ փուլը: Ինչպիսի՞ նվաճումներ և արդյունքներ արձանագրեց այս փուլը: Համեմատե՛ք այն առաջին փուլի հետ, նշե՛ք նմանություններ ու առանձնահատկություններ:

§2. ՀԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ (ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ) ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերական հասարակության ավարտական փուլը

Արևմուտքի զարգացած երկրներում Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո սկսվում է արդյունաբերական հասարակության ավարտական փուլը:

Ջ. Քեյնսի կողմից դեռևս 1930–ական թթ. մշակած տնտեսաձևը հետպատերազմյան շրջանում կիրառվեց Արևմուտքի բոլոր զարգացած երկրներում: Այդ քաղաքական կուրսը ստացավ ***նորքեյնսականություն*** անունը: Դրա էությունը հետևյալն է. *պետական կարգավորման միջոցով աճում է բնակչության գնողունակությունը, որն էլ իր հերթին խթանում է տնտեսական աճը:*

Արդեն ասվել է, որ Արևմտաեվրոպական երկրների տնտեսական բուռն վերելքի գործում վճռական դեր խաղացին էժան նավթը, հումքը և աշխատուժը: Դա պայմանավորեց այդ երկրների տնտեսական կյանքի գլխավոր առանձնահատկությունը մինչև 1970–ական թթ. առաջին կեսը՝ տնտեսությունը զարգանում էր առավելապես ***ծախսատար (էքստենսիվ)*** եղանակով: Արևմուտքի արդյունաբերական երկրների տնտեսության զարգացման գործում մեծ էր նաև Արևմտյան Եվրոպայի տնտեսական միասնացումը:

Արևմուտքի քարոզչամեքենան բոլոր միջոցներով տարփողում էր արեմտյան բարօրության պետության առավելությունները սոցիալիստական մոդելի նկատմամբ:

Այսպիսով՝ 1970–ական թթ. սկզբներին Արևմուտքի երկրներում ավարտին մոտեցավ արդյունաբերական հասարակության դարաշրջանը: Աշխարհում առաջինը արդյունաբերական հասարակության դարաշրջանն ավարտվեց ԱՄՆ–ում՝ 1960–ական թթ. վերջերին:

Գիտատեխնիկական հեղափոխության սոցիալական հետևանքները

ԳՏՀ–ն համընդգրկուն երևույթ է և որոշիչ ազդեցություն է թողնում հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա՝ տնտեսություն, քաղաքականություն, մարդկանց աշխատանքային պայմաններ և կենցաղ, հոգևոր մշակույթ, գաղափարախոսություն, հոգեբանություն: Այն վերափոխել է և շարունակում է վերափոխել արդի քաղաքակրթությունը:

Սոցիալական ծախսերի ավելացումը և աշխատավարձերի բարձրացումը հանգեցրին նրան, որ մարդիկ դարձան զանգվածային արտադրության ապրանքների սպառողներ: Մարդկանց կենսակերպի անբաժան ուղեկիցը դարձան ավտոմեքենան, սեփական բնակարանը, սառնարանը, հեռուստացույցը, հեռախոսակապը, սպասարկման և ծառայությունների անսպառ ոլորտը:

Արևմտյան Եվրոպայում գրեթե վերացավ գործազրկությունը, ծաղկեցին արդյունաբերության մի շարք ճյուղեր (վերամշակող, նավթաքիմիական, ավտոմեքենաշինական, էլեկտրատեխնիկական), գյուղատնտեսությունը լիովին մեքենայացվեց:

Արդի արտադրական գործընթացներում անհամեմատ աճել է մարդկային գործոնի դերը: Դա հանգեցրեց աշխատող ուժի կրթական և մասնագիտական մակարդակի կտրուկ բարձրացման, աճեց մտավոր աշխատուժի պահանջարկը: Մտավոր աշխատանքով զբաղվողները կազմեցին հասարակական մի ստվար զանգված:

Քաղաքային բնակչության արագ աճի պայմաններում արագորեն մեծացավ նաև ծառայությունների ու առևտրի ոլորտներում զբաղված մարդկանց թիվը: Նրանք այժմ ավելի շատ են, քան արդյունաբերության և տրանսպորտի ոլորտներում

աշխատողները: Այս բոլոր շերտերը միասին ձևավորում են այսպես կոչված միջին խավը, որն արդի զարգացած հասարակություններում կազմում է բնակչության երկու երրորդը և ավելին: Միջին խավի հասարակական դերի շարունակական աճը հանգեցրեց նաև արդյունաբերական հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխության: Բանվոր դասակարգն այսօր զարգացած երկրներում այլևս մեծամասնություն չի կազմում: Բուրժուազիայի և պրոլետարիատի միջև ընթացող դասակարգային դիմակայությամբ բնութագրվող նախորդ հասարակությունը վերափոխվել է բազմաշերտ կառուցվածք ունեցող հասարակության:

Հետարդյունաբերական հասարակության ձևավորումը

Արևմուտքի հետպատերազմյան տնտեսական զարգացման արդյունքում ***արմատապես վերափոխվեց կապիտալիստական հասարակությունը:*** Դրանում անհերքելի է առաջին հերթին գիտատեխնիկական հեղափոխության դերը: Առաջատար երկրների տնտեսական և տեխնիկական զարգացման մակարդակները գրեթե հավասարվել են, առաջացել է փոխադարձ սերտ կախվածություն նրանց և աշխարհի այլ երկրների տնտեսությունների միջև:

Ահա թե ինչու հետպատերազմյան առաջին խոշոր ***համաշխարհային տնտեսական ճգնաժամը (1974–1975 թթ.)*** մեծ վնաս հասցրեց նաև «տնտեսական հրաշք» իրականացրած երկրներին՝ Արևմտյան Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա: Այս և հաջորդ խոշոր ճգնաժամի (1980–1982 թթ.) հաղթահարումը ապահովեց Արևմուտքի առաջատար երկրների անցումը դեպի զարգացման նոր փուլ, որն ընդունված է անվանել ***հետարդյունաբերական*** կամ ***տեղեկատվական*** հասարակություն:

Այս հասարակության կյանքի բոլոր ոլորտներում առաջնային պլան է մղվել տեղեկույթը՝ տեղեկատվության ստեղծումը, փոխանցումը, ստացումը, վերլուծությունը, մշակումը և այլն:

Մարդկությունը կուտակել է մեծ քանակության նյութական և մտավոր միջոցներ, և այժմ կարևորվում է դրանց կառավարման և ճիշտ օգտագործման հիմնախնդիրը: Համակարգիչը և հաղորդակցության էլեկտրոնային միջոցները սրընթաց մուտք են գործել մարդկանց աշխատանքային գործունեության և կյանքի ամենատարբեր ոլորտներ: Այդ կապակցությամբ ավելի ու ավելի են կարևորվում տարբեր տեսակի տեղեկատվական և կառավարման **ծառայությունները**: Առաջավոր երկրներում այս ոլորտում այժմ ընդգրկված է աշխատուժի 50–60 տոկոսը: Միջին խավի բարձր տեսակարար կշիռը բնակչության մեջ հետարդյունաբերական հասարակության սոցիալական կայունության ամուր երաշխիք է:

Զարգացած երկրներին բնորոշ է բարձր կենսամակարդակը: Պետական բյուջեում անհամեմատ աճել է սոցիալական ծախսերի մասնաբաժինը: Մարդկանց ապրելակերպը, մտածողությունը փոխվեցին: Նրանց պահանջմունքների մեջ այժմ գերակշռում էին ոչ թե հանապազօրյա հաց վաստակելու խնդիրները, այլ հեռանկարային ծախսերը, զանազան ծառայություններից օգտվելը, կրթության, առողջության և հանգստի կարիքները բարձր մակարդակով հոգալը: Ահա թե ինչու «բարօրության պետության» բնութագրիչներ դարձան նաև կրթական, առողջապահական և սոցիալական օգնության՝ հիմնականում պետության ջանքերով ստեղծված համակարգերը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրե՛ք արդյունաբերական հասարակության ավարտական փուլը, դրա հիմնական արդյունքները:

2. Սոցիալական ի՞նչ հետևանքներ ունեցավ գիտատեխնիկական հեղափոխությունը: Ներկայացրե՛ք արդի զարգացած երկրների սոցիալական կառուցվածքը:

3. Ի՞նչ է տեղեկատվական հասարակությունը: Ցույց տվե՛ք դրա բնորոշ կողմերը:

ԲԱԺԻՆ Գ. ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ԳԼՈՒԽ 13. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

§1. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ

Հետսառըպատերազմյան նոր աշխարհակարգը

Համաեվրոպական և համաշխարհային նշանակության յուրաքանչյուր խոշոր պատերազմի հաջորդում է հին աշխարհակարգի վերանայման և նոր աշխարհակարգի ստեղծման փորձը:

«Նոր աշխարհակարգ» հասկացությունը շրջանառության մեջ դրեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ Ավագը 1990թ.՝ Քուվեյթի դեմ իրաքյան ագրեսիայից հետո: Նա ձգտում էր, որպեսզի ագրեսիայի նկատմամբ ամերիկյան արձագանքը չգնահատվի իբրև միակողմանի քայլ, այլ դիտվի որպես հավաքական անվտանգության արտահայտություն:

1990թ. սեպտեմբերի 11–ին ԱՄՆ–ի Կոնգրեսի զույգ պալատներին ուղղված իր ելույթում նախագահ Ջ. Բուշ Ավագը ընդգծեց հինգ սկզբունքներ, որոնք պետք է կազմեին զարգացում ապրող և ձևավորվող միջազգային համակարգի կառույցն ու հիմքը: Նա նշեց. «Դուրս գալով անախորժություններով լի այս ժամանակներից, մեր 5–րդ նպատակը կլինի նոր աշխարհակարգը, որը կարող է ի հայտ գալ իբրև նոր դարաշրջան՝ ահաբեկչության սպառնալիքից ավելի ապահովագրված, ավելի հզոր՝ արդարության հետապնդման գործում և ավելի ապահով՝ խաղաղության որոնումներում: Մի ժամանակաշրջան, որում աշխարհի՝ Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի ազգերը կարող են բարգավաճել և ապրել ներդաշնակության մեջ»: Խոսքը վերաբերում է ընդհանուր երևույթներին՝ մեծ տերությունների համագործակցությանը, ՄԱԿ–ի հզորացմանը, միջազգային իրավունքի դիրքերի, դերի ու նշանակության ամրապնդմանը:

1989 և 1990–ական թթ. սկզբներին տեղ գտած համաշխարհային նշանակության իրադարձությունները ցույց տվեցին, որ միջազգային հարաբերությունները դարակազմիկ փոփոխությունների փուլում են: Սոցիալիստական համակարգի փլուզումը Արևելյան Եվրոպայում, Գերմանիայի վերամիավորումը և ապարտեիդի (տարանջատման) ավարտը Հարավային Աֆրիկայում ազդարարեցին «նոր դարաշրջանի» սկիզբը: Վերջինիս բնորոշ առանձնահատկությունները պետք է լինեին փոխադարձ կախվածությունը և համագործակցությունը, համաշխարհայնացումը (գլոբալացում), ռազմական ուժի կիրառման նպատակահարմարության նվազումը, ՄԱԿ–ի նոր դերն ու այդ դերի աճը:

Հատկապես կարևորվում էր ՄԱԿ–ի բարեփոխումների խնդիրը: Առաջին Աշխարհամարտի արդյունքում ի հայտ էր եկել Ազգերի լիգան, իսկ Երկրորդի արդյունքում՝ ՄԱԿ–ը: Այժմ նոր կազմակերպության ստեղծում չէր նախատեսվում: Սակայն ընդունելություն էր գտել այն գաղափարը, որ ՄԱԿ–ը պետք է համապատասխանեցվեր հետսառըպատերզմյան իրողություններին: Սակայն տարբեր պատճառներով մեծ տերությունները (հատկապես ԱՄՆ–ը և Ռուսաստանը) հակված չէին ՄԱԿ–ի բարեփոխումների գաղափարին: ԱՄՆ–ը իրեն դիտարկում էր իբրև սառը պատերազմում հաղթող կողմ: ՄԱԿ–ի ամրապնդումը միայն կարող էր սահմանափակել վերջինիս «ձեռքերի ազատությունը» միջազգային ասպարեզում: ԽՍՀՄ–ի իրավահաջորդ Ռուսաստանի Դաշնությունը նույնպես զգուշավորություն էր

հանդես բերում ՄԱԿ–ի բարեփոխումների հարցում: Ռուսաստանը չուներ ԽՍՀՄ–ի ներուժն ու հզորությունը: ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի մշտական անդամի արտոնյալ կարգավիճակը, որ Ռուսաստանը ժառանգել էր նախկին ԽՍՀՄ–ից, թույլ կտար Ռուսաստանի Դաշնությանը փոխհատուցել իր թուլությունը, որն ակնհայտ էր Խորհրդային Միության փլուզումից հետո: Մինչդեռ ՄԱԿ–ի բարեփոխումների շրջանակներում առաջարկվում էր ընդլայնել ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների կազմը և սահմանափակել վետոյի իրավունքի կիրառումը: Նման կարգի «բարեփոխումները» միայն կհանգեցնեին Ռուսաստանի «ձայնի» հետագա արժեզրկմանը միջազգային հարաբերություններում: Հետևաբար ԱՄՆ–ը և Ռուսաստանը արգելակեցին ՄԱԿ–ի արմատական բարեփոխումների գործընթացը: Միջազգային կարգավորումը տարերայնորեն իրագործվում էր առկա մեխանիզմների հիման վրա: Բայց քանի որ դրանք չէին սահմանափակում նախկին երկու գերտերությունների՝ իրենց ներուժն օգտագործելու հնարավորությունը, առավելությունն անցնում էր ուժեղ կողմին՝ ԱՄՆ–ին:

Ռուսաստանը մնում էր միակ տերությունը, որ ուներ ԱՄՆ–ի ոչնչացման ներուժ: Սա մի առանձնահատուկ իրավիճակ էր ստեղծել միջազգային հարաբերություն-ներում: Դասական երկբևեռ համակարգը վերացավ դեռ 1991թ., քանզի միմյանց համադրելի երկու բևեռներից մեկը՝ ԽՍՀՄ–ն ու սոցիալիստական համակարգը վերացել էին: Սակայն երբևեռ համակարգը վերջնականապես փլուզվեց միայն 1991–1996թթ.: Այս ընթացքում գործող համակարգը անվանում էին «մեկուկես բևեռի շրջան»: ԱՄՆ–ի և ՌԴ–ի միջև երկբևեռության հարաբերությունները պահպանվում էին միայն ռազմաքաղաքական բնագավառում: Մյուս բոլոր բնագավառներում ԱՄՆ–ը իր ցուցանիշներով բացահայտ առավելություն ուներ Ռուսաստանի նկատմամբ: Նույնիսկ ռազմաքաղաքական բնագավառում ԱՄՆ–ի հետ հավասար դիրքերից հանդես գալու Ռուսաստանի հնարավորությունները նվազում էին:

Միջազգային հարաբերություններում վերստին աճում էր ուժի դերը: Այս երևույթը երկու հիմնական պատճառ ուներ: Նախ, երկբևեռ համակարգի փլուզման արդյունքում նախկին Խորհրդային Միության և սոցիալիստական համակարգի պետությունների տարածքում բազմաթիվ զինված հակամարտություններ ծագեցին: Բացի այդ, ԽՍՀՄ–ի բացակայության պայմաններում ԱՄՆ–ը և ՆԱՏՕ–ի անդամ երկրները ավելի լայնորեն էին դիմում ուժի կիրառմանը՝ իրենց շահերն ապահովելով տեղական և տարածաշրջանային հակամարտություններում: Դա արվում էր ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության կարգախոսների ներքո: Իսկ արդեն 1990–ական թթ. կեսերից միջազգային հարաբերություններում գնալով աճում էր խաղաղարար առաքելությունների դերը: Դրա էությունը հետևյալն էր. առանձին հակամարտությունների դադարեցման նպատակով միջազգային հանրությունը կարող է դիմել նաև ուժային միջոցների կիրառմանը: Հատկապես կարևորվում էր մարդասիրական ներխուժման իրողությունը: Համաձայն վերջինիս, պետությունների կոալիցիան, մարդասիրական ձգտումներից ելնելով, կարող էր ռազմական միջամտություն իրագործել երրորդ երկրների հակամարտություններին:

Արմատական փոփոխությունները միջազգային հարաբերություններում. 2001թ. սեպտեմբերի 11–ի հարձակումն ու դրա հետևանքները

2001թ. սեպտեմբերի 11–ին ԱՄՆ–ը, երկրորդ Աշխարհամարտից հետո առաջին անգամ հարձակման ենթարկվեց սեփական տարածքում: Քաղաքացիական ինքնաթիռներ զավթած ահաբեկիչների խմբերը դրանք ուղղեցին Նյու Յորքում գտնվող Համաշխարհային առևտրի կենտրոնի զույգ շենքերի և Վաշինգտոնում

գտնվող ԱՄՆ–ի Պաշտպանության նախարարության (Պենտագոն) շենքի դեմ: Համաշխարհային առևտրի կենտրոնի զույգ շենքերը («երկվորյակները») լիովին ոչնչացվեցին: Էականորեն վնասվեց նաև Պենտագոնի շենքը: Ահաբեկչական գործողությունների զոհերի թիվը հասնում էր մի քանի հազարի: Աղետի քաղաքական ու հոգեբանական հետևանքները մեծ էին ու ճնշող:

Բացառությամբ 19–րդ դարի քաղաքացիական պատերազմի և 1941թ. Փեռլ Հարբորում ԱՄՆ–ի Ռազմաօդային ուժերի դեմ ճապոնացիների իրագործած հարձակման, ԱՄՆ–ը չէր տեսել պատերազմներ՝ սեփական տարածքում կամ հարձակումներ սեփական տարածքի վրա: Ամերիկյան ղեկավարությունը չգիտեր, արդյո՞ք տեղ գտածը միանգամյա գործողություն էր, թե՞ նախապես մշակված հարվածների շարքի լոկ առաջին ալիքը: Ամերիկյան կառավարությունը պատրաստ չէր պայքարելու այդպիսի հակառակորդի հետ:

ԱՄՆ–ի Կենտրոնական հետախուզական վարչության տվյալներով ԱՄՆ–ում ահաբեկչական գործողությունների կազմակերպման գործում կենտրոնական դեր էր խաղացել Ուսամա բեն Լադենը: Սաուդյան Արաբիայից հեռացած, անվանի տոհմի ներկայացուցիչ բեն Լադենը հաստատվել էր Աֆղանստանում: Նա վերահսկում էր այսպես կոչված Թալիբների կառավարությունը և այստեղից կառավարում իր «Ալ–Քաիդա» ահաբեկչական կազմակերպությունը: Վաշինգտոնը Աֆղանստանից պահանջեց հանձնել աշխարհի թիվ 1 ահաբեկչին, սակայն մերժում ստացավ: Վաշինգտոնը սպառնում էր պատերազմով, սակայն աֆղանական կողմը բեն Լադենի մասնակցության ապացույցները համարում էր ոչ համոզիչ: Արդյունքում ԱՄՆ–ը որոշեց պատերազմական գործողություններ սկսել ընդդեմ Աֆղանստանի: Նրան այդ հարցում աջակցեց Մեծ Բրիտանիան, տրամադրելով ԱՄՆ–ին հետախուզական տվյալներ և բրիտանական զորքեր ուղարկելով Աֆղանստան: ՆԱՏՕ–ի մյուս դաշնակիցները նույնպես իրենց բարոյական և քաղաքական աջակցությունը հայտնեցին ԱՄՆ–ին, սակայն չէին ցանկանում զորքեր ուղարկել Աֆղանստան: Այդուհանդերձ, ՆԱՏՕ–ի անդամ հանդիսացող բոլոր երկրները, կազմակերպության 5–րդ հոդվածի համաձայն ԱՄՆ–ի դեմ իրագործված հարձակումը որակեցին իբրև հարձակում բոլորի դեմ, պատրաստակամություն հայտնելով օգնություն ցուցաբերել Միացյալ Նահանգներին: Սակայն ԱՄՆ–ը փաստացի ընդունեց միայն Մեծ Բրիտանիայի օգնությունը:

Իր աջակցությունը ԱՄՆ–ին հայտնեց նաև Ռուսաստանի Դաշնությունը: Ռուսաստանը ոչ միայն ԱՄՆ–ին տրամադրեց հետախուզական տվյալներ և սեփական օդային տարածքից օգտվելու իրավունք, այլև նպաստեց, որ ԱՄՆ–ը օգտվի Ղրղզստանի և Ուզբեկստանի տարածքում գտնվող ռազմաօդային բազաներից: Փաստացի Մեծ Բրիտանիան և Ռուսատանը թալիբների դեմ պատերազմում ԱՄՆ–ի գլխավոր դաշնակիցներն էին:

Ռազմական գործողությունները սկսվեցին 2001թ. հոկտեմբերի 7–ին: 2001թ. դեկտեմբերի 21–ի դրությամբ Թալիբները պարտություն կրեցին և հեռացան երկրի մայրաքաղաքից՝ Քաբուլից: Սակայն ռազմական գործողությունները երկրի հարավային շրջաններում շարունակվեցին մինչև 2002թ. սկզբները: Աֆղանստանի նախագահ դարձավ արևմտամետ գործիչ Համիդ Քարզային: Թալիբները հեռացան հարևան Պակիստան: Սակայն ձերբակալել բեն Լադենին կամ պարզել նրա գտնվելու վայրը ամերիկացիներին չհաջողվեց:

2001թ. սեպտեմբերի 11–ի իրադարձությունները վկայում էին միջազգային հարաբերություններում որակապես նոր սպառնալիքի՝ վերազգային ահաբեկչության ի հայտ գալու մասին: Այն չուներ հստակ ազգային կամ պետական պատկանելություն և ի զորու էր հարվածելու ցանկացած երկրի՝ ինչպես արտերկրից, այնպես էլ երկրի

ներսից: Միջազգային հանրությունը նման համակցված սպառնալիքի դեմ պայքարի միջոցներ դեռ չէր մշակել:

Վարչակարգերի փոփոխման ռազմավարությունը

2002թ. հանդես գալով Կոնգրեսի զույգ պալատների առջև՝ ԱՄՆ–ի նախագահ Ջորջ Բուշ Կրտսերը հատուկ հիշատակեց ողջ աշխարհին սպառնացող «Չարիքի առանցքի» մասին: Այդ առանցքում էր նա տեսնում Իրաքը, Իրանը և Հյուսիսային Կորեան: Նախնական տարբերակն էր «Ատելության առանցք» պիտակավորումը, որ պետք է ներառեր Իրաքն ու Ալ–Քաիդան: Սակայն հետագայում առանցքի «անդամների» թիվն ընդլայնվեց, իսկ անվանումը փոխվեց: ԱՄՆ–ի նախագահը նախընտրեց «Չարիքի առանցք» որակավորումը: Միաժամանակ ամերիկյան ղեկավարության կողմից հստակորեն ձևակերպվեց նոր՝ «Վարչակարգերի փոփոխման ռազմավարությունը»: Դրա էությունը հետևյալն էր. բազմաբնույթ, այդ թվում և ռազմական միջոցառումների կիրառման ճանապարհով հասնել որոշակի երկրներում իշխող, սակայն ԱՄՆ–ի համար անցանկալի վարչակարգերի փոփոխմանը: Իբրև հիմնավորում պետք է նշվեր այդ վարչակարգերի՝ միջազգային անվտագությանն ուղղված սպառնալիքը: Այդ ռազմավարության առաջին թիրախը Իրաքն էր: 2003թ. մարտի 18–ին ԱՄՆ–ը Իրաքին վերջնագիր ներկայացրեց, որում նաև պահանջվում էր, որ Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը հրաժարվի իշխանությունից և իր հարազատների հետ միասին 48 ժամվա ընթացքում հեռանա երկրից:

Թե ՆԱՏՕ–ի, թե ՄԱԿ–ի շրջանակներում ԱՄՆ–ը լուրջ խոչընդոտներ ուներ: Բազմաթիվ երկրներ դեմ էին Իրաքի դեմ պատերազմին: Սակայն 2003թ. մարտի 19–ին սկսվեց ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի ներխուժումը Իրաք: Այն ավարտվեց մայիսի սկզբներին՝ Իրաքի պարտությամբ: Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը հեռացվեց իշխանությունից և ավելի ուշ՝ մահապատժի ենթարկվեց: Իրաքում սկսվեց ժողովրդավարական համակարգին անցնելու գործընթացը: Իրաքի նախագահ դարձավ անվանի քուրդ գործիչ Ջալալ Թալաբանին: Իսկ արդեն 2003թ. մայիսի 29–ին միաձայն ընդունվեց ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի թիվ 1483 բանաձևը՝ հետպատերազմյան Իրաքի վերականգնման վերաբերյալ: Դրանով փաստորեն ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը հաշտվում էր տեղ գտած գործողության հետ:

Ժամանակի ընթացքում ԱՄՆ–ը որակվեց իբրև բարձրագույն հզորության հասած գերտերություն՝ հիպերտերություն: «Հիպերտերություն» հասկացությունը շրջանառության մեջ դրվեց դեռ 1990–ական թվականներին: Հիպերտերություն կոչվելու համար երկիրը պետք է չունենա մրցակիցներ առնվազն երեք հիմնական բնագավառներում՝ ռազմական, տնտեսական և մշակութային: 2004թ. դրությամբ ԱՄՆ–ի ռազմական հզորությունը հավասար էր աշխարհի մնացյալ, իրեն հաջորդող տասնյոթ տերությունների ռազմական ուժին՝ միասին վերցրած: Միացյալ Նահանգներն աշխարհի մոտ 130 երկրներում ունի ավելի քան 700 ռազմական բազաներ: Մշակութային և տնտեսական բնագավառում այն նույնպես գերիշխում է: Հետևաբար ներկայիս պատմական ժամանակաշրջանը որակվում է նաև իբրև հիպերտերության կամ «Ամերիկյան խաղաղության» ժամանակաշրջան: Պատմության ընթացքում փառաբանված մեծ տերությունների շարքում թերևս միայն Հռոմեական կայսրությունն է համեմատելի հետսառըպատերազմյան ԱՄՆ–ի հետ:

XXI դարի առաջին և երկրորդ տասնամյակների սահմանագծի իրողությունները հաճախ որակվում են իբրև միաբազմաբևեռ աշխարհ՝ մեկ գերտերությամբ, մի շարք հիմնական համաշխարհային տերություններով և համաշխարհային

քաղաքականության վրա գնալով ավելի մեծ ազդեցություն ունեցող տարածաշրջանային տերություններով հանդերձ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ժամանակակից «Նոր աշխարհակարգ» հասկացությունը ո՞վ է դրել քաղաքական շրջանառության մեջ: Ըստ նրա՝ ինչպիսի՞ն էր լինելու այդ աշխարհակարգը: Ի՞նչ դեր էր վերապահվում ՄԱԿ–ին:
2. Ինչո՞ւ ԱՄՆ–ն և Ռուսաստանը չեն ուզում իրագործել ՄԱԿ–ի բարեփոխումներ: Ի՞նչ է նշանակում «մեկուկես բևեռ» համակարգ. ե՞րբ է այն գոյություն ունեցել: Միջազգային հարաբերություններում ինչո՞ւ աճեց ուժի դերը:
3. Վերհանե՛ք 2011 թ. խեպտեմբերի 11–ի ահաբեկչության հետևանքները միաջազգային հարաբերությունների տեսանկյունից: Ի՞նչ պատասխան քայլեր ձեռնարկեց ԱՄՆ–ը:
4. Բացատրե՛ք «Չարիքի առանցք» քաղաքակaնության բովանդակությունը: Պարզաբանե՛ք «հիպերտերություն» հասկացության էությունը:

§2. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սառը պատերազմի ավարտը և նոր ընկալումները

1989 թ. ճապոնական ծագում ունեցող ամերիկացի պատմաբան Ֆ.Ֆուկայաման հանդես եկավ իր «Պատմության ավարտը» աշխատությամբ: ԱՄՆ–ը ցնծում էր իր հաղթանակը: Եվ Պետդեպարտամենտում աշխատած Ֆուկայաման այն գաղափարն էր առաջ քաշում, որ պատմությունն իբրև շարժում ավարտված է, քանզի աշխարհում վերջնականապես հաղթանակել են լիբերալ ժողովրդավարությունը, սպառողական մշակույթը, իսկ Արևմուտքն ու արևմտյան գաղափարախոսությունը գերիշխում են: Նա նաև նշում էր, որ առանձին փոքր պատերազմները դեռ հնարավոր են, սակայն մեծ պատերազմների հավանականությունը խիստ նվազել է, քանզի մեծ պատերազմների մեջ են ներքաշվում մեծ տերությունները, իսկ դրանք աստիճանաբար վերանում են:

Որոշ 1993թ. ամերիկացի մեկ այլ անվանի գիտնական Սամյուել Հանթինգտոնը իր «Քաղաքակրթությունների բախումը» հոդվածում ճիշտ հակադիր տեսակետն առաջ քաշեց: Նա նշում էր, որ ապագայում պատերազմները ոչ միայն չեն բացառվում, այլև սպասվում են ավելի խոշոր պատերազմներ՝ բախումներ քաղաքակրթությունների միջև: Ընդ որում, Արևմուտքի դեմ կարող է հանդես գալ մնացյալ աշխարհը: Ամեն դեպքում, նրա կարծիքով, բաժանարար գծերն անցնելու էին քաղաքակրթությունների միջև:

Քաղաքական գործիչները չափից դուրս անհիրատեսական համարեցին Ֆուկայամայի դիրքորոշումը, սակայն միաժամանակ չափից դուրս վտանգավոր համարվեց նաև Հանթինգտոնի գաղափարախոսությունը: Արդյունքում Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մ.Խաթամիի կողմից շրջանառության մեջ դրվեց «Քաղաքակրթությունների երկխոսության» գաղափարը: Ավելի ուշ շրջանառության մեջ դրվեց «Քաղաքակրթությունների դաշինք» հասկացությունը: Սակայն ապագա զարգացումները մեծապես կախված էին նրանից, թե ինչպիսին կլինի «նոր աշխարհակարգը»: Իսկ նոր աշխարհակարգն, ինչպես տեսանք, ամերիկյան աշխարհակարգ է, որում ԱՄՆը առաջինն է հավասարների մեջ: ԱՄՆ–ը իր տնտեսական, ռազմական, քաղաքական և մշակութային ներուժով էականորեն գերազանցում է մյուս խոշոր երկրներին: Սակայն մարդկության առջև առկա են որոշակի մարտահրավերներ, որոնք միայնակ կարգավորել չի կարող նույնիսկ ԱՄՆ–ի նման գերտերությունը: Հետևաբար տեղ գտավ անցումը հակամարտությունից դեպի համագործակցություն: Դա առաջին հերթին վերաբերում էր ԽՍՀՄ իրավահաջորդ Ռուսաստանի հետ ԱՄՆ–ի հարաբերություններին:

Ռուս–ամերիկյան հարաբերությունները

Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինի կառավարման օրոք (1991–1999թթ.) ԱՄՆ–ի նախագահներ Ջորջ Բուշ Ավագն ու Բիլլ Քլինթոնը, ամերիկյան կորպորացիաները խրախուսում ու աջակցում էին Ռուսաստանում ընթացող տնտեսական բարեփոխումներին: Իր հերթին Ռուսաստանը Ելցինի կառավարման օրոք առժամանակ դադարեց առաջատար դիրքեր գրավել միջազգային հարաբերություններում: Ռուսաստանի նոր նախագահ Վ.Պուտինի կառավարման օրոք Ռուսաստանը ոչ միայն տնտեսական աննախադեպ աճ ապահովեց և վճարեց իր արտաքին պարտքերը, այլև վերստին առաջատար դիրքեր գրավեց միջազգային հարաբերություններում: Ի հայտ եկան նաև հակասություններ ռուս–ամերիկյան

հարաբերություններում: Ռուսաստանը դեմ էր ՆԱՏՕ–ի հետագա ընդլայնմանը նախկին արևելյան բլոկի ուղղությամբ, ԱՄՆ–ի՝ հակահրթիռային պաշտպանության համակարգ ստեղծելու ծրագրերին, 2003թ. տեղ գտած ամերկյան ներխուժմանը Իրաք: Դրանում կարևոր դեր ուներ նաև նախկինում Ռուսաստանի կենսական շահերի ոլորտում գտնվող Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում ամերիկյան ազդեցության մեծացմանը:

Ռուսաստանին մտահոգում էր նաև այն, որ ՄԱԿ–ի որոշակի մեխանիզմներ ակնհայտորեն յուրացվում էին ՆԱՏՕ–ի կողմից, իսկ ԱՄՆ–ը գնալով ավելի մեծ թվով ռազմական միջամտություններ ու «հումանիտար ներխուժումներ» էր իրագործում առանց միջազգային հանրության կարծիքը հաշվի առնելու: Իր հերթին ԱՄՆ–ը մտահոգված էր միջուկային զենքի ստեղծման ծրագրեր մշակող կամ հակաամերիկյան դիրքորոշում ունեցող մի շարք երկրների՝ Հյուսիսային Կորեայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Վենեսուելայի և այլոց հետ Ռուսաստանի գնալով խորացող համագործակցությամբ: ԱՄՆ–ը նաև նշում էր, որ քաղաքական որոշակի նպատակների հասնելու համար Ռուսաստանը նավթն ու գազն օգտագործում է իբրև ազդեցիկ լծակ հետխորհդային որոշակի երկրների (մասնավորապես Ուկրաինայի և Վրաստանի) դեմ: Սակայն միաժամանակ Ռուսաստանը և ԱՄՆ–ը քայլեր էին ձեռնարկում Սառը պատերազմի մտածելակերպից հրաժարվելու և իրական համագործակցություն ծավալելու ուղղությամբ:

Համագործակցության մթնոլորտի ստեղծման տեսանկյունից կարևորագույն քայլ էր Մեծ յոթնյակին Ռուսաստանի միանալու իրողությունը (Տե՛ս Թեմա 8 §2): 1994թ. սկսած Ռուսաստանը քայլեր ձեռնակեց այդ ուղղությամբ և ժամանակավորապես ի հայտ եկավ Քաղաքական ութնյակ կառույցը: Իսկ արդեն 1997թ.՝ Միացյալ Թագավորության վարչապետ Թ.Բլեյրի և ԱՄՆ–ի նախագահ Բ.Քլինթոնի հրավերով, Ռուսաստանը պաշտոնապես միացավ Մեծ յոթնյակին և կառույցը ստացավ մեծ ութնյակ անվանումը: Գործընթացն ինքնին ցույց էր տալիս, որ հիշյալ իրողությունը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական որոշման արդյունք էր: 2006թ. Ռուսաստանն առաջին անգամ հյուրընկալեց մեծ ութնյակի հանդիպումը, ինչը վկայում էր Ռուսաստանի միջազգային վարկի մեծացման մասին:

Մեծ էր Ռուսաստանի աջակցությունը ԱՄՆ–ին հատկապես 2001թ. սեպտեմբերի 11–ին հաջորդած Աֆղանստանի դեմ պատերազմում, ինչպես նաև ահաբեկչության դեմ համընդգրկուն պայքար ծավալելու գործում: 2002թ. Մոսկվայում կայացած իրենց հանդիպման ընթացքում Վ.Պուտինն ու Ջ. Բուշ կրտսերը ոչ միայն միջուկային մարտագլխիկներով հրթիռների կրճատման վերաբերյալ պայմանագիր ստորագրեցին, այլև հայտարարեցին «նոր ռազմավարական համագործակցության» հիմքեր ստեղծելու իրենց մտադրության մասին:

Ռուս–ամերիկյան հարաբերություններում նոր դրական տեղաշարժեր նկատվեցին նաև ԱՄՆ–ի նախագահ Բ.Օբամայի և Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդևի կառավարման օրոք: Հարաբերությունների ջերմացումը որակվեց իբրև «նոր մեկնարկ» և տվեց իր արդյունքները: 2010թ. գարնանը կողմերը ստորագրեցին երկար հեռահարության միջուկային մարտագլխիկներով հրթիռների կրճատման վերաբերյալ մեծ արձագանք ստացած նոր պայմանագիրը:

Համագործակցությունը հետխորհրդային տարածքում

Խորհրդային Միության փլուզումից հետո հատկապես կարևորվում էր հետխորհրդային տարածքի կայացումն ու անցումային շրջանի մարտահրավերների հաղթահարումը: Այդ ուղղությամբ էական դեր պետք է խաղար Անկախ պետություն-

ների համագործակցությունը (ԱՊՀ–ն): (Այդ մասին ավելի մանրամասն տես Գլուխ 13, §3). Այն դաշինք չէ կամ կոնֆեդերացիա, և ոչ էլ վերազգային կազմակերպություն, այլ պետությունների ասոցիացիա, որ ավելի շուտ հիշեցնում է Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ ստեղծված «Ազգերի համագործակցությունը» կամ ուղղակի «Համագործակցությունը»:

Հայաստանը մեծ կարևորություն է տալիս իր մասնակցությանը ԱՊՀ–ին: Հայաստանի Հանրապետությունը առաջիններից էր, որ միացավ ԱՊՀ–ին, և այն համարում է մի կարևոր կառույց՝ նախկին Խորհրդային հանրապետությունների միջև բազմակողմանի հարաբերությունների իրականացման համար: Իբրև Բելովեժյան համաձայնագրին միացած առաջին երկրներից մեկը, ԱՊՀ–ին միանալու Հայաստանի որոշումը հիմնված էր Խորհրդային Միության վերահաս փլուզման ընկալման և անվերահսկելի փլուզման վտանգները նվազագույնի հասցնելու կարևորության վրա: ԱՊՀ–ն կատարեց այդ առաքելությունը: Հետխորհրդային պետությունները թույլ չտվեցին հարավսլավական այլընտրանքի կրկնությունը, թեև չկարողացան լիարժեքորեն խուսափել արյունալի հակամարտություններից:

Ընդհուպ մինչև 1993թ. ԱՊՀ կանոնադրության ընդունումը, ԱՊՀ հիմնական կանոնադրական փաստաթուղթն էր հանդիսանում ԱՊՀ ստեղծման վերաբերյալ կնքված պայմանագիրը: Սակայն 1993թ. հունվարին ընդունված ԱՊՀ կանոնադրությունը պաշտոնապես հստակեցրեց այդ կառույցին միանալու կարգը՝ ԱՊՀ լիիրավ անդամ է հանդիսանում ԱՊՀ կանոնադրությունը վավերացրած պետությունը: Թուրքմենստանը ստորագրել է ԱՊՀ ստեղծման վերաբերյալ պայմանագիրը, սակայն չի վավերացրել ԱՊՀ կանոնադրությունը և 2005թ. օգոստոսի 26–ին դարձավ ԱՊՀ ասոցացված անդամ, որպեսզի համապատասխանի ՄԱԿ–ի կողմից ճանաչված և միջազգայնորեն ընդուված չեզոք երկրի կարգավիճակին: Թեև Ուկրաինան ԱՊՀ երեք հիմնադիր երկրների շարքում է, ստորագրել ու վավերացրել է ԱՊՀ ստեղծման վերաբերյալ պայմանագիրը դեռ 1991թ., սակայն նախընտրեց չվավերացնել ԱՊՀ կանոնադրությունը: Հետևաբար պաշտոնապես Ուկրաինան ԱՊՀ անդամ չէ, թեև փաստացի մասնակցում է ԱՊՀ շրջանակներում տեղ գտնող հանդիպումներին:

2003–2005 թթ. ընթացքում ԱՊՀ մի շարք երկրներում տեղ գտան այսպես կոչված **«գունավոր հեղափոխություններ»**, որոնք մասամբ փոխեցին իրավիճակն ԱՊՀ–ում: «Գունավոր հեղափոխություններ» են կոչվում ԱՊՀ և Բալկանների մի շարք երկրներում 2000–ական թվականների սկզբներին տեղ գտած հեղափոխական շարժումները: Այդ շարժումների մասնակիցները գերազանցապես կիրառում էին ոչ բռնի դիմադրության ու բողոքի ցույցերի մարտավարությունն ընդդեմ իրենց կառավարությունների, որոնց որակում էին իբր կոռումպացված և ավտորիտար, պահանջելով ժողովրդավարություն: Այդ բոլոր շարժումներն էլ ընտրում էին ինչ–որ գույն կամ ծաղիկ՝ իբրև իրենց շարժման խորհրդանիշ: «Գունավոր հեղափոխություններն» առանձնանում են նրանով, որ դրանցում հատկապես կարևոր դեր են խաղում ոչ կառավարական կազմակերպություններն ու կազմակերպված ուսանողությունը:

ԱՊՀ տարածքում տեղ գտած **«գունավոր հեղափոխությունների»** արդյունքում իշխանությունից հեռացվեցին Վրաստանի, Ուկրաինայի և Ղրղզստանի երկարամյա կառավարող նախագահներ Է.Շևարդնաձեն, Լ.Կուչման և Ա.Ակաևը: Բոլոր երեք դեպքերում էլ ընդդիմությունը բողոքարկում էր նախագահական կամ խորհրդարանական ընտրությունների արդյունքները և մեկ միասնական սցենարով հասավ իշխանափոխության: Վրաստանում 2003թ. տեղ գտած **«Վարդերի հեղափոխության»**, Ուկրաինայում 2004թ.տեղ գտած **«Նարնջագույն հեղափոխության**

և Ղրղզստանում 2005թ. տեղ գտած **«Կակաչների հեղափոխության»** արդյունքում իշխանության եկան նոր գործիչներ, որոնք մասամբ կամ սկզբունքորեն վերանայեցին ԱՊՀ շրջանակներում իրենց համագործակցությունը: Այդ առումով հատկապես ակնհայտ էր Վրաստանի դիրքորոշման փոփոխությունը: 2006թ. փետրվարին Վրաստանը հայտարարեց ԱՊՀ Պաշտպանության նախարարների խորհրդի կազմից դուրս գալու իր որոշման մասին: Վրացական կողմը նշում էր, որ Վրաստանը ՆԱՏՕ–ին անդամակցելու ուղենիշ է վերցրել և չի կարող միաժամանակ լինել երկու ռազմական կառույցներում: Այդուհանդերձ, ընդհուպ մինչև 2009թ. օգոստոս ամիսը Վրաստանը պաշտոնապես ԱՊՀ անդամ էր հանդիսանում: 2008թ. Վրաստանը պատերազմական գործողություններ սկսեց ընդդեմ Հարավային Օսիայի, որը վերածվեց Ռուս–վրացական պատերազմի. Վրաստանը ծանր պարտություն կրեց: Պատերազմից անմիջապես հետո Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլին հայտարարեց ԱՊՀ կազմից դուրս գալու իր երկրի մտադրության մասին: 2008թ. օգոստոսի 14–ին Վրաստանի խորհրդարանը ԱՊՀ կազմից դուրս գալու վերաբերյալ միաձայն որոշում կայացրեց, իսկ չորս օր անց Վրաստանի Արտաքին գործոց նախարարարությունը ԱՊՀ գործադիր կոմիտեին տեղեկացրեց իր որոշման մասին: Չնայած այդ հանգամանքին Վրաստանը շարունակում է իրագործել ԱՊՀ շրջանակներում կնքված շուրջ պայմանագրային պարտավորությունների կատարմանը, քանզի դրանք պաշտոնապես անդամակցություն չեն պահանջում:

Պետությունը	Ստորագրումը	Վավերացումը	ԱՊՀ կանոնադրության վավերացումը	Անդամության կարգավիճակը
Հայաստան	21 դեկտեմբերի 1991թ.	18 փետրվարի 1992թ.	16 մարտի 1994թ.	լիիրավ անդամ
Ադրբեջան	21 դեկտեմբերի 1991թ.	24 սեպտեմբերի 1993 թ.	14դեկտեմբերի1993թ.	լիիրավ անդամ
Բելառուս	8 դեկտեմբերի 1991թ.	10 դեկտեմբերի 1991թ.	18 հունվարի 1994թ.	լիիրավ անդամ
Ղազախստան	21 դեկտեմբերի 1991թ.	23 դեկտեմբերի 1991թ.	20 ապրիլի 1994 թ.	լիիրավ անդամ
Ղրղզստան	21 դեկտեմբերի 1991թ.	6 մարտի 1992 թ.	12 ապրիլի 1994 թ.	լիիրավ անդամ
Մոլդովա	21 դեկտեմբերի 1991թ.	8 ապրիլի 1994թ.	27 հունիսի 1994թ.	լիիրավ անդամ
Ռուսաստան	8 դեկտեմբերի 1991թ.	12 դեկտեմբերի 1991թ.	20 հուլիսի 1993թ.	լիիրավ անդամ

Վրաստան	—	3 դեկտեմբերի 1993	19 ապրիլի 1994 թ.	պաշտոնապես անդամ երկիր չի հանդի-սանում. ԱՊՀ կազմից դուրս գալու մասին դիմումն ուժի մեջ է մտել 2009թ. օգոս-տոսի 18–ին:
Տաջիկստան	21 դեկտեմբերի 1991թ.	26 հունիսի 1993 թ.	4 օգոստոսի 1993 թ.	լիիրավ անդամ
Թուրքմենստան	21 դեկտեմբերի 1991թ.	26 դեկտեմբերի 1991թ.	Չի վավերացրել	ոչ լիիրավ, ասոցացված անդամ
Ուկրաինա	8 դեկտեմբերի 1991 թ.	1991թ. դեկտեմբերի 10	Չի վավերացրել	փաստացի մասնակցում է, սակայն պաշտոնապես անդամ երկիր չի հանդի-սանում:
Ուզբեկստան	21 դեկտեմբերի 1991թ.	1ապրիլի 1992թ.	9 փետրվարի 1994 թ.	լիիրավ անդամ

ԱՊՀ տարածքում գնալով ավելի ծանրակշիռ դեր սկսեց խաղալ հատկապես Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ): **1992թ. մայիսի 15–ին Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը Տաշքենդում ստորագրեցին Հավաքական Անվտանգության վերաբերյալ պայմանագիրը (ՀԱՊ): Ավելի ուշ 1993 թ. սեպտեմբերին պայմանագրին միացան Ադրբեջանն ու Վրաստանը, իսկ դեկտեմբերին՝ Բելառուսը:**

Պայմանագիրն ուժի մեջ մտավ 1994թ. ապրիլի 20–ին: Այն կնքվել էր 5 տարով և հնարավոր էր համարվում պայմանագրի երկարաձգումը: 1999թ. Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը և Տաջիկստանը համապատասխան արձանագրության ստորագրումով ևս հինգ տարով երկարաձգեցին Հավաքական Անվտանգության վերաբերյալ պայմանագրի գործողության ժամկետը, սակայն Ադրբեջանը, Վրաստանը և Ուզբեկստանը հրաժարվեցին պայմանագրի երկարաձգումից: Նույն թվականին Ուզբեկստանը դարձավ ՎՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) կազմակերպության անդամ:

2002թ. մայիսի 14–ին ՀԱՊ–ի Մոսկվայում տեղ գտած նստաշրջանում որոշվեց ՀԱՊ–ը վերածել լիարժեք միջազգային կազմակերպության: Ստեղծվեց Հավաքական Անվտանգության վերաբերյալ պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ): 2004թ. դեկտեմբերին ՄԱԿ–ի գլխավոր Ասամբլեան ՀԱՊԿ–ին դիտորդի կարգավիճակ

շնորհելու վերաբերյալ բանաձև ընդունեց: Իսկ արդեն 2006 թ. օգոստոսին ՀԱՊԿ լիիրավ անդամ դարձավ Ուզբեկստանը:

2009թ. փետրվարին ՀԱՊԿ անդամ պետությունների նախագահները Մոսկվայում ***Արագ արձագանքման հավաքական ուժերի*** ստեղծման վերաբերյալ որոշում կայացրին: Ստորագրված փաստաթղթի համաձայն Արագ արձագանքման հավաքական ուժերը պետք է օգտագործվեն ռազմական ագրեսիային հակադարձելու, միջազգային ահաբեկչության, ծայրահեղականության, վերազգային կազմակերպված հանցագործության և թմրանյութերի տարածման դեմ պայքարի շրջանակներում իրականացվելիք հատուկ գործողությունների ընթացքում, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման նպատակով:

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը հիմնադրվել է 1992թ.՝ Ստամբուլում: Կազմակերպությունը միավորում է 12 երկրների և նպատակ ունի ամրապնդելու տնտեսական համագործակցությունն ու կայունությունը Սևծովյան տարածաշրջանում:

Կազմակերպության հիմնադիր անդամներն էին տասնմեկ երկրներ (Հայաստանը, Ադրբեջանը, Ալբանիան, Բուլղարիան, Թուրքիան, Հունաստանը, Մոլդովան, Ռումինիան, Ռուսաստանը, Վրաստանը, Ուկրաինան), որոնց հետագայում (2004թ.) միացավ նաև Սերբիան (այդ ժամանակ՝ Սերբիա և Չեռնոգորիա): Ինչպես տեսնում ենք, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ են հանդիսանում նաև այն երկրները, որոնք չունեն ելք դեպի Սև ծով: ՍՏՀԿ–ն արձանագրել է որոշակի հաջողություններ: Այդուհանդերձ, ՍՏՀԿ–ն չկանխեց անդամ մի շարք երկրների միջև առկա հակամարտությունները: Ավելին, տարածաշրջանային համագործակցությունը իրական ոչ մի ազդեցություն չունեցավ այդ հակամարտությունների ընթացքի և դրանց լուծման տեսանկյունից: Պատճառն այն է, որ ՍՏՀԿ–ն ունի մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող խնդիրներ: Նախ ՍՏՀԿ–ն իր գործունեությունը գերազանցապես կենտրոնացրել է տնտեսական խնդիրների վրա: Քանի որ անդամ երկրներից շատերը ներգրավված են այլ ինտեգրացիոն, տնտեսական և ռազմաքաղաքական կառույցներում (ինչպես օրինակ ԱՊՀ–ն, ՆԱՏՕ–ն, ՀԱՊԿ–ը և այլն), քաղաքական կամ անվտանգության տեսանկյունից կարևորվող ոչ մի խնդիր չի կարող արդյունավետորեն կարգավորվել ՍՏՀԿ–ի շրջանակներում: Երբ ողջ սրությամբ դրվեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի, Աբխազիայի, Հարավային Օսիայի և Վրաստանի, ինչպես նաև այլ հակամարտությունները, ՍՏՀԿ–ն չկարողացավ վերածվել հակամարտությունը կարգավորող կառույցի: ՍՏՀԿ–ն չունի ընդհանուր օրենսդրական նորմեր, իսկ համագործակցությունն իր խորությամբ չի գերազանցում ընդհանուր տնտեսական ծրագրերի մակարդակը:

ՍՏՀԿ–ի անդամ երկրների քաղաքական շահերն ու հետաքրքրությունները ոչ միայն տարբեր են ու բազմազան, այլև հաճախ հակասում են միմյանց: Անդամ երկրներից ոմանք ՆԱՏՕ–ի անդամ են, ոմանք էլ ՀԱՊԿ անդամներ: Ռուսաստանը բնականաբար շահագրգռված չէ թույլատրելու քաղաքական խնդիրների քննարկումն ու կարգավորումը հիշյալ կազմակերպության շրջանակներում: ՍՏՀԿ անդամ երկրներից Ռուսաստանը, Ուկրաինան և Թուրքիան մրցակցում են տարածաշրջանում գերակա դիրքեր ապահովելու նպատակով՝ հենվելով առաջին հերթին իրենց ռազմական, նավթային, գազային և այլ ներուժի վրա կամ կիրառելով այլ լծակներ: Այդ մրցակցությունը չի կարող դրականորեն անդրադառնալ տարածաշրջանի «սառեցված հակամարտությունների» կարգավորման վրա: Բացասական ազդեցություն ունի նաև Կիպրոսի չլուծված խնդիրը: Թուրքիան նույնիսկ ձախողեց Կիպրոսի հանրապետության անդամակցումը ՍՏՀԿ–ին, ի պատասխան որի

Հունաստանը, դեմ քվեարկելով, ձախողում է ցանկացած նոր պետության (նույնիսկ Չեռնոգորիայի) անդամակցումը հիշյալ կազմակերպությանը:

«Շանհայի համագործակցության կազմակերպությունը»

Գնալով ավելի մեծ հեղինակություն է վաստակում նաև «Շանհայի համագործակցության կազմակերպությունը»: Դեռ 1996թ. սկսած գործում էր «Շանհայի հնգյակը», որում ընդգրկված էին Չինաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: 2001թ. «Շանհայի հնգյակին» միացավ նաև Ուզբեկստանը և կազմակերպությունը վերանվանվեց «Շանհայի համագործակցության կազմակերպություն»: ՉԺՀ Շանհայ քաղաքում հիմնված կազմակերպության շտաբ–կայանը Պեկինում է: Բացի վեց լիիրավ անդամներից կազմակերպության կառույցում ընդգրկված են չորս դիտորդ երկրներ, ինչպես նաև գործընկերոջ ու հյուրի կարգավիճակ ունեցող երկրներ: Կազմակերպությունը մեծ հաջողություններ գրանցեց անդամ երկրների միջև սահմանային խնդիրների կարգավորման, անվտանգության և սահմանամերձ շրջաններում ռազմական ուժերի նվազեցման ասպարեզում: Այս խնդիրները հետխորհրդային երկրներն ու ՉԺՀ–ն ժառանգել էին դեռ խորհրդային շրջանից և դրանց մեծագույն մասի լուծումն էական ձեռքբերում էր: Չբավարարվելով ձեռք բերածով, կազմակերպությունը հետագայում ընդլայնեց իր գործունեությունը և ներկայումս անդամ երկրների միջև համագործակցությունն ընդգրկում է ոչ միայն սահմաններին առնչվող խնդիրներն ու անջատողականության դեմ պայքարը, այլև անվտանգությունը, ռազմական, տնտեսական և մշակութային բնագավառները, հետախուզական տվյալների փոխանակումը, համատեղ զորավարժություններն ու պայքարը՝ ահաբեկչության և կազմակերպված հանցագործության դեմ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Սառը պատերազմի ավարտին աշխարհաքաղաքական զարգացումների ապագայի վերաբերյալ ի՞նչ տեսակետներ էին շրջանառվում: Քաղաքական գործիչներն ինչպիսի՞ վերաբերմունք դրսևորեցին այդ տեսակետների հանդեպ: Բացատրե՛ք «Քաղաքակրթությունների երկխոսություն» հասկացությունը:
2. Ի՞նչ ընթացք են ստացել ռուս - ամերիկյան հարաբերությունները հետսառըպատերազմյան շրջանում: Բնութագրե՛ք դրանց ներկայիս վիճակը և փորձե՛ք պարզել զարգացման հեռանկարները:
3. Համագործակցությունը նախկինում հակամարտ երկրների միջև ի՞նչ ձևեր է ընդունել: Ներկայացրե՛ք Սևծովյան տնտեսական և Շանհայի համագործակցության կազմակերպությունների գործունեության հիմնական նպատակները և արդյունքները:

§3. ԽՍՀՄ–Ի ՓԼՈՒՉՈՒՄՆ ՈՒ ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Վերակառուցման գործընթացն ու վերջինիս ձախողումը

1980–ական թվականների կեսերին ԽՍՀՄ–ը կանգնած էր խոր տնտեսական և սոցիալ–քաղաքական ճգնաժամի առջև: Պահանջվում էին արմատական վերափոխումներ: Խորհրդային համակարգում բարեփոխումներ իրագործելու նախաձեռնությամբ հանդես եկավ 1985 թ. ԽՍՀՄ Կենտկոմի նոր գլխավոր քարտուղար ընտրված Միխայիլ Գորբաչովը: Մ.Գորբաչովի կողմից ձեռնարկված բարեփոխումները ստացան *«վերակառուցում» (պերեստրոյկա)* անվանումը: Վերակառուցումը ենթադրում էր տնտեսական, քաղաքական և գաղափարախոսական բարեփոխումների իրագործում: Ենթադրվում էր, որ վերափոխումների գործում լուրջ լծակ կարող է հանդիսանալ հրապարակայնության հռչակումը, ինչպես նաև հասարակության ժողովրդավարացման քաղաքականությունը:

Տնտեսական ոլորտում վերակառուցումն անցավ երեք փուլով.

• Երկրի սոցիալ–տնտեսական զարգացման խթանում և արագացում.

• Արմատական տնտեսական բարեփոխումների իրագործում.

• Հանրապետությունների և տարածաշրջանների անցումը տնտեսական հաշվարկի:

Քաղաքական ու գաղափարախոսական ոլորտում (մասնավորապես հրապարակայնության և հասարակության ժողովրդավարացման քաղաքականության մեջ) Մ.Գորբաչովը հասավ միայն աննշան հաջողությունների: Հասարակության ժողովրդավարացման գործընթացը խիստ դանդաղ էր ընթանում, իր իսկ՝ կոմունիստական - կուսակցության դեպքում իրավիճակը գրեթե քարացած էր: Լայնամասշտաբ փոփոխությունները երկրում տեղ գտան միայն 1988թ. վերջերին: Երկրում ընտրական նոր համակարգ ընդունվեց և փոխվեցին ԽՍՀՄ–ում պետական մարմինների գործունեության սկզբունքները: Իշխանության բարձրագույն մարմին հռչակվեց ժողովրդական պատգամավորների համագումարը, իսկ Գերագույն խորհուրդը դարձավ բազմաթիվ գործառույթներ ունեցող մշտապես գործող մարմին: Արդեն 1990թ. մարտին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 3–րդ համագումարը չեղյալ հայտարարեց «ԽՄԿԿ ղեկավար և ուղղորդող դերի» վերաբերյալ ԽՍՀՄ Սահմանադրության 6–րդ հոդվածը, ինչը նշանակում էր քաղաքական համակարգի փլուզում: 1989 թվականից երկրում ի հայտ եկավ անկախ աշխատավորական շարժումը: Սկսվեց նաև ընդդիմադիր կուսակցությունների ձևավորման գործընթացը: Սակայն դրա հետ մեկտեղ ԽՍՀՄ ղեկավարությունը նախկին մեթոդներով էր ձգտում կարգավորել վերակառուցման արդյունքում վերստին բարձրացված ազգային ինքնորոշման և մի շարք այլ ցավոտ հարցեր (Ղարաբաղյան հարց և այլն):

Տնտեսական բարեփոխումները նույնպես տապալվեցին: Այստեղ վերափոխումների հիմքում դրվեցին ավանդական վարչահրամայական մեթոդները, հրահանգները, որոշումներն ու օրենքները (պետական ձեռնարկությունների, կոոպերացիայի և այլն): Սակայն գերատեսչությունների թելադրանքի պայմաններում այդ ամենը տանում էր միայն արտադրության անկմանը, ինչն իր հերթին բացասաբար էր անդրադառնում սպառման շուկայի վրա: Համատարած կերպով վաճառքում այլևս չկային լայն սպառման ապրանքները, սննդամթերքի համար կտրոններ մտցվեցին, շրջանառության մեջ դրվեցին առևտրի սահմանափակման նաև այլ մեթոդներ: Երկրում ծաղկում էր սպեկուլյացիան, սև շուկաներն, իսկ մաֆիոզ խմբերը վերահսկում էին առևտրի և մատակարարման ոլորտները:

Այս պայմաններում 1990թ. կայացած ԽՄԿԿ 28–րդ համագումարում հաստատվեց շուկայական հարաբերություններին անցնելու անհրաժեշտությունը: Սակայն այդ անցումը պետք է տեղի ունենար պետության վերահսկողության ներքո և բնակչության սոցիալական ապահովության համակարգի պահպանման պայմանով: 1990թ. աշնանը մշակվեցին տնտեսական բարեփոխումների երկու ծրագրեր: Դրանցից առաջինը մշակվել էր Ն.Ռիժկովի գլխավորած խորհրդային կառավարության կողմից, իսկ մյուսը՝ Շատալինի և Յավլինսկու հեղինակած «500 օր» ծրագիրը մշակվել էր ռուսաստանյան ղեկավարության հովանավորությամբ: Սկզբում Մ.Գորբաչովը հակված էր «500 օր» ծրագրի օգտին, սակայն հետագայում նա առաջարկեց այդ երկու ծրագրերի հիման վրա պատրաստել մեկ միասնական ծրագիր: ԽՍՀՄ նախագահը չէր ցանկանում գնալ արմատական վերափոխումների:

ԽՍՀՄ փլուզման գործընթացը

1990թ. մարտ–մայիս ամիսներին կայացան միութենական հանրապետությունների իշխանության օրենսդիր մարմինների ընտրությունները: ԽՍՀՄ–ում սկսվեց «սուվերենությունների շքերթը», երբ մեկը մյուսի հետևից միութենական հանրապետությունները հայտարարում էին իրենց ինքնուրույնության և անկախության մասին: Անկախություն հռչակած հանրապետությունները հայտարարում էին իրենց տարածքում սեփական օրենքների գերակայության և միութենական օրենքների կիրառումը դադարեցնելու մասին: Իսկ արդեն 1990 թ. հունիսի 12–ին ընդունվեց Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագիրը: Սա արդեն ԽՍՀՄ–ի վերջնական փլուզման սկիզբն էր: Տնտեսական կապերի խզումը նոր միութենական պայմանագրի մշակման անհրաժեշտություն ստեղծեց: 1991թ. մարտի 17–ին կայացավ ԽՍՀՄ–ի պահպանման անհրաժեշտության վերաբերյալ հանրաքվեն: Հանրաքվեի մասնակիցների երեք քառորդի պատասխանն «այո» էր: 1991թ. մայիսին սկսվեց Միութենական պայմանագրի մշակումը: Թեև վերջինիս նախագիծը չընդունվեց, պայմանագրի ստորագրումը նշանակվեց 1991թ. օգոստոսի 20–ին: Սակայն դեպքերը զարգանում էին ԽՍՀՄ փլուզման ուղղությամբ:

1991թ. օգոստոսի 19–ին երկրում պետական հեղաշրջում իրագործվեց: Ղրիմում իր հանգիստն անցկացնող Մ.Գորբաչովը հեռացվեց իշխանությունից, իսկ երկրի կառավարումը ստանձնեց ձևավորված Արտակարգ իրադրության պետական կոմիտեն (ԱԻՊԿ): Հեղաշրջումը ձախողվեց, քանզի այն վատ էր կազմակերպված, իսկ ժողովուրդը պասիվություն հանդես բերեց: 1991թ. օգոստոսի 21–ին Ղրիմից Մոսկվա բերվեց ԽՍՀՄ նախագահ Մ.Գորբաչովը: Նա ԱԻՊԿ–ի անդամներին ձերբակալման հրամաններ արձակեց: Այս պահից սկսած՝ իրական իշխանությունն անցավ Ռուսաստանի նախագահ Բ.Ելցինին: Օգոստոսյան դեպքերի արդյունքը դարձավ նաև քաղաքական ասպարեզից ԽՄԿԿ–ի հեռացումը: Վերջինիս գործունեության դադարեցման մասին հրամանը ստորագրեց Բորիս Ելցինը:

Թեև Ռուսաստանի ղեկավարությունը ԱԻՊԿ–ի դեմ պայքարի շրջանակներում նպաստեց Մ.Գորբաչովի իշխանության վերականգնմանը, այն ամենևին մտադիր չէր թույլատրելու ՌՍՖՍՀ–ի տարածքում միութենական իշխանության մարմինների վերահսկողության վերականգնումը և ձգտում էր դուրս բերել Ռուսաստանը Խորհրդային Միության իշխանական կառույցների վերահսկողությունից: Բ.Ելցինի ղեկավարությամբ Ռուսաստանյան Դաշնությունում աշխատանքներ էին տարվում ԽՍՀՄ վերափոխման սեփական նախագծի մշակման ուղղությամբ: Ռուսաստանյան այդ նախագիծը ներկայացվեց 1991թ. հոկտեմբերի 1–ին: Նախագծի համաձայն՝ ՌՍՖՍՀ–ն պետք է վերածվեր անկախ պետության՝ դառնալով Խորհրդային Միության միակ ժա-

ռանգը միջազգային ասպարեզում: Նախագծով հաշվարկված էր, որ Ռուսաստանյան դաշնությունը, ունենալով հարուստ ռեսուրսներ և ռազմական հզորություն, դեպի իրեն կձգի նաև մյուս հանրապետությունները: Հետևաբար նոր ինտեգրումը, նախագծի հեղինակների կարծիքով, անհամեմատ ավելի նպաստավոր կլիներ ռուսական կողմի համար:

Իր հերթին 1991թ. աշնանը Գորբաչովի նախաձեռնությամբ վերսկսվեցին աշխատանքները միութենական պայմանագրի նոր նախագծի մշակման ուղղությամբ: Նոյեմբերի 14–ին ԽՍՀՄ Պետական խորհուրդը քննարկեց ԽՍՀՄ–ի փոխարեն **Սուվերեն Պետությունների Միության** ստեղծման վերաբերյալ պայմանագրի նախագիծը: Չնայած Ռուսաստանի, Բելոռուսիայի և Ուկրաինայի առաջնորդների արտահայտած առարկություններին՝ նոյեմբերի 25–ին նախագիծը հաստատվեց: Գորբաչովի կարծիքով, որ նոր միությունը լինելու էր «կոնֆեդերատիվ, ժողովրդավարական պետություն»:

Սակայն դեկտեմբերի 1–ին Ուկրաինայում անցկացված հանրաքվեի արդյունքում բնակչության ավելի քան 90 տոկոսն արտահայտվեց հօգուտ անկախության: Մեկ օր անց Ռուսաստանի նախագահը հայտարարեց Ուկրաինայի անկախության ճանաչման մասին:

Գորբաչովը մտադիր չէր զիջելու: 1991թ. դեկտեմբերի 3–ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հաստատեց Սուվերեն Պետությունների Միություն ստեղծելու վերաբերյալ պայմանագրի նախագիծը, իսկ Գորբաչովը դիմեց միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներին՝ նախագիծը հաստատելու խնդրանքով: Սա ստիպեց Գորբաչովի հակառակորդներին՝ դիմելու կտրուկ միջոցների:

1991թ. դեկտեմբերի 8–ին Բելովեժյան Պուշչայում (Բրեստից ոչ հեռու) տեղի ունեցավ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելոռուսիայի ղեկավարների (Բ.Ելցին, Լ.Կրավչուկ, Ս.Շուշկևիչ) գաղտնի հանդիպումը: Այստեղ է, որ Ռուսաստանը, Ուկրաինան և Բելոռուսիան ստորագրեցին **Անկախ պետությունների համագործակցության** (ԱՊՀ) կազմավորման վերաբերյալ պայմանագիրը: Պայմանագրում նաև ասվում էր. «ԽՍՀՄ–ն՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարեցնում է իր գոյությունը»: **Բելովեժյան համաձայնագիրը** վճռորոշ դեր խաղաց Խորհրդային Միության փլուզման գործում: Դեկտեմբերի 9–12–ին Ուկրաինայի, Բելոռուսիայի և ՌՍՖՍՀ–ի Գերագույն խորհուրդները չեղյալ հայտարարեցին ԽՍՀՄ կազմավորման վերաբերյալ 1922թ. դեկտեմբերին կնքված պայմանագիրը: Գրեթե միաժամանակ հիշյալ երկրների Գերագույն խորհուրդները վավերացրին նաև Բելովեժյան համաձայնագիրը: Հիշյալ համաձայնագրի երեք մասնակիցները դարձան անկախ պետությունների նախագահներ: Իսկ արդեն 1991թ. դեկտեմբերի 21–ին Ալմա Աթայում կայացած հանդիպման ընթացքում (որին Գորբաչովը հրավիրված չէր) ԽՍՀՄ 11 նախկին հանրապետություններ հայտարարեցին ԽՍՀՄ–ի գոյության վերջնական դադարեցման մասին և ստեղծեցին ԱՊՀ կոորդինացիոն կառույցները: Նախկին խորհրդային հանրապետություններից միայն Մերձբալթյան երկրներն (Լատվիա, Լիտվա, Էստոնիա) ու Վրաստանը չմիացան ԱՊՀ–ին:

1991թ. դեկտեմբերի 25–ին Մ. Ս. Գորբաչովը հրաժարական տվեց: Պատմության մեջ նա մնաց իբրև ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ: Կրեմլից իջեցվեց ԽՍՀՄ կարմիր դրոշը: Շուրջ 70–ամյա ուղի անցած Խորհրդային Միությունը դադարեց գոյություն ունենալուց:

ԽՍՀՄ–ի փլուզման պատճառները

Պատմականորեն ԽՍՀՄ–ը կրկնեց բազմազգ բազմաթիվ այլ կայսրությունների ճակատագիրը, որոնք որոշակի վերելքից հետո օրինաչափորեն փլուզվել ու հեռացել են պատմական ասպարեզից: ԽՍՀՄ փլուզումը մի շարք պատճառների արդյունքն էր: Դրանք էին՝ ա) կուտակված ազգային խնդիրներն ու խորացող հակասությունները, բ) վերակառուցման շրջանի տնտեսական բարեփոխումների ձախողումը, գ) կոմունիստական գաղափարախոսության ճգնաժամն ու ԽՍՀՄ հիմքը կազմող ԽՄԿԿ դերի թուլացումը՝ վերջինիս մենիշխանության վերացման հետ մեկտեղ, դ) վերակառուցման շրջանում հանրապետությունների և նրանց կազմի մեջ մտնող ինքնավար կազմավորումների ազգային ինքնորոշման շարժումը, ե) նոր ազգային էլիտայի ձգտումը դեպի իշխանություն և ֆինանսատնտեսական ռեսուրսներ: Սակայն ԽՍՀՄ փլուզման գործում որոշակի դեր խաղացին նաև սուբյեկտիվ գործոնները՝ Մ.Գորբաչովի թույլ տված սխալներն ու նրա անհետևողական քայլերը բարեփոխումների իրագործման գործում: Կարևոր էր նաև Բ.Ելցինի գլխավորությամբ գործող Ռուսաստանի նոր ղեկավարության ձգտումը՝ հասնելու լիարժեք իշխանության և այլն:

ԽՍՀՄ–ի փլուզման հետևանքները

ԽՍՀՄ–ի փլուզումն ունեցավ որոշակի տնտեսական և քաղաքական հետևանքներ: Պետական անկախության շնորհումը նշանակում էր, որ այսուհետև նորանկախ պետություններն իրենք պետք է հոգային իրենց տնտեսական կարիքներն ու ինքնուրույն որոշումներ կայացնեին: Սակայն տնտեսական անկախության ձեռքբերումը դժվարին խնդիր էր: Նորանկախ պետությունների մեծ մասի բնակչության կենսամակարդակն առժամանակ անկում ապրեց անկախության ձեռքբերումից հետո: Ավելին՝ նախկին խորհրդային հանրապետություններից շատերն անկախացումից հետո կորցրին արտահանման նախկին շուկաները, քանզի նախկինում Մոսկվան էր ապահովում իրենց մուտքը այդ շուկաներ: Արդյունքում նախկին խորհրդային հանրապետություններից շատերի մասնաբաժինը միջազգային ապրանքաշրջանառության մեջ նվազեց: Փոխարենը՝ աճեց հետխորհրդային նորանկախ երկրների կախվածությունն արտաքին առևտրից:

ԽՍՀՄ փլուզման արդյունքում էական խնդիր դարձավ մտավոր ներուժի՝ որակյալ ու հեռանկարային մասնագետների հեռացումը հայրենիքից: Այս երևույթը ստացել է «ուղեղների արտահոսք» անվանումը: Մեծ ծավալ ընդունեց նաև բնակչության արտագաղթը:

Աշխարհի քարտեզի վրա հայտնվեցին տասնհինգ նորանկախ երկրներ: Ի հայտ եկավ նաև **ԱՊՀ**–ն*:* Բանն այն է, որ նախկին ԽՍՀՄ–ի տարբեր հատվածների միջև նախկինում ձևավորվել էին առևտրատնտեսական հաստատուն կապեր, ինչը խզելն այնքան էլ նպատակահարմար չէր: Նախկին Խորհրդային Միության ժողովուրդներն ունեին ընդհանուր պատմական, մշակութային ժառանգություն և աշխարհայացքային ընդհանրություններ: Նրանք գիտակցում էին քաղաքական և տնտեսական կապերը խզելու և մեկուսանալու բացասական հետևանքները: Ռուսաստանյան Դաշնությունը նույնպես ձգտում էր իր ազդեցության տակ պահելու ԽՍՀՄ նախկին անդամներին, որոնք իրավական տեսանկյունից անկախ պետություններ էին:

Խորհրդային Միության փլուզումն ունեցավ նաև մի շարք այլ համաշխարհային նշանակության հետևանքներ: ԽՍՀՄ փլուզման արդյունքում հնարավոր դարձավ անհամեմատ ավելի զորեղ ու հաստատուն Եվրամիության ստեղծումը, որը

ներկայումս տարածվելով, ընդգրկում է նաև նախկին Խորհրդային Միության մերձբալթյան հանրապետությունները: Միաժամանակ առանց Սոցիալիստական համակարգի փլուզման և Գերմանիայի վերամիավորման նույնպես հնարավոր չէր ուժեղ ու լիարժեք Եվրամիության կայացումը: ԵՄ–ն չէր կարող հզոր լինել, եթե Ռուսաստանի և նախկին սոցիալիստական երկրների տարածքներից արևմտյան երկրներին չմատակարարեին էժան հումք ու էներգակիրներ: ԵՄ–ն առանց կոմունիստական բլոկի փլուզման կլիներ նվազ կենսունակ և տնտեսապես ավելի խոցելի: Մինչդեռ ներկայումս Եվրամիության բոլոր երկրների համար մատչելի են նախկին ԽՍՀՄ–ի անսահման հումքն ու ՏՓԽ–ի մեջ ընդգրկված նախկին սոցիալիստական երկրների էժան արտադրական կարողությունները, որոնք էականորեն նվազեցրին ԵՄ–ից աշխարհի այլ երկրներ արտահանվող ապրանքների ինքնարժեքը: ԽՍՀՄ–ի և սոցիալիստական համակարգի փլուզման արդյունքում հնարավոր դարձավ ՆԱՏՕ–ի ընդլայնումն ու ԱՄՆ–ի գլխավորությամբ միաբևեռ աշխարհակարգի ստեղծումը:

Խորհրդային Միության փլուզումից էականորեն շահեց հատկապես Չինաստանը: Վերջնականորեն հասկանալով, որ ԽՍՀՄ–ի տնտեսական մոդելը կենսունակ չէ, ՉԺՀ–ն իրականացրեց համընդգրկուն արդիականացման ծրագիր, միաժամանակ կասեցնելով մինչ այդ տեղ գտած քաղաքական ազատականացման գործընթացը: Թեև ՉԺՀ–ում անվիճելի էին մնում Կոմունիստական կուսակցության ղեկավար դիրքերը, ԽՍՀՄ–ի փլուզումից հետո տնտեսական համակարգի առումով այն բոլորովին այլ, արդիականացած երկիր էր՝ ի տարբերություն 1980–ական թվականների: ԽՍՀՄ–ի փլուզման անցանկալի հետևանքներից մեկը դարձավ քաղաքական իսլամի ակտիվացումը: Վերջնականապես հիասթափվելով կոմունիստական գաղափարախոսությունից և այն համարելով ոչ կենսունակ, որոշ իսլամական երկրներ կրկին ակտիվացրեցին կրոնական գաղափարախոսությունը, այն օգտագործելով քաղաքական նպատակներով:

Միաժամանակ ԽՍՀՄ–ի փլուզումով ավարտվեցին Սառը պատերազմի ընթացքում երրորդ աշխարհում տեղ գտած մի շարք պատերազմներ: Որոշ տարածաշրջանների երկրներից Խորհրդային Միության անսպասելի հեռացումից հետո վերջիններս ծայրահեղ շփոթմունքի մեջ էին: Բազմաթիվ երկրներ հզորագույն տերությունների համար դարձան ոչ այնքան կարևոր ու մոռացված, իսկ տեղի բնակչությունն էականորեն տուժեց: Խնդիրն այն է, որ մի շարք երկրներ զրկվեցին արտաքին տնտեսական և ռազմական օգնությունից, որ նախկինում ստանում էին ԽՍՀՄ–ից ու ԱՄՆ–ից: Սառը պատերազմի ընթացքում տեղ գտած այդ պատերազմների ու արտաքին օգնության ծավալների կրճատման հետևանքները մինչև օրս էլ զգացվում են երրորդ աշխարհում: Սակայն դրա հետ մեկտեղ ԽՍՀՄ–ի ու սոցիալիստական ճամբարի փլուզման արդյունքում ի հայտ եկան մի շարք այլ ողբերգական իրադարձություններ ու պատերազմներ հետխորհրդային ու նախկին Հարավսլավիայի տարածքում, որոնց պատճառների շարքում էին չլուծված ազգային, կրոնական, տնտեսական խնդիրներն ու վիճելի սահմանների հարցը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և ինչո՞ւ ԽՍՀՄ–ում արմատական փոփոխությունների պահանջ առաջացավ: Ո՞վ հանդես եկավ բարեփոխումներ իրականացնելու նախաձեռնությամբ, ի՞նչ անուն ստացան այդ բարեփոխումները:

2. Տնտեսական ոլորտում ի՞նչ փուլերով ընթացան բարեփոխումները: Ինչպե՞ս ընթացան բարեփոխումները քաղաքական ու գաղափարախոսական ոլորտում: Ի՞նչ հետևանքներ ունեցան այդ բարեփոխումները:

3. Ո՞րն էր «սուվերենությունների շքերթի» էությունը: Ե՞րբ է ընդունվել Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագիրը: Ի՞նչ իրադարձություններ հաջորդեցին դրան:

4. Ե՞րբ ԽՍՀՄ–ում պետական հեղաշրջում իրագործվեց. ինչո՞ւ այն ձախողվեց: ԽՍՀՄ–ի վերափոխման կամ նրա փոխարեն այլ պետական կազմավորում ստեղծելու ի՞նչ նախագծեր կային: Ե՞րբ և որտե՞ղ է ստորագրվել ԱՊՀ–ի կազմավորման մասին պայմանագիրը: Ո՞ր հանդիպման ընթացքում հայտարարվեց ԽՍՀՄ–ի գոյության դադարեցման մասին: Թվարկե՛ք ԱՊՀ–ին անդամակցած հանրապետությունները:

5. Պարզաբանե՛ք ԽՍՀՄ–ի փլուզման պատճառները և հետևանքները:

§4. ՆԱՏՕ–Ն ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱՏՕ–ի ընդլայնումն ու վերածնավորումը

1991 թ. Պրահայում լուծարվեց Վարշավյան պակտի կազմակերպությունը: Միջազգայնագետները սկսեցին խոսել ՆԱՏՕ–ի հնարավոր մայրամուտի մասին: Ռուսաստանը փորձում էր նոր շունչ տալ Հելսինկիի գործընթացին, Եվրոպայի անվտանգության և համագործակության կազմակերպությունը (ԵԱՀԿ) դարձնելով եվրոպական անվտանգության շղթայի կենտրոնական օղակը: Ֆրանսիան հանդես եկավ «եվրոպական պաշտպանության» համակարգի ստեղծման գաղափարով: Ֆրանսիացիները գտնում էին, որ պետք է զարկ տրվի ռազմաքաղաքական և պաշտպանական համագործակցությանը՝ Եվրամիության շրջանակներում: Սակայն ՆԱՏՕ–ն դարձավ եվրոպական երկրների ռազմաքաղաքական համախմբման կենտրոն և պահպանեց իր դիրքերը: Դա տեղի ունեցավ ոչ միայն ԱՄՆ–ի գործադրած ջանքերի շնորհիվ, այլև նախկին սոցիալիստական երկրների ու ԽՍՀՄ որոշ հանրապետությունների՝ հետխորհրդային Ռուսաստանից հեռանալու ձգտումների արդյունքում: Միակ գերտերությունը՝ ԱՄՆ–ը և նրա գլխավորած ռազմաքաղաքական դաշինքը դարձան ձգողականության այն բևեռը, որն էլ սահմանեց Եվրոպայում և աշխարհում միջազգային հարաբերությունների զարգացման գլխավոր ուղղությունը:

ՆԱՏՕ–Ն և «ժողովրդավարության ընդլայնումը»

1993թ. գալով իշխանության՝ Դեմոկրատական կուսակցության վարչակարգն ԱՄՆ–ում ավելի մեծ ուշադրություն էր դարձնում նախկին սոցիալիստական երկրների հետ հարաբերություններին: Այդ երկրները ավտորիտարիզմից անցում էին կատարում ժողովրդավարությանը: Ընդհանուր վերափոխումների շրջանում ԱՄՆ–ի ղեկավարությունը ձգտում էր դրանք ուղղել իրեն ձեռնտու հունով: Ամենից առաջ ԱՄՆ–ը ձգտում էր նվազագույնի հասցնել ռուսական ռազմական սպառնալիքի վերակենդանացման հավանականությունը: Անհրաժեշտ էր համարվում նաև այնպիսի պայմանների ստեղծումը, որ հնարավորություն կընձեռեր Արևմուտքի առավել զարգացած երկրներին մուտք գործել նախկին «փակ երկրներ», օգտվելով վերջիններիս մտավոր, էներգետիկ, հումքային, մարդկային և այլ ռեսուրսներից: Այդ նպատակով անհրաժեշտ էր հաղթահարել վերջիններիս մեկուսացվածությունը՝ այդ երկրները ներգրավելով համաշխարհային տնտեսական և քաղաքական գործընթացներում: Այդ դեպքում ԱՄՆ–ը երիտասարդ ժողովրդավարական վարչակարգերին կդարձներ իր գործընկերները, իր ազդեցությունը տարածելով նրանց վրա: Արդեն 1993թ. է. Լեյքը, որ ԱՄՆ–ի նախագահ Բ.Քլինթընի օգնականն էր, առաջ քաշեց «ժողովրդավարության ընդլայնման» գաղափարը: Համաձայն դրա, ամերիկյան արտաքին քաղաքականության առաջնահերթություններից էր համարվում Եվրասիայի նախկին սոցիալիստական վարչակարգերի ժողովրդավարացմանն աջակցելը: Արևմուտքը չէր վստահում ՌԴ–ին, վերջինիս համարելով չափից դուրս զորեղ, անկանխատեսելի և վտանգավոր: Հետևաբար ֆինանսական մեծ աջակցություն չէր ցուցաբերում վերջինիս: Ընդ որում, տնտեսականին զուգահեռ Լեյքի ռազմավարությունը ուներ նաև ռազմաքաղաքական բովանդակություն: «Ժողովրդավարության ընդլայնումը» ենթադրում էր, որ ժողովրդավարությանն անցումը հաղթահարած երկրները կդառնան նաև արևմտյան ռազմաքաղաքական և տնտեսական կառույցների անդամ: Ենթադրվում էր նաև, որ ԽՍՀՄ–ի նախկին արևելաեվրոպական դաշնակիցները կդառնան ՆԱՏՕ–ի անդամ: Հետևաբար նոր

աշխարհակարգի կարևորագույն տարրերից մեկը դարձավ ՆԱՏՕ–ի ընդլայնումը դեպի արևելք:

Զարգացման այս հեռանկարը անհանգստացնում էր Ռուսաստանին: Սակայն կանխել հիշյալ գործընթացը Մոսկվան անկարող էր:

Ընդհանուր առմամբ ԱՄՆ–ի հիմնական նպատակներն էին՝ պահպանել բացարձակ ռազմական գերակշռությունն աշխարհում, հետևողականորեն պահել տնտեսական բարգավաճման բարձր ցուցանիշները, իսկ արտերկրում ծավալել ազատ շուկայի և ժողովրդավարության սկզբունքները:

ՆԱՏՕ–ի նոր ռազմավարական հայեցակարգը

Ձևավորելով ՆԱՏՕ–ի հետ Ռուսաստանի փոխհարաբերությունների նոր մեխանիզմներ, ԱՄՆ–ը փորձում էր մեղմել Ռուսաստանի անհանգստությունը՝ իր սահմաններին Հյուսիսատլանտյան դաշինքի մոտենալու հետ կապված: Իր հերթին Ռուսաստանը ՆԱՏՕ–ի հետ համագործակցության ճանապարհով փորձում էր նպաստել հիշյալ կառույցի կերպարանափոխությանը: Սակայն ՆԱՏՕ–ն գնաց բոլորովին այլ ճանապարհով: 1999թ. ընդունվեց ՆԱՏՕ–ի նոր ռազմավարական կոնցեպցիան, որն արմատապես փոխեց այդ կազմակերպության նպատակներն ու խնդիրները: Ագրեսիայի դեպքում հավաքական պաշտպանության սկզբունքին զուգահեռ դրվում էր նաև ռազմավարական նոր նպատակ՝ «ընդլայնված Եվրաատլանտյան ողջ տարածաշրջանում անվտանգության ու կայունացման ապահովումը»: Ոչ միայն ընդգծվում էր ՆԱՏՕ–ի դերը հակամարտությունների կանխարգելման գործընթացներում, այլև շեշտվում ճգնաժամի ծագման դեպքում հակամարտությունների արդյունավետ կարգավորման գործընթացին ՆԱՏՕ–ի մասնակցության իրավունքը :

Նոր հայեցակարգի համաձայն ՆԱՏՕ–ն իրեն իրավունք էր վերապահում ռազմական ուժ գործադրելու կազմակերպության անդամ հանդիսացող երկրների տարածքից դուրս՝ առանց ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի լիազորությունները ստանալու: Այսպիսով տարածաշրջանային ռազմաքաղաքական դաշինքից ՆԱՏՕ–ն վերածվեց ԱՄՆ–ի ղեկավարությամբ գործող համաշխարհային նշանակության ուժային կառույցի:

ՆԱՏՕ–ն և հակամարտությունը Հարավսլավիայում

Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում պատերազմական գործողություններ տեղ գտան Իրաքում և Աֆղանստանում: Սակայն հակամարտությունների առումով ՆԱՏՕ–ն գերազանցապես հիշատակվում է նախկին Հարավսլավիայի տարածքում իրագործված ռազմաքաղաքական միջամտության հետ կապված: Մասնավորապես, 1994թ. ՆԱՏՕ–ի օդուժը ռմբահարեց դեռ 1991թ. անկախացած Խորվաթիայի կազմում գտնվող և Սերբիային միանալու ձգտող Սերբական Կրայինայի Հանրապետությունը:

Միջամտության անհրաժեշտություն զգացվեց նաև Հարավսլավիայի մեկ այլ հանրապետության՝ 1992թ. անկախացած Բոսնիա–Հերցեգովինայում բռնկված հակամարտության կապակցությամբ: Արդյունքում 1995թ. նոյեմբերին Դեյթոնում (ԱՄՆ) կայացավ Սերբիայի, Խորվաթիայի և Բոսնիայի ու Հերցեգովինայի առաջնորդների հանդիպումը՝ ԱՄՆ–ի, Ռուսաստանի և Եվրամիության ներկայացուցիչների մասնակցությամբ: Հստակեցվեցին Բոսնիայում ու Հերցեգովինայում խաղաղության հաստատման վերաբերյալ ապագա պայմանագրի

ընդհանուր սկզբունքները: Իսկ արդեն 1995թ. դեկտեմբերին Բոսնիայի ու Հերցեգովինայի, Սերբիայի և Խորվաթիայի նախագահները Փարիզում ստորագրեցին վերջնական համաձայնագիրը: Այսուհետև Բոսնիան ու Հերցեգովինան գրեթե 50/50 հարաբերությամբ բաժանվում էր երկու մասի՝ Բոսնիայի ու Հերցեգովինայի Դաշնություն (որը ներառում էր գերազանցապես խորվաթներին ու մուսուլմաններին) և Սերբական Հանրապետության (որը ներառում էր գերազանցապես սերբերին): Էթնիկ երեք խմբերն էլ հավասար սահմանադրական իրավունքներ ունեն ողջ երկրի տարածքում: Անթույլատրելի է համարվում ԲՀ–ի Սերբական հանրապետության միավորումը Սերբիայի հետ:

1990–ական թվականների վերջերին ծայրահեղորեն սրվեց իրավիճակը Սերբիայի կազմում գտնվող Կոսովոյի տարածքում, որի բնակչության բացարձակ մեծամասնությունն ալբանացիներ էին: Կոսովոյի ալբանական բնակչությունը չէր ճանաչում Բելգրադի իշխանությունը և ստեղծել էր կառավարման սեփական մարմինները: Քաղաքական չափավոր թևը գլխավորում էր Իբրահիմ Ռուգովան: Ստեղծվել էր նաև «Կոսովոյի ազատագրման բանակը», որը բազաներ ուներ հյուսիսային Ալբանիայի տարածքում և այդտեղից հարվածներ էր հասցնում դաշնային ուժերին: Ընդհանրապես Կոսովոյի ալբանացիները միանշանակ վայելում էին հարևան Ալբանիայի տնտեսական, քաղաքական և դիվանագիտական աջակցությունը: Փորձելով վերահաստատել իր վերահսկողությունը Կոսովոյի նկատմամբ, Հարավսլավիայի Դաշնային հանրապետության նախագահ Ս.Միլոշևիչը բանակի և ռազմական ոստիկանության լրացուցիչ ուժեր մտցրեց Կոսովո: Կառավարական և ալբանական զորքերի միջև սկսեցին ընդհարումներ, որոնք ուղեկցվում էին ալբանական բնակչության էթնիկական զտումներով: ՆԱՏՕ–ի անդամ երկրները Միլոշևիչից պահանջում էին բանակցություններ սկսել Կոսովոյի ալբանացիների հետ:

1999թ. փետրվար–մարտ ամիսներին Ռամբույեում (Ֆրանսիա) նախկին Հարավսլավիայի խնդիրներով զբաղվող երկրների (ԱՄՆ, ԳԴՀ, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Ֆրանսիա) ներկայացուցիչների մասնակցությամբ ընթացան Կոսովոյի հակամարտող կողմերի միջև բանակցություններ: Հաշտության պայմանագրի տեքստը պատրաստ էր, սակայն սերբական կողմը հրաժարվեց այն ստորագրել, քանզի դեմ էր Կոսովո օտարերկրյա զորքեր մտցնելու պահանջին: Ի պատասխան դրա, ՆԱՏՕ–ն ռազմական գործողություններ սկսեց ընդդեմ Հարավսլավիայի: ՆԱՏՕ–ի օդուժի թիրախ էին հանդիսանում ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտները: Արդեն հունիսին Սերբիայի ներկայացուցիչները ՆԱՏՕ–ի ուժերի հրամանատարության հետ կնքեց հրադադարի վերաբերյալ պայմանագիր: Կառավարական զորքերը դուրս էին բերվում Կոսովոյի տարածքից, իսկ փոխարենը Կոսովո էր մուտք գործում ՆԱՏՕ–ի զորախումբը: Թեև ՆԱՏՕ–ի գործողությունները չէին ստացել ՄԱԿ–ի լիազորությունները, դրանց արդյունքները արժանացան ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի հավանությանը: Իսկ Կոսովոն, լիարժեքորեն օգտվելով ազգերի ինքնորոշման իրավունքից, ժամանակի ընթացքում հասավ իր նպատակին և ձեռք բերեց անկախություն:

Սակայն որոշ ժամանակ անց իրադրությունը սրվեց նախկին Հարավսլավիայի կազմում գտնվող Մակեդոնիայում: Երբ 1999թ. Կոսովոյում սկսվեցին էթնիկական զտումները, դեպի Մակեդոնիա շարժվեց ալբանացի փախստականների ալիքը: Մակեդոնիայի բնակիչները սակայն մտավախություն ունեին, որ երկրի ալբանացի փոքրամասնությունը կվերածվի մեծամասնության: Երկրում սկսեցին սրվել հակաալբանական տրամադրությունները, իսկ Մակեդոնիայի ալբանաբնակ շրջանները հայտնվեցին ալբանացի զինյալների վերահսկողության տակ:

Մակեդոնիայում քաղաքացիական պատերազմի և երկրի բաժանման վտանգ կար: Ալբանացիները պահանջում էին իրենց իրավունքների ընդլայնում, իսկ մակեդոնացիները՝ երկրի տարածքային ամբողջականության պահպանում: 2001թ. սկսվեցին ռազմական ընդհարումները: Ընդ որում, ալբանացիներին օգնության հասավ «Կոսովոյի ազատագրման բանակը»: Սակայն 2001թ. օգոստոսի 12–ին Եվրամիության և ԱՄՆ–ի միջնորդական ջանքերի շնորհիվ Մակեդոնիայի կառավարության և ալբանական համայնքի ներկայացուցիչների միջև կնքվեց հաշտության համաձայնագիր: Ալբանական զինված ջոկատները զինաթափվեցին, և ՆԱՏՕ–ի խաղաղապահ ուժերը մուտք գործեցին ալբանաբնակ շրջաններ՝ մակեդոնական ոստիկանության հետ մեկտեղ: Որոշ ժամանակ անց Մակեդոնիայի սահմանադրության մեջ տեղ գտան փոփոխություններ և ուղղումներ: Էականորեն ընդլայնվեցին Մակեդոնիայի ալբանական բնակչության իրավունքները: Միաժամանակ ներում շնորհվեց ալբանացի զինյալներին:

Իրավիճակն առժամանակ կայունացավ նախկին Հարավսլավիայի տարածքում: Սերբիայի և Չեռնոգորիայի կոնֆեդերատիվ պետական միության կազմից Չեռնոգորիայի դուրս գալու գործընթացը (2006թ.) խաղաղ բնույթ կրեց: Նախկին Հարավսլավիան վերջնականորեն փլուզվեց:

Այսպիսով, ՆԱՏՕ–ի անմիջական ջանքերի շնորհիվ էականորեն փոխվեց աշխարհի քաղաքական քարտեզը: Նոր իրողություն դարձան նաև «հումանիտար ներխուժումներն» ու խաղաղապահ առաքելությունները:

ՆԱՏՕ–ի խաղաղապահ առաքելությունները

Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում տեղ գտան բազմաթիվ պատերազմներ ու հակամարտություններ, որոնց մեջ այս կամ այն կերպ ներգրավված էին ԱՄՆ–ը՝ իր դաշնակիցներով հանդերձ և ՆԱՏՕ–ն՝ իբրև ռազմաքաղաքական դաշինք: Սակայն հակամարտությանը, միջնորդական ջանքերին կամ խաղաղարարությանը հաջորդում է միջազգային խաղաղապահության՝ տվյալ երկրում միջազգային ուժերի ջանքերով կայունությունն ապահովելու փուլը: Որպես կանոն, դրանք իրագործվում են ՄԱԿ–ի հովանու ներքո: Սակայն հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում, ՄԱԿ–ի հետ համաձայնեցնելով, այդ գործողություններն իրագործվում են անմիջականորեն ՆԱՏՕ–ի և վերջինիս հետ համագործակցող այլ երկրների ուժերի կողմից: ՆԱՏՕ–ի հետ արդյունավետ համագործակցություն է ծավալում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանը սերտորեն համագործակցում է ՆԱՏՕ–ի հետ՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Մեր երկիրը միաժամանակ ներգրավված է ՆԱՏՕ–ի շրջանակներում գործող «Եվրոատլանտյան համագործակցության խորհուրդ» կազմակերպությունում: Հայաստանը կարևորում է նաև «Անհատական գործողությունների պլանի» իրագործումը՝ մի ծրագիր, որ նախատեսված է ՆԱՏՕ–ի հետ իրենց հարաբերությունները խորացնելու քաղաքական կամք ու կարողություններ ունեցող երկրների համար: Արդեն 2003թ. համագործակցության շրջանակներում իրագործվող ՆԱՏՕ–ի զորավարժություններից մեկն իրագործվեց Հայաստանի տարածքում: Այս զորավարժություններում առաջին անգամ ներկայացված էր նաև Ռուսաստանը: Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն մասնակցում է նաև ՄԱԿ–ի շրջանակներում ՆԱՏՕ–ի կողմից իրագործվող խաղաղապահ առաքելություններին: Հայ խաղաղապահներն այդ գործողություններն իրագործում են ՆԱՏՕ–ի անդամ

երկրների (Հունաստան, Լեհաստան և ԳԴՀ) զորախմբերի կազմում և վերջիններիս անմիջական հրամանատարության ներքո:

Խաղաղապահ գործողություններին ակտիվորեն ներգրավվել է նաև Հայաստանի Հանրապետությունը: 2004թ. սկսած հայ զինվորները հունական բանակի զորախմբի կազմում խաղաղապահ առաքելություն են իրագործում Կոսովոյում: Աջակցելով խաղաղությանն ու կայունությանը Կոսովոյում և նպաստելով վերջինիս միջազգային ճանաչմանը, մենք միաժամանակ գիտակցում էինք, որ Կոսովոյի կայացումն անհրաժեշտ նախադեպ կարող է հանդիսանալ ԼՂՀ–ի միջազգային ճանաչման համար:

2003թ. իրաքյան պատերազմի ավարտից հետո հայ խաղաղապահների զորախումբ ուղարկվեց նաև այդ երկիր: Հայ խաղաղապահները գործում էին Լեհաստանի հրամանատարության ներքո: 2008թ. հոկտեմբերին Հայաստանը վերջնականապես դուրս բերեց իր խաղաղապահ զորախումբը Իրաքի տարածքից: Դա պայմանավորված էր Իրաքում Լեհաստանի խաղաղապահ առաքելության ավարտով:

Հայաստանը ներկայումս ակտիվորեն ներգրավված է Աֆղանստանում իրականացվող խաղաղապահ գործողություններում՝ ՆԱՏՕ–ի գլխավորությամբ գործող Միջազգային անվտանգության աջակցման ուժերի շրջանակներում: Հայ խաղաղապահների զորախումբն Աֆղանստանում ապահովում է Կունդուզ օդանավակայանի անվտանգությունը և գործում է գերմանական հրամանատարության ներքո:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք նախկին սոցիալիստական երկրների հանդեպ ԱՄՆ–ի քաղաքականության հիմնական նպատակները: Բացատրե՛ք «Ժողովրդավարության ընդլայնում» հասկացությունը: Որո՞նք են այդ գաղափարի իրագործման արդյունքները:

2. Ինչո՞ւ է ՆԱՏՕ–ն ընդլայնվում դեպի արևելք: Պարզաբանե՛ք ՆԱՏՕ–ի որդեգրած նոր ռազմավարության էությունը: Այս տեսանկյունից ո՞րն է Ռուսաստանի դիրքորոշումը:

3. Վերհանե՛ք ՆԱՏՕ–ի դերակատարությունը բալկանյան նոր ճգնաժամի լուծման գործում: Ներկայացրե՛ք այդ ճգնաժամի քաղաքական, սոցիալական, էթնիկական և տնտեսական հետևանքները:

4. Ո՞ր եկրնեում է խաղաղապահական առաքելություններ իրականացնում ՆԱՏՕ–ն: Ի՞նչ մասնակցություն ունի Հայաստանի Հանրապետությունը խաղաղապահական գործողություններին:

Լրացուցիչ նյութեր

Հյուսիսատլանտյան Համաձայնագրի կազմակերպության ընդլայնումը.

Հիմնադիր 12 անդամներ.

ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Կանադա, Իտալիա, Նիդերլանդներ, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Դանիա, Իսլանդիա, Նորվեգիա, Պորտուգալիա:

Առաջին ընդլայնումը.

1952թ. ՆԱՏՕ–ին անդամակցեցին Հունաստանը և Թուրքիան: **1974–1980թթ. Հունաստանը չէր մասնակցում Հյուսիսատլանտյան Համաձայնագրի**

կազմակերպության ռազմական կառույցին՝ կազմակերպության մյուս անդամ երկրի՝ Թուրքիայի հետ հարաբերությունների սրման պատճառով:

Երկրորդ ընդլայնումը

1955թ. Հյուսիսատլանտյան Համաձայնագրի կազմակերպությանը անդամակցեց Արևմտյան Գերմանիան (Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը): 1990թ. ՆԱՏՕ–ին անդամակցեց միացյալ Գերմանիան:

Երրորդ ընդլայնումը.

1982թ.՝ Իսպանիայի անդամակցումը ՆԱՏՕ–ին: 2001թ. Իսպանիայի Սոցիալիստական Աշխատավորական կուսակցության իշխանության գալուց հետո Իսպանիան դուրս եկավ ՆԱՏՕ–ի ռազմական կառույցներից, մնալով միայն Հյուսիսատլանտյան Համաձայնագրի անդամ:

Չորրորդ ընդլայնումը.

1999թ. ՆԱՏՕ–ի անդամ դարձան Հունգարիան, Լեհաստանը և Չեխիայի հանրապետությունը: Սա հետսառըպատերազմյան առաջին ընդլայնումն էր:

Հինգերորդ ընդլայնումը.

2004թ. Հյուսիսատլանտյան Համաձայնագրի կազմակերպությանը անդամակցեցին Բուլղարիան, Լատվիան, Լիտվան, Ռումինիան, Սլովակիան, Սլովենիան, Էստոնիան:

Վեցերորդ ընդլայնումը.

2009թ. Հյուսիսատլանտյան Համաձայնագրի կազմակերպությանը անդամակցեցին Ալբանիան և Խորվաթիան:

§5. ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ՈՒ «ՉԵՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Ազգերի ինքնորոշման գաղափարի ծագումն ու զարգացումը

Ազգերի ինքնորոշման գաղափարն իր ակունքներով գնում է դեպի լուսավորականության դարաշրջան: Այս գաղափարի կրողներն են եղել այնպիսի մեծ մտածողներ, ինչպիսիք են Լոկկը, Գրոցիուսը, Ռուսոն: Սակայն նրանք ելնում էին մարդու բնական իրավունքներից՝ գտնելով, որ իրավունքներն ու ազատությունները բնորոշ են միայն անհատներին, որոնք որոշակի ազգային պատկանելություն ունեն: Այս հիմքերի վրա ծագեց ազգերի ինքնորոշման գաղափարը: Այդ նույն իրավունքից էին օգտվում ԱՄՆ–ի հիմնադիրները, որ պայքարելով հասան Անգլիայից հյուսիսամերիկյան գաղութների անկախացմանը:

«Ազգերի ինքնորոշում» հասկացությունն առաջին անգամ հնչեց 1878թ. Բեռլինի կոնգրեսում: Մոտավորապես այդ նույն ժամանակ էլ շրջանառության մեջ մտավ «ազգերի ինքնորոշման իրավունք» հասկացությունը: Գաղափարը շուտով իր հաստատուն տեղը գրավեց բազմաթիվ ազատական ու սոցիալիստական շարժումների ծրագրային դրույթներում: Իսկ արդեն 1896թ. «ազգերի ինքնորոշման իրավունքը» ճանաչվեց II ինտերնացիոնալի լոնդոնյան կոնգրեսի կողմից: Սակայն հատկապես XX դարն է հանդիսանում իբրև «ինքնորոշման դարաշրջան»:

Առաջին աշխարհամարտի շրջանում պատերազմող երկրներն իրենց պարտքն էին համարում հակառակորդի տարածքում ապրող «ազգերի ինքնորոշման» կարգախոսի հռչակումը: Հատկապես հաճախ էր բարձրացվում լեհական հարցը: Դեռ 1914թ. Ավստրո–Հունգարիայի ներկայացուցիչները լեհ ժողովրդին առաջարկում էին ինքնիշխանություն, սակայն սեփական կայսրության տարածքում: Այդ նույն հարցին էր անդրադառնում նաև ռուսական բանակի գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայը՝ առաջարկելով լեհական ինքնորոշում Ռուսաստանի սահմաններում: Սակայն Անտանտի և ԱՄՆ–ի կողմից է, որ ազգերի ինքնորոշման սկզբունքն առաջին անգամ առաջ քաշվեց իբրև հետպատերազմյան կարգավորման հնարավոր նորմ: Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի հանձնարարությամբ արտաքին գործոց նախարարության փորձագետները հետպատերազմյան կարգավորման առաջարկներ նախապատրաստեցին: Դրանք նախատեսում էին հիշյալ սկզբունքի կիրառումը, սակայն միայն **գերմանական գա**ղութների նկատմամբ: Բացի այդ, 1918թ. սկզբներից դաշնակիցներն Ավստրո–Հունգարական կայսրությունը մասնատելու և նրա տարածքում Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ–ի և այլ երկրների ազդեցության գոտում գտնվող երկրների ստեղծման ուղղությամբ քայլեր ձեռնարկեցին: Սակայն ազգերի ինքնորոշման գաղափարի հետևողական դրոշակակիրը ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնն էր (1913–1921 թթ.): Առաջին աշխարհամարտի վերջում և հետագա հաշտության բանակցությունների ընթացքում նա հանդես եկավ որպես ազգային ինքնորոշման սկզբունքի կողմնակից: Սակայն նրա մոտեցումը անփոփոխ չէր. Վիլսոնն անընդհատ լրացնում ու զարգացնում էր այն՝ ելնելով քաղաքական իրավիճակի փոփոխությունից: 1916թ. մայիսին նա արտահայտվում էր միայն հօգուտ ժողովուրդների այնպիսի կառավարություն ընտրելու իրավունքի, որի իշխանության ներքո իրենք ավելի ապահով կզգային: Այդ ժամանակ Վիլսոնը դեռևս առաջ էր քաշում «ներքին ինքնորոշման»՝ տվյալ երկրի սահմաններում ինքնորոշվելու գաղափարը: Ավելի ուշ նա ձևակերպեց «արտաքին ինքնորոշման» սկզբունքը: Համաձայն դրա՝ ցանկացած ժողովուրդ կարող էր ընտրել ինքնիշխանության այն ձևը, որը ցանկանում էր՝ ընդհուպ մինչև անկախ պետականության կազմավորումը: Վերջապես եվրոպական մայրցամաքում հակասությունների սրման

պայմաններում Վիլսոնը եկավ այն մտքին, որ ինքնորոշումը պետք է «կապել» ազգային սկզբունքի հետ: Սակայն դրա հետ մեկտեղ նա առաջ քաշեց պետության տարածքային ամբողջականության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը: Նա նշում էր, որ ազգերի ինքնորոշման սկզբունքն իրագործելիս պետք է հաշվի առնել նաև այն պետության շահերը, որի կազմում այն գտնվում է:

1918թ. հունվարին Վիլսոնը հանդես եկավ հետպատերազմյան կարգավորման իր ծրագրով, որը հայտնի դարձավ որպես «Վիլսոնի 14 կետեր»: Այստեղ նա նշում էր, որ ինքնորոշման իրավունք ունեցող ժողովուրդն է հանդիսանում իշխանության հիմնական սուբյեկտը: *Օսմանյան կայսրության ժողովուրդներին ինքնավարություն տրամադրելու և սևծովյան նեղուցները բոլոր երկրների նավերի համար բացելու պահանջը ձևակերպված էր 12–րդ կետում:* Սակայն 11 և 13–րդ կետերով նախատեսվում էր սերբա–խորվաթա–սլովենական և լեհական պետությունների ստեղծումը, որոնք պետք է ելք ունենային դեպի ծով, իսկ 12–րդ կետով ինքնորոշման իրավունք էր վերապահվում Օսմանյան կայսրության ժողովուրդներին: Հետևաբար վերոհիշյալ պետություններին պետք է կցվեին օտար էթնիկական բնակչություն ունեցող տարածքներ: Այսինքն՝ հարգելով մեկի ինքնորոշման իրավունքը՝ անտեսվում էր մյուսներինը: Հետագայում Վիլսոնն ազգերի ինքնորոշման իրավունքի նկատմամբ ցուցաբերեց ընտրովի մոտեցում՝ առաջարկելով անջատման իրավունքը կիրառել բացառապես Քառյակ միության կազմում ընդգրկված կամ վերջիններիս վերահսկողության տակ գտնվող ժողովուրդների նկատմամբ:

Ազգերի ինքնորոշման գաղափարը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում և հատկապես պատերազմից հետո «ազգերի ինքնորոշման» գաղափարն արժանացավ առանձնահատուկ ուշադրության: ՄԱԿ–ի կանոնադրության համապատասխան կետի քննարկման ժամանակ նախատեսվում էր ներառել նաև **ժողովուրդների ինքնորոշման իրավունքի** մասին կետը: Սակայն մասնագետները գտան, որ «իրավունքի» ամրագրումը կարող է բերել արտաքին ուժերի միջամտության: Արդյունքում ՄԱԿ–ի կանոնադրության մեջ խոսվում էր **ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի,** այլ ոչ թե իրավունքի մասին:

Հետագայում ինքնորոշման իրավունքն իր արտացոլումը գտավ միջազգային մի շարք փաստաթղթերում: Մասնավորապես, 1952թ. դեկտեմբերի 16–ին ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 7–րդ նստաշրջանում ընդունվեց թիվ **637 բանաձևը («Ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքի» վերաբերյալ):** Բանաձևում ընդգծվում էր, որ ազգերի ինքնորոշման իրավունքը մարդու իրավունքներից լիարժեքորեն օգտվելու նախապայմանն է, և ՄԱԿ–ի անդամ յուրաքանչյուր երկիր պետք է հարգի և պաշտպանի այդ իրավունքը: **Այսպիսով՝ ինքնորոշման գաղափարը «սկզբունքից» բարձրացվում էր «իրավունքի» մակարդակի:**

Ազգերի ինքնորոշման իրավունքն ամրագրված է նաև ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 15–րդ նստաշրջանում (1960թ.) ընդունված թիվ 1514 բանաձևում: Այստեղ նշվում է. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, և այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակն ու իրագործում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»: Սակայն նույն բանաձևի 6–րդ հոդվածում խոսվում էր տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտության մասին: Այս հակասությունը փորձեցին կարգավորել 1970թ. ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի թիվ 2625 բանաձևով: Այստեղ հստակեց-

վում են ինքնորոշման հնարավոր տարբերակները՝ ա) ինքնիշխան և անկախ պետության ստեղծում, բ) ազատ միացում անկախ պետությանը կամ միավորում վերջինիս հետ, գ) ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի հաստատում, որ որոշվել է ժողովրդի կողմից: Նշվում էր, որ «արտաքին ինքնորոշման» (անջատում և անկախություն) իրավունք ունեն գաղութային և օտարերկրյա կախվածության մեջ գտնվող ժողովուրդները: Դրան զուգահեռ ընդունվում էր, որ անկախ պետության բնակչության որոշակի հատվածը նույնպես կարող է օգտվել «արտաքին ինքնորոշման» իրավունքից, եթե «ներքին ինքնորոշման» իրագործումն անհնար է, և այդ բնակչությունը չի կարող հավասարապես մասնակցել երկրի կառավարմանը:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքն ամրագրված է նաև 1966թ. ընդունված երկու կարևորագույն փաստաթղթերում՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային պակտում» և «Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային պակտում»:

«Ժողովուրդների իրավահավասարության և սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու իրավունքը» ձևակերպված է նաև **1975 թ. Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության** ընդունած **Հելսինկիի եզրափակիչ ակտի** 10 հիմնական սկզբունքներում: Դրանց մեջ են մտնում նաև տարածքների անխախտելիության (թիվ 3) և պետությունների տարածքային ամբողջականության (թիվ 4) սկզբունքները: Ընդ որում՝ հատուկ նշվում է, որ բոլոր 10 սկզբունքները առաջնահերթ նշանակություն ունեն, հավասարազոր են և պետք է կիրառվեն՝ մյուսները հաշվի առնելով: Հետևաբար թիվ 3 սկզբունքը առավելություն չունի թիվ 8–ի նկատմամբ: Սակայն ոչ մի հակասություն այս կետերում նույնպես չկա: Եթե խնդիրը վերաբերում է պետությունների միջև հարաբերություններին, ապա տարածքների անխախտելիության և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքներն ունեն առաջնահերթ նշանակություն: Իսկ ազգերի ինքնորոշման գաղափարն առաջնահերթ նշանակություն ունի, երբ հակամարտության կողմերից մեկը պետությունն է (օրինակ՝ Ադրբեջանը), իսկ մյուսը՝ ինքնորոշման իրավունքն իրագործող ժողովուրդը (օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը): Այդ է պատճառը, որ Ադրբեջանը անընդհատ նշում է, որ հակամարտությունը ոչ թե Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև է, այլ՝ Ադրբեջանի և Հայաստանի Հանրապետության:

Այսպիսով՝ ազգերի ինքնորոշման իրավունքն ու հիշյալ գաղափարը լայն տարածում են գտել ժամանակակից աշխարհում: Դրանք հռչակված են միջազգային իրավունքի մի շարք ծանրակշիռ աղբյուրներում՝ 1966թ. ընդունված մարդու իրավունքների միջազգային պակտերում, ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի մի շարք բանաձևերում, 1975թ. ընդունված Հելսինկիի եզրափակիչ ակտի միջպետական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների փաստաթղթերում: Այդ իրավունքին են դիմում էթնիկական հակամարտությունների և անկախության ձեռքբերմանն ուղղված շարժումների ընթացքում: Այսպիսով՝ ազգերի ինքնորոշման իրավունքը գնալով ավելի բարձր կարգավիճակ է ձեռք բերում: Սակայն երկակի ստանդարտներն այս սկզբունքի կիրառման ընթացքում նույնպես պահպանվում են, և որոշ ազգերի ու ժողովուրդների «թույլատրում են» օգտվել այդ իրավունքից, իսկ մյուսներին՝ ոչ:

«Չճանաչված» կամ «ինքնահռչակ» պետություններ

Չճանաչված պետություններն այն պետություններն են, որոնք հռչակել են իրենց անկախությունը, սակայն չեն ճանաչվել միջազգային հանրության կողմից և ՄԱԿ–ի ու միջազգային այլ հեղինակավոր կազմակերպությունների անդամ չեն: Սրանք այն

երկրներն են, որոնք անջատվել են մեկ այլ երկրից կամ օգտվել են ազգերի ինքնորոշման իրենց իրավունքից: «Չճանաչված երկրները» բաժանվում են երկու խմբի՝

ա) Չճանաչված կամ մասնակիորեն ճանաչված երկրներ, որոնք ունեն փաստացի վերահսկողություն իրենց սեփական տարածքի նկատմամբ,

բ) Մասնակիորեն ճանաչված երկրներ, որ գտնվում են օտարերկրյա վերահսկողության ներքո:

Առաջին խմբի երկրներից են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, Աբխազիան, Հարավային Օսիան, Մերձդնեստրյան հանրապետությունը, Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը, Թայվանը և այլն: Սրանք հիմնականում լիարժեք գործող պետություններ են, որոնք միայն միջազգային ճանաչման կարիքն են զգում:

Երկրորդ խմբի երկրների շարքին են դասվում Պաղեստինի ինքնավարությունն ու Արևմտյան Սահարան:

Իր անկախությունը հռչակած Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հետխորհրդային չճանաչված երկրների շարքում դիտվում է իբրև ամենակենսունակ պետությունը: ԼՂՀ–ն ունի հայկական միատարր բնակչություն, տարածաշրջանում ամենամարտունակ բանակը և մայր երկրի՝ Հայաստանի Հանրապետության հովանավորությունն ու աջակցությունը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն իր անկախությունը հռչակել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան:

Աբխազիայի հանրապետությունը նույնպես որակվում է իբրև «ինքնահռչակ» և լայն միջազգային ճանաչում չունեցող երկիր: ԽՍՀՄ–ի օրոք՝ 1931թ., Աբխազիան ընդգրկվեց Վրաստանի կազմում: Աբխազիան Վրաստանից իր անկախությունը հռչակեց 1990թ., որի տրամաբանական շարունակությունը եղավ վրաց–աբխազական պատերազմը: 1994թ. կնքված հրադադարից ընդհուպ մինչև 2008թ. Աբխազիան դուրս էր վրացական կառավարության վերահսկողությունից: 2008թ. Վրաստանը փորձեց վերականգնել իր վերահսկողությունը Աբխազիայի նկատմամբ: Վրաց–ռուսական պատերազմի արդյունքում Ռուսաստանը ոչ միայն ճանաչեց Աբխազիայի անկախությունը, այլև դիվանագիտական հարաբերություններ հաստատեց վերջինիս հետ: Սակայն մյուս պետությունների կողմից Աբխազիան շարունակում է դիտվել իբրև «չճանաչված երկիր»՝ Վրաստանի անբաժանելի մասը:

Հարավային Օսիան նույնպես դասվում է «ինքնահռչակ», սակայն լիարժեք գործող անկախ պետությունների շարքին: Վրաստանի կազմում Հարավային Օսիան ընդգրկվեց 1918–1920թթ. ռուսական քաղաքացիական պատերազմի արդյունքում: Իր անկախությունը Հարավային Օսիան հռչակեց 1991թ., որին հետևեցին վրաց–օսական ընդհարումները: 2008թ. վրաց–ռուսական պատերազմի արդյունքում Ռուսաստանյան դաշնությունը ճանաչեց Հարավային Օսիայի անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց վերջինիս հետ: Սակայն Աբխազիայի պես մնացած պետությունները շարունակում են այն դիտել որպես Վրաստանի մի մասը:

Իրավական տեսանկյունից Մոլդովայի մասը կազմող և Դնեստր գետից արևելք գտնվող Մերձդնեստրյան հանրապետությունը նույնպես հռչակել է իր անկախությունը: Այն փաստացի գործող անկախ պետություն է, որը, սակայն, չի ճանաչվել որևէ այլ պետության կողմից: Ի տարբերություն Մոլդովայի, որն ունի ռումինական մեծամասնություն՝ Մերձդնեստրյան հանրապետությունում մեծամասնություն է կազմում սլավոնական բնակչությունը:

Հետխորհրդային չճանաչված պետությունների դեպքում անհրաժեշտ է ընդգծել հետևյալ իրողությունները.

Նախ ԽՍՀՄ–ի փլուզման գործընթացը դեռևս չի ավարտվել նրա 15 հանրապետությունների անկախության ճանաչումով: Նախկին միութենական որոշ հանրապե-

տությունների կազմում արհեստականորեն հայտնվել էին ինքնավար կազմավորումներ: Նրանք Խորհրդային Միության գոյության տարիներին այդպես էլ չգնացին տվյալ հանրապետության հետ լիարժեք «ինտեգրման» կամ ձուլման ճանապարհով, այլ պահպանեցին իրենց ազգային ինքնությունը: Հռչակելով իրենց անկախությունը՝ դրանք դարձան փաստացի անկախ, սակայն իրավական տեսանկյունից «չճանաչված պետություններ»:

Աշխարհում կան նաև մի շարք այլ առավել հայտնի չճանաչված պետություններ:

Չինաստանի հանրապետությունը (Թայվանը) «չճանաչված պետությունների» շարքում ամենաերկարատև պատմությունն ունի: Չինաստանի քաղաքացիական պատերազմում 1949թ. կրած պարտության արդյունքում հեռանալով մայրցամաքային Չինաստանից՝ Չան Կայշին ստեղծեց Չինաստանի հանրապետությունը, որի վերահսկողության ներքո են գտնվում Թայվանն ու մի շարք այլ կղզիներ: Թայվանը նախկինում ուներ միջազգային ճանաչում և նույնիսկ ներկայացնում էր Չինաստանը ՄԱԿ–ում: Սակայն 1970–ական թվականներին Թայվանը զրկվեց դրանից՝ հօգուտ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության: Թայվանը պաշտոնապես ճանաչվել է միայն 25 երկրների կողմից, սակայն փաստացի ունի հարաբերություններ աշխարհի երկրների մեծ մասի հետ: Չինաստանի Ժողովրդական հանրապետությունը շարունակում է Թայվանը համարել իր անբաժանելի մասը՝ առաջարկելով վերջինիս միավորվել ՉԺՀ–ին՝ «Մեկ պետություն՝ երկու տարբեր համակարգ» սկզբունքով:

Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության ստեղծման համար հիմք հանդիսացավ 1974թ. թուրքական զորքերի ներխուժումը Կիպրոս, որից հետո հռչակվեց Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության անկախությունը: Այն գործում է, սակայն ճանաչվել է միայն Թուրքիայի կողմից:

Նախկինում չճանաչված երկրների շարքում հատկապես մեծ նշանակություն ձեռք բերեց գերազանցապես ալբանական բնակչություն ունեցող Կոսովոյի երկրամասը: Կոսովոն թեև ճանաչված չէ իբրև անկախ պետական միավոր, այդուհանդերձ 1999–2008թթ. գործում էր ՄԱԿ–ի վարչակազմի ներքո՝ Սերբիա և Չեռնոգորիայից անկախ: Սակայն իրավական տեսանկյունից այն շարունակում էր սերբական ինքնավար շրջան հանդիսանալ: 2008թ. ԱՄՆ–ի և ՆԱՏՕ–ի անդամ որոշ երկրների նախաձեռնությամբ ճանաչվեց Կոսովոյի անկախությունը: Այս նախադեպն օգտագործելով է, որ Ռուսաստանի Դաշնությունը ռուս–վրացական պատերազմից հետո ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը: Չճանաչված պետությունների իրողությունը վերստին առաջադրեց երկակի ստանդարտների կիրառման պրակտիկան, երբ որոշ ժողովուրդների թույլատրում են իրագործել ինքնորոշման իրավունքը, ճանաչում նրանց անկախությունը, իսկ մյուսներին՝ մերժում: Սակայն ինքնին կարևոր է այն, որ ազգերի ինքնորոշման իրավունքը ոչ միայն լայն տարածում է գտել ժամանակակից աշխարհում և միջազգային հարաբերություններում, այլև գնալով ավելի մեծ թվով «չճանաչված պետություններ» են օգտվում այդ իրավունքից՝ ճանաչվելով առնվազն մի շարք մեծ տերությունների կողմից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձևավորման և զարգացման ի՞նչ ճանապարհ է անցել «ազգերի ինքնորոշման» գաղափարը: Բացատրե՛ք Վ. Վիլսոնի «ներքին ինքնորոշման» և «արտաքին ինքնորոշման» գաղափարները: Ե՞րբ Վ. Վիլսոնը հանդես եկավ հետպատերազմյան կարգավորման իր ծրագրով և ի՞նչ անունով է այն հայտնի: Ի՞նչ հակասություններ կային այդ ծրագրում:

2. Երկրորդ աշխարհամարտից հետո ե՞րբ և ո՞ր փաստաթղթերում արտացոլվեց ազգերի ինքնորոշման իրավունքը: Հակիրճ ներկայացրե՛ք այդ փաստաթղթերը: Ե՞րբ են դիմում այս իրավունքին: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է անհրաժեշտ այս իրավունքը:

3. Որո՞նք են «չճանաչված» կամ «ինքնահռչակ» պետությունները: Քանի՞ խմբի են բաժանվում այդ երկրները: Թվարկե՛ք օրինակներ: Հակիրճ ներկայացրե՛ք այդ «չճանաչված» երկրների պատմությունը:

4. Ի՞նչ առանձնահատկություններ ունեն հետխորհրդային «չճանաչված» երկրները: Ձեր կարծիքով՝ ԼՂՀ–ի ճանաչման հարցը ինչպե՞ս կլուծվի: Ո՞ր երկրի նախադեպն է նպատակահարմար՝ Կոսովոյի՞, թե՞ Աբխազիայի կամ Հարավային Օսիայի: Հիմնավորե՛ք ձեր պատասխանները:

5. Աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք «չճանաչված» երկրները և հակամարտող կողմերը:

§6. ԱՇԽԱՐՀԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Միասնական միջազգային օրենսդրական դաշտի ձևավորման գործընթացը

20–րդ դարի երկրորդ կեսին բնորոշ էին աշխարհի առաջատար մի շարք երկրների սահմանադրական և պետական համակարգի փոփոխությունները: Սահմանադրական իրավունքի զարգացման ընդհանուր ուղղությունների վրա էական ազդեցություն ունեցան ժողովրդավարացման գործընթացները: 1946–1947 թթ. նոր սահմանադրություններ ընդունվեցին Իտալիայում, Ֆրանսիայում և Ճապոնիայում, իսկ 1949թ.՝ ԳՖՀ–ում: ***Կարմիր մեխակների հեղափոխությունից*** հետո նոր սահմանադրությունն ընդունվեց նաև Պորտուգալիայում: Իսպանիայում դիկտատոր Ֆրանկոյի մահից երեք տարի անց՝ 1978թ. նույնպես ընդունվեց նոր սահմանադրություն: Նմանապես Հունաստանում ռազմական խունտայի տապալումից հետո հաստատվեց ժողովրդավարական վարչակարգ և ընդունվեց նոր սահմանադրություն:

Հետպատերազմական սահմանադրություններում տեղ գտան ժողովրդավարական պետությունների համար ավանդական դարձած քաղաքական ազատություններին վերաբերող դրույթները (խոսքի, միավորումների, կրոնի ազատության, կանանց իրավահավասարության, անձի իրավունքների մասին և այլն): Սրանցից բացի, ամրագրվեցին նաև նոր նորմեր ու իրավունքներ՝ աշխատանքի, հանգստի, գործադուլների, սոցիալական ապահովության և կրթության իրավունքը:

Նոր դրույթներ ձևակերպվեցին նաև պատերազմին ու խաղաղությանը առնչվող հարցերի վերաբերյալ: Ֆրանսիայի, ԳՖՀ–ի, Իտալիայի, Ճապոնիայի և այլ երկրների սահմանադրություններում դատապարտվում է պատերազմն՝ իբրև միջազգային վեճերի կարգավորման միջոց: Իր սահմանադրությունում ձևակերպված դրույթի համաձայն՝ Ճապոնիան ընդհանրապես հրաժարվել է պատերազմից՝ իբրև ազգային քաղաքականության միջոց:

Արևմտյան Եվրոպայում տեղ գտած միասնացման գործընթացների հետ կապված՝ հետպատերազմյան տարիներին առաջ եկան պետությունների փոխներգործության նոր ձևեր, և ձևավորվեցին վերազգային հաստատություններ՝ ի դեմս խորհրդատվական և իշխանական ասամբլեաների ու խորհրդարանների: Այդ շարքում ամենավաղ ստեղծված մարմիններից է **Եվրախորհուրդը**, որ հիմնվեց **1949 թ.**: Այն միջկառավարական խորհրդատվական–խորհրդակցական մարմին է, որի անդամ են 47 եվրոպական երկրներ: ***Նախարարների կոմիտեն*** Եվրոպայի խորհրդի որոշում կայացնող գլխավոր մարմինն է: Յուրաքանչյուր անդամ պետություն Կոմիտեում ներկայացված է արտաքին գործերի նախարարով կամ իր կառավարության մշտական ներկայացուցչով (նախարարների պատվիրակներով): Եվրոպական խորհրդի կազմում է գործում նաև ***Խորհրդարանական վեհաժողովը*** (ասամբլեան), որում ներկայացված են անդամ երկրների ազգային խորհրդարանների հիմնական քաղաքական հոսանքները ներկայացնող պատգամավորներն ու մարդու իրավունքների հանձնաժողովը: Եվրոպական խորհրդի նստավայրը գտնվում է Ստրասբուրգ քաղաքում (Ֆրանսիա): Եվրոպական դրոշը Եվրոպայի խորհրդի կողմից ընդունվել է իբրև խորհրդանիշ 1955թ.: Նրա վրա պատկերված են շրջան կազմող 12 ոսկեգույն աստղեր՝ կապույտ ֆոնի վրա: Աստղերի թիվն անփոփոխ է՝ տասներկու թիվը համարվում է կատարելության խորհրդանիշ: Նույն դրոշն ընդունվել է Եվրոպական համայնքի (այժմ՝ Եվրոպական միության) կողմից 1986թ.: Որպես Եվրոպական օրհներգ 1972թ. ընդունվել է Բեթհովենի 9–րդ սիմֆոնիայի «Ջոն ուրախության» նախերգանքը՝ Հերբերտ ֆոն Կարայանի մշակմամբ: Թեև այս խորհրդանիշներն

ընդհանուր են՝ Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը գործում են որպես տարբեր կազմակերպություններ: Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական խորհրդի անդամ է (2001թ. հունվարի 25), սակայն Եվրոպական միության անդամ չի հանդիսանում: Վերջինիս հետ մեր երկիրն ունի «Գործընկերության և համագործակցության վերաբերյալ պայմանագիր» (կնքվել է 1996թ., ուժի մեջ մտել 1999–ին):

2004 թ. սկսած ***«Եվրոպական հարևության քաղաքականության»*** մասը կազմելով, մեր երկիրը 2005թ. ԵՄ–ի հետ հաստատել է համապատասխան «գործողությունների ծրագիր»: «Եվրոպական հարևության քաղաքականությունը» Եվրոպական Միության արտաքին քաղաքականության լծակներից մեկն է, որի միջոցով այն հարաբերություններ է հաստատում ԵՄ–ից դեպի արևելք և հարավ ընկած երկրների հետ: Այս՝ գերազանցապես զարգացող երկրները ներառում են ինչպես ապագայում Եվրոպական Միությանն անդամակցելու նպատակ հետապնդող երկրների, այնպես էլ նրանց, որոնք ձգտում են ինտեգրվել Եվրոպական Միության տնտեսական համակարգում: «Եվրոպական հարևության քաղաքականության» շրջանակներում հանդես եկող երկրներին ԵՄ–ն ցուցաբերում է տնտեսական և ֆինանսական աջակցություն, պայմանով, որ հիշյալ երկրները հետևեն եվրոպական չափանիշներին ու հետևողականորեն իրագործեն քաղաքական, տնտեսական, իրավական և կառուցվածքային բարեփոխումներ, կատարելագործելով իրենց կառավարման համակարգը:

Եվրոպական պետություններում նորմերի ստեղծման գործընթացների վրա էական ազդեցություն էին թողնում նաև նոր տիպի միջպետական կազմակերպությունների խորհրդատվական, ոչ պայմանագրային դրույթները: Օրինակ, 1975թ. **Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցությունն (ԵԱՀԽ)** ընդունեց իր եզրափակիչ ակտը, որ սահմանում էր նորմերի և էթիկական սկզբունքների մի լայն շրջանակ, որ պետք է գործողության ուղեցույց լիներ պետությունների միջև փոխհարաբերությունների համար: Այդ փաստաթուղթը ստորագրեցին 33 եվրոպական պետություններ, ինչպես նաև ԱՄՆ–ը և Կանադան: Խորհրդակցությունը դարձավ մշտական մարմին և **1991թ.** վերանվանվեց **Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ):**

Հետպատերազմյան տասնամյակների ընթացքում պետության իրավունքի զարգացման գործում կարևորագույն նշանակություն ձեռք բերեց միջազգային իրավունքը: Այդ շարքում հատկապես կարևորվում են մարդու իրավունքների վերաբերյալ ընդունված միջազգային իրավական ակտերը: Եթե պետությունը ստորագրում է մի այնպիսի փաստաթուղթ, ինչպիսին է, օրինակ, ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.)**, ապա այն վերազգային իրավական փաստաթղթի ուժ է ստանում:

Այսպիսով՝ կուսակցական–պետական կառույցի և պետական–սահմանադրական համակարգի զարգացումը, որ տեղ գտավ արևմտաեվրոպական երկրներում, ԱՄՆ–ում, Կանադայում և այլ երկրներում հետպատերազմյան տասնամյակների ընթացքում, արտացոլում է հասարակական կյանքի ժողովրդավարացման ու առողջացման ընդհանուր միտումը:

Աշխարհի ժողովրդավարացման գործընթացը:
Քաղաքական զարգացման առանձնահատկությունները

Ինչպես և նախկինում, ժամանակակից աշխարհում որոշիչ դեր ունեն հասարակական զարգացման երկու հիմնական՝ լիբերալ–ժողովրդավարական և ամբողջատի-

րական ու ավտորիտար մոդելները: Սակայն 20–րդ դարի երկրորդ կեսին պատմական զարգացման ուղղվածությունը փոխվեց: Եթե 1920–1930–ական թվականներին գերիշխում էին ավտորիտար և ամբողջատիրական միտումները, և միանգամայն իրական էր ժողովրդավարության գոյությանն ուղղված սպառնալիքը, ապա 1950–1990–ական թթ. բնորոշ էր ճիշտ հակադիր ուղղվածության շարժումը: Բնական–պատմական զարգացման ուղղվածությունն ու միտումը արտացոլում է աշխարհում ժողովրդավարացմանն ուղղված շարժման գերիշխումը: Լիբերալ–ժողովրդավարական վարչակարգերի թիվը, հետպատերազմյան տասնամյակներից սկսած, հետևողականորեն աճում է, իսկ ավտորիտար ու ամբողջատիրական վարչակարգերինը՝ նվազում: Ներկայիս հետարդյունաբերական աշխարհում ամբողջատիրական քաղաքական շարժումն ու վարչակարգը կարող են հաստատվել միայն այն երկրներում, որոնք կանգ են առել մինչարդյունաբերական կամ արդյունաբերական զարգացման փուլում:

Երկրորդ աշխարհամարտից հետո Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում, Չինաստանում, Հարավարևելյան Ասիայի ու Աֆրիկայի մի շարք երկրներում ավտորիտար մեթոդների ժամանակավոր հաստատման ու պետության դերի մեծացման անհրաժեշտություն զգացվեց: Սրանք աշխարհի այն տարածաշրջաններն էին, որտեղ հետամնաց հասարակությունը արդիականացման էր նախապատրաստվում և իրագործվում էին բարեփոխումներ: Կառավարման ավտորիտար մեթոդների հաստատմանն էր նպաստում նաև ավանդական հասարակության ժառանգությունը:

«Սոցիալական բարեկեցության» քաղաքականության շնորհիվ Արևմուտքի երկրներն իրենց երաշխավորեցին ամբողջատիրության կրկնության սպառնալիքից: Արևմտաեվրոպական մի շարք երկրների համար 1980–ական թվականներին բնորոշ դարձած պահպանողական քաղաքական ուժերի ակտիվացմանը 1990–ական թվականներին փոխարինելու եկավ դեպի ձախ արված տեղաշարժը:

Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Կանադայում, ԱՄՆ–ում և այլ երկրներում 1990–ական թվականների երկրորդ կեսի ընթացքում տեղ գտան խորհրդարանական և նախագահական ընտրություններ, որտեղ հաղթանակ էին տանում լիբերալ կամ ձախ կուսակցությունները: Պահպանողականները լուրջ պարտություններ էին կրում: Դա պայմանավորված էր նաև տնտեսության վերակառուցման և սոցիալական քաղաքականության վերանայման ուղղությամբ պահպանողական կուսակցությունների կողմից մի շարք արդյունաբերական երկրներում իրագործված ոչ ժողովրդական միջոցառումներով: 1980–ական թթ. իրագործված հիշյալ միջոցառումները թեև բխում էին տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտությունից, այնուամենայնիվ էականորեն վատացրին քաղաքացիների կենսամակարդակն ու նյութական ապահովվածության պայմանները՝ լուրջ դժգոհություն առաջ բերելով բնակչության շրջանում:

Ժամանակակից աշխարհի բազմազանության հետ մեկտեղ XXI դարում վերստեղծվում է նրա քաղաքակրթական միասնականությունը՝ իր դրսևորումների բազմազանությամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. XX դարի երկրորդ կեսին սահմանադրական և պետական կարգի ի՞նչ փոփոխություններ և ո՞ր երկրներում տեղի ունեցան: Ի՞նչ դրույթներ տեղ գտան սահմանադրություններում:

2. Ե՞րբ է ստեղծվել Եվրախորհուրդը, քանի՞ անդամ ունի, ի՞նչ մարմին է գործում նրա կազմում: ԵԱՀԽ–ն ե՞րբ ընդունեց Եզրափակիչ ակտը. ի՞նչ էր այն սահմանում և

ո՞ր երկրները ստորագրեցին այդ փաստաթուղթը: Ո՞ր թվականից է գործում ԵԱՀԿ–ն: Մարդու իրավունքների վերաբերյալ ե՞րբ և ի՞նչ կարևոր փաստաթուղթ է ընդունել ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեան:

3. Ժամանակակից աշխարհում հասարակական զարգացման ո՞ր մոդելներն են գերիշխում: Ե՞րբ և ինչպե՞ս փոխվեց պատմական զարգացման ուղղվածությունը:

4. Երկրորդ աշխարհամարտից հետո որտե՞ղ հաստատվեցին կառավարման ավտորիտար մեթոդներ. ինչո՞վ էր դա պայմանավորված: 1990–ական թվականներին ո՞ր երկրների խորհրդարանական կամ նախագահական ընտրություններում հաղթեցին ազատական կամ ձախ կուսակցություններն ու ձախ ուժերի միավորումները: Ինչո՞ւ պահպանողականները լուրջ պարտություններ կրեցին:

ԳԼՈՒԽ 14. ԱՐԴԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

§1. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գլոբալ հիմնախնդիրները

Մեր օրերում աշխարհում գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնք ընդհանուր են ողջ մարդկության համար և վերաբերում են մարդու կյանքի բնականոն ընթացքի ապահովմանը: Այդ խնդիրներից կարևորներն են մեր մոլորակի բնակչության ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխությունը, շրջակա միջավայրի աղտոտումը, միջազգային ահաբեկչության ու թմրամոլության լայն տարածումը: Վերջին շրջանում նրանց ավելացավ նաև համաշխարհային ֆինանսա–տնտեսական խորը ճգնաժամը: Այդպիսի խնդիրներն անվանվում են **գլոբալ հիմնախնդիրներ**: Նրանց լուծումը հնարավոր է միայն բոլոր երկրների (ինչպես զարգացած և հարուստ, այնպես էլ թույլ զարգացած և աղքատ) համատեղ և նպատակասլաց ջանքերի շնորհիվ:

Ժողովրդագրական իրավիճակի փոփոխությունները

Վերջին հարյուրամյակի ընթացքում տեղի ունեցան համաշխարհային ժողովրդագրական իրավիճակի զգալի փոփոխություններ: Աշխարհի երկրներում միջին հաշվով շուրջ 10 անգամ ավելացավ քաղաքային բնակչությունը, ամբողջ աշխարհում 2 անգամ ավելացավ մարդկային կյանքի միջին տևողությունը՝ զարգացած երկրներում անցնելով 75 տարուց: Ծնելիության ոլորտում առաջացան և գնալով խորացան երկու միտումներ. զարգացած երկրներում այն արձանագրում է հարաճուն անկում, իսկ զարգացող երկրներում ընդհակառակը՝ հարաճուն աճ: Այդ հանգեցնում է աշխարհի երկրների բնակչության կազմում զգալի փոփոխությունների:

Զարգացած երկրներում բնակչությունը ընդհանուր առմամբ «ծերանում է», այսինքն՝ նրա կազմում ավելանում է մեծահասակների թվաքանակը, իսկ թույլ զարգացած երկրներում կտրուկ ավելանում է երիտասարդների թիվը: Քանի որ աշխարհի ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը բնակվում է Աֆրիկայի, Ասիայի, Հարավային ու Կենտրոնական Ամերիկայի թույլ զարգացած երկրներում, ապա տեղի է ունենում մեր մոլորակի ընդհանուր բնակչության՝ գնալով ավելի արագացող աճ: Այն հասնում է միջինը օրական 250 հազարի:

Այդ փոփոխությունները պայմանավորված են ինչպես մարդկության միջին կենսամակարդակի աճով, այնպես էլ զարգացած ու հարուստ և զարգացող ու համեմատաբար ավելի քիչ ապահովված ու շատ աղքատ երկրների սոցիալ–տնտեսական ցուցանիշների միջև գոյություն ունեցող տարբերության՝ գնալով ուժեղացող աճով:

Վերը նշված ժողովրդագրական փոփոխությունները հանգեցնում են միգրացիոն հոսքերի ուղղվածության փոփոխմանը: Եթե պատմության նախորդ շրջաններում նրանք ուղղվում էին զարգացած երկրներից դեպի գլխավորապես ամայի կամ թույլ բնակեցված տարածաշրջանները, ապա մեր օրերում տեղի է ունենում հակառակ ուղղվածության գործընթաց:

Աֆրիկայի, Ասիայի, Հարավային ու Կենտրոնական Ամերիկայի թույլ զարգացած երկրների աշխատունակ բնակչության մեծ զանգվածներ, օգտագործելով և՛ օրինական, և՛ ոչ օրինական ճանապարհները լքում են իրենց հայրենիքը և բնակություն հաստատում Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում: Մոտավոր հաշվարկները ցույց են տալիս, որ, օրինակ, ներկայումս միայն Արևմտյան Եվրոպայի երկրներում բնակվում են շուրջ 25 միլիոն օրինավոր ներգաղթողներ:

Ներգաղթողների մի մասին հաջողվում է ինտեգրվել արևմտյան քաղաքակրթական համակարգի մեջ, սակայն մի զգալի հատվածին այդ չի հաջողվում: Այսպիսով՝ զարգացած երկրներում առաջանում է սոցիալական լարվածության մի նոր աղբյուր, որը, ինչպես ցույց տվեցին 2006 թվականի աշնանային բախումները Ֆրանսիայում, գնալով ստանում է ավելի վտանգավոր բնույթ:

Եվրամիությունը և ԱՄՆ–ն վերջին տարիներին ձեռնարկում են միջոցներ՝ ներգաղթողների հոսքերը կառավարելի դարձնելու նպատակով:

Շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրը

Հասնելով 21–րդ դարի սկզբներին մեծ հաջողությունների՝ մարդկային քաղաքակրթությունը միաժամանակ բախվեց մեկ այլ լուրջ խնդրի հետ. շատ արագ և անվերահսկելի արդյունաբերական զարգացման հետևանքով շրջակա միջավայրի աղտոտմանը, ոչնչացմանը և անվերադարձ կորուստին: Այն գնալով ավելի լայն բնույթ է ընդունում և հանգեցնում է մոլորակի կլիմայի փոփոխմանը՝ սպառնալով այդպիսով մարդու, որպես կենդանի էակի, բուն գոյությանը:

Այսպես, օրինակ՝ վերջին տարիներին ի հայտ եկած «ջերմոցային էֆեկտի» պատճառով արձանագրվում է Երկիր մոլորակի միջին ջերմաստիճանի բարձրացում: Մարդկության համար վտանգ են ներկայացնում բնապահպանական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են անտառների անխնա ոչնչացումը, անապատացումը, ջրային և օդային միջավայրի անվերադարձ աղտոտումը, կենդանիների անկառավարելի սպանդը:

Վերևում նշված հիմնխնդրի հետ առնչվում են սննդի, խմելու ջրի, էներգակիրների (հիմնականում գազի և նավթի) արագորեն սպառվող պաշարների խնդիրները: Գիտնականները կանխատեսում են, որ եթե անհապաղ անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնվեն, ապա մի քանի տասնամյակ հետո անխուսափելի են պատերազմները նրանց վերջին մնացորդներին տիրանալու համար:

Վերջին տասնամյակներում մարդկությունը սկսում է գիտակցել այն մեծագույն վտանգը, որը իր հետ բերում է բնության և մարդու միջև գոյություն ունեցող հավասարակշռության խախտումը: Գնալով ավելի լայն թափ է ստանում բնապահպանական, մասնավորապես «կանաչների» շարժումը: «Կանաչների» անվանումը կապված է այն գույնի հետ, որը մարմնավորում է կենդանի բնությունը: Նրանց շարքերի մեջ վերջին տասնամյակներին ներգրավվեցին բնակչության ամենատարբեր խավերի ներկայացուցիչները, այն սկսեց իր առջև դնել նաև սոցիալական բնույթի խնդիրներ և վերածեց զուտ բնապահպանական շարժման շրջանակների՝ կերպարանափոխվելով տարբեր երկրներում գործող քաղաքական կուսակցությունների: «Կանաչների» կուսակցությունները որոշ երկրներում ձեռք բերեցին զգալի թվով համախոհներ և մտան կառավարող կուսակցությունների թվի մեջ, ինչպես, օրինակ, Գերմանիայում: Ներկայումս նրանք ներկայացված են նաև Եվրախորհրդարանում:

Բնապահպանական շարժման շրջանակներում է գործում վերջին տարիներին մեծ ակտիվություն ցուցաբերած միջազգային «Գրինփիս» ոչ կառավարական կազմակերպությունը: Նրա անդամները աշխարհով մեկ կազմակերպում են ցույցեր և այլ աղմկալի միջոցառումներ, որոնց նպատակն է սևեռել հասարակության և կառավարությունների ուշադրությունը բնապահպանական խնդիրների վրա:

Առանձին պետություններ՝ հիմնականում զարգացած, որոշ բնապահպանական բնույթի միջոցներ են ձեռք առնում: Ակտիվացրել են իրենց գործունեությունը այդ ուղղությամբ ՄԱԿ–ը, այլ միջազգային կառույցները: Սակայն այդ քայլերը բավարար չեն: Անհրաժեշտ է ոչ միայն արդեն տեղի ունեցած բնական աղետների հետևանքների

հաղթահարումը, այլ նաև պետք է հատուկ ուշադրություն դարձնել նրանց պատճառների վերացման վրա: Հաջողության կարելի է հասնել միայն համայն մարդկության՝ միջազգային կառույցների, պետությունների իշխանությունների և հասարակական ոչ կառավարական կազմակերպությունների ջանքերի համախմբման ու մեկտեղման միջոցով:

Պայքարը միջազգային ահաբեկչության ու թմրամոլության դեմ

2001 թվականի սեպտեմբերի 11–ի պատմության մեջ ամենաարյունալի ահաբեկչությունը ԱՄՆ–ի դեմ, ինչպես նաև հետագայում Լոնդոնում ու Մադրիդում տեղի ունեցած պայթյունները ակնհայտ դարձրին, որ նույնիսկ ամենազարգացած ու հզոր պետությունները չեն կարող ապահովել իրենց բնակչության անվտանգությունը միջազգային ահաբեկչությունից:

Առավել ակտիվություն են ցուցաբերում և վտանգավոր են այնպիսի ծայրահեղ մուսուլմանական ահաբեկչական կազմակերպություններ, ինչպիսիք են «Ալ Քայիդա» գաղտնի կազմակերպությունը և «Թալիբան» շարժումը: «Ալ Քայիդան» էր, որը կազմակերպեց վերևում նշված ահաբեկչական գործողությունները: Այն ունի իր բաժանմունքները աշխարհի շատ երկրներում, իսկ նրա հիմնադիրը և ղեկավարը՝ Բեն Լադենը, համարվում է աշխարհի ամենավտանգավոր ու փնտրվող ահաբեկիչը:

Իսլամական աշխարհում ահաբեկչական կազմակերպությունների ակտիվացումը արդյունք է հակաարևմտյան ու հակաամերիկյան տրամադրությունների ուժեղացման, քանի որ համաշխարհայնացումը նույնացվում է բռնի արևմտակայնացման հետ: Այդ երևույթը պարարտ հող է նախապատրաստում իսլամական ծայրահեղ խմբավորումների առաջացման համար, որոնք իրենց առաջ խնդիր են դնում բոլոր հնարավոր միջոցներով պայքարել Արևմուտքի դեմ: Այդ միջոցներից է, օրինակ, ահաբեկչությունը:

Ահաբեկչական գաղտնի կազմակերպություններ գործում են նաև Արևմուտքում, ինչպես նաև Ասիայի ու Հարավային Ամերիկայի մի շարք զարգացող երկրներում: Նրանց գոյությունը պայմանավորված է չլուծված ազգային–էթնիկական ու սոցիալական խնդիրների առկայությամբ: Այսպես, օրինակ՝ «ԷԹԱ» ընդհատակյա կազմակերպությունը տասնամյակներ շարունակ պայքարում է հանուն բասկերի ժողովրդի անկախության Իսպանիայից:

Պայքարը ահաբեկչության դեմ ենթադրում է լայնածավալ և բազմաբնույթ գործողությունների մի ողջ համակարգ, որը պետք է ներառի իր մեջ ինչպես միջպետական համաձայնագրերի վրա հիմնված համակարգված քաղաքականություն, այնպես էլ հասարակության անհանդուրժող մոտեցում ծայրահեղական կազմակերպությունների նկատմամբ: Առաջնային նշանակություն է ստանում պայքարը զենքի անօրինական առևտրի դեմ: Մեծապես կարևորվում է նաև ահաբեկչությունը ծնող սոցիալական բնույթի պատճառների վերացումը:

Գլոբալ լուրջ խնդիրների թվին է պատկանում թմրամոլությունը, որը տարածված է հիմնականում երիտասարդության շրջանում: Տարեցտարի թմրամոլությունը գնալով ստանում է ավելի լայնածավալ բնույթ, վերածվելով բառիս բուն իմաստով՝ աղետի: Այն արդեն խլել է միլիոնավոր մարդկային կյանք, տասնյակ միլիոններին դարձրել անաշխատունակ: Թմրամոլների թիվը բարձր է ինչպես զարգացած, այնպես էլ աղքատ երկրներում:

Պայքարը այդ աղետի դեմ կարող է հասնել հաջողության միայն այն դեպքում, եթե շարունակական է և արդյունք է աշխարհի բոլոր երկրների համատեղ գործողությունների: Կարևոր է ինչպես պայքարը թմրադեղերի մաքսանենգությամբ զբաղվող

ընդհատակյա կազմակերպությունների դեմ, այնպես էլ այնպիսի սոցիալական քաղաքականության կիրառումը, որը կնպաստեր երիտասարդության ավելի արագ ներգրավմանը հանրօգուտ աշխատանքի մեջ:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը

2008 թվականին սկիզբ առավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Այն առաջացավ ԱՄՆ–ի ֆինանսական համակարգում՝ որպես արդյունք սպեկուլյատիվ բնույթի գործարքների լայն տարածման և հետագայում տարածվեց աշխարհով մեկ՝ ներառելով նաև արտադրության և առևտրի ոլորտները: ԱՄՆ–ն և մի շարք այլ պետություններ ձեռք են առնում համապատասխան հակաճգնաժամային միջոցառումներ, որոնք, սակայն, դեռևս անարդյունավետ են:

Ճգնաժամի հետևանքով փլուզվում են ֆինանսական համակարգերը, կանգ են առնում գործարանները, մեծապես աճում է գործազուրկները թիվը, և աճում է սոցիալական լարվածությունը: Եվրամիության անդամ մի շարք երկրներում արդեն տեղի են ունեցել բողոքի զանգվածային ակցիաներ:

Մասնագետների գնահատականով՝ ճգնաժամը վտանգ չի ներկայացնում կապիտալիստական արտադրաեղանակի հետագա գոյության համար, սակայն և կունենա ծանր սոցիալան հետևանքներ: Այն կսկսվի հաղթահարվել մոտակա մեկ–երկու տարիների ընթացքում, ինչի արդյունքում, ինչպես ենթադրվում է, կստեղծվի համաշխարհային նոր ֆինանսական համակարգ՝ այդպիսով նպաստելով համաշխարհայնացման գործընթացի արագանալուն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են արդի գլոբալ հիմնախնդիրները: Դրանց լուծման համար ի՞նչ է անհրաժեշտ:

2. Նկարագրե՛ք ժողովրդավարական իրավիճակի փոփոխությունները: Ի՞նչ նպաստող պայմաններ կան բնակչության աճի համար: Այդ առումով՝ որո՞նք են տարբերությունները զարգացած և զարգացող երկրների միջև: Միգրացիոն ի՞նչ հետևանքներ է դա առաջացնում:

3. Շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում ի՞նչ խնդիրներ են առաջացել, նշե՛ք դրանց պատճառները: Ի՞նչ է «կանաչների շարժումը»: Որո՞նք են բնապահպանական խնդիրների լուծման միջոցները:

4. Ձեր կարծիքով՝ վերջին տարիներին ինչո՞ւ են ավելացել ահաբեկչական գործողությունները: Ո՞րն է իսլամական ահաբեկչական կազմակերպությունների նպատակը: Ի՞նչ միջոցներ են անհրաժեշտ ահաբեկչության դեմ պայքարելու համար:

5. Ո՞րն է թմրամոլության աճի պատճառը: Ինչպիսի՞ միջոցներ են կիրառվում այդ աղետի դեմ պայքարելու նպատակով:

6. Որո՞նք են 2008 թ. սկսված ֆինանսատնտեսական համաշխարհային ճգնաժամի պատճառները: Ի՞նչ հետևանքների է այն հանգեցնում:

§2. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Մեր օրերում մարդկությունը դեռևս չի կարողացել վերջնականապես լուծել թերևս ամենակարևոր հիմնախնդիրը՝ պատերազմի ու խաղաղության հիմնախնդիրը: Նրանից է անմիջականորեն կախված տասնյակ և հարյուրավոր միլիոն մարդկանց կյանքը, գուցե և ողջ մարդկային քաղաքակրթության գոյությունը Երկիր մոլորակի վրա: Չնայած և հաջողվում է խուսափել միջուկային զենքի կիրառմամբ լայնածավալ պատերազմներից, սակայն դեռևս չեն վերացվել տեղական բնույթի պատերազմները, շարունակվում են տարածաշրջանային հակամարտությունները: Ոչ մի կերպ չի հաջողվում նաև վերջ դնել այնպիսի ծանրագույն հանցագործությանը մարդկության դեմ, ինչպիսին է ցեղասպանությունը:

Տեղական պատերազմները և տարածքային խնդիրները

Արդի աշխարհում սառը պատերազմի ավարտից հետո աննախադեպ թափ ստացած համաշխարհայնացման և ինտեգրման գործընթացները ուղեկցվում են հակամարտություններով և արյունալի պատերազմներով:

Նույնիսկ Եվրոպան զերծ չմնաց պատերազմից, որը անվանվեց Բալկանյան: Փորձելով կասեցնել Հարավսլավիայի տրոհման գործընթացը՝ Սերբիան, որը ղեկավարվում է կոմունիստական ուժերի կողմից (առաջնորդ Ս. Միլոշևիչ) պատերազմական գործողություններ ծավալեց սկզբում նախկին հարավսլավական հանրապետություններից Խորվաթիայի դեմ, իսկ հետագայում տարածեց դրանք մեկ այլ նախկին հարավսլավական հանրապետության՝ Բոսնիա և Հերցեգովինայի տարածքի վրա:

1990–ական թվականների երկրորդ կեսերին ռազմական գործողությունները տեղափոխվեցին Սերբիայի տարածք, երբ ՆԱՏՕ–ն, առանց ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի թույլտվության, օգնության եկավ Սերբիայի կազմից անջատվել ձգտող Կոսովոյի ալբանացիներին և սկսեց մայրաքաղաք Բելգրադի և ողջ Սերբիայի օդային ռմբակոծությունները: 1990–ական թվականների Բալկանյան պատերազմը ավարտվեց Սերբիայի լիովին միջազգային մեկուսացմամբ և պարտությամբ: Նրա ավանդական դաշնակից Ռուսաստանը, լինելով թուլացած վիճակում, չկարողացավ օգնություն ցույց տալ:

Հետսառըպատերազմյան շրջանի սուր հակամարտության օջախ էր Իրաքը, որի նախագահն էր բռնապետական մեթոդներով կառավարող նախագահ Սադդամ Հուսեյնը: 1990 թվականին Իրաքը անսպասելի հարձակվեց հարևան Քուվեյթի վրա և գրավեց այն: ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը որոշում ընդունեց ռազմական միջոցներ օգտագործել և ազատագրել Քուվեյթը: Ստեղծվեց հակաիրաքյան դաշինք՝ ԱՄՆ–ի ղեկավարությամբ, որը և պարտության մատնեց Իրաքին և իրականացրեց ՄԱԿ–ի որոշումը: Սակայն Սադդամը պահպանեց իշխանությունը:

Երկրորդ պատերազմը Իրաքի դեմ նախաձեռնեց ԱՄՆ–ն 2003 թվականի մարտ–ապրիլ ամիսների ընթացքում՝ մեղադրելով Իրաքին, որ նա աջակցում է համաշխարհային ահաբեկչությանը և գաղտնի պատրաստում է միջուկային զենք: Այս պատերազմը, որը չէր ստացել ՄԱԿ–ի հավանությունը, նույնպես ավարտվեց Իրաքի պարտությամբ, որի հնացած խոհրդային զենքով զինված բանակը կրեց մեծ կորուստներ՝ շուրջ 7 հազար սպանված: ԱՄՆ–ն և նրա դաշնակիցների կորուստները կազմեցին ընդամենը 183 սպանված: Նրանք 21 օրվա ընթացքում գրավեցին ողջ Իրաքը և ձերբակալեցին նրա ղեկավարներին, որոնցից մի քանիսը, այդ թվում նաև Սադդամը, հետագայում դատապարտվեցին մահվան և կախաղան բարձրացվեցին: Իրաքում անցկաց-

վեցին համընդհանուր ընտրություններ, ստեղծվեց նոր իշխանություն, սակայն երկրում դեռևս տեղակայված են ԱՄՆ–ի ու նրա դաշնակիցների մեծաթիվ զորքերը:

1940–թվականների վերջերից սկիզբ առած արաբա–իսրայելական սուր հակամարտությունը Մերձավոր Արևելքում շարունակվում է մինչև մեր օրերը: 1947 թվականին ՄԱԿ–ը որոշում ընդունեց Պաղեստինի տարածքում ստեղծել երկու պետություն՝ արաբական և հրեական: 1948 թվականին հրեաները ստեղծեցին Իսրայելը, սակայն Պաղեստինի արաբներին չհաջողվեց ստեղծել իրենց պետությունը, քանի որ նրա տարածքը գրավվեց Իսրայելի կողմից: Արդյունքում սառը պատերազմի տարիներին տեղի ունեցան մի շարք արյունալի արաբա–իսրայելական պատերազմներ, որոնք ավարտվեցին Իսրայելի հաղթանակով: ԱՄՆ–ն օգնում էր Իսրայելին, իսկ ԽՍՀՄ–ը՝ արաբներին:

Սառը պատերազմի ավարտից հետո չհաջողվեց գտնել այդ սուր հակամարտության լուծումը՝ չնայած և ԱՄՆ–ի միջնորդության շնորհիվ արձանագրվեց որոշ առաջընթաց այդ ուղղությամբ: Իսրայելի և Պաղեստինի ազատագրման կազմակերպության, որը ներկայացնում էր պաղեստինի արաբների շահերը, ձեռք բերվեցին մի շարք համաձայնություններ և ստորագրվեցին համապատասխան փաստաթղթեր, որոնք ճանապարհ էին հարթում խաղաղության հաստատման, ինչպես նաև Պաղեստինի արաբների կողմից Իսրայել պետության ճանաչման և Իսրայելի կողմից ժամանակի ընթացքում նաև Պաղեստինի տարածքում արաբական պետության ստեղծման գործընթացին չխոչնդոտելու համար:

Սակայն այդ համաձայնագրերը կատարվեցին ոչ լրիվ, ինչը և հանգեցրեց ռազմական գործողությունների վերսկսմանը: 2006 և 2008 թվականներին տեղի ունեցան ռազմական գործողություններ Իսրայելի և ՀԱՄԱՍ և Հեզբոլահ արաբական կազմակերպությունների զինված ուժերի միջև, որոնց ընթացքում Իսրայելը ժամանակավորապես գրավեց Լիբանանի հարավային շրջանները և Պաղեստինյան ինքնավարության Գազայի հատվածը:

Նախկին Խորհրդային Միության տարածքում առաջացած հակամարտությունների (Ղարաբաղյան, Աբխազական, Հարավօսական, Մերձդնեպրովյան) հետևանքով 1990–ական թվականների սկզբներին տեղի ունեցան արյունալի զինված բախումներ: Նրանք ավարտվեցին զինադադարներով, սակայն իրավական դաշտում լուծում չստացան և սկսեցին դասվել «սառեցված» հակամարտությունների թվին: Նրանցից է Ղարաբաղյան հակամարտությունը, որն ավարտվեց Արցախի ժողովրդի փայլուն հաղթանակով, որն այդպիսով, վերահաստատեց իր ազատ ինքորոշվելու իրավունքը: Ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնիշխան հանրապետությունը, որը, սակայն, դեռևս ճանաչված չէ ՄԱԿ–ի անդամ որևէ պետության կողմից: ԵԱՀԿ–ի կողմից ստեղծված Մինսկի խմբի երեք համանախագահ պետությունների (ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա) միջնորդությամբ գործադրվում են ջանքեր այդ հակամարտությունը լուծելու ուղղությամբ, որոնք դեռևս անարդյունավետ են:

2008 թվականի օգոստոսին Հարավօսական հակամարտությունը վերաճեց ռուս–վրացական 5–օրյա զինված ընդհարման, որի ընթացքում ռուսական զորքերը գրավեցին Վրաստանի տարածքի մի մասը և կանգ առան Թբիլիսիի մատույցներում: Ռազմական գործողություններն ավարտվեցին ռուսական կողմի հաղթանակով: Համաշխարհային հանրությունը խստագույնս քննադատեց Ռուսաստանի գործողությունները, Եվրամիությունն ու ՆԱՏՕ–ն կասեցրին իրենց համագործակցությունը նրա հետ, իսկ ԱՄՆ–ն անհապաղ տնտեսական խոշոր օգնություն ցույց տվեց Վրաստանին:

Զինադադարը կնքվեց Եվրամիության միջնորդական ջանքերի շնորհիվ, և Ռուսաստանը դուրս բերեց իր զինված ուժերը Վրաստանի տարածքից՝ թողնելով դրանք

Հարավային Օսիայում և Աբխազիայում: Արդյունքում Վրաստանի խորհրդարանը հռչակեց նրանց բռնազավթված տարածքներ, իսկ Ռուսաստանը և հետագայում նաև Նիկարագուան ճանաչեցին Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախությունը: Ցայսօր նրանք միակն են: Մնացյալ բոլոր պետությունները ճանաչում են Վրաստանի տարածքային ամբողջականությունը:

Այդ զինված ընդհարման հետևանքով Վրաստանը ունեցավ մեծ տնտեսական ու ռազմական կորուստներ, նրա ենթակառուցվածքների համակարգի զգալի մասը ոչնչացվեց, սրվեց երկրի ներքին քաղաքական իրադրությունը: Ռուսաստանը նույնպես ունեցավ տնտեսական կորուստներ, քանի որ դադարեց արտասահմանյան ներդրումների հոսքը:

Ցեղասպանությունների կանխարգելման խնդիրը

Ցեղասպանությունը մարդկային պատմության ամենադաժան և ամոթալի երևույթներից է, որի կանխարգելման խնդիրը շարունակում է մնալ արդի աշխարհի կարևորագույն խնդիրներից մեկը: Մեր աչքերի առջև աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող խաղաղ բնակչության կոտորածների շարանը պարզորոշ ի հայտ է բերում ստվարանալու միտումներ, անշեղորեն աճում է պետությունների կողմից սառնասրտորեն իրականացվող իր իսկ քաղաքացիների որոշակի խմբերի զանգվածային սպանությունների թիվը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված անվտանգության համակարգը անկարող է պաշտպանելու ոչ միայն անհատի իրավունքների, այլև մարդկային հոծ խմբերի կյանքի իրավունքը: Մոտավոր հաշվարկները վկայում են, որ 1945–1987 թթ. պետությունների կողմից իրականացված զանգվածային կոտորածների զոհերի թիվը մոտ 1.5–ից մինչև 2.5 անգամ գերազանցում է 1945–1980 թթ. տեղի ունեցած բոլոր պատերազմների զոհերի թիվը:

Արդեն սառը պատերազմի ավարտից հետո՝ 1990–ական թվականներին, տեղի ունեցավ ցեղասպանություն աֆրիկյան Ռուանդայում, որտեղ երկու ժողովուրդների ներկայացուցիչները. թութսիները և հութուները ոչնչացրին մեկը մյուսին: Հաջորդ տասնամյակում ցեղասպանություն տեղի ունեցավ մեկ այլ աֆրիկյան երկրի՝ Սուդանի, Դարֆուր նահանգում: Նույնիսկ Եվրոպան զերծ չմնաց ցեղասպանության ոճրագործությունից, երբ 1990–ական թվականների Բալկանյան պատերազմի ժամանակ հակամարտող կողմերի գործողությունները շատ դեպքերում բնութագրվում էին որպես ցեղասպանական նպատակադրվածություն ունեցող արարքներ:

Դժվար թե գտնվի որևէ մեկը, որը չհամաձայնվի ամերիկացի հասարակագետ ու աստվածաբան Ֆ. Հ. Լիթլի հետ, որը բնութագրել է XX դարի վերջում այդ հարյուրամյակը որպես «Ցեղասպանության դարաշրջան»: Կարևորագույն խնդիր է, որ նույնը չասվի նաև XXI դարի վերաբերյալ:

Մինչդեռ վերևում բերված տվյալները փաստում են, որ մարդկությունը դեռևս չի մշակել ցեղասպանությունների կանխարգելման գործուն միջոցներ: Ակնհայտ է դառնում նաև, որ ՄԱԿ–ի 1948 թվականի բանաձևը՝ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին», չի ծառայում իր հիմնական նպատակին՝ ցեղասպանությունների կանխարգելմանը, քանի որ այստեղ հստակորեն չի ձևակերպված պետության պատասխանատվության դրույթը: Այն հանգամանքը, որ 20–րդ դարի սկզբին Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացրած Հայոց ցեղասպանությունը դեռևս չի դատապարտվել այնպիսի հեղինակավոր միջազգային ատյանի կողմից, ինչպիսին ՄԱԿ–ն է, և աշխարհի պետությունների մեծ մասի կողմից, նույնպես չի նպաստում մեր օրերի ցեղասպանությունների կանխարգելմանը, քանի որ

հնարավոր հանցագործների մոտ պատրանք է ստեղծում, որ կարելի է խուսափել պատասխանատվությունից:

Միայն պետությունների, միջազգային կառավարական և ոչ կառավարական կառույցների, անհատ գիտնական–ցեղասպանագետների հետևողական ու նպատակասլաց աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի մշակել նոր, ավելի գործուն ու հուսալի միջազգային–իրավական մեխանիզմ, որը կդառնա իրական պատնեշ XXI դարում ցեղասպանությունների իրականացման դեմ:

Արժե ընդգծել, որ Հայաստանը ակտիվ դերակատարում է ստանձնել այդ ոլորտում տեղի ունեցող քննարկումներում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են արդի փուլում ևս տեղի ունենում պատերազմներ: Խաղաղության հիմնախնդրի լուծման ի՞նչ ուղիներ կան:

2. Տեղական ի՞նչ պատերազմներ են եղել վերջին տարիներին: Որո՞նք են Բալկանյան պատերազմի հետևանքները: Ինչո՞ւ ԱՄՆ–ը և նրա դաշնակիցները Իրաքի դեմ երկու անգամ պատերազմ մղեցին: Ո՞րն է արաբա–իսրայելական չդադարող հակամարտության գլխավոր պատճառը: Ձեր կարծիքով՝ պաղեստինյան հիմնախնդիրը ե՞րբ լուծում կստանա:

3. Նախկին ԽՍՀՄ–ի տարածքում ի՞նչ հակամարտություններ կան. թվարկե՛ք դրանք: Ո՞րն է Արցախյան հիմնախնդրի լուծման ուղին: Ինչո՞ւ 2008 թ. օգոստոսին սրվեց հարավօսական հակամարտությունը: Ո՞րն է ռուս–վրացական հակամարտության գլխավոր պատճառը:

4. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են մեր օրերում ևս իրականացվում ցեղասպանություններ: Վիճակագրական ի՞նչ տվյալներ կարող եք նշել: Ինչո՞ւ ՄԱԿ–ի 1948 թ. բանաձևը չի ծառայում իր հիմնական նպատակին:

§3. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ XXI ԴԱՐՈՒՄ

Անցյալ դարի վերջում ի հայտ եկավ համաշխարհայնացման երևույթը, որը XXI դարում նույնպես շարունակում է մնալ որպես մարդկային քաղաքակրթության զարգացումն ապահովող հիմնական գործոններից մեկը: Սակայն այն ունի նաև բացասական կողմեր, որոնք հնարավոր է հաղթահարել տարբեր մշակութային–քաղաքակրթական ու կրոնական համակարգերին պատկանող ժողովուրդների միջև երկխոսության և ավելի սերտ համագործակցության միջոցով:

Համաշխարհայնացման գործընթացը

Համաշխարհայնացումը (գլոբալիզացիա) արդի աշխարհի ամենակարևոր երևույթն է: Այդպես է անվանվում այն գործընթացը, որը տանում է դեպի աշխարհի երկրների ու ժողովուրդների միջև արագորեն խորացող համագործակցության և տնտեսական ինտեգրացիայի՝ շուկայական հարաբերությունների հիման վրա: Արդեն իսկ ստեղծվել է համաշխարհային ֆինանսական դաշտ՝ որպես համաշխարհայնացման կարևորագույն նախապայման, ինչը հնարավորություն է տալիս վայրկենապես տեղափոխելու ֆինանսական միջոցները աշխարհի մեկ անկյունից մյուսը: Համաշխարհային ֆինանսա–տնտեսական ճգնաժամի պատճառով այն ստացավ ծանր հարված, ինչը կհանգեցնի նրա՝ էլ ավելի կատարելագործմանը:

Համաշխարհայնացման տեխնիկական հենքը համաշխարհային լրատվական համացանցն է (ինտերնետ), որի առաջացումը արդյունք է XX դարի վերջերից սկիզբ առած լրատվական հեղափոխության՝ հասարակության և առանձին անհատների կյանքում լրատվության պահպանման ու հաղորդման միջոցների, օրինակ՝ համակարգիչների դերի կտրուկ և որակական աճի: Համաշխարհային լրատվական համացանցը ստեղծում է մի նոր իրականություն, որն անվանվում է վիրտուալ կամ կիբեր տարածություն: Այն շատ արագ ընդլայնվում է և արդեն իսկ այսօր հանդես է գալիս որպես իրականության անբաժանելի հատված:

Ներկայումս աշխարհում հաշվվում է ավելի քան կես միլիարդ համակարգիչ, այն դեպքում, երբ անցյալ դարի վերջում այդ թիվը չէր գերազանցում 200 միլիոնը: Վերջին տարիներին լայն տարածում են ստացել տեղափոխվող համակարգիչները (լափ–թոփ) և ձեռքի հեռախոսների հետ համակցված մինի–համակարգիչները, որոնք հնարավորություն են տալիս մշտական կապի մեջ լինել համացանցի հետ և ստանալ ու փոխանցել անհրաժեշտ լրատվությունը ցանկացած վայրից: Այս հանգամանքը նպաստում է լրատվության ընդհանուր քանակի շատ արագ աճին. այն կրկնապատկվում է մոտավորապես ամեն տարի:

Հոգևոր ոլորտում համաշխարհայնացումը ուղեկցվում է արևմտյան քաղաքակրթական արժեքների և անգլերենի լայն տարածումով ողջ աշխարհով մեկ: Այդ նպաստում է աշխարհի տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների միջև հաղորդակցման դյուրացմանը և հոգևոր–մշակութային ու գիտական առնչությունների ընդլայնմանը: Համաշխարհայնացումը մարդկության համար աննախադեպ բարենպաստ հնարավորություններ է ստեղծում՝ արագացնելու զարգացման տեմպերը մարդկային կյանքի բոլոր ոլորտներում:

Սակայն համաշխարհայնացումը կարող է ունենալ նաև բացասական հետևանքներ: Այսպես, օրինակ, այն կարող է տանել դեպի ազգային արժեքային համակարգի քայքայում և մշակութային համահարթեցում: Այդ երևույթները առանձնահատուկ վտանգ են ներկայացնում փոքր ազգերի համար:

Միաժամանակ փորձը ցույց է տալիս, որ այն պետությունները, որտեղ համաշխարհայնացման գործընթացները դանդաղ են զարգանում, դուրս են մնում աշխարհում ընթացող ինտեգրացիոն գործընթացներից և դատապարտվում են տնտեսական ու քաղաքական մեկուսացման: Ներքին կյանքում այդ պետությունները լուրջ դժվարությունների են հանդիպում սոցիալական ոլորտում:

Հայաստանը, ինչպես աշխարհի շատ այլ երկրներ, նույնպես ներքաշվում է համաշխարհայնացման գործընթացների մեջ: Արդի փուլում կարևոր է դարձել կարողանալ օգտվել նրա հնարավորություններից՝ մեր երկրի զարգացումը, տնտեսության ինտեգրումը համաշխարհային շուկայի մեջ և բնակչության կենսամակարդակի բարձրացումը արագացնելու նպատակով՝ միաժամանակ անաղարտ պահելով ազգային արժեքները և ավանդույթները:

Աշխարհի բազմաթիվ երկրներում Հայկական սփյուռքի առկայությունը հնարավոր է դարձնում օգտվելով համաշխարհայնացման ընձեռած հնարավորություններից՝ ավելի նպատակասլաց ներգրավել սփյուռքի և հյուրընկալած երկրի տնտեսական ներուժը մայր հայրենիքի տնտեսական զարգացման մեջ: Համացանցը իր հերթին հնարավորություն է տալիս ստեղծել համաշխարհային համահայկական ցանց, ինչը մեծապես կնպաստի հայ ժողովրդի ազգային ոգու վերածննդին և աշխարհի քաղաքական ու հոգևոր կյանքում նրա դիրքերի ամրապնդմանը:

Համաշխարհայնացման հակառակորդների (հակագլոբալիստների) շարժումը և կրոնական գործոնի ակտիվացումը

Համաշխարհայնացումը և լրատվական հեղափոխությունը համաշխարհային հասարակական կարծիքի կողմից միանշանակ դրականորեն չեն ընկալվում և որոշ դեպքերում առաջացնում են հակազդեցություն: Այդ պատճառով աշխարհի տարբեր երկրներում սկիզբ է առել համաշխարհայնացման հակառակորդների (հակագլոբալիստների) միջազգային շարժումը, որի մասնակիցները գտնում են, որ համաշխարհայնացման դեմ անհրաժեշտ է պայքարել, քանի որ այն տանում է դեպի համաշխարհային կառավարության առաջացում և ժողովուրդների, ազգային կառավարությունների և առանձին անհատի ինքնիշխանության սահմանափակում: Հակագլոբալիստներին հաջողվում է աշխարհի տարբեր երկրներում պարբերաբար կազմակերպել բողոքի զանգվածային ցույցեր, որոնք հաճախակի ավարտվում են ոստիկանության հետ ընդհարումներով:

Ներկայումս այդ շարժումը գտնվում է սաղմնային վիճակում, քանի որ նրան դեռևս չի հաջողվել ստեղծել հակագլոբալիստական գաղափարախոսություն և նախանշել մարդկության զարգացման այլընտրանքային ուղիներ: Հատկանշական է, որ հակագլոբալիստները իրենց պայքարը համաշխարհայնացման դեմ կազմակերպելու նպատակով լայնորեն օգտվում են համացանցի ընձեռած հնարավորություններից:

Համաշխարհայնացումը՝ հասարակության որոշ շերտերի մոտ որպես հակազդեցություն հոգևոր համահարթեցմանը, առաջացնում է ձգտում հեռանալ իրականությունից և ներփակվել կրոնի շրջանակներում, ինչը տանում է դեպի կրոնի դերի մեծացում հասարակական կյանքում: Քրիստոնյա աշխարհում այդ երևույթը արտահայտվում է ինչպես քրիստոնեության հիմնական ուղղությունների, այնպես էլ բազմաթիվ աղանդների ներկայացուցիչների թվաքանակի աճով: Տարածում են ստանում նաև արևելյան, հիմնականում հեռավորարևելյան, կրոնական ուսմունքները:

Կրոնի դերի մեծացումը հասարակական կյանքում փորձում են օգտագործել այն քաղաքական ուժերն ու կուսակցությունները, որոնք իրենց գործունեության մեջ հիմնվում են քրիստոնեական արժեքների քաղաքականացված տարբերակների վրա՝

քրիստոնեա–դեմոկրատները Եվրոպայում և Հարավային Ամերիկայում, Հանրապետական կուսակցության այն թևը, որը մինչև վերջերս գտնվում էր իշխանության գլուխ ԱՄՆ–ում:

Արևմուտքում վերջին տասնամյակներում նկատվող հեռավորարևելյան կրոնական ուսմունքների տարածումը տեղի է ունենում հիմնականում երիտասարդության ու մտավորականության շրջաններում: Այդ ուսմունքները ընկալվում են որպես հնարավորություն՝ պահպանելու անհատի ինքնությունը և հոգևոր ազատությունը հոգևոր համահարթեցման մամլիչ ուժի իշխանության պայմաններում:

Իսլամական աշխարհում համաշխարհայնացումը հիմնականում նույնացվում է արևմտականացման հետ և ընկալվում է ավելի բացասական երանգներով: Դրանից օգտվում են տարատեսակ ծայրահեղական արմատական կազմակերպությունները, որոնք անշեղորեն ընդլայնում են իրենց համախոհների թիվը հիմնականում երիտասարդության շրջանում: Այդ կազմակերպությունները դավանում են հակաարևմտյան և ջիհադիստական հայացքներ:

Քաղաքակրթության զարգացման հեռանկարները XXI դարում

Համաշխարհայնացման գործընթացի խորացումը, համաշխարհային համացանցի և համամոլորակային կիբեր տարածության առաջացումը բարենպաստ պայմաններ են ստեղծում ժողովուրդների և մշակույթների միջև հաստատուն երկխոսության ու համագործակցության կայացման, ինչպես նաև աշխարհում ինտեգրացիոն միտումների ուժեղացման համար: Սակայն գոյություն ունեցող բազմաթիվ հակասությունները ու հակամարտությունները միասնական համաշխարհային քաղաքակրթության ձևավորումը մոտակա ապագայում դարձնում են քիչ հավանական:

Վերևում նշված հանգամանքները հիմք ծառայեցին մի շարք տեսությունների համար, որոնց հեղինակները փորձում են նախանշել մարդկության զարգացման ուղիները XXI դարում: Դրանցից ամենամեծ տարածումն է ստացել «քաղաքակրթությունների միջև բախման» հիմնադրույթի վրա հենվող գաղափարական–քաղաքական հայեցակարգը: Նրա հեղինակն է 2008 թվականին կյանքից հեռացած հայտնի ամերիկացի հասարակագետ Ս. Հանթինգթոնը: Նա գտնում էր, որ սառը պատերազմի դարաշրջանի ավարտից հետո աշխարհում հիմնական հակամարտությունն դառնում է պայքարը իսլամական և արևմտյան քաղաքակրթությունների միջև: Վերջինս, ըստ ամերիկացի գիտնականի, ավելի առաջադեմ է և անպայմանորեն պետք է այդ պայքարից դուրս գա հաղթանակած: Այդ հաղթանակի հետ է նա կապում մարդկության հետագա առաջընթացը:

Այդ տեսությունն, ըստ էության, ներկայացնում է արևմտամետ աշխարհընկալման վրա հիմնված մոտեցում ժամանակակից աշխարհում ընթացող հակամարտությունների և գոյություն ունեցող խնդիրների նկատմամբ: Պատահական չէ, որ այն լայն տարածում է ստացել մանավանդ արևմտյան մտավորականների ու քաղաքական գործիչների շրջանում, որոնք փորձում են օգտագործել այն ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գործընթացները՝ մասնավորապես իսլամական ահաբեկչության աճը բացատրելու նպատակով:

Ոչ արևմտյան մի շարք երկրների մտավորականության ներկայացուցիչները Հանթինգթոնի տեսությանը հակադրում են «մշակույթների և քաղաքակրթությունների երկխոսության» հայեցակարգը: Նրանք գտնում են, որ ներկայիս աշխարհում գոյություն ունեցող տարբեր մշակույթներից, կրոններից ու քաղաքակրթություններից և ոչ մեկը չունի առավելություն մյուսների նկատմամբ: Նրանք ընդգծում են, որ քաղաքակրթությունների միջև գոյություն ունեն ընդհանրության բազմաթիվ եզրեր, որոնք

անհրաժեշտ է օգտագործել՝ համատեղ ջանքերով մարդկության առջև ծառացած բազմաթիվ խնդիրները հաջողությամբ լուծելու նպատակով:

Եթե «քաղաքակրթությունների միջև բախման» տեսությունը հնարավորություն է տալիս բացատրելու մեր օրերում տեղի ունեցող գործընթացների մի մասը, ապա «քաղաքակրթությունների միջև երկխոսության» հայեցակարգը նպաստում է ժամանակակից աշխարհում մարդկության առջև ծառացած բարդ խնդիրների լուծումները համատեղ ջանքերով գտնելուն: Ըստ էության, այն նախանշում է այն ուղին, որը ընտրելով՝ մարդկությունը կապահովի կայուն առաջընթաց XXI դարում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է համաշխարհայնացումը: Հասարակական կյանքի ո՞ր ոլորտներում է այն դրսևորվում: Ի՞նչ է կիբեր տարածությունը: Ինչպիսի՞ հնարավորություններ են ընձեռում համակարգիչը և ծեռքի հեռախոսը:

2. Ներկայացրե՛ք համաշխարհայնացման դրական և բացասական կողմերը: Հայաստանը և հայ ազգը ի՞նչ հնարավորություններ են ստանում համաշխարհայնացման գործընթացից:

3. Որո՞նք են հակագլոբալիստական շարժման պատճառները: Ինչո՞ւ է մեր օրերում մեծացել կրոնական գործոնի դերը: Ի՞նչ դրսևորումներ ունի այդ գործոնը Արևմուտքում և իսլամական աշխարհում:

4. Ժողովուրդների և մշակույթների միջև համագործակցության ուժեղացման համար ի՞նչ նպաստավոր պայմաններ կան արդի փուլում:

5. Բացատրե՛ք քաղաքակրթության զարգացման հեռանկարների վերաբերյալ երկու ամենատարածված տեսակետների բովանդակությունը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ հեռանկար է սպասվում համաշխարհային քաղաքակրթությանը XXI դարում:

ԳԼՈՒԽ 15. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

§1 – 2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԵԼՔԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ: ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մշակույթի վերելքի նախադրյալները

XX դարում մշակույթը, հենվելով նախորդ դարաշրջանի դասական նվաճումների վրա, բուռն վերելք ապրեց: Դրան զգալիորեն նպաստեց ժողովուրդների կրթական մակարդակի բարձրացումը: Համընդհանուր գրագիտության տարածման գլոբալ գործընթացը, որ վաղուց էր սկսվել ԽՍՀՄ–ում, Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում, տարածվեց նաև անկախություն նվաճած Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների վրա: Այս ժողովուրդների մշակութային զարթոնքը նրանց ազգային ինքնության հաստատման առհավատչյան է և մի կարևոր շիթ՝ համաշխարհային մշակութային անդաստանում:

Եվրոպայի և Ամերիկայի զարգացած երկրները շարունակում են պահպանել առաջնությունը գրականության, գեղանկարչության, երաժշտության, թատրոնի, կինոյի և արվեստի այլ բնագավառներում: Նրանք հանդիսանում են նոր ուղղությունների, ոճերի և գաղափարների առաջացման ու ձևավորման բնօրրան: Շնորհիվ գրագիտության և կրթական ընդհանուր մակարդակի բարձրացման՝ մշակույթը առանձին անհատների մենաշնորհից դարձավ ամենալայն զանգվածների սեփականությունը:

Մարդկանց ապրելակերպի փոփոխությունները

Հասարակական կյանքի բոլոր բնագավառներում տեղի ունեցող փոփոխություն-ներին զուգահեռ փոփոխություն է կատարվում մարդկանց հոգեբանության և տրամադրությունների մեջ: Նրանց հոգնածությունը պատերազմից աստիճանաբար անցնում է, և նրանք կարոտ են ուրախանալու, վայելքի և հաճելի ժամանցի: Նրանք լցնում են կաբարեները, սրճարանները, կինոթատրոնները, համերգային դահլիճները, անգամ՝ մարզահրապարակները: Նրանք հրապուրվում են ջազով և ռիթմիկ պարերով, ծարավի են նորույթի: 1920–ական թվականներին սկսվում է եվրոպացիների իսկական ծանոթությունը ամերիկյան կենսաձևին և արվեստին: Այդ պահից սկսվում է ամերիկանիզմի թափանցումը Եվրոպա և աշխարհի մյուս երկրներ:

1930–ական թվականներին առաջնային է դառնում պայքարը ֆաշիզմի և ֆաշիստական գաղափարախոսության դեմ: Ֆաշիստական Գերմանիայում տիրապետող է դառնում մյուս ժողովուրդների նկատմամբ գերմանացիների մտավոր և ստեղծագործական գերազանցության «տեսությունը», մարդկանց գիտակցության մեջ բոլոր միջոցներով ներդրվում է ուժի և բռնության պաշտամունքը:

Ֆաշիզմի դեմ ուղղված պայքարին, այլ ուժերի հետ միասին, ակտիվորեն մասնակցում են, անկախ իրենց քաղաքական հայացքներից, աշխարհի տարբեր ազգությունների առաջադեմ մտավորականները: Դրանց մեջ են գրողներ Մաքսիմ Գորկին, Իլյա Էրենբուրգը և Ավետիք Իսահակյանը (ԽՍՀՄ), Ռոմեն Ռոլանը և Անրի Բարբյուսը (Ֆրանսիա), Լիոն Ֆեյխտվանգերը և Թոմաս Մանը (Գերմանիա), և ուրիշներ, արվեստի տարբեր բնագավառների ներկայացուցիչներ՝ կինոդերասան

Չարլի Չապլինը, նկարիչներ Պաբլո Պիկասոն, կինոռեժիսոր Սերգեյ Էյզենշտեյնը, կոմպոզիտոր Սերգեյ Ռախմանինովը և այլոք:

Գիտության նվաճումները XX դարի առաջին կեսին

Նորագույն շրջանը, արդեն բազմիցս ասվել է, գիտության և տեխնիկայի աննախընթաց զարգացման դարաշրջան էր: Գիտության բնագավառում XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին կատարված բազմաթիվ հայտնագործությունները մարդկության պատմության համար ունեցան բախտորոշ նշանակություն: Դրանք նախապատրաստեցին գիտության հզոր վերելքն ու գիտատեխնիկական հեղափոխությունը:

Մեծ զարգացում ստացան բոլոր բնական գիտությունները: Սակայն նրանց մեջ առաջատարը դարձավ ատոմային և միջուկային ֆիզիկան, որի բնագավառում տեղի ունեցան հեղափոխական բնույթի հայտնագործություններ: Հենվելով Ալբերտ Էյնշտեյնի հարաբերականության տեսության վրա՝ գիտնականները ուսումնասիրեցին միկրոաշխարհը և ատոմի միջուկում հայտնաբերեցին մի շարք տարրական մասնիկներ, (ինչպես՝ ֆոտոններ, էլեկտրոններ, պրոտոններ, պոզիտրոններ և նեյտրոններ): Հարաբերականության տեսությունը հնարավոր եղավ կիրառել միկրոաշխարհում՝ շնորհիվ քվանտային մեխանիկայի, որը նոր, թերևս ամենախոշոր ուղղությունը եղավ XX դ. տեսական ֆիզիկայի բնագավառում:

1930–ական թվականների վերջերին գիտնականները հայտնագործեցին էներգիայի ստացման նոր եղանակ՝ ուրանի ատոմը ճեղքելու ճանապարհով, ինչպես նաև շղթայական ռեակցիան: Դա հնարավորություն տվեց ատոմը և նրանից ստացվող էներգիան օգտագործել ինչպես խաղաղ, այնպես էլ ռազմական նպատակների համար: Այս գիտական կարևոր հայտնագործությունը հնարավոր եղավ մեծանուն գիտնականներ Ն. Բորի, Մ. Պլանկի, Ժ. Կյուրիի, Լ. դը Բրոյլի, Է. Շրեդինգերի, Է. Ֆերմիի, Ի. Կուրչատովի, Աբ. Ալիխանյանի և այլոց շնորհիվ:

Շոգու էներգիային փոխարինելու եկավ էլեկտրաէներգիան, որը լայնորեն սկսեց կիրառվել տեխնիկայի, արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության բնագավառներում և կենցաղում: Կառուցվեցին հզոր հիդրոկայաններ աշխարհի տարբեր երկրներում, ինչպես Բոուլդեր Դամը՝ ԱՄՆ–ում, Դնեպրի ՀԷԿ–ը՝ ԽՍՀՄ–ում և այլն: ԱՄՆ–ում սկսեց կիրառվել էլեկտրակայանների ավտոմատ կառավարման համակարգ: 1930–ական թվականների վերջերին նման համակարգ սկսեցին ներդնել նաև ԽՍՀՄ–ում: Ավտոմատ կառավարման համակարգն առաջին անգամ կիրառվեց Երևանի և Իվանկոյի ՀԷԿ–երում:

Մեծ զարգացում ստացավ մաթեմատիկան, որը հիմք հանդիսացավ բնական մյուս գիտությունների բուռն զարգացման համար: Ձևավորվեցին ինքնատիպ մաթեմատիկական դպրոցներ ԱՄՆ–ում, Գերմանիայում, ԽՍՀՄ–ում, Ֆրանսիայում և այլուր: Մաթեմատիկոսներից աշխարհին լայնորեն հայտնի են XX դարի մեծագույն գիտնականներ Ջ. Բերգկոֆի, Ն. Վիններ (ԱՄՆ), Դ. Գիլբերտի (Գերմանիա), Ժ. Ադամարի, Ա. Լեբեգի (Ֆրանսիա), Մ. Կելդիշի, Մ. Լավրենտևի (ԽՍՀՄ) անունները:

Մեծագույն նվաճումներ արձանագրվեցին աստղագիտության բնագավառում: Աստղագիտական դիտարկումները և հետազոտությունները հաստատեցին Տիեզերքի քիմիական միասեռության թեզը և այն տեսակետը, որ աստղերը բաղկացած են Երկրի վրա առկա նույն տարրերից: 1930թ. հայտնագործվեց արեգակնային համակարգի իններորդ մոլորակը՝ Պլուտոնը:

Աստղագիտության բնագավառում ձևավորվեց նոր ուղղություն՝ աստղաֆիզիկան, որի հիմնադիրներից է Վիկտոր Համբարձումյանը: Նա առաջ քաշեց

ու հիմնավորեց աստղաֆիզիկայի և գերխիտ միջուկի տեսությունները: Այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ են տարվում նրա կողմից հիմնադրված Բյուրականի աստղադիտարանում: Ժամանակակից աստղագիտության զարգացման գործում մեծ ավանդ ունեն նաև Կ. Լունդմարկը, Բ. Լիոն, Ու. Ադամսը, Բ. Մարգարյանը և ուրիշներ:

Զգալի հաջողությունների հասավ նաև քիմիական գիտությունը՝ հատկապես սինթետիկ նյութերի ստացման գործում: Ձևավորվեց նոր ուղղություն՝ քիմիական ֆիզիկան, կատարվեցին լուրջ աշխատանքներ պոլիմերների բնագավառում: Այս ասպարեզում մեծ են Ն. Սեմյոնովի, Ս. Հինշելվուդի, Ն. Կուրնակովի, Ն. Ենիկոլոպյանի և այլոց ծառայությունները:

Հարկ է նշել գիտության այնպիսի ճյուղերի զարգացումը, ինչպիսիք են կենսաբանությունը, կենսաքիմիան, բիոֆիզիկան և ֆիզիոլոգիան: Այս վերջինի զարգացման մեջ առաջնային դերը պատկանում է Ի. Պավլովին, Լ. Օրբելուն, Խ. Կոշտոյանցին և այլ գիտնականների:

Զարգացում ապրեցին սահմանային գիտությունները՝ կենսաքիմիան, ֆիզիկական քիմիան, գեոֆիզիկան, էլեկտրաքիմիան և այլն: Մեծ հաջողություններ արձանագրվեցին միկրոկենսաբանության և դեղագործության բնագավառում: Գիտության զարգացումը նպաստում էր տեխնիկական առաջընթացին: Այդ ժամանակ է, որ հիմք դրվեց XX դարի երկրորդ կեսի գիտատեխնիկական հեղափոխությանը:

Գիտական վերոհիշյալ ուղղությունների հաջողությունները բարենպաստ նախադրյալներ ստեղծեցին բժշկագիտության զարգացման համար: Հատկապես ուշագրավ են հաջողությունները քիմիական ճանապարհով վիտամինների (A, B, C, D) սինթեզման (Յանսեն, Դոնաթ, Ուիլյամս, Կլայն), հակաբիոտիկների ուսումնասիրության (Ռ. Դյուբո, Ս. Վակսման, Ա. Ֆլեմինգ, որը պենիցիլինի հեղինակն է), վիրուսաբանության և այլ բնագավառներում:

Գիտության նվաճումները XX դարի երկրորդ կեսին: Գիտությունը արտադրողական ուժ

Ժամանակակից հասարակության առաջընթացը, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումն անհնար է պատկերացնել առանց գիտության զարգացման ու նրա նվաճումների կենսագործման: Դրա շնորհիվ գիտությունն առանձին անհատների մենաշնորհներից և անձուկ կաբինետային աշխատանքից վերածվեց գիտական հզոր կենտրոնների՝ ինստիտուտների և լաբորատորիաների գործունեության: Այն դարձավ արտադրողական ուժ:

Գիտության համակողմանի զարգացումը և գիտական նոր հայտնագործություններն իսկական հեղափոխություն առաջացրին տեխնիկայի բնագավառում, որի շնորհիվ կատարվեց նոր արդյունաբերական հեղաշրջում:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո տնտեսության և մշակույթի զարգացումը տեղի էր ունենում գիտական այն հայտնագործությունների հիման վրա, որոնք կատարվել էին նախորդ շրջանում: Դրանք հիմք ստեղծեցին գիտության հետագա զարգացման համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսվեց ատոմակայանների կառուցումն ԱՄՆ–ում, ԽՍՀՄ–ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Կանադայում և աշխարհի այլ երկրներում: Ատոմային էլեկտրակայան կառուցվեց նաև Հայաստանում՝ միակն Անդրկովկասում և ամբողջ Մերձավոր ու Միջին Արևելքում:

Տեխնիկայի բնագավառում մյուս կարևոր, հեղափոխական բնույթի նորությունը ներքին այրման շարժիչների լայնամասշտաբ կիրառումն էր ավտոմոբիլային,

տրակտորային, ավիացիոն և արդյունաբերական այլ ճյուղերում: Այն լայն կիրառում գտավ նաև ջրային տրանսպորտում և ռազմական տեխնիկայում:

Գիտական հայտնագործություններն արտադրության ոլորտում ներդնելու շնորհիվ աննախընթաց զարգացում ապրեցին մեքենաշինությունը, սև և գունավոր մետալուրգիան և արդյունաբերության այլ ճյուղեր: Ստեղծվեցին նոր մեքենաներ, գերճշգրիտ հաստոցներ, ներդրվեցին հարահոս գծեր, ավտոմատ սարքեր և համալիրներ, այդ թվում՝ ռոբոտներ, մանիպուլյատորներ և նոր առաջավոր տեխնոլոգիաներ:

Գիտական հետազոտություններին նոր թափ հաղորդեց ամերկյան գիտնական Նորբերտ Վիների կողմից ստեղծված կիբեռնետիկան՝ մի նոր գիտություն հետադարձ կապի, տեղեկատվության ստացման, մշակման ու հաղորդման վերաբերյալ:

Զգալի թռիչք կատարեց ռադիոէլեկտրոնիկան. ստեղծվեցին նոր կարգի ռադիոսարքավորումներ և հեռուստացույցներ:

Խոշորագույն հայտնագործություններ կատարվեցին գենետիկայի և կենսատեխնոլոգիայի բնագավառներում:

Գիտական հետազոտությունների հիման վրա և արտադրության մեջ դրանց ներդրմամբ հնարավոր եղավ երկարաժամկետ օգտագործվող ապրանքների՝ սառնարանների, հեռուստացույցների և այլ կենցաղային իրերի զանգվածային արտադրություն սկսել:

1970–90–ական թվականներին սկսվեց գիտատեխնիկական հեղափոխության նոր փուլ, որը հանգեցրեց գիտության և արտադրության սերտ միավորմանը:

Տիեզերքի ուսումնասիրությունները գիտնականներին հնարավորություն ընձեռեցին ավելի հարստացնել գիտելիքները այդ բնագավառում: Նրանք սկսեցին տիեզերքը օգտագործել նոր գիտական հայտնագործությունների համար: Ժամանակակից կապի միջոցները հնարավոր չէ իրականացնել առանց արբանյակային կապի զարգացման:

Ժամանակակից քաղաքակրթության խոշորագույն ձեռքբերումներից է էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ստեղծումն ու կիրառումը:

Մեր օրերում բժշկագիտությունը մեծ ճիգեր է գործադրում հայտնագործելու դեղամիջոցներ և բուժման մեթոդներ՝ ամենալայն տարածում գտած սրտանոթային հիվանդությունների և քաղցկեղի բուժման համար: Իսկ վերջին տարիներին մարդկությանը սպառնում է ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (ՁԻԱՀ) կոչվող հիվանդությունը:

Կուտակելով զգալի գիտական պաշարներ՝ մարդկությունը ձգտում է ավելի խորացնել իր գիտելիքները, բացահայտել նորանոր տեխնոլոգիաներ: Այսօր մեծ առաջընթաց է գրանցվել բարձր տեխնոլոգիաների ստեղծման ու կիրառման բնագավառում:

Հասարակական միտքը

Հասարակության և մարդու մասին գիտությունները հարստացան նոր տեսություններով ու գիտական հայտնագործումներով: Մեծ հետաքրքրություն էին ներկայացնում կյանքի փիլիսոփայության ջատագովներ Ա. Շոպենհաուերի և Ֆ. Նիցշեի աշխատությունները:

Եվրոպայում և ԱՄՆ–ում զարգացում ապրեց գիտության մի նոր ճյուղ՝ սոցիոլոգիան, որը գիտություն է հասարակության բազմակողմանի զարգացման և մարդկանց հասարակական վարքի մասին: Այդ բնագավառում լայն ճանաչում գտան Մ. Վեբերի աշխատությունները:

Գիտության զարգացմանը նոր խթան հաղորդեց Առաջին աշխարհամարտը: Տեխնիկայի և այլ միջոցների կիրառումը նոր խնդիրներ էր դնում գիտնականների առաջ: Զարգացած խոշոր երկրներում զգալի միջոցներ էին տրամադրվում գիտական հետազոտությունների համար: Երկրորդ աշխարհամարտի նախօրյակին և պատերազմի ընթացքում Գերմանիայում, ԽՍՀՄ–ում, ԱՄՆ–ում և Անգլիայում լուրջ գիտական հետազոտություններ էին կատարվում, որոնք անմիջականորեն կապված էին ռազմական արդյունաբերության հետ:

Գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը նկատելի էր նաև հասարակագիտության փիլիսոփայական ասպարեզում: Հասարակական գիտությունների զարգացման ժամանակակից ուղղությունները սահմանվում են տեղեկատվական հասարակության նոր գաղափարներով: Մարդկության պատմությունը դիտարկվում է որպես բուռն վերելքի մի գործընթաց, որը նրան դուրս է բերում քաղաքակրթության բոլորովին նոր մակարդակ:

Ժամանակակից փիլիսոփայության առանձնահատկությունն այն է, որ չկա որևէ ազդեցիկ, համընդհանուր ճանաչում գտած ուղղություն: Այդ բնագավառում գոյություն ունեցող ամեն մի ուղղություն առաջնորդվում է միայն իր գաղափարներով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պարզաբանե՛ք մշակույթի վերելքի պայմանները նորագույն շրջանում:
2. Փորձե՛ք պարզաբանել XX դ. վերջերին մարդկանց կենցաղում տեղի ունեցած փոփոխությունները՝ համեմատելով այն XX դ.. առաջին կեսի հետ:
3. Ներկայացրե՛ք գիտության զարգացման ընթացքը XX դ. առաջին կեսին: Բնական և հասարակական գիտությունների ի՞նչ նոր ուղղություններ առաջացան:
4. Ի՞նչ դեր խաղացին երկու աշխարհամարտերը ռազմական արդյունաբերության և տեխնիկայի զարգացման գործում:
5. Գիտության մեծագույն նվաճումները XX դ. երկրորդ կեսին ինչո՞վ էին պայմանավորված: Վերհիշե՛ք, թե ինչ է գիտատեխնիկական հեղափոխությունը:
6. Որո՞նք էին հասարակական գիտությունների նոր ուղղությունները, ի՞նչ նվաճումներ արձանագրեց հասարակական միտքը
7. Կազմե՛ք աղյուսակ և ներկայացրե՛ք գիտության տարբեր բնագավառների նվաճումները XX դարում: Օրինակներով ցույց տվե՛ք հայ գիտնականների ներդրումը համաշխարհային գիտության մեջ:

§ 3-4. ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Առաջին աշխարհամարտից հետո գրականության և արվեստի վրա մեծ ազդեցություն թողեցին ժամանակի աշխարհացունց երևույթներն ու իրադարձությունները: Առաջնահերթ պետք է նշել համաշխարհային պատերազմը, հեղափոխությունները, սոցիալական հակասությունները, ազգայնամոլությունը և ծայրահեղականությունը:

Համաշխարհային մշակույթի վրա բացասաբար անդրադարձան ամբողջատիրական համակարգերի հաստատումը, ֆաշիզմի տարածումը, բռնությունները, մտավորականության հետապնդումները և հալածանքները: Այդ պայմանները և մոտալուտ նոր պատերազմը ստիպեցին գիտության, գրականության, արվեստի հազարավոր ներկայացուցիչների Եվրոպայից հեռանալ ԱՄՆ:

Գրականությունը

Կանխազգալով ապագայի սոցիալական ցնցումները՝ բազմաթիվ ստեղծագործողներ, հատկապես գրողներն ու բանաստեղծները, ընկնում էին հոռետեսության և ծանձրույթի գիրկը: Այդ հանգամանքը այս կամ այն չափով իր կնիքն էր թողնում նրանց աշխարհայացքի վրա: Իրենց ստեղծագործություններում նրանք անդրադառնում էին հասարակության մեջ գոյություն ունեցող անարդարություններին, ստեղծագործող անհատի ճակատագրին:

Հանրահայտ Ռոմեն Ռոլանը գրեց մի շարք կենսագրական աշխատություններ ականավոր նկարիչների ու երաժիշտների մասին:

Անատոլ Ֆրանսը տպագրեց մի քանի հակաբուրժուական վեպեր: Ամերիկյան գրողներ Ֆրենկ Նորրիսը, Էպտոն Սինկլերը, Թեոդոր Դրայզերը, Ջոն Ստայնբեկը ստեղծեցին քննադատական ռեալիզմի խոշոր գործեր:

Բեռնարդ Շոուի գործերի շնորհիվ դրամատուրգիան դուրս բերվեց գաղափարական ու գեղարվեստական լայն ուղու վրա: Այդ ժանրում նորարարներ դարձան նորվեգացի Հենրիկ Իբսենը և գերմանացի Հերհարդտ Հաուպտմանը:

Հանրաճանաչ գրողներ Թոմաս Մանը և Ջորջ Հոլսուորդին դարձան այսպես կոչված ընտանեկան վեպերի հեղինակներ, որոնց միջոցով խարազանվում էին բուրժուական հարաբերությունները:

1920–ական թվականներին երևան եկավ երիտասարդ տաղանդավոր գրողների մի համաստեղություն՝ Էռնեստ Հեմինգուեյ, Էրիխ Մարիա Ռեմարկ, Ռիչարդ Օլդինգտոն, որոնք իրենց ստեղծագործություններում բողոք էին հայտնում Առաջին աշխարհամարտի ահավոր մարդկային սպանդի դեմ:

Այդ նույն տարիներին տպագրվում են գրական–գեղարվեստական ավանգարդի ուղղության ներկայացուցիչներ՝ գրողներ Ջ. Ջոյսի, Ֆ. Կաֆկայի, Մ. Պրուստի, Ա. Պլատոնովի և այլոց խոշոր գործերը:

Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքները, վիթխարի մարդկային զոհերը, և հետպատերազմյան շրջանի տնտեսական անկումը, սոցիալական ծանր վիճակը մեծապես ազդեցին միլիոնավոր մարդկանց հոգեվիճակի և մտածելակերպի վրա: Նախկին արժեքները, գլխավորապես եվրոպական, կորցրեցին իրենց գրավչությունն ու նշանակությունը մարդկանց աչքերում: Մարդիկ խոր հիասթափություն էին ապրում և նրանց մոտ առաջացել էր հոգեկան դատարկություն: Այս հոգեվիճակի և մտայնության արտացոլումը հանդիսացավ Օ. Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» աշխատությունը:

Արևմտյան գրականության մեջ երկար ժամանակ տիրապետող դարձավ պատերազմի և այսպես կոչված «կորուսյալ սերնդի» թեման: Այն իր գեղարվես-

տական արտացոլումը գտավ Էրիխ Ռեմարկի «Արևմտյան ճակատում անփոփոխ է», Ջեյմս Օլդինգտոնի «Հերոսի մահը», Էռնստ Հեմինգուեյի «Հրաժեշտ քեզ, զենք», Դոս Պասոսի «1919», Ռոբերտ Գրեյվսի «Հրաժեշտ այն ամենին, ինչ որ եղել է» և այլ գեղարվեստական գործերում:

Նոր ձևավորվող խորհրդային գրականության հիմնական թեման իշխանափոխության և քաղաքացիական պատերազմի հարցերն էին: Դրանց էին նվիրված Միխայիլ Շոլոխովի «Խաղաղ Դոն», Ալեքսեյ Տոլստոյի «Տառապանքի ուղիներով», Ալեքսանդր Ֆադեևի «Ջախջախում», Իսահակ Բաբելի «Հեծյալ բանակը» և այլ գեղարվեստական գործեր: Իսկ պոեզիայում (Վլադիմիր Մայակովսկի, Եղիշե Չարենց և այլն) տիրապետող էր հեղափոխական պաթոսը:

Հետպատերազմյան առաջին մի քանի տարիների հասարակական–քաղաքական վերելքը գրականության մեջ և արվեստում բերեց իրապաշտական ավանդույթների զորեղացում:

Գրական նոր գործերով հանդես եկան համաշխարհային ճանաչում գտած Թ. Մանը, Է. Ռեմարկը:

ԱՄՆ–ում շարունակում էին ստեղծագործել հանրաճանաչ գրողներ Ու. Ֆոլկները և Է. Հեմինգուեյը: Նրանք գրականության ասպարեզում արժանացան Նոբելյան մրցանակի:

Մոդեռնիստական գրականության մեջ առաջնային տեղ էին զբաղեցնում Ժան Պոլ Սարտրը և Ալբեր Քամյուն: Վերջինս 1957թ. արժանացավ Նոբելյան մրցանակի: 1964թ. Նոբելյան մրցանակ շնորհվեց նաև Սարտրին, որից, սակայն, գրողը հրաժարվեց:

1950–ական թվականների սկզբներից գրական կյանքի թատերաբեմ նորից դուրս եկան ավանգարդիստներ Է. Իոնեսկոն և Ս. Բեկեթը:

1960–80–ական թվականներին աշխարհում ամենակարդացվող հեղինակների շարքին էին պատկանում լատինաամերիկյան ավանգարդի ներկայացուցիչներ Խորխե Բորխեսը, Խուլիո Կորտասարը, Գաբրիել Գարսիա Մարկեսը:

Խորհրդային Միությունում, չնայած խիստ գրաքննությանը, արժեքավոր գործեր ստեղծեցին Ալեքսանդր Տվարդովսկին, Բորիս Պաստեռնակը, Ալեքսանդր Սոլժենիցինը, Իոսիֆ Բրոդսկին և ուրիշներ: Վերջին երկուսը, խորհրդային կառավարության որոշմամբ, արտաքսվեցին երկրից:

Արվեստը

Մեծ որոնումների մեջ էին նկարիչները, քանդակագործները և երաժիշտները: Նրանց չէին բավարարում հին, դասական արվեստի ձևերը և ոճերը: Սկիզբ են առնում նոր, ինչպես նաև զարգանում նախորդ շրջաններից եկող ուղղություններ: Դրանք բուռն վեճերի տեղիք են տալիս, ինչպես՝ աբստրակցիոնիզմը, կուբիզմը, ֆուտուրիզմը, սյուրռեալիզմը* և այլն:

1920–ական թվականներին մեծ տարածում և ժողովրդականություն է ձեռք բերում երաժշտության մեջ նոր ուղղություն հանդիսացող ջազը (այն ձևավորվել էր դեռևս 1900թ. ամերիկյան Նյու Օռլեան քաղաքում): Հետագա տարիներին տեղի ունեցավ ջազի հաղթարշավը աշխարհով մեկ, տալով այնպիսի դեմքեր, ինչպիսիք՝ Բենի Գուդմանը, Լուի Արմսթրոնգը, Էլլա Ֆիտցջերալդը և շատ ուրիշներ: Իսկ ԽՍՀՄ–ում մեծ հեղինակություն էին վայելում Լեոնիդ Ուտյոսովի, Օլեգ Լունդստրեմի, Արտեմի Այվազյանի և Էդի Ռոզների ջազային նվագախմբերը:

Հաստատուն քայլերով կյանք է մտնում կինոարվեստը, որն աննկարագրելի ժողովրդականություն է վայելում: Համր կինոյին, որի անգերազանցելի բարձունքը

մնաց Չարլի Չապլինը, փոխարինելու եկավ հնչյունային կինոն: Դրա առաջնեկի՝ «Ջազային երգիչը» ժապավենի ցուցադրումը կայացավ 1927թ.: Այդ նույն թվականին Բերտոլդ Բրեխտը Գերմանիայում իրականացրեց «Երեքգրոշանոց օպերայի» բեմադրությունը: Այդ բնագավառում փայլեցին նաև հանրաճանաչ Ա. Դիդը, Մ. Լինդերը, Փ. Նեգրին, Մ. Պիքֆորդը: Կինոն դարձավ զանգվածային արվեստ:

Երկրորդ աշխարհամարտից հետո նորից վերելք ապրեց կինեմատոգրաֆիան: Նեոռեալիզմի գլուխգործոցներ դարձան իտալական կինոռեժիսորներ Ռ. Ռոսելինիի, Վ. դե Սիկայի, Լ. Վիսկոնտիի, Ջ. դե Սանտիսի նկարահանած ֆիլմերը: Արվեստի այդ բնագավառում փայլուն գործեր ստեղծեցին Իտալիայի, Լեհաստանի և Ֆրանսիայի կինեմատոգրաֆիստները:

XX դարի սկզբներին գեղանկարչության մեջ առաջնային ուղղություններից մեկը դարձավ և հետագա տարիներին զարգացում ապրեց կուբիզմը: Այդ ուղղության հիմնադիրներն էին Պաբլո Պիկասոն և Ժորժ Բրակը: Կուբիզմի ներկայացուցիչները աշխարհը պատկերում էին պարզ երկրաչափական կառուցվածքների ձևով՝ աղավաղելով իրական առարկաների պատկերները:

XX դարի առաջին կեսի կերպարվեստի բնորոշ ուղղություններից մեկն էլ էքսպրեսիոնիզմն է (լատ. expressio՝ արտահայտչականություն), որին բնորոշ է իրական առարկաների ծայրահեղ սուբյեկտիվ ընկալումը, ձևախեղված պատկերումը և գունային պայմանականությունը: Այդ ուղղության ներկայացուցիչներից են գերմանացի նկարիչներ է. Կիրխները և է. Նոլդիեն:

Ավանգարդիստական ուղղություններից է նաև Իտալիայում ձևավորված ֆուտուրիզմը (լատ. futurum՝ ապագա բառից), որի տիպիկ ներկայացուցիչներից էին Գ. Սևերինին և Ու. Բոչչոնին: Ֆուտուրիստները ձգտում էին գեղանկարչության և քանդակագործության մեջ արտահայտել ժամանակի և դրա հետ կապված շարժման գաղափարը: Ֆուտուրիստների ստեղծագործության մեջ դա արվում էր մեխանիկորեն. օրինակ՝ վազող ձին պատկերվում էր ոչ թե չորս, այլ տասներկու ոտքով՝ շարժման տարբեր փուլերի «համատեղման» հետևանքով:

Գրեթե նույն շրջանում առաջ է գալիս վերացականությունը (աբստրակցիոնիզմ): Վերացական նկարչությունը գույների և ձևերի համադրություն է՝ բոլորովին զրկված առարկայությունից: Այդ ուղղության հիմնադիրներից է Վ. Կանդինսկին: Նրա կարծիքով՝ նկարի մեջ առաջնայինը ոչ թե թեման է, այլ գունային համադրությունները, գունային սիմվոլիկան: Այդ ուղղությունը լայն տարածում գտավ հատկապես ԱՄՆ–ում:

XX դարի խոշոր ավանգարդային ուղղություններից է սյուրռեալիզմը (ֆրանսերեն surrealism՝ գերռեալիզմ): Նրանք առարկաներին տալիս էին իրականության պատրանք, միավորում իրականը և ոչ իրականը: Սյուրռեալիզմի խոշոր ներկայացուցիչներն են Ս. Դալին, Խ. Միրոն և Ի. Տանգին:

Լատինական Ամերիկայի արվեստում տեղի ունեցած խոշոր փոփոխությունները անմիջականորեն կապված էին մեքսիկական «Մեծ եռյակի» գործունեության հետ: Դ. Սիկեյրոսը, Դ. Ռիվերան, Խ. Օրոսկոն ստեղծեցին մոնումենտալ գեղանկարչության նմուշներ:

Հետպատերազմյան երկու տասնամյակների ընթացքում կերպարվեստում առաջատար դեր էին կատարում Նյու Յորքի ու եվրոպական դպրոցները: Առաջին դպրոցի փայլուն ներկայացուցիչներ են Ջ. Փոլոքը, Արշիլ Գորկին և այլք: Եվրոպական դպրոցը հիմնականում ներկայանում է մեզ ծանոթ վարպետներով՝ Պ. Պիկասո, Ա. Մատիս, Ֆ. Լեժե, Ս. Դալի, Մ. Շագալ:

Պատերազմից հետո գեղարվեստական որոնումները հանգեցրին նոր ուղղությունների առաջացմանը: 1960–ական թվականներին ամերիկյան էքսպրեսիոնիզմին որպես հակակշիռ ստեղծվեց պոպ–արթը: Նրա կողմնակիցների կարծիքով՝ ամեն իր

կարող է արվեստի առարկա լինել: Այդ առարկայական արվեստն ուղղված էր զանգվածային հանդիսատեսին: Նշված ուղղության առավել հայտնի վարպետներ են Ռ. Ռաուշենբերգը, Ջ. Ջոնսը, Կ. Օլդենբուրգը:

Նոր ավանգարդային ուղղություն է հիպերռեալիզմը, որն առաջացել է 1960–ական թվականներին: Ծագելով պոպ–արթից՝ այն ձգտում է պատկերի լուսանկարչական ճշմարտացիության: Այդ ուղղությունը ներկայացնում են Չ. Քլոզը, Ֆ. Ներտչը, Ժ. Մոնորին:

1960–ական թվականների կեսերից ասպարեզ եկավ օպ–արթը (օպտիկական արվեստը): Օգտագործելով տարբեր բարդ սարքավորումներ՝ օպտիկական արվեստի ներկայացուցիչները ստեղծում էին շարժման և ռիթմի պատրանք, որի շնորհիվ հասնում էին տեսողական՝ գունային և ռիթմային տարբեր էֆեկտների: Խոշոր ներկայացուցիչներից է Վ. Վազարելին:

Նոր ավանգարդային երևույթ է նաև կոնցեպտուալիզմը, որը ժխտում է տեսողական ինֆորմացիան և արվեստը դիտում որպես հաղորդակցություն:

1970–80–ական թվականներին տեղի է ունենում ճարտարապետական մտքի վերակողմնորոշում: Այդ հետմոդեռնիստական ուղղության ներկայացուցիչներն են աշխարհաճանաչ ճարտարապետներ Լը Կորբյուզիեն, Վան դեր Ռոեն, Վ. Գրոպիուսը, Ֆ. Ռայթը:

Նույն այդ ժամանակահատվածում ճանաչում է գտնում հայտեք (բարձր տեխնոլոգիա) ճարտարապետական ուղղությունը, որը շինարարության ժամանակ օգտագործում է տեխնիկական միջոցներ և տարբեր տեսակի կառուցվածքներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նորագույն շրջանում գրականության և արվեստի վրա ի՞նչ գործոններ էին ազդում: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր դրանցից գլխավորը:

2. Թվարկե՛ք XX դարի գրականության տիրապետող ուղղությունները: Այդ շրջանի հայտնի հեղինակների ի՞նչ ստեղծագործությունների հետ եք ծանոթ: Պատրաստե՛ք մի փոքրիկ ելույթ որևէ հեղինակի և նրա ստեղծագործության մասին:

3. Աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք գրական տարբեր ուղղությունները, նշանավոր հեղինակների, նրանց ստեղծագործությունները: Ի՞նչ ներդրում են ունեցել հայ հեղինակները գրականության ասպարեզում:

4. Թվարկե՛ք XX դարի արվեստի տիրապետող ուղղությունները: Հայտնի հեղինակների ի՞նչ ստեղծագործությունների հետ եք ծանոթ: Պատրաստե՛ք մի փոքրիկ ելույթ որևէ հեղինակի և նրա ստեղծագործության մասին:

5. Համաշխարհային ճանաչում ունեցող ի՞նչ հայ արվեստագետներ գիտեք՝ ա) կերպարվեստի, բ) երաժշտության, դ) կինոյի բնագավառում:

§ 5. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻՑ ԴԵՊԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նորագույն շրջանի մեծ մասում՝ հատկապես սառը պատերազմի դարաշրջանում, գրականությունը և արվեստը գաղափարական–կուսակցական հողի վրա բաժանվում են սոցիալիստական և արևմտյան կամ բուրժուական արվեստի ու հակադրվում միմյանց:աշխարհը բաժանված էր երկու միմյանց հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների՝ սոցիալիստական և կապիտալիստական: Այդ հանգամանքն իր խոր կնիքն էր դրել նաև մշակույթի բոլոր ճյուղերի վրա: Ուստի՝ անհնար է այդ ժամանակահատվածի համար խոսել մեկ ընդհանուր մշակույթի մասին, քանի որ այն երկփեղկված էր երկու՝ սոցիալիստական և արևմտյան մշակույթի: Դրանցից յուրաքանչյուրը կատարում էր իրեն հատկացված դերը հասարակական–մշակութային կյանքում:

Սոցիալիստական մշակույթը

Սոցիալիստական մշակույթը խարսխված էր սոցիալիստական ռեալիզմի սկզբունքի վրա, որը ձևավորվեց դեռևս 1930–ական թվականների կեսերին և որի ակունքների մոտ կանգնած էր Մաքսիմ Գորկին: Այս սկզբունքը տիրապետող դարձավ սկզբում ԽՍՀՄ–ում, իսկ հետագայում՝ նաև Արևելյան Եվրոպայի (Լեհաստան, ԳԴՀ, Հունգարիա, Չեխոսլովակիա, Ռումինիա, Բուլղարիա) և Ասիայի (Չինաստան, Վիետնամ, Լաոս, Կամբոջա, Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն) սոցիալիստական երկրներում, ինչպես նաև Կուբայում:

Սոցիալիստական ռեալիզմը գաղափարայնացված տեսություն էր՝ հիմնված կոմունիստական կուսակցության գաղափարախոսության վրա: Այն կոչված էր գունազարդելու սոցիալիստական իրականությունը, փառաբանելու սոցիալիզմի «համաշխարհային պատմական նվաճումները» և կոմունիստական առաջնորդների «հանճարեղությունն ու անսխալականությունը»: Այդ մեթոդի հետևորդներին արգելված էր արտացոլել կյանքի ստվերոտ կողմերը, սոցիալ–քաղաքական և ազգային–էթնիկական առկա խոր հակասությունները: Սոցիալիստական ռեալիզմը պարտադրում էր որպես հակառակորդ դիտել արևմտյան մշակույթը, չտեսնել որևէ լուսավոր շող նրանում, բացառությամբ այն արվեստագետների, որոնք կա՛մ արևմտյան կոմունիստական կուսակցությունների անդամ էին, կա՛մ նրանց համակիրներ (Լուի Արագոն, Թեոդոր Դրայզեր և այլն): Սոցիալիստական ռեալիզմը մեծ հարված հասցրեց արվեստի և գրականության զարգացմանը սոցիալիստական երկրներում՝ կաշկանդելով տաղանդների դրսևորմանը:

Եվ, այնուհանդերձ, մշտապես մի ներքին դժգոհություն է եղել արվեստագետների հոգում, որոնք ձգտել են ազատ ստեղծագործության և պարտադրված արհեստական կաղապարների վերացման: Սակայն զգոն իշխանությունները միշտ ճնշել են նման դրսևորումները: Այդպես վարվեցին խորհրդային իշխանությունները գրողների և կոմպոզիտորների հետ 1940–ական թվականների վերջերին և նկարիչների հետ՝ 1960–ական թվականներին: Իսկ ավելի համառները, որոնք ստացան «այլախոհ» (դիսիդենտ*) մականունը, կա՛մ արտաքսվում էին երկրից (Ի. Բրոդսկի, Ա. Սոլժենիցին, Ա. Գալիչ և այլն), կա՛մ որպես «հոգեկան» հիվանդներ՝ բռնի ուղարկվում փակ հոգեբուժարաններ՝ «բուժման»:

Չնայած այս իրավիճակին, այնուամենայնիվ, զարգանում էր մշակույթը: Տաղանդավորները կարողանում էին, թեկուզ և սոցիալիստական ռեալիզմի շղարշի ներքո, ստեղծել արվեստի ուշագրավ գործեր, որոնցում արտացոլվում էր գոյություն ունեցող իրականությունը:

Գրականության մեջ ավագ սերնդի՝ Մ. Շոլոխովի, Մ. Շահինյանի, Ա. Ֆադեևի, Ի. Էրենբուրգի, Ա. Իսահակյանի, Ա. Ախմատովայի, Կ. Գամսախուրդիայի, Պ. Տիչինայի և այլոց կողքին ստեղծագործում էին Կ. Սիմոնովը, Ա. Տվարդովսկին, Վ. Կավերինը, Դ. Գրանինը, Յու. Գերմանը և շատ ուրիշներ:

1960–ական թվականներին, ձնհալի շրջանում հայտնվեց երիտասարդ գրողների, հատկապես բանաստեղծների մի բույլ՝ Ե. Եվտուշենկո, Յու. Վոզնեսենսկի, Բ. Օկուջավա, Ռ. Ռոժդեստվենսկի, Բ. Ախմադուլինա, Պ. Սևակ և ուրիշներ: Նրանք համարձակորեն առաջ էին քաշում սոցիալ–քաղաքական հարցեր և շատ հաճախ հակասության մեջ մտնում տիրապետող քաղաքական գծի հետ:

XX դարի երաժշտական կյանքի վրա իրենց անջնջելի կնիքն են դրել այնպիսի հանճարեղ կոմպոզիտորներ, ինչպիսիք են Ս. Պրոկոֆևը, Դ. Շոստակովիչը և Ա. Խաչատրյանը: Կերպարվեստի բնագավառում Մ. Սարյանի, Դեյնեկայի, Կոնենկովի, Ե. Քոչարի, Է. Նեիզվեստնու և այլ մեծերի կողքին հայտնվեց շնորհաշատ նկարիչների և քանդակագործների մի ամբողջ սերունդ: Թատերական արվեստում իր թարմությամբ և նորույթով փայլատակեց Բ. Բրեխտի թատերական դպրոցը (ԳԴՀ), իր ինքնատիպ որոնումներն էր շարունակում Մոսկվայի Ե. Վախթանգովի անվան թատրոնը: Շնորհիվ Ս. Փարաջանովի, Ա. Տարկովսկու՝ նոր բարձունքների հասավ կինոարվեստը:

Արևմտյան մշակույթը

Տիրապետող էին զանազան «իզմեր» և ուղղություններ, որոնք գալիս էին դեռևս XX դ. 10–20–ական թվականներից: Արևմտյան արվեստում շատ ուժեղ էին աբստրակցիոնիզմի (վերացականության) դիրքերը՝ իր տարատեսակներով, օրինակ՝ կուբիզմը: Կուբիզմի կարկառուն ներկայացուցիչն էր Պաբլո Պիկասոն: Իսկ սյուրռեալիզմի անմրցելի հեղինակությունն էր իսպանացի Սալվադոր Դալին: XX դ. կեսերին մեծ տարածում գտավ ֆրանսիացի գրող և փիլիսոփա Ժան Պոլ Սարտրի հիմնած ուղղությունը, որը ստացավ էքզիստենցիալիզմ անվանումը: Ըստ այդ տեսության՝ մարդն իր էությամբ միայնակ է և ազատ՝ ընտրելու իր կյանքի ուղին:
Արևմտյան արվեստի մեջ կենտրոնական դարձավ անհատի ազատության և իրավունքների թեման:

Այս շրջանում եվրոպական գրողների (Բազեն, Բյոլ, Դյուրեման և այլն) կողքին հայտնվեցին մի շարք փայլուն գրողներ ամերիկյան մայրցամաքում, ինչպես՝ Ֆոլկները, Հեմինգուեյը, Սարոյանը, Ստեյնբեկը՝ ԱՄՆ–ում, Ներուդան՝ Չիլիում, Ամադուն՝ Բրազիլիայում, Մարկեսը՝ Կոլումբիայում և այլն:

Մեծ տարածում ստացավ ջազային, ապա նաև ռոք երաժշտությունը, որը ԱՄՆ–ից հեղեղի նման տարածվեց ամբողջ աշխարհով մեկ: Հոլիվուդը դարձավ կինոինդուստրիայի համաշխարհային կենտրոն: Միջազգային մեծ ճանաչում ստացան կինոռեժիսորներ Ս. Կուբրիկը, Ռ. Մամուլյանը, Ս. Կրամերը, Ս. Սպիլբերգը, Ֆ. Կոպպոլան և ուրիշներ: Մեծ հռչակ ձեռք բերեց իտալական կինոդպրոցը՝ Չ. Չավատինի, Ռ. Ռոսսելինի, Դե Սիկա, Լ. Վիսկոնտի, Մ. Անտոնիոնի, Ֆ. Ֆելլինի, Բ. Բերտոլուչի և այլն: Ճապոնական կինոյին մեծ հռչակ բերեցին Ակիրո Կուրոսավայի, իսկ շվեդականին՝ Ի. Բերգմանի գեղարվեստական ֆիլմերը:

Կինոարվեստի երկնակամարում փայլատակեցին այնպիսի աստղեր, ինչպիսիք էին՝ Գրետա Գարբոն, Մերիլին Մոնրոն, Մառլոն Բրանդոն, Շերը (Շերիլին Սարգսյան) (ԱՄՆ), Աննա Մանյանին, Սոֆի Լորենը, Մարչելլո Մաստրոյանին (Իտալիա), Ժան Գաբենը, Բրիջիտ Բարդոն (Ֆրանսիա), Վիվիան Լին, Չարլ Լաֆտոն (Անգլիա) և այլն:
XX դարում ձևավորվեց երգարվեստի նոր ոճ, որի ամենափայլուն ներկայացուցիչները հանդիսացան էդիտ Պիաֆը, Շառլ Ազնավուրը, Իվ Մոնտանը՝

Ֆրանսիայում, Ֆրենկ Սինատրան, Էլվիս Փրեսլին՝ ԱՄՆ–ում, Էլթոն Ջոնը՝ Անգլիայում և այլն:

Մշակույթի զարգացման միտումները XXI դարի սկզբին

XX դարի վերջերից ակնհայտ դարձավ ոչ միայն տնտեսության, այլև մշակույթի գլոբալացումը: Դա պայմանավորված էր կապի նոր միջոցների, հեռուստատեսության ստեղծման և զարգացման, պետությունների միջև անհաղթահարելի թվացող պատնեշների խորտակման, ճանապարհորդությունների և շփումների ակտիվացման հետ: Դրա շնորհիվ աշխարհի որևէ կետում առաջացած գաղափարները, արվեստի նորույթները, ձևերը և ոճերն արագորեն հասանելի են դառնում աշխարհի մյուս մասերի ժողովուրդներին: Մեծացել են տարբեր մշակույթների փոխազդեցության հնարավորությունները և սահմանները: Աճել են բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների ստեղծած մշակութային արժեքները մշակույթի համաշխարհային գանձարանում ներդնելու հնարավորությունները:

Աշխարհում տեղի ունեցող սրընթաց փոփոխությունները, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային բուռն գործընթացները անհանգստություն են առաջացրել մարդկության ու երկրագնդի ապագայի վերաբերյալ: Գլոբալ այդ խնդիրների լուծմամբ զբաղվում են աշխարհի հարյուրավոր գիտնականներ, քաղաքական գործիչներ, գործարարներ:

Այդ բնագավառում իր խնդիրներն ունի նաև մշակույթը: Գլոբալացման մասնագետները փորձում են գտնել մի այնպիսի մոդել, որը հնարավորություն կտա մերձեցնել տարբեր ժողովուրդների մշակույթները: Ժամանակակից ուսումնասիրությունների շնորհիվ ապացուցվել է, որ մեկ քաղաքակթության մշակութային արժեքները չեն կարող հավակնել բացարձակ և համատարած կիրառության:

Ճապոնիայի, Չինաստանի, Հարավային Կորեայի, արաբական աշխարհի զարգացման առանձնահատկությունները վառ ապացույց են, որ Արևմուտքի մշակութային արժեքները ի զորու չեն խախտելու Արևելքի երկրների՝ դարերի խորքից եկող ավանդույթները:

Համընդհանուր մշակույթի ձևավորման և զարգացման այս միտումներն, ամենայն հավանականությամբ, տիրապետող կլինեն XXI դարում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք սոցիալիստական մշակույթի բնութագրական կողմերը: Ո՞ր երկրներում այն գոյություն ուներ կամ ունի:

2. Որո՞նք էին արևմտյան մշակույթի կարևոր ձեռքբերումները: Համեմատե՛ք այս երկու մշակույթները, նշե՛ք նմանություններն ու տարբերությունները:

3. Որո՞նք են մշակույթի զարգացման նոր միտումները XXI դարի սկզբին: Մշակութային կյանքի համաշխարհայնացումը կհանգեցնի՞ արդյոք տարբեր ազգերի և ժողովուրդների մշակույթների համահարթեցմանը, թե՞ ոչ. հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ

Ազատականացում (լիբերալացում, լատ. *ազատ* բառից) — Այստեղ՝ ազատ մրցակցության և շուկայական տնտեսության սահմանափակումների վերացում, պետական վերահսկողության թուլացում արտադրության, առևտրի և սպառման ոլորտներում, ապրանքների գների, աշխատավարձի, տարադրամի արժեքի, տոկոսադրույքի չափերի նկատմամբ և այլն:

Ազատ տնտեսական գոտի — Որևէ պետության մեջ առանձնացված տարածք, որտեղ այդ պետության և օտարերկրյա ձեռնարկատերերին ու ներդրողներին թույլատրվում է ազատորեն ծավալել տնտեսական (արտադրություն, առևտուր, գույքի ձեռքբերում և այլն) գործունեություն: Դրա համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ օրենսդրական, հարկային, վարձակալման և այլն: Օրինակ՝ Չինաստանում Շանհայը և այլ քաղաքներ դարձել են ***ա. տ. գոտի:***

Ազգայնացում — Տնտեսության որոշ ճյուղերի, մասնավոր ձեռնարկությունների, հողի և այլ մասնավոր սեփականության վերածում պետական սեփականության: Դա կարող է կատարվել առանց փոխհատուցման, ինչպես նաև լրիվ կամ մասնակի փոխհատուցման ճանապարհով:

Ազգերի բրիտանական համագործակցություն — Մեծ Բրիտանիայից և նրա նախկին տիրույթներից՝ բրիտանական գաղութային կայսրության փլուզման արդյունքում կազմված միջպետական միավորում: Սկսել է ձևավորվել 1947 թվականից: Դրա մեջ են մտել նաև նախկին դոմինիոնները: Ընդգրկում է 50–ից ավելի պետություն:

Ամբողջատիրություն (տոտալիտարիզմ, լատ. *ամբողջ, լիակատար* բառից) — Բռնապետական իշխանության ձև. բնորոշ կողմերն են՝ սահմանադրական իրավունքների և ազատությունների փաստացի վերացումը, հասարակության լիակատար ենթարկումը իշխանության շահերին և համատարած վերահսկողության հաստատումը բոլորի և ամեն ինչի նկատմամբ, քաղաքական ընդդիմության և այլախոհների հանդեպ բռնությունների և ճնշումների լայնածավալ կիրառումը:

Այլախոհ (դիսիդենտ, լատ.՝ *չհամաձայնվող*) — Այստեղ՝ մարդ, որը համաձայն չէ և պայքարում է իր երկրում տիրապետող գաղափարախոսության դեմ: XX դ. 60–80–ական թվականներին այդպես էին անվանում սոցիալիստական երկրների այն քաղաքացիներին, ովքեր բացեիբաց քննադատում էին պետական գաղափարախոսությունը և պայքարում ժողովրդավարական ու ազգային իրավունքների հաստատման համար:

Անհատի պաշտամունք — Մեկ մարդու դերի բարձրացումը, փառաբանումը, կենդանության օրոք նրան պատմական զարգացման ընթացքի վրա չափազանցված ազդեցություն վերագրելը: Երևույթը բնորոշ է ամբողջատիրական երկրներին:

Անձնատվություն (կապիտուլյացիա, լատ. *պայմանավորվել* բառից) — Զինված ուժերի ռազմական դիմադրության դադարեցում: Անվերապահ ***ա.*** կնքվում է պատերազմում լիակատար պարտություն կրած հակառակորդի հետ այն պայմաններով, որ թելադրում է հաղթող կողմը: Պատերազմում պարտված կողմի ռազմական տեխնիկան, ունեցվածքը, ամրությունները, հենակայանները անցնում են հակառակորդի ձեռքը, իսկ զինվորական անձնակազմը հանձնվում է որպես ռազմագերի: Օրինակ՝ Գերմանիայի և Ճապոնիայի ***ա.ա.*** 1945 թ.:

Աշխարհաքաղաքացիություն (կոսմոպոլիտիզմ, հուն. *աշխարհ և քաղաքացի* բառերից) — Գաղափարաքաղաքական հոսանք, որ քարոզում է անտարբեր վերաբերմունք հայրենիքի և իր ժողովրդի հանդեպ, հրաժարում ազգային ավանդույթներից, մշակույթից, ազգային պետությունից կամ ազգային իրավունքների համար պայքարից՝ հանուն ինչ–որ «համաշխարհային պետության» ստեղծման և «համաշխարհային քաղաքացիության» հաստատման:

Արդիականացում (մոդեռնիզացիա, ֆրանս. *արդի, ժամանակակից* բառից) — Ժամանակի տնտեսության և գիտության զարգացման ամենաբարձր մակարդակին համապատասխան հասարակական կյանքի բոլոր բնագավառների կատարելագործում, զարգացման նոր աստիճանի ապահովում:

Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլ — Ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսից մինչև 1918 թվականը՝ Առաջին աշխարհամարտի ավարտը: Այս փուլում տեղի են ունեցել՝ գիտության և տեխնիկայի նվաճումների հիման վրա արտադրության վերազինում, բաժնետիրական ընկերությունների և մոնոպոլիաների (մենատիրություններ) առաջացում, համաշխարհային շուկայի և գաղութային համակարգի ձևավորում, զարգացած երկրներում ժողովրդավարության խորացում, զանգվածային կրթության համակարգի արմատավորում և այլն:

Արդյունաբերական հեղաշրջում — Արտադրության մեքենայացման գործընթաց, որն սկսվել է XVIII դարի 60–ական թվականներից: Մանուֆակտուրային փոխարինելու եկավ մեքենագործարանային արտադրությունը: Գիտության և տեխնիկայի նվաճումներն սկսեցին լայնորեն ներդրվել արտադրության մեջ՝ կյանքի կոչելով նոր նյութեր, սարքավորումներ, էներգիայի աղբյուրներ:

Բռնազավթում (անեքսիա, լատ.՝ *միացում*) — Ագրեսիայի տարատեսակ. մի պետության կողմից մյուս պետության ամբողջ տարածքի (կամ դրա մի մասի) բռնի միավորում կամ զավթում: Բռնազավթում է կոչվում նաև որևէ ժողովրդի բռնի պահելը օտար պետության սահմաններում:

Բռնապետություն (դիկտատուրա, լատ.՝ *անսահմանափակ իշխանություն*) — Քաղաքական համակարգ, որին բնորոշ են կառավարման ոչ ժողովրդավարական (բռնի, ուժային) մեթոդները: Դրա մի տարատեսակն է *պրոլետարիատի դիկտատուրան.* ըստ մարքսիստական ուսմունքի՝ բանվոր դասակարգի քաղաքական իշխանությունը, որը հաստատվում է սոցիալիստական հեղափոխության հաղթանակի արդյունքում:

Գաղափարախոսություն — Գաղափարների և հայացքների համակարգ. արտահայտում է իրականության հանդեպ հասարակության տարբեր խավերի կամ ուժերի վերաբերմունքը, նրանց արմատական շահերը, մտայնությունը և պահանջները:

Գաղութ — Այստեղ՝ պատմության նոր և նորագույն շրջանում որևէ օտար պետության իշխանության ներքո գտնվող երկիր կամ տարածք, որը զրկված էր քաղաքական ու տնտեսական ինքնուրույնությունից: Այն կառավարվում էր գաղութատեր պետության (մետրոպոլիա, հուն. *մայր և քաղաք* բառերից) կողմից պարտադրված հատուկ վարչաձևի միջոցով:

Գերիշխանություն (հեգեմոնիա, հուն.՝ *առաջնորդություն, ղեկավարություն*) — Որևէ պետության, քաղաքական ուժի կամ միության ղեկավար, գերիշխող դերը մյուսների նկատմամբ:

Գիտատեխնիկական հեղափոխություն (ԳՏՀ) — Գիտության և տեխնիկայի լայնածավալ արմատական առաջընթացը, որի արդյունքում գիտությունը, արտադրությունը և հասարակության մնացած ոլորտները որակական մեծ թռիչք են ապրում, զարգանում:

Դեկրետ (լատ.՝ *որոշում, կարգադրություն*) — Այստեղ՝ Խորհրդային Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմինների ընդունած օրենքների անվանումը (դեկրետ հաշտության մասին և այլն):

Դիմադրության շարժում — Երկրորդ աշխարհամարտի տարիներին ծավալված ազգային–ազատագրական, հակաֆաշիստական շարժում: Ծագել է ֆաշիստների կողմից բռնազավթված եվրոպական երկրների տարածքում, այն ընդգրկել է բնակչության բոլոր խավերը, քաղաքական տարբեր հայացքներ ունեցող մարդկանց:

Դոկտրինա (լատ.՝ *ուսմունք, սկզբունք*) — Այստեղ՝ քաղաքական կամ տեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ (օրինակ՝ Թրումանի դոկտրինա, ռազմական դոկտրինա):

Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ) — Ազգաբնակչությանը ամենատարբեր բնույթի տեղեկատվության հաղորդման միջոցների համակարգ: Տեղեկատվության հաղորդումն իրականացվում է տպագրական, էլեկտրոնային, տեխնիկական, պատկերային (մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, համացանց, կինո) և այլ միջոցներով:

Թեոկրատական պետություն (հուն. *աստված և իշխանություն* բառերից) — Պետություն, որտեղ քաղաքական իշխանությունը գտնվում է հոգևորականության և նրա առաջնորդի ձեռքում:

Ինդուստրացում, արդյունաբերականացում — Արդյունաբերության մեջ և տնտեսության մյուս ճյուղերում խոշոր մեքենայական արտադրության ներդրման գործընթացը: Դրա արդյունքում ծանր արդյունաբերությունը դառնում է գերակշռող մյուս ճյուղերի համեմատ: Այս քաղաքական կուրսն իրականացվել է ԽՍՀՄ–ում 1920–ական թթ. երկրորդ կեսից, իսկ սոցիալիստական և զարգացող մի շարք երկրներում՝ երկրորդ աշխարհամարտից հետո:

Ինքնիշխանություն (սուվերենություն) — Պետության անկախ, ինքնուրույն լինելը արտաքին և ներքին գործերում: Ազգային ***ի.*** նշանակում է սոցիալ–քաղաքական կարգի ազատ ընտրության իրավունք, տնտեսական անկախություն, տարածքային ամբողջականության ապահովում և այլն:

Կոալիցիոն կառավարություն (լատ. *միանալ* բառից) — Տարբեր կուսակցությունների միջև կայացած համաձայնության արդյունքում նրանց ներկայացուցիչներից կազմված միացյալ կառավարություն:

Կոլեկտիվացում — Այստեղ՝ ԽՍՀՄ–ում և սոցիալիստական մյուս երկրներում իրականացված գյուղատնտեսության բռնի կամ կամավոր մեթոդներով վերափոխումը, տնտեսության վարման կոլեկտիվ ձևի հաստատումը. մասնավոր գյուղացիական տնտեսությունները լիովին կամ գրեթե ամբողջությամբ վերացվում են, գերիշխում են կոլեկտիվ տնտեսություններ:

Կոմունիստական ինտերնացիոնալ (Կոմինտերն) — Տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների միջազգային կազմակերպություն. գործել է 1919–1943 թթ.: Գործունեության գլխավոր նպատակն էր իրականացնել համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն:

Կոոպերացիա (լատ.՝ *համագործակցություն*) — ա) Արտադրության և աշխատանքի կազմակերպման ձև, որը հիմնվում է խմբային սեփականության վրա: բ) Կամավոր հիմունքներով ստեղծված ընկերություն, որն օգնում է իր անդամներին արտադրություն, իրացում, սպառում իրականացնելու, վարկ ձեռք բերելու և այլ հարցերում:

Հակահիտլերյան միություն — Երկրորդ աշխարհամարտի տարիներին Գերմանիայի ու նրա դաշնակիցների դեմ պայքարող պետությունների և ժողովուրդների միություն: Պատերազմի ավարտին դրա կազմում կար 50–ից ավելի պետություն: Կոալիցիայի միջուկը «Մեծ եռյակն» էր՝ ԽՍՀՄ–ը, ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան:

Հակակոմինտերնյան պակտ — Գերմանիայի և Ճապոնիայի միջև 1936 թ. նոյեմբերի 25–ին Բեռլինում կնքված պայմանագիր (պակտ): Պաշտոնապես պայմանագրի նպատակ էր հռչակվել Կոմինտերնի դեմ համատեղ պայքարը: Հետագայում պակտին միացան Իտալիան, Հունգարիան, Իսպանիան և այլ պետություններ: Արդյունքում՝ վերջնականապես ձևավորվեց ֆաշիստական և ռազմամոլ երկրների ագրեսիվ խմբավորումը, որը ձգտում էր հասնել համաշխարհային գերիշխանության:

Համաշխարհայնացում (գլոբալացում, անգլ. և ֆր. *համընդհանուր* բառից) — Արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնականացման գործընթաց: Դա պայմանավորված է համընդհանուր հիմնախնդիրների (բնապահպանական, ժողովրդագրական, տնտեսական, մշակութային և այլն) համատեղ լուծման անհրաժեշտությամբ:

Հեղափոխություն (լատ.՝ *բեկում, հեղաշրջում*) — Հասարակության քաղաքական, սոցիալ–տնտեսական կառուցվածքի և մշակութային կյանքի արմատական, որակական փոփոխություն: Որպես կանոն՝ հեղափոխություններն ուղեկցվում են փոփոխություններ իրականացնողների կողմից գործադրվող բռնությամբ և բնակչության զանգվածային ելույթներով:

Հռենոսի ապառազմականացված գոտի — Վերսալյան պայմանագրով որոշված գոտի Գերմանիայի տարածքում: Հռենոս գետից արևմուտք ընկած տարածքը 15 տարով ռազմակալեցին Անտանտի տերությունների զորքերը, իսկ գետի արևելյան ափին ընկած տարածքը՝ 50 կմ լայնությամբ, հայտարարվեց ապառազմականացված գոտի: Այսինքն՝ Գերմանիան իրավունք չուներ այդտեղ կառուցելու ամրություններ, պահելու զորքեր, անցկացնելու զինավարժություններ և այլն:

Ձեռնարկատիրություն — Գործունեության տեսակ, որի դեպքում անհատը (ձեռնարկատերը) միջոցներ, կապիտալ է ներդնում որևէ գործի մեջ (արտադրություն, առևտուր և այլն) շահույթ ստանալու նպատակով:

Մանդատ (լատ.՝ *հանձնարարություն*) — Այստեղ՝ կառավարման ձև, գաղութային կախվածության տարատեսակ. առաջացել է Առաջին աշխարհամարտից հետո: Ազգերի լիգան մանդատ էր տալիս արևմտյան որևէ զարգացած երկրի՝ Գերմանիայի և Օսմանյան կայսրության նախկին գաղութները կամ ենթակա երկրները կառավարելու համար:

Միասնացում (ինտեգրում, լատ.՝ *վերականգնում*) — Տնտեսական կյանքի միջազգայնացման, միասնացման նոր, բարձրագույն ձև. առաջացել է Երկրորդ աշխարհամարտից հետո: Ազգային տնտեսությունների միահյուսման և համաձայնեցված միջպետական տնտեսական քաղաքականության իրականացման գործընթաց է: Միասնացման օրինակ է նաև համագործակցության այլ ձևերի հաստատումը (ՆԱՏՕ, ԱՊՀ, Եվրամիություն և այլն):

Մշակութային հեղափոխություն — Այս հասկացությունը ներմուծվել է Վ. Լենինի կողմից՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի մշակույթի զարգացման նոր փուլը նշելու համար: Այն սոցիալիստական վերափոխումների լենինյան ծրագրի բաղկացուցիչ մասերից էր: Դրա նպատակն էր՝ ժողովրդական լուսավորության նոր համակարգի ստեղծումը, սոցիալիստական մտավորականության ձևավորումը, մարքսիստական գաղափարախոսության հաստատումը, սոցիալիստական մշակույթի ստեղծումը, կենցաղի վերափոխումը: Իրականում այն ծառայեց ղեկավարող բոլշևիկյան կուսակցության շահերին, մշակույթը քաղաքականացվեց, սակայն տվեց նաև դրական արդյունքներ:

Մոնոպոլիա (մենատիրություն) — Ձեռներեցների միավորում, որն իր ձեռքն է առնում արտադրության այս կամ այն բնագավառը: Իրենք են որոշում արտադրության պայմանները և ապրանքի շուկայական գները: Մոնոպոլիաների ի հայտ գալով խախտվեց ազատ մրցակցությունը՝ ազատական տնտեսության կարևորագույն սկզբունքներից մեկը: Շատ պետություններ, աշխատելով պաշտպանել մանր և միջին արտադրողների շահերը, կիրառում են հակամենատիրական օրենքներ:

Նէպ (նոր տնտեսական քաղաքականության ռուս. հապավումը) — 1921 թ–ից Խորհրդային Ռուսաստանում և մյուս խորհրդային հանրապետություններում կիրառված քաղաքականություն: Այն փոխարինեց «Ռազմական կոմունիզմի» քաղաքակա-

նությանը: Մտցվեց պարենային հարկ, վերականգնվեցին ապրանքադրամական հարաբերությունները և շուկան, թույլատրվեց սեփականության տարբեր ձևերի՝ պետական, կոոպերատիվ, մասնավոր, գոյությունը, օտարերկրյա կապիտալի մուտքը տնտեսության մեջ և այլն:

Շուկայական տնտեսություն — Տնտեսություն, որը զարգանում է ապրանքների ու ծառայությունների հանդեպ պահանջարկի և առաջարկի օրենքի, ազատ մրցակցության և ազատ առևտրի սկզբունքների հիման վրա:

Չմիավորված երկրների շարժում — Երկրների միավորում, որի մասնակիցները իրենց արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքներ են հռչակել՝ ռազմաքաղաքական միավորումներին միանալուց հրաժարումը, հավասարության և արդարության վրա հիմնված նոր աշխարհակարգի ստեղծումը: Շարժումը ձևավորվել է 1961 թ., այժմ միավորում է ավելի քան 100 պետություն:

Պարենմասնատրում — Գյուղատնտեսական արտադրանքի մթերման համակարգ խորհրդային պետությունում 1919–1921 թթ., «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության տարրերից մեկը: Գյուղացիները պարտավոր էին հացի և այլ մթերքների ավելցուկը (անձնական և տնտեսական կարիքների համար սահմանված չափաբաժնից ավել մասը) հաստատված կայուն գներով հանձնել պետությանը:

Ռազմակալում (օկուպացիա, լատ.՝ *զավթում*) — Պատերազմում պարտված երկրի տարածքի ժամանակավոր գրավումը հաղթող երկրի զինված ուժերի կողմից:

Ռազմական կոմունիզմ — Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին բոլշևիկների կողմից իրականացված սոցիալ–տնտեսական և քաղաքական կուրս: Դրա հիմքում դրված էին այսպիսի միջոցառումներ՝ արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացում, պարենմասնատրում, արտադրության և ապրանքների բաշխման առավելագույն կենտրոնացում պետության ձեռքում, մասնավոր առևտրի և ապրանքադրամական հարաբերությունների արգելում և այլն:

Ռազմատուգանք (կոնտրիբուցիա, լատ. *հավաքել* բառից) — Պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող դրամական վճարում հաղթող երկրին: Ժամանակակից միջազգային իրավունքով արգելված է ռ. գանձելը:

Սեփականաշնորհում, մասնավորեցում — Պետական կամ մունիցիպալ (տեղական ինքնակառավարման մարմինների) սեփականության (հողամասեր, արդյունաբերական ձեռնարկություններ, բանկեր, տրանսպորտի, կապի, զանգվածային լրատվության միջոցներ, շենքեր, բնակարաններ և այլն) վերածվելը մասնավոր սեփականության՝ անհատույց կամ վճարի դիմաց:

Ստատուս քվո — Միջազգային իրավունքում ընդունված տերմին, որն օգտագործվում է որոշակի պահի գոյություն ունեցող կամ ունեցած փաստական կամ իրավական դրությունը նշելու համար: Վերականգնել ***ս. ք.***՝ նշանակում է վերադառնալ մինչև փոփոխությունները գոյություն ունեցած իրավիճակին:

Ստվերային տնտեսություն — Տնտեսական գործունեության այն ոլորտը, որի մասնակիցները գործում են ընդհատակյա կարգով ու հաշվառված չեն պաշտոնական վիճակագրության կողմից և խուսափում են հարկեր վճարելուց:

Վերակառուցում (ռուս.՝ *պերեստրոյկա*) — ԽՍՀՄ–ում 1985–1991 թթ. իրականացված բարեփոխումների ընդհանրացված անվանումը: Վերակառուցման քաղաքականության հիմնական ուղղություններն էին խորհրդային հասարակության կյանքի համակողմանի ժողովրդավարացումը (այդ թվում՝ հրապարակայնության ընդլայնումը), տնտեսության արմատական վերափոխումը, արտաքին քաղաքական ոլորտում՝ միջազգային անվտանգության համապարփակ համակարգի ստեղծումը:

Վերափոխում (ռեֆորմ, լատ. *վերափոխել* բառից) — Հասարակական կյանքի փոփոխություն, վերադասավորություն: Որպես կանոն՝ ռեֆորմներն ունեն քիչ թե շատ առաջադիմական, բարելավող բնույթ:

Տարօրինակ պատերազմ — Այս տերմինով բնութագրվում է Երկրորդ աշխարհամարտի Արևմտյան ճակատում 1939 թ. սեպտեմբերի 3–ից 1940 թ. մայիսի 10–ը տիրող իրավիճակը: Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան, պատերազմ հայտարարելով Գերմանիային, ակտիվ ռազմական գործողություններ չմղեցին նրա դեմ, թեև ունեին թվական գերակշռություն:

Ցեղասպանություն (գենոցիդ) — Պետականորեն կազմակերպված, մի ազգի կողմից մեկ այլ ազգի, ընկերային կամ կրոնական խմբի լրիվ (կամ մասնակի) ֆիզիկական ոչնչացումը: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության 1948 թ. դեկտեմբերի 9–ի բանաձևի՝ ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն է: 1914–1916 թթ. երիտթուրքական կառավարության կազմակերպած հայոց զանգվածային կոտորածները գնահատվել են որպես XX դարի առաջին ցեղասպանություն (Մեծ եղեռն):

Քաղաքակրթություն — ա) Հասարակության նյութական և հոգևոր մշակույթի զարգացման մակարդակ, աստիճան: բ) Մարդկության պատմության այն շրջանը, որը հաջորդել է նախնադարին և շարունակվում է մինչև օրս: գ) Հասարակության քաղաքական–սոցիալական կառուցվածքի, տնտեսության, մշակույթի, մարդկանց փոխհարաբերությունների, վարքագծի, կենցաղի յուրահատուկ դրսևորումների ամբողջությունը, որը բնութագրական է որոշակի պատմական ժամանակաշրջանին և որոշակի երկրին կամ տարածաշրջանին:

Քաղաքացիական պատերազմ — Երկրի ներսում տարբեր քաղաքական ուժերի, սոցիալական խմբերի միջև զինված պայքարը քաղաքական իշխանության հասնելու համար:

Քաղաքական վարկանիշ (ռեյտինգ) — Քաղաքական առաջնորդների և կուսակցությունների հեղինակության ու հանրահայտության, ինչպես նաև որոշակի քաղաքական իրավիճակում նրանց գործունեության գնահատման անհատական թվային ցուցանիշ:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1918 թ. նոյեմբերի 11 — Գերմանիայի անձնատուր լինելը: Առաջին աշխարհամարտի ավարտը
1919 թ. հունվարի 18— Փարիզի խաղաղության վեհաժողովի բացումը
1919 թ. հունիսի 28 — Վերսալի պայմանագրի ստորագրումը
1919–1946 — Ազգերի լիգայի գործունեությունը
1920 — Քաղաքացիական անհնազանդության առաջին ալիքը Հնդկաստանում
1920 թ. օգոստոսի 10 — Սևրի պայմանագրի ստորագրումը
1921 թ. փետրվար — Խորհրդային Ռուսաստանի և Իրանի միջև պայմանագրի կնքումը
1921 թ. մարտի 16 — Ռուս–թուրքական պայմանագրի կնքումը Մոսկվայում
1921–1928 — Նէպ–ի շրջանը խորհրդային հանրապետություններում, ապա՝ ԽՍՀՄ–ում
1921 թ. նոյեմբեր – 1922 թ. փետրվար — Վաշինգտոնի վեհաժողովը
1922–1943 — Մուսոլինիի ֆաշիստական վարչակարգը Իտալիայում
1922 թ. դեկտեմբերի 30 — ԽՍՀՄ–ի կազմավորումը
1923 — Գերմանական ճգնաժամը
1923 — Հանրապետության հռչակումը Թուրքիայում
1923–1929 թթ. — Բարգավաճման ժամանակաշրջանը ԱՄՆ – ում
1924 — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ԽՍՀՄ–ի և Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի միջև
1924 — Չ. Դաուեսի ծրագրի ընդունումը
1924 —Լեյբորիստների առաջին կառավարությունը Անգլիայում Ռ. Մակդոնալդի վարչապետությամբ
1925 — Փահլավիների արքայատոհմի հաստատումը Իրանում
1925–1927 — Ժողովրդավարական հեղափոխությունը Չինաստանում. երկրի միավորումը
1927 – Ճապոնիայի վարչապետ Տանակայի ծավալապաշտական ծրագրի մշակումը
1929–1933 — Համաշխարհային տնտեսական մեծ ճգնաժամը
1933 թ. հունվար –1945 թ. մայիս — Ֆաշիստական վարչակարգը Գերմանիայում
1933 — Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսի» կենսագործման սկիզբը ԱՄՆ–ում
1933 — Գերմանիայի և Ճապոնիայի դուրս գալը Ազգերի լիգայի կազմից
1934 — ԽՍՀՄ–ի անդամագրվելը Ազգերի լիգային
1936 — Ժողովրդական ճակատի կառավարության ստեղծումը Ֆրանսիայում
1936–1939 — Քաղաքացիական պատերազմը Իսպանիայում
1936–1940 — Բեռլին–Հռոմ–Տոկիո ֆաշիստական ռազմական խմբավորման ձևավորումը
1937 – Իտալիայի դուրս գալը Ազգերի լիգայի կազմից
1938 թ. մարտ — Ավստրիայի բռնակցումը Գերմանիային
1938 թ. սեպտեմբերի 29 –30 — Մյունխենի «գործարքը»
1939 թ. օգոստոսի 23 — Չհարձակման համաձայնագրի ստորագրումը ԽՍՀՄ–ի և Գերմանիայի միջև
1939 թ. սեպտեմբերի 1 — Երկրորդ աշխարհամարտի սկիզբը
1939 թ. սեպտեմբեր 1 – 1941 թ. հունիս 21 — Երկրորդ աշխարհամարտի առաջին փուլը
1940 թ. հունիսի 22 – Ֆրանսիայի պարտությունը և դուրս գալը պատերազմից

1941 թ. հունիսի 22 — 1945 թ. մայիսի 9 — Խորհրդային Միության ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմը
1941 թ. հունիսի 22 — 1942 թ. նոյեմբեր — Երկրորդ աշխարհամարտի երկրորդ փուլը
1942 թ. հունվարի 1 — Հակահիտլերյան միության ձևավորումը
1942 թ. նոյեմբեր — 1943 թ. վերջ — Երկրորդ աշխարհամարտի երրորդ փուլը
1942 թ. նոյեմբերի 19 – 1943 թ. փետրվարի 2 — Ստալինգրադի հաղթական ճակատամարտը. արմատական բեկման սկիզբը աշխարհամարտի ընթացքում
1943 թ. հուլիսի 5 – օգոստոսի 23 — Կուրսկի ճակատամարտը, արմատական բեկման ավարտը աշխարհամարտի ընթացքում
1943 թ. նոյեմբերի 28 – դեկտեմբերի 1 — ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ–ի ղեկավարների՝ Մեծ եռյակի հանդիպումը Թեհրանում
1944 թ. հունվար — 1945 թ. մայիսի 8 — Երկրորդ աշխարհամարտի չորրորդ փուլը
1944 թ. հունիսի 6 — Երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում
1945 թ. փետրվարի 4–11 — ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ–ի ղեկավարների հանդիպումը Յալթայում
1945 թ. մայիսի 9 — Ֆաշիստական Գերմանիայի լիակատար պարտությունը. Մեծ հաղթանակի օրը
1945 թ. մայիսի 9 – սեպտեմբերի 2 — Երկրորդ աշխարհամարտի հինգերորդ փուլը
1945 թ. հուլիսի 17 — օգոստոսի 2 — Հաղթող երկրների Պոտսդամի համաժողովը
1945 թ. օգոստոսի 6 և 9 — ԱՄՆ–ի կողմից ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ատոմային ռմբահարումը
1945 թ. սեպտեմբերի 2 — Երկրորդ աշխարհամարտի ավարտը
1945 թ. հոկտեմբերի 24 — Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) պաշտոնական գործունեության սկիզբը
1945 թ. նոյեմբերի 20 – 1946 թ. հոկտեմբերի 1 — Նյուրնբերգյան դատավարությունը
1946 թ. մարտի 5 — Չերչիլի ճառը ԱՄՆ–ի Ֆուլտոն քաղաքում՝ սառը պատերազմի սկիզբը
1946 – 1954 – Ֆրանսա - վիետնամական պատերազմը
1947 թ. հունիս — Եվրոպական երկրներին տնտեսական օգնություն հատկացնելու՝ Մարշալի պլանի ընդունումը
1947–1964 — Ջ. Ներուն՝ Հնդկաստանի վարչապետ
1948 — Իսրայել պետության կազմավորումը
1949 թ. հունվարի 6 — Տնտեսական փոխօգնության խորհրդի (ՏՓԽ) ստեղծումը
1949 թ. ապրիլի 4 — Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ–ի ստեղծումը
1949 սեպտեմբեր — ԳԴՀ–ի կազմավորումը
1949 հոկտեմբերի 1 — Չինական Ժողովրդական Հանրապետության հռչակումը
1949 հոկտեմբեր —ԳԺՀ–ի կազմավորումը
1950 — Հնդկաստանի լիակատար անկախության հռչակումը
1950–1953 – Կորեական պատերազմը
1951 — Աջխի և պողպատի եվրոպական միավորման ստեղծումը
1951–1953 — Մ. Մոսադեղը՝ Իրանի վարչապետ
1952 — Թուրքիայի անդամագրվելը ՆԱՏՕ–ին
1955 թ. մայիսի 14 — Վարշավայի պայմանագրի ստորագրումը. սոցիալիստական երկրների ռազմաքաղաքական խմբավորման ստեղծումը
1957 — Եվրոպական տնտեսական համագործակցության ստեղծումը
1958–1969 — Շ. Դը Գոլը՝ Ֆրանսիայի նախագահ
1958 — Մեծ թռիչքի քաղաքականության սկիզբը Չինաստանում

1960 — Զինվորական հեղաշրջումը Թուրքիայում գեներալ Գյուրսելի գլխավորությամբ
1960 — Աֆրիկայի տարին. 17 երկրների անկախանալը Աֆրիկայում
1961 թ. ապրիլի 12 — Յուրի Գագարինի շուրջերկրյա թռիչքը. առաջին մարդը Տիեզերքում
1961 — Չմիացած երկրների շարժում կազմակերպության հիմնադրումը
1961 — Բեռլինի պատի՝ սառը պատերազմի խորհրդանիշի կառուցումը
1962 — Կարիբյան ճգնաժամը
1964 – 1973 - Ամերիկա - վիետնամական պատերազմը
1966–1976 — «Մշակութային հեղափոխությունը» Չինաստանում
1968 — «Պրահայի գարունը»
1975 թ. օգոստոսի 1 — Հելսինկիում 33 եվրոպական պետությունների, ԱՄՆ–ի և Կանադայի ղեկավարների հրավիրած Եվրոպայում անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի (ԵԱՀԽ) կողմից «Եզրափակիչ ակտ»–ի ստորագրումը
1979 թ. ապրիլի 1 — Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումը
1979 – 1990 — Մ. Թեթչերը՝ Մեծ Բրիտանիայի առաջին կին վարչապետ
1979 – 1989 – Խորհրդային Մջության ռազմական միջամտությունը Աֆղանստանում
1985 — Վերակառուցման քաղաքականության սկիզբը ԽՍՀՄ–ում
1988 թ. փետրվարի 20— Ղարաբաղի (Արցախ) հիմնախնդրի լուծման նորագույն փուլի սկիզբը
1989–1990 — «Թավշյա հեղափոխությունները» Արևելյան Եվրոպայի սոցիալիստա-կան երկրներում
1990 — Գերմանիայի վերամիավորումը
1990–1998 — Հ. Քոլը՝ միավորված Գերմանիայի առաջին վարչապետ
1991 թ. օգոստոսի 19–21 — Պահպանողական ուժերի խռովությունը Մոսկվայում
1991 — Սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզումը
1991 թ. դեկտեմբեր — ԱՊՀ–ի ստեղծումը
1992 — Մաաստրիխտյան պայմանագիրը՝ Եվրոպական Միության ստեղծումը
2000 – 2008 – Վ. Պուտինը՝ Ռուսաստանի նախագահ
2001 թ. սեպտեմբերի 11 – ի ահաբեկչությունը ԱՄՆ- ում
2003 - ԱՄՆ – ի ռազմական միջամտության սկիզբը Իրաքում
2005 — Ա. Մերքելը՝ Գերմանիայի առաջին կին վարչապետ
2007 — Ն. Սարկոզին՝ Ֆրանսիայի նախագահ
2008 - Դ. Մեդվեդևը՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ
2008 — Բ. Օբաման՝ ԱՄՆ–ի նախագահ
2008 – Համաշխարհային տնտեսական նոր ճգնաժամի սկիզբը